


ՅԱԿՈԲ ՏԷՐԵԱՆ

ՅՈՒՔԵՐ
ՈՍՊՆԵԱԿԻՍ
ԸՆԴՄԷՋԷՆ



ՆԻԻ ՃՐՁԻ
2023

ՅՈՒՐԵԿ
ՈՍՊԵՆՏԻՍ ԸՆԴՄԵՋԷՆ



Յակոբ Տէրեան

ՅԱԿՈԲ ՏԵՐԵԱՆ

ՅՈՒԹԵՐ
ՈՍՊՆԵԱԿԻՍ
ԸՆԴՄԷՋԷՆ

ՆԻԻ ՃՐՁԻ
2023

Reflections Through My Prism
(Essays)

Copyright © 2022 by Hagop Derian
All rights reserved
Printed in the United States of America

ISBN: 978-1-931834-47-6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ (Լիւսի Տէօքմէնեան)	9
Ինքնակենսագրութիւն	13
ԽԱՌՆ ՅՕԴՈՒՄԾՆԵՐ	
ՍԷՐ	25
ԵՕԹՆԵՐՈՐԴ ԹՈՌՆԻԿԻՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ	30
ՀԱՏՈՒՄԾ ՍԸ 1991-Ի ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ	37
Չ. ԲԱՒԱՅԵԱՆԻ ԵՒ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ	51
ԽՕՍՔ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ	54
ՎԻՔԹՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻ	58
ՍՐՏԻ ԽՕՍՔ 85-ԱՄԵԱԿԻՍ ԱՌԹԻ	62
ՎԱՐԴԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՓԻՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ	74
ՉՐՈՅՑ ԹՈՌՆԻԿԻՍ ՀԵՏ	78
ՀԱՅՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ... ԱՆՀԱՉԱՆԴՈՒԹԻՒՆ	83
ՀԱՅԱՍՏԱՆ 20 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՒ ԱՅՍՕՐ	89
ՏԳԵՂ ԵՐԵՒՅԹ	100
ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՎԻՐԱՒՈՐԱՆՔ ԹԷ ՊԱՏՃԱՌ ՎԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ	104
ԽՈՐԸ ՄՏԱԾԵԼՈՒ ՊԱՀԸ...	107
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԻ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԴՊՐՈՅ ...	
ԵՒ ՀԱՐՑԱՉՐՈՅՑ ՏՆՕՐԷՆՈՒՀԻՒՆ ՀԵՏ	114
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ ՄԱՅԵՍՏՐՕ ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ՀԵՏ	124
ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ս. ԵՐԿԻՐԸ՝ ԵՐՈՒՍԱՂԷՍ	127
ԱՆՈՒՆՈՎԴ ԿՊՐԻՍ	140
ԻՆՉՈՒ՞ ԾԱՌԵՐԸ ԱՇՆԱՆ ԿԸ ԹԱՓԵՆ ԻՐԵՆՑ ՏԵՐԵՒՆԵՐԸ	142
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԻՆՉՈՎ Է ՆՈՐ	145
ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ	148

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳԻՐՔԵՐՈՒ	151
ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍՈՒԱԾ ԴԱԻԻԹ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՌՐՈՒԹԵԱՆ - ՈՒԱՇԻՆԿԱԺՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ	155
ՈՂԲԱՑԵԱԼ ԴԱԻԻԹ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ	160
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԳԻՏՆԱԿԱՆ ՏՈՔԹ. ՎԱԶԳԷՆ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ	164
ՆԱՄԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԷ	170

ՄԵՐ ԼԵՉՈՒԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՐԵԻԷԼԱՀԱՅԵՐԷՆԸ ԿԱՐԵՆԱԼ ՀԱՄԱԿԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՌՈՒՄԵՐԷՆ ԳԻՏՆԱԼԸ ՊԱՅՄԱՆ Է ԵՒ ԱՐԵԻՄՏԱՀԱՅԵՐԷՆԻՆ ՎՏԱՆԳՈՒԱԾ ԱՊԱԳԱՆ	177
ԵՐԲ ՊԻՑԻ ՉՏՈՒԻ ԱՐԵԻԷԼԱՀԱՅԵՐԷՆԸ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒ ԱՆՀԱՐԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵՆԷՆ	185
ՕՏԱՐԱՄՈԼՈՒԹԵԱՆ ԱԽՏԸ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՆԵՐՍ	194
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՇՈՒՐԱԿՆԵՐԸ ՕՏԱՐԱՄՈԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ	201
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ «ՀԱՅԵԼԻ»ԻՆ	206
ՆԱՄԱԿ ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ	209

ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈԿՈՒՄՆԵՐ

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒԵԼԷՆ ԱՌԱՋ ԵՒ ՎԵՐՉ	215
ԱՆՈՒՇ ՕՓԵՐԱՅԷՆ ՔԱՂՈՒԱԾ ՇԻՆԻՉ ԴԱՍ ՄԸ	224
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԹԷ՝ ԽՈՐՀՈՒՐԴ	228
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅՈՎ	234
ԱՂԱԿԻԻ ՊԷՍ ՄԻԱՄԻՏ, ՕՁԻ ՊԷՍ ԽՈՐԱԳԷՏ	240
ԱՂՕԹՔ ՓՈՐՁԱՆՔԷ ՄԸ ԱՉԱՏՈՒԵԼԷ ԵՏՔ	247

ԸՆԴԴԷՄ ԹՐՔԱԿԱՆ ՈՒՐԱՅՈՒՄՆԵՐՈՒ

ԲԱՅ ՆԱՄԱԿ՝ ԹՈՒՐԶԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԵՃԷՓ ԹԱՅԻՓ ԷՐՏՈՂԱՆԻՆ	251
ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ ԹՐՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	263
ԹՈՒՐՔ ԱՉԳԱՅՆԱՊԱՇՏ ՓՐՕՖԷՍՕՐՆԵՐՆ ՈՒ ԱՆՈՆՑ ՊՈՉԱՌՈՐ ՍՈՒՏԵՐԸ... ԵՒ ԱՅԴ ՍՈՒՏԵՐԸ ՄԵՐԿԱՅՆՈՂ ՊԱՐԿԵՇՏ... ԹՈՒՐՔ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՊԱՐՉԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ	271

ԻՆՉՈ՞Ւ ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՉԷ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՈՒ
ՔՆՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԵԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

289

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ամերիկահայ Յակոբ Տերեանի այս գիրքին մեջ մենք կը գտնենք ծնունդով հայեպահայ Յակոբ Տէյիրմէնճեանը, որ թէւ միայն ստացած է նախնական կրթութիւն Հալէպի Տավուտիէ շրջանի Վարդանեան վարժարանին մէջ, բայց փոքր տարիքէն գիրի ու գրականութեան հանդէպ սէրն ու հակումը զինք մղած են ինքնաշխատութեամբ աշխատակցելու հայ մամուլին եւ գրադարաններու մէջ ունենալու իր հեղինակութեամբ հրատարակուած քանի մը գիրքեր:

Դպրոցական տարիներուն շարադրութեան մէջ եղած է առաջնակարգ աշակերտ, գրած է նաեւ քերթումներ, ջանալով «աղքատ բառապաշարի, ուղղագրական սխալներու եւ որակեալ գրական ոճի տկարութիւնը» յաղթահարել ընթերցանութեամբ, որ նպաստած է գրասէր Յակոբ Տէյիրմէնճեանի մտքի զարգացման:

1984-ին ամերիկեան քաղաքացիութիւն ստացած ժամանակ Յակոբ Տէյիրմէնճեանը դարձած է Տերեան եւ հետամուտ եղած է գրական աշխատանք տանելու՝ իր գրած յօդուածները լոյսին տալով մամուլի ճամբով, առանց յանդգնելու «որպէս գրագէտ ներկայանալու հանրութեան», նկատի ունենալով որ թէւ ինք ի ծնէ օժտուած է գրելու կարողութեամբ, սակայն հնարաւորութիւնը չէ ունեցած ստանալու բարձրագոյն կրթութիւն, եւ խորհելով թէ մնացած է «միջակութեան սահմանին մէջ»: Այդուհանդերձ, «նախ՝ Աստուծոյ տուած շնորհքովն եւ երկրորդ՝ ընթերցանութեամբ», որ եղած է իր միակ «դպրոցն ու կրթութեան մատակարարը», ան յաջողած է հարագատ շունչով արտայայտել իր միտքերն ու ապրումները՝ որպէս հայրենիքով ապրող, հայաշունչ ընտանիք կերտելու, լաւ դաստիարակուած թոռներ ունենալու, հայոց լեզուն անբիծ պահելու ձգտող եւ կեանքի մէջ մարդկային ու հոգեւոր արժէքներով արարող մարդ:

Վերոնշեալ արժէքներով ապրող Յակոբ Տերեանը այս գիրքին մէջ կը շեշտէ զինուած ըլլալ Զրիստոսի զօրութեամբ եւ «որեւէ գործ կամ խօսք գործել եւ կամ խօսիլ Իր զօրութեամբ միայն»: Նոյնպէս, Անուշ օփերային օրինակէն շինիչ դաս մը տալով կը խօսի ներողութիւն խնդրելու յատկանիշին մասին, բառ մը՝ որ «պիտի կանխէր բոլոր չարիքները: Բառ մը, որ պիտի մեղմէր դէմինին սրտին մէջ կուտակուած դիւն ու վրէժխնդրութիւնը, որ յառաջ

եկած էր իր իսկ գործած վատությունն»:

Կեանքի ու մահուան մասին խորհրդածություններ ընելով, Տերեան կը գրէ այն տեսակաւոր դէպքերուն, ճախորդութիւններուն, անյաջողութիւններուն եւ անկումներուն մասին, որոնք «մէյմէկ ազդարարութիւններ են մեզի համար, մեզ զգաստութեան հրաւիրող», հաւաստիացնելով որ «երբ կարենանք գիտակցիլ այս սխալներուն որ ունինք, ահա այդ ԳԻՏԱԿՑԻԼն է բուն բանալին կարենալ սրբագրելու մեր սխալները»:

Ան նաեւ իր կրօնական բնոյթի յօդուածներով կ'անդրադառնայ Հայ Եկեղեցւոյ դերին մեր ազգային պատմութեան մէջ, թէ ինչպէս «անհայրենիք մեր ժողովուրդը դարերու ընթացքին առաջնորդուեցաւ միայն եկեղեցիով, թէ ինչպէս այդ եկեղեցին մեզ ներշնչեց քրիստոնէական մաքուր հաւատքը եւ այդ հաւատքի զօրութեամբ զինուած կրցանք տոկալ բարբարոս ժողովուրդներու ամէն տեսակի կեղեքումներուն եւ բռնութիւններուն. թէ ինչպէս ան եղաւ մեզի համար «վահան ամրութեան» եւ պատճառը մեր ազգի գոյատեւման»:

Բարոյական արժանիքներ դրսեւորելով, Տերեան կը դատապարտէ «անողորմ, բիրտ, ապերաստան եւ բռնատէր այր մարդը, որ կը ճնշէ իր կնոջ ու ընտանիքին վրայ» եւ միաժամանակ «կնոջ անհնազանդութիւնը, որ պատճառ կը դառնայ ընտանեկան խռովութիւններու ու քայքայման»: Ընտանիքին երջանկութիւնը կը գտնէ հոն, ուր «այր ու կին, իւրաքանչիւրը իր կարգին, ճանչնայ իր իրաւասութեան սահմանները, գիտակցի իր պարտաւորութիւններուն եւ յարգէ դէմինին իրաւունքները»:

Հայաշունչ ու հայկական ոգիով թրծուած, մարդկային ու ազգային սրբութիւններ կրող թոռներ ունենալու տենչով մղուած, ծերունագարդ Յակոբ Տերեան մեծ հայրիկը անոնց կու տայ կենցաղային անհրաժեշտ երեք խրատ՝ պատուել հայր ու մայր, երբեք չգժտուիլ իրար հետ, օգնութեան հասնիլ տկարին: Ան նաեւ անոնց կու տայ պատգամ, որպէսզի օտար երկիրները անոնցմէ չխլեն իրենց ազգային նուիրականութիւնները եւ անոնք չկորսնցնեն իրենց հայութիւնը, միաժամանակ նոյն պատգամը ձօնելով օտար լեզուներու եւ բարբերու ենթակայ բոլոր հայ պատանիներուն: Սակայն, հաւատալով որ առանց գործնական աշխատանքի, միայն պատգամելով ու մաղթելով կարելի չ'ըլլար երաշխաւորել արդիւնք մը ձեռք ձգելը, եւ համոզուած ըլլալով որ «մեր նոր հասնող սերունդը պիտի չկարենայ դիմադրել օտար այդ հուժկու հոսանքին, եթէ երբեք չունենայ հաստատ եւ տոկուն նկարագիր, իր ազգային ըմբռնումներով: Եթէ երբեք անոր միտքը չդաստիարակուի հայկական գիտելիքներով», հեղինակը այդ առումով մեծ պարտաւորութիւն կը տեսնէ նաեւ իւրաքանչիւր հօր ու մօր, մեծ հօր եւ մեծ մօր ուսերուն վրայ: Ան հաստ գիծերով կ'ընդգծէ ընտանեկան կրթութիւնը, որ «ամենաւեական եւ առաջնակարգ

դաստիարակությունն է: Այդ ընտանեկան կրթությամբ է որ զաւակ մը կրնայ սիրել իր ազգը, իր հայրենիքը, իր լեզուն, իր մշակոյթը, իր եկեղեցին»: 11 թոռներու եւ ծոռներու տէր հեղինակը բաւարար չի տեսներ միմիայն սիրել զանոնք, այլ պարտաւորուած կը զգայ «դաստիարակել զիրենք ընտանեկան մաքուր դաստիարակությամբ, ազգային արժէքներով, ազգային սրբութիւններով, վառ պահելով անոնց սրտին մէջ սէրն ու անհրաժեշտութիւնը հայ լեզուին եւ ամրապնդել հոգեկան անքակտելի կապը հայրենիքին հետ»:

Սրտցաւ ազգային Յակոբ Տէրեանի յօդուածներուն մէջ կը տեսնենք նաեւ գուրգուրանք հայ գիրին ու գրականութեան, հայ գիրքերուն նկատմամբ. կը զգուշացնէ այն հոսանքէն, որ կ'աշխատի նախ տկարացնել մեզ, մէկ առ մէկ խլելով մեզմէ մեր ազգային արժանիքները: «Առաջին անգամ ան կը յարձակի ձեր լեզուին վրայ, խլելով անկէ ձեր մայրենի բառը՝ հայերէնը. եւ անոր տեղ ձեզի կու տայ օտար լեզու՝ օտար բարբառ: Երկրորդ՝ ան կը խլէ ձեր շուրթերէն հայերէն երգը, հրապուրելով ձեզ օտար երաժշտությամբ: Ապա կը յարձակի ձեր մատներուն վրայ, խլելով անոնցմէ ձեր սրբազան Ա. Բ. Գ.-ը, հայերէն գիրերն ու գրականութիւնը, ձեզի հրամցնելով օտար գիր ու գրականութիւն», կը գրէ ան:

Տէրեան կը դողայ մայրենի լեզուին ու անոր անաղարտութեան վրայ: Հայաստանի Հանրապետութեան կրթութեան ու գիտութեան երբեմնի նախարարներուն ուղղած իր նամակներուն մէջ ան իր տազնապը կը յայտնէ՝ «տեսնելով արեւմտահայերէնի ցաւալի աւազախրումը, արեւելահայերէնի՝ օտար բառերով ճոխացած եւ աղաւաղուած վիճակը եւ այդ երեւոյթներուն հանդէպ մեր նախորդ տարիներու կրթութեան եւ գիտութեան նախարարներուն ցուցաբերած անփոյթ եւ այպանելի կեցուածքը»: Ան կտրականապէս դէմ է օտարամոլութեան, ի մասնաւորի լեզուական մարզին մէջ, եւ մատը դնելով այդ ցաւոտ վերքին վրայ, իր նամակներով կը յուսայ հայերէնը գտուած տեսնել օտար բառերու անհարկի գործածութենէն՝ «կարենալ վերացնելու ազգին արժանապատուութիւնը վիրաւորող այդ օտարամոլութեան ախտը եւ արեւելահայերէն լեզուն աղարտող օտար բառերը»:

Տէրեանի գիրքին մէջ կը գտնենք նաեւ յօդուածներ՝ նուիրուած «բացառիկ ունակութիւններու տէր մարդոց, որոնք իրենց տաղանդին ու արտակարգ մտքի կարողութեանց շնորհիւ կը դառնան հսկաներ՝ միջազգային համբաւի տէր անհատներ, փառք ու պատիւ բերելով իրենց ազգին»: Անոնցմէ են աշխարհահռչակ աստղագէտ Վիքթոր Համբարձումեանը, գիտնական Տոքթ. Վազգէն Բարսեղեանը, մայետթօ Հենրիկ Անասեանը:

Յակոբ Տէրեանը կը տեսնենք նաեւ հայրենիքի մէջ: Ան կը պատմէ իր առաջին այցելութեան մասին, երբ ինքզինք կը նմանեցնէ «այն մարդուն, որ

իր ծնած օրէն ի վեր հեռու է մնացած զինք ծնող մօրմէն, եւ ապրած են իրարմէ հեռու, սակայն միշտ կարօտով եւ այն յոյսով, որ օր մը անպայման պիտի հանդիպին իրարու: Եւ ահա 55 տարիներ ետքն է միայն, որ այդ առիթը կը ներկայանար իրենց: Եւ այժմ իրարու հետ են ահա, դէմ-դիմաց կանգնած, թէեւ իրարու անծանօթ, բայց եւ այնպէս հարազատ մայր եւ որդի»: Ապա տարիներու բացակայութենէ ետք կատարած իր այցելութիւններուն մասին գրելով մատնացոյց կ'ընէ անցեալի ու ներկայի տարբերութիւնները: Կը հաստատէ, որ «Երեւանը իր գեղեցկութեամբ կը հաւասարի այլ երկիրներու հարուստ քաղաքներուն», եւ կը դրուատէ ճնշումէ աղամանդուած մեր առօրեայ տրտման տարրերը, որոնք, իր բառերով, շատ բաներէ կը գրկուին, սակայն եւ այնպէս գիտեն ամէն բանէ առաջ պաշտպանել մեր հայրենիքը:

Հայ իրականութեան մէջ մշտապէս հրատապ հարց հանդիսացող հայ-թրքական յարաբերութիւններուն անդրադառնալով, «պահն է խորը մտածելու» ըսելով, Տէրեան լուսարձակի տակ կ'առնէ «թուրքին լարախաղաց նկարագիրը» եւ կը յիշէ անցեալէն ի վեր «թրքական նենգամտութիւնները, որոնցմէ խաբուած եւ տուժած ենք յաճախ»: Ան կը նշէ, որ «թրքական կառավարութիւնը տակաւին չկրցաւ ձերբազատուիլ թուրք ազգայնապաշտութեան ոգիէն», բայց ուշադրութիւն կը դարձնէ խումբ մը մտաւորականներու, «որոնք այլեւս չկարենալով դիմանալ իրենց խղճին վրայ ճնշող հայութեան հանդէպ կատարուող այս մեծ անիրաւութեան եւ թրքական պետութեան կողմէ կիրարկուող մեղանշական ուրացումին եւ իրենց լեզուներուն վրայ դրուած փականքին, ի վերջոյ կը պոռթկան, եւ ահա ներողութիւն կը խնդրեն հայերէն, իրենց հանդէպ կատարուած բոլոր անարդարութիւններուն համար»:

* * *

Յակոբ Տէրեանի այս գիրքը մտորումներու եւ ապրումներու անկեղծ եւ անմիջական համադրումն է՝ Հալէպ ծնած, Ամերիկա գաղթած, բայց միշտ իր մեծ ընտանիքին՝ հայութեան ու հայրենիքի բարօրութեան, եւ իր փոքր ընտանիքին բարեկեցութեան համար ամէն ինչ տրամադրելու պատրաստակամ եղող աստուածասէր, մարդասէր, ազգասէր հայորդիի մը, որ իր կեանքի օրինակով կը թելադրէ ապրիլ մարդկային ու ազգային արժանապատուութեամբ, հաւատքով, ներողամտութեամբ, սէրով եւ յոյսով:

Լիւսի Տէօքմէնեան

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ես Յակոբ Տերեան, բուն մականունով Տէյիքմէնճեան, (մականունս փոխած եմ Տերեանի, 1984-ին, Ամերիկեան քաղաքացիութիւն ստացած օրս): Ծնած եմ 1934-ին Փետրուար 27-ին, Այնթապէն Հալէպ հասնող գաղթականներէն Կարապետ եւ Կիլէնեա Տէյիքմէնճեան ընտանիքին մէջ, որպէս 3-րդը 3 մանչ եւ մէկ աղջիկ զաւակներուն, որոնք են Գեորգ, Արմէնուհի, Յակոբ եւ Դաւիթ: Արմէնուհին մեռած է 2 տարեկանին:

Նախնական եւ միակ ուսումնս ստացած եմ Տավուտիէի Վարդանեան վարժարանէն, զոր կրցած եմ աւարտել ծնողքիս, ի մասնաւորի՝ մօրս, անգնահատելի զոհողութիւններուն շնորհիւ: (Տավուտիէն Հալէպի արուարձաններէն մէկն է, որ իր սկզբնական շրջանին, մօտաւորապէս 1930-էն 1960 տարիներուն, զուտ հայաբնակ գաղութ մըն էր):

1949-ին գացած եմ Անթիլիասի դպրեվանքը ուսանելու, նպատակ ունենալով եկեղեցական դառնալ: Սակայն այդ շրջանին Անթիլիասէն ներս տեղի ունեցող՝ բոլորին ծանօթ կուսակցական հակամարտութիւնները, պայքարներն ու կռիւները, մասնաւոր վանական կեանքին եւ վանականութեան բոլորովին ներհակ թուացող այդ վիճակը, որ ծայր տուած էր Դաշնակցութեան կողմէ՝ նպատակ ունենալով բաժնել Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Էջմիածնի Մայր Աթոռէն, - ինչ որ տեղի ունեցաւ 1956-ին, - խիստ ապականած մթնոլորտ մը ստեղծած էին վանքէն ներս:

Որով այդ վիճակին չկարենալով հանդուրժել, 3 ամիս չանցած տուն վերադարձայ:

Թէեւ փոքր տարիքէս միշտ հակում ունեցած եմ ուսման՝ գիրի ու գրականութեան հանդէպ, սակայն դժբախտաբար Անթիլիասէն վերադառնալէ ետք կարենալ ուսանելու յոյսը բոլորովին չքացած էր ինծի համար, ընտանիքին ծայր աստիճան նիւթական նեղ կացութեան պատճառաւ: Այլ ճամբայ մը չկար ինձ համար գործի ասպարէզէն զատ: Որով կամայ թէ ակամայ մտայ աշխատանքի մէջ:

Առաջին գործս եղաւ բեռնատար մեքենաներու բեռնաբարձ սնտուկներու (քարասէօր) շինութիւնը, որ տեւեց մօտ 6 տարի:

Արդէն իսկ տիրապետած էի գործին ամբողջութեամբ, երբ վրայ հասաւ

1954 թուականը, որ Սուրիական պատմության մեջ երբեք նմանը չունեցած՝ ամեն տեսակ գործերու առատության ու ճոխության՝ բացառիկ տարի մըն էր:

Այդ իրավիճակին մեջ մեր գործերը բազմապատկուեցան: Մեզմէ (աշխատաւորներէս) պահանջեցին աշխատիլ յաւելեալ ժամեր, այնքան՝ որքան կարելի էր աշխատիլ: Լաւագոյն առիթ մը կը ներկայանար ինծի, գոր կարելի չէր չօգտագործել:

Աշխատեցայ օրական 20-էն 22 ժամ, շաբաթը 6 օր, առանց տուն երթալու, պառկելով բեռնատար մեքենաներու մէջ...: Միայն Կիրակի օրերուն էր որ տուն կ'երթայի:

Այսպէս շարունակուեցաւ վեց ամիս, մինչեւ որ տաժանակիր այդ աշխատանքներէն տկարացած հիւանդացայ եւ շահած դրամիս մեծ մասը բժիշկներուն բաժին դարձաւ:

Յաջորդ տարին՝ 1955-ը, եղաւ ճիշդ հակառակը 1954-ին: Բոլոր գործերը կանգ առին: Կայունութիւն մը պատեց ամբողջ երկիրը: Մեր գործերն ալ ամբողջութեամբ վերջ գտան եւ ես գործս կորսնցուցի:

Շրջան մը անգործ մնալէ ետք, ընդունուեցայ շոգեկառքի ընկերութենէն, ուր աշխատեցայ կառաշինութեան (վակօններու շինութեան) գործին մէջ մօտ 2 տարի, անհամարժեք աշխատավարձով:

Սակայն այդ 2 տարուայ ամբողջ տեւողութեան, միշտ միտքս կ'աշխատէր անձնական գործ մը սկսելու վրայով:

Եւ քանի չունէի ի մտի ունեցած կարգ մը գործերս կարենալ իրականացնելու համար ո'չ անհրաժեշտ եղող գործիքները եւ ո'չ ալ զանոնք կարենալ գնելու պէտք եղած գումարը, որոշեցի որ անձամբ ես շինեմ այդ գործիքները, որոնց պէտք պիտի ունենայի:

Որով ընկերութեան մէջ աշխատած այդ երկու տարիներու շրջանիս, աշխատանքի ժամերէն ետք ազատ պահերուս շինեցի նախ ամենակարելորդ եղող 125 ս.մ. կտրող մկրատ մը (Sheeps) որ ոտքը մէկ անգամ կոխելով պիտի կտրէր երկաթեայ թերթեր (Sheet metal-ներ), պահանջուած չափերով:

Պատրաստեցի նաեւ ուրիշ մկրատ մը՝ երկաթեայ թերթերը կտր կտրելու համար, դարձեալ պահանջուած չափերով: Նաեւ այլ գործիք մը՝ զանոնք ծռելու կամ ծալելու համար (Cornic Brake):

Տակաւին՝ շինեցի մամլիչ մը (Press machine կամ բրէսա) մը, ծակեր ծակելու եւ այլ մանր կտորներ կերպաւորելու համար, ելւն.:

Այս եղանկերով կարելի պիտի ըլլար կարգ մը գործեր սկսիլ եւ աշխատիլ:

Այս գործիքներուն շինութեան համար արդէն իսկ վարձած էի տան մը գետնայարկը որպէս աշխատատեղի:

Ուստի հրաժարական ներկայացուցի ընկերության, մէկ ամիսէն գործը ձգելու որոշումով:

Այդ շրջանին I.P.C. Անգլիական քարիւղի ընկերութիւնը Սուրիական կառավարութեան հետ խնդիրներ ունեցաւ, որուն պատճառով գործաւորներ գործէ արձակուեցան:

Մեծ եղբայրս, որ հոն (Թարթուս) կ'աշխատէր որպէս էլեկտրական բաժնի վարիչ (ֆօրմէն), ինքն ալ բոլորին հետ միասին, գործը ձգած տուն եկաւ: Որոշեցինք միասնաբար գործի դնել մեր ծրագիրները:

Եղբայրս էլեկտրական գործերու մասնագէտ մըն էր, ես ալ որոշ չափով ընդունակ էի որեւէ բան կարենալ շինելու, ինչպէս շինած էի վերը յիշուած գործիքները:

Պարծանքի համար չէ, այլ՝ իրականութիւնը այն է, որ վերը յիշուած գործիքներն ու անոնց յաջորդող մեծ ու փոքր այլ գործիքներ ու շինուածքներ, որոնցմով ամբողջացած էր գործատեղիին կազմաձևերուն 70 տոկոսը, իմ ձեռագործներս եղան:

Եղբօրս մասնագիտութեան գծով մեր առաջին գործը եղաւ շինել էլեկտրական «գօղիչ» սարքեր (welding transformer), որակով բարձր եւ շատ գեղեցիկ արտաքին կազմուածքով, որոնք մեծ ընդունելութիւն գտան արհեստաւորներու մօտ:

Ծինեցինք նաեւ ուժափոխիչներ (transformer) եւ այլ տեսակի էլեկտրական սարքեր, որոնց բոլորն ալ գնահատուեցան շուկային մէջ եւ արհեստաւորներուն մօտ:

Մեր նշանաւոր գործը եղաւ անկասկած էլեկտրական կայծհաններու շինութիւնը՝ բնական կազով (propane կամ պիւթակազ) օճախները վառելու համար:

Այս կայծհաններուն պատրաստութիւնը, որ լման տարի մը տեսեց, իր գեղեցկութեամբ, իր գունաւոր երեսապատումով (անտոսայգինկ) եւ որակով կը գերազանցէր եւրոպա-



կան կայծիանները, ինչ որ փորձով ստուգուեցաւ: Մանաւանդ իր ինքնագործ (օթօմադիք) ըլլալը, առաւելութիւն էր եւրոպական կայծիաններու վրայ:

Նման որակաւոր գործ մը կարենալ արտադրելու համար դիմեցինք պատկան նախարարին, որ այն ժամանակ եգիպտացի մըն էր, «մասնակի արտօնագիր» (փաթենթ) ստանալու, որպէսզի ուրիշ մը չընդօրինակէ զայն: Սակայն... նախարարին պատասխանը յուսահատութեան մատնեց մեզ, քանի որ ռելէ անձ պիտի կարենար շինել նոյնը ամբողջութեամբ, արտաքին երեւոյթին մէջ փոքրիկ փոփոխութիւն մը կատարելով միայն...:

Այսպիսի յուսաբեկիչ պատասխան մը նախարարին կողմէ ջլատեց մեր կորովը եւ պատճառ դարձաւ որ չկարենանք շարունակել այդ գործը եւ օգտուիլ անկէ:

Եղբօրս հետ միասին աշխատեցանք մօտ 5 տարի: Ապա եղբայրս գատուելով խանութ մը վարձեց, իր անձնական ելեկտրական գործերով զբաղելու, եւ ես մնացի նոյն աշխատատեղիին մէջ:

Եղբօրս գատուելէն ետք, մի քանի տեսակ գործեր փորձեցի, որոնց վերջինն էր ֆլորեսան (florescent) լամբերու լուսամփոփներու արտադրութիւնը, որ լաւ յաջողութիւն գտաւ շուկայի մէջ եւ շատ արագ պահանջները աւելցան:

Մօտ 6 տարի շարունակեցի այդ լուսամփոփներու գործը, միշտ նոր նմոյշներ աւելցնելով անոնց վրայ:

Ապա ինծի վիճակուեցաւ Եփրատի ամբարտակին կառուցման ծիրին մէջ փոքր չափի ելեկտրական վահանակներու (electric panel) շինութեան գործը: Բաւական մեծաքանակ այդ գործը 4 ամիսէն յաջողութեամբ կարելի եղաւ իր աւարտին հասցնել:

Այս փոքր վահանակներու յաջողութենէն մղուած՝ սկսայ շինել նաեւ մեծ ու փոքր ամէն չափի վահանակներ, որոնք մեծ ընդունելութիւն գտան թէ՛ շուկայէն ներս եւ թէ՛ պետական գործարաններուն եւ հաստատութիւններուն համար:

Պէտք է ըսեմ որ Հալէպի մէջ միակս էի վահանակներ շինող: Կար ուրիշ մը եւս Դամասկոսի մէջ: Սակայն մեր գործերը իրենց նրբութեամբ ու գեղեցկութեամբ եւ օրինաւորութեամբ կը մրցէին եւրոպական վահանակներու հետ:

Այսօր մեր վահանակները կարելի է տեսնել Հալէպի կարգ մը գործարաններու եւ պետական հաստատութիւններու մէջ, եւ մինչեւ իսկ Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատին նորակառոյց պալատին մէջ:

Փառք կու տամ Աստուծոյ Իր տուած շնորհքին համար, որ կարողացայ շինել այս բոլորը, առանց որեւէ տեղ աշխատած կամ սորված ըլլալու, ամէն, ամէն ինչ ինքնուրոյն՝ զերոյէն սկսելով:



Տէրեան իր պատրաստած եղեկորական վահանակներուն առջեւ:

* * *

Տառապալից մեծ ջանքերու արդիւնք եղող այս յաջողութիւնները թէւ խրախուսիչ էին ինծի համար, սակայն ամբողջական չէին թուար, քանի որ նախասիրութիւնս եղող գիրն ու գրականութիւնը արդէն իսկ տուժած էին:

Դպրոցական շրջանիս գրելու մէջ առաջնակարգ աշակերտ մըն էի, գրած եմ նաեւ քերթուածներ: Ափսոս սակայն որ գրելու այդ հակումս վերջ գտած էր Անթիլիասէն վերադառնալէ ետք, քանի որ նախակրթարանի մը ուսմամբ, աղքատ բառապաշարով, ուղղագրական սխալներով եւ որակեալ գրական ոճի տկարութեամբ կարելի չէր գրականութիւն մշակել: Որով՝ այնուհետեւ միակ բանը, որ մնացած էր ինծի համար, նախասիրութիւնս եղող ընթերցանութիւնն էր, կարդալ՝ կրօնական, պատմական, գիտական, գրական եւ ամէն տեսակի գրքեր, որոնք նոյն ատեն պիտի նպաստէին մտքի զարգացման:

Այսպիսով, ազատ ժամերու ամենահաճելի ժամանցս եղած էր կարդալը, ընկերային կամ այլ տեսակի զբաղումներէն աւելի:

* * *

Որպես ընկերային միջավայր, փոքր տարիքէն մինչեւ չափահասութիւն, եղած եմ Տավուտիէի Ս. Վարդան եկեղեցւոյ եւ Կիրակնօրեայ դպրոցի շրջանակէն ներս:

Փոքր տարիքէն եղած եմ եկեղեցւոյ դպիր, ապա սարկաւագ եւ տարի մըն ալ կատարած եմ դպրապետի պաշտօնը:

Նոյնպէս եղած եմ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտ, ապա ուսուցիչ եւ վերջաւորութեան՝ 8 տարիներ վարած եմ անոր տեսչութիւնը:

Ահա այս երկու հաստատութիւններուն մէջ - եկեղեցի ու Կիրակնօրեայ դպրոց - ունեցած գործունէութեանս շնորհիւ կարելի եղած է նաեւ փոքր ի շատէ կապ պահել գրականութեան հետ:

* * *

1964-ին ամուսնացայ Նեկտար Կիւլէսէրեանին հետ: Բախտաւորութեանը մէկ մանչ եւ 2 աղջիկ զաւակներով, որոնք բախտը ունեցան մինչեւ մեր Ամերիկա մեկնիլը յաճախել տեղւոյն Կրթասիրաց վարժարանը: Բախտաւոր եղան անոր համար որ Ամերիկա երթալէն ետք ալ վերջ պիտի գտնէր իրենց համար հայ դպրոց յաճախելը:

1978-ի վերջընթեր օրը մուտք գործեցինք Ամերիկա, հաստատուելով Նիւ Եորքի մայրաքաղաք Ալպանիի շրջանին մէջ:

Ամերիկեան կեանքէն ներս գործի տեսակէտէ կեանքս սահուն ընթացք մը չունեցաւ դարձեալ որոշ ժամանակ:

Հալեալի մէջ շինած գործերս հոս կարենալ շինելու համար մէկէ աւելի արգելքներ ունէի, որոնց մեծագոյնը՝ աշխարհահռչակ «Ծնենրալ Ելէքդրիք»-ի առկայութիւնն էր, ուր կը շինուէր ելեկտրականութեան վերաբերեալ ամէն բան, ի մէջ այլոց ելեկտրական վահանակներ: Թէեւ Ամերիկեան վահանակները չունէին եւրոպական վահանակներուն նրբութիւնը, սակայն ի վերջոյ իրենց արտադրութիւնն էր:

Արգելքներ էին նաեւ լեզուի չիմացութիւնը, աշխատանքի տեղական պայմաններուն անտեղեկութիւնը, եւլն.: Ուստի հարկադրուած էի գործաւոր դառնալ՝ աշխատելու որեւէ գործ մասնագիտութենէս դուրս, անհամարժէք վարձատրութեամբ: Մօտ 9 տարի աշխատեցայ այդ ձեւով: Վերջին 2 տարիներուն աշխատեցայ մեքենաշինարանի (machinery) մը մէջ որպէս սկսնակ գործաւոր:

Ես որ բնաւ չէի աշխատած եւ գաղափար ալ չունէի այդ գործին վրայով, իմ այդ երկու տարուայ փորձառութեամբ դիմում կատարեցի Ամերիկեան պետական մեքենաշինարանը՝ Arsenal, աշխատելու եւ յաջող քննութենէ մը

ետք ընդունուեցայ որպէս բարձրագոյն կարգի մեքենաշինարար:

10 տարի աշխատեցայ «Արսընըլ»-ի մէջ, մինչեւ կանուխ հանգստեան կոչուիլս, 64 տարեկանիս:

Արսընըլ աշխատած շրջանիս միեւնոյն ատեն տիկնոջս հետ միասին լծուեցայ մեր ունեցած մի քանի հողերուն վրայ տուներ շինելու գործին եւ կրցանք յաջողցնել առաջին տունին շինութիւնը: Մինչ այդ տղաս՝ Կարոն, աւարտելով իր համալսարանի ուսումը, մաս կազմեց այդ շինարարական գործին եւ կարճ ժամանակ ետք ձեռք առաւ զայն ամբողջութեամբ:

Հանգստեան կոչուելէս ետք, մօտ 4 տարի տղուս հետ միասին աշխատեցայ այդ շինարարութեան գործին մէջ: Սակայն փորձառարար տեսնելով այդ գործին տաղտկալի ու դժուար պայմանները, վերջ տուինք այդ գործին եւ փոխաբերելով սկսանք պահեստարաններու, այսինքն՝ Self Storage-ի գործին, որ եղաւ մեր վերջին ու մնայուն գործը:

* * *

Ամերիկեան կեանքի սկզբնական մօտ 30 տարիներու փոփոխական այս իրադարձութիւնները թէեւ որոշ նեղութիւններ պատճառած եղան մեզի, սակայն միւս կողմէ՝ բաւական ազատ ժամեր շնորհած եղան ինծի: Նկատելով որ գործաւորութեան մէջ անհատը գերծ է գործատիրոջ մը յատուկ մտահոգութիւններէ եւ իր առօրեայ գործէն ետք ազատ է իր ժամանակը յատկացնելու իր նախասիրած որեւէ բանի, ահա՛ այդ գործաւորութեան պտուղը եղող՝ գործէն ետք ունեցած ազատ պահերս ինծի համար եղան լաւագոյն ժամանակներ, կարենալ զբաղելու նախասիրութիւնս եղող գրական ու մշակութային գործերով:

Մտածեցի ազգային ու մշակութային ձեռնարկներ կազմակերպել համագաղութային եղանակով:

Մեր գաղութին մէջ կային էջմիածնական Ս. Պետրոս Հայց. Առաք. եկեղեցին, որ մեծագոյնն է գաղութին մէջ եւ որուն կ'անդամակցիմ, Կիլիկեան թեմի Ս. Իսաչ Հայց. Առաք. եկեղեցին, Հայ Աւետարանական եկեղեցին եւ Վարդանանց ասպետներու կազմակերպութիւնը:

Փափաքս այն էր որ կազմակերպած ըլլայինք ձեռնարկները բոլորին մասնակցութեամբ՝ միասնաբար:

Պէտք է ըսել որ կարելի եղաւ յաջողցնել առաջին ձեռնարկը, որ նուիրուած էր Տօքթ. Վազգէն Բարսեղեանի ծննդեան 80-ամեակին եւ իր պատրաստած բոլոր հայկական ճարտարապետական յուշարձաններու՝ 40,000 մանրաժապաւններով լոյս տեսած 7 ստուար հարորներուն (Տես «Հանգուցեալ գիտնա-

կան Տօքթ. Վազգէն Բարսեղեանի մահուան Ա. տարելիցին առթիւ» յօդուածը (էջ 166):

Սակայն... շնորհիւ մեր ազգային նկարագրին ու «նախանձելի» բարքերուն..., կարելի չեղաւ շարունակել այդ համագործակցութիւնը...:

Հետեւաբար, անձամբ պատրաստեցի՝ կարողութիւնս ներած չափով՝ ազգային ու մշակութային կարգ մը ձեռնարկներ, Ս. Պետրոս եկեղեցւոյ անունով:

Այդ ձեռնարկներու ամենայատկանշականները եղան ամէն տարի կատարուող Ապրիլ 24-ի նուիրուած Յիշատակի ոգեկոչման հանդիսութիւնները, որոնց պատրաստութեան գործին մէջ զգալիօրէն յաւելեալ աշխատանքներ կային:

Իւրաքանչիւր ձեռնարկին կամար հարկ էր պատրաստել 8-16 էջ ծաւալով պրօշիւր մը պատշաճ գրութիւններով եւ յատկանշական մէջբերումներով:

Յայտագրին գեղարուեստական բաժնին համար որոշել դեր ստանձնելիք անձեր ու իրենց դերերը:

Իսկ մեծագոյն հարցն էր ճարել լաւ պատրաստուած դասախօս մը, որ պիտի կարենար լաւագոյն կերպով ներկայացնել օրուան պատգամը ներկաներուն:

Այս պատրաստութիւններուն շնորհիւ հանդիսութիւնները լաւ յաջողութիւն ունեցան եւ մեծապէս գնահատուեցան ժողովուրդին կողմէ:

Յատկանշական է նաեւ այն, որ այս բոլոր ձեռնարկները ծանուցած եմ «Սուրբ Պետրոս Հայց. Առաք. եկեղեցւոյ մշակութային յանձնախումբի» անունով, որպէսզի յայտնի չլլայ անոնց անհատի մը կողմէ պատրաստուած ձեռնարկ մը ըլլալը:

Եւ այդ բոլորը 19 տարի անընդհատ 1980-1999:

Թէեւ այս ձեռնարկներուն պատրաստութիւնը բաւական մեծ աշխատանք էր ինծի համար, սակայն լաւագոյն առիթներ ստեղծած եղան, որ կապ հաստատեմ իմ կարդացած թերթերու խմբագիրներուն եւ աշխատակիցներուն հետ եւ զիրենք հրաւիրեմ դասախօսելու պատրաստուած ձեռնարկներուն համար:

Այդ հրաւերները ոչ միայն որակաւոր դասախօսներ ապահոված եղան ձեռնարկներուն, այլ աւելին՝ լաւագոյն պատեհութիւններ ստեղծեցին անձամբ ծանօթանալու իրենց հետ եւ մանաւանդ ոմանց հետ ալ ուղղակի մտերմանալու:

Ահա այդ մտերիմներէն մին եղաւ «Պայքար» շաբաթաթերթի խմբագիր Պրն. Գրիգոր Զեօսէեանը, որ կարդալով պրօշիւրներուն մէջի գրութիւններս, առաջարկեց ինծի յօդուածներ գրել «Պայքար»ին համար:

Առարկութեանս՝ որ ես շատ ուղղագրական սխալներ ունիմ գրութիւններու մէջ, ըսաւ. «Հոգ չէ, դուն միայն գրէ. ես կ'ուղղեմ զանոնք»:

Պրն. Բէօսէեանի քաջալերական այս խօսքերէն սրտապնդուած, սկսայ յօդուածներ ստորագրել «Պայքար»-ին մէջ, ու այդպէս ալ շարունակուեցաւ մեր կապը թերթին հետ:

Չեմ յիշեր որ թուականին, երբ «Պայքար»-ը փակուեցաւ, սկսայ գրել «Նոր Օր»-ին: Հոս եւս «Նոր Օր»-ի իրերայաջորդ խմբագիրները գնահատանքով տեղ տուին յօդուածներու:

«Նոր Օր»-ի մէջ ունեցած այս յաջող ընթացքէս խրախուսուած, յօդուածներ տուի նաեւ «Մասիս» եւ «Նոր Կեանք» շաբաթաթերթերուն եւ Պէյրութ հրատարակուող՝ Պրն. Ժիրայր Թօսունեանի «Նայիրի» շաբաթաթերթին, որոնք բոլորն ալ գնահատանքով ու սիրով տեղ տուին այդ յօդուածներուն:

Այս հատորը, ահաւասիկ, կը մէկտեղէ յիշեալ թերթերուն մէջ ցրուած տարաբնոյթ յօդուածներ, որոնք կը կրեն պրիսմակիս տարագոյն ցոլքերը, ինչպէս արդէն կը յուշէ այս ժողովածուին խորագիրը՝ «Ցոլքեր Պրիսմակիս Ընդմէջէն»:

* * *

Չեմ փորձուիր որպէս գրագետ ներկայանալ հանրութեան:

Բոլոր անոնք որոնք ի բնէ օժտուած են գրելու կարողութեամբ, սակայն չեն կրցած ստանալ պէտք եղած բարձրագոյն ուսումը՝ կարենալ զարգացնելու իրենց այդ կարողութիւնները, այդպիսիք՝ ընդհանրապէս փոքր ի շատէ մնացած են միջակութեան սահմանին մէջ: Ահա ես մէկն եմ այդպիսիներէն, գուրկ՝ բարձրագոյն կրթութենէ:

Ինչ որ եմ, կամ ինչ աստիճանի վրայ որ կը գտնուիմ, նախ՝ Աստուծոյ տուած շնորհքովն եմ, եւ երկրորդ՝ ընթերցանութեամբ: Ընթերցանութիւն՝ որ եղաւ իմ միակ դպրոցս ու կրթութեանս մատակարարը:

Փառք Աստուծոյ:

* * *

Լոյս ընծայած եմ հետեւեալ գիրքերը

«Հայրական խօսքեր կամ տասնաբանեայ պատուիրաններ»:

Գրած եմ 1983-ին, տղուս 16-րդ տարեդարձին առթիւ, սակայն ձօնած եմ զայն բոլոր Ամերիկահայ պատանի պատանուիկներուն, որոնց ազգային

մաքուր նկարագիրը խաթարուելու եւ մայրենի լեզուն ալ մոռցուելու վտանգին ենթակայ է:

Սոյն գիրքը՝ 96 էջ, անգլերէն թարգմանութեամբ է:

Ալպանի, Նիւ Եորք

Յուշագրութիւն - «90 օր հայրենիքի մէջ»

Ռուպերթ Քոչարեանի նախագահութեան շրջանի կեանքն ու կացութիւնը հայրենիքէն ներս, դիտուած՝ սփիւռքահայի աչքերով. 94 էջ:

2006 Սեպտեմբեր

Երեւան, Հայաստան

«Ուր կ'եղթայ Հայց. Առաք. եկեղեցին»

Մէկտեղումն է 4 յօդուածաշարքերու, ուր մատնանշուած են մեր եկեղեցւոյ կանոնագրութիւններուն ու սրբութիւններուն ներհակ ընթացող երեւոյթներ՝

Արարողութիւնները կարճ կապելու,

Օտար բարքեր ներմուծելու,

Քարոզի ու ծիսակատարումներու ընթացքին կատակախօսութիւններ ընելու, եւ մանաւանդ

Պատարագի լեզուն անգլերէնի դարձնելու նման հարցեր:

Այս գիրքը եւս, 200 էջ, անգլերէն թարգմանութեամբ է:

2011

Կլէմմօնդ, Նիւ Եորք

ԽԱՌՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՍԷՐ

Պատանի տարիքին երբ սեր բառին համապարփակ իմաստը հեռու էր մեր Հասկացողութենէն, երբ սիրոյ կայծերը տակաւին նոր կ'սկսէին փայլատակիլ մեր Սրտերուն մէջ, սերը միայն սեռային սիրոյ նշանակութիւնը ունէր մեզի համար:

Եւ պատանեկան այդ շրջանը բոլորող իւրաքանչիւր պարմանի պէս, մենք եւս՝ իրարու տարեկից ընկերներ, յաճախ իրար հետ կը խօսէինք մեր չգիտցած, նոր-նոր լսած կամ կէս-կատար սորված սեռային հարցերու վրայով, ինչ որ խիստ հետաքրքրական կը թուէր մեզի:

Սակայն օր մը, մեր հեռաւոր բարեկամին՝ Պրն. Սեդրակին, հիւրաբար եւ շաբաթով մը մեր տան մէջ մնալն ու այդ առթիւ տեղի ունեցած ընտանեկան խօսակցութիւնները պիտի գային լոյս սփռել մտքիս ու հասկացողութեանս վրայ:

Պրն. Սեդրակ համալսարանական ուսում ունեցող, զարգացած ու գիտակից անձ մըն էր. սրտով՝ բարի, հոգիով՝ խոնարհ, ուրիշներուն միշտ ցաւակից եւ ուրախութեան բաժնեկից եղող, շրջապատին միշտ օգնելու տրամադրութեամբ, եւ իր գիտութեամբ այլոց օգտակար դառնալ սիրող անձ մը: Շրջան մը ուսուցչութիւն ըրած էր, բայց յետոյ նետուէր էր առեւտուրի ասպարէզ եւ բաւական յաջողութիւն գտած: Իսկ այդ օր՝ դարձեալ առեւտուրի գծով եկած էր Հալէպ եւ իջեւանած մեր տունը: Յերեկներուն ան կը հետապնդէր իր գործը, իսկ երեկոները՝ տնեցիներով, տաք թոնիրին շուրջ նստած, կ'ընթանային մերթ հաճելի եւ մերթ յուզիչ խօսակցութիւններ: Կը խօսէին անցեալէն, Այնթապի իրենց կեանքին եւ հոն իրենց ձգած կալուածներուն մասին: Ապա, զրոյցը կը կեդրոնանար գաղթականութեան ընթացքին տեղի ունեցած հրէշային դէպքերու եւ անմարդկային արարքներուն շուրջ, ներկայ հայ ընտանիքներու անդամներուն եւ ամբողջ ազգին կրած թշուառութիւններուն եւ այլ նիւթերու վրայ:

Բոլոր խօսակցութիւններուն մէջ, սակայն, անպայման դաստիարակիչ եզրայանգում մը կ'ունենային Պրն. Սեդրակին մտածումները: Որպէս իմաստուն եւ իրատես մարդ՝ ան կը ջանար իւրաքանչիւր խօսակցութիւն բերել եւ

կապել ուսանելի կետի մը: Չէր ուզեր որ այդ գրոյցները ըլլային մտքերու պարզ եւ հարեւանցի փոխանակութիւն, այլ՝ կ'աշխատէր անպայման շինիչ եւ օգտակար դաս ու խորհուրդ մը հանել անոնց մէջէն:

Կը յիշեմ. մեր Կիրակնօրեայ-ի դպրոցի դասերէն մէկուն մէջ կար գեղեցիկ պատուէր մը, որ կ'ըսէր. «Ինչ հաւաքականութեան մէջ որ գտնուիս, ջանայ կա՛մ օգտակար ըլլալ եւ կա՛մ օգտուիլ»:

Այս պատուէրը լի ու լի կը կատարուէր մեր խօսակցութիւններուն ընթացքին, քանի որ կար օգտակար եղող մը ու կային օգտուողներ:

Որքան մեծ ցաւով կը դիտեմ յաճախ, երիտասարդներ ու չափահասներ որոնք, իրարու քով գալու պարագային, ո՛չ օգտակար դառնալու եւ ոչ ալ օգտուելու մասին կը մտածեն, այլ՝ իրենք զիրենք ուրախ պահելու միտումով, կատակներով ու դատարկ զուարճախօսութիւններով կ'անցնեն իրենց ժամանակը:

Ես, որ փոքր տարիքէս սիրած եմ եւ, հակառակ 75-իս, տակաւին կը սիրեմ ինձմէ տարեց մարդոց խօսքերը լսել, սորվիլ եւ օգտուիլ անոնց փորձառութենէն, այդ խօսակցութիւններուն կը հետեւէի մեծ հետաքրքրութեամբ եւ ուշի ուշով:

Հետաքրքրութիւնս չլրիպեցաւ Պրն. Սեդրակին տեսողութենէն: Ան տեսնելով իմ շատ լարուած վիճակով հետեւիլս ընթացող խօսակցութիւններուն, ուզեց զիս ալ նկատի առած ըլլալ ու դառնալով ինծի ըսաւ. «Կը տեսնեմ, որ մեծ հետաքրքրութեամբ կը հետեւիս մեր խօսածներուն. այդ կը նշանակէ, թէ սորվելու փափաք ունիս: Քանի՞երորդ ես»:

— Չորրորդ,— ըսի:

— Ձեր դասարանին մէջ քանի՞ մանչ եւ քանի՞ աղջիկներ կան,— Հարցուց: Ըսի.

— 4 մանչ եւ 8 աղջիկ:

— Կը սիրե՞ս քու ընկեր-ընկերուհիներդ:

Անակնկալ այս հարցումէն ապշած ու երկչոտած՝ պահ մը վարանեցայ պատասխանելու: Առաջիններուն համար համարձակ «Այո» մը կրնայի ըսել, սակայն երկրորդներուն համար... դժուարացայ: Ի՞նչ կը նշանակէր... ընկերուհիներդ սիրել...: Տեսաւ հասկացողութեանս պատճառաւ՝ տեսակ մը ամօթ զգացի: Բնական է, որ ինծի ուղղուած հարցումը ամենեւին չէր վերաբերեր իմ «Սիրելու» ըմբռնումին: Այդ մասին պիտի սորվէի աւելի ուշ:

Թէեւ «Այո» պատասխանեցի, բայց... կարկամելով ու շիկնած: Պրն. Սեդրակ շատ հաւանաբար կռահեց մտքէս ու հոգիէս անցածը: Սակայն, առանց որեւէ բան հասկցնելու, շարունակեց հարց տալ:

— Կը սիրե՞ս դպրոցը:

— «Այո» պատասխանեցի:

— Կը սիրե՞ս եկեղեցին:

— Այո,— ըսի եւ ւաւեցուցի. «Ամէն կիրակի շապիկ կը հագնիմ հոն, որպէս դպիր»: Եւ Հարց-պատասխանը երկարեցաւ:

— Ապրիս,— ըսաւ եւ ւաւեցուց:

— Կը սիրե՞ս հայրենիքդ՝ Հայաստանը:

— Այո:

— Կը սիրե՞ս Հայ Ազգը, քո՛ւ Ազգը:

— Այո:

— Կը սիրե՞ս Մայրենի լեզուդ՝ Հայերէնը:

— Այո, շատ կը սիրեմ:

— Ո՞վ սորվեցուց քեզի այս բոլորը սիրել:

— Մեր ուսուցիչները,— ըսի փութով եւ ւաւեցուցի,— մանաւանդ՝ մեր տնօրէնը, Տէր եղիշէ Քհնյ. Փանոսեանը, որ միշտ կը խօսի հայրենիքի գեղեցկութեան, Հայ ժողովուրդի քաջութեան, Հայ լեզուի քաղցրութեան, Հայ եկեղեցւոյ կարեւորութեան եւ դպրոցի անհրաժեշտութեան մասին:

— Լաւ դաստիարակ մը եղած պէտք է ըլլայ: Ուրախ եմ, որ այդպիսի ուսուցիչներ ունիս,— եղաւ պատասխանը, իսկ հետեւութիւնը՝— Հիմա կը հասկնամ, որ սիրել գիտես վեհ եւ նուիրական բաներ: Ծատ ապրիս:

Պրն. Մեղրակ այսքանով չգոհացաւ: Ծարունակեց խրատել:

— Պէտք է գիտնաս, որ բոլոր գործերու յաջողութեան բանալին սիրոյ մէջ է:

Օրինակ՝ եթէ դպրոցը չսիրես եւ առանց սիրելու երթաս հոն, բան չես սորվիր:

«Եթէ վաղը արհեստի երթաս եւ չսիրես այդ արհեստը, չես կրնար գայն սորվիլ:

«Իսկ երբ մեծնաս եւ գայ ժամանակը աշխատանքի, սորվածներդ գործադրութեան դնելու, ահա, այն ատեն, յայտնի պիտի ըլլայ աշխատելու եղանակէդ, թէ ի՞նչպիսի սիրով կը կատարես աշխատած գործդ:

«Դուն քեզի համար ինչ տեսակի ասպարէզ որ ընտրես, կեանքի մէջ ըլլաս արհեստաւոր թէ վաճառական, ուսուցիչ թէ գրող-խմբագիր, երկրաչափ թէ փաստաբան, բժիշկ թէ դեղագործ, եկեղեցական թէ քաղաքական գործիչ, այնքան ատեն որ սեր չես դնէր աշխատանքիդ մէջ, դուն չես կրնար արժեւորել կատարած գործդ:

«Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Եթէ մարդոց ու հրեշտակներու լեզուները խօսիմ եւ սեր չունենամ, ես ձայն տուող պղինձի պէս եղած պիտի ըլլամ, կամ՝ գուր տեղ հնչող ծնծղաներու պէս: Իսկ եթէ իմաստնոութիւն ունենամ ու

հասկնամ բոլոր խորհուրդները, մեծ գիտությունը ու հաւատքը, մինչեւ լեռները տեղափոխելու, բայց չունենամ սէր, կը նշանակէ թէ... ոչինչ եմ»: (Ա. Կորնթ., ԺԳ. 1-3)

«Ահաւասիկ, ասկից աւելի գեղեցիկ վկայութիւն չի կրնար ըլլալ սիրոյ մասին: Այնպէս որ, եթէ նոյնիսկ ուսումնոյ շարունակես եւ քու բնատուր կարողութիւններդ ուսմամբ զարգացնելով կարենաս հասնիլ մարդկային մակարդակի ամենաբարձր գագաթներուն՝ դառնաս փրոֆեսօր կամ գիտնական, աստղագէտ թէ փիլիսոփայ, եւ վերէն դիտես քեզմէ վար եղողները յօխորտանքով, այսինքն՝ Սէր չունենաս հանդէպ շրջապատիդ, չես կրնար արժեւորել ո՛չ դուն քեզ եւ ոչ կատարած գործդ:

«Առանց սիրոյ եղած որեւէ գործ կատարեալ չի կրնար ըլլալ:

«Ճշմարիտ սէրը քեզ կը դարձնէ խոնարհ, անկեղծ, անաչառ, հաւատարիմ, ծառայասէր եւ նուիրուող անձ:

«Ասոնք են սիրոյ յատկանիշները, որոնցմով կերտուած կ'ըլլայ նկարագիրդ:

«Եւ ահա, այսպիսի նկարագրի տէր անձ մը ո՛չ միայն լաւագոյնս կրնայ ծառայել իր շրջապատին եւ իր Ազգին, իր ուղիղ եւ հաւատարիմ գործունէութեամբ, այլեւ՝ քաջութիւնը կ'ունենայ խօսելու ճշմարտութիւնը, երբ տեսնէ գործուիր անիրաւութիւններու, անօրինութիւններու, գեղծարարութիւններու եւ դեմ՝ ամէն տեսակի թերութիւններ եկեղեցական, դպրոցական, միութենական եւ ազգային կեանքէ ներս: Պարկեշտ մարդը չի վարանիր քննադատելու, խօսելու եւ խրատելու, որպէսզի դադրին անօրինութիւնները եւ ազգին հաստատութիւններուն շահերը չվնասուին անիրաւ գործունէութիւններով»:

— Սակայն, Պրն. Սեդրակ,— մէջ մտաւ մայրս, եւ շարունակեց,— Չէ՞ որ կ'ըսեն. «Շիտակ խօսող մարդուն գլուխը ծակ կ'ըլլայ»:

— Այո. որոշ իրականութիւն մը կայ այդ խօսքին մէջ,— ըսաւ Պրն. Սեդրակ,— քանի որ շիտակ խօսողը յոյսին կը բերէ մարդոց սխալներն ու յանցանքները: Թէեւ, սա մէկն ալ ըսեմ՝ ցաւ ի սիրտ, որ միայն սորվիլ եւ ուղղուիլ սիրող անձերն են որ կ'օգտուին այդ շիտակ խօսքերէն: Ընդհանրապէս՝ մարդիկ չեն սիրեր տեսնել իրենց յանցանքը, չեն ուզեր ընդունիլ իրենց սխալը, անոր համար որ կ'ամ կարծրամիտ են, այսինքն՝ իրենց սխալը ընդունելու չափ ազնուութիւն չունին, կամ ալ կուրացած կ'ըլլան, ճշմարտութիւնը չկարենալ տեսնելու աստիճան, եւ դեմ՝ շահ մը կը հետապնդեն սխալ գործելու մէջ: Ահա, այս վերջիններուն հետապնդած շահերուն է, որ չի համապատասխաներ շիտակ խօսքը: ճշմարտութիւնը կը խոչընդոտէ իրենց չարագործելը: Ահա, այս պարագաներուն է, որ շիտակ խօսող մարդուն գլուխը ծակ կ'ըլլայ:

«Սակայն, գիտնալով մէկտեղ այդ բոլորը, ճշմարտութիւնը պէտք է խօսուի վասն Արդարութեան, որպէսզի սրբագրուին սխալները, ուղղուին յոռի րնթացքները, շտկուին անիրաւ եւ անարդար գործունէութիւնները:

«Որքան ատեն որ այդ ճշմարիտ Մէրը կայ սրտիդ մէջ եւ դուն կը սիրես Մարդկութիւնը, կը սիրես քու Ազգդ, քու Համայնքդ, քու Բարեկամներդ՝ չես կրնար անտարբեր մնալ անոնց սխալներուն եւ յանցանքներուն նկատմամբ: Չես կրնար ըսել.— Ինծի ի՛նչ. ի՛նչ կ'ուզեն թող ընեն, ի՛նչ կ'ուզէ թող ըլլայ. Ե՛ս մնացի շիտակ խօսող: Ոեւէ մէկուն յանցանքը եթէ երեսին տաս, արդէն իսկ գէշ կ'ըլլաս հետը»... եւայլն:

«Ասիկա թուամորթ եւ անսկզբունք մարդու խօսք է: Այդպիսիներ չեն կրնար որեւէ շինիչ գործ տեսնել իրենց կեանքին մէջ:

«Մէրը կը մղէ քեզ որ խրատես եւ ուղղես մոլորածները, անօրէն եւ զարտուղի գործեր կատարողները, հաշտեցնես իրար հետ խռով ամուսինները, քոյրերն ու եղբայրները, կամ ընտանիքի այլ անդամները, եւայլն:

«Ահա, ասոնք են սիրոյ յատկանիշները:

«Պօղոս Առաքեալ նոյն գլուխը կը վերջացնէ ըսելով. «Հաւատք, յոյս եւ սէր: Ունեցի՛ր այս երեքը որոնց մեծագոյնը սէրն է»:

«Որով, մարդ հաւատք պէտք է ունենայ իր կատարած գործին նուիրականութեան վրայ:

«Յոյս ունենայ անոր յաջողութեան վրայ:

«Եւ համակ սէր դնէ այդ գործին մէջ:

«Ահա, այն ատեն միայն, կատարուած որեւէ գործ կ'ըլլայ ամբողջական եւ կատարեալ, եւ լրիւ ծառայել իր նպատակին»:

ԵՍ ՍՈՐՎԱԾ ԷԻ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԻՄԱՍՏԸ:

«Նայիրի», 30 Մարտ 2010

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԹՈՌՆԻԿԻՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Մեզի կ'ըսեին թե թոռնիկ մը գաւկէն աւելի կը սիրուի:

Չէինք հասկնար:

Արդարեւ, ինչպէս կարելի էր հասկնալ, երբ տակաւին այդ հանգրուանին չէինք հասած:

Այսօր երբ կը դիտեմ թոռներս, կը հասկնամ պատճառը թե ուսկից առաջ կու գայ այդքան սէր թոռնիկներու հանդէպ:

Մեր գաւակները կը սիրէինք, անոնց հետ կը խաղայինք: Կը ջանայինք կարելի եղած չափով զիրենք ուրախացնել խաղալիքներով, երբ անոնք ներկայ մեր թոռնիկներուն տարիքով էին: Սակայն երբ հետզհետէ մեծցան ու դարձան պատանիներ ու երիտասարդներ, սիրոյ եղանակը փոխուեցաւ: Այլեւս չէինք կրնար զիրենք օղը նետել ու բռնել ու խաղալ իրենց հետ: Հիմա եկած էր ժամանակը անոնց պէտքերը հոգալու: Անոնց ուսում եւ կրթութիւն ապահովելու: Անոնց մէջ առողջ եւ մաքուր նկարագիր կերտելու եւ զիրենք պատրաստելու՝ կեանքի փորձութիւններուն կարենալ դիմադրելու քաջութեամբ:

Մանուկ մը սիրելու պահանջքը մարդուս մէջ բնագդական է: Որով, երբ գաւակները մեծնան եւ այլեւս մանուկներ չմնան ընտանիքէն ներս, մարդոց հոգիներուն մէջ կը գոյանայ պարապութիւն մը: Եւ ահա այդ պարապութիւնը կու գան լեցնել թոռնիկները, որոնք քիչ մը աւելի սիրելի են այն իմաստով որ, հայր մը կամ ծնողք, որքան սիրեն իրենց գաւակները, նոյնքան եւ հեղինակաւոր անձերն են այդ ընտանիքին: Այնպէս որ, ի պահանջել հարկին, կրնան սաստել զիրենք եւ նոյնիսկ պատժել: Մանուկ մը իր բոլոր չարութիւններով մէկտեղ, գիտէ թե ինք ենթակայ է իր ծնողքի հրահանգներուն եւ պարտի հնազանդիլ անոնց: Մինչդէռ իրենց մեծ հօրմէն ու մեծ մօրմէն այդքան սաստ չեն տեսներ, որքան կը տեսնեն գուրգուրանք: Մեծ հայրեր ու մայրեր այդ գուրգուրանքը կ'ունենան իրենց սրտին մէջ տեսնելով ուռճանալը իրենց շառաւիղին իրենց չափահաս թե հասուն տարիքին մէջ եւ այդ տարիքի տարբերութիւնը ինքնին անհուն սիրով կը կապէ զիրենք իրենց թոռներուն:

Կան ինձմէ աւելի ու նուազ թիւով թոռներու տէր մարդիկ: Ես անոնց միջիններէն կը նկատուիմ: Երկու աղջիկներ միջնեկ աղջիկէս. երեք մանչեր

կրտսեր աղջիկէս. աղջիկ մը եւ մանչ մը երեց զաւկէս՝ Կարոյէն: Եօթը թոռներ...:

Այս համրանքը կրնայ վերջնական չլլալ. բայց առայժմ նիւթը վերջին մանչն է, որուն անունն է Յակոբ Տէրեան:

Մեր հայկական սովորութեան համեմատ, ծնող մանուկը կրնայ ժառանգել իր մեծ հօր կամ մեծ մօր անունները միայն եւ ոչ իր հօր կամ մօր անունները, ինչպէս սովորութիւն է ամերիկացիներուն մօտ: Անոնք կը զանազանուին իրարմէ *senior-junior* կոչումներով: Մեզի՝ հայերուս համար, խորթ կը թուի այդ սովորութիւնը: Իմ զաւակս ժառանգած է իմ հօրս անունը՝ Կարապետ, եւ ահաւասիկ իր զաւակը կը ժառանգէ իմ անունս՝ Յակոբ: Այսպէս է որ կ'ընթանան սերունդները:

Այժմ դառնանք մեր բուն նիւթին, որն է մկրտութիւնը:

Նախ ի՞նչ է մկրտութիւնը, ի՞նչ նշանակութիւն ունի ան:

Ամփոփ կերպով ըսեմ որ մկրտութիւնը մեր եկեղեցւոյ եօթը խորհուրդներէն մէկն է: Իսկ խորհուրդ կը նշանակէ կատարուող բան մը, որ չի տեսնուիր: Այս պարագային՝ մկրտուող մանկան աղամական մեղքէ սրբուելով քրիստոնէայ դառնալն է:

Իրականութեան մէջ, մեր խորհուրդները կարծէք կորսնցուցած են իրենց իմաստն ու նշանակութիւնը եւ դարձած են լոկ արարողութիւններ: Եւ ապա այդ արարողութիւններուն յաջորդող խրախճանքները կու գան մեզի յուշել թէ անոնք (մկրտութիւն, նշանախօսութիւն, պսակ եւ կամ այլ տօնական օրեր եւ սուրբերու անուան տօներու յիշատակութիւններ եւ այլն) լոկ առիթներ են մեզի համար քէֆի եւ ուրախութեան:

Դիտեցէք մկրտութեան արարողութիւն մը: Մինչ սարկաւազներ շարականներ կ'երգեն, մինչ քահանան աղօթքներ եւ Աւետարան կը կարդայ, ապա մանուկը կը մկրտէ ջուրին մէջ ու կը դրոշմէ Ս. Միւռնոնով, անդին նկարիչներ եռուզեռի մէջ են, միշտ տեղերնին փոխելով, աջէն ու ձախէն, մանուկը աւելի լաւ կարենալ նկարելու համար:

Մայրը, կնքամայրը եւ մանկան մօտիկ հարազատ կիներ զբաղած են մանկան հագուստները հանելու եւ ապա կնունքի հագուստներ հագցնելու աշխատանքով եւ այլն: Եւ այդ բոլոր շարժումները կու գան ժողովուրդին ուշադրութիւնը կեդրոնացնել իրենց վրայ, աննկատ թողելով մկրտութեան բուն իմաստն ու նշանակութիւնը:

Իսկ մկրտութեան աւարտին շնորհաւորութեան ընթացքին, կը տեսնենք կին մը, որ ոսկի խաչ մը կ'անցնէ մանկան վիզէն ու այդ դիրքին մէջ կը նկարուի, որպէս... անմոռանալի յիշատակ: Ուրիշ կին մը՝ ոսկի մանեակ մը, դեռ ուրիշ մը՝ ոսկի մատանի մը, ու այսպէս յաջորդաբար, առանց մոռնալու...

նկարուիլը, նոյն ատեն արգելք ըլլալով իրենց ետին կեցողներուն, որոնք շարքի շարուած կը սպասեն:

Տակաւին խրախճանքի վայրին մէջ եւս պիտի տեսնենք գունաւոր թուղթերով փաթթուած հոյլ մը մեծ ու պզտիկ տուփեր, որոնք նուէրներ են մկրտեալին՝ ներկաներուն կողմէ բերուած: Իսկ ուրիշներ չէքեր պարունակող պահարաններ պիտի յանձնեն մանկան ծնողքին: Եւ այս բոլորին պիտի յաջորդեն կեր ու խում. նուագ, պար եւ խրախճանք:

Եթէ ճշմարտութեան լոյսին տակ քննենք այս բոլորը ծայրէ ի ծայր, պիտի յանգինք հետեւեալ եզրակացութեան:

Արարողութիւն, նիւթական գնահատանք եւ խրախճանք:

Քիչ անգամներ ներկայ եղած եմ մկրտութեան խորհուրդի արարողութեանց, ուր զգացած եմ այդ խորհուրդին իրագործումը եկեղեցիէն ներս, մկրտեալին ընտանիքին երկիւղածութեամբ մօտեցումէն եւ մկրտող քահանային կատարելու եղանակէն: Այսպիսիներ թէեւ սակաւ են, սակայն ուրախալի է տեսնել որ կան տակաւին լուսաւորեալ հոգիներ: Սակայն մեծամասնութեան մօտ դժբախտաբար կը պակսի այդ հոգեւոր ու բարոյական իմաստին հասկացողութիւնը:

Նիւթով փաթաթուած, արարողութեամբ զարդարուած եւ խրախճանքով համեմուած համադրում մըն է իր իսկական պատկերին մէջ:

Բնական է պիտի չուզէի որ թոռանս մկրտութիւնը ընդգրկած ըլլար միմիայն վերել յիշուած երեւոյթները, այլ ունենար աւելի գիտակից մօտեցում, հանդէպ մկրտութեան խորհուրդին ու անոր նշանակութեան:

Պիտի չուզէի նաեւ որ անոր յաջորդող ճաշկերոյթը եւս ստանար լոկ անիմաստ խրախճանքի մը պատկերը, նուէրներու ցուցադրութեամբ:

Պէտք է ըսեմ որ նիւթական որբէլ նուէր այնքան ուրախութիւն չէ պատճառած ինծի, որքան բարոյական նուէր մը:

Սակայն ինչ կը նշանակէ բարոյական նուէր:

Օրինակ՝ իր գաւկին անառակ ընթացքը ուղղելու մտօք, անոր ընկերաբար մօտենալով եւ համոզիչ խօսքերով, իր ընթացքին աղէտալի հետեւանքները իրեն ցոյց տալով, զինք անկումէ փրկող հայր մը, բազմապատիկ աւելի մեծ նուէր մը տուած կ'ըլլայ իր գաւկին, քան, եթէ երբեք լեցուցած ըլլար անոր գրպանը դրամով:

Թէեւ կարելի է երկար շարք մը կազմել նման բարոյական նուէրներու օրինակներով, սակայն անոնց ամենագեղեցիկը կու գայ Ս. Գիրքէն:

Գործք Առաքելոց գրքին Գ. գլխուն մէջ կը տեսնենք, որ երբ Պետրոս եւ Յովհաննէս Առաքեալները տաճար կը մտնէին, հոն տեսան ի ծնէ կաղ մարդ մը, որ դրան քով նստած, ողորմութիւն կը խնդրէր տաճար եկողներէն: Պետ-

րոս դառնալով ըսաւ մարդուն (6-րդ համար) «Արծաթ եւ ոսկի չունիմ, հապա ինչ որ ունիմ գայն կու տամ քեզի: Նագովրեցի Յիսուս Քրիստոսի անունով ելիր ու քալէ»: Եւ անոր ձեռքէն բռնելով վերցուց գայն, եւ մարդը սկսաւ քալել:

Ո՞ր մէկը նախընտրելի պիտի ըլլար: Եթէ պատահէր որ Պետրոս անոր ձեռքին մէջ ոսկի մը դնէր, անկասկած աղքատ մարդը պիտի ուրախանար առժամապէս, քանի որ որոշ ժամանակի մը համար իր ապրուստը ապահովուած պիտի ըլլար: Սակայն... ինք պիտի շարունակէր մնալ իր ողորմելի վիճակին մէջ: Մինչդեռ հիմա առողջացած ոտքի ելած էր: Ա՛լ կրնար արժանապատիւ կեանք մը ապրիլ, աշխատելով ու շահելով, փոխանակ մուրալու:

* * *

Վերեւ յիշուած օրինակներու հետեւողութեամբ, ես ալ իմ կարգին, ուզեցի թոռանս նուիրել իր մկրտութեան այս յատկանշական առիթով նուէր մը, որ ըլլայ մնայուն եւ իր ամբողջ կեանքի տեւողութեան հնչէ իր ականջներուն, իր մեծ հօրմէն իրեն ձօնուած որպէս պատգամ, որպէսզի օտար երկրի օտար բարքեր չխլեն իրմէ իր ազգային նուիրականութիւնները եւ ինք չկորսնցնէ իր հայութիւնը:

Այդ ցանկութիւնն էր, որ մղեց զիս գրել երգ մը իրեն ուղղուած, որուն եթէ առաջին տունը մեծ մօր մը հիացմունքին արտայայտութիւնն է միայն, յաջորդ երկու տուները իսկական պատգամներ են իրեն համար:

ԹՈՌԱՆՄ ՅԱԿՈԲԻՆ

Կ'երգուի «Այ նարէ, նարէ»ի եղանակով

Յակոբիկիս հոգին անոյշ է
Ծրթներն ասես քաղցրահամ
նուշ է,
Ունի Կապոյտ աշուկներ
խոհուն,
Նայուածքը կ'արտայայտէ
խոհեմութիւն,
Դուն Յակոբիկն ես,
Սիրուն բալա ես
Դուն մեծ հայրիկին
Իրաւ յաջորդն ես:

Յակոբիկ, դուն երբ որ մեծնաս,
 Ուսմամբ զարգանաս, դիրքի
 տէր դառնաս,
 Թէ որ լեզուներու տիրանաս
 Ամէնքէն առաջ մայր լեզուդ
 գիտնաս
(շեշտ. կրկ.)
 Դուն Յակոբիկն ես...:

Թէ յաջողիս եւ հարստանաս,
 Օտար երկնի տակ պալատ
 ունենաս,
 Ճոխութեանդ մէջ չօտարանաս,
 Քո հայրենիքը երբեք չմոռանաս
(շեշտ. կրկ.)

Դուն Յակոբիկն ես,
 Սիրուն բալա ես,
 Դուն մեծ հայրիկին
 Ապագայ յոյսն ես

Սոյն երգը, որ թէւ ձօնած եմ յատկապէս եօթներորդ թռնիկիս՝ Յակոբիկին, կը ձօնեմ նաեւ իմ ԲՈԼՈՐ ԹՈՌԵՆԵՐՈՒՄ ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ: Կը ձօնեմ եւ բոլոր հայ մանուկներուն, պատանիներուն, երիտասարդներուն, բոլոր հայ աղջիկներուն եւ տղոց, որոնք իրենց աչքերը կը բանան օտար երկիրներու մէջ, միշտ ենթակայ օտար լեզուներու, օտար բարքերու, օտար սովորութիւններու, օտար ըմբռնումներու, որոնք ընդհանրապէս խորթ են մեր ազգային սրբութիւններուն:

Սակայն... խորհուրդ մը կը տանջէ միտքս:

Արդեօք, կարելի՞ է պատգամելով, մաղթելով, թելադրելով արդիւնք մը ձեռք ձգել, առանց աշխատանքի:

Արդեօք, կարելի՞ է յուսալ որ թռնիկս իմ այս պատգամը կատարէ լի ու լի, առանց դաստիարակուելու այդ ուղղութեամբ:

Արդեօք պետական դպրոցները պիտի դաստիարակեն զինք իր ազգային գիտակցութեամբ...:

Արդեօք հեռուստացոյցի յայտագիրները պիտի կերտեն իր մէջ մաքուր եւ ազնիւ նկարագիր...:

Արդեօք իր դպրոցական ընկեր ընկերուհիները պիտի մղեն զինք իր ազգային սրբություններուն...:

Որքան ծիծաղելի են նման բաներ ականալել ամերիկեան դաստիարակութենէն, որուն սկզբունքն է բոլոր ազգերը՝ սեւ ու ճերմակ, միախառնել եւ մէկ ազգութիւն յառաջ բերել «ամերիկացի» անուան տակ:

Ոչ բարեկամներ, «օտարներէն չկայ յոյս»:

Մեր նոր հասնող սերունդը պիտի չկարենայ դիմադրել օտար այդ հուժկու հոսանքին, եթէ երբեք չունենայ հաստատ եւ տոկուն նկարագիր, իր ազգային ըմբռնումներով: Եթէ երբեք չդաստիարակուի անոր միտքը հայկական գիտելիքներով:

Սակայն... հարց է դարձեալ, թէ ով պիտի կերտէ այդ հաստատ եւ տոկուն նկարագիրը, հայ մանկան եւ պատանին հոգւոյն մէջ:

Ո՛վ պիտի դաստիարակէ անոր միտքը ազգային գիտելիքներով:

Եթէ պիտի բաւականանանք եկեղեցւոյ կատարած ազգապահպանման գործով, զայն գնահատելի գտնելով մէկտեղ, կրնանք ըսել որ անբաւարար է:

Եթէ պիտի գոհանանք կուսակցութիւններու եւ անոնց ենթայանձնախումբերու կատարած մշակութային, գրական, թատերական, ընկերային եւ մարզական ձեռնարկներով, դարձեալ գնահատելի գտնելով մէկտեղ պիտի ըսենք՝ անբաւարար է:

Սփիւռքը ամենեւին չի կրնար ընձեռել մեզի ազգապահպանման համար պէտք եղած բոլոր այն պայմանները, ինչ որ հայրենիքը կրնայ տալ:

Եթէ հայրենիքի մէջ ապրած ըլլայինք, ամենեւին պէտք պիտի չունենայինք այս հարցերով մտահոգուելու, քանի որ հայրենի հողը, հայ լեզուն, միջավայրը, հայ դպրոցը, հայ մշակոյթը ինքնաբերաբար պիտի դաստիարակէին մեր զաւակները հայկականութեամբ:

Սակայն որքան ատեն որ կ'ապրինք օտար հողի վրայ, միշտ օտարութեան ենթակայ, եկեղեցւոյ եւ կուսակցութեանց գործունէութեան առընթեր, մեծ պարտաւորութիւն մը կը ծանրանայ նաեւ իւրաքանչիւր հօր ու մօր, իւրաքանչիւր մեծ հօր եւ մեծ մօր ուսերուն վրայ:

Պէտք է գիտնալ, որ ընտանեկան կրթութիւնը ամենաւեական եւ ամաչնակարգ դաստիարակութիւնն է:

Այդ ընտանեկան կրթութեամբ է որ զաւակ մը կրնայ սիրել իր ազգը, իր հայրենիքը, իր լեզուն, իր մշակոյթը, իր եկեղեցին:

Չի բաւեր միմիայն սիրել մեր զաւակներն ու թոռները, պարտինք դաստիարակել զիրենք ընտանեկան մաքուր դաստիարակութեամբ, ազգային արժէքներով, ազգային սրբութիւններով, վառ պահելով անոնց սրտին մէջ սէրն ու անհրաժեշտութիւնը հայ լեզուին եւ ամրապնդել հոգեկան

անքակտելի կապը հայրենիքի հետ:

Այնպես դաստիարակուած մանուկ մը կամ պատանին, մեծնալէ ետք կրնայ օգտակար ծառայութիւններ բերել ազգին, կարեւոր պաշտօններ ստանձնելով:

Եկեղեցւոյ, կուսակցութիւններու եւ ծնողաց միատեղ ու միակամ աշխատանքին շնորհիւ միայն կարելի կը դառնայ կացութիւնը փրկել: Այլապէս «մենք հայ ենք եւ հայ ալ պիտի մնանք» յանկերգով անհոգ եւ անտարբեր, միայն մեր առօրեայ գործին ու շահուն ետեւէն վազելով, չենք կրնար ակնարկել որ մեր գաւակները հաւատարիմ մնան իրենց հայութեան:

«Ես լաւատես եմ, իմ գաւակներուս նկատմամբ», կ'ըսէր բարեկամ մը, օղիի երրորդ գաւաթը պարպելէն ետք. «Անոնք լաւ հայեր են եւ լաւ հայեր ալ պիտի մնան: Ես անհոգ եմ այդ տեսակէտէ: Իրիկունները տուն կու գամ, սա պատուհանին դէմը կը նստիմ, քաղաքը դիտելով, մի քանի գաւաթ կը նետեմ, քէֆիս կը նայիմ եւ հանգիստ քուն մը քնանամ», կ'աւելցնէր ան:

Ակնարկութիւնը «իբր լաւ» տղուն համար էր, որ ամուսնանալէ վեց ամիս ետք ամուսնալուծուեցաւ... ամերիկեան բարքերու... շնորհիւ...:

Լաւատեսութիւնը անկասկած աւելի լաւ է, քան յոռետեսութիւնը: Սակայն այսպիսի լաւատեսութիւն ուրիշ բան չէ, եթէ ոչ ինքնախաբէութիւն:

Ուրեմն՝ չըլլանք մենք զմեզ խաբող լաւատեսներ, եւ ոչ ալ բոլորովին յուսահատ յոռետեսներ: Ըլլանք իրատես, եւ իրատեսի աչքերով տեսնենք արեւի յոյսին պէս տեսանելի իրականութիւնը:

Եւ վստահ եղէք. եթէ կարենանք տեսնել ամբողջ իրականութիւնը, հանգիստ սրտով այդ օղին պիտի չկարենանք խմել...:

«Կրթեա՛ր՝ զմանուկն ի սկզբան օրօրոցէն եւ յորժամ մեծանիցէ նա, ոչ խոտորեցէ»:

Օ՛ր հայրեր ու մայրեր, մեծ հայրեր ու մեծ մայրեր, գիտակցինք այս ճշմարտութեան, եթէ չենք ուզեր ազգովին կորսուիլ: Վաղը ուշ է:

«Նոր Օր», 13 Ապրիլ 2002

Ուղիղ քառորդ դար առաջ

ՀԱՏՈՒԱԾ ՄԸ 1991-Ի ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ

1991-ի Սեպտեմբերին էր, որ առաջին անգամ ըլլալով տիկինս ու ես Հայաստան կ'այցելեինք, բարեկամիս՝ Տոքթ. Սիներիկ Հայրապետեանի կարգադրութեամբ, Ակադեմիայի հրաւերով:

Մեր տարիներու փափաքն ու երազն էր Հայաստան այցելել, սակայն հակառակ անոր որ Հալեպէն Երեւան օդանաւով երկու ժամուայ տեւողութիւն ունէր՝ դարձեալ բախտը չէինք ունեցած մեր փափաքը իրագործել, միշտ արգելքներու հանդիպելով: Եւ ահա հրաւեր մը պատճառ կը դառնար, որ այս անգամ Ամերիկայէն 16 ժամ ճամբորդելով երթայինք Հայաստան:

Մեր թռիչք Մոսկուայի վրայով էր: Ուրեմն, երբ կը հասնէինք Մոսկուա, օդակայանին մէջ կ'իմանայինք, որ երեւանեան թռիչքները խիստ կրճատուած են վառելանիւթի չզոյութեան պատճառաւ. չորսի փոխարէն միայն մէկ օդանաւ՝ 4 ժամը անգամ մը կ'երթելէկէր Մոսկուա-Երեւան գծի վրայ:

Ճամբորդներու անկասկած 90 տոկոս հայաստանցի հայեր էին, որոնք խնդրուած է իրար հրմշտկելով, առանց կարգ ու կանոնի կը մտնէին օդանաւէն ներս, երբ այս վերջինը հասներ եւ իր դռները բանար ճամբորդներուն համար: Իսկ մենք՝ դուրսէն եկողներս, անտեղեակ նման բարքերու, կը դատապարտուէինք 18 ժամ մնալ օդակայանին մէջ, մինչեւ որ բախտը ունենայինք 4-րդ թռիչքով մեկնիլ Երեւան:

«Չուարթնոց» օդակայանին մէջն ենք: Արեւը մար մտած է արդէն: Մեզ դիմաւորելու եկած են մեր ազգականները, որոնք 1946-ին ներգաղթած ընտանիքներու զաւակներու զաւակներ ու թոռներ, անձանօթ, նոր դէմքեր են մեզի համար: Չիրար մօտաւորապէս կը ճանչնանք նկարներու ընդմէջէն, իրարու դէմքերը նմանցնելով: Տեղի կ'ունենան ծանօթացումներ, ձեռք սեղմումներ եւ ողջագոլորումներ, որոնցմէ ետք մեզ կ'առաջնորդեն «Անի» հիւրանոց, որուն 10-րդ յարկը սենեակ մը ապահովուած է մեզի համար:

Հիւրանոց հասնելէ ետք մեր պայուսակները կը տեղաւորենք ու կը նստինք: Մեզի հրամցուած բարեգալուստի սուրճին հետ մէկտեղ, ջերմ խօսակցութիւն ունենալու մեզ դիմաւորող բարեկամներուն հետ: Մօտ մէկ ժամ հաճելի խօսակցութիւններէ ետք, մեզ ազատ կը թողուն, որպէսզի մեր ճամբու յոգնութիւնը կարենանք առնել ու կը մեկնին յաջորդ օր տեսնելու

պայմանով: Իրենք բարի երթ մաղթել էտք անկողին կը մտնենք, երկու օրերու մեր ճամբորդութեան տաղտուկէն պարտասաւ:

Առաւօտեան լուսաբացին պատշգամ կ'ելլեմ դիտելու համար Երեւանի գեղեցկութիւնը:

Զգացումներս արտայայտելու դժուարութիւնը կ'ունենամ: Կը նմանիմ այն մարդուն, որ իր ծնած օրէն ի վեր հեռու է մնացած զինք ծնող մօրմէն, եւ ապրած են իրարմէ հեռու, սակայն միշտ կարօտով եւ այն յոյսով, որ օր մը անպայման պիտի հանդիպին իրարու: Եւ ահա 55 տարիներ ետքն է միայն, որ այդ առիթը կը ներկայանար իրենց: Եւ այժմ իրարու հետ են ահա, դէմ-դիմաց կանգնած, թէւ իրարու անձանօթ, բայց եւ այնպէս հարազատ մայր եւ որդի:

Յաջորդ օրերուն որքան աւելի կը տեսնեմ Երեւանի գեղեցկութիւնը, այնքան կ'աւելնայ մէջս հարազատութեան եւ փոխադարձ պատկանելիութեան զգացումը:

Մեր այցելութեան առաջին շաբաթը խիստ զբաղած էի: Հանգուցեալ գիտնական Տորթ. Վազգէն Բարսեղեան, որ ի մասնաւորի հայկական յուշարձաններու պահպանման գործին մէջ անփոխարինելի կտակ մը թողուց իր ետին եւ որ միշտ կապի մէջ էր հայրենի համապատասխան գիտնականներու հետ, ինծի յանձնած էր նամակներու տրցակ մը, որոնք պարտ էի հասցնել իրենց տէրերուն եւ ստանալ իրենց գրաւոր թէ բերանացի պատասխանները:

Մեր բարեկամները դժգոհ էին որ ժամանակ չունէինք իրենց հետ անցընելու: Պէտք է ըսեմ նաեւ, որ այդ օրերուն երկրէն ներս կային հակամարտութիւններ եւ անապահովութիւն: Մի քանի սպանութիւններ ալ տեղի ունեցած էին, որոնցմէ մին կը յիշեմ Չաւուշ կը կոչուէր: Այդ պատճառով «պարէտային» ժամ յայտարարուած էր ամբողջ Երեւանի մէջ, որով ժամը 10-էն առաջ պարտ էինք հիւրանոց գտնուիլ, մինչեւ յաջորդ օր դուրս չելլելու պայմանով: Այդ կերպով կ'արգիլուէին մեզի նաեւ գիշերային այցելութիւնները:

Այդ օրերուն էր, երբ ազդուած ներքին այդ հակամարտութիւններէն, որոնք մերթ կը յանգէին սպանութիւններու, յօդուած մը ստորագրած էի «Աւանգարդի» մէջ «Խօսք երիտասարդներուն» խորագրով, որ կը վերջացնէի Վարդանի այն խօսքով, թէ «Եղբայրներ, մեր քաջութեան մէջ վատութիւն չխառնենք»:

Յաջորդ շաբաթ ազատած էինք այլեւս մեր պարտականութիւններէն: Մեր բարեկամները գոհ էին, որ այլեւս իրենց հետ պիտի ըլլայինք միշտ:

Հակառակ վառելանիւթի չգոյութեան, ուր իր արժէքին քառապատիկը վճարելով զայն կարենալ ճարելը բախտաւորութիւն կը նկատուէր, մեր բարեկամները մեզ չգրկեցին որեւէ տեղէ: Լենինական, Կիրովական, Սպիտակ, Գառնի, Գեղարդ, Սեւան, Սարդարապատ, Ծիծեռնակաբերդ, Խոր Վիրապ եւ այլն:

Իւրաքանչիւրին վրայով տպաւորութիւններս չէ որ կ'ուզեմ գրել այստեղ, այլ կ'ուզեմ խօսիլ դէպքի մը մասին, որ պատահեցաւ եւ անջնջելի հետք թողուց մեր մտքին ու սրտին մէջ:

Մեր Խոր Վիրապ այցելութենէն ետք մեր ճամբան կը շարունակենք դէպի հարաւ, Նախիջեւանի ուղղութեամբ: Մեր վարորդը՝ Աւոն, որ մեզ առաջնորդողն էր նոյն ատեն, մերթ կանգ կ'առնէր բացատրութիւններ տալու շրջանին մասին:

Նոյն ժամուն, երբ մենք կանգնած կը լսէինք Աւոյին բացատրութիւնները, զինուորական մեքենայ մը մեր քովէն կ'անցնէր եւ քիչ անդին կանգ կ'առնէր: Մենք կրկին կ'ընթանայինք յառաջ, անցնելով այդ զինուորական մեքենան: Աւոն դարձեալ կանգ կ'առնէր նոր բացատրութիւններ տալու, նոյն զինուորական մեքենան դարձեալ կ'անցնէր ու կրկին քիչ անդին կը կենար: Նոյն բանը կը կրկնուէր քանի մը անգամներ եւս: Մենք բնաւ չէինք անդրադառնար, որ այդ զինուորական մեքենան մեզ կը հետապնդէր: Ա՛յ հասած էինք տեղ մը, ուր հաւանաբար աւելի պէտք չէր յառաջանայինք: Աւոն կանգ առաւ դարձեալ եւ մատովը ցոյց տալով հագիւ մէկ քիլոմէթր հեռաւորութեան գտնուող հրասայլեր ըսաւ. «Դա Նախիջեւանի դուռն ա, ռուսական թանկեր կը կանգնեն Էնտեղ, որպէսզի հայեր չյարձակուեն»: Այն հարցումին, թէ ուրեմն Նախիջեւան վա՛խ ունի, որ օր մը յարձակին իրենց վրայ, կը պատասխանէ. «Էդ վախը միշտ էլ ունեն»:

Մենք զարմանքով կը լսէինք, դիտելով մէկտեղ այդ ռուսական թանկերը, երբ յանկարծ նոյն զինուորական մեքենան եկաւ ու կանգ առաւ ճիշդ մեր դիմացը, արգիլելով, որ չկարենանք աւելի յառաջ երթալ:

Մօրութաւոր երիտասարդ մը վար իջաւ մեքենայէն ու մօտեցաւ մեզի: Նախ սուր նայուածքով մը քննեց մեզ բոլորս եւ ապա հարցուց.

- Ընկերներ, ի՞նչ էք ուզում:

Աւոն բացատրեց, թէ «Ամերիկայից եկած բարեկամներ են, թէ (զիս ցոյց տալով) թղթակից ա, ուզում էր շրջել էս կողմերը իր տպաւորութիւնները գրի առնելու», եւ այլն:

Երիտասարդը ուշի-ուշով քննելէ ետք զիս, ըսաւ.

- Ուզո՞ւմ էք մեր շտաբը գալ:

Ամենայն սիրով,-ըսի,- այդ պատիւ է մեզի համար:

Երիտասարդը փոքրիկ սուլոց մը արձակեց եւ ... չես գիտեր ուրկէ, դաշտերուն մէջէն երկու տասնեակ երիտասարդներ դուրս եկան ապշեցնելով բոլորս: Իրենց դեկալարին գլխու պզտիկ շարժումով, բոլորն ալ ուղղուեցան դէպի շտաբ, որ մեր կեցած տեղէն շատ ալ հեռու չէր:

Հիմա շտաբին մէջն ենք, շրջապատուած իրենցմով:

- Դուք դեգերում էք վտանգաւոր գօտիների մէջ,- ըսաւ մեզ հետապնդող մեծաւորը:

- Սակայն,- պատասխանեց Աւոն,- նկատելով որ մեր հայրենիքի սահմաններից դուրս չենք, ապահով էինք զգում մենք մեզ:

Շտաբը համեստ, միայարկ 5-6 սենեակներէ բաղկացած կառոյց մըն էր: Սենեակին չորս պատերուն շարուած էին մեր բոլոր մեծ ու փոքր ֆետայիներուն նկարները անխտիր: Կը դիտեմ զանոնք հետաքրքրութեամբ: Հոն են Անդրանիկը, Գեորգ Չաւուշը, քաջն Արամը, Փարամազը, Հայկ Բժշկեանը, Մեծն Մուրատը, Նժդեհը եւ բոլորը անխտիր, որոնք անձնուրաց իրենց կեանքը նուիրեցին ազգին փրկութեան:

- Սրանք մեր առաջնորդներն են,- կ'ըսէ,- սրանք մեզ սովորեցրել են թէ կարելի չէ գլուխ ծռել ու խոնարհել թշնամու առաջ: Սովորեցրել են, թէ հայր



Շտաբի 4 պատերուն կախուած են անխտիր մեր բոլոր ֆետայիներուն նկարները:



Տէր եւ Տիկին Յակոբ եւ Նեկոսար Տէրեանները նորօրեայ ֆէտայիներու մեծաւորներուն հետ:

յուսաբեկիլ չգիտի, այլ գիտի առաւել կարծրանալ այնքան, որքան ճնշումը աւելանում է իր վրայ: Սրանք սքանչելի մարդիկ են եղել:

Կը դիտեմ այդ սքանչելի մարդոց նկարները, կը դիտեմ եւ զիրենք: Առաջիկաները մեռած՝ երկրորդները կենդանի: Մտքովս կը փորձեմ բաղդատական մը ընել այդ երկուքին՝ սակայն տարբերութիւն մը չեմ տեսներ անոնց մէջ: Այն ոգին, որ ունէին այդ «սքանչելի մարդիկ», նոյն ոգին է, որ կը կրեն նաեւ ասոնք, նոյնքա՛ն հայրենասէր եւ նոյնքա՛ն նուիրուած իրենց ազգին ու հայրենիքին:

Բայց կ'ուզեմ առաւել տեղեկութիւններ քաղել իրենց իսկ բերնէն եւ իմանալ իրենց կեանքին ու գործունէութեան մասին:

Հիմա նստած ենք սեղանին շուրջ մեծաւորին ու մի քանի այլ երիտասարդներու հետ մինչ ուրիշներ ոտքի են սենեակէն ներս ու դուրս:

Հարց կու տամ թէ ինչ կ'ընեն այստեղ:

- Մենք էստեղ գիշեր-ցերեկ մեր հայրենիքն ենք պաշտպանում,- կ'ըսէ մեծաւորը ու կ'աւելցնէ. «Դէ, որ մենք էստեղ ջիւնէինք, թուրքերը շատ վատութիւններ կ'անեն. մեր վախից է, որ չեն համարձակուում մօտենալ»:

- Սակայն, դուք տուն տեղ չունի՞ք, ընտանիք չունի՞ք, աշխատանք եւ

ընտանեկան պարտականություններ չունի՞ք. ինչպես կ'ըլլայ, որ այդ բոլորը մեկդի ձգած, գիշեր ցերեկ հոս կը հսկէք:

- Մենք տուն էլ ունենք, տեղ էլ ունենք, հայր ու մայր ունենք, քոյրեր ու եղբայրներ ունենք, կին ու զաւակներ ունենք. սակայն էդ բոլորից առաջ ունենք մեր հայրենիքը, որ ամէն բանից առաջ պարտ ենք պաշտպանել: Սա ամենակարեւորն է: Չէ՞ որ մենք հայրենիքը պաշտպանելով, պաշտպանում ենք նաեւ նրանց կեանքն ու պատիւը: Ո՞րն է լաւ, թողնել որ թուրքը յափշտակի մեր հողը եւ արատաւորի մեր կանանց պատիւը, թե՞ ջախջախել նրանց գլուխը: Ո՞րն է վայել հայ տղամարդու:

Հիացումս արտայայտելու բառեր կը փնտռեմ ու չեմ գտներ: Սա ի՛նչ հայրենասիրութիւն, ինչ նուիրում, ինչ անձնուրացութիւն հայրենիքի սիրոյն:

Սակայն, ինչպէ՛ս կը հոգաք ձեր պետքերը, ձեր ընտանիքին կարիքները, երբ չէք աշխատիր:

- Ունենք մի փոքր եկամուտ, թէեւ շատ բաներից էլ կը զրկուենք: Էլի ոչինչ: Մեր ընտանիքների մէջ ուրիշ աշխատողներ էլ կան, որոնց աշխատանքին շնորհիւ մենք էլ կ'ապրենք: Եւ թէ օգնողներ էլ կան:

Յատկանշական որեւէ միջադէպ ունեցա՞ծ էք թուրքերու հետ հարցումիս՝ յանկարծ ոտքի կ'ելլէ ու մեզ կ'առաջարկէ դուրս գալ: Դրան առջեւ ձեռքով ցոյց կու տայ դիմացի լեռնաշղթան, որ կը բաժնէ Նախիջեւանը Հայաստանէն ու կը պատմէ.

- Թուրքեր դիրք էին բռնել էդ լեռների վրայ եւ էդ բարձունքից կրակում էին մեր գիւղը, զինու գործարանը, շոգեկառքի կայանը եւ ամէն տեղ: Մենք ցածն էինք եւ չէինք կարող պատասխանել նրանց: Պետք եղած զենքերն էլ չունէինք: Նրանք ուղղակի իշխում էին մեր վրայ իրենց հարուածներով: Ռուսներն էլ տեսնելով հանդերձ թէ ինչպէս էին հարուածում մեզ, ձայն չէին հանում: Ուրեմն, պարտք էինք մենք մեր գլխին ճարին նայել եւ մի լաւ դաս տալ նրանց: Այսպէս կարելի չէր ապրել:

Ճարեցինք մի հին տեսակի թնդանօթ. լարեցինք նրան լերան ուղղութեամբ եւ մի քանի գնդակներ արձակեցինք դէպի լեռ: Թուրքեր, որ տեսան էն հարուածները, անակնկալի եկած՝ իրենց վախից դիրքերը թողուցին ու փախան: Մենք 32 հոգով բարձրացանք դէպի լեռ: Դիրքերը պարապ էին: Իջանք միւս կողմ, ուր կայ թրքական գիւղ: Գիւղի բնակիչները ահ ու սարսափի մատնուած՝ «Էրմէնիլեր կէտի» (հայերը եկան) գոչելով, թողնելով իրենց տունն ու տեղը, խուճապահար փախչում էին, իսկ մենք հալածում էինք նրանց, երբ յանկարծ... սովետական թանկեր եկան շարուեցին մեր դիմաց ու կասեցրին մեզ...:

Լուր ուղարկեցին Երեւան եղած դէպքերի մասին: Էդ ժամանակ Սուրէն

Յարութիւնեանն էր նախագահը: Մեզ հրահանգ եկաւ որ ետ քաշուենք մեր դիրքերը: Մենք չուզեցանք քաշուել, սակայն որպէսզի ինքնագլուխ գործած չլինենք, հնազանդութեանք նրանց հրահանգին ու ետ քաշուեցինք:

Այժմ այդ լեռները ամբողջ ականապատել են:

- Ուրիշ միջադէպեր եւս ունեցա՞ծ էք:

- Այո, միջադէպեր միշտ էլ կան. բայց միշտ էլ իրենք են լինում սկսողը: Իսկ մենք շուտով լռեցնում ենք նրանց: Երբեք չեն համարձակուի մօտենալ:

Ես կը լսէի այդ բոլորը հիացումի ու զարմանքի խառնուրդով, որպէս թէ լսած ըլլայի Սասունցի Դաւիթի կամ Տորք Անգեղի առասպելական քաջութիւնները: Ահա, թէ ուր կրնայ հասցնել մեզ մեր վրայ գործուած ճնշումը: «Հայր յուսալքութիւն չգիտի, այլ գիտի առաւել կարծրանալ այնքան՝ որքան ճնշում աւելանում է իր վրայ», կ'ըսէ մեծաւորը:

Ճիշդ նոյն պահուն յիշեցի Յովհաննէս Ծիրագի մէկ քառեակը, որ լաւագոյնս կը համապատասխանէ այս երիտասարդներուն քաջութեան:

Ծիրագ կը գրէր.

*Ասում են թէ աղամանդը ճնշումից է գոյացել,
Չեմ զարմանում՝ քանզի ազգս նորից վեր է խոյացել,
Հազար դարեայ ճնշումներից, եղեռնից էլ դուրս պրծած,
Եօթն ազգերի ճնշումից է աղամանդուած աչք բացել:*

Այո, Հայկ Նահապետէն մինչեւ Վարդանանք, Վարդանանքէն մինչեւ դարասկզբի մեր հերոսները ու մինչեւ մերօրեայ Արցախի պատերազմը «ճնշումից աղամանդուած» մեր առիծասիրտ երիտասարդները «շատ բաներից կը գրկուեն», սակայն եւ այնպէս գիտեն «ամէն բանից առաջ պաշտպանել մեր հայրենիքը»:

Անոնք ազգովին մեր բոլորին երախտագիտութեան արժանի են:

Ես այդ պահուն այնքան ուրախ եւ հպարտ կը զգայի ինքզինքս, որ ինծի համար ստեղծուած էր նման անակնկալ հանդիպում մը, կարենալ գտնուելու մեր նորօրեայ ֆետայի այս տղոց հետ ու լսել իրենց սիրաքններն ու ապրումները: Եւ որպէսզի ունեցած տպաւորութիւններս ու յիշատակներս իրենց վրայով միշտ թարմ մնայ մէջս, փափաք յայտնեցի նկարուիլ իրենց հետ:

- Սիրով,- պատասխանեց մեծաւորը,- միայն թէ մի քանի թոպէ սպասէք, որ հագնուենք:

Մի քանի թոպէ ետք եկան բոլորը սեւ համագգեստներով, որոնց կոնակներուն՝ կը տեսնուէր իրար խաչաձեւած ձեռքի ոսկորներու եւ անոնց վերեւ գանկի մը նկարը, որոնք կը նշանակէին «Մահ թշնամոյն՝ մինչեւ իսկ մահուան գնով»:

Չարմանք յայտնեցի, թէ ինչու բոլորն ալ մօրութաւոր են:

Անոնցմէ մին պատասխանեց ըսելով. «Ուխտել ենք էս մօրութը չածիլել մինչեւ մեր նպատակին հասնելը...»:

- Բայց ինչու այս մէկը մօրութ չունի,- հարց տուի ցոյց տալով պատանի տղայ մը անոնց մէջ:

- Նրա մօրութը դեռ չի բուսել, կատակի ձեւով պատասխանեց ուրիշ տղայ մը:

Եւ իսկապէս 16-ին տակաւին նոր ոտնակոխած այդ պատանին, որ իր սեւ համազգեստով տեղ կը գրաւէր մեծերու շարքին մէջ, ինծի կը յիշեցնէր «Ազուլիսիցի քաջ պատանին», որ իր փոքր հասակէն նուիրուած էր իր ազգին փրկութեան նուիրական գործին: Ես այդ առիծասիրտ հերոսներու եւ այդ քաջ պատանւոյն հոգիներուն մէջ տեսայ Ազգիս յաւերժութիւնը:

Նկարուելէն ետք, մեր կողմէ գնահատանքի փոքրիկ նուէր մը տալով՝ հրաժեշտ առինք իրենցմէ ջերմ ձեռքի սեղմումներով ու վերադարձանք տուն այնպիսի խոր տպաւորութեամբ, որ մինչեւ այսօր եւ մինչեւ մահ անջնջելի պիտի մնայ սրտիս մէջ:

Մեր Հայաստան կեցութեան երկրորդ շաբաթը ամէն օր այցելեցինք հայրենիքի տեսարժան վայրերէն մէկը եւ երեկոյեան եկանք այն տունը, ուր հրաւիրուած էինք այդ օր:

Մեր ազգականները՝ քոյրեր ու եղբայրներ, ամէնքն ալ հոն էին հանդերձ ընտանեօք ամէն օր՝ ուր մենք էինք: Ժամանակը շատ կարճ էր. ուստի պէտք էր առաւելագոյն չափով վայելէինք իրար:

Վերջին գիշերն էր անոնց երիցագոյնին տան մէջ:

Նախորդ գիշերները բոլորն ալ անցած էին խանդավառ մթնոլորտի մէջ ու վերջացած էին յաջորդ օր դարձեալ մէկտեղուելու յոյսով: Սակայն այս մէկը կարծէք թէ յատուկ բովանդակութիւն մը ունէր իր մէջ:

Լուրջ խօսակցութիւններ, սրտերու մէջ թաքնուած զգացումներու դրսևորումներ եւ գաղափարներու ու մտածելակերպի տարբերութիւններ պիտի լսուէին ոմանց կողմէ:

* * *

Ընդհանրապէս բոլոր հրաւերներուն ալ հայաստանեան խորովածը միշտ ի պատուի է: Չայն կրակի վրայ եփած պահուն «անմահն» օղիի ընկերակցութեամբ ճաշակելը ճաշին նախասկիզբն է, որմէ ետքն է որ կը բոլորուինք համադամ կերակուրներով լեցուն ճոխ սեղաններու շուրջ:

Օղիի գաւաթները կը զարնուին իրարու: Բաժակաճառեր՝ կենացներ եւ

մաղթանքներ իրար կը յաջորդեն:

Ես թեւ խմիչք խմելու սովորութիւն չունիմ, սակայն մաս կը կազմեմ բոլորին՝ գաւաթս բարձրացնելով եւ շրիկացնելով բոլորին գաւաթներուն, կենացներով ու բարի մաղթանքներով խմելու զայն կը տանիմ բերանս: Ու այսպէս բոլոր կենացներուն... բայց գաւաթս չի պարպուիր...:

Մին գաւաթ կը բարձրացնէ հայրենիքի անկախութեան կենացը: Ուրիշ մը այդ անկախութեան յաւերժութեան կենացը: Երրորդ մը ի տես «պայծառ լուսաբացին»՝ հայրենիքի փայլուն ապագայի կենացը ելն.: Ու յաջորդաբար նման կենացներ, միշտ կոկորդն ի վար սահող օղիով համեմուած:

Անոնցմէ մին, սակայն, տակաւին հոգեպէս սովետական շրջանի անիրաւութեանց եւ բռնութեանց ազդեցութեան տակ եւ ներկայի անկայուն եւ շփոթ վիճակին ակնարկելով չի թագցներ իր վերապահ կեցուածքը եւ իր միակ ցանկութիւնը թէ՛ «այստեղէն փախչողը կ'ազատի միայն»: (Հոս կ'ուզեմ նշել թէ փախչիլ իրենց համար կը նշանակէ երթալ Ամերիկա:) Ուրիշ մը անմիջապէս իր հաւանութիւնը կու տայ անոր, կրկնելով նոյն խօսքերը: Երրորդ մը քաջալերուած այդ երկուքէն կը ձայնակցի անոնց, հաստատելով անոնց ըսածը, եւ ահա ծայր կու տայ գանգատներու շարանը: «Անապահով վիճակ»: «Միշտ վախի մէջ ես»: «Ապրանք մը փնտռես ապրանք չկայ»: «Որեւէ բան պարտ ես գնել տակից իր գինին 4-5 անգամը աւելին վճարելով»: «Արդէն քո ամսականով անկարելի է որ կարենաս ապրել» ելն.:

Մէկը կը փորձէ ճշդում մը կատարել ու կ'ըսէ.- Այո, քո ամսականով կարող ես ապրել, եթէ երբեք ամէն ինչ կարելի լինի գնել իր որոշեալ գիններով: Օրինակ սա պամփտորին (լոլիկ) քիօն պէտք է արժի 7 կոպեկ, բայց եկուր տես որ սա 40 կոպեկից պակաս չես կարող գնել. եւ ամէն ինչ համեմատաբար նոյնը: Ուսկից հասնել այդ բոլոր ծախսերին:

Ուրիշ մը տարբեր օրինակ կը բերէ ըսելով.- Կ'երթաս ձու գնելու, քեզ կ'ասի չմնաց վերջացաւ: Կ'ասես էլի հիւր ունեմ, պէտք ունեմ, մի փաքէթ տուր: Վաճառողը թէ որ բարեացակամ գտնուի քեզ հանդէպ, է՛լ չես հարցնի թէ որքան պէտք է վճարես, կ'առնես ու կգաս: Ապա թէ ոչ ձեռնունայն կը վերադառնաս:

Կ'ըսեմ. ինչո՞ւ չէք բողոքեր իշխանութիւններուն թէ այդպիսի անիրաւութիւններ տեղի կ'ունենան:

- Ի՞նչ կ'ասես, այ մարդ, որի՞ն բողոքել, մեծից մինչեւ փոքրը բոլորն էլ նոյնն են: Ձուկը գլխից հոտել ա եւ հասել ա մինչեւ պոչը: Ով որի ամօթը կը բացի: Բոլորն էլ նոյնն են:

- Ըսել է այս հաշուով ամէն մարդ ձեռով մը պէտք է ունենայ որոշ կողմնակի միջոցներ, կարենալ հոգալու իր ծախսերը:

- Համարեա թէ եղպէս: Սակայն ոմանք շատ, իսկ ոմանք քիչ:

- Իսկ իմ նմաններին բնաւ. մէջ կը մտնէ մինչ այդ լուռ կեցող Եղիվարդ, ու կը բացատրէ թէ իր ասպարեզին մէջ ամենեւին կողմնակի միջոցներ չկան:

- Եղբայր ուսուցիչ մը ի՞նչ կողմնակի միջոցներ կարող է ունենալ: Մինչդեռ դուք բոլորդ էլ,- խօսքը ուղղելով ներկաներուն,- աղէկ գէշ ունէք ձեզ յատուկ միջոցներ, ու տակաւին կը գանգատուէք: Եթէ երբեք կայ մէկ հոգի ձեր մէջ որ պէտք է գանգատուի, եղ էլ ես պէտք է լինեմ: Սակայն ես չեմ ուզի գանգատներով ասրել: Սա իմ հայրենիքն է իր բոլոր թերութիւններով եւ իր բոլոր լաւութիւններով:

- Լաւութիւններով,- հարց կու տայ մէկը: Թէ որո՞նք են եղ լաւութիւնները:

- Լաւութիւնների լաւութիւնը էն է որ դու ապրում ես քո հայրենիքի մէջ: Դրանից թանկ բան չկայ աշխարհում: Էդ չէք կարող իմանալ այսօր: Էդ կ'իմանաք այն ատեն միայն, երբ ապրէք օտար երկրի մէջ: Մարդ իր հարստութեան արժէքին կը գիտակցի այն ատեն՝ երբ կը կորցնի այն: Օտարութեան մէջ դուք կարող էք ունենալ ապրելակերպի աւելի լաւ պայմաններ, ինչ որ չունէք էստեղ, սակայն վստահ պէտք է լինէք որ ձեր կորցրած բաները աւելի ծանր պիտի կշռեն: Մենք պարտինք մեր փոքրիկ ճնճղուկը աւելի բարձր գերադասել, քան օտարին հնդկահաւը, քանի որ սա մերն է, մեր հարազատը: Ես չեմ բաժնի հայրենիքից հեռանալու գաղափարը: Ես չեմ հեռանալ Հայաստանից:

Սեղանին միւս ծայրէն Եղիվարդին կինը արհամարհական նայուածք մը նետելով ամուսնոյն վրայ, գրեթէ մրմռալով.

- Գրպանը ծակ, փորն անօթի հայրենասէր, մնա՛ւ էստեղ, իշալլահ դուն կը լինես հայրենիքդ փրկողը:

Ու տակաւին շարունակուող թեր ու դէմ եղած նման խօսքերէն այդ կը հասկնամ որ ոմանց մտքին մէջ եւ ի մասնաւորի կանանց համար Ամերիկան երազային այն միակ դրախտն է որ կայ երկրի վրայ: Չէ որ կիները ազատ են այնտեղ...:

Այո, ազատութեան որոնումը եւ հոն գտնուող իրենց հարազատներու յաճախակի հրաւերներ, զիրենք կը քաշեն դէպի Ամերիկա, մանաւանդ հրեշտակներու այն քաղաքը (Los Angeles), ուր գացողներուն համար կայ պատրաստ «հերիսա», որմէ կարելի է ուտել առատօրէն եւ որ ձրիաբար կը բաշխուի Ամերիկեան կառավարութեան կողմէ:

Տանտիրուհին իր խօսքը ինծի ուղղելով կը հարցնէ.

Պրն. Յակոբ, դուք Ամերիկայից էք: Նախ ինչպէս կը պատկերացնէք Ամերիկան: Եւ երկրորդ, ինչ է ձեր կարծիքը հայրենիքից հեռացողների մասին:

Անակնկալ այս հարցումէն պահ մը կը կենամ, կարենալ ամփոփելու

մտքերս: Ի՛նչ ըսել: Մարդիկ սովետական բռնությանց շրջանին սաստիկ ցանկությունը ունեցած են երկրեն դուրս գալու, բայց չեն կրցած անցնիլ երկաթեայ դռնէն: Այսօր որ անկախացած է երկիրը, կը յուսան աւելի դիրութեամբ իրագործել իրենց ցանկությունը: Չէ՞ որ իրենց համար եղած է ան տարիներու երազ: Պէ՛տք է փախցնել ներկայացուած առիթը:

Կը փորձեն երեւոյթները դիտել իրենց իսկ ակնոցով ու կ'ըսեն.

- Ձեր առաջին հարցումին ճշգրիտ պատասխան կարենալ տալու համար, պարտիմ պատմել նախ փոքրիկ պատմութիւն մը:

Երեք մարդիկ Երուսաղէմ կ'երթան ուխտի ժամանակ: Վերադարձին անոնցմէ առաջինին հարց կու տան թէ ինչպէս էր Երուսաղէմը: Մարդը կ'ըսէ.- Այնպէս աղուոր գինետուններ կան՝ գետնափոր, ուր երբ կ'իջնես արդէն իսկ գինիի հոտէն կ'արբենաս: 40 տարուայ հնացած գինի: Իրապէս որ խմելէն չես կշտանար: Հիանալի էր:

Երկրորդին կ'ուղղեն նոյն հարցումը: Կ'ըսէ.- այնպէս աղուոր «գապարէներ» կան՝ չեմ կրնար բացատրել: Արաբական «մէզէներու» տեսակներ: Ինչ համով օղի: Գեղեցիկ աղջիկներ: Պորտախաղը արդէն քեզ գլխէ կը հանէ: Ինչ ըսել. սքանչելի էր:

Երրորդը կ'ըսէ.- Տեսանք Զրիստոսի ծնած վայրը, Գեթսեմանիի պարտեզը, Գողգոթա լեռը ուր խաչուեցաւ Յիսուս, Անոր գերեզմանը ուրկէ յարութիւն արաւ: Գետնին քարերը համբուրեցինք: Հոգեպէս վերացանք:

Այս պատմութիւնը ցոյց կու տայ թէ որեւէ միջավայր ինչ աչքով կը դիտես: Ինչ է քու ներքին ցանկությունդ. ինչ է փնտռածդ: Արդեօք իմ ակնոցով դիտուած երեւոյթները որքանով կը համապատասխանեն ձեր փնտռածին:

- Մենք ուզում ենք իմանալ ինչն է ձեր համոզմունքը, կ'ըսէ ուրիշ մը:

Իմ համոզմունքը եթէ կ'ուզէք այն է որ եթէ «ազգային» ու «բարոյական» ռելէ անհատի սրտին մէջ աւելի նուազ տեղ ունի քան դրամն ու աւելի հեշտ ապրելակերպը, Ամերիկան լաւ տեղ է: Իսկ թէ որ անոնք (ազգային ու բարոյական ըմբռումները) զօրաւոր են ռելէ անհատի մէջ, անպայման որ պիտի չկարենայ երջանիկ ըլլալ, եւ հոգեպէս պիտի տառապի, ի տես մեր հայկականերուն նկարագրի խաթարման, որոնք պիտի ըլլան մեր յաջորդ սերունդները:

Չեմ ըսեր որ առաջին իսկ օրէն կ'ապականուին անոնք: Թէւ կան այդպիսիներ, որոնք տեսնելով Ամերիկեան սանձարձակութիւնը, զոր իրենք ազատութիւն կը կոչեն, մէկ օրէն միւսը կը դառնան Պապէն աւելի պապական ու կը խրին աղտեղութեան մէջ: Եւ անկէ ետք կրնաք ականատես ըլլալ տեսակաւոր պատկերներու:

Դժբախտաբար օրինակները բազմաթիւ են եւ բազմատեսակ:

Իսկ ազգային ու բարոյական գիտակցութեան տէր, պարկեշտ ընտանիքներու զաւակներ դեռ երկար ատեն կը մնան մաքուր, բանիւ եւ գործով. բայց անպայման որ տոկոսային հաշուով իրենց գիտակցութեան եւ հասկացողութեան մէջ նուազում կ'արձանագրեն, բաղդատած իրենց ծնողաց գիտակցութեան եւ հասկացողութեան, ինչ որ միջավայրին ազդեցութեան արդիւնքն է: Կարելի չէ այս մէկուն առաջքը առնել:

Ու այսպէս, եթէ երբեք իւրաքանչիւր սերունդի գիտակցութիւնը որոշ չափով նուազի իր նախորդին գիտակցութենէն, արդէն իսկ 3-4 սերունդներ ետք կրնաք պատկերացնել թէ ուր կը հասնինք:

Ընդհանրապէս մեր տեսողութիւնը շատ հեռուներ չ'երթար: Կը գոհանանք միայն տեսնելով մեր աչքին առջեւ: Հեռուները չենք տեսներ, չենք ալ ուզեր տեսնել, որպէսզի խաբենք մենք զմեզ թէ հայ ենք, հայ կը մնանք ու կը պահենք մեր ազգային ինքնութիւնը եւ կը մնանք մեր բարոյական ըմբռնումներուն հաւատարիմ, եւլն.: Սա իմ ականոցով դիտուած ոչ թէ լաւատեսութիւն է, այլ պարզապէս ինքնախաբէութիւն, կարենալ արդարացնելու՝ մեր ներկան: Յաճախ կը փորձենք փակել մեր աչքերն ու ականջները, չտեսնելու ու չսելու համար իրականութիւնը, ճշմարտութիւնը, քանի որ անոնք չեն համապատասխաներ մեր այսօրուայ ցանկութեան:

Կարելի է տակաւին շատ երկար խօսիլ ու բացատրել այս նիւթը օրինակներով, բայց ամփոփ կերպով խօսած՝ այս է իմ համոզումը Ամերիկեան կեանքի մասին:

Գալով ձեր երկրորդ հարցումին որ կ'ականարկէ հայրենիքէն հեռացողներուն, կրնամ ըսել հետեւեալը:

Նախ պէտք է ըսեմ որ սա իմ առաջին այցելութիւնն է տրուած հայրենիքին: Տպաւորութիւններս հայրենի ժողովուրդի տարբեր խաւերուն վրայով, բնականաբար կը տարբերին իրարմէ:

Ես երկու անգամներ գտնուեցայ գիտնականներու հետ ճաշկերոյթներու, բարեկամիս՝ գիտնական Փրօֆ. Սիներիկ Հայրապետեանին ընկերակցութեամբ: Լսեցի անոնց կարծիքները թէ ինչ մտքեր կը տածեն հայրենիքի ու անոր ապագայի վրայով:

Գտնուեցայ մեր ֆետայի տղոց հետ ու լսեցի անոնց ըմբռնումներն ու համոզմունքները ազգին ու հայրենիքին հանդէպ:

Գտնուեցայ եւ ձեզի հետ քանիցս եւ լսեցի ձեր գաղափարներն ու ձեր ըմբռնումները ու վերահասու եղայ ձեր հոգեկան ապրումներուն:

Չեմ ուզեր ձեզի ձրի հայրենասիրութիւն քարոզել, թէ պէտք է կուրծք տալ դժուարութիւններուն, պէտք է տոկալ, պէտք չէ յուսահատիլ, եւլն.:

Գիտեմ թէ այդ խօսքերուն պատասխանը ինչ է:

Այո, դուք արդարօրեն պիտի ըսեիք.– եկեք, մի քիչ էլ դուք ապրեցեք հոս, համին նայեցեք էս կեանքին եւ վերջը խօսեցեք: Համաձայն եմ:

Ըսի ու կը կրկնեմ որ ամենեւին միտք չունիմ ձեզի ճիշդ հայրենասիրութիւն քարոզելու: Ես հայրենիքի մէջ չեմ ապրած որ մորթիս վրայ կարենայի զգալ ձեր քաշած նեղութիւնները: (Թէեւ ձեր տեսած օրերէն աւելի փայլուն չէին մեր մանկութեան օրերը Հալեպի մէջ:) Արդէն երկու շաբաթ է որ կը գտնուինք ձեր հետ հայրենիքի մէջ: Շատ շնորհակալ եմ ձեր բոլորէն որ մեզ չզրկեցիք որեւէ տեղէ եւ ցոյց տուիք ձեր անկեղծ սէրը մեզի հանդէպ: Մեզ յարգեցիք ու պատուեցիք պէտք եղածէն շատ աւելի: Եւ ահա այսօր վերջին օրն է որ հաւաքուած էք հոս մեզի ողջերթ մաղթելու, այսպիսի փառաւոր ու ճոխ սեղանով, ինչպէս էին նաեւ նախորդները:

Որքան կը հասկնամ ձեր այս նեղ պայմաններուն մէջ, այսպիսի սեղաններ, այսքան յարգանք ու պատիւ մեզի հանդէպ, մեծ զոհողութիւններու արդիւնք եղած պէտք է ըլլան, որուն համար կրկին ու կրկին անգամներ կը յայտնեմ մեր շնորհակալութիւնները:

Դուք այստեղ ապրելով ենթարկուեցաք բռնութիւններու, անիրաւութեանց: Ոմանք մինչեւ իսկ ուղարկուեցան Սիրիոյ, իրենց կեանքի տառապանքի տարիները ապրելու եւ վերադարձան հիւծած՝ եթէ երբեք... վերադարձան...: Եւ շատ մը նման անարդարութիւններ բոլորն ալ իրենց անջնջելի հետքերը թողուցին ձեր սրտին վրայ: Դուք ձեզ նմանցուցիք բանտարկուած այն թշուոյնին, որ կարող չէ դուրս ելլել իր վանդակէն: Եւ ինչպէս ընդունուած իրականութիւն է թէ արգիլուած բանը միշտ աւելի ցանկալի է մարդոց, այդ ժամանակներէն ձեր հոգիներուն մէջ տեղ գտաւ այն գաղափարը թէ այստեղէն փախչողը կ'ազատի միայն:

Ես չեմ մեղադրեր ձեզ: Որեւէ իրաւունք ալ չունիմ ոեւէ մէկուն մեղադրելու: Ոչ ալ կը փորձեմ խրատել որ ետ կենաք ձեր այդ գաղափարներէն: Քանի որ ձեր քաշածները դուք գիտէք միայն եւ ձեզի կ'իյնայ որոշել երթալ կամ ոչ:

Բայց կարգ մը հարցումներ կան մտքիս մէջ որոնց պատասխանները չեմ կրնար գտնել:

Թէ ինչո՞ւ այդ ֆետայի տղաքը, որոնց հետ մեր ունեցած տեսակցութեան մասին պատմեցի ձեզի, հոսկից երթալու մասին չեն մտածեր:

Ինչո՞ւ զիշեր ցերեկ հոն կեցած հայրենիք կը պաշտպանեն զրկանքներու ու իրենց կեանքի գնով:

Ի՞նչ բան կը մղէ զիրենք այդքան զոհողութիւններ յանձն առնելու:

Արդեօք անոնք այս նոյն հայրենիքին մէջ չե՞ն ապրած:

Արդեօք այդ նոյն զրկանքներուն եւ նոյն բռնութիւններուն չե՞ն ենթարկուած:

Արդեօք որեւէ անհրաւութիւն չէ՞ գործադրուած իրենց ընտանիքներուն:
Ուրեմն ուսկի՞ց յառաջ կու գայ ըմբռնումներու այս տարբերութիւնը
որոնք 180 աստիճան իրար կը հակասեն:

Ինչո՞ւ ոմանք բռնութեանց տակ աւելի կը կարծրանան, իսկ ուրիշներ
իրենց գլուխը ազատելու մասին կը մտածեն:

Հարցումներ ու հարցումներ, որոնց պատասխանները պէտք չէ սպասել
ո՛չ ինձմէ եւ ո՛չ ալ ուրիշէն: Ոչ որ իրաւունք ունի այդ հարցումներուն
պատասխանել ուրիշի մը հաշուոյն, այլ իւրաքանչիւր անձ պարտի
պատասխանել միմիայն ինքն իրեն համար, իր սրտին մէջ:

Կրկին անգամ շնորհակալութիւն՝ որ պատիւը տուիք ինծի խօսելու եւ
համբերութիւնը ունեցաք զիս լսելու:

Ձեր բոլորին ջերմ սիրոյ յարգանքէն չափազանց զգացուած ենք: Վստահ
եմ՝ այս օրերը մեր բոլորին համար պիտի ըլլան անմոռանալի եւ յիշատակելի:

Մեր պտոյտներու առաջնորդը՝ Աւոն, շնորհակալութիւն կը յայտնէ
խօսքերուս համար ու կը մաղթէ որ զայ այն օրը, երբ բոլորս հաւաքուած մեր
ազատ եւ անկախ հայրենիքի մէջ ապրինք միասին, շինենք ու շէնցենք մեր
հայրենիքը եւ յաւերժացնենք մեր ազգը:

Բաժակները կրկին անգամ կը զարնուին իրար, այս վերջին մաղթանքին
հաշուոյն, ու կը պարպուին մինչեւ յատակը:

Ժամացոյցիս կը նայիմ, ժամը 9-ն է արդէն: Պէտք չէ մոռնալ որ 10-էն
առաջ պէտք է ըլլանք հիւրանոց:

Սակայն ոեւէ մէկը կարծես բաժնուելու տրամադրութիւն չունի: Վերջին
գիշերն է եւ իսկապէս բաժանումը դժուար: Ակամայ ոտքի կ'ելլենք եւ ըստ
սովորութեան մօտ կէս ժամ տեւող մնաք բարովի եւ ողջագուրումներու
արարողութենէն ետք, կը բաժնուինք ու կը վերադառնանք հիւրանոց:

Յաջորդ օր կը մեկնինք Մոսկուա, ուր կ'այցելենք Մոսկուա պանդոկին
մէջ Զօրի Բալայեանի եւ Վիքթոր Համբարձումեանին եւ տասնեակ մը
Ղարաբաղցի երեւելիներու, որոնք հացադուլ հռչակած էին:

Երկու օր եւս մնալէ ետք Մոսկուայի մէջ, կը վերադառնանք Նիւ Եորք,
այլազան տպաւորութիւններով բեռնաւորուած:

«Նոր Օր», 15 եւ 22 Սեպտեմբեր 2016

2. ԲԱԼԱՅԵԱՆԻ ԵՒ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ

«Պայքար»-ի աշխատակից Յակոբ Տերեան նոր վերադարձաւ Հայաստանէն, ընկերակցութեամբ հայրենի ծանօթ գիտնական Սիներիկ Հայրապետեանի, որ բնիկ դարաբաղցի է: Մոսկուայի մէջ անոնք գացած են «Մոսկուա» պանդոկը եւ տեսակցած՝ Չօրի Բալայեանի եւ Վիկտոր Համբարձումեանի հետ: Ստորեւ Յակոբ Տերեանի նկարագրութիւնը տեսակցութեան մասին:

Մեր Հայաստանէն վերադարձի ճամբուն վրայ, երկու օր կը մնանք Մոսկուա, Փրոֆ. Սիներիկ Հայրապետեանին հետ: Առիթն օգտուելով կ'երթանք Մոսկուա հիւրանոցը, տեսնելու Չօրի Բալայեանը, որ արդէն իսկ հացադուլի մէջ է վեց օրէ ի վեր: Մեծ կ'ըլլայ մեր զարմանքը, երբ կը տեսնենք իոն ակադեմիկոս Վիքթոր Համբարձումեանը Բալայեանի մօտ, շրջապատուած ուրիշ անձնաւորութիւններով: Փրոֆ. Հայրապետեանի սիրալիր ողջագոյրումները 2. Բալայեանի եւ Վ. Համբարձումեանի հետ երկուստեք արցունքներ կը խլեն աչքերէն: Ապա կարգ մը ձեռք սեղմումներէ եւ ծանօթացումներէ ետք, կը նստինք Համբարձումեանի կողքին: Մի քանի վայրկեան ետք Փրոֆ. Հայրապետեան մօտենալով մեծ գիտնականին ականջին, կ'ըսէ խնդրագին. «Վիքթոր Սերկիշվիլ, ես վստահ եմ որ Չօրին կը յարգի ձեզ ու կը լսի ձեր խօսքը: Ըսէք իրեն որ դադարի հացադուլ անելուց, քանի որ իր առողջութիւնը չի ների ինքզինք տանջել այդ աստիճան»: Իսկ Համբարձումեանը՝ «թէ ինչպէս կարող եմ եղպէս բան ասել, երբ ինքս էլ հացադուլ եմ յայտարարել մի երկու ժամ առաջ...»: Հայրապետեան, չափազանց զգացուած, չի կրնար դիմանալ եւ դուրս կ'ելլէ ... արցունքները սրբելու: Ապա կ'իմանամ նաեւ որ քովի սենեակին մէջ հացադուլ են յայտարարած մարգիտրիուրդի նախագահ Սիմէոն Պապայեանը եւ Ղարաբաղի ժողովրդական երեսփոխաններ Վաչական Գրիգորեանն ու Սօս Սարգսեանը:

Հացադուլ յայտարարած են նաեւ Ասկերանի մէջ, կուսակցութեան ղեկավար Արէկա Միքայելեանի գլխաւորութեամբ 13 հոգիներ: Նոյնպէս հացադուլի դիմողներ կան Շահումեանի, Գետաշէնի եւ Մարտունիի մէջ:



Զօրի Բալայեան



Վիկտոր Համբարձումեան

Կը դիմեմ Վիքթոր Համբարձումեանին ու կը հարցնեմ՝ թէ ինչ բան մղեց զինք հացադուլի:

«Ես հացադուլ եմ յայտարարել մի երկու ժամ առաջ: Առաջինը՝ բողոքելու մեր իշխանությունների անարդար, միակողմանի եւ բարբարոս արարքների դեմ, եւ երկրորդ՝ համերաշխություն ցոյց տալու եւ ձայնակցելու Զօրիկին», կը պատասխանէ ակադեմականը ու կ'աւելցնէ.

«Այսօր Ղարաբաղը գտնուում է անել կացութեան մէջ: Մեր բոլորին ցաւը նոյնն է: Հայրենիք, Սփիւռք՝ բոլորը պէտք է համերաշխ լինեն Ղարաբաղի հետ: Մեր առջեւ ունենք երկար մի ճանապարհ, որը յուսահատութիւն չի ճանաչի: Այդ երկար ճանապարհը քայլ առ քայլ կտրելով, պիտի հասնենք մեր նպատակին»:

Նոյն հարցումը կ'ուղղեմ Բալայեանին.

«Դու հարց ես տալիս թէ ինչն է ստիպել ինձ այդ քայլին դիմելու: Այսօր Ղարաբաղում, լման մէկ տարի եւ տասը ամիս չկայ իշխանութիւն: Լրիւ կաշառուած զինուորականների ձեռքի տակն է Ղարաբաղը: Սպառնուել են ազատութեան եւ ճշմարտութեան համար պայքարի սովորական բոլոր մեղօտները: Երոյթները, բողոքները եւ բանակցությունները իշխանությունների հետ դրական ոչ մէկ արդիւնք են տուել: Անձամբ ես կարող եմ յիշել, որ տասնեակ անգամներ մենք խաբուել ենք Կորպաշովի խոստումներից: Ղարաբաղի մէջ տիրող ծանր կացութիւնը անընդհատ աւելի է ծանրանում ատրպէյճանական իշխանությունների

գործունեությամբ, որոնք ձգտում են հակաիրական գործողություններով կտրուկ փոխել Ղարաբաղի դեմոկրատիկ վիճակը եւ աշխարհին ու Մոսկուային դնել կատարում իրականության առաջ:

Կտրել են Ղարաբաղի բոլոր կապերը արտաքին աշխարհի հետ: Տարւում է դաժան հոգեքանական կռիւ իմ ժողովրդի դէմ:

Այսօր արդէն այլեւս չի խօսուի Ղարաբաղի շրջափակման մասին, այլ կը խօսուի Ատրպէյճանի իշխանությունների կողմից Հայկական Ղարաբաղի պաշարման մասին:

Լեռնային Ղարաբաղի եւ անոր ժողովուրդին, Մոսկուայի ձեռքով պատրաստում է քրիստոնէական Նախիջեւանի ճակատագիրը, որտեղ չէ մնացել արդէն իսկ ոչ մի հայ: Բսկ քրիստոնէական օճախները նպատակադրւած ձեռով ոչնչացւում են: Դա ցեղասպանութիւն է, Ղարաբաղի հայ ժողովուրդին դէմ: Այո՛, եւ չեմ սխալուել, դա իրօք ցեղասպանութիւն է որ իրականանում է այսօր Մովսէսական բանակի օգնությամբ, նախագահի եւ կեդրոնական իշխանությունների թոյլտուությամբ:

Ես յայտարարում եմ որ ինչ կը կատարուի այսօր Ղարաբաղի հայ քրիստոնէայ ժողովուրդի դէմ, իսկական ցեղասպանութիւն է որ կը բնորոշուի ցեղասպանութեան համապատասխան միջազգային օրէնսդրությամբ:

Կ'ուզեմ նշել որ իմ հացադուլը յուսալքութեան գործողութիւն չի: Ես հաստատ հաւատում եմ որ ազատութիւնը կը գայ իմ Ղարաբաղի հողին»:

«Պայքար», 22 Սեպտեմբեր 1990

ԽՕՍՔ ԵՐԻՏԱՄԱՐԴՆԵՐՈՒՆ

Ժամանա՞կը գտար Հայաստան երթալու:

Խե՞նթ ես որ այս ատեն Հայաստան կ'երթաս, երբ ամեն ինչ խանգարուած է այնտեղ: Հարց տուին բարեկամներս:

Շատ ալ խելքի գործ չէ այս ատեն Հայաստան երթալ: Զգուշացուցին ոմանք:

Եթէ արձակուրդ առնել է նպատակդ, Հաւուայի գնա, Եւրոպա գնա կամ որեւէ ուրիշ տեղ գնա, թելադրեցին ուրիշներ:

Բայց ես նախընտրեցի Հայրենիք գալ ուրիշ որեւէ տեղ երթալու փոխարէն, քանի որ իմ այցելութեանս նպատակը չէր հետապնդեր միայն հաճոյք, վայելք, բարեկամներու այցելութիւն, կերուիտում եւ երջանիկ օրերու երագանք, այլ՝ հայրենիքը տեսնել իր տագնապներուն մէջ, իր ցաւերուն ու զրկանքներուն մէջ, նորակերտ Հայաստանի Հայկական Հանրապետութեան սկզբնաւորութեան ակնկալելի բոլոր դժուարութիւններու եւ խոչընդոտներու մէջ եւ զգալ իմ ժողովուրդի հոգեվիճակը, ապրելով իրենց հետ մի քանի շաբաթներ:

Արդարեւ, Օգոստոսի 28-ին, Նիւ Եորքէն, տիկնոջս հետ միասին, թռիչքը առնելով կը հասնինք Մոսկուա: Յաջորդ թռիչքը Մոսկուա-Երեւան որ տեղի պիտի ունենար ժամը 4:30-ին, երեք ժամ սպասումէ ետք կը ծանուցուէր թէ յետաձգուած է գիշերուան ժամը մէկին: Օդակայանը քաղաքէն բաւական հեռու է: Չ'արժեր պանդոկ մը երթալ քանի մը ժամուայ համար: Որով կը հարկադրուինք սպասել մինչեւ որոշեալ ժամը:

Բարեբախտաբար օդակայանը լեցուն է սպասողներով, որոնցմէ շատեր կը քնանան նստարաններու վրայ: Երբ որոշեալ ժամը կը հասնի, երկրորդ ծանուցմամբ կ'իմացնեն, որ մեր թռիչքը նախորդող օդանաւը նոր հասած ըլլալուն, նախ մեզ նախորդող ճամբորդներն են որ պիտի մեկնին: Ուրեմն... կրկին անգամ կը հարկադրուինք սպասել մինչեւ առաւօտեան ժամը եօթը, ընկերակցելով... նստարաններուն վրայ քնացողներուն:

Ի վերջոյ մօտ 17 ժամ սպասումէ ետք՝ առաւօտեան ժամը եօթի թռիչքը մեզ կը փոխադրէ Երեւան:

Երեւանի Չուարթնոց օդակայանին մէջ խօսնակը կը ծանուցանէր, թէ յաջորդ օրուայ Երեւան-Մոսկուա թռիչքներուն 4 հատը եւ Երեւան-Քիեւ թռիչքը ջնջուած են վառելանիւթի չգոյութեան պատճառով: Եւ քանի որ Հայաստանի վառելանիւթի հայթայթումը կախում ունի Ատրպէյճանի «Բարեացականութենէն», ահաւասիկ որ գրկած է զայն այդ կենսական հիւթէն: Կը նախատեսուի նաեւ հացի տազնապ յառաջիկայ օրերուն. միշտ նոյն պատճառով:

Օդակայանը ձգած կ'ուղղուինք դէպի Անի հիւրանոցը, ուր կը ստանձնենք մեզի վերապահուած սենեակը: Առաջին առթիւ լուացուելու մտօք երբ կը մտնեմ լուացարան, կը նկատեմ, որ տաք ջուրը չի հոսիր: Հարց կու տամ պաշտօնեային, թէ ինչո՞ւ չի հոսիր. կ'ըսէ՝ «Մեր ձեռքը չէ էլի, կազը դադարեցրել են վերելից»: Հարց կու տամ թէ ե՞րբ կարելի է ունենալ. կ'ըսէ՝ «Զգիտեմ, մի շաբաթ, երկու, թէ աւելի...»: Հասկանալի է: Առայժմ մոռնալ պէտք է տաք ջուրը եւ գոհանալ միայն պաղ ջուրով: Բայց գիշերուան մէկ պահուն կը տեսնեմ, որ պաղ ջուրն ալ դադրած է հոսելէ: Աւելի ուշ ... կը հասկնամ, որ այդ մէկը կը կատարուի քաղաքապետութեան որոշումով, խնայողութեան համար:

Տխուր այս իրականութեանց ի տես չեմ դժգոհիր ու չեմ ափսոսար Հայրենիք եկած ըլլալուս, այլ աւելին, կը զգամ ու կ'ապրիմ իմ հայրենի եղբայրներուս ու քոյրերուս ունեցած յաճախակի գրկանքները, որոնց կ'ենթարկուին շնորհիւ Ատրպէյճանի «Եղբայրական զգացումներուն...» եւ «օրհնութեամբը» կեդրոնական կառավարութեան:

Այս բոլորը հասկնալի են, սակայն, քանի որ թշնամին մեր ցաւերը մեղմացնելու մասին չէ, որ պիտի մտածէր, այլ աւելին՝ բարդացնելու զանոնք: Զմեռը վրայ կը հասնի, որուն հետեւանքները նախատեսել դժուար բան չէ ունէ մէկուն համար: Սակայն, մի՞թէ, չեն բաւեր նորաստեղծ կառավարութեան ունեցած անհամար դժուարութիւնները, չե՞ն բաւեր այսքան արտաքին ճնշումներն ու նեղութիւնները: Ահաւասիկ որ այդ բոլորին վրայ կու գայ աւելնալ ահաւոր լուր մը, որ կը ցնցէ ամբողջ հայութիւնը: «Գիշերը ընդհարում մը տեղի ունեցած է ՀԱԲ-ի եւ ՀՀԾ-ի միջեւ, ուր սպաննուած են 2 հոգիներ. մին՝ երեսփոխան Վիդիա Այվազեան, իսկ միւսը՝ Գուրգէն Միքայէլեան, ծանօթ Չավուշ անունով»:

Ըստ լուրերուն Պրն. Այվազեան կ'երթար ՀԱԲ-ի կեդրոնը, բանակցելու նոյն կեդրոնին ղեկավարներուն հետ, որպէսզի ընդհարումներ տեղի չունենան եւ հայու ձեռքով հայու արիւն չթափուի: Ահաւասիկ որ ինք իր կեանքը վրայ կու տար, այն ալ... հայու ձեռքով:

Յուզուած են բոլորը եւ մտահոգ: Ամենապարզ հայն անգամ կը մտածէր,

որ պատմական մեծ անկլինադարձի մը առջեւ կը գտնուին եւ իրենց համար ամենակարեւորը այսօր ուրիշ բան չէ, եթէ ոչ միայն ու միայն միասնականութիւնը ու զօրակցութիւնը նորաստեղծ կառավարութեան:

Այո, մեր ժողովուրդը բաւականին մտաւոր հասունութիւն արձանագրած կը թուի ըլլալ, անցեալի փորձութիւններէն դաստիարակուած, ինչ որ ուրախալի երեւոյթ մըն է: Բայց կը թուի նաեւ որ մութ ձեռքեր կան՝ որոնք կ'աշխատին խանգարել ձեռք բերուած յաջողութիւնը: Եւ դժբախտաբար, թէեւ սակաւ՝ բայց կը գտնուին երիտասարդներ, որոնք առանց տրամաբանելու կը գործեն, մի միայն առաջնորդուած կիրքէ եւ զգացումէ:

Ճիշդ այս կէտին համար էր որ մղումը ունեցայ գրելու այս յօդուածը, եւ ըսելու իմ համեստ խօսքը երիտասարդութեան:

Ուեւ անհատի համար, տիրապետող երկու երեւոյթներ կան՝ *տրամաբանութիւն* եւ *զգացում*: Առաջինը կու գայ մտքէն, իսկ երկրորդը՝ սրտէն: Սիրտը հարցերուն կը մօտենայ «ինչո՞ւ»-ներու տարափին տակ: «Ինչո՞ւ պէտք էր մեռնէր», «ինչո՞ւ պէտք էր շահէր», «ինչո՞ւ պէտք էր այդպէս ըլլար» եւ այլն: Այդ զգացական ինչուները կը վերածուին կրքի, կիրքը՝ ատելութեան, ատելութիւնը՝ հակառակութեան, եւ հակառակութիւնը՝ թշնամանքի: Ու այդ թշնամանքէն յառաջ կու գայ ամէն տեսակ չարիք:

Մինչ տրամաբանութիւնը կը հանդարտեցնէ մեզ ու մեր կիրքերը եւ կը մղէ մեզ պաղարիւնութեամբ ու ողջախոհութեամբ լուծում գտնելու եղած հարցերուն:

Տրամաբանութեամբ չենք կրնար սիսալ գործել այնպէս, ինչպէս չենք կրնար շիտակ գործել զգացումով ու կիրքով:

Մենք անցեալի մէջ եւս մեծ սխալներ գործած ենք տրամաբանութեան պակասէն ու մեծապէս տուժած: Ժամանակն է, որ դաս առնենք մեր անցեալէն ու աշխատինք շտկել զանոնք:

Մինչեւ ե՞րբ պէտք է կրկնենք նոյն սխալները:

Տրամաբանութեան պակասը կ'առաջնորդէ մեզ նաեւ անհասկացողութեան: Երկու հաստատ դիրքերու վրայ կեցած, միշտ հարցերը կը դիտենք մեր տեսանկիւնէն ու միշտ մեր տեսակէտը շիտակ գտնելով, կ'ամբաստանենք դէմինը:

Մեր այս անհասկացողութեան պատճառը վերլուծող շատ գեղեցիկ օրինակ մըն էր, որ տուաւ, մօտ 25 տարիներ առաջ, հանգուցեալ գրող Անդրանիկ Ծառուկեան, իր մէկ դասախօսութեան ընթացքին:

Գրպանէն հանեց խաւաքարտէ սիկարէթի տուփ մը, որուն մէկ երեսը կապոյտ մելանով տպագրուած էր, իսկ միւս երեսը գուտ ճերմակ էր: Ու բռնելով զայն ըսաւ. «Հիմա ձեր եւ իմ միջեւ կայ այս սիկարէթի տուփը: Դուք

կը նայիք անոր ձեր կողմէն ու կ'ըսէք թէ կապոյտ է: Իսկ ես կը նայիմ՝ իմ կողմէս ու կ'ըսեմ. ո՛չ, կապոյտ չէ, ճերմակ է: Դուք կը պնդէք ձեր տեսակետին վրայ ու կ'ամբաստանէք զիս, որ իրականությունը կարենալ տեսնելու չափ միտք չունիմ, իսկ ես կ'ընեմ նոյնը ձեզի: Այդ փոխադարձ ամբաստանությունները կը վերածուին նախատինքի, ու նախատինքը՝ հակառակութեան: Բայց, երբեւիցէ ոչ դուք ձեր գլուխը կ'երկարէք տեսնելու համար այս տուփին միւս երեսը եւ ոչ ալ ես կ'ընեմ նոյնը: Ու կը սկսի պայքարը մեր միջեւ: Պայքար մը անմիտ ու անիմաստ՝ գուրկ տրամաբանութենէ: Մինչդեռ եթէ երբեք փորձեմ դիտել այս տուփը ձեր կողմէն, պիտի գտնեմ, որ ձեր տեսակետն ալ շիտակ է եւ ոչ միայն իմը: Ու դուք նոյնպէս՝ փոխադարձաբար: Այն ատեն պիտի դադրինք իրար ամբաստանելէ ու իրար հետ պայքարելէ: Տրամաբանությունը պիտի յաղթանակէ զգացումին, եւ մենք այդ տրամաբանութեամբ առաջնորդուած, ձեռք-ձեռքի տալով պիտի կարենանք կերտել մեր ապագան»:

Այս օրինակը խորապէս տպաւորած է զիս եւ երկար խորհիլ տուած՝ մեր ազգային անհասկացողութեանց վրայ: Մինչ կը տեսնենք զարգացած երկիրներուն մէջ գտնուող կուսակցությունները, որոնք այդքան սաստիկ պայքար կը մղեն իրարու դէմ ընտրութեանց շրջանին, իրար նախատելու աստիճան, բայց ընտրութենէն ետք պարտուող կողմը կ'երթայ ձեռքը թօթուելու եւ շնորհաւորելու իր հակառակորդին, միշտ իր ազգային շահերէն մղուած:

Ուրեմն, սիրելի երիտասարդներ, պէտք է ի մտի ունենալ որ մեր բոլոր դատողություններուն ու արարքներուն մէջ հարկաւոր է միշտ առաջնորդուիլ տրամաբանութեան ուղիով, որպէսզի սխալներ չգործենք:

Վերջացնելու համար կ'ուզեմ յիշեցնել ձեզի Վարդանի պատգամը, որ խօսեցաւ թուականէս 1500 տարիներ առաջ, ըսելով. «Եղբայրներ, մեր քաջութեան մէջ վատություն չխառնենք»:

«Ավանգարդ», 9 Սեպտեմբեր 1990

Վերյիշելով անցեալը

ՎԻՔԹՈՐ ՀԱՄԲԱՁՈՒՄԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Ազգի մը ծոցէն կը ծնին բացառիկ ունակութիւններու տէր մարդիկ, որոնք այլ եւ այլ ասպարէզներու մէջ իրենց ունեցած տաղանդին եւ արտակարգ մտքի կարողութեանց շնորհիւ, կը դառնան մէյ մէկ հսկաներ՝ միջազգային համբաւի տէր անհատներ, փառք ու պատիւ բերելով իրենց ազգին:

Ահա այդպիսիներէն մին էր՝

Աշխարհահռչակ գիտնականը,

Հայաստանի Հանրապետութեան գիտութիւններու ազգային ակադեմիայի 46 տարիներու պատուոյ նախագահը,

Բիւրականի աստղադիտարանի հիմնադիրը եւ անոր երկարամեայ տնօրէնը,

«Գիտելիք» ընկերութեան անփոփոխ նախագահը,

Հայկական Հանրագիտարանի առաջին գլխաւոր խմբագիրը ու խմբագրական կազմի նախագահը,

Խ.Ս.Հ.Մ. Գիտութիւններու Ակադեմիայի անդամը,

1948-55 միջազգային աստղագիտական միութեան փոխնախագահը,

1961-64 միջազգային աստղագիտական միութեան նախագահը,

1968-72 գիտական ընկերութիւններու միջազգային խորհուրդի նախագահը,

Խ.Ս.Հ.Մ. երկու պետական մրցանակներու դափնեկիրը,

Եւ Հայաստանի «Ազգային Հերոս» Վիքթոր Համբարձումեանը:

Բոլոր անոնք, որոնք պատեհութիւնը ունեցած են հանդիպելու եւ խօսելու իր հետ, այդ հանդիպումէն անպայման անմոռանալի յիշատակ մը պիտի պահեն իրենց մտքին մէջ:

Ահա այդպիսի պատեհութիւն մըն էր, որ վիճակուեցաւ ինծի 6 տարիներ առաջ: Երկու օր մնացինք Մոսկուա, բարեկամիս՝ Կենսաբանական գիտութիւններու Դոկտ. եւ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Կենսաաֆիզիքայի բաժնի վարիչ Փրոֆ. Սիներիկ Հայրապետեանի հետ, որու հրաւերովն իսկ տիկինս եւ ես գացած էինք Հայաստան:

Այդ շրջանին էր, որ Զօրի Բալայեան հացադուլ յայտարարած էր ու կը շարունակէր զայն օրերէ ի վեր:

*Տերևան
Ակադեմիկոս
Վիքթոր
Համբարձումեանի
հետ*



Առիթն օգտուելով, երեքով միասին գացինք «Մոսկուա» պանդոկը, Բալայեանին այցելութեան:

Մեծ եղաւ մեր զարմանքը, երբ նոյն սենեակին մէջ տեսանք Վիքթոր Համբարձումեանը՝ շրջապատուած տասնեակ մը ուրիշ անձնաւորութիւններով: Անոնց մէջ էին Մարգիտրիտուրդի նախագահ Սիմէոն Բաբայեանը, Ղարաբաղի ժողովրդական երեսփոխաններ, Վաչական Գրիգորեանը, Սօս Սարգսեանը եւ ուրիշներ, որոնք բոլորն ալ հացադուլ յայտարարած էին: Կային նաեւ ուրիշ երիտասարդներ եւս, որոնք հոգ կը տանէին հացադուլաւորներուն:

Պահը խիստ զգայացունց թուեցաւ մեզի առաջին իսկ վայրկեանէն: Վեց օրերու անօթութեան գործած աւերը կը կարդացուէր արդէն իսկ վատառողջ Բալայեանի դէմքին վրայ: Ինք առանձինն սկսած էր այդ հացադուլը, բայց յաջորդ օրերուն ուրիշներ եւս միացած էին իրեն ու այդպիսով խումբը սկսած էր հետզհետէ ընդլայնիլ:

Փրոֆ. Հայրապետեան, բնիկ դարաբաղցի ըլլալուն, ծանօթ էր բոլորին:

Իր սրտագին ողջագուրումները Չ. Բալայեանի եւ Վ. Համբարձումեանի հետ, երկուստեք արցունքներ խլեցին: Ապա ձեռք սեղմումներով ծանօթացումներ ունեցանք բոլորին հետ:

Հիմա կեցած Համբարձումեանի կողքին, կը դիտէի բոլորին դէմքերը եւ անոնց աչքերուն մէջ կը կարդայի արդար զայրոյթ մը անարդարութեան, մարդկային արժանապատուութեան ոտնահարման, լուռ մեղսակցութիւն ունեցող մեծաւորներու եւ խուլ եւ կոյր ձեւացող ղեկավարներու դէմ:



*Տէրեան
Արձակագիր
Զօրի Բաղայեանի
հետ զրոյցի
պահուն: Աջին՝
Ակադեմիկոս
Վիքթոր
Համբարձումեան*

Այս մտորումներու մէջ էի, երբ Հայրապետեան մօտենալով Համբարձումեանին ըսաւ թախանձագին. «Վիքթոր Համագասպի, ասա Զօրիին որ դադարեցնի այս հացադուլը: Նա սրտի վիրահատութիւնից դէր նոր դուրս է եկել: Ես վստահ եմ, որ նա կը լսի ձեզ: Մեղք է, մի թողուր որ...»: - «Ո՞նց կարող եմ էդպէս բան ասել,- ընդմիջեց Համբարձումեանը,- երբ ինքս էլ հացադուլ եմ յայտարարել մի երկու ժամ առաջ...»:

Հայրապետեան այս անսպասելի յայտնութենէն կայծակնահար ապշած կը դիտէր Համբարձումեանը: Կարծես լեզուն պապանձած էր եւ ուղեղը դադրած աշխատելէ: Այնպէս կը թուէր, որ ալ ըսելիք ոչինչ մնացած էր: Ընկճուած, գլուխը հակեց վար եւ սկսաւ լուռ արտասուել:

Համբարձումեան, Հայրապետեանին կսկիծը մեղմելու եւ սփոփելու նպատակով, հայրաբար երկու ձեռքերը անոր ուսերուն դնելով ըսաւ. «Սիներիկ Ներսէսի, եկ, օրհնեմ քեզ – եւ աջ ձեռքը դրաւ գլխուն: Յետոյ շեշտակի խօսելով՝ - նայէ որ, միայն գիտութիւն... միայն գիտութիւն», - եւ տաք համբոյր մը դրոշմեց անոր ճակտին:

Իմաստուն մարդու ինչպիսի՜ իմաստուն խօսք: Երանի թէ իւրաքանչիւր անձ մնար իր ասպարէզին մէջ միայն...:

Քիչ ետք առիթը յարմար նկատելով նստեցայ Համբարձումեանին քով եւ հարց տուի իրեն, թէ ի՞նչ բան մղեց զինք հացադուլի:

«Ես հացադուլ եմ յայտարարել մի երկու ժամ առաջ: Առաջին՝ բողոքելու մեր իշխանութիւնների անարդար, միակողմանի եւ բարբարոս արարքների դէմ: Երկրորդ՝ համերաշխութիւն ցոյց տալու եւ ձայնակցելու Զօրիին», -

պատասխանեց ակադեմականը եւ ասելցուց. «Այսօր Ղարաբաղը գտնուում է անել կացութեան մէջ: Մեր բոլորին ցաւը նոյնն է: Հայրենիք, սփիւռք, բոլորը պէտք է համերաշխ լինեն Ղարաբաղի հետ: Մեր առջեւ ունենք երկար մի ճանապարհ, որը յուսահատութիւն չի ճանաչի: Այդ երկար ճանապարհը քայլ առ քայլ կտրելով, պիտի հասնենք մեր նպատակին»:

Նոյն հարցումը ուղղեցի Չ. Բալայեանին, որուն պատասխանը զանց կ'առնեմ հոս, նիւթէն դուրս չելլելու նպատակով: (Տես «Պայքար» 1990 թիւ 50):

Ահա այսպէս էր մեր մեծ ակադեմիկոսը, Վիքթոր Համբարձումեան:

Ան մեծ գիտնական չէր միայն, մեծ հայրենասէր մը, որ յոյսը չկորսնցուց երբեք՝ «այդ երկար ճանապարհը քայլ առ քայլ կտրելով հասնելու մեր նպատակին»:

Հանգիստ իր յոգնաբեկ ոսկորներուն:

«Նոր Օր», 12 Հոկտեմբեր 1996

ՄՐՏԻ ԽՕՍՔ 85-ԱՄԵԱԿԻՍ ԱՌԹԻԻ

Ուղղուած գաւակներու, թոռներու եւ ծոռներու 85-րդ տարեդարձիս ինձ համար կազմակերպուած հաւաքոյթի ընթացքին

Սիրելիներ, նախ շնորհակալ եմ ձեր բոլորէն, տարեդարձիս առթիւ ձեր կազմակերպած այս հաւաքոյթին համար, ինչ որ ցոյց կու տայ ձեր ունեցած սէրն ու յարգանքը իմ անձիս հանդէպ:

Գիտեմ որ իմ կեանքս կը հասնի իր երեկոյին, սակայն դուք՝ «ի մասնաւորի թոռնիկներ», դուք տակաւին նոր կը սկսիք ձեր կեանքը: Ձեզմէ երկուքը արդէն իսկ աւարտեցին քոլէճը: Հինգերնիդ՝ քոլէճական էք, եւ երկուքը երկրորդական ուսանող: Այնպէս որ տակաւին երկար ճամբայ ունիք կտրելիք ձեր կեանքին մէջ: Որով այս առթիւ կ'ուզեմ ձեզի տալ կարգ մը գիտելիքներ ու թելադրութիւններ, որոնք կրնան օգտակար ըլլալ ձեզի ձեր կեանքին մէջ:

* * *

Երբ դպրոցական աշակերտ էի, օր մը մեր ուսուցիչը մեզի ըսաւ, «տղաք, ուր որ ըլլաք, մեծ կամ փոքր ինչ հաւաքականութեան մէջ որ գտնուիք, աշխատեցէք կա'մ բան մը սորվիլ, եւ կամ եթէ կրնաք բան մը սորվեցնել՝ սորվեցուցէք»: Այսինքն ըսել կ'ուզէր որ երբ իրարու քով կու գաք եւ կամ տեղ մը հաւաքուիք, պարապ խօսքերով, կամ անպէտ կատակախօսութիւններով մի անցընէք ձեր ժամանակը, այլ շինիչ նիւթերու վրայ խօսեցէք:

Մենք դասարանին մէջ 12 հոգի էինք: Չեմ գիտեր թէ քանի հոգիներ հասկցան այս խօսքերուն իմաստը, բանի հոգիներ մտքերնին պահեցին զանոնք եւ գործադրեցին: Սակայն ինծի համար այդ խօսքերը եղան կեանքիս ուղեցոյցը: Անոր համար ուր որ գտնուէի, միշտ ինձմէ մեծերուն քով կը նստէի, լսելու անոնց խօսակցութիւնները, բան մը կարենալ առնելու անոնց մէջէն: Իսկ երբ հարկ եղած է տեղ մը խօսիլ ու բան մը սորվեցնել ներկաներուն, կարողութեանս ներած չափով կրցած եմ օգտակար դառնալ:

Երբ քիչ առաջ կը լսէի ամէն մէկուդ խօսած խօսքերը իմ մասին, կը զգայի որ անցեալի մէջ եւս ձեզի խօսուած խօսքերը ապարդիւն չեն եղած: Անցեալին՝

ձեր սրտերուն ցանուած այդ սերմերը իրենց արդիւնքը տուած են եւ ես ուրախ եմ անոր համար:

Երբ Յիսուս կը քարոզէր, հազարաւոր մարդիկ ու կիներ կ'երթային զինք մտիկ ընելու: Այս մարդոցմէն շատերը կ'երթային պարզապէս հետաքրքրութեան համար, տեսնելու՝ թէ ինչ կը խօսի այս մարդը (Յիսուս): Փարիսեցիներ կ'երթային ոչ թէ բան մը սորվելու եւ հասկնալու, այլ միայն իր վրայ յանցանք գտնելու՝ զինք քննադատելու եւ մեղադրանքներ յառաջացնելու իր դէմ: Իսկ ուրիշներ կը լսէին, կը սորվէին ու կը հաւատային: Ահա ասոնք էին միայն որ կ'օգտուէին Յիսուսի քարոզներէն:

Հիմա տակաւին ձեր սորվելու շրջանն է: Թէեւ մարդ սորվելիք ունի ամբողջ իր կեանքին տեւողութեան, սակայն ձեր այս տարիքը յատուկ սորվելու շրջան է:

Շնորհակալ եմ որ կը տօնէք իմ 85-րդ տարեդարձը: 85 տարի ապրիլը մարդու մը համար լման կեանք մը կը նկատուի, առանց հաշուելու բացառաբար 90-95 կամ 100 տարի ապրողներ, նկատելով որ Աստուած մարդուն շնորհած է կեանքի 70 տարիներ..., եւ ահա ես արդէն 15 տարի է յաւելեալ (overtime) կ'ապրիմ, փառք Աստուծոյ, ինծի շնորհած այս տարիներուն համար եւ փառք Իրեն, յետ այսու եւս Իր տալիք օրերուն համար:

Սակայն կ'ուզեմ ըսել որ երկար ապրիլը, առանց կեանքիդ մէջ որեւէ օգտակար գործ մը կամ արժէք ներկայացնող բան մը ընելու, միայն աշխատիլ՝ դրամ շահիլ եւ ուտել ու խմելով ապրիլ՝ պիտի նշանակէր ապրիլ աննպատակ կեանք մը: Իսկ աննպատակ կեանքը իմաստ չունի: Որով կեանքիդ իմաստ մը տալու համար պէտք է ընես բան մը կամ բաներ, որ մահէդ ետք կարենաս ետիդ թողուլ լաւ ու արժէք ներկայացնող յիշատակներ:

Կեանք մը կրնայ իմաստաւորուիլ իր ունեցած արժանիքներով միայն: Մարդկային արժանիքներ՝ որոնք դրամական արժանիքներէն շատ աւելին կ'արժեն:

Դրամական հարստութիւնը թէեւ առաւելութիւն մըն է մէկու մը համար, սակայն արժանիք մը ըլլալէ կը դադրի՝ երբ մարդը կը դառնայ հպարտ եւ ամբարտաւան:

Ահա այդ մարդկային արժանիքներէն մէկն է օրինակելի ու պարկեշտ եւ իրար հետ միշտ սիրով ընտանիք մը ունենալը, որ ինքնին մեծ հարստութիւն մըն է:

Հոս ձեզի կ'ուզեմ պատմել պատմութիւն մը, որ ցոյց կու տայ թէ ինչ կը նշանակէ ընտանեկան հարստութիւն:

Ժամանակին հարկահաւաք մարդիկ կային: (Հարկահաւաքները պետական այն պաշտօնեաներն են, որոնք 4-5 տարին անգամ մը կը մտնեն տունե-

րեն ներս եւ կը ստուգեն՝ որ մարդը ինչ հարստութիւն ունի, ուրիշ տուներ, խանութ, պարտեզ եւլն: Այսինքն թէ որքան հարստութիւն ունի որ անոր համեմատ տուրք (tax) գանձեն իրմէ: Այս հարկահաւաքներէն մէկը կ'երթայ քահանայի մը տունը եւ դուռը կը զարնէ: Քահանան երբ դուռը կը բանայ, մարդը կ'ըսէ.- Ես պետական պաշտօնեան եմ, եկած եմ քու ունեցած հարստութիւնդ արձանագրելու:

Օ՛ հրամեցէք կ'ըսէ քահանան, ես շատ հարուստ մարդ եմ, շատ հարուստ:

Մարդը կը խորհի որ ասկէ կարելի է շատ տուրք գանձել, քանի որ հարուստ է:

Մարդը կը նստի, տետրակը կը բանայ, գրիչն ալ ձեռք կ'առնէ ու կը հարցնէ.

- Ըսէ, Տէր Հայր, ի՞նչ ունիս,

Քահանան կ'ըսէ

- Կին մը ունիմ այնքան խելացի, ազնիւ, համեստ...

Մարդը կը միջամտէ ու կ'ըսէ.

- Տէր Հայր ես քու կնկանդ մասին չեմ հարցներ, ըսէ թէ ինչ ունիս:

- Ունիմ երկու աղջիկներ որոնք գանձ են ուղղակի շնորհալի, գեղեցիկ, խելացի...

Մարդը նորէն կը միջամտէ ու կ'ըսէ.

- Տէր Հայր, ես կնկանդ, աղջիկներուդ համար չեմ հարցներ ինչ ունիս այդ ըսէ ինծի

- Տղայ մը ունիմ որ աշխարհին հետ չեմ փոխեր...

Մարդուն համբերութիւնը կը հատնի:

- Տէր Հայր, Աստուած պահէ կի՜նդ ալ, աղջիկներդ ալ, տղադ ալ, ինծի ըսէ թէ ինչ հարստութիւն ունիս:

- Ասկէ աւելի հարստութի՛ւն կ'ուզես, ա՛յ մարդ: Միթէ ասոնք հարստութիւն չե՞ն:

- Ասոնք քու հարստութիւններդ են, սակայն իմ արձանագրելիք հարստութիւններս չեն,- կ'ըսէ մարդը:- Ինծի ըսէ թէ որքան դրամ ունիս, քանի հատ տուն ունիս, պարտեզ՝ այգի եւլն:

- Ոչ դրամ ունիմ, ոչ ուրիշ տուն եւ ոչ ալ պարտեզ կամ այգի: Ունեցածս միայն այս տունն է եւ ուրիշ ոչինչ:

Մարդը տետրակը կը գոցէ ու կը հեռանայ:

Այս պատմութիւնը պատմեցի ձեզի, ցոյց տալու համար որ միայն շատ դրամ ունենալով չէ որ մարդ հարուստ կը նկատուի: Ընտանեկան հարստութիւնը շատ աւելին կ'արժէ քան այդ դրամական հարստութիւնը:

Այսօր եթէ ռեւէ մէկը գայ եւ հարց տայ ինծի ունեցած հարստութեանս

մասին, ճիշդ քահանային տուած պատասխաններն է որ կու տամ իրեն:

Փառք Աստուծոյ, ունիմ կին մը, որ քահանային կնկան յատկութիւնները ունի արդէն: Երկու աղջիկներս ալ Տէր հօր աղջիկներէն ետ չեն մնար, նոյնպէս եւ տղաս:

Աւելին ըլլալով՝ երկու փեսաներս պարկէշտ ու պատուախնդիր ընտանիքի հայրեր են: Իսկ հարսս միշտ գուարթախոհ եւ միշտ ուրախ տրամադրութիւններ ստեղծող մէկն է:

Սակայն այդ բոլորին մէջ դուք յատուկ տեղ ունիք ինծի համար, սիրելի թոռնիկներ, դուք իմ հարստութիւնն էք: Ձեր մէջէն առաջինը եղող Անիթան, որ ամուսնացաւ պարկէշտ ու աշխատունակ Սեւակին հետ, արդէն իսկ մեզի պարգեւեց երկու ծոռներ, Միքայէլը եւ Ալինան, աւելցնելով ձեր համրանքին՝ 9-ին վրայ 2 մը եւս, հասցնելով զայն 11-ի:

Առ այժմ տասնմէկ գանձեր, որոնց մէն մի հատը կարելի չէ փոխել աշխարհի հարստութեան հետ:

Ես հպարտ եմ ձեզմով, սիրելի թոռնիկներ: Եւ երբ կը տեսնեմ այստեղ ձեր բոլորը, մինչեւ պգտիկը՝ չափազանց խանդավառուած այս մթնոլորտէն, կ'ուզեմ ձեզի երգել երգ մը, ցոյց տալու՝ թէ ես որքան գանձեր ունիմ, թէ որքան հարուստ եմ ես:

*Գանձեր ունեմ անտակ անծէր,
Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ,
Ծով բարութիւն շնորհք ու սէր,
Ծոխ պարգեւ եմ առել վերուստ:*

*Անգին հանքը իմ գանձերի,
Սրտիկս է շէն ու ազատ,
Ինչքան էլ որ բաշխեմ ձրի,
Սէրն անվերջ է ու անհատ:*

*Երկիւղ չունեմ, ահ չունեմ ես,
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհով մին ահա էսպէս,
Ծաղ եմ տալիս իմ բարձունքից:*

*Ես հարուստ եմ, ես բախտաւոր,
Իմ ծննդեան պայծառ օրէն,
Էլ աշխարհ չեմ գալու, հօ, նոր,
Իր տուածն եմ տալիս իրեն:*

Այս երգին վերջին 2 տողերը, որ լսեցիք, կ'ըսեն. «Էլ աշխարհ չեմ գալու հօ

նոր»։ Ըսել կ'ուզե որ երբ օր մը երթամ այս աշխարհէն, ալ՝ չեմ գար, որով՝ «իր տուածն եմ տալիս իրեն», այսինքն ինչ որ աշխարհ տուաւ ինծի, այսինքն ձեզ բոլորդ, իրեն կը ձգեմ, ու կ'երթամ։

Սակայն քանի դեռ չեմ գացած եւ հոս եմ տակաւին ձեզի հետ միասին կ'ուզեմ այս առթիւ ալ ձեզի խօսիլ կեանքի որոշ գիտելիքներու վրայով։

Այսօր ձեզի կ'ուզեմ տալ 3 խրատներ, որոնք խրատէ աւելի հրահանգներ (command) են, որոնք շատ կարեւոր են ձեզի համար, քանի որ կ'ապրիք այնպիսի միջավայրի մը մէջ, որ ամէն օր կրնայ թունաւորել ձեր բարի նկարագիրը։

* * *

Առաջին.- Ս. գիրքը մեզի կը պատգամէ՝ ըսելով.

«Պատուէ հայրդ ու մայրդ, որ երկար ապրիս»։

Ս. գրքին այս պատուէրը շատ կարեւոր պատգամ մըն է բոլոր մարդոց, ի մասնաւորի՝ երիտասարդ երիտասարդուհիներուն համար։

Թէեւ կարելի է հարց տալ, թէ ինչու Ս. գիրքը շեշտած է այս պատուէրը, որ գաւակներ յարգեն ու պատուեն իրենց հայրերն ու մայրերը։

Այս պատուէրը մեզի կը հասկցնէ, որ կան գաւակներ որոնք չեն պատուեր իրենց հայրերն ու մայրերը։

Պէտք է ըսել սակայն, որ կան հայրեր ալ՝ խմող, ծխող, իրենց գաւակներուն կրթութեան ու դաստիարակութեան վրայ չմտածող, անոնց ծուռ կամ շիտակ կեանքի ընթացքով չհետաքրքրուող հայրեր կամ մայրեր, որոնք բնական է գիտակից ծնողներ չեն համարուիր։

Ես կը խօսիմ պարկեշտ ու գիտակից այն ծնողներու վրայով, որոնց նուիրումը իրենց գաւակներուն հանդէպ ամէն գնահատանքէ վեր։

Պատկերացուցէք ծնող մը, որ իր գաւակը լոյս աշխարհ բերելէ ետք, անոր մանկութենէն սկսեալ զինք խնամէ, կերակրէ, անոր բոլոր պէտքերը հոգայ, դպրոց դրկէ, ապա համալսարան (college), (այսօր ամէն մարդ շատ լաւ գիտէ համալսարանական կրթաթոշակներուն մասին, որոնք տարեկան 45,000-65,000 տոլարի սահմաններուն մէջ են)։

Մանաւանդ եթէ երեք ընտանիքի մը մէջ մէկէ աւելի գաւակներ կան, 2-3 կամ 4 հատ, որոնց բոլորն ալ դպրոցականներ են, պատկերացուցէք այդ ընտանիքին հօրն ու մօրը գոհողութեան չափն ու աստիճանը..., որ կ'երկարի մինչեւ անոնց դպրոց աւարտելը եւ անկէ ետք գործի անցնելով դրամ շահիլ սկսիլը։

Որով՝ իր ծնողքէն այս աստիճան գոհողութիւն տեսնող գաւակ մը եթէ

երբեք անհնազանդ պիտի ըլլայ իր հօրն ու մօրը, եւ անոնց խօսքերուն ու խրատներուն հակառակ պիտի շարժի, մէկ խօսքով պիտի չպատուէ իր հայրն ու մայրը, այդպիսի գաւաթ մը կը կոչուի ԱՊԵՐԱԽՏ գաւաթ:

Ապերախտը այն է, որ մէկէ մը բարիք կամ օգնութիւն տեսնելէ ետք, փոխանակ անոր շնորհակալ ըլլալու, ընդհակառակը երես կը դարձնէ անոր եւ հակառակութիւններ կ'ընէ անոր հանդէպ:

Դժբախտաբար կան այդպիսի մարդիկ կամ գաւաթներ, որոնք ապերախտ կը գտնուին իրենց ծնողաց հանդէպ: Թէեւ ես որեւէ կասկած չունիմ ձեր վրայ: Երբեք չեմ խորհիր որ ձեզմէ ոեւէ մէկը ապերախտ գտնուի իր ծնողքին հանդէպ: Փառք Աստուծոյ, ձեր նկարագիրը կերտուեցաւ աստուածավախ ու բարեպաշտ ընտանիքներու մէջ: Դուք ձեր ընտանիքներէն ստացած կրթութիւնը վստահ եմ կը պահեք մինչեւ վերջ եւ ամօթ չեք բերեր ձեր ընտանիքներուն հասցէին:

Սակայն գիտցէք, որ ձեր շրջապատը լեցուն է ձեզ գայթակղութեան առաջնորդող երեւոյթներով, որոնք ներկայ ժամանակներուն մէջ թէեւ անմեղ բաներ կը նկատուին, սակայն սխալ եւ մեղաւոր արարքներ են: (Հետեւեալ օրինակները նախապէս տուած էի ձեզի «Հայրական Խօսքեր» գրքոյկիս մէջ:)

Օրինակ.- Երբ կը տեսնէք տղայ մը որ իր երկու ականջները ծակել տալով երկու հատ օղ կը դնէ ականջներուն, ինչ ըրած կ'ըլլայ: Ի՞նչ սխալ կայ անոր մէջ: Չէ որ շատեր կ'ընեն նոյնը...:

Սակայն օղը յատուկ է միայն կիներուն եւ աղջիկներուն:

Օղը հզակւն սեռին ցուցանիչն է: Ինչպէս գիտեք նորածին պէյպի աղջիկներուն ականջները կը ծակեն եւ օղ կը դնեն, որպէսզի տեսնողներ գիտնան որ ան աղջիկ մըն է: Օղը երբեք վայել չէ տղամարդուն:

Կամ՝ աղջիկ թէ տղայ ոեւէ մէկը, օր մը երթայ եւ իր մարմնի վրայ դաշուածքներ (tattoo) դնել տալ, ինչ ըրած կ'ըլլայ: Անմեղ բան մը...: Չէ՞ որ շատեր կ'ընեն նոյնը...:

Սակայն դաշուածքը հինէն ի վեր նշան եղած է միայն անոնց որոնք Երուսաղէմ կ'երթան որպէս ուխտաւոր ու կ'ըլլան Մահտեսի (հաճի): Անոնք իրենց թելերուն վրայ դնել կու տան փոքրիկ խաչ մը կամ Քրիստոսի Յարութեան կամ համբարձման մէկ նկարը, որպէս նշան իրենց Մահտեսիութեան:

Ատկէ դուրս մարմնին զանազան մասերու վրայ tattoo-ներ դնել տալը, ինքնին մեղք է, քանի որ ան կը նշանակէ առարկել Աստուծոյ ստեղծագործութեան: Այսինքն ըսել՝ Աստուած, դուն մեզ գեղեցիկ չես ստեղծած: Փոխանակ մեզի գունաւոր, գեղեցիկ մարմին մը տալու, մէկ գոյնով տափակ մարմին մը տուած ես: Եւ ահա տես թէ մենք ինչպէս կը գեղեցկացնենք մեր մարմինները գոյնզգոյն նկարներով...:

Ասոր գիտակցող ռեւէ անձ, արդէն իսկ tattoo չի դնել իր մարմնին վրայ:

Տակաւին կայ աւելին: Ընկերներով հաւաքոյթի մը ընթացքին գաւաթ մը կը խմէք: Էլի ոչինչ՝ պիտի ըսէին մեր հայաստանցի բարեկամները: Սակայն յաջորդ հաւաքումներուն եթէ այդ մէկը ըլլայ երկու, երկուքը՝ երեք, ու այդպէս շարունակաբար, տարիներ անց կը տեսնէք որ խմելը անգիտակցաբար արդէն իսկ վարժութիւն դարձած է ձեզի, որմէ կարենալ բաժնուիլը դժուար կրնայ ըլլալ:

Խմելուն ընկերն է նաեւ ծխելը, որ դարձեալ վատ տեսակի մոլութիւն մըն է: Այդ մոլութեան բռնուածներն ալ տարիներ ետք միայն կը հասկնան ու կը գիտակցին անոր որ աստիճան վնասակար եղած ըլլալուն, սակայն կը դժուարանան դադրեցնել զայն:

Իսկ ամենավտանգաւորը այն է, որ եթէ այդ ծխելու մոլութիւնը հասնի թմրադեղերու գործածութեան, այն պարագային այդ մարդուն կեանքը առ յաւէտ կը կործանի: Կը կորսնցնէ իր մարդկային արժանիքները, կը նսեմացնէ ինքզինք իր շրջապատէն ներս: Իսկ անկէ ետք, որքան ալ դարմանուելով շտկուած ըլլայ, չի կրնար վերագտնել իր կորսնցուցած նախկին արժանիքները:

Եթէ երբեք ձեր ընկերներէն մէկը ինկած է այդ փորձութեան մէջ եւ հաւաքոյթի մը ընթացքին ձեզմէ մէկուն առաջարկէ՝ ըսելով.- ասկէ մէկ շունչ քաշէ: Բնական է, կ'ըսէք.- Ոչ, չեմ քաշեր: Զեզի կ'ըսէ.- Միայն մէկ շունչ եւ կը տեսնեն որ ինչ լաւ կը զգաս... Ինչ ուրախ կը զգաս ինքզինքդ... Եւ սակայն մի փորձուիլի այդ «մէկ շունչը» քաշել, որուն հետեւանքը ուրիշ բան չէ, եթէ ոչ կեանքիդ կործանման սկիզբը:

Իսկ ձեր կեանքին ամենակարեւոր խնդիրն է կեանքի ընկեր մը կարենալ գտնելը: Կեանքի ընկեր մը, որուն հետ կարելի ըլլայ ապրիլ ամբողջ կեանք մը:

Դժբախտաբար անցեալի բարի սովորութիւնները ա՛յ դադրած են կիրակուելէ, ուր ծնողքը եւս իրենց կարծիքը կը յայտնէին տղուն կամ աղջկան ընտրութեան մէջ:

Այսօր երիտասարդ-երիտասարդուհիներ չեն ուզեր որ ռեւէ մէկը իրենց թելադրէ իրենց ապագայ թեկնածուին վրայով: Իրենք է որ պիտի գտնեն իրենց կեանքի ընկերը առանց ռեւէ մէկուն միջամտութեան:

Այս է ներկայիս ընդունուած մտայնութիւնը:

Այս տողոց եւ աղջիկներուն մէջ կան ոմանք, որոնք լուրջ կը մօտենան այս հարցին եւ կ'աշխատին գտնել ընկեր մը, որուն հետ կը խորհին թէ կարելի է ապրիլ միասին եւ իրենց կեանքը կապել իրար հետ:

Այս տեսակ լուրջ մտածող տղաք եւ աղջիկներ ընդհանրապէս կը յաջողին իրենց կեանքին մէջ:

Իսկ ուրիշներ՝ կը գտնեն «պոյֆրենտ» կամ «կըրլֆրենտ» մը, առանց լուրջ մտածելու, պարզապէս ընկեր մը զբաղումի համար, որուն հետ կ'ապրին կարճ կամ երկար շրջան մը: Կ'ապրին իրենց բնագոյական ջահել զգացումներուն գոհացում տալու համար միայն: Հեռուն չեն տեսներ: Իրենց համար այսօրն է կարելորդ: Եւ իրենց այդ անհեռատես ընթացքին մէջ, յանկարծ կ'իյնան փորձութեան փոսին մէջ..., ինչ որ հաւանաբար չէին ուզեր հասած ըլլալ այդ կէտին...: Սակայն ուզեն կամ ոչ, իրենք զիրենք կը գտնեն կատարուած իրականութեան առջեւ...:

Այդ փորձութեան մէջ ինկողներ շատ անգամ շուարումի կը մատնուին, անոր համար որ իրենց իրար հետ ունեցած՝ որպէս ընկեր-ընկերուհի ապրած ազատ եւ անհոգ կեանքը, յանկարծ հիմնովին կը փոխուի եւ զիրենք կը դնէ ընտանիքի վերածուած ըլլալու եւ այդ ընտանիքին պատասխանատւութիւնը ստանձնելու պարտաւորութեան տակ:

Ահա այդ վիճակին մատնուողներուն մէջ կան ոմանք, որոնք հաւանաբար տակաւին մտային հասունութիւնն անգամ չունին ընտանիք կազմելու:

Մի գուցէ կան ուրիշներ, որոնք նիւթական կարելիութիւնը չունին կարելնալ ընտանիք մը պահելու:

Թերեւս կան ուրիշներ ալ, որոնք թէեւ ունին ամէն տեսակի կարելիութիւններ ընտանիք մը կարենալ կազմելու, սակայն... հաւանաբար տարբեր հաշիւներ ունէին իրենց մտքին մէջ, որոնց համար արգելք կ'ըլլար ներկայ կացութիւնը...:

Կան նաեւ ուրիշներ ալ, որոնք եթէ երբեք ուրախ ալ եղած չըլլան ստեղծուած կացութենէն, սակայն գիտակցելով իրենց սխալին, ազնուութիւնը կ'ունենան ընդունելու իրենց «մեղքը» ու կը շարունակեն ապրիլ միասին, ընտանիք դարձած:

Ու այսպէս բոլոր անոնք որոնք անհեռատեսօրէն կը սկսին իրենց ընկերութիւնը, վերջաւորութեան իրենք զիրենք կը գտնեն անմխիթար եւ անհաճոյ վիճակի մը մէջ:

Յաւալի է տեսնել, որ կեանքի ամենալուրջ մօտեցումը պահանջող այս ամուսնութեան հարցին շատեր կը մօտենան թեթեւամտօրէն: Անոր համար է որ իրենց շինած տուները կը նմանին Ս. գրքին մէջ նշուած «աւագի վրայ շինուած տուներուն», որոնք անձրեւի հեղեղի մը չդիմանալով, փուլ կու գան:

Ահա այսպիսի պատճառներով է որ Ամերիկայի մէջ ամուսնալուծումները հասած են 65 տոկոսի, չհաշուած տակաւին առանց ամուսնանալու իրար հետ ապրողները:

Ինչո՞ւ:

Քանի որ ամուսնութիւնը կորսնցուցած է իր իմաստը: Կորսնցուցած է իր

սրբութիւնն ու իր աստուածային խորհուրդ մը ըլլալու հասկացողութիւնը եւ վերածուած է լոկ մանկական տուն-տուն խաղալու նման անլուրջ յարաբերութեան մը:

Անցեալին երբ ծնողներ իրենց կարծիքը կը յայտնէին աղջկայ մը կամ տղու մը վրայով եւ կամ շատ անգամ իրենք է որ կը գտնէին յարմար հարսնացու մը կամ ներկայացող մանչ թեկնածու մը, այն ատեն ամուսնական կեանքը շատ աւելի հաստատ եւ շատ աւելի ամուր կապուածութիւն ունէր: Չկային այսքան ամուսնալուծումներ: Բացառիկ պարագաներուն եւ հիմնական պատճառներով էր միայն որ ամուսնալուծութեան թուղթ կը ստանային:

Այսօր փոխուած է աշխարհը: Փոխուած են եւ մարդիկ: Ապականած է ամբողջ միջավայրը: Եւ դուք կ'ապրիք այդ ապականած միջավայրին մէջ:

Ինչպէ՞ս պետք է ապրիք, որ չագոյրիք այդ աղտոտ միջավայրէն:

Նկատի ունեցէ՛ք թիթեղն ու ոսկին: Այս երկուքը եթէ նետուած մնան աղբանոցին մէջ, տարի մը ետք կը գտնենք թիթեղը ժանգոտած ու փճացած: Մինչ ոսկին որքան ալ աղտերու մէջ մնացած ըլլայ, երբ սրբենք զայն, կը տեսնենք որ ան երբեք չէ կորսնցուցած իր փայլքը:

Այս է տարբերութիւնը ներկայ սերունդի տղոց եւ աղջիկներուն: Այն տղաքն ու աղջիկները որոնք ունին թիթեղեայ նկարագիր, բնական է չեն կրնար մնալ կայուն ու հաստատ սկզբունքներու վրայ, ու կ'աղարտեն իրենց նկարագիրը: Իսկ ոսկի նկարագրի տէր մարդիկ կը մնան միշտ ոտքի, առանց կորսնցնելու իրենց փայլքը, այսինքն իրենց բարձր արժանիքը:

Ես վստահ եմ որ դուք ոսկի էք ու կը մնաք ոսկի, մինչեւ վերջ, թէ ձեր եւ թէ ձեր ծնողաց գլուխը միշտ բարձր պահելով հանրութեան մէջ:

* * *

Երկրորդ պատգամ:

Այսօր տակաւին բոլորդ ալ կ'ապրիք ձեր ընտանիքներուն մէջ, որպէս քոյրեր եւ եղբայրներ, նաեւ իրար հետ որպէս զարմիկներ (cousin) մտերմաբար: Հիմա տակաւին շատ սիրով էք իրար հետ, հակառակ անոր որ մէկ մասը կ'ապրի Նիւ Ճրքզի եւ միւս մասը Ալպանի՝ երկու ժամ հեռու իրարմէ, սակայն 2 շաբաթը 3 չ'ըլլար որ իրար քով գալով, իրար չտեսնէք:

Ասիկա ձեր իրար հանդէպ ունեցած սիրոյ արտայայտութիւնն է: Ձեր ծնողներն ալ ուրախ են որ դուք այսքան սիրով էք իրար հետ:

Սակայն այս օրերը այսպէս չեն մնար՝ կը փոխուին՝ քանի որ դուք այսպէս չէք մնար, այլ կը մեծնաք: Եւ երբ կը մեծնաք, ինքնին կարգը կու գայ ամուսնութեան:

Եւ արդէն իսկ եթէ Աստուած ուզէ, մօտաւորապէս գալիք՝ երկուքէն-տասը տարիներու ընթացքին, ամենքդ ալ ամուսնացած կ'ըլլաք:

Ամուսնութենէն ետք ամէն ինչ կը փոխուի, քանի որ ձեր կեանքի պայմանները կը փոխուին: Հիմա որ այդքան մօտ էք իրարու, անկէ ետք քիչ մը կը հեռանաք իրարմէ:

Քանի որ ամուսնութենէ ետք հայր, մայր, քոյր, եղբայր, զարմիկ, ամէնքն ալ կը մնան երկրորդ կարգի վրայ: Ամէն մէկուն համար առաջին կարգին կու գայ իր կինը կամ իր ամուսինը: Քանի որ այդ երկուքն են որ իրար հետ նոր ընտանիք պիտի կազմեն ու պիտի բազմանան, միասին պիտի ապրին, միասին պիտի աշխատին ու միասնաբար պիտի հոգան իրենց ընտանիքին պէտքերը: Այնպէս որ ամէն մէկը զբաղուած պիտի ըլլայ իր ընտանիքով միայն:

Ասիկա կեանքի բնական երեւոյթն է եւ սխալ բան մը չկայ անոր մէջ:

Սակայն այդ պիտի չնշանակէր որ դուք բոլորովին պիտի մոռնաք իրար ու պիտի հեռանաք իրարմէ: Ոչ: Դուք քոյրեր ու եղբայրներ ըլլալէ չէք դադարիր, ինչ ալ եղած ըլլան կեանքի փոփոխութիւնները, չէք դադարիր նաեւ իրար հետ զարմիկներ ըլլալէ: Այժմ ձեր եղբայրական եւ հարազատի սէրը միշտ վառ պահելով ձեր սրտերուն մէջ, իրար հետ ձեր կապը կը պահէք ընտանեկան յարաբերութիւններով:

Սակայն կեանքի փորձութիւններէն գիտենք որ կան եղբայրներ, կամ քոյրեր ու եղբայրներ, որոնք գժտուած են իրար հետ, խզուած են իրարմէ, իրար հետ չեն խօսիր եւ իրարու մեղադրանքներ կ'ուղղեն: Նման գժտութիւններու պատճառը կրնան ըլլալ պարզ ըսի-ըսաւներ, կամ մէկու մը կողմէ միւսին խօսուած ծանր ու վիրաւորական խօսք մը, կամ դրամական հարցեր, եւ կամ մէկու մը կողմէ միւսին պատճառուած անիրաւ գործ մը:

Օրինակ՝ երբ ընտանիքի մը ծնողները իրենց տարիքը առած՝ տկարացած են եւ օգնութեան ու խնամքի կը կարօտին: Բոլոր զաւակները պարտաւոր են հաւասարապէս ստանձնել անոնց հոգ տանելու եւ զանոնք խնամելու պարտականութիւնը:

Այս պարագային երբ մէկը խուսափի իր պարտաւորութենէն եւ իր կատարելիք գործին ծանրութիւնը ձգէ իր քրոջ կամ եղբօրը վրան, պարզապէս անիրաւութիւն գործած կ'ըլլայ:

Ասիկա կը խօսիմ ձեզի որպէս օրինակ, ցոյց տալու՝ որ այսպիսի խնդիրներէն է որ յառաջ կու գան սրտնեղութիւններ, հակառակութիւններ եւ գժտութիւններ:

Ես ձեզի խստիւ կը պատգամեմ, որ այս յիշուած պատճառներէն որեւէ մէկը չգործադրէք ձեր կեանքին մէջ եւ այդ *գժտութիւն ըստած քանը ամենեւին չմտնէ ձեր ընտանիքներէն ներս:*

Եթե որոշ հարցեր ունենաք իրար հետ, աշխատեցե՛ք քոյր-եղբոր պէս՝ կամ եղբայրներու պէս խօսիլ իրար հետ, առանց վշտացնելու եւ առանց ցուցնելու իրար եւ ձեր հարցերը լուծեցե՛ք եղբայրաբար: Իւրաքանչիւր անձ թող գիտակցի իր պարտաւորութիւններուն, հանդէպ իր ծնողքին, իր եղբոր եւ հարազատին: Երբեք առիթ մի տաք որ սրտնեղութիւն եւ գժտութիւն յառաջ գայ ձեր մէջ:

Թէեւ նոյնիսկ չեմ ուզեր հաւատալ որ դուք նման սխալներ կրնաք գործել, սակայն կեանքը շատ մը փորձութիւններու կրնայ առաջնորդել ձեզ:

Դուք հաստատ մնացե՛ք ձեր մարդկային գիտակցութեան մէջ:

* * *

Երրորդ պատգամ.

Չենք գիտեր թէ ինչպիսի օրեր վերապահուած են ձեզի, թէ ինչպիսի դէպքեր կրնան պատահիլ կամ ինչպիսի պայմաններ կրնան ստեղծուիլ ձեզմէ իւրաքանչիւրին համար: Ով ինչպիսի յաջողութիւններու կը հասնի:

Կրնայ ըլլալ որ ձեզմէ ոմանց բախտը ժպտի եւ քիչ մըն ալ իրենց ճարպիկութեան շնորհիւ մեծ յաջողութիւններ գտնեն իրենց գործին մէջ եւ հարստանան: Իսկ ուրիշներ՝ ըլլայ հիւանդութեան պատճառաւ կամ գէշ պայմաններու բերումով ձախողութիւններ ունենան եւ նեղութիւններու մատնուելով օգնութեան կարօտին:

Ահա այս պարագային բոլոր քոյրեր ու եղբայրներ եւ զարմիկներ եւ ի մասնաւորի գործի մէջ յաջողութիւն գտնողներ պէտք է ցոյց տան իրենց իսկական եղբայրութիւնը եւ իրենց իսկական հարազատութիւնը, ձեռք մեկնելով իրենց այդ տկար եղբոր կամ քրոջ եւ վեր հանեն զինք իր այդ վիճակէն:

Այդպիսի պարագաներուն երես դարձնելով չտեսնելու գալ եւ անհոգ ու անտարբեր մնալ ձեր եղբոր, քրոջ, զարմիկին կամ հարազատին հանդէպ, մեղանշում է ոչ միայն մարդոց, այլ նաեւ Աստուծոյ առջեւ:

Թէեւ ոեւէ մէկէդ չեմ ակնկալեր այդպիսի կեցուածք իր եղբոր, քրոջ կամ զարմիկին հանդէպ, սակայն զգոյշ եղէք, որ կեանքի փորձութիւններու մէջ չիյնաք:

Այսօր ինչպէս իրար հետ սիրով եւ անկեղծ հարազատներ էք, այդպէս ալ մնացե՛ք մինչեւ վերջ:

* * *

Ահաւասիկ ձեզի 3 պատգամներ.

Ա. Պատուէ հայրդ ու մայրդ:

Բ.- Երբեք ու երբեք չգժտուիք իրար հետ:

Գ.- Տկար մնացողին օգնութեան հասնիք:

Այս պատգամները մարդկային պատգամներ ըլլալէ աւելի աստուածային պատգամներ են, որոնք կրնանք տեսնել Ս. գրքին մէջ: Աստուած է որ կը պատգամէ ձեզի այս պատգամները այսօր, ձեր մեծ հայրիկին բերնով:

Աստուած կը գնահատէ ու կը սիրէ բոլոր անոնք, որոնք կ'ապրին աստուածավախ, եղբայրասէր ու մարդասէր զգացումներով:

Կ'ուզեն որ լաւ սորվիք եւ լաւ պահէք ձեր մտքերուն մէջ այս պատգամները:

Կը գտնուիք տարիքի մը մէջ, որ թէեւ նոր կը մտնէք կեանքի ասպարէզէն ներս եւ շատ սորվելիք ունիք տակաւին, սակայն ձեր տարիքը ձեզի կարծել կու տայ, որ դուք շատ բաներ գիտէք արդէն:

Համաձայն եմ, որ դուք շատ բան գիտէք արդէն: Ի վերջոյ պարապ տեղ չէ որ դպրոց գացիք եւ այսօր համալսարան կ'երթաք:

Ես ո՛չ համալսարան գացած եմ եւ ո՛նչ ալ բարձր ուսում ստացած եմ ձեզի նման: Որով ես ձեր գիտցած բաները չեմ գիտեր:

Թէեւ կը ցաւիմ որ կարելիութիւնը չեմ ունեցած ձեզի նման բարձրագոյն ուսում ստանալու, սակայն, գոնէ կը ցած եմ սորվիլ կեանքի փորձառութեան դասերը, որոնք ձեր դպրոցական դասագիրքերուն մէջ տեղ չունին դժբախտաբար: Ձեր դպրոցներուն մէջ նոյնիսկ կրնաք տեսնել՝ ահա այսօր ձեր լսածներուն հակառակը ցոյց տուող երեւոյթներ...:

Ահա այդ փորձառութեան վրայով է որ կը խօսիմ ձեզի, որոնք կը խորհիմ-մարդկայնօրէն դիտած- նուազ կարեւոր չեն՝ քան ձեր դպրոցէն սորվածները:

Դուք ձեր շրջապատի վատ բարքերէն մի տարուիք: Իմաստուն եղէք, միշտ ոսկի մնացէք եւ ձեր նկարագրին փայլքը մի կորսնցնէք:

Ս. գիրքը կ'ըսէ. «Իմաստութեան սկիզբը Աստուծոյ վախն է»: Ապրեցէք Աստուծոյ վախով եւ ձեր քրիստոնէական հաւատքով: Հեռու մի մնաք եկեղեցիէն եւ դուք ձեզ պահեցէք եկեղեցական եւ ընկերային մաքուր շրջանակներէն ներս:

Աստուած օրհնէ բոլորդ:

Կը մաղթեմ ձեզի բարի, առողջ, իմաստուն եւ յաջող կեանք մը:

Ապրեցէք միշտ փառք տալով Աստուծոյ, ինչ վիճակի մէջ որ գտնուիք: Ողջ մնաք:

ՎԱՐԴԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՓԻՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ

*Երազ մը տեսայ ես խորհրդատուր:
Վարդանն էր կանգնած իր յաղթ հասակով.
Ան ըսաւ ինծի, դո՛ւն ու՛ր հայորդի,
Լսէ պատգամն այս որ կու տամ քեզի,
Հաղորդէ համայն զաւակացն քո ազգի,
Ի մասնատրի, սիհլոքսհայի:
Ահա, թէ ինչ էր, որ տուաւ Վարդան
Պատգամն սրբազան՝ սիհլոքի հայույթեան:*

Ո՛վ հայորդիք ի սփիւռս աշխարհի, դուք, որ կ'ապրիք հայրենիքէն հեռու, օտար երկնակամարներու տակ, օտար բարքերու եւ սովորութիւններու ենթակայ: Մի պահ կանգ առէք եւ ականջ տուէք այն պատգամին որ կ'ուղղեմ ձեզի:

Մենք, պատերազմեցանք մեզմէ տասնապատիկ աւելի զօրաւոր պարսից բանակին դէմ: Պատերազմեցանք «ՎԱՄՆ ՀԱԲԱՏՈՅ, ՎԱՄՆ ՀԱՅՐԵՆ-ԵԱՅ», այն գիտակցութեամբ որ պարսից շահին դիմաց մեր հնազանդութեամբ խոնարհիլը եւ մեր Ս. հաւատքը ուրանալը, պիտի նշանակէր որ մենք թոյլ՝ տկար եւ ենթարկուողական ազգ մըն ենք, որմէ քաջալերուած՝ շահը պիտի արծակէր իր երկրորդ հրամանը, որ պիտի ըլլար, ուրանալ մեր ազգութիւնը:

Մենք, «Գիտակցաբար» նախընտրեցինք մահը, խորապէս համոզուած՝ որ հերոսական մահուամբ միայն կարելի էր ապահովել մեր ազգին գոյատեւումը:

Մեր նշանաբանն էր եղած. «Մահ իմացեալ անմահութիւն է»:

Դուք եւս այսօր կը գտնուիք ձեզմէ բազմապատիկ աւելի զօրաւոր ուրիշ թշնամիի մը դէմ:

Այդ թշնամին, սակայն, չ'սպառնար ձեր մարմինները սպաննել: Մարմնաւոր թշնամի մը չէ ան: Ան կը սպաննէ ձեր հոգիները միայն:

Այդ թշնամիին անունն է «ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՏԷԱԼԷ ԶՈՒՐԿ ԵՒ ԱՆՈՐՈՇ

ԽՕԼ ԱՐԾԱԷ»։ Ինչ որ խտացնելով՝ մեկ բառի մեջ, պիտի ուզեինք նմանցնել «ՀՈՍԱՆ-Բ»ի մը։ «ՀՈՍԱՆ-Բ» մը՝ որ իր գորութեամբ կը քշէ ու կը տանի մարդկային եւ ազգային ամէն սրբութիւն, ամէն նուիրականութիւն եւ ամէն տեսակի առաքինութիւններ։

Եւ դուք, ով սփիւռքահայեր, կը գտնուիք այդ «ՀՈՍԱՆ-Բ»ին մէջ։

Այդ «ՀՈՍԱՆ-Բ»ը կ'ուզէ ձեզ ալ քշել ու տանիլ իր հետ, անջատելով ձեզ ձեր արմատներէն։

Թէեւ դուք կ'ընդդիմանաք։ Հայ էք ու հայ պիտի մնաք։ Հաստատ էք ձեր որոշումին մէջ։

Սակայն զգո՛յժ. այդ «ՀՈՍԱՆ-Բ» թշնամին, ձեզի կը մօտենայ խորամանկութեամբ։

Ան կ'աշխատի նախ տկարացնել ձեզ, մէկ առ մէկ խլելով ձեզմէ ձեր ազգային արժանիքները։

Առաջին անգամ ան կը յարձակի ձեր լեզուին վրայ, խլելով անկէ ձեր մայրենի բառը՝ հայերէնը. եւ անոր տեղ ձեզի կու տայ օտար լեզու՝ օտար բարբառ։

Երկրորդ՝ ան կը խլէ ձեր շուրթերէն հայերէն երգը, հրապուրելով ձեզ օտար երաժշտութեամբ։

Ապա կը յարձակի ձեր մատներուն վրայ, խլելով անոնցմէ ձեր սրբազան Ա. Բ. Գ.ը, հայերէն գիրերն ու գրականութիւնը, ձեզի հրամցնելով օտար գիր ու գրականութիւն։

Ու զրկելով ձեզ այդ երեք գլխաւոր յատկանիշներէն, որոնց բոլորին ալ կեդրոնական առանցքը ինքնին հայերէնն է, զրկած կ'ըլլայ ձեզ հայկական կենսանիւթ (vitamine) կարենալ ստանալու կարելիութենէն։ Եւ դուք, զրկուելով այդ հայկական կենսանիւթէն, հետզհետէ ձեր երակներուն մէջ կը գոյանայ պարապութիւն մը, որ կու գայ լեցուիլ օտար կենսանիւթերով։ Ու անկէ ետք, ինքնաբերաբար եւ անզգալաբար, կը սկսին նուազիլ ձեր մէջ հայկական բարի սովորութիւնները, սրբութիւնները, ըմբռնումները, զգացումները, գիտակցութիւնը եւ ոգին։

Ու այդպէս դատարկելէ ետք ձեզ ձեր այդ բոլոր ազգային արժանիքներէն, խլելէ ետք ձեր ձեռքէն բոլոր այն գէնքերը, որոնցմով պիտի կարենայիք դիմադրել ԻՐԵՆ, կու տայ ձեզի ուրիշ հարուած մը եւս, կտրելով ձեր սրտին կապը ձեր հայրենիքէն։

Այնուհետեւ, թէեւ դուք զձեզ հայ կը դաւանիք, սակայն, «Հայ եւ Հայաստան» իրար մէջ միաձուլուած՝ անբաժանելի միութիւն մը ըլլալու գաղափարը հետզհետէ կը նուազի ձեր մէջ։ Եւ այդ բոլորը պատճառ կը դառնան որ դուք հաշտուիք ապրիլ այս աշխարհի վրայ որեւէ տեղ, ուր կարենաք հանգիստ

կեանք մը ապահովել:

Ու այդպէս, թողով ձեզ անարմատ, անհաստատ, անապաւէն, անյենարան, խախուտ, անգօր ու տկար, ա'լ անկէ ետք դժուար պիտի չըլլար ԻՐԵՆ համար ձեզ ամբողջութեամբ քշել ու տանիլ դէպի հայութենէ՝ անվերադարձ գացողներուն մահուան անդունդը...:

Ահա այս է, ով սփիւռքահայեր, ձեր թշնամի այդ «ՀՈՍԱՆՔ»ին գործելակերպը:

Ան ուղղակի չի՛ յարձակիր ձեր վրայ: Ան նենգ ժպիտով կը մօտենայ ձեզի՝ ջլատելու ձեր սկզբունքներուն եւ համոզումներուն մէջ: Եւ դուք, որ որոշած էիք հաստատապէս հայ մնալ, դուք զձեզ կը գտնէք բոլորովին նոր իրավիճակի մը առջեւ:

Յարատել «Հայ ենք եւ Հայ պիտի մնանք»ի լոգունգով՝ անհոգ եւ անտարբեր մնալը ձեզ կրնայ հասցնել անդարմանելի վերջաւորութեան:

Որով, լաւ իմացէք, «ԱՆԳԻՏԱԿԻՑ ԿԵԱՆՔԸ ԻՆՔՆԻՆ ՄԱՀ Է»:

Ուրեմն, զգոյշ եղէք, ով հայորդիք, չըլլայ թէ այդ արժանիքները ձեռքէ հանէք ու տկարանաք: Ամուր պահեցէք զանոնք եւ հաստատ մնացէք ձեր որոշումին վրայ:

- Մի անտեսէք ձեր մայրենի լեզուն՝ հայերէնը: Խօսեցէք ձեր ընտանիքներէն ներս, որպէսզի ձեր զաւակներն ալ կարենան սորվիլ զայն:

Ուսուցէք անոնց այնքան, որ ձեր կարողութիւնը կը ներէ:

Իսկ եթէ երբեք պատեհութիւնը չէք ունեցած զայն կարենալ սորվելու ձեր կեանքին ընթացքին, մի փորձուիք թերգնահատել անոր կարելորդութիւնը, անոր համար՝ որ դուք չէք գիտեր: Մի փորձուիք անտեսել զայն ըսելով թէ շատ ալ կարելորդ չէ, քանի որ տեղական լեզուն բաւարար է մեզի, այլ ընդհակառակը՝ ցաւ զգացէք միայն, որ առիթը չէք ունեցած կարենալ սորվելու:

Գուրգուրացէք անոր վրայ սրբազան մասունքի մը պէս: Բարձր պահեցէք անոր անհրաժեշտութիւնը:

Ան, հզօրագոյն զենքն է ձեզի համար՝ ձեր գոյութիւնը պահելու:

- Մի դադրիք հայերէն երգելէ, որքան ալ օտար երաժշտութեամբ լեցուին ձեր ականջները օր ու գիշեր:

- Մի հեռանաք հայերէն գիրէն ու գրականութենէն, հոգ չէ թէ լաւ գիտէք տեղական լեզուն՝ անոր գիրն ու գրականութիւնը:

- Մի կտրէք ձեր հոգեկան կապերը ձեր հայրենիքէն, որքան ալ գոհ ըլլալ թուիք ձեր ապրած երկիրներուն մէջ:

Այդ բոլորը սրբազան աւանդներ են ձեզ համար, զոր ժառանգած էք ձեր նախնիքներէն: Պարտիք պահել զանոնք ամենայն սրբութեամբ եւ գուրգուրանքով, եւ փոխանցել ձեր յաջորդներուն:

Կանգ առեք պահ մը հոսող ջուրի մը եզրին ու դիտեցէք զայն: Հոն պիտի գտնէք մեռած ձուկեր, որոնք կը քշուին ու կ'երթան ջուրին հոսանքին հետ միասին:

Ինչո՞ւ:

Որովհետեւ մեռած են...: Կենդանություն չկայ իրենց մէջ...:

Իսկ հոն պիտի տեսնէք նաեւ ողջ ձուկեր, որոնք ջուրի հոսանքին հակառակ ուղղությամբ իսկ լողալու կարողությունը ունին, անոր համար ողջ են եւ կենդանություն կայ իրենց մէջ:

Դուք եւս, ո՛վ հայորդիք, կրնաք քշուիլ այդ «ՀՈՍԱՆՔ»էն այն ատեն միայն, երբ կորսնցնէք ձեր հայկական արժանիքները՝ պարպուիք ազգային գիտակցութենէն եւ մեռնի ձեր մէջ հայու ոգին:

Այո, դժբախտաբար մենք ունեցանք նաեւ մեր Վասակները, որոնք իրենց անձնական փառքին ու վայելքին համար դաւեցին իրենց հոգիին ու հայրենիքին դէմ:

Դուք եւս կրնաք ունենալ ձեր Վասակները, որոնք իրենց փառասիրութենէն եւ անձնասիրութենէն տարուած՝ մեղանշեն իրենց ազգին դէմ, պարպուելով իրենց ազգային արժանիքներէն ու գիտակցութենէն:

ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀԱՏԻՆ ՄՕՏ ԵՐԲ ԿՈՒ ԳԱՅ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ, ԻՆՔՆԻՆ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է ԱԶԳԻՆ ՀԱՆԴԷՊ:

Անձնասեր մարդուն համար չկայ որեւէ ազգային նուիրականություն, այլ կան իր նախասիրությունները միայն՝ դրամ, հաճոյք, վայելք եւ ճոխություն: Իր ընդհանուր տարագին մէջ փուն եւ անիմաստ կեանք մը:

Սակայն մի մոռնաք, որ միայն մեռած հոգիներն են որ կը քշուին «ՀՈՍԱՆՔ»էն:

Դուք ողջ մնացէք հոգիով ու մտքով, որպէսզի կարենաք դիմադրել այդ թշնամի «ՀՈՍԱՆՔ»ին եւ մաքուր ու անաղարտ պահել ձեր հայու դիմագիծը: Ի վերջոյ՝ մենք մեռանք «ԳԻՏԱԿՑԱԲԱՐ» որ դուք ապրիք:

Դուք եւս, պարտաւոր էք ապրիլ «ԳԻՏԱԿԻՑ ԿԵԱՆՔ ՄԸ», որպէսզի կարելի ըլլայ ապրեցնել՝ ձեր յաջորդները:

Ահա, լսեցիր դուն, ո՛վ հայորդի,

Պատգամն սրբազան՝ քաջն Վարդանի.

Ան ուղղուած է քեզ՝ քու նմաններուդ,

Որպէս ուղեցոյց մոլոր քայլերուդ.

Գործադրէ զայն միշտ կեանքիդ՝ յարատեւ,

Որ քալես միշտ հայ, չմնաս ետեւ:

«Նայիրի», 25 Մարտ 2003

ՉՐՈՅՑ ԹՈՌՆԻԿԻՍ ՀԵՏ

- Մեծ հայրիկ, օղը շատ տաք է, ինչո՞ւ կարճ տաքատ չես հագնիր: Հարց կու տայ ինձի 16-ամեայ թոռնիկս:

- Տղաս, ես 83 տարեկան մարդ եմ, ինձի չի վայելեր կարճ տաքատ հագնիլ, ամօթ է:

- Բայց ինչու ամօթ է մեծ հայրիկ, քեզմե՛ շատ աւելի տարիքոտ ծերունիներ, նոյնիսկ կորաքամակ դարձած պառաւ կիներ կարճ տաքատ կը հագնին եւ ամօթ չեն զգար: Եթէ ամօթ է, ինչո՞ւ անոնք կը հագնին:

- Տղաս, իւրաքանչիւր մարդու գիտակցութեան հետ կապուած հարց է: Ոմանք կը գիտակցին որ այդ կարճ տաքատները իրենց համար վայել չեն, ոմանք ալ չեն անդրադառնար անոր:

- Սակայն ի՞նչ վնաս կու տայ կարճ տաքատ հագնիլը մեծ հայրիկ:

- Տղաս, վնասէն աւելի -ինչպէս ըսի- մարդու հասկացողութենէն կախուած է, թե՛ զայն վայել կը տեսնե՞ն իրենց համար, թե՛ ոչ: Կամ զայն ամօթ կը նկատե՞ն, թե՛ ոչ:

- Չեմ հասկնար, մեծ հայրիկ, թէ ինչ ըսել կ'ուզես:

- Չհասկնալու մէջ իրաւունք ունիս, տղաս, քանի որ դպրոցներէն ներս ձեզի բարոյական գիտելիքներու վրայով բան չեն սորվեցներ որ կարենաս հասկնալ:

- Ուրեմն, հիմա մենք ալ որ կարճ տաքատ կը հագնինք, ամօթ է:

- Տղաս, կարճ տաքատներուն ալ տեսակները կան: Օրինակ, երբ կը հագնին այնպիսի կարճ տաքատներ, որոնք ցոյց կու տան ամբողջ սրունքը իր մերկութեամբ, ահա այն ամօթ է:

- Անիկա աղջիկներուն պէտք է ըսես, մեծ հայրիկ, անոնք է որ այդպէս կարճ կը հագնին: Մեր կարճ տաքատները մինչեւ մեր ծունկերը կը հասնին:

- Այո, տղաս: Մինչեւ ձեր ծունկերը հասնող այդ կարճ տաքատները լաւ են, այսինքն ամօթ չեն նկատուիր: Սակայն աղջիկներուն հագած այդ կարճ տաքատները կարելի չէ ամօթ չկոչել:

- Ուրեմն եթէ ամօթ է, ինչո՞ւ այդպէս կը հագնին:

Թոռնիկս կարծէք կը պեղէ հարցը, հարկադրելով զիս խօսիլ աւելին՝ ինչ

որ պիտի չուզէի խօսած ըլլալ իրեն: Սակայն կ'ուզեմ նոյն ատեն գոհացում տուած ըլլալ իր հետաքրքրութեան, ու կ'ըսեմ:

- Տղաս, աղջիկները ունին իրենց յատուկ արժանիքներ: Այդ արժանիքներուն մեծագոյնը իրենց գեղեցկութիւնն է: Թէեւ նոյնքան եւ աւելի կարեւոր կարելի է նկատել իրենց մտքի գեղեցկութիւնը, սակայն իրականութեան մէջ գեղեցկութիւնը կ'ինը արժեւորող հարստութիւն մըն է: Այդ հարստութեամբ հպարտ կ'ինէր, մանաւանդ երիտասարդ աղջիկներ, կը սիրեն հանրութեան ներկայանալ գրաւիչ տեսքով: Իսկ այդ գրաւչութիւնը աւելի ցայտուն դարձնելու համար, կը սիրեն ցուցադրել իրենց ֆիզիքական գեղեցկութիւնները, ինչ որ ներքին պահանջ մըն է իրենց համար:

Ահա այդ է պատճառը որ կը սիրեն երեւնալ կարճ տաքատներով եւ ուշադրութիւն գրաւող այլ տեսակի հագուստներով:

Սակայն չմոռնանք ըսելու որ այդ ներքին պահանջին գոհացում տալու համար, «գիտակցաբար» կը հրաժարին իրենց ամօթի զգացումէն:

Հոս կ'ինէր իրենց կենցաղային ապրումներուն մէջ կը գտնուին երկու զգացումներու արանքին մէջ:

Այն կ'ինէր, որոնց մօտ ամօթի զգացումը աւելի գերակշիռ է, քան այդ ներքին պահանջի զգացումը, այդպիսի կ'ինէր ամենեւին չեն արտօներ իրենց անձերուն կարճ տաքատներով եւ կամ անպարկեշտ հագուածքներով երեւնալ հանրութեան մէջ: Անոնք նախանձախնդիր են ու կը պահեն իրենց իգական սեռի յատուկ ամօթխածութիւնը: Այդպիսի պատուախնդիր կ'ինէր, մինչեւ իսկ իրենք կ'այպանեն իրենց սեռակիցներուն անպարկեշտ երեւումները:

Իսկ բոլոր անոնք որոնք հեռու են այդ զգօնութենէն, կ'ընթանան իրենց ներքին պահանջներուն ուղիով, անտեսելով ամէն տեսակի լրջութիւն ու պարկեշտութիւն:

Երբ Ադամն ու Եւան դրախտին մէջ կերան այդ արգիլուած պտուղէն, գիտակցութիւն եկաւ իրենց վրայ եւ անդրադարձան իրենց մերկութեան՝ սկսան թզենիի տերեւներով ծածկել իրենց մարմինները: Եւ երբ Աստուած կանչեց զիրենք ըսելով, «ո՛ւր ես Ադամ», անոնք ծառերուն ետեւը պահուրտեցան իրենց ամօթէն: Քանի որ կ'ամչնային Աստուծոյ ներկայանալ մերկ վիճակով:

Ահա այդ պահէն սկսեալ մարդ արարածը ունեցաւ «ԱՄՕԹԻ ԳԻՏԱԿ-ՑՈՒԹԻՒՆ»: Այդ գիտակցութեան շնորհիւն է որ մարդիկ հարկ տեսան հագուստներ շինել իրենց համար, ծածկելու իրենց մարմինները:

Այս գիտակցութենէն զուրկ են անասունները: Ինչպէս կը տեսնենք, բոլոր անասուններուն արուններն ու էգերը միատեղ կ'արածին ու չեն ամչնար իրարմէ եւ ուրիշներէն, քանի որ կ'ապրին անգիտակից իրենց ինքնութեան:

Կենդանական աշխարհին մեջ միայն մարդն է որ ունի «գիտակցություն» ամեն ինչի, ի մեջ այլոց եւ «Ամօթի»: Այսինքն ի տարբերություն անասուններուն, կը գիտակցի մերկութեան ամօթ ըլլալուն:

Սակայն մեր ականարկած կարճ տաքատներն ու անպարկեշտ հագուածքները թէւ բոլորովին մերկութիւններ չեն, Ադամ Եւայի մերկութեան նման, բայց... մասամբ անոնց թգեմիի տերեւներով ծածկելու տպաւորութիւնը կը թողուն..., ինչ որ մեր հայերէն բառապաշարին մեջ կը կոչեն կիսամերկ, այսինքն ոչ ամբողջովին մերկ, այլ միայն կէտով մերկ, որ պիտի նշանակէր՝ միայն կէտով ամօթ...:

Յաւալի է այսօր տեսնել որ այդ ամօթի զգացումը նուազած է մարդոց մօտ: Իսկ առաւել ցաւալին այն է որ ան նուազած է առաւելաբար Բրիտոնեայ ժողովուրդներուն մօտ:

Այլ կրօններու պատկանող ժողովուրդներ, ինչպէս Արաբներ, Հնդիկներ, Չինացիներ, Ճաբոնցիներ եւլն., աւելի պարկեշտ են հագուածքի մեջ, քան Բրիտոնեացիները: Անոնց մօտ որոշ չափով պահպանուած է տակաւին պարկեշտութիւնն ու ամօթի գիտակցութիւնը:

Իսկ Բրիտոնեացիներ, ըլլալով հանդերձ բոլոր կրօններու լրացուցիչը եւ ամենակատարեալը Աստուածային պատուիրաններու մեջ, խորապէս ցաւալի է տեսնել, որ այդ անունը կրող ժողովուրդներ, մեծաւ մասամբ հեռացած՝ իրենց կրօնական հաւատալիքներէն, գրեթէ անտարբեր դարձած են իրենց կրօնին նուիրականութեան եւ սրբութիւններուն նկատմամբ:

Օրինակներ շատ կան, պարահանդէսներէն սկսեալ մինչեւ եկեղեցական պսակադրութիւնները... ուր կը տեսնուին վերեւ յիշուած անպարկեշտ տեսարանները:

Ինչո՞ւ ապականած է աշխարհ այս աստիճան: Ի՞նչն է պատճառը այս ապականութեան:

Պատճառներուն գլխաւորը վստահաբար պէտք է փնտռել պետական դպրոցներու կառոյցին մէջ:

Մարդիկ՝ ի սկզբանէ իրենց կրթութիւնը կը ստանան դպրոցներէն ներս: Դպրոցն է որ կը կրթէ ու կը պատրաստէ աշակերտները որպէս ապագայի գործօն մարդիկ: Հոն է որ կը կերտուի աշակերտին նկարագիրը:

Սակայն երբ դպրոցներու դասացուցակէն հանուած են կարեւորագոյններէն մին նկատուող կրօնական գիտելիքներու եւ բարոյական սկզբունքներու վրայով եղած ուսուցումը, այլ փոխարէնը աշակերտը ազատ ձգուած է իր կեանքի ապրումներուն մէջ, այդ դպրոցները ինչպիսի նկարագիր պիտի կարենային կերտել աշակերտներուն մէջ, որոնք պիտի դառնային ապագայի գործօն ժողովուրդ:

Աշակերտը այդ կրօնաբարոյական դաստիարակութենէն՝ զրկուելէն քացի, ինքզինք կը գտնէ միջավայրի մը մէջ, ուր կեանքի ապրումները զլած անցած են ազատութեան սահմանները...: Եւ ահա այդ ամէնը կենդանի օրինակ կը դառնան իրեն, ու կը քաջալերեն զինք որ ազատ զգայ ինքզինք հետեւելու իր շրջապատին բարքերուն, վստահ ըլլալով որ երկրին օրէնքներուն մէջ որեւէ արգելք չկայ իր ազատութիւնը կաշկանդող:

Ահա այսպիսի դաստիարակութեամբ յառաջ եկան անոնք:

Իրերայաջորդ սերունդներէ բաղկացած ժողովուրդներու մէջ, շատ քնական պիտի ըլլար տեսնել տակաւին շատ ուրիշ բարոյական անկումներ ու ախտանիշներ, որոնք կը կազմուին իրենց մէջ դպրոցական սեղաններէն սկսեալ:

Յիշենք այստեղ անոնցմէ մի քանին:

Ամուսնալուծումները հասած են 60 տոկոսի: Թմրամոլութիւնը աւելցած է սպասուածէն աւելի: Միասեռականութիւնը պաշտօնական ճանաչում կը ստանայ: Մարդասպանութիւններ, գողութիւններ, կոխներ ամէնօրեայ սովորական երեւոյթներ դարձած են: Կարելի՞ է թուել բոլորը:

Մէկ բան յստակ է եւ տեսանելի, որ մարդկութիւնը երես դարձուցած է ազնութեան, զգաստութեան, մարդկայնութեան եւ կ'ուղղուի դէպի անպարկեշտութիւն, չըսելու համար անբարոյութիւն:

Այս պայմաններու մէջ ինչ կը մնայ պարկեշտ ընտանիքներու՝ իրենց գաւազները զերծ կարենալ պահելու այս ախտավարակ միջավայրին վաստակումներէն: Ճիշդ է որ բարոյական ապականեալ միջավայրի մը մէջ կը գտնուինք: Կ'ընդունինք նաեւ որ դժուար է երիտասարդներուն համար անշեղ կարենալ ընթանալ մագնիսական քաշողականութեամբ զիրենք հրապուրող այս կեանքի ճանապարհին: Բայց կը խորհինք նաեւ անկարելի ալ չէ փորձութիւններէ հեռու մնալ: Այո, անկարելի չէ, սակայն ծնողաց օգնութեամբ միայն:

Հոս պատասխանատւութեան եւ աշխատանքի մեծագոյն բաժինը կ'իյնայ ծնողաց վրայ: Այն ծնողները, որոնք իրենց ազատ ժամերուն մեծ մասը կը տրամադրեն իրենց գաւազներուն հետ զբաղելու, անոնց հետ ընկերոջ մը նման խաղալու եւ զբօսնելու, միասին շինիչ ու դաստիարակիչ գրքեր, յօդուածներ ու պատմութիւններ կարդալու, անոնց հետ միշտ խօսելու կեանքի օրինակներով՝ զգուշացնելով զիրենք տեսանելի ու անտեսանելի բոլոր վտանգներէն ելլն., այդպիսի ծնողաց գաւազները մօտաւորապէս 80 տոկոս ապահովուած կրնան ըլլալ յոռի բարքերէն:

Իսկ այն ծնողները, որոնք աւելի հետամուտ են իրենց անձնական վայելքներուն, կամ հարստանալու հետապնդումներուն՝ առաւել քան իրենց գաւազ-

ներուն կրթութեան, այդպիսիներ կը ձգեն իրենց զաւակները որ մեծնան իրենք իրենց կամքին համաձայն, առանց ուղղութեան: Իսկ երբ հարց տրուի այդ ծնողներուն թէ ինչպէ՞ս ձեր զաւակը կը շեղի իր հունէն, կը փորձեն արդարանալ, իրենց պարտաւորական եւ կացութեան հետ հաշտուելու տկարութեամբ, ըսելով թէ «ինչ կու գայ ձեռքէդ, որուն ինչ ըսես, ամէնքն ալ այդպէս են, խօսք մտիկ չեն ըներ» եւլն.:

Թելադրելի պիտի ըլլար որ ծնողներ իրենց անձնական վայելքներէն կամ շատ դրամ շահելու մարմաջէն աւելի, մտածէին իրենց զաւակներուն կրթութեան եւ ապագային վրայով, ի մանկութենէ սերմանելով անոնց մէջ աստուածավախութեան ոգին եւ բարոյական գիտելիքներու անհրաժեշտութիւնը:

Այդպիսով, վերջաւորութեան իրենք պիտի ըլլան առաջին ուրախացողները, տեսնելով իրենց զաւակներուն պարկեշտ ընթացքն ու յաջողութիւնները:

Թոռնիկս.-

Շնորհակալութիւն, մեծ հայրիկ, որ միշտ կը խօսիս ու կը տրվեցնես մեզի լաւ բաներ, ինչ որ պէտք է գիտնանք մեր կեանքին մէջ:

Թոռնիկս բաւարարուած էր իր հարցին վրայով ստացած լուսաբանութիւններով:

18 Յունիս 2017, Կէլմոնդ, Նիւ Եօրք

ՀԱՅՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ... ԱՆՀԱՉԱՆԴՈՒԹԻՒՆ

«Նոր Օր»ի 7 Յունուար 2010-ի թիւին մէջ, Արժ. Տ. Չենոբ Քհնյ. Նալպանտեան ստորագրած էր յօդուած մը «Հայրիշխանութիւն» խորագրով, ուր կը ներկայացնէր հայրիշխան հայրեր՝ «ինքնագովութենէ սաստիկ տառապող», «ապերասան, անկիրթ, կոշտ ու գազան», որ «ինքզինք կը տեսնէ իբրեւ տէրն ու տիրակալը տան՝ եւ ինքզինք կը դրսեւորէ իբրեւ բռնակալ»: Իսկ «երկրորդական գծի վրայ նետուած կանայք, ամօթի զգացումէն դրդուած, պատկառանքէ ու ընտանեկան պատիւը բարձր պահելու նախանձախնդրութենէն տարուած, լռած են, որուն դիմաց հայրիշխանը անողորքաբար հարուածած է, անխնայօրէն ու անվայելօրէն վարկաբեկած է եւ անպատուած՝ զանոնք համարելով տկար, անտիրական ու անպաշտպան էակներ»:

Մատնանշելէ ետք հայրիշխանին գործադրած այս վայրագութիւնները, հարց կու տայ ըսելով. «Այստեղ բարոյական հարց կը ծագի թէ ով կու տայ այդ իրաւունքը ընտանիքի այր մարդուն՝ գործադրելու բռնութիւն ու անհարկի կոպտութիւն կամ խստութիւն՝ հարազատ ընտանիքի անդամներուն վրայ»:

Այս յօդուածը մղեց զիս որ ես ալ արտայայտուիմ նոյն այդ խնդիրներուն վրայով, սակայն քիչ մը տարբեր տեսանկիւնէն դիտելով հարցերը:

Նախ ըսեմ, որ հակառակ չեմ Տէր Հօր, այլ՝ համակարծիք իր գաղափարներուն, ընդունելով առկայութիւնը կարգ մը բիրտ ու կոշտ հայրերու, որոնց ճնշման տակ կ'ընկճուին կիներն ու զաւակները:

Ես անձամբ կը յիշեմ այդպիսի ընտանիքներ իմ պատանեկութեան, Հալէպի մէջ, երբ մեզի համար սովորական դարձած էր լսել մեր հարեւան կնոջ ամէնօրեայ լացի ձայնը... ամուսնոյն հարուածներուն տակ: Յաւալի իրականութիւն մը արդարեւ բոլոր այն կիներուն համար, որոնք դժբախտութիւնը կ'ունենան իրենց կեանքը կապուած տեսնելու այդպիսի անողորք ամուսիններու հետ:

Այս բոլորը ընդունելի ու դատապարտելի ըլլալով հանդերձ, ըստ իս, կը ներկայացնեն մետալին մէկ երեսը միայն: Եւ որպէսզի տեսութիւնը ամբողջական եղած ըլլայ, պարտինք դիտել նաեւ մետալին միւս երեսը եւս, որ պէտք

չէ անտես առնել:

Բարեբախտաբար այդ վայրագությունները հետզհետե կը նուազին այնքան՝ որքան քաղաքակրթությունը կ'աւելնայ ու կը տարածուի ժողովուրդներու մէջ:

Արեւմտեան երկիրներուն մէջ այդպիսի դէպքեր հաւանաբար բացառիկ երեւոյթներ եղած ըլլան: Կառավարություններ խիստ հսկողութիւն կը կատարեն այդպիսի վայրագություններ գործադրողներուն վրայ ու կարգի կը բերեն զիրենք... բանտարկելով: Այդպիսով ապահոված կ'ըլլան մարդոց՝ ի մասնաւորի իգական սեռին ազատութիւնը, ազատ կացուցանելով զիրենք ճնշուած կեանք մը ապրելու պարտադրանքէն:

Սակայն հոս կ'ուզենք տեսնել երկու սեռերու՝ այրերուն եւ կիներուն դիրքն ու տեղը կեանքի մէջ: Եւ որպէսզի մեր դատողութեան մէջ սխալած չըլլանք, կը դիմենք ամենաճշգրիտ աղբիւրին, որ անկասկած ուրիշ բան չէ, եթէ ոչ Աստուածաշունչը:

Ահա թէ Աստուած ինչպէս կը դասաւորէ այրերուն ու կիներուն իրաւասութիւններն ու պարտաւորութիւնները:

Երբ առաջին գոյգը՝ Ադամն ու Եւան անհնազանդ գտնուելով Աստուածային պատուէրին, կերան արգիւում ապուղէն, Աստուած պատժեց զիրենք ու դուրս ըրաւ դրախտէն:

Ահաւասիկ առաջին գոյգին առաջին մեղքը՝ *Անհնազանդութիւն*, որուն առաջին գործադրողն ալ եղաւ Եւան:

Յաջորդ տողերուն մէջ կը տեսնենք Աստուծոյ դատաստանը, թէ ինչ վճռեց Աստուած Ադամին եւ Եւային իրենց անհնազանդութեան համար:

Ծննդոց գրքին 3-րդ գլխուն 16-րդ համարէն՝ կը կարդանք. «Եւ կնոջ ըսաւ. Քու յղութեանդ ցաւերը խիստ պիտի շատցնեն: Յաւով զաւակ ծնանիս ու երկանդ հնազանդ ըլլաս ու անիկա քու վրայ իշխէ»:

Հոս յստակ կը տեսնուի որ Եւային անհնազանդութեան պատճառաւ, Աստուած զինք կը դնէ իր երկանը իշխանութեան տակ, հնազանդութիւն պատուիրելով իրեն:

«Եւ Ադամին ըսաւ. Որովհետեւ դուն քու կնոջդ խօսքը մտիկ ըրիր եւ այն ծառէն կերար, որուն համար պատուիրեցի քեզի ըսելով՝ «չուտես անկէ», երկիրը քու պատճառաւ անիծեալ ըլլայ, կեանքիդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուտես անկէ եւ փուշ ու տատասկ բուսցնէ քեզի եւ դաշտին խոտը ուտես: Երեսիդ քրտինքովը ուտես քու հացդ, մինչեւ գետին դառնալդ, ուրկէ առնուեցար, քանի հող էիր դուն եւ հողին պիտի դառնաս»:

Ահաւասիկ Ադամին ալ դատապարտութիւնը, որ իր կնոջ խօսքը մտիկ ըրած ըլլալու մեղքին համար, «երկիրը անիծեալ կ'ըլլայ»: Ադամ «նեղութիւ-

նով» ու «երեսի քրտինքով» հաց ուտելու կը դատապարտուի, մինչեւ «գետինը դառնալը, ուրկէ առնուեցաւ»:

Այդ դատաստանը աւելի պարզելու համար, կ'ուզեմ դիմել նաեւ Նոր Կտակարանին, ուր Պօղոս Առաքեալ աւելի կը յստակացնէ պատուէրները:

Ահաւասիկ, Եփեսացւոց Թղթոյն 5-րդ գլխուն 22-րդ համարէն սկսեալ կը կարդանք.

«Կիները պարտին հնազանդիլ իրենց այրերուն իբրեւ Տիրոջ, վասնզի այրն է գլուխը կնոջ, ինչպէս Քրիստոս գլուխ է Եկեղեցւոյ»:

Իսկ այրերուն համար եւս կու տայ հետեւեալ պատուէրը.

«Այրեր, սիրեցէ՛ք ձեր կիները, ինչպէս Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ իր անձը մատնեց անոր համար»:

Այս պատուէրներէն յստակօրէն կը հասկնանք որ մարդը Աստուծոյ հրամանով իրաւասու է իր կնոջ տիրութիւն ընելու: Ո՛չ բռնատիրութիւն, այլ՝ պաշտպանական տիրութիւն: Ինչպէս նախապէս ըսած եղանք արդէն՝ բռնատիրութիւնը դատապարտելի արարք մըն է:

Որով, ռեւէ այր մարդ որ կը սիրէ իր կինը, արդեօք կրնա՞յ բռնութիւն գործադրել անոր վրայ: Ան որ կը սիրէ իր կինը, արդեօք ամէն գոհողութիւն յանձն չ'առնէ՞ր երջանկացնելու համար զայն: Այո, իր կինը սիրող անձը իր ուրախութիւնը կը գտնէ իր կնոջ երջանկութեան մէջ:

Սակայն երբ կը խօսինք այր մարդուն իր կինը սիրելու պարտաւորութեան վրայ ու նաեւ կը դատապարտենք իր կնոջ ու զաւակներուն վրայ բռնացող ու ճնշող հայրերը, բայց միւս կողմէ բոլորովին կը խուսափինք ականարկ մը անգամ նետելու կնոջ հնազանդութեան պարտաւորութեան վրայ, արդար դատողութեամբ չէ որ մօտեցած կ'ըլլանք հարցին:

Այո. ինչո՞ւ կը խուսափինք կնոջ հնազանդութեան վրայով խօսելու: Չէ՞ որ ան Աստուածային հրահանգ մըն է կնոջ համար: Չէ՞ որ անհնազանդութիւնն ալ դատապարտելի է այնքան՝ որքան այր մարդուն գործած բռնութիւնները: Չէ՞ որ կարգ մը պարագաներուն եւս, այր մարդուն բորբոքումին ու բռնութեան տուն տուող պատճառներէն մէկն ալ այդ անհնազանդութիւնն է:

Թող ներեն մեզի բոլոր առաքինի, ազնիւ ու համեստ կիները, եթէ ըսենք որ այսօր ընտանեկան անհամաձայնութիւններու ու բաժանումներու տուն տուող գլխաւոր պատճառներուն մէջ մեծ բաժին մը ունի կնոջ անհնազանդութիւնը:

Կարելի է օրինակներով խօսիլ:

Աղջիկ մը իր պսակադրութեան նախորդող շաբթուան մէջ Պատուելիին քով կ'երթայ, անոր «հրահանգելու» որ պսակի արարողութեան ընթացքին իր ամուսնոյն հնազանդ ըլլալու մասին հարցում չհարցնէ իրեն...:

Նմանօրինակ դեպք մըն ալ որ տեղի ունեցաւ մեր մօտ, աղջիկը եկած էր քահանային «պատուիրելու» որ չփորձուի հնազանդութեան վրայով երիցս անգամ հարցում տալու իրեն...:

Մի գուցէ շատեր տեսած պէտք է ըլլան հեռատեսիլէն ցուցադրուած այն պսակի արարողութիւնը, ուր եկեղեցականը երբ հարց կու տար հարսին թէ հնազանդ պիտի ըլլա՞ր իր ամուսնոյն իր կեանքի ընթացքին, հարսը ժխտական՝ գլխու շարժումով «ոչ» կը պատասխանէր...:

Նման օրինակներուն բազմազանութիւնը կ'արտացոլացնէ իզական սեռին հնազանդութեան հանդէպ ունեցած ժխտական կեցումաճրը:

Թէ ինչո՞ւ պէտք է հնազանդին: Միթէ իրենք ծառայ են տան մէջ իրենց ամուսիններուն որ հնազանդին իրենց: Չէ՞ որ կ'ապրին իրենք ազատ երկրին մէջ: Այլապէս ի՞նչ կը նշանակէ ապրիլ ազատութեան մէջ, ազատօրէն եւ... հնազանդիլ...:

Ահա այսպիսի խորհուրդներէ տարուած կանայք կարծէք նուաստացում կը զգան ինքզինքնին տեսնելով հնազանդողի կարգավիճակին մէջ:

Ազատութեան նշանակութեան հանդէպ իրենց ունեցած այս սխալ մեկնաբանութիւնը եւ սխալ ըմբռնումը ըմբոստութիւն կը յառաջացնէ իրենց սրտերուն մէջ եւ կը մղէ զիրենք անհնազանդութեան:

Սակայն միթէ նուաստացո՞ւմ է հնազանդիլը: Միթէ նուաստացա՞ծ կ'ըլլայ զաւակդ, եթէ հնազանդի քեզի: Միթէ նուաստացա՞ծ կ'ըլլայ ուսուցիչ մը հնազանդելով իր տնօրէնին: Չէ՞ որ ուսուցիչ եւ տնօրէն իրարու գործակիցներ են: Չէ՞ որ միատեղ ժողովներ կը գումարեն եւ իրար հետ կը խորհրդակցին գործերը աւելի օրինականացնելու համար: Ի՞նչ նուաստացում կարելի է տեսնել այստեղ ուսուցչի դերին մէջ:

Արդեօք կինը չի գոհանար իր ուսուցչի հանգամանքէն ու կը ձգտի տնօրէնի՞ աթոռը գրաւել ընտանիքէն ներս... դերերը շրջել փորձելով...:

Չարմանալին այն է, սակայն, որ եկեղեցականներ ընդհանրապէս քաջութիւնը չեն ունենար բոլոր ճշմարտութիւններու վրայով խօսելու եւ կը խուսափին կարգ մը ճշմարտութիւններէ, ի մասնաւորի այն ճշմարտութեան խօսքերէն, զորոնք պէտք է խօսին յիշեցնելու համար կանանց իրենց պարտաւորութիւնները եւ ցոյց տալու իրենց իրաւասութեան սահմանները: Մինչեւ իսկ ոմանք կը խուսափին պսակի արարողութեան ընթացքին հարսին հարց տալէ հնազանդութեան վրայով եւ կողմնակի խօսքերով ձեւով մը կը կապկեն այդ հարցումը, թէ նեղութեան դժուարին օրեր կրնան ունենալ, ուր իրար պէտք է խրախուսեն, իրարու օգնական պէտք է ըլլան, իրար խնամեն եւ այլն, առանց հարցնելու բուն հարցումը եղող հնազանդութեան մասին:

Պատուելի մը պսակի արարողութեան մը ընթացքին, այսպիսի կապ-

կպուած հարցումներով եւ խօսքերով պսակը աւարտելէ ետք, վերջաւորութեան իր քով երթալով հարց տուի իրեն, թէ ինչո՞ւ հարսին հարց չտուաւ հնազանդութեան մասին:

Ըսաւ թէ հարց տուած էր արդէն, որ իրարու օգնական պէտք է ըլլան, իրար պէտք է խնամեն եւ այլն: Ըսի, այդ բոլորը աղէկ, սակայն ինչո՞ւ չհարցուցիք բուն հարցումը հնազանդութեան մասին:

Պատուելին այլայլեցաւ: Վստահաբար անակնկալ մըն էր այդ հարցումը իրեն համար: Քիչ մը տատամսելէ ետք ըսաւ. Բարեկամ, ան այս երկիրներու սիմպոլն է:

Սակայն պատուելի, դուք որպէս Աւետարանական Եկեղեցի, ինչո՞վ կ'առաջնորդուիք, Աւետարանի ճշմարտութիւններով թէ սիմ...: Հարցումս չկրցայ աւարտել: Ըսաւ.

- Կը ներք, կարգադրելիք գործեր ունիմ, վերջը կը խօսինք...:

Ուրիշ քահանայ մը եւս, պսակի արարողութեան ընթացքին, փեսային հարց տալէ ետք. «այս օրիորդին ձեռքէն որ բռնած ես, մինչեւ կեանքիդ վերջը տէ՛ր ես»: Նոյն հարցումը կ'ուղղէր նաեւ հարսին. «այս պարոնին ձեռքէն որ բռնած ես մինչեւ կեանքիդ վերջը տէ՛ր ես...»: Չես գիտեր որ ծիսարանին մէջ կան գրուած նման բաներ:

Եւ ասոնց նման շատ ուրիշ անօրինութիւններ մուտք գործած են եկեղեցիներէն ներս, դժբախտաբար, եկեղեցականներու քաջութեան պակասէն եւ եկեղեցական սրբութիւններու հանդէպ իրենց անլուրջ մօտեցումէն:

Յարդ հանդիպած եմ միայն մէկ եկեղեցականի (վստահաբար կան ուրիշներ եւս) որ իր քարոզին նիւթ դարձուցած էր «կանանց իրաւասութիւններու սահմանները եւ պարտաւորութիւնները»: Թէ ինչու կիներ պէտք է հնազանդին իրենց ամուսիններուն: Թէ ինչու կիներ պարտին ծածկել իրենց գլուխները եկեղեցիէն ներս: Թէ ինչու անպարկեշտ հագուածքով, հոլանի թելերով, բաց քղանցքով պէտք չէ գան եկեղեցի եւ մանաւանդ այդ ձեւով ալ հաղորդութեան մօտենան:

Յատկապէս շեշտակի խօսեցաւ պսակադրութեան մասին, թէ ինչպէս հարսը՝ հարսնաքոյրերը եւ հարսնետոր կանայք, եկեղեցին կը շփոթեն պարահանդէսի սրահին հետ: Չեն գիտակցիր թէ Աստուծոյ տունն է որ կը մտնեն: Նկատի չեն առներ եկեղեցւոյ սրբութիւնը ու չեն պատկառիր իրենց անվայել հագուածքներով, երեւնալ Աստուծոյ տան մէջ, եւ այլն:

Բոլոր այս նիւթերու մասին Աւետարանական լայն բացատրութիւններ տուաւ, Աւետարանէն մէջբերուած համարներով:

Իսկական քաջ հովիւ մը արդարեւ, որ ճշմարտութիւններ խօսելու համար նրբին հաշիւներ չունէր երբեք:

* * *

Եզրակացնելով մեր մտքերը, կ'ուզենք ըսել.

Որքան դատապարտելի է անողորմ, բիրտ, ապերասան եւ բռնատէր այր մարդը, որ կը ճնշէ իր կնոջ ու ընտանիքին վրայ, նոյնքան եւ դատապարտելի է կնոջ անհնազանդութիւնը, որ պատճառ կը դառնայ ընտանեկան խռովութիւններու ու քայքայման:

Եւ երբ երկու կողմերն ալ՝ այրեր եւ կիներ, հաւասարապէս ունին դատապարտելի յանցանքներ, նախընտրելի պիտի ըլլար, որ դատապարտութիւնը միայն մէկ կողմին ուղղուած չըլլար:

Ընտանիք մը կրնայ երջանիկ ապրիլ այն ատեն միայն, երբ այր ու կին, իւրաքանչիւրը իր կարգին, ճանչնայ իր իրաւաստութեան սահմանները, գիտակցի իր պարտաւորութիւններուն եւ յարգէ դեմինին իրաւունքները:

Իսկ այդպիսի գիտակցութիւն մը կարելի պիտի ըլլար ձեռք ձգել միմիայն *Քրիստոնէական առողջ դաստիարակութեամբ*:

Ս. Գիրքը մեզի կ'ըսէ. «Իմաստութեան սկիզբը Աստուծոյ վախն է»:

Որով այդ իմաստութիւնը, այսինքն Աստուծոյ վախը իր սրտին մէջ ունեցող ռեւէ այր մարդ, բռնութիւն պիտի չգործադրէր իր ընտանիքին վրայ եւ ռեւէ կին անհնազանդ պիտի չըլլար իր ամուսնոյն հանդէպ: Քանի որ այդ դատապարտելի արարքներուն՝ բռնութեան թէ անհնազանդութեան պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ Աստուծոյ վախին չգոյութիւնը:

Ահա այսպիսի Քրիստոնէական դաստիարակութիւն մը կ'ակնկալուի մեր եկեղեցականներէն:

«Նոր Կեանք», 6 Յունուար 2011

ՀԱՅԱՍՏԱՆ 20 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՒ ԱՅՍՈՐ

Երբ մանուկ մը կ'աճի ու կը մեծանայ ընտանիքէն ներս, մեր ամենօրեայ հսկողութեան տակ, անոր ֆիզիքական աճին տարբերութիւնը մի գուցէ չկարենանք նկատել այնքան, որքան պիտի նկատէինք երբ տեսնէինք զինք յանկարծ, քանի մը տարիներու միջոցէ ետք:

Ընդհանրապէս այսպէս է պատկերը շատ մը երեւոյթներու պարագային, որոնց կարգին նաեւ՝ հայրենիք այցելութեան, ուր որոշ տարիներու բացութենէ ետք կատարուած այցելութիւն մը որոշակի ցոյց կու տայ մեզի անցեալի ու ներկայի տարբերութիւնները:

Հայրենիքին տրուած մեր առաջին այցելութիւնը եղած էր 1991 թ.ին, երբ կազմալուծուած էր Խորհրդային Միութիւնը: Հայրենիքը հռչակած էր իր «Անկախութիւն»ը. սակայն՝ ո՛չ կառավարութիւն կար տակաւին եւ ո՛չ ալ նախագահ: Հայրենիքին ամենախառնաշփոթ մէկ շրջանն էր այդ: Կուսակցական հակամարտութիւններ, մարդասպանութիւններ, ժամը 8-էն ետք շրջագայելու արգելքներ եւայլն...:

Չկար տեւական ելեկտրականութիւն եւ ջուր: Մենք, որ կը մնայինք Անի հիւրանոցը, չունէինք նոյնիսկ տաք ջուր լոգանքի համար: Մեր բարեկամներէն մին մեզի բերած էր ջուր տաքցնելիք ելեկտրական գործիք մը, որ դնէինք ջուրով լեցուն դոյլի մը մէջ, որպէսզի 20 վայրկեան ետք ունենայինք մէկ դոյլ տաք ջուր: Այսքանով պիտի բաւականանայինք որ լոգանք մը առնենք:

Եթէ հիւրանոցին մէջ այդպէս էր կացութիւնը, ապա կրնա՞ք երեւակայել, թէ ինչ կրնար ըլլալ դրութիւնը ընտանիքներէն ներս:

Ահա, այդպիսի կացութեան մէջ, որոշ տարիներ ապրեցաւ հայրենի ժողովուրդը:

Սակայն, նման դրութեան մէջ անգամ, ժողովուրդը կը մնար յուսադրուած, մեր հայրենիքի «Ազատ եւ Անկախ» կարգավիճակով, լուսաւոր ապագայի տեսլականով ներշնչուած, որ այդ «Ազատութիւն»ը անպայման բարիք պիտի բերէր համայն հայութեան: Որոշած էինք տոկայ, եւ տոկացիք բոլոր այդ դժուարութիւններուն, քանի որ նեղ օրերը պիտի անցնէին ու պիտի բացուէր լուսաշող արշալոյս մը մեր հայրենիքի երկնակամարին վրայ:

Սփիւռքի հայությունը եւս պիտի դառնար հայրենիք եւ իր բոլոր կարելիություններով պիտի սատարէր հայրենիքի վերելքին: Ու այսպէս՝ համայն ժողովուրդը պիտի վայելէր այդ ազատութեան բարիքները:

Ահա, այս էր այն յոյսը, որ կը տիրէր այդ օրերուն, բոլորիս սրտերուն մէջ:

* * *

2006 թ.ին, 15 տարիներու միջոցէ մը ետք, դարձեալ կ'այցելէինք հայրենիք եւ տեսնելով հայրենիքի այդ օրերու իրավիճակը, կը փորձէինք բաղդատական մը ընել անցեալի եւ ներկայի կացութեան եւ ըմբռնումներուն միջեւ: Սակայն, մեր այդ բաղդատական մը ընելու փորձին մէջ ահա հարցում մը կու գար չարչրկել մեր միտքը: Հարցումը հետեւեալն էր...

Խորհրդային շրջանին համարեա՛ թէ բոլոր մարդիկ իրար հաւասար էին նիւթական գետնի վրայ: Մէկը միւսէն քիչ մը աւելի կամ պակաս ըլլալը բնական կարելի է նկատել: Իսկ հիմա, անկախութեան այս 15 տարիներու կարճ ժամանակամիջոցին մէջ, ի՛նչ պատահած էր եւ ինչպէ՛ս յառաջ եկած էր բազմամիլիոնատերերու փաղանգ մը..., որոնք ձեռք առած էին ամբողջ իշխանությունը...: Չարմանք պատճառող երեւոյթ մը՝ արդարեւ: Իշխանաւորներ՝ որոնց ամսաթոշակը հազիւ թէ պիտի ապահովէր իրենց համար բարեկեցիկ կեանք մը լոկ..., ինչպէ՛ս տիրացած էին այդ միլիոններուն...: Մինչ անդին՝ ժողովուրդը կը տքար անգործութեան եւ ջրաւորութեան մէջ:

Այո, հարցումին անգիր պատասխանը վստահ եմ, ծանօթ պէտք է ըլլայ բոլորին: Այնպէս որ, զարմանալի ըլլալով հանդերձ, կը խորհիմ որ վիճակը բացատրութեան չի կարօտիր:

Յոյս եւ յուսախաբություն:

Այո. 2006-ին, մեր հայրենիք այցելութեան առիթով, մեր տեսած այս ահռելի իրականութեան առընթեր, կը նկատէինք նաեւ այլ սխալներ ու պակասություններ, որոնք յառաջացած էին երկրէն ներս, որոնց վրայով մեր տպաւորությունները օրին գրած էինք, մեր «90 օր Հայրենիքին մէջ» խորագրեալ գրքոյկին մէջ. սխալներ՝ որոնք երկրի մը համար լուրջ խորհրդածութեան հարցեր պիտի նկատուէին եւ որոնք, այդ 15 տարիներու անկախութեան ընթացքին, իրենց լուծումը ստացած եւ սրբագրուած կրնային ըլլալ:

Օրինակ- կ'ականարկէինք փակումին հարիւրաւոր գործարաններու: Ատոնցմէ իւրաքանչիւրը բազմահազար գործաւորներու ապրուստը կ'ապահովէր: Ատոնցմէ ոմանց համար փակման պատճառ ներկայացուած էր այն, որ դուրսէն ներածուած նոյն տեսակի ապրանքը աւելի որակաւոր էր եւ աւելի աժան, քան երկրին արտադրությունը:

Շա՛տ բարի: Սակայն դուրսէն ներածողներ պիտի ըլլային մէկ կամ մի քանի հոգիներ միայն, որոնք իրենց ներածած ապրանքները վաճառելով, կոկիկ շահ-գումարներու պիտի տիրանային: Իսկ ի՞նչ պիտի ըլլար հազարաւոր գործաւորներու վիճակը:

Որքանո՞վ կարելի էր տրամաբանական գտնել այս ձեւը:

Կը յիշեմ, թէ ինչպէս Սուրիական կառավարութիւնը անցեալին, տեղական արտադրութիւնը քաջալերելու համար, դուրսէն ներածուած նոյն տեսակի ապրանքներուն վրայ ծանր մաքսեր դրաւ, որպէսզի ժողովուրդը հարկադրուի տեղականը գնել ու այսպիսով երկրին ճարտարարուեստը զարգացնել. ինչու չէ՛ նաեւ, հետզհետէ արտադրութիւնը աւելի որակաւորելով, միջազգային շուկային հետ քայլ պահել ու մրցիլ: Միթէ իմաստուն կարգադրութիւն մը չէ՞ր այդ, ուր հազարաւոր գործաւորներ պիտի կարենային ճարել իրենց ապրուստը: Օրինակ չառնէ՞լ ուրիշ երկիրներու իմաստուն իշխանութեանց գործելակերպէն:

Այս տարի եւս՝ 2010 թ.ին, դարձեալ կ'այցելենք հայրենիք, մեր անցեալի յուշերը վերապրելու եւ անձնապէս վերանորոգուելու, ի տես Մայր հայրենիքին եւ անոր յառաջընթացին:

Կը նկատենք կարգ մը դրական տեղաշարժեր, իրականացած գործեր, որոնցմէ ոմանց պակասութեան մասին ակնարկած էինք մեր գրութեան մէջ:

Հիմա, գոհունակութեամբ կը դիտէինք Երեւանի գլխաւոր պողոտաներու խաչմերուկներուն զետեղուած, թաղերուն անունները ցոյց տուող խաչաձեւ ցուցատախտակներ, որոնք պակաս մը ամբողջացնելով աւելի օրինական դարձուցած էին քաղաքը: Պէտք է ըսել, սակայն, որ երկրորդական եւ երրորդական թաղերը տակաւին կը սպասեն, որ նոյն բախտին արժանանան:

Հպարտադիք էր նաեւ տեսնել Հալիճորէն-Տաթեւ երկարող նորակառոյց ճոպանուղին (GONDOLA, TELEFERIC) որ իր 5.7 ք.մ. երկայնքով կը հանդիսանայ աշխարհի ամենաերկար ճոպանուղին:

* * *

Երեւանի մէջ ամէնուրեք կը հանդիպինք պարսիկ ընտանիքներու, որոնք եկած են իրենց արձակուրդը անցնելու Երեւանի սրճարաններուն ու պարտէզներուն մէջ:

Ատոնց կիներն ու աղջիկները, ըստ ժողովուրդէն քաղուած տեղեկութիւններու, Երեւան գալով կ'առնեն իրենց ազատութիւնը, ինչ որ իրենց զլացուած է սեփական երկրին մէջ: Այնպէս որ, իրենց հազուստ-կապուստով եւ շպարներով երբեք չեն զանազանուիր հայ աղջիկներէն ու կիներէն: Իսկ

ուրիշ պարսիկ կիներ կ'երեւին իրենց ազգային տարազներով, լաչակներով եւ երկար թեւ վերարկուներով:

Ասոնք կ'երեւին ամէն տեղ. մինչեւ իսկ եկեղեցիներէն ներս, պատարագի ընթացքին:

Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ, Պատարագի ընթացքին, երբ եկեղեցին լեցուն էր ամբողջութեամբ, կար պարսիկ ընտանիք մը՝ հայր, մայր եւ մօտ 17 տարեկան իրենց զաւակը, որոնք յարատեւ կը նկարէին ու կը նկարուէին. յատկապէս՝ անուղղակի կերպով կը նկարէին այն աղջիկներն ու կիները, որոնք եկեղեցւոյ համար անվայել ու անպարկեշտ հագուածքներով եկեղեցի եկած էին... մի գուցէ տանելու եւ ցոյց տալու իրենց ազգակիցներուն, որ տեսէք, ահա՝ թէ հայ կանայք ինչպիսի տարազներով եկեղեցի կու գան աղօթելու....:

Արդեօք մեր կիներն ու աղջիկները կը գիտակցի՞ն իրենց հագուստ-կապուստի պատշաճութեան՝ եկեղեցի երթալու ատեն:

Հաւաստի աղբիւրներէ կ'իմանանք, որ շատ մը պարսիկներ սկսած են բնակարան գնել Երեւանի մէջ: Արդէն իսկ Երեւանի ամենանշանաւոր փողոցներէն՝ Մաշտոցի պողոտային վրայ ունին փառաւոր մզկիթ մը, «Կապոյտ Մզկիթ» անունով, հսկայական տարածքի մը վրայ, ուր ոչ միայն կ'աղօթեն, այլ եւ կ'ուսուցանեն, Պարսիկ պգտիկներուն, պարսկական կրօնն ու լեզուն:

Կան նաեւ մօտ 15-ի չափ հայ տղաք ու աղջիկներ, որոնք կը հետեւին պարսկերէն լեզուի դասընթացքներուն, այդ մզկիթին դասարաններէն մէկուն մէջ:

Մզկիթը բաց է միշտ, ամէն այցելուի համար:

* * *

Հայրենի ժողովուրդին համար կարծէք բաւարար չլլար երկրին մէջ տիրող անգործութեան տագնապը: Ասոր կու գայ աւելնալ նաեւ գնաճը ամէն տեսակ ապրանքներու վրայ:

Ներածուող գլխաւոր ապրանքները՝ վառելանիւթ, ինքնաշարժ, շաքարաւազ, բրինձ, շինարարական նիւթեր... որոնց իւրաքանչիւրը ունի արտօնատէր մը, որուն մենաշնորհն է այդ ապրանքէն ներածելը: (Ուրիշ ռելէ մէկուն արտօնուած չէ նոյն ապրանքէն ներածել... եթէ նոյնիսկ այդ «Ուրիշ»ը պիտի կրնար նոյն այդ ապրանքը նոյն որակով ներածել եւ համեմատաբար աժան գինով վաճառել ժողովուրդին, հայկական շուկայի վրայ):

Այդ ապրանքներուն գիները ժամանակ առ ժամանակ յաւելում կ'արձա-

նագրեն, ցատում եւ զայրոյթ յառաջացնելով ժողովուրդին մօտ: Ժողովուրդին արդար բողոքի ձայները ընդհանրապէս չեն հասնիր իշխանաւորներու ականջին: Ուստի, ոչինչ կը փոխուի կացութենէն: Գիները կը բարձրանան եւ ժողովուրդը, կամայ թէ ակամայ, կ'ենթարկուի այդ գիներուն... համակերպելով:

Պահ մը ենթադրենք, որ ներմուծուող այդ ապրանքները կապ ունին արտաքին աշխարհի հետ, որոնց գնահին համար կարելի է բազմատեսակ պատճառաբանութիւններ ներկայացնել ու... հնարել... սակայն ինչպէ՞ս կարելի է բացատրել ու արդարացնել գնաճը տեղական արտադրութիւններու (մթերքներ-կանանչեղէն... եւայլն), որոնք ամենեւին կապ չունին արտաքին աշխարհի հետ:

Այդ հարցին պատասխանը կը գտնենք «Առաւօտ» թերթի խմբագիր Արա Արրահամեանի մեկնաբանութեան մէջ: Ան, օրինակ, կը թուէ լոյիկը, առանձնացնելով տեղական արտադրութիւններէն մէկը, ու կը գրէ.

«Անցած տարուան Սեպտեմբերի մէկին, լոյիկի քիլոկրամն արժէր 50 դրամ, այս տարուան նոյն օրը՝ 100 դրամ: Դա՛ այն ապրանքն է, որը Ռուսաստանից չի ներմուծուում, և դրա գինը (առ այժմ) Ռուսերը չեն հաստատում»: Ու կ'աւելցնէ. «Այնուհետեւ լոյիկը բէնզին չէ, որ ասենք՝ Միկա Բաղդասարովը այն բերի և վաճառի իր ուզած գնով՝ պատճառաբանելով դրամի գեր-արժեւորումը կամ արժեզրկումը, (երկուսն էլ գները բարձրացնելու միանգամայն «Գիտական» հիմնավորումներ են)»:

Ուրեմն, ի՞նչ կրնայ ըլլալ պատճառը տեղական արտադրութեանց գնահին: Արդեօք երա՛շտ էր, անցեալ տարուան բերքը «Չստացուն՛ց...» այս տարի: Ահա՛ պատասխանը.

«... ՈՉ ԷԼ ԵՂԱՆԱԿՆ ԷՐ ԲԱՆՋԱՐԵՂԷՆԻ ՀԱՄԱՐ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ, ԲԵՐՔՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԱԲԵԼԻ ԱՌԱՏ ԷՐ, ՔԱՆ ՄԷԿ ՏԱՐԻ ԱՌԱՋ»:

Ինչպէ՞ս բացատրել այս անհասկանալի թուացող երեւոյթը. Թե՛ ԲԵՐՔԸ ԱԲԵԼԻ ԱՌԱՏ, ԵՒ Թե՛ ԳԻՆԸ ԿՐԿՆԱՊԱՏԻԿ...:

Ահա թէ ինչպէս կը բացատրէ Պրն. Արրահամեան. *« Անձամբ ես միայն մէկ հիմնական բացատրութիւն ունեմ՝ կառավարութեան ու նախ և առաջ համապատասխան գերատեսչութիւնների վատ աշխատանքի պատճառով: Մասնատրապէս, այն պատճառով, որ նոյն այդ լոյիկի գնի մէջ, ՄԻՆՉԵՒ ԱՅՆ ԳԻՒՂԱՅՈՒԹՓԻՑ ՀԱՄԱՐԻՄ Է ԻՄ ՍԱՌՆԱՐԱՆ, «ՄՏՆՈՒՄ ԵՆ» ԲԱԶՄԱԹԻԻ ԿՈՌՈՒՄՊԱՅՈՒՄԾ (ԶԱՐԱՇԱՀՈՂ) ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐ՝ ԱԲԵԼԻ ՇԱՏ ԵՒ ԱԲԵԼԻ ԼԿՏԻ, ՔԱՆ ԱՆՑԱԾ ՏԱՐԻ»:*

Ահաւասիկ գնանին բացատրութիւնը՝ որ կը տրուի հայրենիքի մէջ ապրող եւ հայրենիքի ամէնօրեայ կեանքին ու ապրելակերպին իրագել, հանրածանօթ մտաւորական եւ խմբագիր անձի մը կողմէ, որուն խօսքերը կշիռ ունին ժողովուրդին մօտ... եւ ստոյգ է հարիւր տոկոս...:

Արա Աբրահամեան շատ լաւ գիտէ նաեւ, թէ կառավարութիւնը ինչպիսի մեկնաբանութիւններ կուտայ այդ գնանին մասին, ու կը գրէ.

«Ի ՀԱՐԿԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՏԱՅ ԻՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ, ՈՐԸ ԷԱՊԷՍ ՏԱՐԲԵՐԻՈՒՄ Է ԻՄ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ: ՆՇՈՒԵԼՈՒ ԵՆ ՇԱՏ ԲԱՐԴ ՈՒ ՄԵՉ՝ ՀԱՍԱՐԱԿ ՄԱՀԿԱՆԱՑՈՒՆԵՐԻՍ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ՇԱՏ ԳՈՐԾՕՆՆԵՐ՝ ՍԿՍԱԾ ԼՈՆԴՈՆԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻ ԳՆԵՐԻՑ, ՎԵՐԶԱՑՐԱԾ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՑՈՒՆԱՄԻՈՎ... եւ այլն:

Նոյնպէս... յօդուածագիր Եղիշէ Մեծարենց եւս, իր «ԳՆԱՃՆ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԽԻՂԾԸ» խորագրեալ երկարաշունչ յօդուածին մէջ, ակնարկելով երկրին մոնոքոլացուած (մենաշնորհուած) համակարգին, որ պատճառն է գնանին, կ'ըսէ. *«Գնանին իրական, բուն պատճառը Հայաստանում այն է, որ տնտեսութիւնը գրեթէ ամբողջութեամբ մոնոպոլացուած և օլիգոմոպոլացուած է. չկայ բաւարար մրցակցութիւն, ինչի հետեւանքով էլ գները պարբերաբար աճում են»:*

Եւ ահա այս գնանին հետ մէկտեղ, երկրին մէջ տիրող անգործութիւնը ուղղակի կը տագնապեցնէ ժողովուրդը: Իսկ երբ անգործութեան մասին ակնարկուի, անմիջապէս կ'առարկեն ըսելով, թէ աշխատողին համար գործ շատ է:

Սակայն հոս պիտի տեսնենք անգործութեան վրայով տրուած ամենավաւերական վկայութիւնը նոյն ինքն Նախագահ Սարգիսեանին, Ախուրեանի նորակառոյց շաքարի գործարանին բացման առիթով տուած հարցազրոյցէն:

Թէեւ Նախագահ Սարգսեան իր հարցազրոյցին մէջ բնաւ չ'ակնարկէր մրցակցութեան չգոյութեան և սեփականատէր մոնոքոլիստներու (մենաշնորհեալներու) առկայութեան, այլ միայն կ'ըսէ. *«Միակ ելքն այն է, որպէսզի ոչ միայն Ախուրեանում, այլ մեր հանրապետութեան ողջ տարածքում, ահա այսպիսի գործարաններ կառուցուեն, որպէսզի կայուն և բարձր վարձատրուող աշխատանք լինի: Իսկ եթէ աշխատանք լինի, մեր մարդիկ աշխատելով, նման գնանների բրոպլէնը վստահաբար կը լուծուի»:*

Ո՞վ կրնայ առարկել այսպիսի ճշմարիտ խօսքի մը, որ իսկապէս «բրոպլէմների» միակ բանալին է... «Եթէ աշխատանք լինի»:

Սակայն եթե գիտեն, թե... « Եթե աշխատանք լինի՝ գնանի բրոպլեմը կը լուծուի», ինչո՞ւ այդ աշխատանքի մասին չեն մտածեր:

Ինչո՞ւ միայն ճաշարաններ, սրճարաններ, քաղինոներ, հանոյքի վայրեր եւ Երեւանը աւելի «գրաւիչ դարձնող» միջոցներու զբոսաշրջական «կիսամութ անկիւններ» սարքելով տարուած են, որոնցմէ ներս կարելի է միայն դրամ ծախսել...: Եթե գիտեն թե այդպիսի վայրեր կարելո՞ր են և պէտք է շինուին «Հայաստանի ողջ տարածքով», ապա ի՞նչ հասկնալ Նախագահին այն խօսքերէն, թե. « ԱՍԱԾՍ ՀԵՏԵԻԵԱԼՆ Է, ՄՕՏ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՉՍՊԱՍԵՆՔ ԱՅՍ ՈԼՈՐՏՈՒՄ, ԲԱՅՅ ՄԻԵԻՆՈՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԵՆՔ ԳԻՏԱԿՑՈՒՄ ԵՆՔ ՀԱՐՑԻ ՍՐՈՒԹԵԱՆԸ ԵՒ ԲՐՈՊԼԷՄԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԻՐՕՔ, ԼՈՒՐՋ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՆՔ ԿԱՏԱՐՈՒՄ»:

Հասկնալի է, որ կառավարութիւնը իրապէս «Գիտակցում է հարցին սրութեան»: Սակայն, «Մէկ ձեռքի վրայ երկու ձմերուկ չբռնուիր»- կ'ըսէ ժողովրդական առածը: Որով հիմա տակաւին կառավարութիւնը զբաղած է դրամ ծախսելիք վայրերը ամբողջացնելու աշխատանքով, որպէսզի երբ գործը գործատեղիներ շինելու գալ և ժողովուրդը սկսի «բարձր վարձատրութեամբ» դրամ շահիչ, յանկարծ չանճրկի... թե ուր կրնայ ծախսել այդ դրամները...:

Այնպէս որ, Նախագահը կը յորդորէ ժողովուրդին, որ առ այժմ «Մեծ յեղափոխութիւններ չսպասեն այս ոլորտում», համբերեն մեծ յոյսերով, քանի որ «Բրոպլեմի լուծման ուղղութեամբ, իրօք, լուրջ աշխատանք են կատարում»:

Բայց եթե երբեք տարիներ շարունակ, կառավարութեան տարած այդ «լուրջ աշխատանքը» ապարդիւն կը մնայ, գէշ ինչո՞ւ արդար վերաբերմունքի չեն արժանանար բոլոր այն ներքին թէ սփիւռքահայ գործարարները, որոնք մեծ դրամագլուխներ ներդնելով գործեր կը ձեռնարկեն հայրենիքէն ներս, հայրենիքի զարգացման համար:

Հոս, կ'ուզենք խօսքը տալ դարձեալ Եղիշէ Մեծարենցին, տեսնելու թէ ինչպէս կը մեկնաբանէ հայրենիքին մէջ, հայրենիքին զարգացման համար գործ մը կարենալ ձեռնարկելու պայմանները:

«Կարո՞ղ է արդեօք Հայաստանում ցանկացած գործարար գործարան բացել ցանկացած ոլորտում: Ի հարկէ՞ կարող է, եթէ պատկանում է իշխանական որեւէ կրանի, կամ եթէ բաժնեմաս է հանում իշխանական որեւէ ազդեցիկ դէմքի համար: Իսկ եթէ ոչ, ապա ինչքան է շնորհքով, ինչքան էլ գործունեայ եւ կրեատիւ (հնարամիտ) լինի գործարարը, միեւնոյն է, նա չի կարող մուտք գործել բիզնեսի

որեւէ ոլորտ: Նրա դէմ դուրս կգան գրուած ու չգրուած բոլոր օրէնքները, ինչն ի վերջոյ կը յանգեցնի նրան, որ գործարարը կա՛մ լաւագոյն դէպքում իր ներդրումը կը վաճառի ոեւէ իշխանաւորի կամ իշխանամերձի, կա՛մ գործարարը պարզապէս կը խլեն նրանից»:

Ահա՛ պայմանը հայրենիքէն ներս, հայրենիքի զարգացման համար, գործ մը կարենալ յաջողցնելու. եւ ասոր «Ամենալառ վկայութիւնը Միլ Կոնցենէի սեփականատէր Սուքիասեան ընտանիքի պատմութիւնն է. նրանք բաւական յաջողակ գործարարներ էին Հայաստանում, կարողացել էին հանքային ջրի արտադրութեան բնագաւառում հասնել զգալի յաջողութեան, հայկական «Բջնի» սպրանքանիշը հասցնել միջազգային շուկայ: Բայց բաւական էր, որ նրանք Նախագահի ընտրութեանն աջակցէին իշխանութեան թեկնածուի ընդդիմադիր մրցակցին և հաշուած ժամկէտների ընթացքում՝ զրկուեցին իրենց գործարանից»:

Կարելի է տակաւին տասնեակներով նման օրինակներ բերել մեծ ու պզտիկ գործարարներու «Ողիսական»ներէն, ի մասնաւորի սփիւռքահայ գործարարներու փորձառութենէն, որոնք ԱՓՍՈՍԱՆ-ԲՈՎ ՎԵՐՋ ՏՈՒԻՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՈՒ ՀԵՌԱՑԱՆ ԵՐԿՐԷՆ...:

Կառավարութեան կողմէ կիրարկուող այսպիսի գործելաոճ մը, առաջին առթիւ պիտի զար բեկանել մարդոց հայրենասիրութիւնը, պիտի փոխեր անոնց դիրքն ու տրամադրութիւնը հայրենիքին հանդէպ, յուսահատութիւն յառաջ պիտի բերեր հայրենի ժողովուրդին մօտ, զրկելով զիրենք իրենց իսկ երկրին մէջ բարւոք կեանք մը կարենալ ապրելու հաւանականութենէն, եւ այդ յուսահատութիւնը ի վերջոյ պիտի մղեր զիրենք, որ իրենց աչքերը սեւեռեն երկրէն դուրս, դէպի օտար աշխարհներ, որուն անունն է ԱՐՏԱԳԱՂԹ:

Թէեւ այս արտագաղթին համար ահագանգ հնչեցնողներ շատ են, սակայն այնպէս կը թուի որ այդ հնչիւնները չեն հասնիր իշխանութիւններու ականջին:

Հոս, տեղին կը նկատեմ մէջբերել նաեւ Վարդան Չալոեանի «Իշխանութեանը նոր արիւն է պետք» խորագրեալ յօդուածէն այն բաժիրը, ուր յարգելի յօդուածագիրը կը նկարագրէ արտագաղթը, զայն գտնելով յար եւ նման Ռուսական արտագաղթին, թէ ինչպէս «Ամէն տարի Ռուսաստանի բնակչութիւնը կրճատուում է մէկ միլիոնով, ինչը վկայում է, որ այն քայքայուող հասարակութիւն է»:

Մի գուցէ Ռուսաստանի նման բազմամիլիոն ժողովուրդի մը համար մեծ վտանգ մը չի նկատուիր տարին մէկ միլիոնով կրճատուիլը, սակայն յօդուածագիրը կը շեշտէ, թէ «Ռուսաստանի ակտիւ բնակչութեան զգալի մասը հեռանկարներ չի տեսնում, ըստ «Լեւադա» կենտրոնի հարցումների, վերին միջին

խաւի մինչեւ 40 տարեկան ներկայացուցիչների կէտը իր ապագան տեսնում է արտագաղթի մէջ»:

Հոս շատ տեղին է շեշտադրումը «ակտիւ բնակչութեան»- ինչ որ նոյն է նաեւ Հայաստանի պարագային, եւ որ կրնայ վտանգել երկրի մը հիմնական կառոյցները: Ապա յօդուածագիրը ցոյց կուտայ Հայաստանի ներկայ իրավիճակը, ըսելով. «Ցաւօք՝ Հայաստանում այնքան ծանր իրավիճակ է, որ Հայաստանում աւելի արագ է կրճատում, քան Ռուսաստանում, բայց ժողովրդագրական վտանգը այժեւ չի էլ ընկալում»:

Թէեւ մասամբ կարելի է ըսել որ Ռուսաստանի համար եթէ մեծ վտանգ մը չի ներկայացներ տարեկան մէկ միլիոնով կրճատուիլը, սակայն մեր հայրենիքի փոքրաթիւ ժողովուրդին համար սա մեծ, շա՛տ մեծ վտանգ է, ինչ որ սակայն հայրենի իշխանութիւններու համար «ժողովրդագրական վտանգը այլեւս չի էլ ընկալում»:

Ուրեմն, եթէ մեր իշխանութիւնները, ժողովուրդին՝ Ռուսաստանէն աւելի արագ կրճատուիլը որպէս վտանգ չեն ընդունիր, այլապէս ի՛նչ նպատակ կը հետապնդեն: Եթէ ժողովուրդին պահանջները լրացնելու մասին չեն մտածեր, հապա ի՛նչ բանի մասին կը մտածեն: Արդեօք նպատակնին Երեւանը աւելի ճոխացնելով եւ եկող գրօսաշրջիկները ամէն կերպ հաճոյացնելով եկամուտ ապահովե՛լն է...:

Անհաւանական չի թուիր այս վարկածը: Չէ՞ որ այդ ճաշարան-սրճարան-քազինօները, «հաճոյքի տունները» և բոլոր հասութաբեր հաստատութիւնները իրենց կը պատկանին... և անոնք պետք է լաւ աշխատին, որ լաւ ալ եկամուտ ունենան...: Իսկ մնացեալ՝ այդ աղքատ ժողովուրդը ինչո՛վ կրնայ բաժին բերել այդ եկամուտի... հայթայթման: Որով՝ այդքան մեծ վտա՛նգ մը կը նկատուի անոնց երկրէն հեռանալը...:

Խօսք տանք դարձեալ յօդուածագրին: Լսենք զինք.-

«ԸՍՏ ԷՈՒԹԵԱՆ՝ ԻԾԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ԱՅՆ ՍՅԵՆԱՐԻՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԷՏՔ Է ԴԱՌՆԱՅ «ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ» ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ, ՈՐՏԵՂ ՊԷՏՔ ԵՆ ՄԻԱՅՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐԻՒՐ ՀԱՉԱՐ ՄԱՐԴ, ԻԲՐ ՍՐՃԱՐԱՆԻ ՄԱՏՈՒՅՈՂ ԿԱՄ «Հաճոյք վաճառող», ԱԾԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ»:

Ընթերցող, չէ՞ք փշաքաղուիլ այս խօսքերը լսելով:

Երեւան այցելող զբոսաշրջիկները, տեսնելով Երեւանի ճոխությունը, անոր սքանչելի զբոսայգիները, հսկայական առազաններով սրճարանները, ուր մարդիկ նստած կը վայելեն Հայաստանի քաղցրահամ պաղպաղակը, սուրճը կամ գարեջուրը, դիտելով կեդրոնէն ցայտող շատրուաններու խշխշացող՝ բարձրաթոյի ջուրերը, ճաշակելով փարթամ ճաշարաններու համեղ կերակուրները, անկասկած պիտի վերադառնան իրենց տունները այն տպաւորութեամբ, թէ Հայաստան աշխարհը ամենաճոխ եւ հարուստ երկիրներէն մին է, ուր կեանքը կը խայտայ, ուր առատ դրամ կայ այս բոլորին համար ծախսելու, ուր կայ հաճոյք ու վայելք: Ճիշդ է, որ այս բոլորը կան Երեւանի մէջ, քանի որ Երեւանը իր գեղեցկութեամբ կը հաւասարի այլ երկիրներու հարուստ քաղաքներուն իր տուֆաշէն շքեղ շէնքերով, իր հարուստ փողոցներով, իր ճոխ խանութներով, Հիւսիսային պողոտայով, եւ մանաւանդ՝ իր ազատութեան հրապարակով, ուր շատրուաններու ջուրերը պար կը բռնեն երաժշտութեան հետ, իրենց դարձդարձիկ եւ գունաւոր փոփոխութիւններով, գուարճացնելով զիրենք դիտող բազմահարիւր զբոսաշրջիկներն ու տեղացի ժողովուրդը մինչեւ ուշ գիշերներ:

Սակայն հոս կ'ուզենք հարց տալ, թէ որոնք են միշտ ու ամէն օր այդ փայլթաւ ճաշարաններուն մէջ ճաշողները, որո՞նք են այդ քաղինօներուն ու հաճոյքի վայրերուն մէջ դրամ ծախսելով զուարճացողները, որո՞նք են այդ ամենաարդիական՝ որակաւոր ինքնաշարժներ բշտողները, երբ ժողովուրդին մեծամասնութեան մօտ 1000 դրամը մօտ 3,50 տօլարի արժէքը ունի:

Այո. իր արձակուրդը միայն Երեւանի մէջ անցրնող զբոսաշրջիկ մը, եթէ երբեք տեղեակ ալ չէ հայաստանեան ներքին կեանքին եւ ներքին անցողդարձերուն, ի՞նչ իմանայ, թէ ինչ պայմաններու մէջ կ'ապրին գիղերու ու քաղաքներու մէջ բնակողները: Ուր խմելու ջուր կը պակսի յաճախ:

Թէ՛ ինչպէս իրենց կեանքը հայրենիքին համար պատերազմի մէջ վտանգող քաջարի տղաք, որպէս քաղաքական բանտարկեալներ, կը մնան բանտերու մէջ. որպէս... «Վարձատրութիւն» իրենց քաջագործութիւններուն...:

Թէ՛ ինչպէս բանակին մէջ անմեղ զինուորներ կը սպաննուին այն ալ խաղաղ պայմաններու մէջ, եւ որուն համար ամէն օր իրար հակասող տարբեր վարկածներ կը տրուին, բայց յանցաւորը երբեք չի բացայայտուիր ու չի պատժուիր...:

Թէ՛ ինչպէս բանտին մէջ երիտասարդը ծեծի տակ կը մեռցնեն, եւ զայն կը վերագրեն անձնապանութեան, ծածկելու ու չբացայայտելու համար անշուշտ յանցաւորները...:

Թէ՛ ԻՆՉՊԷՍ ՄԱՐՏԻ ՄԷԿԵԱՆ ՍՊԱՆԴԻՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ, ԵՐԿՈՒՔՈՒԿԷՍ ՏԱՐԻ ԵՏՔ ՏԱԿԱԴԻՆ ՉԵՆ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԻՐ, ՈՒ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ՉԵՆ ԴԱՏՈՒԻՐ ՈՐ ԿՐԵՆ ԻՐԵՆՑ ԱՐԺԱՆԻ ՊԱՏԻԺԸ...:

Թէ՛ ինչպէս յանցագործի մը ինքնությունը ծածկելու համար անմեղի մը, սպառնալիքներու ու ճնշումներու տակ խոստովանիլ կու տան, թէ ինքն է յանցաւորը...:

Կարելի է տակաւին երկարել շարքը այս «Թէ՛ ինչպէս»ներուն... եթէ մատնանշուին կառավարութեան գործելաոճին մէջ արմատ նետած անիրաւութիւնները, անօրինութիւնները, անարդարութիւնները, բոլոր ճնշումները եւ այլն:

Այո. իշխանութիւնները կ'աշխատին փոշի ցանել բոլոր զբօսաշրջիկներուն աչքերուն, ամբողջ Հայաստանը իր Երեւանով ցոյց տալով որպէս զարգացած, ճոխ, շէն, բարգաւաճ, օրէնքի ու կարգ-կանոնի երկիր մը, ուր ամէն ինչ վարդագոյն է եւ կեանքը հաճելի:

Այս պարագային՝ վերջին հարցում մը դե՛ռ անպատասխան կը մնայ մեր մտքին մէջ. ԵԹԷ ԻՐՕՔ ՃԻՇԴ ԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՎԵՐԱԳՐՈՒՈՂ ԲՈՒՈՐ ԱՅՍ... ՆԱԽԱՆՁԵԼԻ՝ ՍՏՈՐՈԳԵԼԻՆԵՐԸ, ՀԱՊԱ ԻՆՉՈ՞Ւ Է ՍԱ ԱՀԱԴՈՐ ԱՐՏԱԳԱՂԹԸ:

«Նայիրի», 15 Մարտ եւ 19 Ապրիլ 2011

Յուշեր անցեալէն

ՏԳԵՂ ԵՐԵՒՈՅԹ

*«Անկարելի է որ գայթակղութիւններ չգան,
Բայց վա՛յ անոր որուն ձեռքերով կու գան:
Աւելի աղէկ է, որ անոր պարանոցէն իշու
Աղացքի քար մը կախուի ու ծովը ձգուի,
քան թէ այս պզտիկներէն մէկը
գայթակղեցնէ»
Ղուկաս Ժ. Է. 1-1*

Իրաւամբ, եթէ երբեք նման մահապատիժի մը դատապարտուած ըլլար ոճրագործ մը, աւագակ մը կամ պետութեան դէմ դաւաճանող մը, ո՛չ միայն պիտի չգարմանայինք, այլ աւելին՝ արդար պիտի գտնէինք այդ դատապարտութիւնը, ենթակային կողմէ հասցուած չարիքին տարողութեան փոխարէն:

Բայց Յիսուս նոյն մահապատիժին արժանի կը գտնէ ոեւէ մէկը, որ ուրիշներուն գայթակղութեան պատճառ կը դառնայ:

Ուրեմն՝ Քրիստոսի իսկ դատումով, ոճրագործի, «աւագակի» կամ դաւաճանի մը համահաւասար մեղաւոր մըն է ան, որ կը գայթակղեցնէ ուրիշը:

Մեր ամենօրեայ կեանքին մէջ, որքան կը հանդիպինք, փողոցներու մէջ թէ հեռուստացոյցի միջոցաւ հաւասարապէս, այլասեռական այրերու եւ կիներու, որոնց գործած անառակութիւնները կ'ապականեն ամբողջ միջավայրը, պատճառ դառնալով նաեւ որ ուրիշներ եւս գայթակղին ու շեղին իրենց ուղիղ ճամբէն:

Սակայն այս գայթակղութեանց պատճառ դարձողները պետութեան կողմէ ո՛չ միայն մահապատիժի չեն ենթարկուիր, ինչի ոճրագործներ կամ դաւաճաններ պիտի ենթարկուէին, այլ նոյնիսկ՝ արգելքներու չեն հանդիպիր իրենց անբարոյ գործունէութեանց մէջ:

Ահաւասիկ աստուածային եւ մարդկային դատումներու տարբերութիւնը:

Այդ բոլորին դիմաց, սակայն, կայ ու կը մնայ Եկեղեցին միայն, իր եկեղեցական դատով:

Արդ, եկեղեցականներն են որոնք պիտի դաստիարակեն ժողովուրդը կրօնական եւ բարոյական գիտելիքներով: Պիտի առաջնորդեն զիրենք

աստուածավախութեան եւ հաւատքի ճամբով եւ իրենց մաքուր կենցաղը բարի օրինակ պիտի դառնայ իրենց հօտին, առիթ չտալով որ ժողովուրդը կորսնցնէ իր հաւատքն ու ականածանքը քրիստոնէական կրօնքին՝ եկեղեցւոյ եւ եկեղեցականին հանդէպ:

Դժբախտաբար, սակայն, եկեղեցականներուն մէջ եւս կը գտնուին անհատներ, որոնց կենցաղը համապատասխան չի թուիր ըլլալ ո՛չ իրենց կոչումին եւ ո՛չ ալ վարկին:

Ծանօթ է բոլորին որ ամերիկեան կեանքին մէջ գտնուեցան եկեղեցականներ, որոնք իրենց կարգին անվայել արարքներու մէջ գտնուեցան, գայթակղութիւն յառաջացուցին իրենց շրջապատին մէջ եւ պատճառ դարձան որ ժողովուրդը կորսնցնէ իր հաւատքն ու յարգանքը եկեղեցականին հանդէպ:

Գայթակղութիւն մը, իր տարողութեամբ մեծ կամ փոքր, գայթակղութիւն ըլլալէ չի դադրիր, մանաւանդ՝ երբ ան կու գայ եկեղեցականէ մը, որուն առաքելութիւնը ճիշդ հակառակը պէտք է ըլլայ. այսինքն՝ գայթակղողները ուղղէ, ճամբու բերէ:

Այս տողերուն տուն տուող պատճառը անտեղի արարք մըն է, գործադրուած բարձրաստիճան եկեղեցականի մը կողմէ: Արարքին ազդեցութիւնը քիչ մը մեղմացնելու միտումով կոչեցինք զայն «տգեղ երեւոյթ»:

Եկեղեցիի մը հիմնադրութեան 25-րդ տարեդարձին տօնակատարութիւնը տեղի կ'ունենար շքեղ սրահի մը մէջ: Մօտ 200 հոգիներ ներկայ էին հանդիսութեան:

Պատուոյ սեղանին վրայ կը տեսնուէին օտար եկեղեցականներ, պետական անձնաւորութիւններ, կուսակցական ներկայացուցիչներ, եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներ՝ մօտ քսան հոգի: Իսկ այդ բոլորին կեդրոնը, յատուկ բազկաթոռի մը վրայ բազմած էր բարձրաստիճան եկեղեցական մը, որուն նախագահութեան ներքոյ տեղի կ'ունենար տօնակատարութիւնը:

Հանդիսութիւնը սկսաւ: Բացման աղօթք, բացման խօսք, արտասանութիւն, մեներգ եւ այլն:

Հազիւ 15 վայրկեաններ անցած էին յայտագրի գործադրութենէն, երբ բոլորին ուշադրութիւնը կեդրոնացաւ այդ պատուոյ սեղանին կեդրոնը նստող օրուան նախագահին վրայ: Այս վերջինը իր գրպանէն հանելով հաստափոր սիկար մը, վառեց զայն եւ սկսաւ ծխել, առատ ծուխը արտափչելով դէպի երէր:

Աչքերը սեւեռած կէտի մը վրայ, յարատեւ ծխելով, մտածել կը ձեւացնէր, պարզապէս չտեսնելու համար իրեն ուղղուած այդքան զարմացկոտ նայուածքները:

Շատեր անհանգստացած էին այդ տեսարանէն: Նոյնիսկ եկեղեցւոյ ամե-

նագործունեայ անդամները, որոնց դժգոհությունը կարելի էր կարդալ իրենց դեմքերին:

Ինչպե՞ս կարելի էր բացատրել, օտար եկեղեցականներու, պետական անձնաւորութիւններու եւ ներկայ հասարակութեան դիմաց պարզուող սա անտեղի եւ անվայել երեւոյթը:

Անկասկած ներկաներուն գէթ մէկ երրորդը ծխողներ էին: Պատկերացուցէք ինչ կրնար ըլլալ սրահին վիճակը, եթէ երբեք բոլոր ծխողներն ալ հետեւէին նախագահին օրինակին...:

Սակայն ի պատիւ իրենց, պետք է ըսել որ ոչ մէկը փորձուեցաւ ոչ թէ սիկար՝ այլ սիկարէթ մը վառել սրահին մէջ: Բոլորն ալ մնացին զուսպ եւ համբերող, միշտ նկատի ունենալով պահին լրջութիւնը:

Միակ ծխողը եղաւ ինք՝ օրուան նախագահը՝ ամբողջ հանդիսութեան տեսողութեան:

Ինչ գեղեցիկ օրինակ: Ժողովուրդը ինք իր զսպուածութեամբ եւ լրջութեամբ պիտի պատգամէր իր բարձրաստիճան եկեղեցականին, թէ եկեղեցականի մը հանգամանքին ու մեծութեան համապատասխան չէ նման երեւոյթ:

Արդեօք աշխարհականներն են որ զգաստութեան պիտի հրաւիրեն նման եկեղեցականները...:

Նոյնիսկ խօսք առնող օտար եկեղեցականներէն մին, իր խօսքերուն մէջ, դիպուկ ակնարկ մը նետելով ըսաւ որ դժբախտաբար մեղքը մուտք գործած է մինչեւ իսկ եկեղեցիներէն ներս, սողոսկելով կարգ մը եկեղեցականներու հոգիներուն մէջ, որոնք ոչ միայն գայթակղութեան պատճառ կը դառնան ուրիշներուն, իրենց անվայել արարքներով, այլ եւ կ'արատաւորեն եկեղեցւոյ եւ եկեղեցականին վարկը:

Այս խօսքերը անտարբերութեամբ կ'ընկալէր օրուան նախագահը, քանի որ անոնք... «ուրիշ» եկեղեցականներու համար էին...:

Յայտագրի վերջաւորութեան եզրափակիչ խօսքը վերապահուած էր իրեն: Ան սիկարը մարելէ ետք մոխրամանին մէջ, ոտքի ելաւ եւ իր խօսելու ճարտար ճոճով վեր առաւ եկեղեցւոյ դերը մեր ազգային պատմութեան մէջ, թէ ինչպէս անհայրենիք մեր ժողովուրդը դարերու ընթացքին առաջնորդուեցաւ միայն եկեղեցիով, թէ ինչպէս այդ եկեղեցին մեզի ներշնչեց քրիստոնէական մաքուր հաւատքը եւ այդ հաւատքի գօրութեամբ զինուած կրցանք տոկալ բարբարոս ժողովուրդներու ամէն տեսակի կեղեքումներուն եւ բռնութիւններուն. թէ ինչպէս ան եղաւ մեզի համար «վահան ամրութեան» եւ պատճառը մեր ազգին գոյատեւման:

Ուրեմն պետք է ամուր պահենք մեր եկեղեցիները, որպէս հոգեւոր

ներշնչարան եւ թոյլ չտանք որ մեր հոգիները զրկուած մնան այդ ներշնչումէն:

Թելադրեց որ հաստատ մնանք մեր քրիստոնէութեան մաքուր հաւատքին մէջ, չտարուինք աշխարհային այլ եւ այլ հրապուրիչ երեւոյթներէ, պահենք մեր ազգային բարի սովորութիւնները եւ մեր մաքուր նկարագրով բարի օրինակ դառնանք մեր շուրջիներուն եւ այլն...:

«Գործ՝ եւ ոչ խօսք» պիտի ըսէր մեր հանճարը՝ Գրիգոր Զօհրապը:

Այլապէս, ի՞նչ կ'արժեն այդ քաղցրահամ խօսքերը, որոնք չեն համապատասխաներ գործին:

Պիտի ուզէինք հարց տալ այդ բարձրաստիճան եկեղեցականին, թէ այդ հմայիչ խօսքերով ի՞նչ կրցաւ պատգամած ըլլալ ներկաներուն:

Անդրադարձա՛ւ արդեօք որ ժողովուրդը այդ սրահէն բաժնուեցաւ ոչ թէ իր ճարտար խօսքերէն ներշնչուած, այլ՝ հոն պարզուող տգեղ երեւոյթին վատ տպաւորութեամբ:

Այո. մարդկային մեծագոյն տկարութիւններէն մին այն է, որ մարդիկ ընդհանրապէս չեն ճանչնար իրենք զիրենք: Չեն գիտեր իրենց տեղն ու դիրքը հանրութեան մէջ: Չեն գիտեր թէ ինչ աչքով կը դիտուին ուրիշներէն: Թէ իրենց սխալ մէկ արարքը կամ անհարկի խօսքը ինչ վատ ազդեցութիւն կրնայ թողուլ անմեղ հոգիներու վրայ:

Այդպիսի եկեղեցականի մը համեստօրէն եւ խոնարհաբար պիտի ուզէի ըսել «Ծանիր զքեզ»:

«Նոր Օր», 8 Ապրիլ 2000

ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՎԻՐԱԴՈՐԱՆՔ, ԹԷ՛ ՊԱՏՃԱՌ- ՎԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ

«Մահմետականներու անմեղությունը» անուն ֆիլմը, որուն մէջ կ'ըսեն թէ Մուհամմէտին հասցէին նախատինքներ եղած են, հրդեհ առաջացուց ամբողջ աշխարհի մահմետական երկիրներուն մէջ: Չմնաց որեւէ մահմետական երկիր, որ անմասն մնար այդ բողոքի ցոյցերէն. որոնք ցոյց ըլլալէ շատ աւելի, ուղղակի յարձակումներ դարձան կրակոցներով, հրդեհներով, սպանութիւններով եւ ամէն տեսակի վայրագութիւններով:

Այս յարձակումները ուղղուած էին գլխաւորաբար ամերիկեան հիւսա-տոսարաններուն դէմ, այն աստիճան կատաղի, որ մինչեւ իսկ տեղական կառավարութիւնները անգոր զտնուեցան բորբոքած խուժանը կարենալ զսպելու եւ հակակշռելու կացութիւնը:

Ըստ երեւոյթին, ֆիլմը պատրաստուած էր յատկապէս գրգռութիւն յառաջացնելու մահմետական ժողովուրդներուն մօտ: Ի մասնաւորի ֆիլմին հեղինակին՝ ամերիկացի Սամ Պազիլին, իսրայէլացի մը ըլլալը աւելի կը շիկացնէր բորբոքումները:

Քանի մը օր ետք թէւս պնդուեցաւ, որ Սամ Պազիլին բուն անունը Նաքու-լա Պասսըլէ է, ամերիկեան եւ իսրայէլեան զոյգ քաղաքացիութիւն ունեցող 52 տարեկան դպտի քրիստոնէայ մը, սակայն այս պնդումն ալ կարելի է վերա-պահութեամբ ընդունիլ, քանի որ անհաւանական չի թուիր, որ իսրայէլացիի մը հանդէպ եղած ատելութիւն մը, քրիստոնէայի մը վրայ դարձնելու միտում մը եղած ըլլայ:

Թէեւ ֆիլմը նախապէս՝ Յունիս ամսուայ մէջ ցուցադրուած էր Հոլիվուտի շարժանկարի սրահներէն մէկու մը մէջ, սակայն կը կարծուի թէ պէտք եղած արձագանգը չէր տուած հասցնելու զայն մահմետականներուն ականջին եւ ահա Թերիքի Ճոնս անուն հոգեւորական մը, իրեն օգնական ունենալով Սթիւ Գլայնը եւ Սօրիս Սատակը, գրգռիչ նախաձեռնութեամբ մը խառնակութիւն ստեղծեցին իսլամ աշխարհին մէջ:

Այս եռեակի վերջինը, Սօրիս Սատակ, որ լաւ արարագէտ մըն էր, ժապա-

ւէնը արաբերէնի թարգմանեց, «աւելի լաւ» լսելի դարձնելու զայն արաբ աշխարհին, թէ ինչ է ժապաւէնին նպատակը:

Պարզապէս վառօդի տակառին լուցկի մը զարնելու փորձ մըն էր կատարուածը, ինչ որ կը լսենք եռեակին երրորդ անգամ Սթիւ Գլայնին բերնէն, որ «իրենք շատ լաւ գիտէին թէ այդ ժապաւէնը ինչեր պիտի յառաջացնէր», որովհետեւ բոլոր այն բաները, որ պատահեցան, «անակնկալ չէին իրենց համար»:

Ճիշդ է որ իրենց նպատակին հասան, արաբական բոլոր երկիրներէն ներս կռիւ ու հրդեհ յառաջացնելով ու աւերներ գործելով: Նաեւ պատճառ դառնալով որ տասնեակներով անձեր կորսնցնեն իրենց կեանքը եւ հարիւրաւորներ վիրաւորուին:

Սակայն ի՞նչ շահեցան այս բոլորէն:

Սխալած չենք ըլլար եթէ ըսենք, որ այս ֆիլմը պատճառ դարձաւ, որ Ամերիկան ենթարկուի ամբողջ իսլամ աշխարհի հակակրանքին եւ բոլոր ամերիկեան հիւպատոսարանները թիրախ դառնան յարձակումներու:

Իսկ մահմետական աշխարհը կրցա՞ւ իր վիրաւորուած արժանապատուութիւնը վերականգնած ըլլալ, ցոյց տալով աշխարհին, որ կարելի չէ իրենց Մարգարէն ծաղրանքի ենթարկել ու նախատել:

Մի գուցէ այո, սակայն ոչ արժանապատիւ կերպով:

Մեր համաքրիստոնէական կրօնապետերը, սկսեալ Վեհափառ Պապէն մինչեւ մեր զոյգ Հայրապետները եւ շատ ուրիշ հեղինակաւոր եկեղեցականներ, հանդէս եկան դատաւարտելով այդ ֆիլմը եւ զայն պատրաստողները, որպէս ուրիշ կրօնքի մը հանդէպ եղած նախատինք ու ծաղրանք:

Գնահատելի կը գտնենք քահանայապետին եւ բոլոր բարձրաստիճան եկեղեցականներուն, կրօնական կայուածէն ներս, ցուցաբերած նախանձախնդրութիւնը, որ իրենք պատկանելով հանդերձ քրիստոնէական կրօնքին, գիտեն քննադատել նաեւ այլ կրօնքի մը հանդէպ եղած անվայել թուացող նախատական արտայայտութիւնները:

Սակայն, այս բոլորը կու գան ակամայ յիշեցնելու մեզի համար անհասկնալի թուացող այլ երեւոյթ մը:

Տակաւին թարմ են մեր բոլորին մտքերուն մէջ Յիսուսի մասին նկարահանուած այն ֆիլմերը, որոնք ուղղակի նուաստացուցիչ ու անարգական պատկերներ ցոյց կու տային Յիսուսի: Պատկերներ, որոնք բոլորովին կը հակասէին Ս. Գրային ճշմարտութիւններուն եւ նուստացուցիչ շատ բաներ ունէին իրենց մէջ, որոնք յարմար չենք նկատեր յիշել այստեղ: Սակայն ի գարմանս բոլորին, մեր կրօնապետերէն որեւէ բողոքի ու քննադատութեան ձայն չբարձրացաւ...:

Մեր քրիստոնեական կրօնքին նախանձախնդիր հաւաքականութիւններէն որեւէ բողոքի արտայայտութիւն չսուեցաւ...:

Արդեօք մենք ա՛յս աստիճան հանդուրժող հոգի ունինք մեր նուիրականութիւններուն հանդէպ եղած այդպիսի նուաստացումներուն հանդէպ:

Այո, մենք հակառակ ենք վայրագութիւններուն եւ չենք ուզեր պարկեշտ բողոքի սահմանէն անդին անցնիլ: Սակայն ինչ բան կ'արգիլէր մեր կրօնապետերուն, բողոքել այդ անպարկեշտ ֆիլմերուն դէմ:

Ի՞նչ բան կ'արգիլէր մեզի մեր բողոքի ձայնը հնչեցնելու:

Ի՞նչ փաստարկներով կարելի է արդարացնել մեր այլ կրօնքներու հանդէպ ցոյց տուած նախանձախնդրութիւնը, ի դէմս մեր քրիստոնեական կրօնքին հանդէպ մեր ցուցաբերած անտարբերութեան...:

Ընդունի՛նք ուրեմն, որ անտարբեր ենք մեր սրբութիւններուն հանդէպ...:

«Նոր Օր», 20 Դեկտեմբեր 2012

ԽՈՐԸ ՄՏԱԾԵԼՈՒ ՊԱՀԸ...

Հայ թրքական համաձայնագրին ստորագրության հարցը, այժմու ամենէն հրատապ նիւթը դարձած է ո՛չ միայն մեզ՝ հայերու, այլեւ օտար պետութիւններուն համար, որոնք կը հետաքրքրուին Հայ-Թրքական Յարաբերութիւններով:

Օտար պետութիւններ ընդհանրապէս գոհ են Հայ-Թրքական մօտեցումներէն եւ կ'ողջունեն նման (եւ աւելի ծաւալուն) համաձայնագրի մը հաւանական ստորագրումը, առանց նկատի առնելու, թէ ան կրնայ վտանգաւոր հետեւանքներ ունենալ հայութեան համար: Իսկ հայկական մամուլին մէջ կը տեսնուին թեր ու դէմ կարծիքներ (ընդհանրապէս դէմ՝ քան թեր) այդ համաձայնագրին մասին: Իշխանական կողմը կ'աշխատի համոզել ժողովուրդը, թէ այս համաձայնագիրը լաւագոյնն է մեզի համար, ուր նկատի առնուած են մեր ազգային շահերը: Իսկ ժողովուրդը հաւատք չ'ընծայեր իշխանութեան հաւաստիքներուն, եւ ընդդիմութիւնը, ընդհանրապէս, սխալ կը գտնէ անոր քովանդակութիւնը:

Իրականութիւնը այն է, որ Սերժ Մարգսեան կը խորհի ապահոված ըլլալ մեր ազգին շահերը, Հայ-Թրքական այս համաձայնագրին նախապատրաստութեան մէջ, առանց անդրադառնալու անոր մութ ծալքերուն:

Սակայն դիւանագիտութիւն ըսուածը միաձուլումն է կեղծաւորութեան, ստախոսութեան, նենգամտութեան, այսօր տրուած խոստումը յաջորդ օր դրժելու սովորութեան եւ (մեր պարագային մանաւանդ) հակառակորդին (հայոց դէմ) միշտ թակարդ լարելու ստորնութեան: Այսպիսի կեղտոտ դիւանագիտական աշխարհի մը մէջ, պետական մարդէն կ'ակնկալուի ըլլալ Հեռատես եւ Իրատես: Մանաւանդ՝ պայման է, որ տուեալ պետական ղեկավարը լաւ ուսումնասիրած ըլլայ անցեալը, որպէսզի կարենայ լաւ ճանչնալ այն ազգը, որուն հետ կ'ուզէ համաձայնութիւն կնքել այսօր:

Մենք քաջածանօթ ենք թուրքին լարախաղաց նկարագրին, որ շաղուած է վերել նշուած այդ նենգ յատկութիւններով:

Բաւ է, որ ակնարկ մը նետենք մեր անցեալին վրայ, որ վերյիշենք թրքական նենգամտութիւնները, որոնցմէ խաբուած եւ տուժած ենք յաճախ:

Գրիգոր Զօհրապ Թալաաթին հետ նարտի խաղը աւարտելէ ետք, [ձերբակալութեան գիշերը] երբ ոտքի ելած էր մեկնելու համար, Թալաաթ զայն ճամբու դնելու միջոցին, անոր վզին փաթթուելով կը համբուրէ զինք, «Եղբայրական սէրը» յայտնելով անոր:

Հետեւանքը ծանօթ է բոլորին...:

«Նոր Օր»ի 20 Օգոստոս 2009-ի թիւին մէջ, Յարութ Սասունեանի կողմէ «Օսմանեան արխիւներուն մէջ գտնուող ցեղասպանութեան փաստաթուղթերուն բացայայտումը» խորագրեալ յօդուածին մէջ, կը կարդանք:

Գրիգորիս Եպս. Պալաքեան որ 24 Ապրիլ 1915-ին, թրքական կառավարութեան կողմէ ձերբակալուած եւ արքստրուածներուն մաս կը կազմէր, Ակնունիի ձերբակալութեան մասին հետեւեալ սահմնկեցուցիչ պատմութիւնը կը պատմէ, իր երկու հատորանոց յուշագիրքին մէջ, որ «Հայ Գողգոթա»ն վերնագիրը կը կրէ:

«Երբ թուրք ոստիկանները եկան իր [Ակնունիին] բնակարանը որ զինք ձերբակալէն, Ակնունի եղածէն ցնցուած հարցուցած է. «Թալաաթ տեղեա՛կ է ասկէ»: Ակնունի պապանձեր է, երբ ոստիկանները ցոյց տուած են Թալաաթի ստորագրութիւնը, որ դրուած էր իր ձերբակալութիւնը հրամանագրող պաշտօնագրին ներքեւ: Ան ըսած է. *«Ես դեռ այսօր ճաշեցի Թալաաթին հետ, ինչո՞ւ բան մը չըսաւ ինձի»:*

Ակնունի անակնկալի գալով սաստիկ յուզուած էր, քանի որ ինք Թալաաթի կեանքը փրկած էր Երիտասարդ Թուրքերու 1908-ի յեղափոխութեան ատեն, զայն պահելով իր տան մէջ, վտանգելով իր կեանքը:

Ըստ Գ. Պալաքեանի՝ երբ Ակնունի վերջապէս կ'անդրադառնայ, որ մահուան կ'առաջնորդեն զինք, ան իր բանտակիցներուն կ'ըսէ. «Ես չեմ գղջար մեռնելուս, որովհետեւ գիտէի, թէ մահը օր մը պիտի հասներ ինձի: Միակ գղջումս այն է, որ մենք խաբուեցանք այս չարամիտ թուրքերէն»:

1894-1896-ի Ուրֆայի ու Սասունի՝ իսկ 1909-ի Ատանայի ջարդերուն՝ հայոց հոգիներէն ներս յառաջացած ցասումը մեղմելու համար, Երիտթուրքերու «Իթթիհատ Վէ Թերաքքը» կուսակցութիւնը, «Ազատութիւն, Եղբայրութիւն եւ Հաւասարութիւն» լոզունգներով, աշխատեցաւ խաբել դարձեալ հայերը, յուսադրելով անոնց, թէ՛ անցան այդ գոլումի օրերը եւ, յետ այսու, հայ եւ թուրք՝ պիտի ապրին «Եղբայրական սիրով», ցանկալի «Ազատութեան» մէջ, ու «Հաւասարապէ՛ս»:

Դժբախտաբար այս մեծ կեղծիքէն խաբուեցաւ դարձեալ հայութեան մէկ մեծ հատուածը, ինչպէս վերեւ կը խոստովանէր նոյնինքն՝ Ակնունին:

Եւ ահա, թէ այդ «Եղբայրական սիրով» թուրքերը ինչ պարգեւեցին մեզի...:

ՅԵՂՃՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ...:

Կարելի է ուրիշ շատ օրինակներ բերել թուրքին նենգամտություններն եւ խաբէութիւններէն: Սակայն... ցաւալին այն է, որ մենք՝ հայերս, մէկ քանի անգամ խաբուելով չենք գոհացած...:

Լուսահոգի հայրս կ'ըսէր.- «Տղաս, որքան աններելի վատույթին է խաբէլը, նոյնքան եւ աններելի է խաբուիլը... Մանաւանդ՝ կրկին ու կրկին անգամ խաբուիլը...»: Իսկ մենք տակաւին կը սիրենք, խաբուելէ յետոյ միայն՝ անդրադառնալ մեր սխալին... եւ կրկնել սխալը:

Այսօր Հայաստանի կառավարութիւնը պատմական եւ ճակատագրական քայլ մը առնելու վրայ է: Իշխանական խաւը որքան ալ ճիշդ նկատեր իր առած այդ «Բախտորոշ» քայլը, թելադրելի է, որ պետական այրերը լրջօրէն վերատեսութեան ենթարկեն իրենց հայեցակէտը:

Համաձայնագրին հայկական կողմին 5 պահանջներէն որեւէ մէկը, մեր հիմնական հարցերուն, մանաւանդ՝ Յեղասպանութեան եւ մեզմէ խլուած Հոդերուն վրայով ակնարկութիւն մը չունի երբեք, այլ ըսուած է միայն... «Առանց նախապայմանի»...

Սահմանները պիտի բացուին.

Դիւանագիտական յարաբերութիւններ պիտի հաստատուին,

Օդային, ցամաքային եւ երկաթուղային կապեր պիտի հաստատուին,

Թուրքիա Հայաստանի դէմ միջազգային գետնի վրայ կիրարկած իր բոլոր արգելքները պիտի ջնջէ,

Թուրքիոյ կողմէ՝ Հայաստանի դէմ եւ ուժանիւթի գետնի վրայ ի գօրու պահուող ժխտական դիրքաւորումը պիտի սրբազրուի:

Մինչդեռ թրքական կողմի պահանջներուն մէջ, տարիներէ ի վեր անոնց կողմէ մեզի պարտադրել ուզած պայմանները կա՛ն ու կը վերահաստատուի՛ն. ոչ միայն որպէս պայման, այլ՝ պահանջ՝ որ, մեր կողմէ ընդունուելու պարագային՝ չեմ գիտեր, թէ ինչով տարբերած պիտի ըլլայ «Պայման»էն:

Ընդունելով Թուրքիոյ պայմանները...

Ա.- Հայաստան Թուրքիոյ հետ ներկայիս ունեցած սահմանները պաշտօնապէս պիտի ճանչնայ:

Ինչպէս ծանօթ է՝ Հայաստան Սովետական Միութենէն անջատուելէ եւ իր «Անկախութիւն»ը մեկուսի հռչակելէ ետք, Թուրքիոյ հետ իր սահմանը պաշտօնապէս չէր ճանչնար: Թուրքիա բազմաթիւ անգամներ պահանջած էր, որ Երեւանի կառավարութիւնը 1920-ին ստորագրուած Կարս եւ Կիւմրիի դաշինքի հիման վրայ ընդունուած ներկայի այդ սահմանագիծը պաշտօնապէս ճանչնայ: Սակայն Հայաստան ո՛չ միայն չէր պատասխանած այս կոչերուն, այլեւ՝ Արեւելեան Անատոլոյի իր նախկին հողերը վերադարձնելու մասին պահանջ ներկայացուցած էր Թուրքիոյ: Որով, ներկայիս, ընդառա-

ջելով Անգարայի ակնկալութեան՝ ստորագրուած այս համաձայնութեան հիման վրայ, Հայաստան պաշտօնապէս հրաժարած պիտի ըլլայ իր պահանջէն»: («Մարմարա»)

Ահաւասիկ, թէ ինչ պիտի ըլլայ մեր «Ազգին շահերը ապահովող» ձեռքբերումներէն մին-

«ՀՐԱԺԱՐԻԼ ՄԵՐ ՀՈՂԵՐԷՆ»...:

Բ.- Յեղասպանութեան պնդումները ուսումնասիրելու նպատակով կոմիտէ մը պիտի կազմուի: Երեւանի կառավարութիւնը պաշտօնապէս ընդունած է, որ ցեղասպանութեան պնդումները պրպտող-ստուգող «Անկողմնակալ կոմիտէ մը» կազմուի:

Այս երկու ամենագլխաւոր եւ հիմնական պահանջները, մեր «Գրաւեալ հողերուն վերադարձը եւ Յեղասպանութեան ընդունումը» հայկական կողմի պահանջներուն մէջ յիշատակութիւն մ'անգամ չունին, այլ միայն՝ «Առանց պայմանի» մը կայ այնտեղ: Մինչդեռ թրքական կողմի պահանջները շեշտադրուած են միմիայն հետեւեալ երկու կէտերուն վրայ...:

Առաջին.- Պէտք է ա'լ մոռնալ մեր գրաւեալ հողերը, ներկայի սահմանները ճանչնալով.

Երկրորդ.- «Անկողմնակալ կոմիտէ մը» պէտք ստեղծել, որ քննէ ու ճշդէ, թէ՛ ցեղասպանութիւն եղա՞ծ է թէ ոչ:

Եթէ հարկ տեսնուի կոմիտէ մը կազմել քննելու համար, թէ արդեօ՞ք մեր երկրագունտը լուսաւորողը իրապէս Արեւն է... թէ ոչ... այդ պարագային արդար կը գտնենք կոմիտէ մըն ալ կազմել քննելու համար հայոց ցեղասպանութիւնը: Որով արեւի յոյսին պէս անհերքելի եւ անուրանալի ճշմարտութիւն մը եղող հայ ազգին «Յեղասպանութիւն»ը պէ՞տք է քննութեան եւ ուսումնասիրութեան առարկայ դառնայ, որ դիւանագիտական... խաղեր խաղցուին անոր շուրջ:

Տակաւին՝ կայ երրորդ պահանջ մը. «Հայաստանի պետութիւնը պիտի խոստանայ, որ ցեղասպանութեան պնդումները միջազգային գետնի վրայ ու Թուրքիոյ դէմ պիտի չգործածէ. այս նիւթի շուրջ լուսիական գործունէութիւն պիտի չտանի»:

Չորրորդ պահանջ.- Հայաստան եւս, Թուրքիոյ նման, պէտք է արխիւները բանայ:

Ինչպէս կը տեսնուի՝ թրքական պահանջներուն մէջ չկայ ո՛չ սահմանները բանալու, ո՛չ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու եւ ո՛չ ալ երթելակութիւն եւ առելուտուր ունենալու մասին որեւէ ակնարկութիւն, այլ՝ կա՛ն լոկ գրաւեալ հողերէն հրաժարելու եւ ցեղասպանութիւնը չհետապնդելու եւ զայն մոռնալու պահանջներ:

Իսկ երբ Թուրքիոյ կողմէ հայկական պահանջներու ընդունումը պայման մըն է, որ Հայաստանի կառավարութիւնը եւս ընդունի թրքական կողմին պահանջները, արդէն իսկ պահանջը կը դադրի պահանջ ըլլալէ, ու կը դառնայ՝ պայման: *Այդ պարագային՝ ո՞ր կը մնայ հայկական կողմին «Առանց նախապայման»ի... պայմանը...*

Տարիներէ ի վեր, թրքական կողմը միշտ յառաջ կը քշէ, պատմաբաններու միջոցաւ ցեղասպանութեան հարցը քննելու առաջարկը, կասկածի տակ դնելով անոր վաւերականութիւնը: Հայկական կողմը երբեք չընդունեց թրքական այս առաջարկը, նկատելով, որ ցեղասպանութիւնը անհերքելի իրականութիւն է եւ ամենեւին քննութեան առարկայ չի կրնար ըլլալ: Թուրքիոյ կողմէ ներկայացող սա «Քննութիւն»ի առաջարկութիւնը, դիւանագիտական խաղ մըն է, որ ցեղասպանութիւնը «Ուսումնասիրելու» պատրուակով, տարիներ երկարող խորհրդակցութիւններու ընթացքին, կարենայ իր պետական բոլոր մեքենայութիւնները գործի լծելով, ճնշում բանեցնել թէ՛ օտար պետութիւններու վրայ (բարեկամութիւնը խախտելու վտանգը միշտ առաջ քշելով) եւ թէ՛ օտար դիւանագետներուն եւ պատմաբաններուն կաշառելով կամ զանոնք սպառնալիքներու տակ պահելով, կարենայ հասնիլ վերջնական (թրքա-նպաստ) որոշման մը որդեգրումին:

Այսօր, այն բոլոր թուրք պատմաբանները, որոնք կ'ընդունին հայկական ցեղասպանութեան ստոյգ ըլլալը, վաւերականութիւնը, եւ քաջութիւն կը ցուցաբերեն ճշմարտութիւնը խօսելու, մինչեւ իսկ կշտամբելով իրենց՝ թրքական պետութեան ուրացումի նենգ քաղաքականութիւնը, Կ'ԱՊՐԻՆ ՄԱՀՈՒԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՒՄ ՏԱԿ:

Թուրքիոյ նախորդ՝ Մշակոյթի նախարար Եուսուֆ Հալլաճօղլու, դեռ կը յոխորտայ ըսելով. «Հայկական ցեղասպանութեան հարցի մէջ, Անգարայի սիրտը հանգիստ է. որովհետեւ ի ձեռին ունի աւելի քան մէկ միլիոն փաստաթուղթ, որոնք կը հաստատեն Անգարայի տեսակէտները»:

Ապա, ինքն իր կողմէ կ'եզրակացնէ թէ՛ ինչ պիտի ըլլայ այդ «Անկողմնակալ կոմիտէ»ին որոշումը, ըսելով. «Եւ երբ պատմաբաններու յանձնախումբը, [կամ անկողմնակալ կոմիտէն] չկարենայ յստակ կերպով փաստել, թէ ցեղասպանութիւն կատարուած է, այս ատեն հայկական պնդումները ամբողջովին աղբանոց պիտի նետուին»: Եւ որպէսզի այս կանխագուշակումը իրականանայ եւ յանկարծ սիւալմամբ հակառակը չստացուի, ան «Չգուշութեան կը հրաւիրէ իր պետութիւնը, որպէսզի յանձնախումբի անդամակցութեան չհրաւիրուին այնպիսի պատմաբաններ [կամ կոմիտէի անդամներ]» որոնք «Նախապաշարուած» անձեր ըլլան: Այսինքն՝ Հալլաճօղլուն կը քաշուի բուն բառը գործածելէ եւ «Ճշմարտախօս» բառը կը փոխարինէ «Նախապաշարուած»ով...

Այնպէս որ, ըստ իրեն՝ ճշմարտախօս պատմաբաններու կամ կոմիտէի անդամներու մուտքը, արգիլուած պէտք է ըլլայ այդ «*Անկողմնակալ կոմիտէ*»-էն ներս...:

Ահա՛ թէ ինչպիսի ստոր նենգամտութիւններով թուրքը կ'աշխատի համաձայնութիւն կնքել հայկական կողմին հետ:

Ինչ կրնան ըլլալ հետեււանքները այդ բանակցութիւններուն:

Բոլոր այն օտար պետութիւնները, որոնք պաշտօնապէս ճանչցած են հայոց ցեղասպանութիւնը, «*Ետ դարձ*» պիտի կատարեն թուրքին կողմէ իրենց ուղղուած սա կշտամբանք-ազդարարութեան վրայ. «*Երբ մենք հայերուն հետ կը բանակցինք արդէն, իրար հետ մեր հարցերը լուծելու, դուք ինչու կը միջամտէք ու կը խառնէք մեր գործը*»:

Նման ազդարարութիւն մը ուղղուած պիտի ըլլայ նաեւ բոլոր օտար դիւանագէտներուն եւ երեսփոխաններուն, որոնք մեր իրաւունքները կը պաշտպանեն իրենց խորհրդարաններէն ներս:

Նոյնպիսի ազդարարութիւն եւ սպառնալիք՝ բոլոր այն պատմաբաններուն, ի մասնաւորի թուրք պատմաբաններուն, որոնք համարձակութիւնը կ'ունենան ճշմարտութիւնը խօսելու...:

Ու այսպէս՝ յաջողելով մեզ հեռացնել ու բաժնել մեր բոլոր օտար բարեկամ պետութիւններէ ու անհատներէ, քանդել էտք մեր արտաքին բոլոր յենարանները, տակաւին մեզմէ ալ կը պահանջեն, որ «*Մենք, միջազգային գետնի վրայ, Թուրքիոյ դէմ ա'լ ցեղասպանութեան պնդումներ չգործածենք. այս նիւթի շուրջ «Լույսիական» գործունէութիւն չմշակենք...*»: Մէկ խօսքով՝ ըլլալով ամբողջութեամբ անդամալուծուած, ապաւինինք թուրքին «Բարեգրութեան»... Դահլիճին հետ գործակցաբար՝ լուծենք մեր տարակարծութիւնները...:

Եւ երեւակայել, որ երբ կը փորձեն հայկական կողմին պարտադրել այսպիսի ամբողջական անձնատուութիւն մը, տակաւին Թուրքիոյ մէջ կը գտնուին «Ընդդիմադիր» կուսակցութիւններ որոնք աղմուկ կը բարձրացնեն ու կը քննադատեն իրենց կառավարութիւնը, որ «*Չափազանց զիջումներու կ'երթայ հայերուն նկատմամբ՝ վտանգելով Թուրքիոյ շահերը...*»:

Ինչպիսի՛ ստոր մարտավարութիւն է սա, թրքատիպ նենգութիւն...

Եթէ նման համաձայնագիր մը ստորագրուի եւ հայկական կողմը ճանչնայ Թուրքիոյ ներկայ սահմանները եւ ճամբաներու բացումով ազատ երթելէկ սկսի, անհաւանական չէ, որ Ռուսաստանն եւս, նկատելով որ սահման պահելու կարիք չկայ այլեւս, քաշէ իր զօրքերը Հայաստանէն, մեզ ամբողջութեամբ յանձնելով թուրքին բարեգրութեան...:

ՈՒ ԱՅՍ ԲՈԼՈՐԷՆ ԵՏՔ ՏԱԿԱԴԻՆ ՊԻՏԻ ՅՈՒՍԱՆՔ, ՈՐ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՆՔ ԱՊԱՀՈՎԵԼ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԹՈՒՐԹԻՆ

«ԲԱՐԻ» ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ...:

Մենք պիտի ուզեինք շա՛տ համեստաբար խորհուրդ տալ մեր հայրենի իշխանութիւններուն, որ լրջօրէն վերատեսութեան ենթարկեն իրենց հայեցակէտը եւ խնայեն Ազգին ճակատագրական մեծ սխալի մը գործուիլը:

Չմոռնանք, որ խաբուիլը աններելի մեղք մըն է:

Չարդարացնե՛նք, անգլիացի տխրահռչակ պետական գործիչ Կլատսթոնի տուած «Գնահատականը»: Ան ըսած էր մեր՝ Հայ Ժողովուրդի մասին՝ «Խաբուելէ չոգնող ժողովուրդ»:

Պահն է, խորը մտածելու...:

«Նայիրի», 1 Յունուար 2010

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԻ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԴՊՐՈՅ ... ԵՒ ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՏՆՕՐԷՆՈՒՀԻՒՆ ՀԵՏ

Հեռաձայնային խօսակցությունը մը սկիզբ առաւ այս գրութիւնը:

Տարուան ընթացքին մի քանի անգամ հեռաձայնային խօսակցութիւն կ'ունենանք Պրն. Ժիրայր Թօսունեան-Նայիրիի հետ, երբ հարկ տեսնուի խօսիլ հարցի մը մասին:

Այս տարի եւս, տիկնոջս հետ, Հայաստան գացեր էինք Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսները մնալու այնտեղ եւ կիսելու մեր հացը հայրենի եղբայրներուն եւ քոյրերուն հետ:

Այդ շրջանին էր՝ երբ օր մը պէտք զգացի խօսիլ Պրն. Ժիրայրին հետ: Երբ ան իմացաւ որ ես Հայաստան կը գտնուիմ, փափաք յայտնեց որ անպայման այցելութիւն մը տամ Երեւանի Ռուբէն Մեւակի անուան դպրոցին եւ ստանալիք տպաւորութեանս մասին թղթակցութիւն մը ուղարկեմ «Նայիրի»ին: Բնական է, որ պիտի չմերժէի յարգելի բարեկամիս խնդրանքը: Որով, 21 Հոկտեմբեր 2008-ին գացինք այցելելու Ռուբէն Մեւակի անունը կրող, Մեծ նահատակին նուիրուած դպրոցը, որ կը գտնուի Նոր Արաբկիր շրջանին մէջ:

Դպրոցը, արտաքինէն դիտուած՝ մեծ ու հոյակապ կառոյց մըն է, ցանկապատով շրջանակուած եւ ապահովուած: Երբ ներս մտանք, ընդարձակ բակին մէջ առաջին անգամ հանդիպեցանք Ռուբէն Մեւակի կիսանդրիին, գետնէն դուրս գալով պատուանդանի մը վրայ: Յարգանքով խոնարհելէ ետք իր սուրբ յիշատակին առջեւ, ուղղուեցանք դէպի դպրոց: Մտանք ներս, ուր սալայատակուած միջանցքին մէջ հանդիպեցանք երկու ուսուցչուհիներու, որոնց բարեւելէ եւ մեր ինքնութիւնը յայտնելէ ետք, խնդրեցինք, որ մեզ առաջնորդեն Տնօրէնուհիին մօտ:

Տնօրէնուհի Ճուլիա Ղազարեան իր աշխատասենեակին մէջ շատ սիրալիք ընդունելութիւն ցոյց տուաւ մեզի եւ, բարեգալուստ մաղթելէ ետք, հրաւիրեց մեզ նստիլ իր գրասեղանին շուրջ:

Սուրճի հիւրասիրութեամբ հաճելի խօսակցութիւններ ունենալէ ետք, յայտնեցի մեր այցին շարժառիթը, ըսելով որ մեր անակնկալ ներկայութեան նպատակն է տեղեկութիւններ ստանալ կրթական այս հաստատութեան մասին, որուն ծանօթ ենք հեռուէ-հեռու, եւ պատրաստել յօդուած մը յատ-

կապել «Նայիրի» թերթին համար:

Տնօրենուհին սիրով ընթացք տուաւ մեր խնդրանքին, եւ ըսաւ, թէ պատ-
րաստ է պատասխանելու մեր հարցումներուն:

**Հարցում.- Տիկ. Ղազարեան, կրնա՞ք ըսել, թէ երբ հիմնուած է այս
դպրոցը:**

Պատ.- Դպրոցը հիմնուած է 1971 տարեթիւին: Ես, որպէս տնօրէն՝ նշա-
նակուել եմ այս դպրոցում 1993 թուականին: Իսկ 1994 թուին դպրոցը կոչուել
է Ռուբէն Սեւակի անունով:

Հ.- Ի՞նչ էր նախապէս անունը այս դպրոցին:

Պ.- Մինչ այդ, անունը եղել է Ալուսա Չափարիցէի անուն 151 դպրոց:

Իմ նշանակուելուց յետոյ, դուք գիտէք, որ այդ ժամանակ շրջափակման
մէջ էր գտնուում Հայաստանը: Այդ տարիներին կոլեկտիւի [ուսուցչական կազմ
եւ պատասխանատու անձեր] միաձայն որոշմամբ, ցանկութիւն յառաջացաւ
վերանուանել մեր դպրոցը: Ինչո՞ւ ոչ: Մենք ունենք լաւ գրողներ, մտաւոր
գործիչներ, մտաւորականներ, որոնց մէջ նաեւ՝ Ռուբէն Սեւակն էր: Այդ օրե-
րից մէկին, ճիշդն ասած՝ մտածեցի առաջարկութիւն անել կոլեկտիւին թէ՛ ո՞ւմ
անունով կը ցանկաք վերանուանել դպրոցը: Միաձայն որոշմամբ ընդունուեց
Ռուբէն Սեւակ անունը: Նախընտրութիւնը ասելի շատ եղաւ, ճիշդ ասած՝ իմ
կողմից: Այդ օրերին ես նորանշանակ տնօրէն էի: Եւ այդ 1993 տարուան
Մարտի 15-ին նշանակուեցի տնօրէն: 1993-ի առաջին ամիսներից մէկին իրօք,
նստած այս սենեակում, մտահոգուած էի այս դպրոցի վիճակի վերաբերեալ,
ապագայ անելիքների վերաբերեալ, այս մեր դժուար իրավիճակի վերաբեր-
եալ: Կարո՞ղ էք պատկերացնել. երախաների համար վառարաններ էինք
վառում դպրոցում, որպէս ջեռուցում դասարաններին:

Հ.- Ի՞նչ բանէ մղուած առաջարկեցիք Ռուբէն Սեւակ անունը:

Պ.- Իմ ձեռիս, տեսէք, հիմա էլ կայ դրուած Ռուբէն Սեւակի երկհատոր-
եակը: Երբ նստեցի եւ առաջին էջը բացի, տեսէք. ահա՛ այս բառերն են, որ ինձ
համար համարուեցին խորհրդանիշ եւ ապագայի բոլոր ծրագրերի իրակա-
նացման սկիզբ:

Այն բառերը որ ես կարդացի այս գիրքի մէջ՝ ահաւասիկ.-

ԵՒ ԽՈՅԱՅԱՅ ՆՈՒԻՐՈՒՄԷՍ ՏԵՆԴԱՀԱՐ

ՀՈՆ, ՈՒՐ ՆԻՀԱՐ ՃԱՌԱԳԱՅԹ ՄԸ ԿԱՐ ԼՈՅՍԻ...»:

Եւ ես նստած մտածեցի, որ այս լոյսը երեւի թէ պէտք է լինի մեր ժողո-
վուրդին յոյսը, եւ այդպէս էլ դիմեցի մեր դպրոցի կոլեկտիւին:

Հ.- Սակայն ձեր այս անուանակոչության որոշում-առաջարկը անշուշտ թէ Կրթական նախարարության կողմէ վաւերացման կարիք ունէր. կառավարութիւնը վաւերացու՞ց զայն:

Պ.- Մինչ այդ մենք դիմեցինք անուանակոչության կոմիտէին: Այդ ժամանակ քաղխորհուրդի կից կը գործէր այդ անուանակոչության կոմիտէն: Այդտեղ մեզ առաջարկեցին մէկ քանի անուններ, որոնցմէ մէկուն կամ միւսին անունով կարող էինք կոչել մեր դպրոցը: Առաջարկեցին անունները Արշակ Չոպանեանի, Ռուբէն Մեւակի եւ Էլի երկու գրողների: Չեմ կարող հիմա բոլորը յիշել: Երբ առաջարկ եղաւ Ռուբէն Մեւակ անունը, մեր հայոց պատմութեան եւ գրականութեան ուսուցիչների կողմից այնպիսի՝ ջերմութեամբ ընդունուեց այդ անունը, որ ես հակուեցի դէպի այդ կողմը: Եւ շատ լաւ զգացի, մտածելով, որ ինչքան լաւ պատրաստուած են հայ դպրոցի ուսուցիչները, որոնք անմիջապէս ճանաչելով նրան, արդէն իսկ սկսեցին ասմունքել Ռուբէն Մեւակի քերթուածներից եւ պատմել նրա մասին: Եւ միանշանակ այդ որոշումը ընդունուեց: Եւ ինձ հրաւիրեցին անուանակոչության կոմիտէ եւ հարց եղաւ.- Իսկ ինչո՞ւ «Ռուբէն Մեւակ»: Ես ասացի.- Որովհետեւ ե՛ւ հայրենասէր է ե՛ւ բժիշկ է ու մտաւորական, եւ միւսների համեմատութեամբ նրա առաւելութիւնը այն է, որ ինք եղեռնի զոհ է: Այսինքն՝ իր կեանքը տուել է յանուն մեր ժողովուրդին: Եւ ընդունուեց իմ առաջարկութիւնը եւ դպրոցը վերանուանուեց Ռուբէն Մեւակի անունով:

Հ.- Ռուբէն Մեւակի ժառանգներէն ոեւէ մէկուն հետ յարաբերութիւն ունի՞ր:

Պ.- Մենք այդ ժամանակ չգիտէինք, որ Ռուբէն Մեւակի հարազատները կենդանի են: Իրօք մտածեցինք՝ 29 տարեկան հասակում նա մահացել է եւ չենք պատկերացրել որ կարող է իրեն հարազատները կենդանի լինեն:

Արդէն մենք 7 ամիս աշխատում էինք Ռուբէն Մեւակի անուան դպրոցի կարգավիճակով, երբ հիւր է գալիս մեզ մօտ Մարտէլի Հայ Համայնքի Առաքելական եկեղեցիի Առաջնորդ՝ Գեղը. Տարօն Եպս. Ճերէճեանը: Իր մեծ քոյրը ապրում է դպրոցի հարեւանութեամբ:

Մի օր ինք այցելում է իր քրոջը: Այդ պահին նկատում է, որ երեխաները դաս են պատրաստում եւ շատ լաւ անգլերէն են կարդում: Սրբազանը զարմանում է եւ հարցնում. «Ռուբ ո՞ր դպրոցում էք սովորում, որ էդքան լաւ անգլերէն գիտէք»: Երախաները պատասխանում են. «Ռուբէն Մեւակի անուան դպրոցում»: Սրբազանը՝ ճիշդ ասած՝ զարմանում է եւ ասում. «Ո՞րտեղ է այդ դպրոցը»: Ասում են. «Մեր տան հարեւանութեամբ»:

Յաջորդ օրը ես, ուսուցիչները եւ շատ աշակերտներ կանգնած դիմաւոր-

բում ենք եկեղեցական տարազով մի հոգեւորականի, որ գալիս է մեր դպրոցը: Դիմելով ինձ նա ասաց. «Դո՛ւք էք տնօրէնուիին դպրոցի»: Ասացի «Այո»: Ասաց. «Ես Մարտէլի սրբազան Տարօն Ճէրէճեանն եմ»:

- Աստուած օգնական, սրբազան հայր, բարի եկաք,- ասացիք, լարուած հետաքրքրութեամբ:

«Ճի՛շդ է, որ ձեր դպրոցը կը կրէ Ռուբէն Սեւակի անունը»: Պատասխանի տեղ ցոյց տուեցինք շէնքի մուտքի պատին փակցուած ցուցանակը:

Սրբազանը հրաւիրեցինք ներս: Մնաց երկար: Զրուցեցինք: Տուեցինք բացատրութիւններ այն մասին, թէ ինչ հանգամանքների մէջ կրթարանը կոչուել է Ռուբէն Սեւակի անունով:

Սրբազանը մեն՝ ուրախութիւն ապրեց: Յետոյ հարց տուեց.

- Դուք գիտէ՞ք, թէ Ռուբէն Սեւակի գաւակները կենդանի են: Նրա եղբորորդին կենդանի է եւ իր ամբողջ կեանքը նուիրել է Ռուբէն Սեւակի վերակենդանացման եւ նրա գաղափարականի տարածման:

Ինձ համար դա, ի հարկէ, անակնկալ էր՝ եւ ընդհանրապէս ամբողջ մեր մանկավարժական կոլեկտիւին համար: Մենք բոլորս զարմացանք: Ինչպէ՞ս կարող է եղպէս բան լինի: Որովհետեւ մենք ոչ փնտռել էինք եւ ոչ էլ մտածել, որ կարող է 29 տարեկան Ռուբէն Սեւակ ամուսնացած լինել: Եւ կարծում էինք, որ «Դրսում», ընդհանրապէս աւելի ուշ են ամուսնանում: Ուրեմն, առաւել եւս պատճառ կար կարծելու, որ Ռ. Սեւակ կարող էր ժառանգ ունենալ:

Սրբազանը խնդրեց, որ այստեղից, տեղւոյն վրայ հեռաձայնի Ֆրանսիա: Հեռաձայնեց եւ առաջին խօսքը եղաւ թէ՛ Պրն. Չիլինկիրեան, ձեզ ուրախ մի յուր պիտի յայտնեմ, Երեւանում կայ Ռուբէն Սեւակի անուան դպրոց:

Ըստ երեւոյթին՝ Պրն. Յովհաննէս Չիլինկիրեանն էլ շատ զարմացաւ այս բանից եւ անմիջապէս խնդրեց, որ լսափողը ինձ փոխանցի:

Լսափողը ինձ փոխանցելուց յետոյ, ես ասացի. «Բարեւ ձեզ»: Ասեց. «Դո՛ւք էք տնօրէնուիին դպրոցի»: Ասացի. «Այո. իմ անունը Ճուլիա Ղազարեան է»: Մի պահ լռութիւն եղաւ: Զգում էի Պրն. Չիլինկիրեանին յուզմունքը այդ պահին, որ ցանկութիւնն է եղել Հայաստանում ունենալ որեւէ կառոյց՝ կրթօճախ լինի, փողոց լինի, մի հաստատութիւն լինի, որը կը յաւերժացնի Ռուբէն Սեւակի անունը: Որովհետեւ ինքը այն եզակի անձնաւորութիւններից է, որ արժանի է առ այսօր մեծարուելու, առ այսօր գնահատուելու, եւ նա շատ վառ օրինակ է հայրենասիրութեան մեր աշակերտութեան համար, որոնց մէջ այդ ներարկւում է 6 տարեկան հասակից, հայրենասիրութեան գաղափարը:

Ռուբէն Սեւակն մեր բոլորիս համար այն տիպարն է, որին հետեւելով պէտք է նոյնպիսի հայրենասէր լինենք: Եւ այսօր մենք այնքան շնորհակալ ենք, որ մեր սաներն անգամ ազգային, մեր հայկական բանակում ծառայելիս,

բարձր են գնահատում: Եւ մենք բանակի հրամանատարութիւնից նամակներ ենք ստանում, որ շատ լաւ դաստիարակում են մեր այս դպրոցի սաները:

Ու Էդայէ՛ երբ խօսեցինք, Պրն. Չիլինկիրեանը արդէն կապ հաստատեց մեզ հետ: Յետոյ դարձաւ դպրոցին բարերարը: Այդ ժամանակ դպրոցը շատ տխուր վիճակում էր: Պրն. Չիլինկիրեանը իր հնարաւորութեան սահմաններում օժանդակեց մեզ:

Եկէք, ձեզ մի բան ասեմ. Պրն. Չիլինկիրեանը բաւականին, շատ համեստ անձնաւորութիւն է, եւ այսպէս է ասում. «Եթէ կարողանամ օգնել՝ դա չպէտք է շահարկուի որպէս «Ես օգնել եմ», «Արել եմ»: Ես դա անում եմ իմ հոգու համար, ես անում եմ, որ մեր հայ զաւակներին ինչ որ մի կերպ կարողանամ օգտակար լինել, ապահոված լինել ինչ որ մի բանով»:

Մեր դահլիճը վերանորոգուեց Պրն. Չիլինկիրեանի օգնութեամբ: Նաեւ նրա օգնութեամբ պատրաստուեց երախաների աշակերտական նստարաններ որ այն ժամանակ մենք չունէինք: Միջանցքներն ու իմ այս սենեակը վերանորոգուեց, եւ արդէն 10 տարի է, որ այս աշխատանքները կատարւում են...:

Եւ ամենակարեւորը՝ ստեղծուեց Թանգարան, Յիշատակի Տուն Ռուբէն Մելակի անուան, եւ ամբողջ այդ տեղի նկարները եւ արխիւը, ամբողջ Պրն. Չիլինկիրեանի կողմից փոխանցուեց դպրոցին, եւ մեր երախաները Ռուբէն Մելակի բոլոր դասերը լսում են այնտեղ, ուր միջոցառումներ են կազմակերպւում: Հրագդանից, Արգնիից գալիս են մեր մօտ երախաները իրենց ուսուցիչների հետ, հայոց լեզուն ու գրականութիւնը պարապելու էստեղ: Արեւմտահայ գրողների մասին երբ տալիս են տեղեկութիւն, անպայման, որպէս օրինակ, նաեւ այցելում են մեզ մօտ, եւ երախաները ճանաչում են, թէ ով է եղել Ռուբէն Մելակը, ինչպէս է մահացել, եւ ինչ են եղել նրա սկզբունքները եւ գաղափարականը: Իսկ մեր դպրոցի ցանկացած ուսուցիչ, ցանկացած աշակերտ, աշխատում են մեծ նուիրումով եւ իրօք, մենք շատ բարձր ենք պահում Ռուբէն Մելակի անունը: Եւ այսօր, մեր շրջանաւարտների 89 տոկոսը կարող եմ ասել, եթէ ոչ 90-95 տոկոսը, ընդունւում են բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ եւ դպրոցը այսօր ճանաչւում է լաւագոյններից մէկը, որը ունի լաւ գրագէտ, մանկավարժական կոլեկտիւ, որոնք իրօք աշխատում են նուիրումով եւ մեր սաները դա գնահատում են:

Իսկ Ֆրանսիայում, սրբազանը ներկայացրել էր ինձ որպէս տնօրէն, եւ իմ մանկավարժական աշխատանքը: Էքս-Ան Բրովանս նահանգ կայ այնտեղ: Ես հրաւեր ստացայ եւ մասնակցեցի այդտեղ տեղի ունեցած միջոցառումներին եւ պարգեւատրուեցի արծաթէ մետալով եւ տիբլոնով իրենց կողմից, որը ես պահում եմ սրբութեամբ, եւ իրօք շնորհակալ եմ եւ ընդհանրապէս շնորհակալ

եմ նաեւ ֆրանսահայ բնակչութեանը, ինչու չէ՝ նաեւ ֆրանսացիներին, որոնք առաջիններից մէկն են որ մեր կողքին են եւ ընդունում են ցեղասպանութիւնը որպէս անուրանալի ճշմարտութիւն:

Հ.- Դուք իմանալէ ետք, որ Ռուբէն Սեւակ ունի զաւակներ եւ եղբորորդի, Պրն. Յ. Չիլինկիրեանը, երբեւիցէ անոնցմէ մէկը կամ աւելին այցելութեան եկա՞ն տեսնելու այս դպրոցը:

Պ.- Տիկ. Շամիրամն է մեր հիւրը լինում տարիներ շարունակ: Տիկ. Շամիրամը եկել է դպրոց: Բաւականին մեծ ուրախութիւն է մեզ համար, երբ Տիկ. Շամիրամն է գալիս: Եւ հէնց ինքը՝ Տիկ. Շամիրամն է որ, ինչպէս ասում են՝ կենդանի վկան է ցեղասպանութեան: Իր վերջին այցելութեան Տիկ. Շամիրամին ընդունեց Պրն. Հայկ Դեմոեանը, Ցեղասպանութեան Թանգարանին տնօրէնը: Տիկ. Պելլա Քոչարեանին հետ հանդիպում եղաւ: Հանդիպում եղաւ նաեւ քաղաքապետի հետ, որը նաեւ շնորհակալութիւն յայտնեց այցելութեան համար եւ մենք այդ այցելութեան ֆիլմը նկարահանեցինք:

Հ.- Տիկ. Շամիրամը Ռուբէն Սեւակի դո՞ւստրն է:

Պ.- Տիկ. Շամիրամը Ռուբէն Սեւակի դուստրն է: 94-ամեայ Տիկ. Շամիրամը, այո, մեր հիւրն է եղել եւ միշտ գալիս է եւ մենք լուր ունենք իրանից, որ այս տարի էլ, Ապրիլ 24-ին, նորից մեր հիւրը պէտք է լինի: Իսկ իր՝ Ռուբէն Սեւակի մանչ զաւակը՝ Լեւոնը, երկու տարի առաջ մահացաւ Ֆրանսայի մէջ:

Մի օր իրեն հարց տուեցի եւ ասի.- Տիկ. Շամիրամ, ինչով բացատրել ձեր այս պատկառելի տարիքը: Նրանից երբեք չէք ազդուել: Ձեր այդ գեղեցիկ արտաքինը պահում էք:

ԴԱ՝ ԻՄ ՀԱՅՐԻԿԻ ԱՐԻՒՆԵ Է ՀՈՍՈՒՄ ԻՄ ԵՐԱԿՆԵՐՈՒՄ: ԱՊՐՈՒՄ ԵՄ ՆԱԵՒ ԻՄ ՀՕՐ... ՉԱՊՐԱԾ ՏԱՐԻՆԵՐԸ... ԵՒ ԵՄ ԱՅԴՊԷՍ... ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՄ.- եղաւ պատասխանը:

Հ.- Քանի՞ աշակերտ ունիք դպրոցին մէջ:

Պ.- Մենք հիմա ունենք 600 աշակերտ, իսկ դպրոցը նախատեսուած է 400 աշակերտի համար:

Հ.- Ուրեմն, պէտք եղածէն շատ աւելի ունիք:

Պ.- Այո:

Հ.- Ի՞նչպէս կը տեղաւորէք զիրենք:

Պ.- Տեղաւորում ենք: Դասարանները բաւականին ընդարձակ են եւ իւրա-

քանջիւր դասարանում, մեզ մօտ 30-ից 35 աշակերտ կայ: Մենք կարողանում ենք տեղաւորել մէկ հերթով:

Հ.- Քանի՞ ուսուցիչ ունիք:

Պ.- 47 ուսուցիչ: Ուսուցիչները մի քիչ շատ են:

Հ.- Ի՞նչպէս կը կատարուի դպրոցին ֆինանսաւորումը:

Պ.- Դպրոցի ֆինանսաւորումը կը կատարուի ըստ աշակերտի: Դպրոցի պիւտճէն տարեկան կազմաւորուում է ըստ աշակերտների թւոյի, եւ դա լինում է մեր ընդհանուր ֆինանսաւորումը: Նաեւ արդէն շատ քիչ դրուած է այն հարցը, որ շէնք պահպանման համար գումարներ կը տրամադրուեն, որոնք մենք կը կարողանանք օգտագործել շէնքի պահպանման համար:

Նախկինում այդ ծախսերով մենք դա անում էինք, իսկ հիմա աւելի պէտք է: Ես դրա մասին ասացի եւ կրթական ծրագրերի զարգացման եւ շէնքերի վերանորոգման աշխատանքներն են կատարուում, որի համար ես շնորհակալ եմ մեր կառավարութիւնից, որովհետեւ հէնց քաղաքապետի անմիջական աջակցութեամբ, անցեալ տարի մեր դպրոցը ջեռուցուեց, այսինքն մենք ունեցանք առանձին կաթսայատուն, որը կառուցուեց դպրոցի տարածքում եւ բոլոր դասարանները շուրջօրեայ ջեռուցում ստացան կազով: Եւ դա, ի հարկէ, մեծ օգնութիւն էր մեզ համար, որի համար շնորհակալ ենք նաեւ մեր քաղաքապետին, Պրն. Երուանդ Զախարեանին, եւ հիմա՝ այդ աշխատանքը գնում է: Հէնց հիմա մեզանից պահանջում են, թէ ինչի կարիք ունի դպրոցը:

Այսօր մենք մեծ կարիք ունենք հիմնանորոգման, պատուհանները, դասասենեակները վերանորոգման եւ ինչու չէ՝ նաեւ աւելի շատ օժանդակ տիտակոյիկ նիւթերի ստեղծման, ունենալու եւ միջոցների:

Հ.- Դպրոցը համակարգիչներ ունի՞, որ աշակերտները կարենան քայլ պահել ժամանակակից թէքնօլոճիներուն հետ:

Պ.- Այո: Ուրախ ենք յայտարարելու, որ վերջերս նուէր ստացանք «Ա Էլէքթրօնիք» ֆիրմայէն, որ «Արայի» ֆիրմային հետ միասին մեզի նուիրեցին համակարգչային մի սենեակ, որտեղ կայ ժամանակակից 20 համակարգիչ, իրենց ամբողջ սարքաւորումներով, եւ դա մեծ օգնութիւն էր նաեւ մեր երախաներին, որ իրենք կարողանան ժամանակակից տեխնոլոյկեաներում եւ աշխատեն եւ ունենան, որովհետեւ այսօր ոչ բոլոր ընտանիքները ունեն համակարգիչ, որ կարողանան դա օգտագործել: Ի տարբերութիւն արտասահմանին, որ բոլորը ունեն: Էստեղ մենք ենք սովորեցնում երեխաներին որ կարողանան աշխատել:

**Հ.- Աշակերտներ որեւէ վճարում կը կատարե՞ն իրենց ուսումնա-
նութեան համար:**

Պ.- Ոչ: Կրթութիւնը մեր մօտ բոլորովին ձրի է: ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒ-
ԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄՈՎ, ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ ՁՐԻ, ԲՈԼՈՐԻՆ
ՀԱՄԱՐ, ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ:

Ի հարկէ՝ հանրապետութիւնում կան մասնաւոր դպրոցներ, որտեղ
վճարում են ուսման համար ծնողները, եւ այնտեղ, աշակերտների թիւը, ի
տարբերութիւն մեր դպրոցների, անլի քիչ է:

Մեզ մօտ պէտք է լինի 25-ից 30 աշակերտ, որպէսզի դասարանը ձեւա-
ւորուի: Այնտեղ կարող է 10-ից 12 հոգի ունենան մասնաւոր դասարանները:

Հոն ծնողները կը վճարեն, սակայն մեզ մօտ պետութիւնը կը վճարի
ուսուցիչին, այդ աշխատանքները կատարելուն համար:

Հ.- Ուսուցիչներուն աշխատավարձը գոհացուցի՞չ է:

Պ.- Ինչքան էլ աշխատավարձը բարձր լինի, զինների թանկացումը ոչինչի
է վերածում աշխատավարձի ամէն բարձրացում: Որով ուսուցչի գնողական
կարողութիւնը մնում է տկար: Իսկ ապրանքների գների թանկացումը, քմա-
հան բարձրացումը արգելող չկայ: Կայ այդ՝ որ ուղղակի օգնում է կառավա-
րութիւնը, որ այս թանկացած ծանրութիւնը մենք շատ չզգանք, որովհետեւ
իրենք էլ ինչ որ բան աւելացնում են, սակայն նորից նոյն սահմանի վրայ մնում
ենք մենք: Բայց ի հարկէ, յոյս ունենք, որ ամէն ինչ լաւ լինի, նաեւ ուսուցիչը
արժանավայել գնահատուի:

Եւ ճիշդ երբ 1997 թուականին Աւստրալիայում էի, կրթական համակարգը
ուսումնասիրելու, ի հարկէ կառավարութեան կողմից էր պատուիրակու-
թիւնը, եւ այնտեղ յայտարարեցի, որ իմ աշխատավարձը 20 տոլարի
համարժէք է: Այդ ժամանակ գրեթէ բոլորը զարմացան եւ ասին, թէ մի գուցէ
եւ մի գերօ պակաս եմ ասում եւ կամ իրօք չգիտեմ տօլարին արժէքը: Բայց
ոչ իրօք, այդպէս էր մեզ մօտ:

Իսկ երբ մեզ ասում էին մի քանի տարի առաջ, որ կը գայ մի պահ, որ
ուսուցիչը հարիւր տօլարից աւել աշխատավարձ կը ստանայ, դա մեզ համար
հէքիաթ էր եւ մենք զարմանում էինք: Այսօր, իրօք, իրականութիւն է դա: Ես
ունեմ ուսուցիչներ, որոնք ստանում են 90 հազար: 100 հազար [դրամ]
աշխատավարձ, այդպէս որ էր հէքիաթը դարձաւ իրականութիւն եւ դրա
համար ես վստահ եմ, թէ լաւ է լինելու, իսկ եթէ ինքը՝ ղեկավարը լաւատես է,
ուրեմն ամէն ինչ լաւ է լինելու:

Հ.- Որպէս վերջաբան՝ ինչ խօսք ունիք «Նայիրի» թերթին համար:

Պ.- Պրն. Ժիրայր Նայիրին մեր դպրոցի լաւագոյն բարեկամն է, որին մենք շատ սիրում եւ յարգում ենք, որի թերթերը սիրով ընթերցում են մեր ուսուցիչները: Ես պարզապէս իմ ողջոյնի խօսքն եմ ուղղում իրեն. լինի առողջ. թերթը միշտ գոյատեւի եւ միշտ իրեն տեսնենք այս պաշտօնում որպէս այս թերթի գլխաւոր խմբագիր: Եւ ես հպարտութիւն եմ ապրում որ ինքը արժանացել է նաեւ Պետական եւ Մայր Աթոռի մրցանակների, եւ տայ Աստուած, որ այդ մրցանակները միշտ աւելանան:

Հ.- Կանոնաւոր կը ստանա՞ք «Նայիրի» շաբաթաթերթը:

Պ.- Գիտե՛ք՝ մի պահ մեզ մօտ խախտուեց այդ օրինաչափութիւնը: Բայց Պրն. Չիլինկիրեանի օգնութեամբ որ ինքը անընդհատ երեւի թէ տեղեակ էր պահում Ժիրայր Նայիրիին, իմացանք, որ խախտումը թռիչքների հետ էր կապուած: Չէ՞ որ իրենց մօտ շրջափակում եղաւ, այդ ժամանակ խախտուել էր, իսկ հիմա արդէն նորմալ ստանում ենք եւ իրօք, այն ինչ որ կատարւում է սփիւռքում, մենք տեղեակ ենք մնում այս թերթի միջոցաւ:

Եւ ամենակարեւորը՝ իմ ցանկութիւնն է, որ Սփիւռք-Հայաստան պետք է լինի մէկ օղակ, մէկ ոյժ, քանի որ Հայաստանը առանց Սփիւռքի չի կարող՝ եւ Սփիւռքը առանց հայրենիքի չի կարող, եւ դրա համար է, որ մեր բոլոր ջանքերը պետք է լինեն համատեղ, որ մենք կարողանանք պահել եւ Սփիւռքը եւ Հայրենիքը:

Յ. Տ.- Մեր բոլոր արմատները հայրենի հողին մէջ են: Մենք հայրենիքէն դուրս, օտար հողերու վրայ, արմատ չունինք եւ գիտենք, որ անարմատ ծառը օր մը անպայման փուլ կու գայ: Այո. ճիշդ է որ Սփիւռքի բոլոր երկիրներուն մէջ, տենդագին պայքար կը մղենք մեր գոյութիւնը կարենալ պահելու համար, սակայն Սփիւռքի՝ ի մասնաւորի Արեւմտեան երկիրներու մէջ, հոսանքը այնքան զօրաւոր է, որ ամէն ջանք՝ ամէն ճիգ, ապառաժեայ խոչընդոտներու կը հանդիպի:

Մեր դժուարութիւնները շատ մեծ են սփիւռքի մէջ, գոյատեւման տեսակետէ: Մենք պետք ունինք հայրենիքի օգնութեան, կարենալ պահելու մեր ինքնութիւնը:

Ես բարձր կը գնահատեմ հայրենիքէ ներս դպրոցներու՝ ի մասնաւորի ուսուցիչ ուսուցչուհիներու նուիրական առաքելութիւնը, որ չի փոխանակուի որիշ որեւէ գործով, որպէս սերունդ հասցնող՝ սերունդ պատրաստող կեդրոն:

Այո. հայրենիքն է մեր յոյսը: Մենք կը մաղթենք որ հայրենիքը ըլլայ միշտ հզօր եւ մնայ կանգուն, որպէս փարոս սփիւռքի հայութեան՝ որպէսզի իրմով ներշնչուած, միշտ հպարտ զգանք մենք զմեզ եւ կարենանք գոյատեւել:

Այլապէս՝ առանց զօրաւոր հայրենիքի, մեր ապագան մութ է, պիտի ըլլայ...

ՃՈՒԼԻԱ ՂԱԶԱՐԵԱՆ. Վստահ եղէք, որ հայրենիքը միշտ կայ ու պետք է լինի: Կանգուն եւ հաստատուն է հայրենիքը եւ երբեք ու երբեք իր Սփիւռքի զաւակներին չի թողնի ու չի անտեսի, այնպէս որ դուք իմացէք, որ կայ ձեր հայրենիքը եւ մեր հայրենիքը եւ մենք էլ հպարտանում ենք ձեզանով:

Իւրաքանչիւր սփիւռքահայ աշխարհի որ ծայրամասում էլ լինի, հայրենիքի նուիրեալ զաւակն է, եւ ինչ հնարաւորութիւններ ունի՝ կանի: Այդ վատ տարիներին սփիւռքն է կանգնած եղել հայրենիքի կողքին, որ կարողացել է աջակցել, օգնել: Եւ մեր այս պայծառ օրինակը միշտ ասել եմ, դա մեր Ռուբէն Սեւակի եղբոր որդին՝ Յովհաննէս Չիլինկիրեանն է, որը այս պահին մեզ օգնութեան ձեռք է երկարել, թէ ինչպէս անենք որ մեր հայ զաւակները ոչ մի բանի պահանջք չունենան: Մի մարդ՝ որ ինչպէս ես հաւատում եմ, որին սկզբունքը եղել է որ «Բարեգործութիւնը չպետք է շահագործուի»: Ինք այնքան համեստ գտնուելով հանդերձ, մեր բոլոր երախաները, ուսուցիչներ, միայն նկարով են տեսել Պրն. Չիլինկիրեանին: Եւ գիտէք ինչն է կարելորդ՝ նրա զաւակները բոլորն էլ խօսում են հայերէն: Ես ականատես եմ եղել: Իր թոռնիկները երբ եկել էին էստեղ, նրանք հայերէն էին խօսում, դա իրեն աշխատանքն է, դա իրեն ցանկութիւնն է եւ ազգին նուիրումն է, եւ մեր երախաներն ու ուսուցիչները Պրն. Չիլինկիրեանին միայն թանգարանում՝ նկարով են ճանաչում: ՄԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԵՒ ԲՈՒՆՈՒՆ ԵՐԱԶԱՆՔՆ ՈՒ ԽՆԴՐԱՆՔՆ Է, ՈՐ ՊՐՆ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՏԻԿԻՆԸ՝ ԻՐՄԱՆ, ՄԷԿ ԱՆԳԱՄ ԳԱՆ ԵՒ ՏԵՍՆԵՆ ԱՅՆ ԴՊՐՈՑԸ, ՈՐ ԻՐԵՆՔ ՊԱՀՈՒՄ ԵՆ ՈՐՊԷՍ ԻՐԵՆՑ ՀԱՐԱԶԱՏ ՄԻ ՕՃԱԽ: ԲԱՅՑ ՊՐՆ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԸ ԴՅՈՒՄԱՐԱՆՈՒՄ Է ԵՒ ԱՄԷՆ ԱՆԳԱՄ ԱՍՈՒՄ Է. «ՏԱՅ ԱՍՏՈՒԱԾ, ՈՐ ԱՅՍ ՏԱՐԻ ՓՈՐՁԵՄ ԳԱԼ»: ԵՒ ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻՆ ԷԼ ԱՅԴ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ ՇԱՏ ԱՇԽԱՏՈՒՄ Է: ԱՍԵԼ ԷՐ ՈՐ ԵՐԲ ԻՆՔԸ ԳԱԼԻՍ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՆԴՐԵԼ ԷՐ, ՈՐ ՊՐՆ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԸ ԷԼ ԻՐ ՀՆՏ ԳԱՅ: ՍԱԿԱՅՆ ՊՐՆ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԸ ԱՍԵԼ ԷՐ. «ՄԻ ՈՒՐԻԾ ԱՆԳԱՄ»:

ՄԵՆՔ ԱՄԷՆ ԴԷՊՔՈՒՄ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՊՐՆ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԸ ՄԻ ՕՐ ԿԳԱՅ ՄԵՐ ՄՕՏ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌԸ ԼԻՆԻ ՄԻ ՄԱՐՄԻՆ, ՄԻ ՀՈԳԻ, ՄԻ ՄՇԱԿՈՅԹ, ՄԻ ԼԵԶՈՒ: ԱՅԴՊԷՍ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ՄԱՅԵՍՏՐՈ ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ՀԵՏ

Կեանքի մէջ կրնայ պատահիլ որ առիթ մը ներկայանայ ձեզի հանդիպելու անուանի արուեստագէտի մը, կամ մտաւորականի մը, որուն հետ թէև անձնական ծանօթութիւն ունեցած չըլլաք անցեալին, սակայն զինք ճանչցած ըլլաք իր գործերէն, իր յօդուածներէն եւ կամ ուրիշներուն կողմէ իր մասին գրուած գրութիւններէն, բայց դժբախտաբար այդ հանդիպումը եղած ըլլայ շատ կարճ, առիթ չընծայելով ձեզի աւելի երկար կարենալ խօսելու եւ աւելի մօտէն իրար ծանօթանալու:

Ահա այդպիսի առիթ մըն էր ինծի ներկայացողը, որ կարճ ծանօթութիւն մը ունենամ Մայեստրօ Հենրիկ Անասեանին հետ:

2003-ի Յունիս ամիսն էր, երբ Նիւ Ճըրգիի Շուշի պարախումբը պատրաստուած էր իր 10-ամեակը տօնելու, մեծ պատրաստութեամբ, որ նոյն ատեն նուիրուած էր Արամ Խաչատրեանի 100-ամեակին:

Յատկապէս Հայաստանէն հրաւիրուած էր Արա Գեորգեան, իր նուագախումբով՝ մաս կազմելու ելոյթին: Նաեւ Նիւ Եորքի երաժշտանոցէն մօտ 15 արուեստագէտներ իրենց մասնակցութիւնը պիտի բերէին զանազան նուագարաններով: Իսկ այդ բոլորին համար որպէս խմբավար Գալիֆորնիայէն հրաւիրուած էր յայտնի երաժշտագէտ, մայեստրօ Հենրիկ Անասեան:

Աղջիկս ու փեսաս գործօն անդամներ են Շուշի պարախումբի վարչութեան մէջ: Իրենց երկու աղջիկները (այսինքն մեր երկու թոռնուհիները) տարիներ շարունակ մաս կազմած են պարախումբին:

Փեսաս առաջարկեց ինծի որ միասին հիւրանոց երթանք, Մայեստրօ Հենրիկ Անասեանը բերելու ելոյթին սրահը, ուր իր առաջին ու վերջին, միակ ընդհանուր փորձը պիտի կատարէր, յաջորդ օրուայ ելոյթին համար:

Գացինք, տեսանք Պրն. Անասեանը իր համեստափայլ տիկնոջ հետ միասին: Կը ծանօթանանք ու ճամբայ կ'ելլենք:

Ճամբու ընթացքին Պրն. Անասեան ըսաւ, Դուք ըսիք թէ ձեր անունը Յակոբ Տէրեան է, այնպէս չէ՞:

Ըսի, այո, այդպէս է:

Սկսաւ թուել իրեն ծանօթ բոլոր Տէրեանները, Վահան Տէրեանէն սկսեալ, հարց տալով թէ արդեօք ռեւէ մէկուն հետ ազգականական կապ ունի՞:

Բացատրեցի, որ իմ մականունս Տէյիրմէնճեան էր, սակայն ես զայն փոխած էի Տէրեանի, ամերիկեան քաղաքացիութիւն ստացած օրս:

Հարց տուաւ թէ ինչ էր պատճառը փոխելու:

Ըսի, որ ամենագլխաւոր ու հիմնական պատճառը թրքերէն ըլլալն էր, որով պէտքը զգացի զայն հայացնելու եւ երկրորդ՝ դիւրացնելու համար գրութիւնը, քանի որ աւելի հեշտ է անգլերէնով գրել Տէրեան, քան Տէյիրմէնճեան: Մանաւանդ՝ ըսի, գիտենք որ այս մականունները թուրք միջաբաններուն կողմէ մեզի շնորհուած են, որոնք ընդհանրապէս առնչուած են հօրը արհեստին հետ:

Ըսաւ, շատ խելացի գործ մը տեսած էք այդպէս ընելով: Ինքը կը կարծէ, որ ազգովին պէտք է ձերբազատուիլ այս թրքերէն մականուններէն:

- Թէեւ ձեր մականունը կու գայ արհեստէ մը, որ այդքան ալ վարկաբեկիչ չըլլալով հանդերձ, դուք փոխած էք զայն, պարզապէս՝ թրքերէն ըլլալուն համար: Սակայն անդին կան տակաւին այնպիսի վարկաբեկիչ եւ նուաստացուցիչ մականուններ, զորս մարդիկ դեռ կը պահեն... չեմ գիտեր ինչու:

Ու պահ մը կենալէ ետք շարունակեց.

- Իսկ գիտե՞ք թէ ինչ եղած է մեր մականունը, եղած է Սէօյլմէզեան, այսինքն չըսող՝ չիսօտող:

- Ուրեմն դո՞ւք ալ հայացուցած էք ձեր մականունը:

- Ո՛չ ես, այլ՝ լուսահոգի հայրս, որ գրագետ մարդ էր: զայն հայերէնի վերածած է բառացի թարգմանութեամբ եւ ըրած է Անասեան, որ նոյն իմաստը ունի, չըսող, չիսօտող:

Պրն. Անասեան գնահատանքով կը խօսէր իր հօրը մասին, որ իրմէ առաջ այդ սրբագրութիւնը կատարած էր արդէն իրեն շնորհելով հայերէն մականուն մը:

Մեր շատ հաճելի խօսակցութիւնը սակայն հոս ակամայ վերջ կը գնտէ, քանի որ հասած ենք արդէն ելոյթին սրահը: Երկուստեք իրարու յաջողութիւն մաղթելէ ետք, կը բաժնուինք իրարմէ: Պրն. Անասեան իր համեստափայլ տիկնոջ հետ միասին կ'ուղղուի դէպի սրահ, իսկ մենք կը վերադառնանք մեր գործերուն:

Յաջորդ օր հոն ենք ամենքս, դիտելու եւ վայելելու Շուշի պարախումբի ելոյթը: Հազար հոգինոց սրահը լեցուն է ամբողջութեամբ: Բեմը սքանչելիօրէն զարդարուած է Արամ Խաչատուրեանի 100-ամեակի եւ Շուշի պարախումբի 10-ամեակի նուիրուած զարդարանքներով: Բեմին ետին դաշնամուրին առջեւ կանգնած է Արա Գեորգեան, աջին՝ իր նուագախումբի անդամները, իսկ ձախին Նիւ Եորքի երաժշտանոցի նուագողները, որոնք ամբողջ բեմի լայնքին լեցուցած էին բեմին յետնամասը:

Այդ բոլորին դիմաց իր փոքրիկ ամպիոնին վրայ ահա Մայեստրօ Հենրիկ

Անասեան, որ իր ցպիկին ազդարարութեամբ «կը խօսեցնէ» իւրաքանչիւր նուագողը իր ժամանակին, մինչ Շուշի պարախումբի աղջիկները կը պարեն իրենց հեգանկուն պարերը:

Մթնոլորտը այնքան խանդավառ է, որ իւրաքանչիւր պարի վերջաւորութեան ժողովուրդը խելայեղ կը ծափահարէ՝ իր բերկրանքն ու հիացումը յայտնելով:

Ի տես այդ խանդավառ մթնոլորտին, ես ալ իմ հիացմունքիս հետ մէկտեղ կը մտածեմ Պրն. Անասեանի անձին՝ եւ... մականունին վրայ, որոնք իմ կարծիքով իրարու համապատասխան չեն թուիր ըլլալ...:

Օրին փափաքը ունեցայ գրել այս խոհերուս մասին, սակայն վարանոտ զգացումներ զիս ետ կեցուցին մտադրութենէս:

Եւ ահա վեց տարի ետք, Պրն. Անասեանին մէկ յօդուածը՝ գրուած հանգուցեալ Տոքթ. Յարութիւն Սաղրեանի մահուան առթիւ. «Աս ի՞նչ ըրիր Տոքթ. Սաղրեան» խորագրով, վերագարթնեց հին խոհերս մտքիս մէջ:

Այո՛, Պրն. Անասեան, այդ յօդուածին մէկ պարբերութեան մէջ հարց տուած էիք հանգուցեալին ըսելով. «Սակայն ուրկէ՞ կու գայ Սաղրեան մականունը, չէ՞ որ դուն այս տարիքիդ մէջ անգամ հիանալի կը լսէիր եւ կը տեսնէիր եւ ոչինչ չէր փախեր՝ ո՛չ ականջէդ եւ ո՛չ աչքէդ»:

Ահա այս պարբերութիւնն էր որ պիտի գար փարատել իմ այդ օրերուն ունեցած վարանոտ զգացումները ու փոխարէնը քաջութիւն պիտի տար ինծի՝ կարենալ նոյն հետեւողութեամբ հարց տալու ձեզի, թէ դուք՝

Որպէս գրող մը, որ կը նշանակէ խօսք ունեցող, այսինքն ժողովուրդին խօսող՝ գրելով.

Որպէս երգչախումբերու եւ նուագախումբերու վարիչ ղեկավար, որ գիտէ իր ցպիկին հրահանգներուն հնազանդեցնել մի քանի տասնեակ նուագողներ, իւրաքանչիւրը իր ժամանակին այդքան ներդաշնակ կերպով «խօսեցնելով». մէկ խօսքով.

Դուք թէ՛ խօսող մը եւ թէ՛ խօսեցնող մը, «սակայն ուրկէ՞ կու գայ այս Անասեան մականունը ձեզի...»:

«Նոր Օր», 3 Դեկտեմբեր 2009

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ս. ԵՐԿԻՐԸ՝ ԵՐՈՒՍԱՂԷՄ

*Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ,
Թող աջ ձեռքս մոռնայ զիս,
Լեզուս քիմքիս թող փակչի,
Սաղմոս Ճ.Լ.Է. 137 5-6*

Այսպէս խօսեցաւ հրեայ ժողովուրդը իր Սաղմոսին մէջ, երբ կորսնցուցած էր իր երկիրը՝ Երուսաղէմը:

Արդարեւ մեզի՝ հայերուս համար եւս, հայրենիքէն ետք երկրորդ նուիրական եւ հարազատ վայրն է Երուսաղէմը, որը ամենեւին մոռնալու իրաւունք չունինք:

Սուրբ երկիր՝ որ դժբախտաբար կռուախնձոր մըն է հրեայ եւ պաղեստինցի ժողովուրդներուն միջեւ, որոնք հակառակ անոր որ Քրիստոսի Աստուածութեան չեն հաւատար, սակայն եւ այնպէս տէրն ու տիրականն են քրիստոնէութեան կեդրոն՝ այդ Սուրբ երկրին:

Իսկ քրիստոնէաներ, որպէս Քրիստոսի հետեւորդ ժողովուրդ, որպէս իրենց հաւատքի օրրան երկիր, որպէս Քրիստոսի երկրաւոր կեանքի գործունէութեան միակ միջավայր, հաւատքի ճամբով ամուր կապուածութիւններ ունին այդ երկրին հետ:

Ահա թէ ինչու Երուսաղէմը քրիստոնէայ աշխարհին անփոխարինելի առաջին ուխտավայրն է, ուր ամէն տարի՝ ի մասնաւորի Ծնունդին եւ Յարութեան տօներուն առիթով, հազարաւոր ուխտաւորներ կ'այցելեն այնտեղ վերանորոգուելու եւ զօրանալու իրենց հաւատքին մէջ:

Արդարեւ, Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդարանի իմաստուն կարգադրութեամբ, դէպի Երուսաղէմ ուխտագնացութիւններ կազմակերպուած են 2000 թուականէն սկսեալ:

Տէր Մարտիրոս Զինյ. Չելեան, որ իր Երուսաղէմի հանդէպ տածած սէրէն ու համակրանքէն մղուած՝ անպաշտօն կերպով պաշտօն ստանձնած է կազմակերպել այս ուխտագնացութիւնները, կը տեղեկացնէ թէ ինչպէս 2000 թուականին, Ս. Ծնունդի տօնին առիթով, 500 ուխտաւորներ առաջնորդած են դէպի Երուսաղէմ: Այնուհետեւ, տարին երկու եւ երբեմն ալ մէկ անգամ

(նկատի առած քաղաքական կացութիւնը եւ ուխտաւորներուն քանակը), կազմակերպած են այս ուխտագնացութիւնները, Ծնունդի եւ Յարութեան տօներուն առիթներով:

Այս տարի մեր ուխտաւորներու խումբն ալ բարեբախտութիւնը ունեցաւ մաս կազմելու Առաջնորդարանին կողմէ կազմակերպուած այդ ուխտագնացութեան, Ս. Յարութեան տօնին առիթով:

Հետաքրքրական է, որ ըստ երուսաղէմեան տոմարին, Յարութեան Չատիկը Երուսաղէմի մէջ բոլոր եկեղեցիներուն կողմէ, կը տօնուի մեր Չատիկէն մէկ շաբաթ ետք: Այդ իսկ պատճառաւ, մեր քաղաքներուն մէջ Ծաղկազարդէն մինչեւ Չատիկ, ամբողջ աւագ շաբթուան տօներուն արարողութիւնները կատարելէ ետք, կրկին անգամ պիտի կատարէինք զանոնք Երուսաղէմի մէջ, ինչ որ մեզի՝ ուխտաւորներուս համար պիտի նշանակէր կրկնագատիկ ունենալ:

Ապրիլ 13-ին Չատիկին յաջորդող Երկուշաբթի օր, օդանաւը այլ ճամբորդներու հետ միասին, մեր 38 հոգինոց ուխտաւորներու խումբը կը փոխադրէ Նիւ Ճրքզիի Newark օդակայանէն ուղղակի Իսրայէլ, Թէլ Ավիվի օդակայանը, ուր կը հասնինք Երեքշաբթի օր, կէսօրէ առաջ ժամը 10:00-ին: Հոն մաքսատան գործողութիւնները կատարուելէն ետք, ամէնքս կը նստինք յատկապէս մեր տասնօրեայ շրջապտոյտին համար յատկացուած օթօպիւսին մէջ, որ մեզ կը տանի Երուսաղէմ, որ մէկ ժամ հեռու է Թէլ Ավիվէն: Հոն կ'իջեւանինք մեզի համար նախորոշուած Olive Tree հիւրանոցը: 10 ժամ օդանաւի եւ մէկ ժամ ալ օթօպիւսի ճամբորդութենէն յոգնած՝ մի քանի ժամ հանգիստ կ'առնենք մեր սենեակներուն մէջ:

Կէսօրէ ետք մեր առաջին այցելութիւնը կու տանք Գերշ. Տէր Թորգոմ Սրբ. Պատրիարք Հօր, որ իր անցեալի երկար տարիներու Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդի պաշտօնով ծանօթ եւ կարօտալի դէմք մըն է, բոլոր մեր ամերիկահայ ուխտաւորներուն համար:

Առաջին իսկ վայրկեանէն, բոլորս ալ կը նկատենք Սրբազան Պատրիարք Հօր դէմքին վրայ տարիներու խոնջէնքին դրոշմած ընկճուածութիւնը: Իր բարձր պաշտօնի պատասխանատւութեան հետ մէկտեղ, կեանքի ու տարիքի յոգնութիւնները զինք հասցուցած են տեղ մը, ուր այլեւս կը դժուարանայ մինչեւ իսկ պատրիարքական գործերը կարենալ կատարել: Երբեմնի այդ կայտառ ու եռանդուն Պատրիարք Հայրը, այժմ ահա դանդաղ քայլերով կը յառաջանայ, ընկերակցութեամբ Գերշ. Արիս Արք. Շիրվանեանի եւ Հոգշ. Շնորհք Վրդ. Բալոյեանի, ու կը նստի մեր դիմաց, իրեն յատուկ՝ Պատրիարքական աթոռին վրայ:

Հիմա բոլորին նայուածքները կեղդոնացած են Պատրիարք Սրբազան Հօր

վրայ: Բոլորն ալ շատ լաւ կը ճանչնան զինք, սակայն երկար տարիներ զինք տեսած չըլլալուն իր անակնկալօրէն տեսնուող ներկայ վիճակը կարեկցական նայուածքներ կ'ուրուագծէ բոլորին դէմքերուն վրայ:

Մեր խումբին ղեկավարը՝ Տէր Գարեգին Քհնյ. Գասպարեան, Պատրիարք Սրբ. Հօր կը յայտնէ մեր այցելութեան նպատակը ու կ'ըսէ.- «Սրբազան Պատրիարք հայր, եկած ենք ձեզ տեսնելու, ձեզ լսելու, ձեր ձեռքն համբուրելով ձեր օրհնութիւնը ստանալու եւ աղօթելու ձեր առողջութեան համար:

Պատրիարք Հայրը պահ մը դիտելէ ետք մեր բոլորին դէմքերը, կ'ըսէ.- (յապաւումով) «Նախ կ'ողջունեմ ձեզ ու բարի գալուստ կը մաղթեմ ձեր բոլորին: Կը մաղթեմ որ Աստուած ձեր աղօթքները լսէ, ձեր սրտին փափաքները տայ եւ ձեզի իբրեւ ուխտաւոր նայի:

Կը ցաւիմ որ այս վերջերս զիս այս կացութեան մէջ կը տեսնէք:

Բոլոր անոնք որ Ամերիկայէն կու գան, զիս որպէս նախկին Առաջնորդ յիշելով կու գան: Իսկ այստեղ պայմաններն ու կացութիւնը բոլորովին տարբեր են:

Պէտք է աղօթենք որ Աստուած հաստատուն պահէ մեր այս Սուրբ աթոռը, որպէսզի իր զաւակները կարողանան միշտ հոս գալ, որպէս ուխտաւոր»:

Նոյն խօսքերը անգլերէնով եւս խօսելէ ետք, բարձրախօսը կը փոխանցէ Գերշ. Արիս Արք. Ծիրվանեանի որ ինք խօսի:

Գերշ. Արիս Սրբազան մեր բոլորին բարի գալուստ մաղթելէ ետք կ'ըսէ.- (յապաւումով) «Այս Սուրբ տօնական օրերու ընթացքին, հոգեւոր մեծ ուժ կը ստանանք այցելելով Ս. Յարութեան տաճարը, ուր մեր Տէրը խաչուեցաւ ու յարութիւն առաւ, նաեւ Ս. Ծննդեան տաճարը, Ս. Աստուածածնայ տաճարը եւ մեր մայրավանքին՝ սրբոց Յակոբեանց տաճարը: Տեսնելով այս բոլորը, պիտի անդրադառնաք որ մեր Պատրիարքութիւնը այստեղ շատ լուրջ եւ ծանր պարտականութիւն կը կրէ, սրբավայրերուն մէջ իր մասնակցութիւնը բերելով Յոյն Օրթոտոքս եւ Կաթոլիկ եկեղեցիներուն հետ միասին:

Մեր վանքին մէջ ունինք երկու վարժարաններ. մին Սրբոց Թարգմանչաց վարժարանը՝ մեր ժողովուրդին զաւակներուն համար եւ միւսն ալ Ժառանգաւորաց վարժարան եւ ընծայարանը՝ հոգեւորականներու պատրաստութեան համար:

Ունինք տպարան: Ունինք Կիւլպէնկեան մատենադարան եւ այլն: Այս բոլորը երբ պիտի տեսնէք, պիտի մտածէք թէ այս Պատրիարքութիւնը ինչպէս 4-րդ դարէն ի վեր այսպիսի Ժառանգութիւն մը ձեռք ձգած է ու ինչ-ինչ պայմաններու տակ կը պահէ զայն մինչեւ այսօր:

Վստահ եմ բոլորդ ալ պատիւ պիտի զգաք այդ բոլորով:

Բարի եկած էք եւ թող Աստուծոյ օրհնութիւնը ձեր բոլորին վրայ ըլլայ»:

Մեր խումբին ղեկավարը՝ Տեր Գարեգին, մեր բոլորին կողմ է խօսք առնելով, փոխանցեց մեր զգացումները Պատրիարք Սրբ. Հօր, եւ ըսաւ. (յապաւումով) «Այս յատկանշական ժամանակ մըն է մեզ համար, որ որպէս ուխտաւորներ խումբով եկած ենք այստեղ, Սուրբ փափաքը մեր սրտերուն՝ տեսնելու եւ խոնարհելու Քրիստոսի Սուրբ գերեզմանին առջեւ, տեսնելու մեր քրիստոնէական բոլոր սրբավայրերը, տեսնելու մեր սրբոց Յակոբեանց մայրավանքը եւ մեր աղօթքներով ու բարեմաղթութիւններով զօրակցելու մեր Ս. Աթոռին:

Դարեր շարունակ ուխտաւորներու մեծ խումբեր եկած են այստեղ եւ իրենց աղօթքներուն հետ մէկտեղ, նուիրատուութիւններով իրենց նպաստը բերած են Սուրբ Աթոռին, որպէսզի հաստատ մնայ այս Պատրիարքութիւնը:

Այդ բոլորին հետ մէկտեղ գիտենք նաեւ որ դարեր շարունակ, Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը «հոգեւոր զինուորութեամբ» պահած է այս հաստատութիւնը: Եւ հիմա եւս, Պատրիարք Հայր, ձեր հովանաւորութեան տակ կը պահուին հոգեւոր ու մշակութային այս հարստութիւնները:

Տակաւին երկու օր առաջ, Քրիստոսի Ս. Յարութեան տօնը տօնեցինք մեր քաղաքներուն մէջ եւ հիմա պատիւ կը զգանք որ այստեղ Ս. Յարութեան տաճարին մէջ, ուղղակի Քրիստոսի գերեզմանին առջեւ պիտի աղօթենք, ներկայ գտնուելով հրաշափառ Ս. Յարութեան սրբազան պատարագին:

Կը մաղթենք Երուսաղէմի մեր Ս. Աթոռին յաջող երթ եւ անսասանութիւն եւ ձեզ, Սրբ. Պատրիարք Հայր, առողջութիւն, որպէսզի ձեր իմաստուն տնօրինութեամբ կարենաք շարունակել ձեր սուրբ գործը»:

Վերջաւորութեան, ուխտաւորները բոլոր, մէկ առ մէկ մօտենալով, Սրբ. Պատրիարք Հօր ձեռքը համբուրեցին: Իւրաքանչիւր անձ ինքզինք ներկայացնելով եւ անցեալի դէպքերէն պատմելով, կ'ակնկալէր ու կը ցանկար որ Պատրիարք Հայրը զինք յիշէր...: Տիկին մը խօսեցաւ 55 տարի առաջ տեղի ունեցած դէպքի մը մասին, Պատրիարք Հօր յիշողութիւնը գրգռել փորձելով, որուն՝ Պատրիարք հօր պատասխանը եղաւ..., այդ 55 տարի առաջ էր:

Սրբազան Հօր «Պահպանիչ»ով վերջ գտաւ հանդիպում-տեսակցութիւնը եւ ուխտաւորներ հրաժէշտ առին խոր տպաւորութիւններով:

Աւագ շաբթուան Զորեքշաբթի օրը, արարողութիւններու տեսակէտէ, շաբթուան ամենաազատ օրը կը նկատուի, այդ իսկ պատճառով լման օրուան այցելութիւններ ունեցանք այդ օր:

Բարեբախտութիւն էր մեզի համար ունենալ ուղեցոյց-առաջնորդ մը, յանձին Արամ Խաչատուրեանի, որուն փորձառութեան շնորհիւ կրցանք տեսնել գրեթէ բոլոր սրբավայրերը: Պրն. Արամ բնիկ երուսաղէմաբնակ՝ պարկէշտ ու հաւատացեալ անձ մըն է, որ ունի 4 լեզուներու հմտութիւն.



*Տեր Գարեգին Առաջ Բահանայ Գասպարեան աղօթքի պահուն: Չախին՝ Տկն.
Նեկոսար Տէրեան, իսկ աջին՝ յօդուածագիրը:*

(հայերեն, արաբերեն, անգլերեն եւ եբրայերեն) եւ 17 տարիներու ուղեցոյց առաջնորդի փորձառութիւն:

Չորեքշաբթի առաւօտեան ժամը 8:00-ին ճամբայ կ'ելլենք հինգ ուխտատեղիներ այցելելու ծրագրով, որոնք կը գտնուին Երուսաղէմէն 200 քմ. հեռու ճամբու երկայնքին:

Առաջին կայանը որ ունեցանք Յորդանան գետն էր: Ծիշդ Քրիստոսի մկրտուած տեղը, որ վերածուած է ուխտատեղիի մը: Գետին եզերքին շինուած է յատուկ տեղ մը, մօտ 1 ոտք կամ 30 սմ. ջուրի խորութեամբ, (նկատելով որ գետը խորունկ է), ուր ուխտաւորներ ջուրը կ'իջնեն իրենց ուխտը կատարելու եւ իրենց պարապ շիշերը լեցնելու, որ տուն տանին իրենց հետ միասին, ուրիշներուն եւս երեսին քսելու անկէ:

Տեսակաւոր մարդիկ՝ հնդիկ օրթոտոքսներ, յոյներ, եթովպիացիներ, հայեր, եւրոպացիներ եւ մինչեւ իսկ մահմետականներ, ամէն ազգի պատկանող մարդիկ եկած են ամէն կողմերէն:

Մեր քաջ հովիւին՝ Տեր Գարեգինին հետ միասին կը սկսինք երգել «Ով

զարմանալի» շարականը, որ յատուկ շարական մըն է Քրիստոսի մկրտության: Մեզի կը ձայնակցին ուրիշ հայկական խումբէ մը եկած մի քանի հոգիներ եւս, որոնք գիտէին նոյն շարականը: Բոլոր ազգերու պատկանող ուխտաւորներ կը խմբուին մեր շուրջը: Պահը շատ խորհրդաւոր է, քանի որ հասկցող թէ չհասկցող, բոլորն ալ, իրենց մտքին ու սրտին մէջ կը պատկերացնէին Քրիստոսի մկրտութեան Սուրբ արարողութիւնը այդ վայրին մէջ:

Հոգեկան մեծ գոհունակութեամբ վերջ գտաւ մեր երգեցողութիւնը:

Խոր տպաւորութիւններով բաժնուեցանք Յորդանան գետէն եւ ուղղուեցանք՝ Քրիստոսի խօսած 9 երանիներու լեռը:

Միջանկեալ ըսեմ որ մեր ուղեցոյց-առաջնորդը՝ Պրն. Արամ, հոն ուր կ'երթայինք, նախ՝ ճամբու ընթացքին օթօպիւսին մէջ մեր երթալիք տեղին պատմութիւնը կը պատմէր եւ ապա Ս. գիրքէն եւս այդ վայրին ու դէպքին վրայով գրուած հատուածները կը կարդար հայերէնով, իսկ Տէր Գարեգին կը կարդար զանոնք անգլերէնով եւ կամ փոխադարձաբար, ու արդէն իսկ տեղւոյն պատմութեան կը ծանօթանայինք տեղ հասնելէ առաջ: Իսկ հասնելէ ետք, տեղւոյն վրայ մանրամասն կը բացատրէր ամէն ինչ:

Ահա կը բարձրանանք Սիոնի լեռը, ուր Յիսուս խօսեցաւ իր նշանաւոր քարոզը՝ «9 երանիները»:

Լեռը կը գտնուի Գալիլիոյ ծովուն հիւսիսային կողմը, ուրկէ շատ յստակ կերպով կը դիտուի ծովը. այն ծովը, ուր առաքեալներ իրենք զիրենք ընկղմելու վտանգին մէջ կը գտնէին երբ ծովը փոթորկած էր, մինչ Յիսուս կը քնանար: Երբ արթնցուցին զինք ըսելով «Վարդապետ, կը կորչինք», Յիսուս ելաւ ու սաստեց ծովուն որ իսկոյն հանդարտեցաւ:

Լերան գագաթին կառուցուած է եկեղեցի մը, որուն կեդրոնի խորանը հաստատուած է ճիշդ այնտեղ, ուր Քրիստոս կանգնած խօսած է իր պատմական քարոզը:

Եկեղեցին շինուած է լատինական ոճով՝ կլորաձեւ, որուն ճիշդ կեդրոնը կը գտնուի աւագ խորանը:

Սուտքին աջ կողմը կան գրքաձեւ երկու քարեր, որոնց վրայ մեզի անծանօթ լեզուով գրուած են 9 երանիները:

Կ'ելլենք եկեղեցիէն: Հակառակ անոր որ օդը տաք է, սակայն հովը ուժգին կը փչէ: Հրաժեշտ կ'առնենք հոնկէ եւս ու կ'ուղղուինք դէպի Դապղա, որ է Յիսուսի կատարած մեծագոյն հրաշագործութիւններէն մէկուն վայրը:

Ինչպէս բոլոր սրբավայրերու պարագային, հոս եւս ճամբու ընթացքին օթօպիւսին մէջ կը լսենք մեր ուղեցոյցին բացատրութիւնները Դապղայի եւ Քրիստոսի կատարած հրաշագործութեան վրայով, թէ ինչպէս Յիսուս 2 ձուկ եւ 5 նկանակով 5000 հոգի կերակրեց:



Ուխտագնացները:

Դապղան կը գտնուի բլրակի մը վրայ: Երբ Յիսուս իր աշակերտներուն հետ միասին կը բարձրանար այնտեղ, հազարաւոր մարդիկ, կիներ ու մանուկներ, կը հետեւէին իրեն զինք մտիկ ընելու համար: Անոնք այնքան տարուած էին զինք մտիկ ընելով, որ չէին անդրադարձած ժամանակին անցնելուն: Այն ատեն էր որ Յիսուս կատարեց իր հրաշքը, 2 ձուկ եւ 5 հացով կերակրելով 5000 հոգի, կիներէն ու մանուկներէն զատ:

Նոյն այդ հրաշագործութեան վայրին վրայ կառուցուած է գեղեցիկ եկեղեցի մը իտալացիներու կողմէ:

Կէսօր է: Ճաշարան մը մտանք ճաշելու եւ քիչ մը հանգստանալու: Մօտ մէկ ժամ հոն զբաղելէ ետք ուղղուեցանք դէպի Կափարնայում:

Ահա Պետրոս առաքեալի եկեղեցին, ցանկապատուած հսկայ տարածքի մը մէջ: Երբ ներս կը մտնենք ցանկապատի դռնէն, բակին մէջ առաջին անգամ կը հանդիպինք Պետրոս առաքեալի պղնձեայ հսկայ արձանին, աջ ձեռքին բռնած «դրախտի բանալի»ն, իսկ ձախ ձեռքով՝ իր հովուական գաւազանը:

Քիչ մը անդին՝ Պետրոս առաքեալի բնակած տան աւերակները, որոնց վրայ շինուած է եկեղեցի մը, որ հաստատուած է աւերակ տան շուրջ գե-

տեղում և սիւներում վրայ, որպէսզի պահպանուին անբականները:

Եկեղեցւոյ յատակը շինուած է ապակիով, որպէսզի կարելի ըլլայ եկեղեցիին մէջէն տեսնել վարի անբականները:

Եկեղեցիէն մօտ 300 ոտք անդին կայ անբակ սինակով մը: Այս այն տաճարն է, ուր Յիսուս խարազանով դուրս հանեց բոլորը, ըսելով, «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի»:

Մեր վերջին կայանը կ'ըլլայ Նագարէթ քաղաքը, որ նշանաւոր է Աստուածածնին նուիրուած հսկայական եւ շատ փառաւոր եկեղեցիով մը: Այդ եկեղեցիին տեղը եղած է Աստուածածնին բնակարանը, ուր հրեշտակը անտես իրեն Ս. հոգիէն յղանալու եւ որդի մը ծնանելու անտիպը:

Եկեղեցին շինուած է 5-րդ դարուն:

7-րդ դարուն կործանած է պարսիկներուն կողմէ:

1960-ականներուն, կաթողիկոսներ այդ անբականներուն վրայ կառուցած են այս հոյակապ եկեղեցին, որ նուիրուած է «Աւետմանն Սրբոյ Կուսին»:

Եկեղեցիէն քիչ անդին կը տեսնուի Հայր Յովսէփի եկեղեցին, որը շինուած է դարձեալ իր բնակած տան վրայ, 1012 թուին, ինչ կը պահուին տակաւին Հայր Յովսէփի ատաղձագործական գործիքները, որ կը ցուցադրուին այցելուներուն: Սակայն այժմ արգիլուած ըլլալուն, չկրցանք երթալ ու տեսնել զանոնք:

Այստեղ կ'աւարտի մեր միօրեայ շրջապտոյտը:

Բոլորս ալ թէեւ յոգնած՝ սակայն լաւ տպաւորուած ենք մեր տեսածներով: Տրամադրութիւնները բարձր են եւ հիմա գոհունակ սրտով պատրաստ ենք վերադառնալու: Ամէնքս կը տեղադրուինք օթօպիւսին մէջ եւ մեքենան ճամբայ կ'ելլէ դէպի Երուսաղէմ, մեր հիւրանոցը:

Ճամբու երկայնքին Պրն. Արամ երբեմն բացատրութիւններ կու տայ տեսնուող գիւղերուն ու քաղաքներուն եւ կամ յատուկ վայրերու մասին: Իսկ մնացեալ ժամերուն, Տէր Գարեգինի առաջնորդութեամբ, կ'երգենք շարականներ ու երգեր, ինչ որ խանդավառութիւն կը յառաջացնէ բոլորին մօտ:

Ուրախ տրամադրութեամբ կը հասնինք հիւրանոց եւ ընթերել ետք իւրաքանչիւր որ կ'երթայ իր ննջասենեակը:

Յաջորդ օր, Հինգշաբթի, կէսօրէ առաջ կ'երթանք այցելելու Բերդեհէմի Ս. Ծննդեան տաճարը:

Նախ կը դիտենք եկեղեցին դուրսէն, ուր կը տեսնենք զանգակատան վրայ գետնէն եռագոյն դրօշակը, որ այդ բաժնին հայկական ըլլալը կը յատկանշէ: Բաւականին ընդարձակ անկիւնաւոր կառուցուածք մըն է, որ կը պատկանի հայերուն: Ապա կը մտնենք ներս, ներսի բաժանմունքները տեսնելու:

Պրն. Արամ կը բացատրէ ըսելով որ ամէն օր հարիւրաւոր ուխտաւորներ կու գան այստեղ աշխարհի բոլոր կողմերէն եւ ամէն ազգերէն:

Եկեղեցին շինել տուած է Հեղինէ թագուհին, Կոստանդիանոս կայսեր մայրը, 4-րդ դարուն:

Եկեղեցին կործանած է 538 թուականին, երբ սամարացիները ապստամբութիւն բարձրացուցած են բիզանդացիներուն դէմ:

6-րդ դարու կէսին դարձեալ Բիզանդիոյ Յուստիանոս կայսրը շինել տուած է զայն, որ կը մնայ մինչեւ այսօր:

Եկեղեցւոյ յատակը ամբողջ շինուած է նկարազարդ խճաքարերով (մոզաիք), որոնց վրայ 2 ոտք բարձրութենէն շինած են փայտեայ տախտակամած մը, պահպանելու համար այդ խճանկարները, որպէսզի կոխկրտուելով չսարուին:

Քրիստոսի ծնած վայրին վրայ շինուած է խորան մը, որուն ներքեւը կը տեսնուի աստղաձև կեդրոն մը, որ ցոյց կու տայ Քրիստոսի ծնած տեղը: Իսկ վերի մասը խորան է, ուր արարողութիւններ կը մատուցուին:

Այս բաժինը կը պատկանի հայերուն, յոյներուն եւ կաթողիկներուն:

Եկեղեցւոյ մէջ յոյներ ունին աւելի մեծ եւ աւելի ճոխ բաժին մը քան հայերը:

Եկեղեցւոյ ընդարձակ տարածութեան մէջ կայ զուտ հայկական փոքրիկ եկեղեցի մը, որ գաղութին եկեղեցին եղած է, Բեթղեհէմի հայերուն համար: Այս եկեղեցին եղած է հրաշագործ եկեղեցի մը: Բոլոր այն մանուկները որոնք կը լսեն բայց չեն կրնար խօսիլ, հոս կը բերեն զանոնք, ուր անոնց բերանը բանալի մը մտցնելով կ'աղօթեն ու մանկան լեզուն կը բացուի ու կը սկսի խօսիլ:

Մեր աղօթքը մատուցելէ ետք այդ եկեղեցւոյ մէջ, կ'ելլենք դուրս:

Արդէն իսկ կ'եսօրը անց է: Կը մտնենք քաղաքին շուկան, ուր կը ճաշենք: Ապա մէկ ժամ շուկան շրջելէ ետք, կը վերադառնանք Սուրբ Յակոբ մայրավանքը, ներկայ գտնուելու Ռոմլուայի արարողութեան:

Իսկապէս խորհրդաւոր այդ եկեղեցիին մէջ, ուր 12 եպիսկոպոսներու եւ վարդապետներու ոտքերը կը լուացուին, պատրիարքի փոխանորդ Գերշ. Նուրիան Արք. Մանուկեանի ձեռամբ:

Եկեղեցին միշտ կիսամութ է, միայն կանթեղներու լոյսերով լուսաւորուած ըլլալուն: Եկեղեցւոյ մէջ նստարաններ չկան, ժողովուրդը կամ ծնկաչոք եւ կամ ոտքի պարտի կենալ: Այդ խորհրդաւորութեան մէջ հնչող յուզիչ մեղեդիները ուղղակի հոգեկան ապրումներ կու տան հաւատացեալներուն:

Ներկայ կ'ըլլանք նաեւ Ռոմլուայի յաջորդող խաւարման գիշերի՝ նոյնքան խորհրդաւոր արարողութեան, որ կը տեսէ մինչեւ գիշերուան ժամը 12:00:

Ուրբաթ օր կ'այցելենք Երուսաղէմի մէջ Աստուածածնի «վերափոխման» նուիրուած եկեղեցին, որ Նազարէթի մէջ եղող «Աւետման» եկեղեցիէն բոլոր-

րովին տարբեր ոճով շինուած շատ գեղեցիկ եկեղեցի մըն է: Այս եկեղեցին ալ շինուած է Ս. Կոյսին գերեզմանին վրայ:

Կ'այցելենք նաեւ ձիթենեաց լեռը ուր կը տեսնենք 2300 տարուայ հնութիւն ունեցող նշանաւոր ձիթենիի ծառ մը:

Կ'այցելենք համբարձման եկեղեցին, որուն մէջ կը տեսնենք Քրիստոսի ոտնահետքը, պատուիւհանի պէս բացուած ժայռի մը վրայ:

Տէր Գարեգինի առաջնորդութեամբ կ'երգենք «Համբարձաւ Տէրն Մեր» շարականը եւ «Սուրբ Աստուած որ Համբարձար փառօք առ հայր»ը, բոլոր ներկաներուն մասնակցութեամբ:

Ապա կ'երթանք «Հայր Մեր»ի եկեղեցին: Այս եկեղեցին կոչած են «Հայր Մեր»ի եկեղեցի, անոր համար որ 126 տարբեր լեզուներով գրուած «Հայր Մեր»ներ, որոնց կարգին եւ հայերէնը, կը զարդարեն ամբողջ եկեղեցւոյ պատերը, ներսով ու դուրսով:

Մեր ուրբաթօրեայ այցելութիւնները աւարտած, կէսօրէ ետք կը վերադառնանք Ս. Յակոբեայ վանքը, ներկայ գտնուելու Քրիստոսի «Թաղման» արարողութեան:

Շաբաթ օրը անկասկած բոլոր ուխտաւորներուն համար պիտի նկատուէր ուխտագնացութեան ամենայատկանշական օրը, «Ճրագալոյց», ուր հայ եւ յոյն եկեղեցիները ներկայացնող երկու երիտասարդներ, Յիսուսի գերեզմանէն դուրս հանուած մոմերու ջահը վագելով պիտի հասցնէին վերեւ սպասող իրենց պատրիարքներուն: Առաջին հասցնող կողմը իրաւունք կ'ունենար յաջորդ օր Չատկի Յարութեան առաջին ժամերգութիւնն ու պատարագը մատուցանելու Քրիստոսի գերեզմանին առջեւ:

Մենք հակառակ անոր որ քիչ մը կանուխ գացինք եկեղեցւոյ մէջ յարմար տեղ մը գտնելու յոյսով, սակայն արդէն իսկ եկեղեցին այնքան խճողուած էր ուխտաւորներով, որ շարժելու իսկ տեղ չկար: Մինչեւ իսկ արարողութեան թափօրները կը դժուարանային յառաջանալ ժողովուրդին մէջէն:

Այժմ ամէն մարդ ակնկառոյց կը սպասէ պատուիւհանէն դուրս գալիք ջահին, որ ամենախորհրդաւոր պահն է օրուան:

Ի վերջոյ գանգակները կը սկսին հնչել, ջահին դուրս գալուն մօտալուտ ըլլալը աւետելով:

Ահաւասիկ մոմերու ջահը կ'երկարի պատուիւհանէն դուրս: Երիտասարդ մը գայն խլելով եղնիկի արագութեամբ կը սլանայ աստիճաններէն վեր, հասցնելով գայն Պատրիարք հօր:

Պատրիարք հայրը վերէն այդ մոմերու ջահով կ'օրհնէ ժողովուրդը ու կ'աւետէ Քրիստոսի հրաշափառ Յարութեան աւետիսը:

Ապա ուրիշ վառած մոմ մըն ալ կը հանուի գերեզմանէն, որպէսզի ժողո-

վուրդը վառե անկէ իր ձեռքին ունեցած մոմերը:

Ամէն մարդ ունի իր ձեռքին մէջ բարակ մոմերու հաստ տրցակ մը, որոնք կը վառեն իրարմէ: Հիմա ամբողջ եկեղեցին մոմերու բոցավառութեան մէջ է:

Ես, որ վերնայարկէն կը դիտէի, կը տեսնէի թէ ինչպէս ամբողջ եկեղեցւոյ տարածքը կրակ ու բոց կ'երեւէր: Կարծէք մարդիկ եղած չըլլային այդ բոցերուն տակ:

Բոլորն ալ վառած են այդ մոմերը, որպէսզի զանոնք իրենց հետ տուն տանելով բաժնեն նաեւ իրենց հարազատներուն ու բարեկամներուն, այն հաւատքով՝ որ Քրիստոսի գերեզմանէն ծագած այդ լոյսով լուսաւորած պիտի ըլլան նաեւ անոնց տունները:

Ամբողջ եկեղեցին թէ՛ կը տաքնայ եւ թէ՛ մոմերու բոցերէն արձակուած ծուխով կը լեցուի:

Արարողութիւնը աւարտած է:

Հիմա մարդիկ կ'աշխատին մարել իրենց մոմերը եւ դժուարութիւն կ'ունենան փչելով կարենալ մարելու այդ հսկայ բոցը:

Վերջաւորութեան բոլոր ուխտաւորներս կը փափաքինք Քրիստոսի գերեզմանէն ներս մտնել մեր ուխտը կատարելու համար: Սակայն խճողումը այնքան շատ է որ մէկուկէս ժամ այդ խճողումին մէջ սպասելէ ետք... բախտը չենք ունենար կարենալ ներս մտնելու:

Կիրակի, Չատիկ Յարութեան:

Առաւօտ կանուխ դարձեալ կ'երթանք Ս. Յարութեան եկեղեցին, ներկայ գտնուելու Չատկական եւ Հայկական հոգեպարար արարողութեան, որ կը կատարուի ուղղակի գերեզմանին առջեւ, ուրկէ Յարութիւն առաւ Յիսուս:

Հոս է եկեղեցական դասը ամբողջութեամբ, գլխաւորութեամբ Պատրիարքի փոխանորդ Նուրիան Արք. Մանուկեանի: Ժառանգաւորաց վարժարանի ուսանողներ կ'երգեն Պատարագը:

Չատկական տօներուն առիթով, Ամենայն Հայոց կաթողիկոս ՏՏ Գարեգին Բ. Հայրապետի կարգադրութեամբ, երեք եկեղեցականներ՝ գլխաւորութեամբ Արմաւիրի առաջնորդ Գերշ. Սիոն Եպս. Աղամեանի, Հոգեշնորհ Իգնատիոս Վրդ. Մալխասեանի եւ Հոգշ. Կորիւն Արդ. Առաքելեանի, եկած էին Հայաստանէն, յատկապէս իրենց մասնակցութիւնը բերելու Աւագ շաբթուայ բոլոր արարողութիւններուն եւ տեսնելով Ս. Յարութեան տաճարը ու աղօթելով Քրիստոսի գերեզմանին վրայ, առաւել զօրանալու եւ վերանորոգուելու իրենց սրբազան ուխտին մէջ:

Որպէս հայրենիքէն եկած՝ Ս. Էջմիածնի ներկայացուցիչներ, օրուան պատարագելու պատիւը տրուած էր Սիոն Եպս. Աղամեանին, որ կը պատարագէր գերեզմանին ներսէն, մինչ դպրաց դասն ու սարկաւագները կ'երգէին

գերեզմանէն դուրս, դռան առջեւ: Ուխտաւորները մինչեւ վերջ ոտքի վրայ հետեւեցան Պատարագին, քանի որ եկեղեցւոյ մէջ նստարաններ չկան:

Պատարագի վերջաւորութեան, պատարագիչ Սիոն Սրբազան տուաւ խորիմաստ քարոզ մը, շեշտը դնելով Յարութեան գաղափարին վրայ, որ «հիմն է քրիստոնէական հաւատքին» եւ թէ «Առանց Յարութեան գաղափարին չկայ քրիստոնէութիւն»:

Պատարագի աւարտէն ետք առիթը ունեցանք մտնել գերեզմանէն ներս. մէկ վայրկեան տեւողութեամբ միայն, կարենալ աղօթելու եւ մեր ուխտերը կատարելու:

Ապա քիչ անդին աստիճաններէն վեր, բարձրացանք դէպի Գողգոթա, հոն ուր Յիսուս Խաչուեցաւ ու մեռաւ ի փրկութիւն որդւոց մարդկանց»:

Իսկ ահա այն տեղը ուր Յիսուսը խաչէն իջեցնելէն ետք զինք պատանքեցին: Շուրջ բոլորը ուխտաւորներ ծունկի եկած կը խոնարհին ու կը համբուրեն գետնի քարը եւ իրենց թաշկինակները կը քսեն քարին, օրհնութիւն ստանալու անկէ:

Արդէն իսկ կէսօր է: Բաժնուելով Ս. Յարութեան տաճարէն կը վերադառնանք վանքի շրջափակին մէջ գտնուող ՀԵՄ-ի ակումբը, հաւաքական մեր ճաշը ճաշելու՝ ակումբին այլ անդամներուն հետ միասին, ուրախ մթնոլորտի մը մէջ իրար ծանօթանալով:

Օրուան մնացեալ մասը ամէն ոք ազատ էր իր շուկայի գնումները կատարելու:

Երկուշաբթի օր Սրբոց Թարգմանչաց վարժարանի վերատեսուչ հայր Հրայր Գազազեանի առաջնորդութեամբ կ'այցելենք վանքին բաժանմունքները:

Նախ կ'երթանք հայոց գերեզմանատունը, որ մօտ կ'էս քմ. հեռու է վանքէն: Հոն կ'այցելենք Տէր Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի եւ Տէր Տիրան ընտրեալ Սրբազան Պատրիարք Ներսայեանի դամբարանները, տեղադրուած իրարու մօտ, շինուած սեւ կրանիտեայ քարով եւ նոյն ձեւով:

Մեր աղօթքները մատուցանելէ ետք իրենց հոգիներուն համար, կը վերադառնանք վանք:

Ահաւասիկ Թարգմանչաց վարժարանը իր հսկայական ու արդիական շէնքով ու դպրոցի մը յատուկ՝ բոլոր պահանջները գոհացնող կազմածներով:

Այս վարժարանը Սաղիմահայութեան գրեթէ միակ վարժարանն է, ուր հայ աշակերտներ կը ստանան իրենց հայեցի դաստիարակութիւնը:

Կ'այցելենք Ժառանգաւորաց վարժարանը, ուր մօտ 40 երիտասարդներ կ'ուսանին ապագայի կրօնաւորներ դառնալու: Կ'այցելենք գրատունը, ուրկէ կ'առնենք մեզ հետաքրքրող գրքեր:

Ահաւասիկ մատենադարանը: Կիւլպէնկեան հիմնադրամով վերաշինուած արդիական կառոյց մըն է ան: Հոն կը պահուին դարերէ եկած թանկարժէք մատենաներ, որոնցմէ երկու հատը կարենալ տեսնելու արտօնութիւն կը ստանանք: Անոնց երկուքն ալ հաստափոր գրքեր են գրաբարով գրուած: Առաջինը կը ներկայացնէ սուրբերու կեանքն ու կենցաղը, հնամաշ թերթերով: Տպուած է 1641-ին Նոր Ծուլֆայի մէջ: Իսկ երկրորդը Աստուածաշունչ մըն է, հին եւ նոր կտակարաններով: Տպուած է 1666-ին, Ամստերտամի մէջ:

Կան նմանօրինակ շատ թանկագին ու պատմական գիրքեր, որոնք վստահաբար տրամադրելի են միայն մասնագէտներուն՝ ուսումնասիրութեան համար:

Երեկոյեան ընթրիքէն ետք ունեցանք մենք մեզի համար կազմակերպած ողջերթի հաւաքոյթ մը, քանի՝ յաջորդ օր ալ պիտի վերադառնանք մեր տուները:

Հաւաքոյթի ընթացքին ներկաներէն ոմանք խօսք առնելով խօսեցան իրենց տպաւորութիւններուն մասին, արտայայտելով իրենց ստացած անհուն գոհունակութիւնը: Մինչեւ իսկ ոմանք իրար հետ կը խօսէին յաջորդ տարի կրկին անգամ երթալու մասին: Առանց բացառութեան բոլորին ալ տրամադրութիւնները բարձր էին եւ ուրախ, որ կեանքի մէջ բացառիկ նկատուող այս ուխտագնացութեան կրցած էին արժանանալ, շնորհիւ Արեւելեան Թեմի Առաջնորդարանի կարգադրութեան եւ կամօքն Աստուծոյ:

Ընդհանուր խանդավառ մթնոլորտէն ետք, ժամը 12:00-ին, հաւաքոյթը վերջ գտաւ Հոգշ. Կորիւն Արդ. Առաքելեանի «Փառք քեզ Տէր Աստուած մեր» քարոզով, որուն իւրաքանչիւր համարին վերջաւորութեան, ներկաները միաբերան երգեցին «Ամէն»:

Ապա բոլորս գոհունակ սրտով բաժնուելով իրարմէ գացինք մեր ննջասենեակները:

«Նոր Օր», 9 Յուլիս 2009

«ԱՆՈՒՆՈՎԴ ԱՊՐԻՍ»

Անունովդ ապրիս մեծ հայրիկ: Անունովդ ապրիս քեռայր: Անունովդ ապրիս խնամի: Անունովդ ապրիս Պրն. Յակոբ: Անունովդ ապրիս... ու ապրիս...:

Մեծէն ու փոքրէն, հեռուն ու մօտէն, հարազատէն ու բարեկամէն, անձամբ թէ հեռաձայնով, բոլոր անոնք որոնք կը շնորհաւորեն զիս անուանս տօնին առիթով, կը մաղթեն որ անունովս ապրիմ:

Չեմ գիտեր ինչու է այս մաղթանքը որ կը յիշեցնեն ինծի ամէն տարի: Մինչդեռ ես նման մտադրութիւն մը չեմ ունեցած երբեք կեանքիս մէջ: Մեր ծնունդէն ինչ անունով որ մկրտած են մեզ մեր ծնողները, ըստ ընկալեալ սովորութեան, այդ անունով ալ կ'ապրինք մինչեւ վերջ: Որով ինչու է այս մաղթանքը:

Նոյնն է պարագան նաեւ բոլոր միւս սուրբերուն անուան տօներուն: Թէեւ կարելի է ըսել որ այսօր անուան շնորհաւորանքի աւանդական այդ բարի սովորութիւնները, ի մասնաւորի Ամերիկահայ հին սերունդին մօտ, գրեթէ բոլորովին մոռցուած եւ դադրած են յիշատակուել: Նոյնիսկ շատեր չեն ալ գիտեր ոչ սուրբերուն եւ ոչ ալ անոնց անուան տօներուն մասին: Սակայն մեզի պէս արեւելեան երկիրներէ եկած եւ տակաւին այդ սովորութիւնները պահպանողներուն մօտ, նուիրական կը նկատուին այդ շնորհաւորանքները, քանի որ այդ աւանդական սովորութիւնները քիչ մը իրենց մէջ կը ցոլացնեն յարգանքի, մեծարանքի, մտերմութեան եւ հարազատութեան նման բարեմասնութիւններ, որոնք մարդկային զգացմունքներու դրսեւորումներ են:

Դժբախտաբար այդ սովորութիւնները այս երկիրներուն մէջ կը տեսնեն հազիւ 30-60 տարիներ, նայած ընտանիքներու եւ իրենց արմատներու զօրութեան:

Այս ժամանակամիջոցի ընթացքին, տեղական ըմբռնումներն ու աւելի հաճելի թուացող այլ տեսակի տօներ, ինչպէս «Վելընթայնզ Տէյ»ը, «Դէնքս Կիվինկ»ը, «Հալօուին»ը եւ այլն աւելի նախապատիւ տեղ կը գրաւեն մտայնութիւններու մէջ, մոռացութեան մատնելով մեր աւանդութիւնները:

Ամէն պարագայի լաւ է որ կան տակաւին ընտանիքներ, որոնք կառչած կը մնան իրենց սովորութիւններուն եւ կը շարունակեն զանոնք թէկուզ...

«Անունովդ ապրիս»ով:

Մեր հայերեն լեզուի մեջ սովորություն դարձած կարգ մը թերի ասացուածքներեն մին է նաեւ այս մէկը «Անունովդ ապրիս»ը:

Թերի կը կոչեմ զայն, չըսելու համար անիմաստ, քանի որ զայն մաղթողները առանց անդրադառնալու անոր թերի ու անիմաստ ըլլալուն, անմեղօրէն շիտակ մաղթանք մը տուած ըլլալու յաւակնութիւնը ունին: Որով եթէ փորձենք համալրել այս մաղթանքը, պարտինք իւրաքանչիւր Սուրբին անունը տալ իրեն պատշաճ ստորոգելիով մը:

Օրինակ «Ս. Յակոբ»ին կարելի է ըսել, Անունիդ տիրոջը «սրբութեամբ» ապրիս, կամ ուղղակի Ս. Յակոբի «սրբութեամբ» ապրիս:

Լուսաւորիչի «լոյսովը» լուսաւորուիս:

Ս. Գեորգի «քաջութեամբ» ապրիս:

Ս. Սարգիսի «հաւատքի զօրութեամբ» ապրիս:

Ս. Ներսէսի «շնորհքով» ապրիս եւ այլն:

Այսպիսով է որ իմաստաւորած կ'ըլլանք մեր տուած մաղթանքները:

Ուրիշ սխալ մաղթանք մըն է նաեւ մահուան պարագային ցաւակցութիւն յայտնելու ժամանակ ըսել «կեանքը քեզի»:

Սակայն, թէ որուն կեանքը: Ցաւակցութիւնը կը յայտնենք մեռնողի մը համար, որուն կեանքը վերջացած է արդէն: Եթէ աւելի կեանք ունէր պիտի ապրէր ու չմեռնէր: Այնպէս որ անիմաստ է վերջացած կեանքի մը շարունակութիւնը մաղթել ապրող մարդուն:

Հոս սխալը միայն «ը» որոշիչ տարին գործածութեան մէջն է: Առանց այդ «ը»ի պարտինք ըսել «կեանք քեզի»: Այդպիսով ըսած կ'ըլլանք, որ մեռնողը մեռաւ ու կեանքը վերջ գտաւ, թող Աստուած կեանք շնորհէ քեզի:

Այս տեսակի սխալ արտայայտութիւններ միշտ կրկնելով այնքան սովորական դարձած են ժողովուրդին համար, որ մարդիկ մեքենայաբար կը կրկնեն զանոնք առանց դոյզն իսկ մտածելու անոնց ճշգրտութեան վրայով:

Յուսանք մարդիկ անդրադառնան այդ սխալ ասացուածքներուն եւ ուղղեն զանոնք:

«Մասիս», 24 Դեկտեմբեր 2016

ԻՆՉՈՒՄ ԾԱՌԵՐԸ ԱՇՆԱՆ ԿԸ ԹԱՓԵՆ ԻՐԵՆՅ ՏԵՐԵԻՆԵՐԸ

Այս հարցը յաճախ տուած եմ ես ինծի, գիտնալով, թէ ի՞նչ է գաղտնիքը բնութեան այդ օրէնքին, որ բոլոր ծառերը աշնան մերկանան իրենց տերեւներէն եւ գարնան նոր տերեւներ ծլին:

Թէեւ ոեւէ մէկուն չեմ հարցուցած զայն լուսաբանուելու մտօք, այլ բաւականացած եմ պարզապէս ընդունելով զայն որպէս բնութեան մէկ օրէնքը: Մի գուցէ պաղէն կը ցրտահարուին ու մեռնելով կը թափին: Բայց եւ այնպէս ամէն աշնան տերեւաթափին ինքնին կը վերյիշէի այդ հարցումը, առանց խորանալու սակայն անոր գաղտնի փնտռտուքին մէջ:

Սակայն, ահա տարի մը (մօտ 10 տարի առաջ, ճշգրիտ թուականը չեմ յիշեր), եղանակային անսովոր պատահար մը ինքնին պիտի զար բացայայտել պատճառը բնութեան այդ գաղտնիքին:

* * *

Ամերիկայի արեւելեան՝ մանաւանդ հիւսիսարեւելեան շրջանները ընդհանրապէս համատարած ծառաստաններ եղած են: Երբ կը ճամբորդենք, յաճախ այն տպաւորութիւնը կ'ունենանք, որ մարդիկ այդ ճամբաները կրցած են բանալ ծառերը կտրելով ու տեղը հարթելով: Երբ կը դիտենք լեռներն ու ձորերը, ընդհանրապէս հոգը չենք տեսներ ծառերու խտութենէն: Առանձին տուներ, շէնքեր ու մինչեւ իսկ գիւղեր ու քաղաքներ կառուցուած են ծառաստաններու մէջ: Գրեթէ բոլոր տուներու բակերուն մէջ մէկէ աւելի ծառեր կը գտնուին, մերթ երկարկանի տուներու երկու բարձրութեամբ:

Բոլոր այս ծառերը, ի բաց առեալ մշտադալար ծառերէն, ենթակայ են բնութեան այս տերեւաթափի օրէնքին:

Սակայն նախքան իրենց տերեւաթափը, անոնցմէ շատեր կը գունափոխուին՝ ստանալով ոմանք դեղին, ոմանք կարմիր, ուրիշներ նարնջագոյն կամ մանիշակագոյն գոյներ, որոնք՝ միախառնուած կանաչներու հետ՝ երփներանգ գեղեցկութիւն մը կը պարզեն:

Հոկտեմբեր ամիսը կը ցոլացնէ այս խայտաբղետ ծառերու դրախտային գեղեցկութիւնը մինչեւ Նոյեմբերի երկրորդ կէտը, որու ընթացքին տեղի

կ'ունենայ նաեւ տերեւաթափը:

Ահա այդ տերեւաթափէն ետք է որ կը սկսի խստաշունչ ձմեռը իր սպիտակ ձիւնով ու սառնամանիքով:

Սակայն կ'երեւի թէ բնութիւնն ալ երբեմն կը շեղի իր օրէնքներէն եւ անբնական սխալներ կը գործէ, ահաւոր փորձանքներ բերելով մարդոց գլխուն, ինչպէս պատահեցաւ այդ տարին (մօտ 10 տարի առաջ), ուր Հոկտեմբեր ամսուան մէջ, անժամանակ եւ անսպասելի տեղատարափ ձիւն տեղաց, երբ տակաւին ծառերուն տերեւները չէին թափած: Թաց ձիւնը նստաւ այդ ծառերուն տերեւներուն վրայ իր ահաւոր ծանրութեամբ: Եւ ահա այդ ծանրութեան ճնշումին տակ հսկայական ծառեր տապալեցան, հաստաբուն կոճղեր ճաթելով կոտորուեցան եւ ինկան տուներու եւ ինքնաշարժներու վրայ, անպատմելի վնասներ պատճառելով: Իսկ վատագոյնը այն էր, որ ելեկտրական թելերու վրայ ինկող կոճղերը պատճառ եղան, որ ելեկտրականութենէ զրկուին միլիոնաւոր մարդիկ: Հազարաւոր ընտանիքներ մնացին խաւարի մէջ, զուրկ թէ՛ ելեկտրականութենէն եւ թէ՛ ջերմութենէ: Եղան շրջաններ, ուր մարդիկ մնացին այդ վիճակին մէջ վեց շաբաթէն աւելի:

Այս ահաւոր աղէտը պատահեցաւ բնութեան օրէնքին մէկ խախտումովը, քանի որ ըստ բնութեան բնական օրէնքին, ընդհանրապէս ձիւնը կը սկսի Դեկտեմբեր ամսուն մէջ, երբ բոլոր ծառերը արդէն իսկ մերկացած կ'ըլլան իրենց տերեւներէն, որովհետեւ ձիւնը չի կրնար ծանրանալ մերկ ու բարկ ճիւղերուն վրայ:

Այս ահարկու դէպքը պիտի գար պարզել մեզի պատճառը բնութեան այն գաղտնիքին, թէ ինչո՞ւ ծառերը աշնան կը թափեն իրենց տերեւները:

* * *

Մօտ 10 տարի առաջ պատահած այս աղէտը յիշեցի, երբ այս տարի եւս (2011) տեղի ունեցաւ նոյն աղէտը, ուր անժամանակ տեղացող ձիւնը Հոկտեմբեր 29-ին, գրեթէ նոյն ամերը գործեց Ֆիլատելֆիայէն մինչեւ Պոսթըն, ներառեալ Նիւ Ճըրզիան, Նիւ Եորքը, Հարդֆորտը, Փրովիտենսը, Սթրինկֆիլտը եւ այլ շրջաններ, ուր որոշ տեղեր մինչեւ 30 մատնաչափ ձիւն տեղաց: Թէեւ այս մէկը բաղդատմամբ նախորդին աւելի փոքր կարելի է նկատել, սակայն նոյն աղէտներն են, որ պատահեցան դարձեալ: Կոտրած ծառերը ոչ միայն տուներ քանդեցին, ինքնաշարժներ խորտակեցին, այլ եւ օրերով ճանապարհներ փակեցին արգիլելով երթ ու դարձը:

Իսկ ձիւն տեղացած բոլոր շրջանները գրեթէ ամբողջութեամբ զրկուեցան ելեկտրականութենէն: Կարգ մը շրջաններ մի քանի օրէն, ուրիշներ մէկ շաբա-

թէն վերստացան իրենց ելեկտրական հոսանքը: Իսկ անբախտ շրջաններ 10 օր անց տակաւին կը սպասէին... լոյսին...:

Մեր մեծերը կ'ըսէին. «Ամէն բան ժամանակին լաւ կ'ըլլայ»:

Իմաստուն խօսք արդարեւ:

Իսկ ահա այս իմաստուն խօսքին հնազանդ ծառերը ամէն տարի օրինաւոր կերպով «իր ժամանակին» կը թափեն իրենց տերեւները:

Սակայն կը տեսնուի որ ձիւնը երբեմն չի հնազանդիր բնութեան այս «իր ժամանակին» ըլլալիք օրէնքին:

«Նոր Օր», 29 Դեկտեմբեր 2011

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԻՆՉՈՎ Է ՆՈՐ

Նոր տարին համաշխարհային տօն է: Թեև կարգ մը ազգեր ունին իրենց ուրոյն տարիներն ու տարեգլուխները, սակայն, միայն իրենք է որ կը յիշատակեն զայն:

Աշխարհի մէջ բոլորին կողմէ ընդունուած ու գործածուող տարեթիւր մէկ է: Այս տարեթիւր յատկապէս Քրիստոնեայ աշխարհին համար մեծ նշանակութիւն ունի, անոր համար որ ան սկիզբ կ'առնէ Քրիստոսի ծնունդէն: Ինչպէս գիտենք, տարեգլուխն ու Ծնունդը միատեղ են: Իսկ թէ ինչու նոյն օրուան չեն հանդիպիր եւ կաթոլիկ աշխարհը Դեկտեմբեր 25-ին, իսկ հայերը Յունուար 6-ին կը տօնեն Ծնունդը, այդ տարբեր նիւթ է եւ դուրս կը մնայ մեր այս գրութենէն:

Քրիստոնեայ աշխարհը նոր տարին կը տօնէ մեծ շուքով: Իւրաքանչիւր ընտանիք անպայման կադանդի ծառ մը կը զարդարէ իր տան մէջ: Համադամ կերակուրներ եւ անուշեղէններ կը պատրաստուին եւ ուրախութեան ճայներ կը լսուին ամէն կողմէն:

Մենք՝ հայերս, երբեք աննկատ չենք թողած Նոր Տարին: Իւրաքանչիւր ընտանիք իր վիճակին ներած չափով տօնած է զայն ամէն տարի: Ամենաաղքատ ընտանիքներն անգամ բացառիկ տեսք մը տուած են իրենց նոր տարւայ տօնակատարութեան, յատուկ ճաշեր եւ անուշեղէններ պատրաստելով:

Վերջին հարիւրամեակին Նոր Տարուան տօնակատարութիւնները հետզհետէ աւելի զարգացան ու ճոխացան: Նախապէս քանի մը ընտանիքներ տան մը մէջ կամ ճաշարանի մը մէջ մէկտեղուելով, միատեղ կը տօնէին Նոր Տարին: Յետոյ, միութիւններ ու կազմակերպութիւններ սկսան նոր տարուայ խրախճանքներ կամ պարահանդէսներ կազմակերպել, որպէսզի կարելի ըլլայ ամէնքով մէկտեղ աւելի ճոխ եւ աւելի ուրախ մթնոլորտի մը մէջ տօնել Նոր Տարին:

Նիւ Եորքի Rockefeller Center-ի մէջ կանգնած 85 ոտք բարձրութեամբ կադանդի ծառը իր անհաշիւ գունաւոր լոյսերով, կը հմայէ հազարաւոր դիտորդներ, որոնք արհամարհելով աննպաստ օդն ու ցուրտը, կու գան դիտելու զայն եւ ժամը 12-ին 10 երկվայրկեան մնացած ամէնքը միասին կը սկսին համրել 9.8.7.6.5.4.3.2.1 հէլէլէլէլ... Նոր Տարին եկաւ: Ընդհանուր խանդավառութեան

մթնոլորտ մը կը ստեղծուի բոլորին մօտ: Ուրախութեան բացականչութիւններ կը լսուին ամէն կողմէ: Ծանօթներ ու բարեկամներ կը շնորհաւորեն իրար «Շնորհաւոր Նոր Տարի» ըսելով: Սիրելիներ եւ հարազատներ կը համբուրուին՝ իրար բարի մաղթանքներ փոխանակելով:

Այս բոլորը Նոր Տարուայ տօնակատարութիւններու պատկերն է: Սակայն հիմնական հարցումը որ կու գայ մեզմէ իւրաքանչիւրին միտքը այն է՝ թէ ինչ է նորութիւնը Նոր տարուան. Նոր Տարին ինչով է նոր:

Իւրաքանչիւր անձ իր տարիքի համրանքին չափ Նոր Տարիներ դիմաւորած է անշուշտ. ճոխ կամ համեստ պայմաններու տակ: Սակայն ինչ տարբերութիւն տեսած է Դեկտեմբեր 31-ի եւ Յունուար 1-ի միջեւ, ուր ամէն ինչ նոյնն է: Բնութեան օրէնքները նոյնն են, մեր ամէնօրեայ կեանքը նոյնն է, մեր աշխատանքը, մեր կերուիսումը, մեր զբաղմունքները, մեր մտահոգութիւնները եւ ամէն ինչ նոյնն են: Ուր է նորութիւնը Նոր Տարուան:

Ճիշդ է, Նոր Տարին կու գայ մեզ յիշեցնել թէ տարի մը եւս պակսեցաւ մեր կեանքին եւ ահա մուտք կը գործենք Նոր Տարիէ մը ներս, ապրելու՝ հոն մեզի վերապահուած անակնկալ վերիվայրումները, որոնք շատ հաւանաբար տարբեր պիտի չլլան անցնող տարուան վերիվայրումներէն:

Միակ տեսանկի տարբերութիւնը որ կարելի է նկատել այն է՝ որ 2014-ի վերջին թուանշան «4»ը կը վերածուի «5»ի եւ ուրիշ ոչինչ: Բոլոր այս տուեալներու լոյսին տակ ի՞նչ նորութիւն կ'ակնկալենք Նոր Տարիէն:

Նոր Տարին, որպէս նորութիւն ոչինչ պիտի կարենայ տալ ոեւէ անձին, եթէ այս անձը ինք չկարենայ բերել բարենորոգում մը ինքն իր կեանքին մէջ: Բարենորոգում մը, որ կարելի է ձեռք ձգել մի միայն լուրջ ինքնաքննութեամբ:

Վաճառականներ տարւոյն վերջաւորութեան կը քննեն իրենց տարեկան հաշիւներն ու գործունէութիւնը, տեսնելու թէ ինչ սխալներ գործած են տարուան ընթացքին, որոնք վնաս հասցուցած ըլլան իրենց. երբ կ'անդրադառնան այդ սխալներուն, այնուհետեւ կը գզուշանան որ չկրկնեն զանոնք յաջորդ տարին եւս:

Նոյնն է պարագան իւրաքանչիւր անհատի համար: Որեւէ անհատ կրնայ ունենալ վատ բնավորութիւններ, վատ սովորութիւններ, մոլութիւններ, ինչպէս գինեմոլութիւնը, ծխելու մոլութիւնը, հեշտամոլութիւնը եւ այլն: Ուրիշներ գրպարտելու, բամբասելու, այլոց վրայ միշտ թերութիւն փնտռելով չարախօսելու սովորութիւնը: Մանուկներու եւ դպրոցական աշակերտներուն մօտ ծովութիւնը, անհոգութիւնը, անհնազանդութիւնը, խաղամոլութիւնը եւ նման հարցեր: Կարելի չէ թուել մարդկային բոլոր տեսակի թերութիւնները, սակայն իւրաքանչիւր անձ կրնայ ունենալ որոշ թերութիւն մը, սրբագրութեան կարօտ:

Ահա այդ սրբագրության մէջն է Նոր Տարուան գաղտնիքը:

Այն անձը որ, անդրադառնալով իր մէկ վատ բնաւորութեան կամ մոլութեան, որոշէ ձերբազատուիլ անկէ ու տարեվերջին ձգելով իր այս վատ մոլութիւնը կամ բնաւորութիւնը՝ մոռաք գործէ Նոր Տարիէն ներս բարենորոգուած ձեւով, ահա այդպիսին է որ կ'ունենայ բառին բուն իմաստով Նոր Տարի մը:

Այլապէս, երգելով ու պարելով, գլուխներուն վրայ թագեր դնելով, սուլիչներ փչելով եւ բարձրաձայն «Շնորհաւոր Նոր Տարի»ներով դիմաւորուած Նոր Տարի մը իր իմաստէն զուրկ եւ սովորական խրախճանքի երեկոներէն տարբեր բան չնկատուիր:

«Մասիս», 3 Յունուար 2015

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Երեկոյեան, առօրեայ գործերէս յոգնած, կը հանգչէի տղուս գրասենեակին մէջ, երբ ան, նամակատուփէն, օրուան նամակներու տրցակը եւ անոնց մէջէն պահարան մը երկարեց ինծի: Արագ ակնարկով մը տեսայ ուղարկողին հասցէն: Պոսթոնաբնակ բարեկամէս՝ Պրն. Եղիա Ատուրեանէն էր:

Անմիջապէս բացի պահարանը եւ գտայ 24 էջնոց «պրօշիւր»-գրքոյկ մը՝ «Մեծարանքի հանդիսութիւն, նուիրուած վաստակաշատ գրող, հրատարակիչ, ազգային գործիչ Թորոս Թորանեանի» վերտառութեամբ, որ տեղի ունեցած է 12 Հոկտեմբեր 2003-ին, Պէյրութի մէջ, թուականէս մօտ 5 շաբաթներ առաջ:

Մեծ եղաւ ուրախութիւնս: Ի վերջոյ, մեր ազգը գէթ, այս մարզին մէջ, յառաջդիմութիւն մը արձանագրած է: Սորված է մեծարել մեր արժանաւորները իրենց կենդանութեան եւ ոչ... յետմահու, ինչ որ էր անցեալին: Օրինակ՝ Վահան Թէքեան իր կենդանութեան չունեցաւ այնքան մեծարանք ու պատիւ, որքան իր մահէն ետք: Իսկ այսօր, անոր մեծութիւնը կը գնահատուի ամբողջ ազգին կողմէ, մինչեւ իսկ անոնց կողմէ, որոնք իր մէկ աչքը կուրցուցին:

Յափշտակուած՝ կը սկսիմ կարդալ: Ահաւասիկ իր ինքնակենսագրութիւնը, որուն բաւական ծանօթ եմ արդէն: Չէ՞ որ երկուքս ալ Տավուտիէցի ենք: Թէեւ ես վեց տարիով ետ եմ Թորանեանէն, սակայն Տավուտիէն հայկական արուարձան մը ըլլալուն, մարդիկ, մեծ մասամբ, իրար կը ճանչնային:

Ահա՛ մատենագիտութիւնը.

Ա.- Բանաստեղծութիւններ, Բ.- Արձակ գործեր, Գ.- Յուշագրական, Դ.- Տպաւորութիւններ-Վկայութիւններ-Գրական եւ բանասիրական ուսումնասիրութիւններ-Խոհագրական եւ հրապարակագրական էջեր, Ե.- Խմբագրական աշխատանք, Զ.- Թարգմանական աշխատանք, Է.- Անտիպ աշխատութիւններ, Ը.- Օտար լեզուներով, Թ.- Մամուլի աշխատակցութիւն, ելւն., ելւն., որոնց միայն ցուցակը կարդալ 15 վայրկեաններու կը կարօտի:

Մեծ է հունձքը Թորանեանին: Մօտ 150 հրատարակութիւններ, չհաշւած՝ հարիւրաւոր յօդուածներ, ճամբու նօթերը, տեղեկատուութիւնները եւլն:

Գրքոյկին մէջ մօտ 20 այլ գրողներու «վկայութիւնները» կու գան տալ

արժանին արժանաւորին, գնահատելով լեռնակուտակ վաստակը այս ստեղծագործ հայուն: Կը վկայեն թէ ինչպէս երեւոյթներէն չազդուող, վիատիլ չգիտցող, դժուարութիւններու եւ արգելքներու դիմաց չընկրկող, Հայ լեզուն ուղղակի պաշտող, յաւէտ եռանդուն եւ «զգուելի կոչուելու չափ լաւատես» [այս վերջին որակումը Թորանեանինն է, ինքն իր մասին խօսած] անձ մըն է Թորոս Թորանեան:

Թորանեան կը գրէ ու կը հրատարակէ: Իսկ ատով ալ չի վերջանար իր գործը: Չանոնք վաճառելու գործին մէջ եւս մեծ բաժին մը ունի: Որպէս ժողովուրդէն սիրուած եւ հեղինակաւոր անձ, կ'այցելէ հայ արհեստաւորներու խանութներն ու բարեկամներու տուները, առաջարկելու անոնց որ գնեն այդ գիրքերէն: Եւ ոչ միայն գնել՝ պարգապէս գնած ըլլալու համար կամ «խաթեր» համար, այլ կարդալու համար եւ միշտ սերտ կապով մը կապուած մնալու հայ գիրին ու գրականութեան հետ:

Թորանեան, այս ընելով, կ'աշխատի իր ազգակիցները մղել ընթերցասիրութեան, միշտ վառ պահելու անոնց սրտերուն մէջ Մէրը հանդէպ հայ գրքին, հայ թերթին, հայ մշակոյթին:

Գործատէր թէ աշխատաւոր հայորդիներ ընդհանրապէս սիրով կը գնեն այդ գիրքերը: Սակայն բացառաբար կան անձեր եւս, որոնք իրենց ժառութեան եւ տգիտութեան պատճառաւ, կը մերժեն զինք. եւ մերթ... քիչ մըն ալ անբաղաքավար կերպով...:

Իսկապէս վիրաւորական է նուիրումի փոխարէն լսել անհաճոյ խօսքեր, անհասկացող եւ անգէտ անձերէ: Սակայն, այդ երեւոյթներէն ընկճուող մը չէ Թորոս Թորանեան:

1999-ին տիկնոջս հետ միասին երբ Հալէպ գացած էինք այցելութեան, կը հեռաձայնէի Տօթ. Թորանեանին յայտնելով իրեն մեր Հալէպ գտնուիլը եւ տեսակցիլ փափաքիս իր հետ:

Տօթ. Թորոս այցելութեան եկաւ մեր իջեւանած տունը, անութին տակ՝ տրցակ մը գիրքերով:

Մօտ 20 տարիներու բացակայութենէն ետք, սիրալիր հանդիպում եւ մտերմիկ զրոյցներ ունեցանք իրարու հետ: Այդ առթիւ էր, որ պատմեց, թէ ինչպէս մեծահարուստ եւ գործատէր հայու մը քով գացած էր (եւ ալ լաւ կը ճանչնամ այդ անձը) իրեն ծախելու՝ իւրաքանչիւր հայ ընտանիքի համար կարելու եւ էական գիտելիքներով լեցուն «Յուշամատեան Մեծ Եղեռնի» հաստափոր գրքէն օրինակ մը եւ... կոպտօրէն մերժուած էր:

Հակառակ անոր որ իր գիրքերէն մին ալ չէր այդ գիրքը, այլ՝ «Զարթօնք» օրաթերթի մէկ հրատարակութիւնը:

Տօթ. Թորանեան քիչ մը յամառելով, սակայն եւ քաղաքավար կերպով

ըսած է իրեն.- Պրն. Ն.... այս գիրքէն օրինակ մը ձեզի չծախած այստեղէն պիտի չելլեմ: Եթէ երբեք ձեզ նման ազգայիններ, որոնք մանաւանդ որ ունեւոր են, պիտի չքաջալերեն հայ գիրն ու գրականութիւնը, հայ մշակոյթը, պիտի չհետաքրքրուին հայոց պատմութիւնով, հայ անցուդարձով, պիտի չգիտակցին այս գրքին բովանդակութեան որ 1915-65 տարիներու հայոց Գողգոթայի եւ անոր հետեւանքներուն նկարագրութիւնն է ամբողջ, մանաւանդ որ եթէ պիտի չքաջալերեն այս գիրքն ու գիրքերը գրողներուն եւ պատրաստողներուն տարիներու աշխատանքը, մենք ազգովին ո՞ւր կրնանք հասնիլ...»:

Պիտի չուզէի շարունակել փոխանակուած խօսակցութեան մնացեալ մասը, որ ցոյց կու տար մեր ազգին զաւակներէն՝ մանաւանդ ունեւոր դասակարգէն կարգ մը հայերու ազգային (ան)գիտակցութիւնը: Մարդիկ, որոնց կեանքին միակ նշանաբանը եղած է՝ «Դրամ ու դրամ» - կատարեալ անտարբերութիւն ցուցաբերելով հայ գիրքին, հայ թերթին, հայ մշակոյթին նկատմամբ:

Իրաւամբ Պէպօ Սիմոնեան ըսած է. «Դժբախտաբար, մեր իրականութիւնը, սակայն, գնահատող չէ ինքնաբեր, ինքնամատոյց եւ անսակարկ մամուլի ծառայութիւնները: Հակառակ աստոր, Թորոս Թորանեան հաւատալով հայ մամուլի դերին եւ ազդեցութեան, անսպառ եռանդով եւ յոգնաջան նուիրումով կը շարունակէ հայ մամուլի աշխատակցութիւնը: Գնահատանք ու մրցանակ չի սպասեր, այլ՝ գիտակից ընթերցող...»:

Գրքոյկին մէջ, Թորանեանին մասին խօսուած իւրաքանչիւր բառ եւ խօսք տեղին է եւ ճշմարիտ: Չափազանցութիւններ չկան, այլ՝ հոն ըսուած է ինչ որ է իրականութիւնը, ա՛յդ միայն:

Սակայն կայ կէտ մը, որ հաւանաբար վրիպած է ուշադրութենէն: Թէեւ չեմ գիտեր, եթէ երբեք մեծարանքի օրը որեւէ մէկը նշեց գայն:

Տօքթ. Թորոս Թորանեանին տրուած այս բոլոր արժանի գնահատանքներէն կը խորհիմ որոշ բաժին մը կ'իյնայ իր համեստ տիկնոջ, Տօքթ. Արմինէ Թորանեանին, որ ընտանիքին ապրուստը հոգալու պատասխանատւութեան մեծ մասը յանձն առնելով, քաջալեր հանդիսացաւ իր ամուսնոյն, որպէսզի ան կարենայ անկաշկանդ՝ նուիրուիլ իր նախասիրութիւնը եղող գրականութեան, կարենալ հասնելու՝ այսօրուան ձեռք բերուած պատուաբեր արդիւնքին:

Շնորհակալութիւն՝ Տօքթ. Արմինէ Թորանեանին:

Արեւշատութիւն, արգասաբեր երկար տարիներ եւ բարի նո՛ր երթ՝ Տօքթ. Թորոս Թորանեանին:

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳԻՐՔԵՐՈՒ

Երբ կը կարդանք թերթերու մէջ նոր յոյս տեսած հայերէն գիրքի մը վրայով գրուած գինեձօն մը, հոգեպէս կ'ուրախանանք, տեսնելով որ կան տակաւին «խենթ»եր (նկատի ունիմ Ռաֆֆիի «Խենթը»), որոնք կ'աշխատին նոր շունչ եւ կեանք բերել հայ գրականութեան: Իսկ այդ նոր ծնունդներուն քովն ի վեր մեր այս «Մահագրութիւն»ը վստահաբար քիչ մը խորթ պիտի հնչէ ականջներուն, ցաւօք սրտի: Սակայն ինչպէս բնութեան օրէնքն է, որ իւրաքանչիւր ծնունդ ունի եւ մահ, այս ընդունած ենք որպէս ցաւալի իրականութիւն, որուն կրկնութենէն նախագգուշանալով, փորձած ենք գիտակցութեան հրաւիրել բոլոր անոնք, որոնք գիտեն եւ կ'ընդունին թէ հայ են, սակայն անհոգ ու անտարբեր են իրենց հայութեան նկատմամբ:

* * *

- Պրն. Յակոբ,- մօտեցաւ ինծի ծերունի Մանուէլը:

- Հրամեցէք Պրն. Մանուէլ,- ըսի:

- Պրն. Յակոբ, խնդրանք մը ունիմ քեզմէ:

- Բարի ըլլայ, Պրն. Մանուէլ, ինչ խնդրանք է այդ:

- Նախ կ'ուզէի վստահ ըլլալ, որ պիտի չմերժես զիս:

Կը զարմանամ:

- Սակայն Պրն. Մանուէլ, առանց գիտնալու խնդրանքիդ ինչ ըլլալը, ինչպէս ընդունիմ կամ մերժեմ զայն, թերեւս կարողութիւններէս վեր բան մըն է, որ չկարենամ գոհացում տալ ձեր խնդրանքին:

- Ոչ քու կարողութենէդ վեր չէ, այլ ուղղակի քեզ հետաքրքրող բան է: Անոր համար է որ քեզի կը դիմեմ, գիտնալով որ դուն ես որ կը հասկնաս խնդրանքիս կարելորութիւնը:

Դուն ես որ կրնաս զգալ սրտիս ցաւը. դուն ես որ կրնաս ըլլալ վերքիս դարմանը, դուն ես որ կրնաս ազատել զիս տանջող այս մղձաւանջէն:

- Ինչէ՛ր կ'ըսէք, Պրն. Մանուէլ, իրապէս կը յուզէք զիս: Ինչ բան է ձեր սիրտը այդքան տանջող ցաւը, որուն համար կը դիմէք ինծի: Ինչ կ'ուզէք որ ընեմ:

- Խոստացիր որ պիտի չմերժես խնդրանքս:

Քիչ մը կը տատանիմ ընդունելու ինծի անյայտ եղող այս խնդրանքը, սակայն ազատելու համար այս բարի ծերունին «գինք տանջող մղձաւանջէն», կ'ըսեմ.

- Շատ լաւ կը խոստանամ:

Եւ ծերունի Մանուէլ ապահովելէ ետք խոստումս, զսպումս յուզումով սկսաւ պատմել:

- Պրն. Յակոբ, տունը երեք սնտուկ գիրքեր ունիմ: Հայերէն գիրքեր: Կ'ուզեմ որ գաս եւ այդ գիրքերը վերցնես տանիս:

Ու պահ մը կենալէ ետք շարունակեց.

- Անցեալ շաբաթ մեր տիկինը երկու սնտուկ գիրք *կարպէնէն*ին (աղբահաւաք) տուեր է: Երբ լսեցի խենթացայ: Իմ նուիրական գիրքերս կինս *կարպէնէն*ին կու տայ...: Կրնա՞ս երեւակայել...: Եթէ շաբաթ մը եւս կենանք, այս երեք սնտուկներն ալ նոյն ճակատագրին պիտի արժանանան:

Խօսած ատեն մարդուն աչքերը կը ջրոտէին: Քիչ մը հանդարտելէ ետք շարունակեց.

- Ամենացաւալին այն էր, որ աներփօրմէղ խնդրած էի, որ ինծի Ս. Գիրք մը տար, որ կարդամ: Ան ալ ինծի տուած էր հայատառ թրքերէնով իր անձնական հին Ս. Գիրքը, որուն երկու Կտակարաններուն մէջտեղը կային իր գերդաստանական յուշագրութիւնները, ծնունդներ, մահեր, ամուսնութիւններ, մկրտութիւններ, եւլն., որոնք մօտ 100 տարուայ յուշագրութիւններ էին, իրեն համար այնքան նուիրական եւ արժէք ներկայացնող թուականներով: Ահա այն ալ իմ գիրքերուս հետ մասին *կարպէնէն*ին գացեր է...:

Հիմա ինչ ընեմ, չեմ գիտեր: Աներփօղ երեսը նայելու կ'ամչնամ: Ինչպէս կրնամ դարմանել այդ կորուստը: Գիտեմ որ եթէ տասը հատ նոր Ս. Գիրք տամ իրեն, այդ մէկ հատին տեղը չի բռներ: Այդ մէկը նուիրական մեծ արժէք ունէր իրեն համար:

Ի՛նչ ընեմ: Կինս կարդալ չի գիտեր, գաւակներս ալ թէւ հայերէն կը խօսին, բայց հայերէն կարդալ չեն գիտեր: Իսկ թոռնիկներս... մոռցիր...: Այնպէս որ այդ գիրքերը տան մէջ աւելորդ՝ անպէտ եւ տեղ գրաւող բան կը նկատուին:

Ահա թէ ինչու քեզի կը դիմեմ ու կը խնդրեմ քեզմէ, որ գաս ու տանիս այդ գիրքերը: Աւելի շիտակ բառերով եթէ կ'ուզես, մահէն ազատես այդ գիրքերը...: Իր յուզախառն այս խօսքերէն իսկապէս կ'ազդուիմ: Ինչ ըսել այս ընթերցասէր ծերունիին:

Ահա այսպիսի բաղձանքներ հետապնդող հագիւ նախակրթարանի մը ուսում ունեցող այս գիտակից ու ազնիւ ծերունին, այսօր եկած ինձմէ կը խնդրէ, որ «մահէն ազատեմ» իր գիրքերը...:

Սիրտս կը մղկտայ իր այս աղեխարշ խօսքերէն: Նոյնիսկ եթէ պիտի չփափաքէի վերցնել զանոնք իր քովէն,- նկատելով, որ ես ալ ունիմ քանի մը սնտուկ գիրքեր տանս պահեստարանը դրուած, գրադարանիս մէջ տեղ մնացած չըլլալուն պատճառով,- պիտի չկարենայի մերժել այս բարի ծերունիին, որ սրտի անհուն գոհունակութեամբ պիտի ազատեր իր սիրտը տանջող մղձաւանջէն, տեսնելով իր գիրքերուն «մահէն ազատիլը»:

Այդ սրտի գոհունակութիւնը իրեն պատճառելու սիրոյն, կը գործադրեմ խոստումս, սակայն... փոխարէնը իր սրտին մղձաւանջը կը փոխադրուի իմ սրտիս մէջ...:

Այս ինչ անկում հայերէն գիրքերու...: Միթէ հայերէն գիրքը իր նսեմացման այս աստիճանի՞ն պէտք էր հասնել...: Միթէ այդ նսեմացումը կ'երթայ միայն այդ հայերէն գիրքերո՞ւն, թէ՛ հայերէն լեզուի տէրը եղող մեր ազգին:

Մենք արդէն սրտի կսկիծով է որ կը տեսնենք մեր ազգակիցներուն՝ մանաւանդ 2-րդ եւ 3-րդ սերունդի ներկայացուցիչներուն շրթներէն ընդմիշտ դադրած՝ մեր մայրենի լեզուին կորուստը:

Օտար դպրոցներ յաճախող մեր զաւակները ինքնին պատեհութիւնը չեն ունենար հայերէն կարենալ սորվելու, իսկ հայկական դպրոցներն ալ կ'աշխատին անգլերէն լեզուի ուսուցման մէջ ետ չմնալ տեղական դպրոցներէն, որպէսզի աշակերտներ չդժուարանան իրենց երկրորդականի ու համալսարանի ուսումնառութեանց մէջ:

Այս բոլորը ցաւ ի սիրտ եւ անկախ մեր կամքէն:

Սակայն ինչ ըսել երէց սերունդի բոլոր այն անդամներուն, որոնք եկած են Միջին Արեւելքի հայափոծ շրջաններէն կամ հայրենիքէն, որոնք յաճախած են հայկական դպրոցներ եւ հայերէն սորված են, որոնք գիտեն գրել ու կարդալ հայերէն, բայց իրենց տուններէն ներս նոյնիսկ հայերէն թերթ չի մտներ...:

Յաճախ կը կարդանք թերթերու մէջ սրտցաւ մտաւորականներու կողմէ գրուած՝ «Մայրենի լեզուին անփոխարինելի կարեւորութիւնը», «Մեր լեզուին պահպանման անհրաժեշտութիւնը», «Հայ ազգին գոյատեւման բանալին» եւ այլ նիւթերով գրուած յօդուածներ, որոնք կը գրուին պարզապէս զգաստութեան հրաւիրելու մեր ժողովուրդի անտարբեր խաւը, յիշեցնելով իրենց ազգին սպառնացող այն մեծ վտանգը, որ առանց հայերէն լեզուի գործածութեան, առանց հայերէն ընթերցումի եւ առանց ազգային անցուդարձերու հետ ամէնօրեայ գործնական հետաքրքրութեան, միայն «Հայ ենք մենք եղբայրներ, հայ ենք մենք» եւ կամ «Արդեօք ովքեր ենք հէյ, հայոց քաջերն ենք» երգելով մենք մեր հայ ըլլալը կը զգանք միայն այդ պահուն, ամէնօրեայ կեանքին մէջ փոքրիկ բաժին մը անգամ չենք յատկացներ մեր հայութեան:

Իսկ ո՞րն է այդ փոքրիկ բաժինը, որ պարտինք ամէն օր յատկացնել մեր

հայություն: Օրական նուագագոյնը 20-30 վայրկեան հայերէն թերթ կամ գիրք կարդալն է մեր հանգիստի պահերուն, որպէսզի կապ պահած ըլլանք մեր հայութեան հետ եւ հաղորդակից մնանք մեր ազգին անցուդարձերուն:

Իւրաքանչիւր հայ ընտանիք պարտի բաժանորդագրուիլ իր նախապիւրած՝ կամ իր գաղափարին համապատասխանող հայկական թերթի մը եւ ժամանակ յատկացնէ զայն կարդալու:

Իւրաքանչիւր հայ, մտաւորական թէ բանուոր, մասնագիտութեան տէր անձ թէ պարզ արհեստաւոր, հարուստ թէ աղքատ, պարտի գիտակցիլ, որ ազգապահպանութեան գործը միայն հայկական դպրոցներուն, հայ եկեղեցիներուն, կուսակցութիւններուն եւ ազգային առաջնորդներուն գործը չէ, այլ նաեւ իր գործը:

Ճիշդ է որ այսօր հայ ենք տակաւին հայու զգացումներով: Սակայն մեր այսօրուայ հայ ըլլալը արդեօք կ'երաշխաւորէ՞ մեր հայ մնալը մօտիկ ապագային, երբ կ'ապրինք օտար մշակոյթներու մէջ, ըլլալով անհոգ ու անտարբեր մեր հայութեան նկատմամբ:

Անտարբերութիւնն ու անհոգութիւնը տարուէ տարի աւելի կը հեռացնեն մեզ մեր ազգային ըմբռնումներէն, ազգային հասկացողութենէն, ազգային գիտակցութենէն եւ կամաց-կամաց. կ'օտարացնեն մեզ մեր ազգէն, մեր լեզուէն, մեր արժէքներէն ու կը դատարկեն մեր ազգային մտածողութիւնը:

Տայ Աստուած որ այդ մակարդակին չիջնէ ռեւէ հայորդի:

Որքան ալ մթագնած ըլլայ մեր ինքնագիտակցութիւնը, դարձեալ ներելի չենք գտներ հայերէն գիրքերը աղբահաւաքին տալու նուաստացուցիչ տգիտութիւնը: Գէթ՝ նուագագոյն գիտակցութիւնը մեզմէ պիտի պահանջէր, որ հեռաձայնով կամ անձամբ կապ պահէինք ազգային որեւէ հաստատութեան կամ դպրոցի մը հետ, ստանալու իրենց կարծիքը եւ կամ իրենց նուիրելու այդ գիրքերը, եթէ երբեք փափաքին պահել զանոնք իրենց գրադարաններուն մէջ:

Այո, բաւ է փոքրիկ հասկացողութիւն մը միայն, որպէսզի չնուաստանայ հայերէն գիրքը եւ չաղարտի հայուն ազգային արժանապատուութիւնը:

«Նոր Օր», 8 եւ 15 Հոկտեմբեր 2015

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍՈՒԱԾ ԴԱԴԻԹ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱԴՈՐՈՒԹԵԱՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ծ.Խ. Անսիոյի վիշտով յիշեցինք, թէ կարճ միջոց մ'առաջ, Ուաշինկթոնի մէջ, ինքնաշարժի արկածով մահացաւ նախկին հալէպահայ (Տաւուսիյէ], ապա Լիբանան եւ հուսկ Ս. Նահանգներ (Ուաշինկթոն Տի Սի) հաստատուած տարաբախտ Դաւիթ Տէրիմէնճեանը, ծանօթ մանաւանդ իր տասնամեակներու վրայ երկարող մշակութային, մարզական, կրթական ու եկեղեցական բեղուն գործունէութեամբ՝ Հ.Մ.Մ.-ի, Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) շրջանակներէն ներս: Ստորեւ՝ իր եղբոր դամբանականը:

Իսկապէս դժուար է խօսիլ այս պահուն, ընկճուած հոգիով, կոտրած սրտով, մանաւանդ որ կոկորդս ալ կ'ընդդիմանայ ինձի:

Անպաստելի լուրը, բնականէն շատ անելի զօրաւոր՝ սարսեց մեզ բոլորս:


Երբ Տէր Վրթանէս հեռաձայնելով կը գուժէր անակնկալ եւ դառնակակիժ մահը սիրելի եղբորս՝ Դաւիթին, այնպէս ցնցուեցայ, որ չեմ յիշեր կեանքիս մէջ նման ուժգին ցնցում մը ունենալս որեւէ դէպքի պարագային:

Կարծէք պահ մը կորսնցուցի ինքնագիտակցութիւնս: Ուղեղս դադրեցաւ աշխատելէ, քանի որ չկրցաւ ընկալել ստացած լուրին ահաւոր մեծութիւնը: Իսկ ես գտնուելով իրմէ ինքնաշարժով 7 ժամ հեռու՝ տարբեր նահանգի մէջ, շշմած եւ անճրկած՝ չէի գիտեր ինչ ընել. այլ՝ միայն արցունք կը հոսէր աչքերէս:

Խեղճ Դաւիթ, որ զոհ գացիր անգոյշ եւ մտացրիւ կնոջ մը սխալին, որ սուրբալով եւ կարմիր լոյսը անտեսելով եկաւ ու զարկաւ ինքնաշարժիդ կողէն այնպիսի ուժգնութեամբ, որմէ ետք վայրկեաններ եղան միայն կեանքդ...:

Այսօր 4-րդ օրն է, որ Դաւիթ առյաւէտ բաժնուած է մեզմէ, սակայն մեր արցունքները չեն չորցած տակաւին, այլ՝ ցամքած: Մեր սրտին վրայ բացուող վերքերը հոն են տակաւին ու կը կոտտան՝ տառապեցնելով մեզ:

Մեր հեքիաթները ունին իմաստալի սկզբնաւորութիւն մը, որոնք կը սկսին «կար ու չկար»ով:



Այո՛, կար ու չկար..., այնպես ինչպես սիրելի եղբայրս կար... բայց չկա այլևս...:

Ինչպե՛ս հաշտուիլ այս դառն իրականության հետ:

Սակայն բնութիւնը ունի իր օրէնքները եւ ամէն բան այդ օրէնքներուն հիման վրայ կ'ընթանայ:

Այդ օրէնքներէն մէկը այն է, որ աշխարհիս մէջ ամէն բան պզտիկ կը ծնի. ինչպես մարդը, անասունները, ծառերն ու ծաղիկները եւ ամէն ինչ որ կենդանութիւն ունի:

Մինչեւ իսկ անձրեւը պզտիկ կաթիլներով կը տեղայ, սակայն իրարու միանալով գետեր կը յորդեցնէ, ծովեր կը լեցնէ:

Այս է բնութեան օրէնքը, որ պզտիկ ծնի՝ ու հետզհետէ աճի ու մեծնայ:

Միայն մէկ բան՝ բնութեան այս օրէնքին հակառակ կ'ընթանայ, որ մե՛ծ կը ծնի ու հետզհետէ կը պզտիկնայ...:

Այդ մէկը ցաւն է՝ վիշտը:

Այս պարագային եղբօրս այս սրտաճմլիկ մահուան ցաւը, որ այնքա՛ն մեծ ծնաւ մեր սրտերուն մէջ՝ մեր սրտերը պայթեցնելու աստիճան, որուն հետ կարենալ հաշտուելու դժուարութեան մատնուած ենք բոլորս:

Սակայն կայ ժամանակը որպէս ամենաբոյժ դեղ բոլոր ցաւերուն համար:

Թէեւ չենք կրնար ըսել, թէ խրատական կամ միփթարական խօսքերը բոլոր, անիմաստ են եւ արժէք չեն ներկայացնէր, ո՛չ. անոնք տեղին խօսուած խօսքեր են, սակայն սկզբնական շրջանին դժուար կ'ըլլայ ըմբռնել զանոնք եւ հաշտուիլ իրականութեան հետ: Միայն ժամանակն է որ պիտի գայ հանդարտեցնելու մեզ, մեղմացնելու մեր ցաւերը եւ հաշտեցնելու՝ դառն իրականութեան հետ:

Մահուան քաշած նետին դէմ ամէն վահան անօգուտ է:

Արծաթի եւ ոսկու տուած շքեղութիւնն անօգուտ է:

Կեանքն ու աշխարհն որքան խորունկ կրցայ քննել, հասկցայ թէ՛

Բարի գործէն զատ ամէն բան՝ աշխարհիս մէջ անօգուտ է...:

ՕՍԱՐ ԽԱՅԵԱՍ

Պարսիկ մեծ փիլիսոփայ Օմար Խայեամի այս իմաստուն քառեակը մեզի կը յիշեցնէ, որ «մահուան դէմ՝ ամէն վահան անօգուտ է» եւ թէ «բարի գործէն գատ ամէն բան աշխարհիս մէջ անօգուտ է»:

Կեանքի մէջ կան դէպքեր, որոնք ցնցիչ ըլլալով մէկտեղ՝ դաստիարակիչ են. պատգամ մը ունին իրենց մէջ մեզի տալիք:

Այդպիսի դէպքերուն գլխաւորագոյնը վստահաբար մահուան պարագան է, որ կու գայ ցնցելու եւ պթափեցնելու մեզ մեր թմբիրէն, որպէսզի կարենանք հասկնալ մահուան մեզի տուած պատգամը, որն է ճշմարտութիւնը կարենալ տեսնելու իմաստութիւնը:

Մահուան պարագաներուն է, որ յաճախ կը լսենք՝ «Է՛հ, պարա՛պ աշխարհ»։ «Է՛հ, անստո՛յգ կեանք. այսօր կանք, վաղը չկանք»։ «Մարդուս կեանքը մազի թելէ մը կախուած է, չես գիտեր երբ՝ յանկարծ եթէ փրթի՝ կը վերջանայ» եւ նման արտայայտութիւններ:

Ասոնք ճշմարտութիւններ ըլլալով մէկտեղ, յաճախ չոր խօսքեր են մեր շուրթերուն վրայ: Կարծէք այդ խօսքերը կ'ըսենք պարզապէս բան մը ըսած ըլլալու համար միայն, առանց թափանցելու անոնց խորքին եւ իմաստին:

Մահուան պարագան առիթ մըն է մեզի համար ինքնամփոփուելու եւ խորհրդածելու մեր կեանքին ու ընթացքին մասին, թէ ինչպիսի՞ կեանք մը կ'ապրինք: Մեր հարազատներուն հետ հաշտ եւ համերա՛շխ ենք: Իրարու յանցանքներուն հանդուրժող եւ ներո՞ղ ենք: Մեր բարեկամներուն հետ սիրո՞վ ենք: Ուրիշներուն ցաւը մեղմացնելու կ'աշխատի՞նք եւ այլն:

Ահա, բոլոր այս խորհրդածութիւնները կը ծագին մեր մտքին մէջ, սիրելիի մը մահուան պարագային, ուր մեր սրտերը պահ մը կ'ազնուանան, բարի տրամադրութիւններ կը ստեղծուին հոն, որոնք կը մղեն մեզ վերատեսութեան ենթարկելու մեր կեանքը:

Եթէ գիտենք, թէ այս աշխարհը «պարապ աշխարհ մըն է», եթէ գիտենք, թէ «այսօր կանք՝ վաղը չկանք» եւ թէ «մեր կեանքը մազի թելէ մը կախուած է, որ կրնայ փրթիլ որեւէ վայրկեան եւ վերջ տալ մեր կեանքին», ուրեմն այդքան անստոյգ եւ խախուտ կեանքի մը մէջ, տակաւին ինչո՞ւ շարունակենք մնալ մեր սխալներուն մէջ. (եթէ երբեք կրնանք տեսնել մեր սխալները): Ինչո՞ւ չտրբագրենք մենք զմեզ, երբ տրբագրելի կէտեր ունինք: Ինչո՞ւ չիրատուինք այն իմաստուն խօսքէն, որ «Բարի գործէն գատ ամէն բան, աշխարհի մէջ, անօգուտ է»:

Այո: Ունենալ բարի գործ, բարի խօսք, բարի մտածում, բարի ցանկութիւն, բարի կամեցողութիւն բոլորին հանդէպ:

Ահա, ա՛յս է մահուան մեզի տուած պատգամը, որ կը ձգտի ազնուացնել մեր սրտերը:

Ուրեմն, եթե կարենանք ստանալ այս պատգամը եւ կարենանք գործնականացնել զայն մեր կեանքին մէջ, ահա այն ատեն, է որ դաս մը քաղած կ'ըլլանք մահուան պատգամէն ու դառնալով ճշմարտութիւնը տեսնողներ, կրնանք վերանորոգել մեր կեանքը:

Յովհաննէս Թումանեան շատ գեղեցկօրէն նկարագրած է կեանքի ու մահուան խորհուրդը իր «Թմկաբերդի առումը» պոէմին մէջ, որմէ մի քանի համար կ'ուզեմ մէջբերել այստեղ, որոնք այնքան խօսուն են եւ իմաստալից:

Մենք ամէնքս, հիւր ենք կեանքում,

Մեր ծննդեան փուչ օրից,

Հերթով գալիս, անց ենք կենում

Էս անցաւոր աշխարհից:

Անց են կենում սէր ու խնդում

Գեղեցկութիւն, զանձ ու զահ,

Մահը մերն է, մենք մահիւնը,

Մարդու գործն է միշտ անմահ:

Անց ենք կենում..., միայն անմահ

Գործն է խօսում լաւ ու վատ,

Ա՛խ երանի՜ ով մարդ կը գայ

Ու մարդ կ'երթայ անարատ:

Դաւիթը կարելի է դասել այն երանելիներու դասուն, որոնք աշխարհ կու գան եւ այս աշխարհէն կ'երթան «անարատ»:

Դաւիթը եղաւ, իր ամբողջ կեանքին մէջ, արդար եւ ուղիղ:

Եղաւ բարի ու ծառայասէր:

Եղաւ եկեղեցասէր ու իր ամբողջ կեանքի տեւողութեան ծառայեց եկեղեցւոյ, ուր որ ապրեցաւ՝ Հալէպ, Պէյրութ, Ամերիկա եւ իր անոյշ ձայնով ճոխացուց միշտ եկեղեցւոյ խորանը:

Եղաւ Հալէպի մէջ կիրակնօրեայ դպրոցներու Տաւուսիյէի բաժնի աշակերտ եւ ապա՝ երկար տարիներու ուսուցիչ, ուսուցանելով աշակերտներուն շարականներ ու երգեր, ու դաստիարակեց զանոնք կրօնաբարոյական դաստիարակութեամբ:

Եղաւ մշակութասէր եւ Հ.Մ.Մ.-ի ու Կիլիկեանի շրջանակէն ներս միշտ բերաւ իր գործօն մասնակցութիւնը, բոլոր մշակութային ձեռնարկներուն համար: Ժողովներուն մէջ իրեն վերապահուած էր միշտ ատենադպիրի պաշտօնը, որ կը կատարէր բժախնդրօրէն եւ օրինաւոր կերպով, վճարովի քարտուղարէ մը աւելի կանոնաւոր:

Բոլոր հանդէսներուն եւ հաւաքոյթներուն յայտագիրներուն մէջ միշտ

բաժին մը ունէր երգելու:

Եղաւ վստահելի անձ մը բոլորին համար: Իր ստանձնած բոլոր գործերը կատարեց ամենայն հաւատարմութեամբ եւ անթերի կերպով:

Գրասէր էր եւ յամառ ընթերցող մը: Առանց գրականութեան կը զգար, թէ բան մը պակաս է իր կեանքէն:

Ստորագրած է 50-է աւելի ազգային նիւթեր շօշափող յօդուածներ:

Եղաւ մարգասէր՝ մաս կազմելով Կիլիկեան Շրջանաւարտից Միութեան պատրէթպոյի խումբին եւ ապա՝ ստանձնելով նոյն խումբի մարզիչի պաշտօնը երկու տարի:

Եղաւ ազգասէր, եւ ազգային բոլոր գործերու մէջ չզլացաւ բերելու իր գործօն մասնակցութիւնը:

Եղաւ հայրենասէր եւ միշտ հաւատարիմ մնաց «Հայրենիքը ամէն բանէ վեր» սկզբունքին:

Իր նկարագրի բոլոր այս գեղեցիկ յատկանիշներով, իր յիշատակը միշտ անթառամ պիտի մնայ մեր հոգիներուն մէջ:

Սիրելի եղբայրս՝ Դաւիթ, դուն որ այժմ կը ննջես քու յաւիտեան քունիդ մէջ, այս դագաղին մէջ, քու սրտամորմոք մահովդ այրող կրակ մը ձգեցիր մեր սրտերուն մէջ:

Գիտեմ, որ ա՛յ պիտի չվերադառնաս երբեք... բայց մենք... անորոշ օր մը պիտի գանք քովդ...:

Աստուած հոգիդ լուսաւորէ:

Հողը թեթեւ գայ վրադ:

Երթաս բարով...:

«Նայիրի», 5 Հոկտեմբեր 2004

ՈՂԲԱՅԵԱԼ ԴԱԷԻԹ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆԻ ՄԱՀՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*Երկու հազար չորս, տասներկուց Յունիս,
Չարաշուք մի օր, սեւ վայրկեան բախտի,
Արկածդ ահաւոր, անսպասելի,
Խլեց քեզ մեզմէ, կտրելով թելը քու առողջ կեանքի:
Եւ դուն առ յաւէտ մեզմէ հեռացար,
Երկրի արգանդին մէջ պարտիակուցար:
Թէն մենք ի գուր կ'աշխատինք տակաւ սփոսանք գտնել,
Բայց կարելի չէ մեզ համար երբեք քեզ միշտ չիշել:*

* * *

Արդէն իսկ տարի մը անցաւ այն չարաբախտ օրէն, երբ Դաւիթ ինքնաշարժի ահաւոր արկածի մը հետեւանքով տեղն ու տեղը մահացաւ, այրի ձգելով իր կինը՝ Սօսին, եւ որք ձգելով իր երկու մանչ եւ մէկ աղջիկ զաւակները՝ Կարօն, Մանօն եւ Վարդիմէրին:

Միթէ մեզմէ ո՛վ կը մտածէ, որ մահը անակնկալօրէն կրնայ հասնիլ նաեւ իրեն որեւէ վայրկեան՝ որեւէ ժամանակ, անսպասելի փորձանքի մը կամ արկածի մը հետեւանքով:

Այո, արկածներն ու փորձանքները բնականաբար ուրիշներուն համար չեն միայն, այլ կրնան ըլլալ նաեւ մեզի համար, երբ տակաւին ի՛նչ-ի՛նչ ծրագիրներ ու փափաքներ ունինք մեր մտքերուն մէջ կատարելիք, որուն մասին կը մտածենք ու կ'աշխատինք յաջողցնել զանոնք: Հայկական ասացումա՞ծքը կ'ըսէ. «Խորհուրդ մարդկան, կամքն Աստուծոյ»:

Դաւիթ եւս ունէր ծրագիրներ ու փափաքներ իրագործելի, որոնց մասին կը մտածէր ու կ'աշխատէր: Սակայն... այդ բոլոր ծրագիրները յանկարծ անէացան...: Եւ Դաւիթ անաւարտ ձգելով իր գործերը, առ յաւէտ մեկնեցաւ այս աշխարհէն:

«Մահուան քաշած նետին հանդէպ ամէն վահան անօգուտ է»: (Օմար Խայեամ):

Գիտակից հայր մըն էր ան: Իր գիտակցութեան շնորհիւ կրցաւ իր գաւակները պահել ուղիղ ճամբու մէջ, իր իմաստուն խրատներով: Խրատներ, զորս խօսած էր ձայներիզի մը վրայ, իւրաքանչիւր գիտակից հայր պիտի փափաքէր տալ իր գաւակներուն, անոնց քայլերը ուղղելու մտօք:

Երբ իր երկու մանչ գաւակները իրարմէ երկու տարի տարբերութեամբ յաջորդաբար զինուորութեան կ'երթային, սուրիական բանակին մէջ ծառայելու, ինք կը զգուշացնէր զանոնք հաւանական սխալ ընթացքներէ ու կը յիշեցնէր իրենց թէ դժուարութիւններ պիտի ունենան: Ապա կը գօտեպնդէր զիրենք, որպէսզի քաջաբար կարենան դիմագրաւել դժուարութիւնները, որպէսզի չխոտորին սխալ ճամբաներու մէջ:

Իր մահուան այս առաջին տարեկիցին առիթով, թարմացնելու համար իր յիշատակը, կ'ուզեմ իր այդ խրատական խօսքերէն որոշ մասեր մէջբերել այստեղ, նկատելով որ ուրիշներուն եւս կրնան օգտակար դառնալ անոնք:

* * *

Սրտագին խօսք առջինեկ տղուս դրօշի ծառայութեան մեկնումի նախօրէին:

Միրելի տղաս՝ Կարօ, կեանքիդ մէկ կարեւոր անկիւնադարձին վրայ կը գտնուիս: Նոր միջավայր, նոր պայմաններ եւ նոր ընկերներ պիտի ունենաս: Որոշ դժուարութիւններու կրնաս հանդիպիլ եւ պիտի հանդիպիս ալ: Բայց մի՛ վիատիր, քա՛ջ եղիր ու տոկա՛լ զիտցիր: Այդ դժուարութիւններու մէջէն այր մարդու պէս դուրս ելիր: Մի մոռանար որ անոնցմէ կը կերտուի նկարագիրդ: Իսկ դժուարութիւններու յաղթահարելը ինքնին հերոսութիւն է: Դժուարութիւնները, ոսկերիչներուն ոսկիին մակարդակը չափող փորձաքարին պէս, կը փորձեն ու կը չափեն մարդուս կամքի տոկունութեան աստիճանը: Երիտասարդի մը՝ մանաւանդ սկառստութեան բովէն անցած հայ երիտասարդի մը համար, անվայել է կքիլ եւ յուսահատիլ:

... Զու վիճակէդ լաւ եղողներուն նայէ եւ բարի նախանձ ունեցիր հոն հասնելու: Իսկ քու վիճակէդ վատ եղողներուն նայէ, որպէսզի կեանքդ անտանելի չգտնես:

... Մի հաշուի առներ թէ ուրիշներ ինչպէս կը մտածեն: Կարեւորը՝ դուն համոզուէ քրածիդ շիտակ ըլլալուն եւ մի ըներ այն ինչ որ արատ մը բերէ անունիդ, ծնողքիդ, ազգիդ եւ հայրենիքիդ: Այլ խօսքով, մի ըներ այն ինչ որուն համար ամօթ պիտի զգայիր եթէ ուրիշներ իմանային:

... Թող այող՝ այո ըլլայ եւ ոչո՞ ոչ: Դիւրաւ մի խոստանար. բայց երբ խոստանաս, ամէն գնով յարգէ խոստումդ:

... Սիրելի տղաս, կեանքին նպատակը միայն ուտել խմել վայելել չէ, միայն հարստանալ չէ: Եթե այդպես ըլլար, կենդանիներեն կամ խոտերեն տարբերություն չէինք ունենար: Կեանքը պայքար է, իտեալ է, գաղափար է: Սիրելի կեանքը:

... Դու քու սեփական ուժիդ ու խելքիդ վստահելով աշխատիր: Վաստակել, որպէսզի հանգիստ կարենաս ապրիլ եւ ապագային ընտանիքիդ ու զաւակներուդ կարենաս օգտակար ըլլալ: *Բայց դրամը մի պաշտէր:* Այո, նիւթը՝ դրամը շատ բան է, շատ բաներու կարող, բայց ոչ ամէն բանի: Կան բաներ, որոնք նիւթէն շատ բարձր են, շատ արժեքաւոր եւ ուր նիւթը անգօր կը մնայ: Օրինակ, լաւ անունը, պատիւը, մաքուր նկարագիրը, առողջութիւնը եւ այլն: Ասոնք դրամով կարելի չէ գնել: Եթե այդպես ըլլար – փառք Աստուծոյ որ այդպէս չէ – այդ պարագային ունեւորը ոչ մէկ բանէ պիտի գրկուէր, ինչպէս որ չի գրկուիր դրամով կարելի եղած որեւէ բանէ:

... Հոգ տար ինքզինքիդ, առողջութիւնդ խնայել, չափաւոր եղիր ամէն ինչի մէջ: Յետոյ ուշադիր եղիր, կեանքի մէջ բոլոր մոլութիւններն ալ շատ պզտիկ եւ աննշան կը սկսին. ծիւելը, գէշ ընկերներու հետ յարաբերիլը, անվայել վայրեր յաճախելը, թմրեցուցիչ կամ խմիչքի գործածութիւնը, բախտախաղը, գողութիւնը, ստախոսութիւնը եւ ամէն բան, բայց որոնք ժամանակի ընթացքին կրնան գորանալ, մեծնալ եւ իրենք զիրենք պարտադրել քեզի եւ քեզ իրենց գերին դարձնել:

Աշխատէ որեւէ սխալ կամ զարտուղի ճամբայ շուտով ընդհատել ու վերադառնալ շիտակ ճամբուն: Հայկական առածը կ'ըսէ. «Ծառը պզտիկ եղած ատեն կը շտկեն, իսկ երբ բունը հաստնայ, կարելի չ'ըլլար շտկել զայն եւ ծուռ կը մնայ»:

... Սիրելի տղաս՝ Մանօ, կեանքի մէջ յաջողելու համար ժամանակ յատկացուր ամէն ինչի, աղօթելու, մտածելու, կարդալու, սորվելու, խնդալու, ուրախանալու եւ այլն:

Ժամանակի մասին կարդացած եմ հետեւեալը գիրքերէն ուր կ'ըսէ.

Ժամանակը յամրընթաց է անոնց համար, որոնք կը սպասեն:

Շատ արագ է անոնց համար, որոնք կը վախճան:

Խիստ երկար է անոնց համար, որոնք կը տառապին:

Խիստ կարճ է անոնց համար, որոնք կը գուարճանան:

Բայց անոնք որ գիտեն լաւ գործածել ժամանակը, անոնց համար յաւերժութիւն է ան:

... Գիտցի՛ր, տղա՛ս, որ քեզի համար բաբախող սրտեր կան, մանաւանդ հօրդ, մօրդ, եղբօրդ եւ քրոջդ մօտ: Ուրեմն համբերութեամբ յառա՛ջ գնայ:

Քաղաքավար եղիր, բայց ոչ քծնող:

Համարձակ եղիր, բայց ոչ անկիրթ:

Յանդուզն եղիր, բայց ոչ անկիրթ:

Եղիր Աստուածավախ, ճշմարտախօս, հաստատամիտ, լուրջ ու աշխատասեր: Մարդկային խղճմտանքը, արժանապատուութեանդ գիտակցութիւնը եւ հայ ըլլալու հպարտութիւնը միշտ ներկայ ըլլան մէջդ:

Թող Աստուած հետդ ըլլայ, ճամբադ լուսաւորէ եւ քեզ առաջնորդէ ուղիդ ճամբու մէջ: Բարով երթաս ու բարով դառնաս:

Քեզ միշտ սիրող հայրդ՝

Դաւիթ Տէյիրմէնճեան

Հինգշաբթի, 10 Յունուար, 1991 Պէյրութ

* * *

Դաւիթին այս խրատականները այսօր եւս սալիկներու մէջէն, իր իսկ կենդանի ձայնով, կու գան յիշեցնել այդ իմաստուն պատգամները իր գաւակներուն:

Յիշատակդ անթառա՛մ մնայ, եղբայրս Դաւիթ:

«Նոր Օր», 28 Մայիս 2005

ՀԱՆԳՈՒՅԵԱԿ ԳԻՏՆԱԿԱՆ ՏՈՔԹ. ՎԱՋԳԷՆ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ ՄԱՀՈՒՄՆ Ա. ՏԱՐԵԼԻՅԻՆ ԱՌԻԹՈՎ

«Այսօր մեր հրաժեշտի խօսքը կ'արտասանենք այն շատ քիչ մարդոցմէ մէկուն, որ ոչ միայն իր ազգին եւ ամերիկացի ժողովուրդին, այլ համայն մարդկութեան համար կատարած է եզակի ծառայութիւններ»:

Այս խօսքերով կը սկսէր Գերշ. Խաժակ Արք. Պարսամեան իր դամբանական խօսքը ուղղուած հանգուցեալ գիտնական Տոքթ. Վ. Բարսեղեանի:

Եւ իրապէս, Տոքթ. Բարսեղեան այն «շատ քիչ մարդոցմէն մէկն» էր, որ հակառակ իր միջազգային ճանաչողութեան, իր ազգին մէջ եղաւ համեստութեան օրինակելի տիպար մը: Կարծէք իր կեանքին համար ընտրած ըլլար միմիայն «գործ եւ ոչ խօսք» նշանաբանը:

Բնաւ չաշխատեցաւ հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել իր վրայ եւ կամ հետաքրքրութիւն ստեղծել իր անձին շուրջ. այլ գործեց լռութեան մէջ, բաւարարուելով միայն իր կատարած գործին իրեն տուած հոգեկան հրճուանքովը...

Չունեցաւ նաեւ ռելէ կուսակցական պատկանելիութիւն: Կը սիրէր բոլորը հաւասարապէս ու կը գնահատէր իւրաքանչիւրին դրական կողմերը: Երբեք խտրութիւն չդրաւ աջի ու ձախի, ու չմերժեց որեւէ հրաւեր՝ դասախօսելու որեւէ տեղ, որեւէ առիթով: Սակայն այն սակաւ հրաւերները բաւարար չեղան զինք ծանօթացնելու ամբողջ ազգին:

Ահա այս տուեալներով ան մնաց միայն քիչերուն ծանօթ եւ ազգի լայն զանգուածին մօտ պէտք եղած ճանաչումը չունեցաւ:

Իր բեղուն աշխատանքի 40 տարիներու ընթացքին, հարիւրաւոր յօդուածներ եւ գրութիւններ լոյս տեսած են իր մասին եւ իր գործերուն շուրջ, ընդհանրապէս Ամերիկեան, նաեւ Եւրոպական եւ Սովետական թերթերու մէջ. մինչ հայկական թերթերու մէջ միայն համեստ բաժին մը ունեցած է ան:

Այս գրութեամբ կու գանք մեր խոնի պարտքը տալ հանգուցեալ Տոքթ. Վազգէն Բարսեղեանին, որպէսզի իրեն հանդէպ մեր ունեցած յարգանքի եւ երախտագիտութեան մէջ թերացած չըլլանք:

Տոքթ. Բարսեղեան որքան լաւ հայ մը՝ նոյնքան եւ լաւ ամերիկացի մըն էր: Իր մասնագիտութեան մէջ (կորիզային բնագիտութիւն, nuclear physics) ան Ա.Մ.Ն.-ի որակաւոր գիտնականներէն մին կը նկատուէր:

Հրատարակած է բազմաթիւ յօդուածներ ու գրքեր հիւլեական ոյժի վերաբերեալ: Իր գրքերէն երկուքը «Ճարտարարուեստական տնտեսութիւն հիւլեական դարաշրջանին մէջ» (*Industrial Management in the Atomic Age*, Addison Wesley 1965) եւ «Այս Կիբեռնիտիկ Աշխարհը» (*This Cybernetic World*, Doubleday, 1972) թարգմանուած են գերմաներէնի ու ճաբոներէնի:

Իր բերած նպաստը Ամերիկայի ու համայն մարդկութեան Կորիզային բնագաւառէն ներս բարձր գնահատուած է Ամերիկեան պետական ու գիտական շրջանակներու կողմէ:

Յաճախ ուղարկուած է պետութեան կողմէ, այլ երկիրներու գիտնականներուն հետ տեսակցութիւններ եւ խորհրդածութիւններ ունենալու:

Հետեւեալ դրուազը իր կեանքէն, ինքնին խօսուի կը նկատուի:

1962-ին Ամերիկայէն հիւլեագէտ գիտնականներու խումբ մը կ'երթար խորհրդային միութիւն, տեսակցութիւն ունենալու խորհրդային գիտնականներու հետ:

Խորհրդային գիտնականները արդէն իսկ օդակայան եկած էին դիմաւորելու զիրենք: Անոնց մեծաւորը առաջ կ'անցնէր ու ձեռքը կը սեղմէր Ամերիկեան խումբին մեծաւորին, ինքզինք ներկայացնելով՝ Տոքթ. Պետրոսեան. պատասխանը կ'ըլլար Տոքթ. Վազգէն Բարսեղեան...:

37 տարիներ առաջ «Նայիրի» շաբաթաթերթին կողմէ տրուած այս լուրը բոլոր հայերուն սրտերը հպարտութեամբ կը լեցնէր, այն իմաստով, թէ



աշխարհի երկու հսկայ պետություններու գիտնականներուն մեծաւորները երկուքն ալ հայեր էին:

Տոքթ. Վ. Բարսեղեանին կենսագրութիւնը մաս կը կազմէ զանազան միջազգային հրատարակութիւններու:

* * *

Տոքթ. Բարսեղեան ունեցաւ նաեւ բեղուն ազգային գործունէութիւն:

1966-ին իրեն համախոհ ընկերներով կը հիմնէ «հայկական կրթական խորհուրդ»ը, որ ակադեմական բնոյթ ունեցող ծրագիրներ կը մշակէ ու կը հետապնդէ: Մինչեւ իր մահը, կը մնայ նաեւ այդ խորհուրդին տնօրէնը:

Տասնեակ անգամներ կը ճամբորդէ Հայաստան, այդ ծրագիրներուն յաջողութեան համար:

1970-ին հանդիպում կ'ունենայ Գերմանիոյ մէջ «Հայկական ճարտարապետութեան հետազօտական հիմնարկի» տնօրէն, Տոքթ. Արմէն Հախնազարեանի հետ:

Յատկանշական այդ հանդիպումը հիմը պիտի դնէր այն հսկայ աշխատանքին, որ կը նկատուի գլուխ գործոցը իր իրագործումներուն:

Երկու տնօրէններ կը մշակեն 20 տարուայ ծրագիր մը, հաւաքելու մեր բոլոր ճարտարապետական յուշարձաններու նկարները եւ անոնց վաւերագրութիւնները:

Բէնարլիը Փալիթէքնիք ինստիտուտի (RPI), որուն պատուակալ Փրոֆ.ի տիտղոսն ունէր Տոքթ. Բարսեղեան, ճարտարապետութեան դպրոցը կ'ունենան որպէս կեդրոն, սոյն ծրագրին իրագործման համար:

1990-ին, ուղիղ 20 տարի ետք, այս ծրագիրը յաջողութեամբ պսակուած էր արդէն: Հաւաքած էին Հայաստանէն, Թուրքիայէն, Ղարաբաղէն, Նախիջեւանէն, Ատրպէյճանէն, Պարսկաստանէն, Վրաստանէն եւ Խրիմէն ճարտարապետական յուշարձաններու աւելի քան 42.000 լուսանկարներ ու անոնց վերաբերեալ վաւերագրութիւններ:

Լուսանկարները պատրաստուած էին 6 միլիմէթրանոց ֆիլմերով (մայքրոֆիլմ) եւ ամփոփուած՝ 7 ստուար հատորներու մէջ:

Թուաբանական փոքրիկ հաշիւ մը մեզի ցոյց պիտի տար, որ 20 անգամ 365 պիտի ընէր 7300 օր, որ երբ բաժնենք 42,000-ի մէջ՝ պիտի ունենանք մօտաւոր 6 թիւը:

Բարսեղեան-Հախնազարեան գործակցութիւնը կուրծք տուաւ ամէն տեսակի արգելքներու ու դժուարութիւններու, ինչպէս նաեւ սխալագործութեան հասնող քաջութեամբ կրցաւ ապահովել՝ մանաւանդ Ատրպէյճանէն, Ղարա-

բաղեն եւ Նախիջեւանէն (նկատելով որ այդ երկիրներէն որեւէ հայկական յուշարձանի նկար առնել բացարձակապէս արգիւում էր) միջին հաշուով օրական 6 լուսանկար (առանց կանգ առնելու նոյնիսկ շաբաթավերջերուն եւ տօնական օրերուն), պատրաստել անոնց վաւերագրական տեղեկագրութիւնները, ու մայքրոֆիշի վերածելով, կազմել այդ 7 սքանչելի հատորները, որոնք կու գան ուղղակի փրկել մեր այդ պատմական կոթողները մոռացման ստոյգ վտանգէն:

Ի՛նչ գնահատելի աշխատանք: Մինչ մեր թշնամին՝ թուրքը, կ'աշխատի մեր այդ ճարտարապետական կոթողները քանդել՝ ի սպառ ջնջելու համար հետքը մեր պատմութեան, տոքթորներ Բարսեղեան-Հախնազարեան իրենց գործակիցներով ի լոյս աշխարհ կը բերեն զանոնք, որպէս անուրանալի իրականութիւն:

Եւ այս բոլորը, 20 երկար տարիներ անընդհատ:

Իսկապէս յամառ, աննկուն եւ յարատեւ աշխատանքի մը արդիւնքն են այդ 7 պանծալի հատորները: Իմ անձնական վկայութեամբ՝ կրնամ ըսել թէ ամէն անգամ որ այցելութիւն տուած եմ Տոքթ. Բարսեղեանին, զինք գտած եմ իր տան վարի յարկը, որ գրասենեակի, աշխատանոցի եւ լուսանկարչատան մը խառնուրդը կը ներկայացնէր: Ամէն կողմ գրքեր, նկարներ, ֆիլմեր, նամակներ եւ ինքը այդ բոլորին մէջ միշտ գործի վրայ:

Այսօր այդ 7 հատոր ալպոմները, շնորհիւ նուիրատուներու, կը գտնուին Եւրոպական եւ Ամերիկեան 80-է աւելի նշանաւոր համալսարաններու գրադարաններուն մէջ, որպէս աղբիւր հետազօտութեան, ու կը դրուին գիտաշխատողներու եւ ուսումնասիրողներու տրամադրութեան տակ:

Հոս հպարտութեամբ պիտի կարենանք ըսել, որ 1990 թուին, տողերը գրողիս նախաձեռնութեամբ, Ալպանիի մէջ (*N.Y.*) կրցանք կազմել խառն յանձնախումբ մը, Ս. Պետրոս, Ս. Խաչ, Հայ Աւետարանական եկեղեցիներէ եւ Վարդանանց ասպետներէ ընտրուած անդամներով եւ պատրաստել արժանավայել մեծարանքի հանդիսութիւն մը, նուիրուած Փրոֆ. Վազգէն Բարսեղեանին, իր այս 7 հատոր ալպոմներուն ամբողջացումին եւ իր 80-ամեակի զոյգ առիթներով:

Ընտիր բազմութիւն մը եկած էր պատուելու զինք: Սրահին մէկ վեցերորդը գրեթէ բաղկացած էր փրոֆեսորներէ, որոնցմէ ոմանք հեռաւոր նահանգներէ եկած էին իրենց յարգանքի տուրքը տալու իրենց ծերունազարդ մեծաւորին եւ ուսուցչին:

Այդ առթիւ Տոքթ. Բարսեղեանը ստացաւ մեր զոյգ կաթողիկոսներուն օրհնութիւնները: Երջանկայիշատակ Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը կը պատուէր զինք յատուկ կոնդակով եւ Ս. Ներսէս Շնորհալի

շքանշանով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ.Տ. Գաբրեզին Բ. այժմու Ամենայն Հայոց Հայրապետը նոյնպէս կը պատուէր զինք յատուկ կոնդակով եւ Մեսրոպ Մաշտոց շքանշանով:

Ծնորհաւորական գիրեր ուղարկած էին.-

Ա. Մ. Նահանգներու նախագահ Ծորն Պուշ

Նիւ Եորքի նահանգապետ Սարիօ Քուոմօ

Գալիֆորնիոյ նահանգապետ Ծորն Տէօքմէնեան

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան

«Հայաստանի հանրապետութեան պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանութեան ընկերութեան» հանրապետական խորհուրդի նախագահութեան նախագահ, Դոկտ.-Փրոֆ. Վ. Մ. Յարութիւնեան

Վ. Համազասպեան

Մատենադարանի փոխ նախագահ Բարգէն Չուխասպեան

Տորթ. Բարսեղեանի համար մի գուցէ եզակի այդ օրը, իրեն զգացնել կու տար իր գաղութին իրեն հանդէպ ունեցած սէրն ու յարգանքը:

Որպէս վերջին խօսող, Տորթ. Բարսեղեան շնորհակալութիւն կը յայտնէր յանձնախումբին, որ ջանք չէր խնայած այդ ալպոմները տարածելու աշխատանքին մէջ, ինչ որ իր նպատակին ծառայեցնելու միակ միջոցն էր: Ծնորհակալութիւն կը յայտնէր նաեւ բոլոր ներկաներուն, որոնք կը գնահատէին իր գործը ու կ'աւելցնէր ըսելով, թէ իր գործը տակաւին չէ վերջացած:

Այդ թուականէն մինչեւ իր մահը Տորթ. Բարսեղեան իր «խորհուրդին» հետ միասին Թուրքիոյ եւ այլ երկիրներու մէջ տակաւին կանգուն մնացած յուշարձաններու պահպանութեան գործով զբաղեցաւ:

Այսօր լման տարի մը կը բաժնէ մեզ այն թուականէն, երբ Տորթ. Վազգէն Բարսեղեան յաւէտ բաժնուեցաւ մեզմէ: Սակայն ան բաժնուեցաւ մարմնով միայն: Իր հոգին կը մնայ անմահ, այն տուեալներով, որ ստոյգ վտանգէ ազատելով մեր փառապանծ պատմական յուշարձանները, անմահացուցած եղաւ զանոնք, զգալի նպաստ մը բերելով մեր ազգի պատմութեան:

Այս առթիւ կոչ կ'ուղղենք մեր յարգելի ժողովուրդին, որ իր նպաստը բերէ այդ ալպոմներուն տարածման, նուիրելով անոնցմէ մէկ կամ աւելի հատորներ, ուրիշ համալսարաններու եւս, որպէսզի ամէնուրեք պատմագէտներ եւ գիտաշխատողներ ունենան հայկական աղբիւր մը եւս սերտելու՝ տեսնելու եւ գիտնալու համար իրականութիւնը:

Իւրաքանչիւր հատորին մէջ կ'արձանագրուի նուիրատուին անունը եւ պահ կը դրուի որոշ համալսարանի մը գրադարանէն ներս:

Այն կազմակերպութիւններն ու անհատները, որոնք կը փափաքին հատոր

մը կամ աւելի նուիրել որոշ համալսարաններու եւ կամ ուսումնական կեդրոններու, կրնան կապ պահել հանգուցեալին որդւոյն՝ Տորթ. Ատրիէն Բարսեղեանի հետ, հետեւեալ հասցեով.-

Mr. V. ADRIAN PARSEKIAN
3935 LEGATION ST. NW
WASHINGTON DC 20015-2915

Ծանօթ.- Հայաստանի գիտութեան եւ կրթութեան նախարարութեան համաձայն, կը նախատեսուի ստեղծել Ուսանողներու Օգնութեան Ֆոնտ մը, որուն նպատակը պիտի ըլլայ օգնել անապահով համալսարանական ուսանողներուն: Ֆոնտը պիտի ունենայ Հոգաբարձուներու Խորհուրդ եւ գործադիր տնօրէն: Գումարները պիտի սպասովուին նուիրատուութիւններով:

«Հայրենիք», 3 Ապրիլ 1997

ՆԱՄԱԿ ԸՆԹԵՐՅՈՂԷ

Նիւ Եղորաքնական մեր ընթերցողներէն Պ. Յակոբ Տէրեանէն ստացայ սրտապնդիչ նամակ մը որ գրի առնուած է իմ Յուշատետր սիւնակի 38րդ տարեդարձին առթիւ 5 Օգոստոսին հրատարակուած «Յուշատետրիս խորերէն խօսք ընդ Աստուծոյ» խորագրեալ յօդուածիս մասին: Իմ յարգելի ընթերցողը, զոր ճանչնալու հաճոյքը չեմ ունեցած, գովասանքով կը խօսի իմ գրական վաստակին մասին, նաեւ հարց կուտայ թէ ինչո՞ւ Աստուծոյ փառք տալու ընթացքին «Աստուածիկս» գրած եմ յօդուածիս մէջ, փոխանակ Աստուած գրելու: Ընդհակառակը յայտնելով իրեն, ստորեւ կը հրատարակեմ իր խրախուսիչ նամակը, նաեւ իմ պատասխանը՝ այդ նամակին:

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

* * *

ՅՈՒՇԱՏԵՏՐԻՍ ԽՈՐԵՐԷՆ ԽՕՍՔ՝ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Գրեց Ռ. Հ.

Աստուածիկս իմ ամենասիրելի ու ամենագօր,

Այսօր խօսք կ'ուղղեմ Քեզի, որպէսզի շնորհակալութիւն յայտնեմ իմ Յուշատետրի էջերուն հետ գլուխ գլխի ապրում 38 տարիներուս համար: Մենք երկուքս միայն, Դուս եւ Քու խոնարհ ծառան ես՝ գիտենք թէ ինչպիսի երջանկութիւն մըն էր այդ միասնութիւնը: Այո՛, 38 տարի շարունակ ամէն օր, ամէն առտու, նոյնիսկ ամէն վայրկեան ու երկվայրկեան պտըտկիլ այդ Յուշատետրի էջերուն մէջ ու հոնկէ հաղորդուիլ իմ շատ սիրելի ժողովուրդին գաւակներուն հետ: Հոյակապ միասնութիւն, որուն քիչեր միայն կ'արժանանան: Այո՛, ես ու իմ շատ սիրելի ժողովուրդիս գաւակները: Արդարեւ շատ խօսք ունեինք իրարու փոխանցելու ու կրցանք լիովին իրականացնել այդ երկխօսութիւնը, այդ երկխօսութեան մէջէն հոսեցնելով մեր ամենագեղեցիկ Մեծաքանչը: Փառք Քեզի, Տէր Աստուածիկս, որ մեզի տուիր այդ մեծ ու սքանչելի լեզուն, Փառք Քեզի որ գիտենք թէ յաճախ խօսեցար նաեւ մեր այդ սքանչելի լեզուով ու սիրտ տուիր մեզի որպէսզի մենք զուլալ ջուր հոսեցնող գետի մը նման դէպի գալիք օրերը հոսեցնենք այդ լեզուն եւ անոր ջուրերը

թափենք գալիք սերունդներու ամազանին մէջ:

Շնորհակալ եմ ամէն բանի համար, Տէր, ես որ ոչ մէկ առտու փողոց ելայ առանց խաչս հանելու եւ առանց Քու օրհնութիւնը խնդրելու գալիք ժամերուս վրայ: Ես միշտ գիտցայ որ Քու այդ օրհնութիւնդ կայ իմ բոլոր ապրումներուս մէջ:

Տէր իմ, դիւրին չէր այսքան երկարատեւ ու այսքան իմաստալից միասնութիւն մը ապրեցնել եւ զայն ամէն օր թարմացնել նորանոր ապրումներով, զայն հասցնել մինչեւ իսկ ամէնէն հեռաւոր ափերու վրայ ապրող մեր ժողովուրդի գաւակներուն: Դիւրին չէր, բայց Դուն որքան դիւրին դարձուցիր զայն, ինչպէ՛ս օգնեցիր որ տամ այն ինչ որ կը սպասէիր որ տայի եւ ինչպէ՛ս օգնեցիր ինծի որպէսզի տարիներու մէջէն քալէի միշտ ինծի հետ տանելով ստեղծագործական աշխատանքի մը նոր օրուան էջը, վրան «Յուշատետր» գրուած եւ տակը՝ իմ անունին ու մականունին սկզբնատառերը դրուած:

Օ, ես շատ լաւ գիտեմ որ Դուն ալ ինծի չափ ուրախացար ամէն անգամ որ ես Յուշատետրի էջ մը լեցուցի: Ես շատ լաւ գիտեմ նաեւ որ այդ Յուշատետրին էջերուն մէջ տող մը անգամ չէի կրնար գրել եթէ Դուն զիս չներշնչէիր ու «Գրէ՛» չըսէիր: Ո՛ր ուժն էր որ օգնեց ինծի եթէ այդ մէկը Քու ուժը չէր: Եթէ կը պատահէր որ երբեմն մէկ օրուան մէջ չորս հատ իսկ Յուշատետր գրէի, կը զգայի որ կար ուժ մը որ կը բռնէր ձեռքէս ու «Քալէ ինծի հետ» կ'ըսէր ինծի:

Հիմա 38 տարիներ սահեր գացեր են ահաւասիկ այն օրուան վրայէն երբ գրեր եմ իմ առաջին «Յուշատետր»ը: Բաւական երկար ժամանակ է այդ ու ես արդէն այլեւս սկսեր եմ զգալ այդ երկար տարիներու աշխատանքին յոգնութիւնը: Բայց յոգնութիւնը չէ՛ որ պիտի ստիպէ զիս որպէսզի վար դնեմ գրիչս: Թէեւ սրտիս մէջ ցաւ մը կայ, ցաւ մը որ կուգայ տեսնելէ թէ մեր ժողովուրդին գաւակներէն շատեր այսօր այնքան չեն գուրգուրար իրենց Մեծապառնչին վրայ, որքան քսան, երեսուն տարի առաջուան մեր ժողովուրդին գաւակները կը գուրգուրային: Բայց ես չեմ որ պիտի յուսալքուիմ ու վերջակէտ պիտի դնեմ իմ աշխատանքիս: Արդէն կը զգամ որ Դուն, իմ անենագօր Աստուածիկս, տակաւին «Ալ կը բաւէ» չես ըսած: Այո՛: Դեռ չի բաւեր: Դեռ անելին կայ: Եւ հիմա, որքան ալ խօսիմ այլեւս անելի շատ շնորհակալութիւն յայտնելու համար, քան թէ խոստումներ շալլելու, ես, Տէր Աստուածիկս, յարգելով Քու խրախուսանքը, դեռ պիտի շարունակեմ մնալ Յուշատետրիս էջերուն մէջ ու հոնկէ պիտի նայիմ թէ ես դեռ ինչ ունիմ ըսելու իմ ժողովուրդիս եւ ինչ ունիմ լսելու՝ իմ ժողովուրդէս:

Ահաւասիկ այս հեռանկարով է որ հիմա ես ետին պիտի թողում իմ Յուշատետրիս 38 տարիները ու իմ սիրելի ընթերցողներուս հետ ձեռք ձեռքի՝ պիտի քալեմ դէ[պի] 39:

Յուշատետրիս խորերէն ահա խօսք կ'ուղղեմ քեզի ու կ'աղօթեմ սրտանց: Իմ սիրելի ում ամենագոր Աստուածիկա: Եղիիր ինձի հետ:

* * *

Յարգելի Պրն. Ռուպեր Հատտէճեան,
Խմբագրապետ «Մարմարա» օրաթերթի

Չեմ գիտեր ինչու, այդքան հարագատ ըլլալ կը թուի ինձի «Մարմարա» օրաթերթը, որ կը գրաւէ իմ ամենօրեայ առջանցէն (օն լայն) ստացած լուրերուն առաջին տեղը:

Հակառակ որ ծնած չեմ Թուրքիոյ մէջ, ուր ծննդավայրի մը քաշողականութիւնը եղած ըլլար պատճառը, սակայն հետաքրքիր եմ թրքական լուրերուն եւ ի մասնաւորի թրքահայ կեանքի անցուդարձերուն, որոնց մասին ամենօրեայ տեղեկութիւններ կարելի կ'ըլլայ ստանալ միայն «Մարմարա» օրաթերթէն: Խորին շնորհակալութիւն «Մարմարա»ին եւ անոր ետին կեցող անձնակազմի իւրաքանչիւր անդամին առանձնապէս եւ ի մասնաւորի անոր երկարամեայ ու բազմափաստակ խմբագրապետին՝ հայ լեզուի ու գրականութեան գերիշխան նահապետին, Պրն. Ռ. Հատտէճեանին, որ համապագ հաղորդակից կը դարձնէ մեզ թրքական ու թրքահայութեան զարգացումներուն հետ:

Պրն. Հատտէճեան, կարծէք ծնած ըլլաք միմիայն գրելու համար: «Գրել»ու տաղանդը Աստուածատուր շնորհք մըն է անձի մը համար եւ Աստուած առատապէս պարգեւած է զայն ձեզի:

Եւ ահա կարդալով ձեր «Յուշատետրիս խորերէն խօսք ընդ Աստուծոյ» յօդուածը, կը տարուինք մտածել թէ ինչպէս կըցաք «38 տարի շարունակ ամէն օր, ամէն առտու, նոյնիսկ ամէն վայրկեան ու երկվայրկեան պտրտիլ այդ Յուշատետրի էջերուն մէջ ու հոնկէ հաղորդուիլ (ձեր) շատ սիրելի ժողովուրդին զաւակներուն հետ»:

Որքան դիւրին է երկու բառով ըսել «38 տարի շարունակ», երբ այդ 38 տարին իր մէջ կը բովանդակէ ամբողջ կեանք մը բեղուն գործունէութեան: Արարեւրէն առածը կ'ըսէ «ուտողը գիտէ համը»,

Այո Պրն. Հատտէճեան, դուք գիտէք միայն թէ ինչ կը նշանակէ այդ «38 տարի շարունակ» ըսելուն համը: 38 տարիներու իւրաքանչիւր օրը կարենալ «հաղորդուելու (ձեր) շատ սիրելի ժողովուրդին զաւակներուն հետ»:

Նոյն ատեն յոյժ գնահատելի է ձեր կեցուածքը Աստուծոյ հանդէպ, քանի որ դուք ձեր գրական վաստակն ու յաջողութիւնները երբեք չէք վերագրեր ձեր սեփական կարողութիւններուն, այլ այդ կարողութիւնները ձեզի շնորհող Աստուծոյն միայն. գիտնալով որ «Աստուծոյ օրհնութիւնը կայ ձեր բոլոր սպրումներուն մէջ»:

Սակայն Պրն. Հատտենեան, ներեցէք եթէ ըսեմ որ ձեր այդ որակումը Աստուծոյ հանդէպ անհասկանալի թուեցաւ ինծի. թէ ինչու զԱստուած կոչած էք «Աստուածիկս» փոխանակ «Աստուածս» ըսելու:

Թէեւ գիտենք որ հայերէն լեզուի մէջ «իկ» մասնիկը իր փոքրացնող իմաստէն զատ ունի նաեւ քնքշանքի, առաւել սիրոյ, գուրգուրանքի ու խանդադատանքի իմաստ:

Օրինակ երբ խանդադատանքով կը խօսինք մեր զաւակներուն, մեր թոռներուն, կամ մեր ծոռերուն հետ եւ զանոնք կը կոչենք անուշ-իկս, սիրուն-իկս, համով-իկս ըսելով, ցոյց տուած կ'ըլլանք թէ որքան անհուն սիրով է որ կը սիրենք զիրենք:

Վատահաբար դուք եւս այդ «իկ» մասնիկին երկրորդ իմաստովն է որ զԱստուած կը կոչէք Աստուածիկս ըսելով, ձեր անհուն սէրը յայտնելով Աստուծոյ հանդէպ:

Սակայն երբ մեր թոռներն ու ծոռերը կը սիրենք «իկ»ով, կը խորհիմ պատճառն այն է որ անոնք մեզմէ յառաջ եկած զաւակներ են, մեզմէ վար, մեր փոքրերը: Սակայն Աստուած մեզմէ վեր՝ մեր բոլորին Արարիչը:

Պրն. Հատտենեան, խոնարհելով ձեր գրական վաստակին եւ ձեւ պատկառելի տարիքին առջեւ (թէեւ տողերը գրողս ալ տարիքով շատ հեռու չէ ձեզմէ) հարց կուտամ միթէ աւելի պատշաճ չէ՞ զԱստուած կանչել առանց «իկս»ի: Յարգանք

ՅԱԿՈԲ ՏԷՐԵԱՆ

7 Օգոստոս 2019 - Ամերիկա

* * *

Սիրելի Պարոն Տէրեան

Հազար շնորհակալութիւն՝ իմ գրական վաստակին մասին ձեր գնահատանքի արժեքաւոր տողերուն ու զգացումներուն համար: Լաւ հասկցած էք զիս: Գրելը ինծի համար ապրելակերպ է եւ միշտ ալ փառք տուած եմ Աստուծոյ, որ ինծի տուած է հայաշունչ գրականութիւն սիրելու եւ գրական գործ արտադրելու երջանկութիւնը:

Այս տարի իսկապէս աւելի յուզումով նշեցի «Յուշատետր» սիւնակի ստեղծման 38րդ տարեդարձը: Ինծի համար յուզումնալից պահ էր այդ, նաեւ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու առիթ: Բայց այդպիսի տաքուկ ու հոգեշունչ վայրկեանի մը ընթացքին կը թուի թէ ես անբաւարար գտեր եմ «Աստուած իմ» ըսելը ու գրեր եմ «Աստուածիկս իմ»: Հարկաւ հոս «իկ»ը, ինչպէս գրեր էք արդէն, պզտիկցնող իմաստ չունի, այլ ունի սիրելիութեան իմաստ:

Ամբողջ կեանքիս մէջ հաւատացի որ ամեն մարդ իր Աստուածը ունի իր

սրտին մէջ, եւ եթէ հաւատացեալ է, մարդ ամէն վայրկեան զրոյցի մէջ է իր Աստուծոյն հետ: Ասիկա կը նմանի առանձնութեան մէջ կատարուած աղօթքի մը եւ շատ հեռու է եկեղեցւոյ մէջ ուրիշներու հետ կատարուած բարձրաձայն աղօթքէն: Ասիկա նաեւ այն պահն է երբ դու քու ո՛չ միայն յարգանքը, այլ նաեւ սէրը կը մատուցանես Աստուծոյ ու կը հաւատաս որ Աստուածն ալ փոխադարձաբար կը սիրէ քեզ: Պաշտօնականութենէ հեռու, ամենայն հաղորդականութեամբ յայտնուած այդ սէրն է որ զիս մղեր է որ «Աստուածիկս» կոչեմ մեր Տէր Աստուածը, անբաւարար գտնելով «Աստուածս» կոչումը: Այս «Աստուածիկս» կոչումին մէջ է որ իր արտայտութիւնը կը գտնէ իմ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու ու փառք տալու տրամադրութիւնս՝ երջանիկ տարեդարձի մը հանդիսաւոր օրով: Կը հաւատամ որ Աստուածիկս կոչումը բան մը եւս կ'աւելցնէ Աստուծոյ նկատմամբ իմ յարգանքիս վրայ, աւելի տաքուկ, աւելի բնածին, աւելի մտերմիկ կը դարձնէ զայն:

Չեմ գիտեր թէ ընդունելի կը գտնե՞ք իմ այս բացատրութիւնը: Կրկին շնորհակալութիւն կը յայտնեմ եւ արեւշատութիւն կը մաղթեմ ձեզի:

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

ՄԵՐ ԼԵԶՈՒԻՆ
ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ

ԱՐԵՒԷԱՀԱՅԵՐԷՆԸ ԿԱՐԵՆԱԼ ՀԱՍԿՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՌՈՒՄԵՐԷՆ ԳԻՏՆԱԼ ԴԱՅՄԱՆ Է ԵՒ ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆԻՆ ՎՏԱՆԳՈՒԾ ԱՊԱԳԱՆ

Տեսանելի է որ արեւելահայերեն գրականության մէջ զգալի չափով օտար բառեր կը գործածուին, որոնք եթէ ոչ ամբողջութեամբ սակայն մեծ մասամբ ռուսերէն բառեր են:

Ընդունելի է որ խորհրդային շրջանին, միութեան ամբողջ տարածքին կեդրոնական լեզուն ռուսերէն ըլլալուն՝ մանաւանդ բոլոր դպրոցներէն ներս անոր պարտադիր ուսուցման հետեւանքով, ռուսերէն բառերը մուտք գործեցին հայրենաբնակ ժողովուրդին թէ գրական եւ թէ խօսակցական լեզուին մէջ:

Այս երեւոյթը կը բացատրուի անով, որ փոքրամասնութիւններ կամայ թէ ակամայ կ'ազդուին մեծամասնութեան պատկանող լեզուներէն:

Տարբեր չէ նաեւ արեւմտահայերէնի պարագան սփիւռքահայութեան մօտ, ի մասնաւորի արեւմտեան երկիրներէն ներս, ուր ոչ միայն տեղական լեզուներէն բառեր կը խառնուին մեր խօսակցական հայերէնին մէջ, այլեւ կ'ընթանանք, դէպի... լեզուափոխութիւն...: Սխալած չէինք ըլլար եթէ ըսենք որ արեւմտահայերէնը կ'ապրի իր նահանջի տարիները:

Դժբախտութիւն է տեսնել այս ցաւալի իրականութիւնը, որ կը կատարուի մեր օրերուն՝ մեր աչքերուն առջեւ, որուն սիրտ այրող երեւոյթներուն ականատես կ'ըլլանք քիչ մը ամէն օր, առանց խորը մտածելու, թէ այս ընթացքով ի վերջոյ ուր է արեւմտահայերէնի վերջին հանգրուանը:

Թէեւ շատերուն համար նորութիւն մը չէ այն ինչ որ կը ներկայացնեն այստեղ, սակայն որպէսզի մեր այս մտքերը ոմանց համար յոռետեսութիւն չնկատուին, հոս կ'ուզեմ տալ արեւմտահայերէնի նահանջին հակիրճ պատկերը, որ կ'երկարի երեք սերունդներու վրայ:

Առաջին սերունդ.- Արեւելեան երկիրներէն թէ հայրենիքէն եկած նոր ընտանիքներ, որոնք ոչ միայն հայախօս են, այլ ուղղակի հայկականութեամբ սնուած անհատներ, որոնք տակաւին կատարեալ հայու զգացումներով հայերէն կը խօսին թէ՛ իրենց ընտանիքներէն ներս, թէ՛ իրենց բարեկամներով

եւ թէ՛ հաւաքատեղիներու մէջ: Կը կարդան նաեւ հայերէն թերթեր ու կը գրեն հայերէն նամակներ:

Սակայն կարճ ժամանակ ետք, կը գիտակցին որ առանց տեղական լեզուին իմացութեան կարելի չէ ապրիլ: Որով կը սկսին տեղական լեզուն սորվելու աշխատանքին: Ահա այս կէտէն կը սկսի օտար բառերու մուտքը իրենց հայերէն խօսակցութեան մէջ:

Հետզհետէ կը դադրին նաեւ հայերէն թերթ կարդալէ: Ոմանք կը փորձեն կարդալ տեղական լեզուով լոյս տեսնող հայկական թերթեր եւ կամ տեղական թերթեր, կարենալ զարգացնելու՝ իրենց նոր սորված լեզուն:

Նոր սերունդը արդէն իսկ շատ հեռու է հայերէն թերթ կարդալէ: Իսկ անոնք որոնք տակաւին հայերէն կարդացողներ են, յիշեալ պայմաններու տակ հետզհետէ երբ իրենք եւս կը դադրին հայերէն թերթ կարդալէ, ոչ միայն հարցականի տակ կը դնեն հայ թերթին ապագան, այլեւ... իրենց ապագան...:

Այսօր ցաւով կը կարդանք բոլոր հայկական թերթերու մէջ հնչող նոյն ահագանգը, թէ տարուէ տարի կը նուազի հայերէն թերթ կարդացողներուն թիւը:

Անհերքելի ճշմարտութիւն է նաեւ, որ այն հայկական թերթերը որոնք տակաւին կը շարունակեն իրենց գոյութիւնը, արդիւնք են *միմիայն հայ գրի ու զրականութեան նուիրեալ անձերու անզնահատելի զոհողութեան եւ սակաւաթիւ հայ լեզուի պաշտպան անհատներու նիւթական քաջալերանքին*:

Ահաւասիկ արեւմտահայերէնի նահանջին առաջին սերունդին պատկերը:

Երկրորդ սերունդ.- Այս հայախօս ընտանիքներու նորածին մանուկներուն մօտ արդէն իսկ օտար լեզուին ծիւերը կը սկսին արձակուիլ հեռատեսիլէն օրական 24 ժամ տրուող մանկական քարթօն ֆիլմերու ցուցադրութենէն: Մանուկներ, տակաւին մանկապարտէզ յաճախել չսկսած, արդէն իսկ անգլերէնով կրնան հասկնալ ու հասկցնել իրենց միտքը, մինչեւ իսկ այն ընտանիքներուն մանուկները, որոնց տան մէջ հայերէն խօսիլը պարտադիր օրէնք եղած ըլլայ:

Ապա երբ կը սկսին դպրոց յաճախել, դժբախտաբար բոլոր քաղաքներու մէջ հայկական դպրոցներու չգոյութեան պատճառաւ, կը յաճախեն պետական դպրոցներ, ուր կ'ուսանին տեղական՝ իմա անգլերէն լեզուով:

Ահաւասիկ մեծագոյն դժբախտութիւնը այդ մանուկներուն, որ իրենց համար ամենաեական, ամենաանհրաժեշտ նկատուող մանկապատանեկան լեզուակազմութեան հիմը չի կերտուիլ իրենց մայրենի լեզուով: Օտար լեզուով կը սկսի եւ օտար լեզուով ալ կը շարունակուի:

Եւ ահա այդ օտար լեզուն, իմա անգլերէնը, այնքան հեշտ ու սահուն կը հոսի իրենց լեզուէն, որ կարծէք... իրենց մայրենի լեզուն եղած ըլլայ... իսկ

իրենց մայրենին... երկրորդական...:

Որովհետև հասակ առնող նոր սերունդի տղաք ու աղջիկներ, իրենց ընտանիքին ներս հագիւ սորված խօսակցական հայերէնով երբ կը դժուարանան իրենց միտքը կարենալ արտայայտելու, կը հարկադրուին դիմել անգլերէնի օգնութեան, որպէսզի կարելի ըլլայ ամբողջացնել իրենց ըսել ուզածը: Եւ ահաւասիկ կը ստացուի ան, որ ոչ միայն անգլերէն բառեր մուտք գործած կ'ըլլան խօսակցութեան մէջ, այլ ուղղակի դուրս կու գայ անգլերէնախառն հայերէն մը...: Սակայն ուշադրութիւն. եթէ լաւ դիտենք զիրենք, պիտի տեսնենք որ այդ անգլերէնախառն հայերէնը կը խօսին միայն անոնց հետ, որոնք անգլերէն չեն գիտեր եւ կամ քիչ կը հասկնան: Իսկ իրարու հետ... զուտ անգլերէն...:

Ահա այս ալ պատկերն է նահանջի երկրորդ սերունդին:

Երրորդ սերունդ. Այս ընթացքին շարունակութիւնը արդէն իսկ մեզի յստակօրէն ցոյց կու տայ երրորդ սերունդին աւելի մռայլ դէմքը: Երբ հայախօս եւ հայկականութեամբ սնուած ու մեծցած առաջին սերունդին զաւակները, կը դառնան՝ առանց կարենալ գրել կարդալու միայն անգլերէնախառն հայերէն խօսողներ, ի վերջոյ իրենք եւս իրենց կարգին, պիտի կարենա՞ն իրենց զաւակներուն սորվեցնել... իրենց չգիտցած հայերէնը...:

Ահաւասիկ արեւմտահայերէնի վերջին հանգրուանը...:

Հոս փակագիծ մը բանալով, կ'ուզեմ նշել, որ մեր նիւթը միայն «լեզուական հարցեր» ըլլալուն, փորձած եղանք ցոյց տալ լոկ արեւմտահայերէնի վտանգուած ապագան. առանց խօսելու՝ այդ վտանգին հետ սերտօրէն առնչուող արեւմտահայութեան ապագային վրայով...:

Արեւելահայերէնի կացութիւնը հիմնովին կը տարբերի արեւմտահայերէնի կացութենէն: Արեւելահայերէնը ըլլալով մեր պետական լեզուն, հայրենիքի ամբողջ տարածքին գործածուող միակ լեզուն է: Բոլոր դպրոցականներ, մանկապարտեզէն մինչեւ համալսարան, հայերէնով է որ կ'ուսանին: Բոլոր ընտանիքներէն ներս հայերէն կը խօսուի: Պետական պաշտօնատուններէն մինչեւ վաճառատուներն ու արհեստանոցները եւ ամէն տեղ, հայերէնն է միակ խօսակցական լեզուն:

Արեւմտահայերէնի դժբախտութեան դիմաց սա բարեբախտութիւնն է արեւելահայերէնին, քանի որ ան կը վայելէ հոգածութիւնը մեր հայրենի իշխանութիւններուն: Ան ենթակայ չէ այլեւս որեւէ լեզուէ ազդուելու վտանգին, ինչպէս էր անցեալին: Այո՛, եթէ երբեք Սովետական շրջանին որոշ չափով ազդուած էր ժուսերէնէն, սակայն այսօր անկախութեան այս շրջանին, կ'արժէ մտածել զայն գտելու եւ օտար բառերը մաքրելու վրայով: Թէեւ ընդունելի է որ այդքան ալ դիւրին գործ չէ արմատացած այդ օտար բառերու

գործածութենէն ձերբազատուիլը, սակայն կը հաւատանք, որ հետեւողական աշխատանքով կարելի է յաջողցնել զայն ժամանակի ընթացքին:

Մեր այս գաղափարները առաջադրելու դրդապատճառը այն է, որ արեւելահայ գրականութեան մէջ գործածուող օտար բառերու առատութիւնը պատճառ կը դառնայ, որ արեւմտահայ ընթերցողը դժուար կարենայ հասկնալ իր կարդացած որեւէ յօդուածը կամ լրատուութիւնը:

Նկատի ունինք որ օտար բառի մը գործածութիւնը նախադասութեան մը մէջ պատճառ կը դառնայ, որ այդ նախադասութիւնը ամբողջ անհասկնալի մնայ արեւմտահայ ընթերցողին համար:

Որպէս օրինակ, հոս կը ներկայացնեմ կարգ մը նախադասութիւններ, որոնց մէջ գործածուած են օտար բառեր: Օտար բառերը չակերտուած են մեր կողմէ: Կարդացէք զանոնք: Եթէ երբեք ծանօթ չէք այդ բառերուն նշանակութիւններուն, արդեօք պիտի կարենա՞ք հասկնալ այդ նախադասութիւններուն իմաստը:

- Կան յօդուածներ, որոնք ի վերջոյ իրենց «մոտիվացիայի» իմաստով քաղաքական երանգաւորում ունեն:

- Թէւեւ Սարգսեանի մօտեցումները մի քիչ տարբերում են նրա առաջարկածից, բայց «կոնցէպտուալ» չեն:

- Մերժ Սարգսեանը իր պաշտօնավարութեան 100 օրուայ կապակցութեամբ *PR* նոր «ակցիա» է սկսել:

- Սա հանրութեան հաւաքական ուժի եւ կամքի «ֆենոմեն» է:

- Երկրում ստեղծուած «անտագոնիստական» մթնոլորտը, ըստ նրա ձեւաւորուել է բացառապէս Քոչարեանի քաղաքականութեան պատճառ:

- Լեւոնական ուժերը արդէն «օբյեկտիւօրէն» չեն կարող յաւակնել:

- Սարգսեանը ողջունեց կուսակցութիւնների խոշորացման ճանապարհով միաւորումները, նկատելով որ կարելու է թէ դա ինչպէս է տեղի ունենում. տեղի է ունենում մի կուսակցութեան ընդարձակուելու, ծաւալուելու միջոցով, թէ «կոնսոլիդացիոն» «պրոցեսներ» են գնալու:

- Մի գուցէ «վերտուալ» մտավախութիւն է:

- Այսօր Հայաստանն առայժմ փոքրիշատէ արժանավայել կեանքի կէտերի «արշիպելագ» է հիմնախնդիրների ովկիանոսում: Եւ այլն:

Նկատելով որ բոլոր օտար բառերը իրենց նախադասութիւններով միասին ներկայացնելը խիստ ձանձրացուցիչ պիտի ըլլայ, կը ներկայացնեմ անոնցմէ փունջ մը միայն, որոնք *անկասկած արեւելահայերէնի մէջ գործածուող օտար բառերուն ամբողջութիւնը չեն*: Անոնք միայն մէկ ամսուայ ընթացքին «Ա.1» եւ «Ազատութիւն» ռատիոկայաններուն հաղորդումներէն քաղուած բառեր են, որոնք նօթագրած են ցոյց տալու համար օտար բառերու առատու-

թիւնը արեւելահայերէնին մէջ:

Ահաւասիկ.

Ամբիցիա, արսուրդ, ագրեսիւ, աստորիտար, ակցիա, անախրոնիզմ, ատեստացիա, բեսարեդել, բլոգոսֆերա, բարիկադ, գլոբալիզացիա, գրոսմայստեր, դեֆիցիտ, դիվիզիա, դեստաբիլիզացիա, դեպարտամենտ, էլեմենտ, էկզոտիկ, էնտուզիազմ, ինագուրացիա, իմերցիոն, իմիտացիա, իմունիտետ, լակէյ, լեկսիկոն, կոսմոպոլիտիզմ, կարիերա, կոռուպցիա, կոնսենսուս, կոնվենցիա, կատալիզատոր, կոմպրոմիս, կոնստիտուցիա, կոնստրուկտիւ, կոալիցիա, կորպորատիւ, մոնոպոլիստ, մակրո-տնտեսական, մոքիլիզացիա, մենտալիտետ, միգրացիա, մոնիտորինգ, պրովակացիա, պրոցես, պրեֆեկտուրա, պրագմատիկ, պետդեպարտամենդ, պարադոքս, պոտենցեալ, պրակտիկա, պրոտեկտորատ, պիկէտ, սցենար, սպեկտոր, սիւնա, սոցիոլոգիա, սպեցիֆիկա, սապոգ, սանկցիա, տրոլէյբուս, տերմին, ռեպրեսիա, ռեւանշ, ռեցիդիվիստ, օպերացիա, օպտիմիզմ, օկուպացիա, ֆասադային, ֆունկցիա, ֆորիա, ֆարս եւ այլն:

Ահաւասիկ բառեր, որոնց մէն մի հատը կը դժուարացնեն արեւելահայերէնի ընթերցումը բոլոր անոնց, որոնք ծանօթ չեն այդ բառերուն իմաստին: Արդեօք չունի՞նք այդ բառերուն նշանակութիւնը ունեցող հայերէն բառեր: Դժբախտաբար ծանօթ չենք այդ բոլոր բառերուն նշանակութիւններուն, կարենալ ըսելու թէ նոյնիմաստ հայերէն բառեր կան թէ ոչ: Նման գործ մը կարենալ յաջողցնելու համար, վստահաբար պէտք է դիմել բառարանի օգնութեան եւ կամ հայերէն եւ ռուսերէնի մասնագետ անհատներու: Սակայն մենք կարգ մը ռուսերէն գիտցող հայաստանցի բարեկամներու միջոցաւ կրցանք ճշդել որոշ բառերու հայերէնները, որոնք անկասկած կարելի է գործածել այդ օտար բառերու փոխարէն:

Օրինակ.

Ինչու կուտուրա եւ ոչ մշակոյթ

Ինչու կոլեկտիւ եւ ոչ ամէնքով-խմբովին

Ինչու օբյեկտիւ եւ ոչ հիմնաւոր-փաստացի

Ինչու սուբյեկտիւ եւ ոչ անհիմն

Ինչու օմբուդսմէն եւ ոչ իրաւապաշտպան

Ինչու լեզիտիմ եւ ոչ օրինականութիւն

Ինչու իմպիչմենտ եւ ոչ պաշտօնանկութիւն

Ինչու սանկցիա եւ ոչ պատժամիջոց

Ինչու ինֆանտիլ եւ ոչ մանկամտութիւն

Ինչու չինովնիկ եւ ոչ պաշտօնեայ

Ինչու մոքիլիզացիա եւ ոչ զօրակոչութիւն

Որով եթե ունինք այդ օտար բառերուն նշանակությունը ունեցող բառեր մեր անգուգական լեզուին՝ հայերենին մէջ, ուրեմն ի՞նչ պատճառ ունինք անտեսելու զանոնք եւ նախապատուութիւն տալու օտար բառերու գործածութեան:

Սա, այսպէս ասած, «դուրսէն դիտող» արեւմտահայի տեսութիւն է: Եւ ինչպէս ժողովրդային ասացումները կ'ըսէ. «դուրսէն դիտողը յաճախ շատ աւելի լաւ կը նշմարէ թերութիւնները, քան՝ այդ թերութիւններուն մէջ ապրողները», նոյն այս տեսութեան հիման վրայ համարձակութիւնը ունեցանք գրելու այս տողերը:

Արեւմտահայութիւնը տենդագին աշխատանք կը տանի իր լեզուին գոյատեւման համար: Այդ ցոյց կու տան աշխարհի բոլոր գաղթօճախներուն մէջ լոյս տեսնող անհամար օրաթերթերը, շաբաթաթերթերը, ամսաթերթերը, տարգրաբային հրատարակութիւններն ու գիրքերը:

Միակ վտանգը, որ կը սպառնայ արեւմտահայերէնին, այն է, որ տարուէ տարի կը նուազի անոր ոչ միայն ընթերցողներուն թիւը, ինչ որ վերելնկարագրեցինք, այլ եւ խօսողներուն թիւը...:

Արդար ըլլալու համար, սակայն, պէտք է ըսել որ արեւմտահայերէնի խօսակցական լեզուն որքան կ'աղաւաղուի ու կը կորսնցնէ իր քաղցրութիւնը, սակայն գրական լեզուն կը պահէ իր անխառն մաքրութիւնը: Արեւմտահայ գրականութեան մէջ ընդհանրապէս չեն գործածուիր բոլոր այն օտար բառերը, որոնց նշանակութիւնը ունեցող հայերէն բառեր ունինք մեր լեզուին մէջ: Միայն բացառիկ պարագաներուն է որ պարտադրաբար կը գործածուին կարգ մը օտար բառեր, որոնց բով ընդհանրապէս փակագծի մէջ կը տրուին կարճ բացատրութիւններ, այդ բառերուն վրայով, որպէսզի ընթերցողը չդժուարանայ հասկնալ իր կարդացածը:

Մեր ազգին գոյատեւման գլխաւոր ազդակները եղած են հայրենիք, դպրոց եւ եկեղեցի, երեք սիւններ արդարեւ, որոնք ապահոված են հայութեան յաւերժացումը:

Իսկ այս երեքին կորիզն ու ուղնուծուծը եղած է հայ լեզուն, որովհետեւ կարելի է ըսել, որ հայ լեզուն մեր ազգային գոյատեւման կեդրոնական սիւնը եղած է, որ դարեր շարունակ կարողացած է գերծ պահել մեզ օտարացումէ:

Դարեր շարունակ կորսնցուցած մեր ազատութիւնը, ապրած ենք օտար տէրութիւններու ճնշումներուն տակ: Ամէն տեսակ արգելքներու դիմաց, սակայն, կրցած ենք պահել մեր լեզուն եւ անոր շնորհիւ կրցած ենք ապրիլ ու գոյատեւել որպէս հայ:

Եթե այդ անազատութեան տարիներուն կորսնցուցած ըլլայինք նաեւ մեր լեզուն, վստահաբար այսօր դադրած պիտի ըլլայինք որպէս հայ ազգ գոյու-

թիւն ունենալ: Լեհաստանի, Հնդկաստանի եւ այլ երկիրներու հայ բնակչութեան անվերադարձ կորուստը, զայս կ'ապացուցէ:

Հայ լեզուն կենսասնիթն (vitamin) ու սնուցիչն է հայ հոգիին: Առանց այդ կենսասնիթին, հայ հոգին դատապարտուած է տկարանալու եւ ապա... անհետանալու:

Օրինակներ շատ կան մեր ամերիկահայ կեանքին մէջ, ուր կը տեսնենք 3-րդ եւ 4-րդ սերունդի զաւակներ (առանց հաշուելու տակաւին կիսահայ օտար ամուսնութիւններէ սերածները), որոնք շատ հեռու են հայութիւն, հայրենիք, ազգային ոգի, ազգային գիտակցութիւն եւ այլ հասկացողութիւններէն: Պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ հայ լեզուին բացակայութիւնը, քանի որ *հայ աղբիւրէն չէ որ կը խմեն իրենց ջուրը...*:

Ոմանք կ'առարկեն ըսելով, թէ լեզուն չէ, այլ հոգին է կարելորդ: Երբ ոեւէ մէկը հոգիով հայ է, ինչ տարբերութիւն, որ հայերէն կը խօսի թէ անգլերէն: Եւ օրինակ կը բերեն, Ուիլիըմ Սարոյեանի, Փիթըր Պալազեանի եւ ուրիշներու նման պատուական հայեր, որոնք թէեւ հայերէն չեն գիտեր, բայց գիտակից հայեր են:

Ամենեւին առարկութիւն չունենալով հանդերձ, որ այդ բացառիկ գրող մտաւորականները գիտակից հայեր են, կարելի՞ է ընդունիլ որ բոլոր անգլիախօս հայերը նոյն գիտակցութեան տէր մարդիկ են: Յաւի սիրտ կարելի է ըսել, որ իւրաքանչիւր անգլիախօս ու գիտակից հայու մը դիմաց, հարիւրաւոր հակառակ պատկերը պարզող հայեր կարելի է հաշուել, որոնց ներկայութեան ի տես, տակաւին կարծել թէ լեզուն չէ կարելորդ, պարզապէս ինքնախաբէնութիւն է:

Մենք վերել խօսեցանք թէ՛ արեւելահայերէնի եւ թէ՛ արեւմտահայերէնի վրայով եւ աշխատեցանք ցոյց տալ իւրաքանչիւրին ներկայ վիճակը:

Արեւմտահայերէնը լուրջ վտանգի ենթակայ է, տարուէ տարի աւագախորումի նման, կամաց-կամաց կը խրի դէպի խորը:

Այս վտանգին ի տես, ակնկալելի է որ հայրենի իշխանութիւնները միջոցներ ձեռք առնեն սփռութեամբ մտաւորականութեան հետ միասին եւ զարկ տան դպրոցներու զարգացման եւ յատկապէս արեւմտահայերէն ուսուցանող ուսուցիչներու պատրաստման աշխատանքին, որպէսզի կարելի ըլլայ առաջը առնել վաղահաս վտանգին:

Իսկ արեւելահայերէնի պարագային կը խորհիմ անդրադառնալ պէտք է, թէ օտար բառեր կը գործածուին արեւելահայերէնի մէջ, հայերէն բառերու փոխարէն:

Վստահաբար, այդ օտար բառերու գործածութիւնը այնքան սովորական դարձած է հայրենաբնակ մեր ժողովուրդին համար, որ երբ կը կիրարկեն

զանոնք, չեն անդրադառնար թե օտար բառեր են, որ կը գործածեն:

Մեր այս ցուցմունքը կ'ուզենք նկատողութեան յանձնել Հայաստանի կրթական նախարարութեան եւ Գրողներու Միութեան, որ իրատեսութեամբ քննարկեն արեւելահայերէնի ներկայ վիճակը եւ որոշեն պարտն ու պատշաճը կատարել:

Արեւմտահայերէնը որքան նուիրական է եւ սիրելի մեզ համար, նոյնքան եւ աւելի սիրելի է եւ գուրգուրալի նաեւ արեւելահայերէնը: Միւրեւն երկուքն ալ, այն իմաստով որ եթէ վերցնենք անոնց առջեւէն արեւելքն ու արեւմուտքը, կը մնայ միայն հայերէնը. այն հայերէնը, որ մէկ է եւ ոչ երկու:

Եւ հայերէնը մեր պաշտելի մայր լեզուն է:

Սակայն ինչպէս նախապէս յիշեցինք, արեւելահայերէնը աւելի բախտաւոր է, բաղդատմամբ արեւմտահայերէնի, այն իմաստով որ ան արեւմտահայերէնի դժբախտ պայմաններուն ենթակայ չէ. այլ ըլլալով մեր հայրենիքի պետական լեզուն ու վայելելով մեր իշխանութիւններուն հովանաւորութիւնը, աւելի յոյս կը ներշնչէ գրաւականը հանդիսանալու մեր լեզուին գոյատեւման:

Ահա թէ ինչո՞ւ կը փափաքինք տեսնել արեւելահայերէնը օտար բառերէ զտուած եւ մաքրուած, որպէս անարատ մայր լեզու:

Յոյսով ենք, որ հայրենի իշխանութիւններն ու Գրողներու Միութիւնը նկատի կ'առնեն մեր այս համեստ ցուցմունքները, զնահատելով անոնց կարեւորութիւնն ու այժմէականութիւնը:

«Նոր Օր», 6 եւ 13 Սեպտեմբեր 2008

ԵՐԲ ՊԻՏԻ ԶՏՈՒԻ ԱՐԵՒԵԼԱՎՅԵՐԷՆԸ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒ ԱՆՀԱՐԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵՆԷՆ

Թուականէս 3 տարի առաջ՝ 2008-թ.ին, հարցական յօդուած մը գրած էի, «Արեւելահայերէնը կարենալ հասկնալու համար Ռուսերէն գիտնալը պայմա՞ն է, եւ Արեւմտահայերէնին վտանգուած ապագան» խորագրով, որ լոյս տեսաւ «Նայիրի», «Նոր Օր» եւ «Առաւօտ» թերթերու մէջ:

Հոն զգացուցած էի Արեւմտահայերէնին սպառնացող մեծ վտանգը, թէ ինչպէս հայերէն ընթերցողներուն թիւը տարուէ տարի կը նուազի, թէ ինչպէս նոր սերունդը, մեծ մասամբ, շատ հեռու է հայերէն կարդալէ ու խօսելէ, թէ ինչպէս մինչեւ իսկ ազգայնական ոգիով թունդ եւ տունէն ներս միայն հայերէն խօսող ընտանիքներու զաւակներն անգամ, 3 սերունդ անդին, դժուար թէ կարենան պահել իրենց հայախօսութիւնը եւ այլն:

Իսկ Արեւելահայերէնի վիճակը հայրենիքէն ներս, շատ աւելի ապահով կը նկատէի, այն տուեալով, որ ան կը վայելէ մեր հայրենի իշխանութիւններուն հովանաւորութիւնը եւ որպէս մայրենի լեզու, դպրոցներէն ներս, Մայրենիին ուսուցումը տեղի կ'ունենայ հայերէնով, ինչ որ ամենակարեւորն է, քանի որ մանկապատանեկան լեզուակազմութեան ու լեզուամտածողութեան հիմը կերտուած կ'ըլլայ եւ կը շարունակուի մայրենի լեզուով:

Իսկ այսպիսի դաստիարակութիւն մը կարենալ տալ աշակերտին՝ կարելի է միայն հայրենիքէն ներս, ուր մեր մայրենին կը պահէ իր տիրութիւնը որպէս ազգային ու պետական լեզու, եւ ան կը խօսուի հայրենիքի ամբողջ տարածքին:

Սակայն Արեւելահայերէնը կը դժուարանայ ձերբագատիլ իր ներսիդին գործածուող օտար բառերու այդքա՛ն շռայլ գործածութենէն: Այո. օտար բառեր, որոնց համապատասխան նշանակութեամբ հայերէն բառեր ունինք, անկասկած, մեր մայրենի լեզուին մէջ:

Իմ այդ գրութեան մէջ օրինակներով ցոյց տուած էի, թէ ինչպէս նախադասութեան մը մէջ գործածուած օտար բառ մը, որուն նշանակութիւնը ծանօթ չէ ընթերցողին, պատճառ կը դառնայ որ ամբողջ նախադասութեան իմաստը չհասկցուի: Եւ որպէս օրինակ՝ մօտ 10 նախադասութիւններ ներկայացուցած էի այնտեղ, որոնց իւրաքանչիւրին մէջ գործածուած մէկ կամ երկու

օտար բառերը կու գային փաստելու մատնանշած կետին իրականությունն ու արդարացիությունը: Իսկ նկատելով, որ բոլոր գործածուած օտար բառերը իրենց նախադասություններով միասին ներկայացնելը անկարելի պիտի ըլլար, առանձնապէս այդ գործածուած բառերէն փունջ մը, մօտ 75 հատ ներկայացուցած էի հոն: Աւելին՝ ռուսերէնի հմուտ մեր հայաստանցի բարեկամներուն օգնութեամբ կրցած էի մօտ երկուսասնեակ մը ռուսերէն բառեր եւս ներկայացնել այնտեղ, իրենց հայերէն տարբերակներով, ցոյց տալու համար, թէ ինչ գեղեցիկ բառեր ունինք՝ մեր մեծապահ լեզուին մէջ: Եւ յայտնած էի դառնություն, որ զանոնք կամովին անտեսելով ու լքելով կը գործածենք օտար բառեր:

Օրինակ, Երբ ունինք «Մշակոյթ» բառը, ինչու գործածել «Կուլտուրա»: Երբ ունինք «Անհիմն» բառը, ինչու գործածել «Սուբյեկտիւ»: Երբ ունինք «Իրաւապաշտպան» բառը, ինչու գործածել «Օմբուդսմէն»ը եւ այլն:

Այս եւ նման օրինակներով ցոյց տուած էի թէ ինչպէս արեւելահայերէն լեզուն օտար բառերու առատութեամբ աղաւաղուած վիճակ մը կը ներկայացնէ այսօր եւ այդ՝ ոչ միայն խօսակցական լեզուի, այլեւ՝ գրական լեզուի մէջ:

Ճիշդ է, որ այդ բոլոր օտար բառերը արեւելահայերէն լեզուին մէջ գործածուիլ սկսան (մեծ մասամբ) Բ. Հանրապետութեան շրջանին, հասկնալի պատճառներով եւ, մօտաւորապէս 4 սերունդներու կեանքի յաջորդական տեւողութեան, մասամբ արմատացան:

Սակայն այսօր, մեր անկախութեան այս 20 տարիներու շրջանին, միթէ ժամանակը չէ՞ր մեր լեզուն զտելու եւ ունենալու անխառն ու անարատ հայերէն մը:

Մեր այս յօդուածէն օրինակ մը ուղարկեցինք «Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութիւն», որ իրենց ուշադրութեան յանձնենք մեր մտահոգությունները:

Նախարարութենէն ստացանք հետեւեալ նամակը:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՍՓԻՒՐԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA

ՆԻԻ ԵՈՐՔԻ ԲՆԱԿԻՉ ՊԱՐՈՆ ՅԱԿՈԲ ՏԷՐԵԱՆԻՆ

Յարգելի Պարոն Տէրեան,

ՀՀ Սփիւռքի նախարարութիւն հասցէագրուած Ձեր նամակին ի պատասխան՝ յայտնում ենք մեր խորին շնորհակալությունը, մեր լեզուի անաղարտութեան

պահպանման հանդէպ ունեցած Ձեր պատուախնդիր եւ սրտացաւ վերաբերմունքի համար:

ՀՀ Սփիւռքի նախարարությունը կարեւորում է Հայաստանում եւ Սփիւռքում հայոց լեզուի անադարտության պահպանության գործօնը, որպէս ազգային ինքնության պահպանության երաշխիք: Ուստի որդեգրել եւ յստակ քաղաքականություն է իրականացնում այս ուղղությամբ:

Տեղեկացնում ենք նաեւ, որ նախարարությունը Ձեր նամակի մէկական օրինակ փոխանցել է Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության լեզուի պետական տեսչության եւ «Ազատութիւն» ռադիոկայանի երեւանեան բիւրոյ՝ բարձրացում հարցերին համապատասխան ընթացք տալու եւ դրանց լուծմանը հետամուտ լինելու նպատակով:

ՅԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆ

* * *

Նամակին բովանդակությունը իրապէս որ յոյս ներշնչեց մեզի: Ի տես նախարարության ցոյց տուած նախանձախնդրութեանը հանդէպ «Հայոց լեզուի անադարտութեան պահպանման՝ որպէս ազգային ինքնութեան պահպանման երաշխիք»: Քանի որ ան... «Որդեգրել եւ իրականացնում է յստակ քաղաքականութիւն այս ուղղությամբ»:

Իսկ վերջին պարբերութենէն ալ տեղեկացանք, որ նախարարությունը մեր յօդուածէն մէկական օրինակ փոխանցած է նաեւ «Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան», «Լեզուի Պետական Տեսչութեան» եւ «Ազատութիւն» ռադիոկայանի երեւանեան բիւրոյին, «Բարձրացում հարցերին համապատասխան ընթացք տալու եւ դրանց լուծման հետամուտ լինելու նպատակով»:

Այս բոլորը իսկապէս ուրախալի եւ գովելի նախաձեռնություններ են ի հարկէ, նախարարութեան կողմէ առնուած: Սակայն աւելի ուրախ պիտի ըլլայինք... տեսնելով այդ նախաձեռնություններու իրականացումը...:

Ուրախ ենք դարձեալ, որ մեր յօդուածը անտես ու անարձագանգ չէ մնացած նաեւ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան՝ կողմէ, որմէ ստացուած գնահատական նամակին մէջ ունեցանք նաեւ նախարարութեան տեսակէտները հայերէն լեզուի մասին:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
MINISTER

Յարգելի Պարոն Տէրեան,

«Նոր Օր» օրաթերթում տպագրուած Ձեր յօդուածը՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն լեզուների անաղարտութեան վերաբերեալ, ուսումնասիրուել է նախարարութեան լեզուի պետական տեսչութեան կողմից:

«Լեզուի մասին» ՀՀ օրէնքով ամրագրուած է լեզուի անաղարտութեան պահպանման պահանջը, ուստի նախարարութիւնը գործուն քարոզչութիւն է իրականացնում ՀՀ պաշտօնական լեզուի՝ գրական հայերէնի անաղարտութեան պահպանման համար:

ՀՀ լեզուաքաղաքականութեան հիմնարար սկզբունքներից է՝ լեզուն գերծ պահել ինչպէս օտարամոլութիւնից, այնպէս էլ մաքրամոլութիւնից: Հայոց լեզուի կենսունակութիւնը ապահովում է ոչ միայն հայերէն բառապաշարով, այլ անհրաժեշտ փոխառութիւններով: Ընդհանուր առմամբ յաւելորդային փոխառութեան որոշակի զանգուած առկայ է արդի հայերէնում, որի արտամղման գործընթացը տեւական է եւ իրականացում է աստիճանաբար:

Յօդուածը ուսանելի է եւ շատ կարեւոր նշանակութիւն ունի զանգուածային լրատուական միջոցների լեզուի բարեփոխման համար:

Յարգանքով՝

Ս. ՍԷՅՐԱՆԵԱՆ

* * *

Գոհացուցիչ է տեսնել, որ յօդուածը... «Ուսումնասիրուել է նախարարութեան լեզուի պետական տեսչութեան կողմից», ուր կը յայտնուի նաեւ որ արդէն իսկ... «Նախարարութիւնը գործուն քարոզչութիւն է իրականացնում ՀՀ պաշտօնական լեզուի գրական հայերէնի անաղարտութեան պահպանման համար»:

Գնահատելի եւ յուսադրիչ են լսել այս խօսքերը որ նախարարութեան աշխատանքային ծրագիրներուն մաս կը կազմէ նաեւ «Լեզուի անաղարտութեան պահպանման» հարցը, որը արդէն իսկ «Իրականացում է աստիճանաբար»:

Երկու նախարարութիւններէն ստացուած այս խրախուսիչ նամակները եկան մեզ պահ մը սրտապնդել, իմացնելով որ... «Լեզուի մասին ՀՀ-ի օրէնքով ամրագրուած է (արդէն) լեզուի անաղարտութեան պահպանման պահանջը»

եւ այդ ուղղութեամբ նախարարութիւններն ու պատկան մարմինները աշխատանք կը տանին հայերէն լեզուն գտելու եւ մաքրելու օտար բառերէն, զայն վերածելու մաքուր եւ անաղարտ լեզուի:

Անցնող այս 3 տարիներուն միտումը էինք տեսնելու որեւէ գործնական-դրական յառաջխաղաց՝ հայերէն լեզուն օտար բառերէն զտումը տեսնելու գծով սկսած աշխատանքին մէջ: Դժբախտաբար սակայն, ոչ միայն նախարարութիւններուն կողմէ տրուած այդ հաւաստիքներուն վրայով գործնական քայլեր չեն տեսնուիր, այլ՝ ընդհակառակը, ականատես կ'ըլլանք մեր իշխանութիւններուն բոլորովին բացասական կեցումածքին: Անոնք ոչ միայն լեզուն մաքրելու անհրաժեշտութիւնը չեն զգար, այլեւ ատելին... օտարալեզու դպրոցներ բանալու որոշումներ կ'առնեն... կարծէք օտար լեզուները եւ օտարախօսութիւնը ատելի քաջալերելու համար երկրէն ներս:

Ո՛ր կը մնան տրուած հաւաստիքները:

Գրիգոր Զօհրապ ունէր նշանաբան մը, որ էր՝ «Գործ եւ ոչ խօսք»:

Միթէ մեր իշխանութիւններուն նշանաբանը ասոր հակառակն է:

Իրականին մէջ սակայն, մեզի անհասկնալի թուեցաւ «Կրթութեան եւ Գիտութեան» նախարարութեան նամակին մէջ գործածուած «Լեզուաքաղաքականութիւն» բառը: Չկրցանք հասկնալ թէ ինչ կապակցութիւն կրնայ ըլլալ լեզուին ու քաղաքականութեան միջեւ: Սակայն երբ կը կարդանք, որ ան «Հ.Հ. լեզուաքաղաքականութեան հիմնարար սկզբունքներից է», կը տարուինք լրջօրէն մտածել... կարենալ հասկնալու անոր նշանակութիւնը:

Եւ ահա՛ նախադասութեան շարունակութիւնը եւ յաջորդ տողերը կու գան պարզել թէ... բանը ինչի մէջ է. «Լեզուն գերծ պահել ինչպէս օտարամոլութիւնից»... այնպէս էլ «Մաքրամոլութիւնից»:

Այս երկու մոլութիւններուն առաջինը հասկնալի է: Բոլոր այն անձերը որոնք զուրկ են ազգային հպարտութենէ, այդպիսիներ միշտ օտարը կը դիտեն զայն պատկերացնելով՝ խելացի, քաջ, իմաստուն, գործունեայ, ամենակարող, իսկ հայր՝ անկարող, տկար, ոչ-խելացի եւ այլն:

Այս տեսութիւնը ազգային ստորակայութեան բարդոյթէ տառապողին մէջ կը յառաջացնէ ստորադասի խորհելակերպ եւ զինք կը համակէ ենթակայութեան զգացմունքով: Սա, ինքնին, թոյլ եւ ինքնավստահութենէ զուրկ նկարագիր ունենալու ցուցանիշ է: Այս տեսակ նկարագիր կը տեսնենք յաճախ թէ՛ որոշ անձերու եւ թէ՛ որոշ հաւաքականութիւններու մօտ: Կարելի չէ նաեւ բացառել կարգ մը իշխանութիւններ՝ նոյն հոգեվիճակէ տառապող:

Այսպիսի թոյլ նկարագիր մը ունենալը ինքնին այսպանելի է:

Որով, պէտք է «Լեզուն գերծ պահել [այդ] օտարամոլութիւնից»:

Իսկ երկրորդը՝ «Մաքրամոլութիւնը»: Եթէ կարելի է այսպէս կոչել լեզուն

մաքրելու աշխատանքը, պիտի ըսեինք, թե ինչ վատ բան կայ մոլութեան մէջ, որ «Չերժ պէտք է պահել մաքրամոլութիւնից»:

Մոլութիւն բառը ինքնին լաւ նշանակութիւն չունի: Որով ինչու գայն կոչել «Մաքրամոլութիւն» երբ կրնանք ըսել «Մաքրասիրութիւն»:

Երբ կ'առարկուի, թէ Արեւելահայերէնի մէջ օտար բառեր կը վիստան, որոնք գտումի կը կարօտին, կը խորհիմ՝ այդպիսի մաքրութիւն մը պէտք է կոչել «Սրբութիւն» եւ ոչ «Մոլութիւն»:

Հոս տեղին կը գտնեմ ըսելը, թե հակառակ անոր որ արեւմտահայերէնը ենթակայ է դժբախտ ճակատագրի մը արեւմտեան երկիրներու մէջ, ան պատուով կը պահէ գրական լեզուին իր մաքրութիւնը. բացառիկ պարագաներու մէջ միայն գործածելով օտար բառ մը, որուն կից ընդհանրապէս եւ այդ ալ փակագծի մէջ կը տրուի կարճ բացատրութիւն մը, որ ընթերցողին հասկնալի ըլլայ իր կարդացածը:

Մինչդեռ արեւելահայերէնը ընդհանրապէս անհասկնալի է արեւմտահայ ընթերցողներուն, այդ օտար բառերուն պատճառաւ, որոնց քով բացատրութիւններ ալ չկան:

Ես այդ յօդուածին մէջ յստակ կերպով ներկայացուցած էի արեւմտահայերէնին ոչ փայլուն ապագան: Եւ, ասոր փոխարէն՝ ցոյց տալով շեշտած արեւելահայերէնին ապահով վիճակը հայրենիքէն ներս

Ահա թէ ինչու նախանձախնդիր ենք արեւելահայերէնի օտար բառերէն մաքրուելու եւ անաղարտութեան:

Հաւանաբար հայրենի լրագրողներն ու ժողովուրդը չեն անդրադառնար իրենց գրութիւններուն կամ խօսակցութեանց մէջ օտար բառերու անհարկի ու չափազանցեալ գործածութեան, քանի որ այնքա՛ն ընտելացած են այդ բառերուն հետ, որ կարծէք հայերէն բառեր եղած ըլլան անոնք:

Սակայն այս պարագային կարելի է հարց տալ, թէ արդեօ՞ք հայրենի գրականութիւնը մի՞ միայն հայրենաբնակ ժողովուրդին համար է: Օտար այդ բառերուն անժանօթ արեւմտահայեր պէտք չէ՞ կարդան զանոնք: Հաւանաբար մեր յարգելի հայրենակիցներէն ըսողներ ըլլան.- Թող Ռուսերէն սորվին, հայերէն կարենալ հասկնալու համար...:

Սակայն ահա թէ ինչ բացատրութիւն կու տայ յարգելի նախարարը այդ օտար բառերուն առկայութեան մասին.- «Հայոց լեզուի կենսունակութիւնը ապահովոււմ է ոչ միայն մեր հայերէնի բառապաշարով, այլ՝ անհրաժեշտ փոխառութիւններով»:

Անհրաժեշտ փոխառութիւնը հասկնալի է: Երբ լեզուի մը մէջ կը պակսի ուրիշ լեզուի մէջ գործածուող բառի մը իմաստ-նշանակութիւնը ունեցող բառ մը, կարելի է գայն փոխառնել թերեւս...:

Սակայն ի՞նչ ըսել այն օտար բառերուն համար, որոնք կը գործածուին արեւելահայերէնի մէջ եւ որոնց շա՛տ համապատասխան նշանակութիւնը ունեցող սքանչելի բառեր ունինք մենք, մեր Մեծաաքանչ լեզուին մէջ: Ինչո՞ւ համար կ'անտեսուին անոնք ու կը լքուին, եւ նախապատուութիւն կը տրուի օտար բառերուն:

Սա մեղանշում մը չէ՞ միթէ մեր լեզուին հանդէպ:

Թէեւ յարգելի Նախարարը ինք եւս կը խոստովանի, թէ «Ընդհանուր առմամբ յաւելորդային փոխառութեան որոշակի զանգուած առկայ է արդի հայերէնում, որի արտամղման գործընթացը տեւական է եւ իրականացում է աստիճանաբար»:

Սակայն ահա, ապացոյց է որ մեր «Անկախութեան» անցնող 20 տարիներուն... «Յաւելորդային» այդ բառերուն «Արտամղման գործընթաց»ները զգալի արդիւնքներ ցոյց չեն տար, դժբախտաբար:

Ահաւասիկ՝ հարցազրոյցը, որ իշխանութիւններուն օտարալեզու դպրոցներ բանալու որոշումները դատապարտող եւ հայ լեզուն պահպանելու անհրաժեշտութիւնը ջատագովելու բնոյթ ունի. նոյն այդ հարցազրոյցին մէջ իսկ կը հանդիպինք օտար բառերու գործածութեան:

Ինչպէս նախորդ յօդուածիս մէջ ներկայացուցած էի նախադասութիւններ, որոնց մէջ գործածուած մէկ կամ ամէլի օտար բառեր պատճառ կը դառնային, որ ամբողջ նախադասութեան իմաստը անհասկնալի դառնար այդ բառերուն նշանակութիւնը չիմացող ընթերցողին համար, նոյնպէս եւ այստեղ՝ թարմացնելու համար յիշողութիւնները, ընթերցողներուն կը ներկայացնեմ արեւելահայերէնին օտար բառերով շաղախուած նախադասութիւններ, որոնցմէ շատեր առնուած են վերել յիշուած հարցազրոյցէն: Ահաւասիկ.

- Մայրենի լեզուն ինքնավարութեան «Ֆունդամենտալ» պայմաններից է:

- Ռուսաստանն այդ «Ֆանատիզմի» քարոզչութեան հարցում հասնում է արդէն մի զարմանալի «Աբսուրդի»:

- Ռուսաստանում կարծես ռազմական «Մոբիլիզացիա» յայտարարուած լինի կայսերապաշտական «Ֆանատիզմի» շուրջ, իսկ նրա գաղութացնող քաղաքականութեանը նպաստում են մեր կառավարութեան ռուսամոլութիւնը եւ «Կոմերիտական» «ԿԳԲ»ական անցեալը:

- Մինչ օրս «Ինտելլեկտի» հոմանիշ է համարում որեւէ «Ինտելլեկտուալ» առաջատար «Պրոդուկտ»:

- ... Որոնք նոյնպէս Սովետի «Պրոդուկտը» լինելով վարժեցուած են գիտնականի պարտքը պատկերացնել պարտիային «Լիդուելու» եւ «Ռեգրեսի» գաղափարներ «Գեներալացնելու» մէջ պահպանելու «Մարզինալացուած» այս վիճակը:

- Գողությունները կատարուել են «Տուբերկուլեզի», «Պրոթեզաւորման», հոգեկան հիւանդների, առանց ծնողական խնամքի մնացած երախաների համար:

- Յիշարժան է բոլորովին վերջերս նրա եւ Բ-Հ. Կ. միջեւ յայտնի ընդհարումը, ի հարկէ ոչ «Ֆիզիոլոգիական», այլ «Փրագիոլոգիական» իմաստով:

- Վաճառել «Ստրատեգիական» նշանակութեան բոլոր «Օբյեկտները»... գրկելով նրան փաստացի անկախութիւնից, «Պարալիզացնել» կենսագործունէութեան բոլոր ոլորտները:

- ... Քանի որ «Նիդեռլանդ»ները Հայաստանի հետ «Էքստրադիցիայի» պայմանագիր չունի:

- Խորհրդային տարիներին մարդիկ տառապում էին «Իմպորտոմանիալով»:

- Կարծում եմ գաղտնիքը կառավարութեան «Ուտրալիբերալիստական» քաղաքականութեան մէջ է:

- «Պրոլետարականացումը» կրճատում է բանատնտեսական «Սեկտորը», գիւղացիներին պէտք է աւելի շատ դրամ, եւ որպէս հետեւանք՝ նրանք դադարում են «Սուբսիդաւորել» կապիտալի կուտակումը:

- Որոշ ծայրայեղականներ այն անուանում են «Տոտալիտար» համակարգի «Ատալիզմի» դրսեւորում:

- Բայց Ռուսների հետ աւելի «Պրիվատ» յարաբերութեան հաստատման այլ «Վարիացիաներ» արեւմուտքում դեռեւս չկան:

- Կ'ուժեղացնի «Պառլամենտարիզմի» «Էլեմենտը» ՍԴ դերը:

Թերեւս, պէտք է սպասել Հայաստանի արտաքին քաղաքականութեան «Դոկտրինի» փոփոխութիւն, որն, ինչպէս յայտնի է՝ կառավարում էր «Կոմպլեմենտարիզմի» վրայ: Ահաւասիկ «Հայերէն» նախադասութիւններ...:

Թէեւ շատ հեշտութեամբ կարելի էր հարիւրաւոր նման նախադասութիւններ ներկայացնել այստեղ, եթէ՝ յօժար ըլլայինք ձանձրոյթը ստանձնել՝ գրելու այդ բոլորը: Մանաւանդ՝ եթէ երբեք նկատի չառնէինք նաեւ ընթերցողին ստանձնելիք ձանձրոյթը:

«Հայերէն» նախադասութիւններ... զանոնք կարենալ հասկնալու նախապայմանն է... Ռուսերէն գիտնալը...:

Եթէ երբեք Սուրբ Մեսրոպ Մաշտոց յանկարծ յայտնուէր մեր Հայաստան Աշխարհի մէջ եւ սեփական ականջովը լսէր օտար բառերով «Երանգաւորուած» այս արդի հայերէնը, արդեօ՞ք զարմացած հարց պիտի չտար ըսելով.- ԲԱ՛ սա ի՞նչ հայերէն է...:

Վերոյիշեալ նախադասութիւնները ուշադրութեանը յանձնելով Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան, Սփիւռքի եւ Մշակոյ-

թի նախարարություններուն, Գրողներու Միութեան, բոլոր լրագրողներուն եւ պատկան մարմիններուն, հարկ է հարց տալ ըսելով,- ԵԹԷ ԵՐԲԵՔ ԴՈՒՔ ԵՂԱԾ ԸԼԼԱՅԻՔ ԳՈՐԾԱԾՈՒԿԱԾ ԱՅԴ ՕՏԱՐ ԲԱՌԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԻՄԱՑՈՂՆԵՐԸ, ԱՐԴԵՕՔ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅԻՔ ՀԱՍԿՆԱԼ ԱՅԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԻՄԱՍՏԸ:

Պատասխանը, վստահաբար, «Ոչ» պիտի ըլլայ:

Ուրեմն պահն է, որ լրջօրէն մտածենք, այս յոյժ կարեւոր հարցին վրայ:

Մի գուցէ դժուար ըլլայ այսօր բնական դարձած այդ օտար բառերուն առկայութիւնը մեր լեզուին մէջ նկատելը: Սակայն անդրադառնալ պէտք է, թէ որքան ուշանայ լեզուին մաքրագտման գործընթացը, այդքան աւելի առիթ տրուած պիտի ըլլայ, որ այդ օտար բառերն աւելի խորանան եւ արմատանան մեր հայերէն լեզուի բառապաշարին մէջ, զրկանքի ենթարկելով մեր իսկական հայերէն բառերը: Գործածութենէ դուրս մղելով զանոնք:

Որով «Հարուածային» աշխատանքի կը կարօտի լեզուագտման այս գործը, որուն պէտք է սկսիլ դպրոցներէն, ուրկէ հասակ առնող այսօրուան մանուկները, պիտի դառնան վաղուան առաջին սերունդը, որպէս անխառն ու մաքուր հայերէն խօսողներ:

Այո: Միայն մէկ սերունդ եթէ փոխուի, արդէն ապահովուած կ'ըլլայ սպասուած արդիւնքը:

Իսկ այս ծրագրին գործնականացման ու յաջողութեան մէջ, անկասկած՝ բաժին ունին, պիտի ունենան պետական բոլոր պատկան մարմինները, գլխաւորութեամբ՝ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան, որոնց ուսերուն կը ծանրանայ «Գործ»ին ընդհանուր պատասխանատուութիւնը եւ որոնց այսօրուան իմաստուն կարգադրութիւններէն կրնայ կախեալ ըլլալ մօտ ապագային ձեռք բերելիք արդիւնաշատ յաջողութիւնը:

Մենք յոյսով ենք, որ այս լեզուագտման աշխատանքները պիտի կարենան ապահովել զայիք սերունդներուն համար անխառն, մաքուր եւ անաղարտ հայերէն լեզու մը, եթէ երբեք... «Լեզուաքաղաքականութեան» վերաբերող այլ հաշիւներ չկան....:

«Նայիրի», 10 Մայիս 2011

ՕՏԱՐԱՄՈՒԹԵԱՆ ԱԽՏԸ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՆԵՐՍ

Հակառակ Նիւ-Եորքաբնակ բարեկամիս պնդումներուն, որ միատեղ Եւրոպա երթանք ման գալու, մենք դարձեալ կը նախընտրենք այցելել մեր Հայրենիքը (գերադասելով «Ծեր հիւանդ ոչխարը, օտարին առողջ գայլէն» (Սահակ Կաթողիկոս):

Իւրաքանչիւր մեր հայրենիքի այցելութիւնը յատկանշուած էր յատուկ յիշատակներով եւ որոշ տպաւորութիւններով, որոնց մասին օրին արտայայտուած էի յօդուածներով: Այդ յօդուածներէն երկուքը յատկացուած էին լեզուական հարցերու, այսինքն Արեւմտահայերէնի դժբախտ ճակատագրին եւ Արեւելահայերէնի աղաւաղուած եւ իր անարատութիւնը կորսնցուցած վիճակին:

Այդ երկարաշունչ յօդուածներէն մէյ մէկ օրինակ ուղարկած էի Կրթութեան եւ գիտութեան եւ Սփիւռքի նախարարութիւններուն, որոնցմէ ստացած էի պատասխան նամակներ, ուր գնահատելէ ետք «նախանձախնդրութիւնս հայերէն լեզուի անաղարտութեան վրայով» կը հաւաստէին թէ արդէն իսկ «գործուն աշխատանք կը տանեն այդ ուղղութեամբ»:

Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան նամակին մէջ կ'ըսուէր, որ «լեզուի մասին ՀՀ օրէնքով ամրագրուած է լեզուի անաղարտութեան պահպանման պահանջը, ուստի նախարարութիւնը գործուն քարոզչութիւն է իրականացնում ՀՀ պաշտօնական լեզուի գրական հայերէնի անաղարտութեան պահպանման համար»:

Այս հաւաստիքը բնական է ուրախալի լուր մըն էր մեզի համար, նկատելով որ Արեւելահայերէնը, որ մեր մայրենի լեզուի գոյատեւման երաշխիքն է, մեր իշխանութիւններուն քննարկման առարկան է:

Սակայն, հակառակ այդ տրուած հաւաստիքներուն, անցնող այս հինգ տարիներու ընթացքին, ոչ միայն այդ «անաղարտութեան պահպանման» վրայով աշխատանք մը նկատելի չեղաւ, այլ աւելին ըլլալով օտարալեզու դպրոցներ բանալու վրայ արտայայտուողներ եղան:

Նամակին մէջ տեսանելի է նաեւ ուրիշ հակասական արտայայտութիւն մը, ուր ըսուած է «ՀՀ լեզուաքաղաքականութեան» (ընդգծումը ինձմէ) հիմնարար սկզբունքից է լեզուն գերծ պահել ինչպէս օտարամոլութիւնից, այնպէս էլ

մաքրամոլությունից»:

Օտարամոլությունը հակառակ դատապարտելի արարք մը ըլլալուն, տեսանելի իրականութիւն դարձած է մեր ազգային կեանքէն ներս: Սովետական շրջանէն մնացած ժուսերէն բառերու գործածութիւնը Արեւելահայերէնի մէջ տակաւին կը շարունակուի այսօր եւս, անկախութեան շրջանին: Այս օտար բառերու դեռեւս պահպանումը, որքան վարժութեան՝ նոյնքան եւ ենթակայութեան զգացմունքի ցուցանիշը կը նկատուի: Այլապէս անցնող այս 23 տարիներու անկախութեան շրջանին, Արեւելահայերէնը մաքրագտուած պէտք էր ըլլար բոլոր այդ օտար բառերէն:

Սակայն ինչպէս կը տեսնուի, այդ սրբազան մաքրագտումը նախարարին կողմէ կ'որակուի մաքրամոլութիւն:

Հոս հասկնալի կը դառնայ Պրն. նախարարին գործած «լեզուաքաղաքականութիւն» բառին բուն իմաստը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ ուրիշին ենթակայ մնալու զգացմունք:

Այլապէս եթէ մաքրագործումը մոլութիւն է, ինչ իմաստ ունի «լեզուի գրական հայերէնի անադարտութեան պահպանման համար եղած գործուն քարոզչութիւնը»:

Աւելի'ն, փորձ կը կատարուի արդարացնել օտար բառերու գործածութիւնը Արեւելահայերէնի մէջ, երբ կ'ըսէ «Հայոց լեզուի կենսունակութիւնը ապահովում է ոչ միայն հայերէն բառապաշարով, այլ անհրաժեշտ փոխառութիւններով»:

Անհրաժեշտ փոխառութիւնը հասկնալի է, քանի որ երբ օտար լեզուի մը մէջ գործածուող բառի մը նշանակութիւնը ունեցող բառ մը չունինք հայերէն լեզուի մէջ, կարելի է գայն փոխառնել: Սակայն ինչ ըսել բոլոր այն անուշաբոյր հայերէն բառերուն, որոնք գոյութիւն ունին մեր ոսկեդինիկ լեզուին մէջ եւ որոնք դուրս շարտուած են Արեւելահայերէնէն եւ որոնց փոխարէն կը գործածուին օտար բառեր. այսպէս. Մշակոյթ-կուլտուրա, մրցանիշ-րէզորտ, վկայագիր-լիցենցիա, զգայնութիւն-սենսացիա, զրօսաշրջութիւն-տուրիզմ, առաւել-բլաս, նուագ-միմուս, բանաստեղծութիւն-պոեզիա, ընկերութիւն-ասոսիացիա, օդանաւ-սամալետ, խնդիր-փրոպլեմ, ուսումնարան-ինստիտուտ, նամակատուն-պոստ, դրամատուն-պանք եւ այլն, ու ասոնց նման բազմահարիւր բառեր, որոնք փաստօրէն աղաւաղած են Արեւելահայերէնը:

Տակաւին կան նաեւ հայերէնախառն բառեր, ինչպէս. «սպեկուլյացիաներով», «ինտոքսիկացիայից», «մանիպուլացիաների», «ուլտրալիբերալիստական» եւ այլն, որոնք կը գործածուին, որպէս թէ հայերէն բառեր եղած ըլլան:

Թղթակիցներ, քաղաքական մեկնաբաններ ու գրողներ արդեօք չե՞ն անդրադառնար իրենց տեղեկութիւններուն եւ գրութիւններուն մէջ գոր-

ծածած այս բառերուն օտար բառեր եղած ըլլալուն: Չե՞ն անդրադառնար որ իրենք հայերէն է որ կը գրեն եւ ոչ «խառներէն»:

Կարդացէք սա նախադասութիւնները եւ տեսէք թէ ինչ հայերէն են անոնք:

«Եկէք սկսենք խօսել բոլոր «կոմիւնիստարների», «ինտելեկտուալների» նոր «պրոլետարների» ընդհանուր մշակոյթից»:

«Մինչ օրս «ինտելեկտի» հոմանիշ է համարուում ռուսաց լեզուի իմացութիւնն առանց հասկանալու որ աշխարհում այդ լեզուով արդէն վաղուց չի ստեղծուում որեւէ «ինտելեկտուալ» առաջատար «պրոդուկտ»:

«Վաճառել ստրատեգիական» նշանակութեան բոլոր «օրիէկտները»:

«Մեզ մօտ լուրջ ներդրումներ են կատարուում «բազմապրոֆիլ» ոլորտներում, տնտեսութիւնը գնալով «դիւերսիֆիկացուում» է»:

Կարդացէք սա վերնագիրը. «Մարզինալացուող կրիմինալը»:

Երեւակայել որ սա հայերէն յօդուածի մը վերնագիրն է...: Իսկ յօդուածին մէջ կը կարդանք. «Սովետական միութեան փլուզումից յետոյ միակ կազմակերպուած համակարգը ոչ թէ «տրանսֆորմացած» «կոմսոմոլական» «բիւրոկրատիան» էր, ոչ թէ «բիզնէսն» էր, ոչ թէ ինտելիգենցիան», որն ըստ էութեան արտագաղթեց կամ տեղափոխուեց Երեւան, այլ հենց «կրիմինալ» համակարգը»:

Ըսէք, ինդրեմ, սա ինչ հայերէն է: Միթէ այս տողերը գրողները չե՞ն անդրադառնար իրենց գրած հայերէնին: Միթէ չե՞ն կրնար զանազանել հայերէն բառերը օտար բառերէն: Ճիշդ է որ ընտելացած են այդ բառերուն ու կը գործածեն զանոնք անգիտակցաբար, սակայն ժամանակը չէ՞ միթէ անդրադառնալու գործուած սխալին:

Լեզուն ցուցանիշն է ազգային հպարտութեան: Այն ազգը որ ամուր կապերով կապուած է իր լեզուին, նախանձախնդիր կ'ըլլայ անոր անաղարտութեան: Թոյլ չի տար որ ան օտար բառերով խառնարանի վերածուի: Իր սեփականը կը գերադասէ ամէն բանի: Իրեն համար նախապատիւ կը համարէ ամէն ինչ որ իրն է: Մանաւանդ, որ մեր լեզուն իր անուշութեամբ, իր բառապաշարով ու ճոխութեամբ, երբեք չի զիջիր որեւէ այլ լեզուի:

Արեւելահայերէնը կորսնցուցած է իր անաղարտութիւնը, տեղ տալով օտար բոլոր այն բառերուն, որոնց նշանակութիւնը ունեցող սքանչելի բառեր ունինք մեր լեզուին մէջ:

Լեզուն մեծագոյն երաշխիքն է ազգի մը գոյատեւման: Այն ազգը որ կը կորսնցնէ իր լեզուն, դատապարտուած կ'ըլլայ կորսնցնել նաեւ իր ազգային ինքնութիւնը: Վկայ մեր պատմութիւնը, ուր միլիոնաւոր հայեր կորսնցնելէ ետք իրենց մայրենի լեզուն, իրենք եւս անհետ կորսուեցան օտար երկիրներու մէջ:

Որով լեզուն մաքուր պահել կը նշանակէ ազգը առողջ պահել:

Ահաւասիկ Արեւելահայերէնի աղաւաղումը այս վիճակը եւ անոր մաքրագտման անհրաժեշտութեան հանդէպ ցոյց տրուած անտարբերութիւնն ու անհոգութիւնը, դուռ բացած է նախ այլ տեսակի նկարագրի աղաւաղումներու, որը պիտի կոչենք «օտարամոլութիւն», ինչ որ տեսանելի դարձած է Երեւանի ամբողջ տարածքին:

Այսպէս: Երբ կը քալենք Երեւանի փողոցներէն, բոլոր խանութներուն ու վաճառատուներու ճակատներուն կամ ցուցափեղկերուն վրայ կը կարդանք օտար անուններով եւ լատիներէն տառերով գրուած՝ Majdrica, Mila, Wetsa, Livi, Monnalisa, Lapin House, Love Moschino, Fresa-Ֆրէսա, Padli-պաւլի, Mona Bijou-մօնա բիժու, Deluxe-դելուքս, Mademoiselle-մատմուսլէլ եւ այլն:

Taxi-ներու վրայ եւս կը կարդանք Royal, Remels, Sena, Dina, Filagom եւ այլն: Մինչ հագուագիւտօրէն կը տեսնենք միայն հայերէն տառերով գրուած հայերէն անուններ, ինչպէս Հայոց աշխարհ, նորաձեւութիւն, Արուեստի աշխարհ, Կրպակ, Գեղեցկութեան սրահ եւ այլն, ինչպէս նաեւ Taxi-ներու վրայ՝ Բարեւ, Այգեձոր, Թագուհի, Նուշ եւ այլք, որոնք կու գան քիչ մը մեղմել օտար անուններէն ստացած մեր սրտի ցատումը:

Բարեկամի մը առաջնորդութեամբ կ'երթանք նորաբաց «Երեւան մոլ»:
Նախ կ'ուզեն շէշտել Երեւան մոլ եւ ոչ Երեւան շուկայ: Երբ ներս կը մտնենք, դիտելով չորս բոլորը, ինքզինքս կը զգամ եւրոպական քաղաքներէն մէկու մը մէջ գտնուող շուկայի մը (մոլի մը) մէջ: Բոլոր վաճառատուներու ճակատներուն կը կարդամ լատիներէն տառերով գրուած օտար անուններ, Giodino, Faina, Stradivarius, Difonseca, Basing House-Բէյսինք Հաուս, Via Artis-Վիա արտիս, Flower Décor-Փլաուր տէքօր եւ նման անուններ: Ի գուր փնտռեցի հայերէն անուն մը հայերէն տառերով, ինչ որ կարելի չեղաւ գտնել: Առաւելագոյն հայերէն գրութիւնները պարզապէս այդ օտար անուններուն կրկնութիւններն էին հայերէնով գրուած, ինչ որ ցոյց տուինք վերը:

Հոս հարցեր ծագեցան մտքիս մէջ.

1. Արդեօք ինչ անպատեհութիւն կամ ստորնացուցիչ հանգամանք ունի իր մէջ, գրել պատշաճ ձեւով, օրինակ «Ծաղկազարդում» եւ անոր կից «Flower Decor», փոխանակ ներկայանալու հայկականութենէ բոլորովին զուրկ եւ օտարաբոյր Flower Decor եւ ֆլաուր տէքօրով...: Օտարին հաճելի դառնալու համար հա՞րկ է արդեօք ստորնանալ...:

2. Եթէ եւ անգլերէն կ'իմանամ, արդէն իսկ կարդալով Flower Decor-ը կը հասկնամ անոր ինչ ըլլալը: Իսկ եթէ անգլերէն չեմ իմանար, հայերէնով գրուած ֆլաուր տէքօրէն ի՞նչ պէտք է հասկնամ:

Սա իմաստէ գուրկ անճաշակութիւն մը չէ՞ միթէ:

3. Եթե հայ մը Անգլիոյ մէջ ծաղկավաճառի խանութ մը ունենայ, որուն ճակտին գրած ըլլայ Flower Shop, շատ բնական երեւոյթ մը կը նկատուի, «քանի որ Անգլիոյ մէջ է: Իսկ երբ այդ «Flower shop»-ին քով գրէ նաեւ հայերէն տառերով «Ֆլաուր շափ» ազգային հպարտանքով, կ'ուզէ ապացուցել իր հայ մը ըլլալը, «Անգլիոյ մէջ»: Արդեօք հայրենիքի մէջ եւս պահանջք կը զգացուի «ապացուցել» մեր հայ ըլլալը...:

4. Աշխարհի ո՞ր երկրին մէջ արդեօք, իրենց մայրենի լեզուն լքելով, օտար անուններով եւ օտար լեզուներով կը ներկայանան հանրութեան, ի բաց առեալ Հայաստանէն...:

Այս որքան օտարամոլութիւն...:

Արդեօք ի՞նչ է պատճառը որ օտարինը եղած ըլլայ այս աստիճան գերագնահատելի, իսկ մեր ազգային ու սեփական արժէքները՝ երկրորդական...:

Ի՞նչ է պատճառը որ մեր ազգային ու սեփական արժէքները զիջինք օտարին՝ մենք զմեզ նուաստացնելով:

Արդեօք վտանգուա՞ծ է մեր ազգային հպարտութեան գիտակցումը: Արդեօք այդ ազգային հպարտութիւնը փոխարինուա՞ծ է օտարին խոնարհելու զգացումով...:

Ահաւասիկ, աղաւաղուած լեզուէն յառաջ եկած աղաւաղուած ծրագրի դրսեւորում: Երբ «լեզուաքաղաքականութեան» հետեւանքով օտար բառերուն նախապատուութիւն կու տանք մեր մայրենի լեզուին մէջ, անտեսելով մեր սեփական հայերէն բառերը, նոյնպէս եւ օտարասիրութեան հետեւանքով կրնանք նախապատուութիւն տալ օտար լեզուով օտար անուններուն, լքելով մեր սեփական հայկական անունները:

Ո՞վ պիտի գիտակցի ազգին արժանապատուութիւնը խոցոտող այս վտանգին:

Պատկան նախարարներուն եթէ հարկ ըլլայ յիշեցնել նման հարցերու վրայով, նախարարներ պատրաստ են գնահատելու մեր «նախանձախնդրութիւնը» լեզուական մաքրութեան եւ ազգային փառքերու պահպանման վրայով ու կը հաւաստիացնեն որ այդ ուղղութեամբ արդէն իսկ աշխատանք կը տանին: Սակայն խոստումէն անդին ոչինչ կը տեսնուի:

Արդեօք մեր իշխանաւորները չե՞ն տեսներ այս բոլորը: Չե՞ն տեսներ Արեւելահայերէնի այս աստիճան խաթարուած վիճակը: Արդեօք կարիքը չե՞ն զգար անոր մաքրագտման անհրաժեշտութեան:

Թէեւ ոչ որ կրնայ հակառակիլ ռուսերէն լեզուի կամ անգլերէնի ուսուցման: Թող որ մեր զաւակները 2-3 լեզուներ սորվին, պայմանաւ սակայն, որ առաջին լեզուն ըլլայ «անխառն ու մաքուր մայրենի լեզուն»: Ատկից ետք թող որ սորվին ռուսերէն, անգլերէն եւ այլ լեզուներ եւ ոչ թէ իրենց մայրենին զոհեն

ուրիշ լեզուի մը...:

Արդեօք մեր իշխանաւորները չե՞ն տեսներ օտարամոլութեան այս գարգացումը եւ ազգային հպարտութեան անկումը երկրէն ներս:

Աչալուրջ կառավարութեան մը համար երբեք ներելի չէ ազգակործան նման հարցերու նկատմամբ անհոգ ու անտարբեր կեցուածքի մը որդեգրումը, որ պիտի նշանակէր անուղղակիօրէն քաջալերած ըլլալ ազգակործան այդ ընթացքները: Այլապէս ինչպէս արդարացնել երկրին մէջ արեւու լոյսին պէս յստակ երեւցող համազգային եւ կործանարար այն երեւոյթները, ինչպիսիք են՝ անգործութիւնը, սղանը, կաշառակերութիւնը, անիրաւութիւնները, բռնութիւնները, որոնք պատճառ կը դառնան մահացու արտագաղթին: Տակաւին, աղաւաղուած արեւելահայերէնի դեռ եւս պահպանումը, ախտաւոր օտարամոլութեան գարգացումը, ազգային հպարտութեան անկումը եւ այլն, որոնք ժողովուրդին մօտ յուսահատութիւն յառաջացնող ազդակներ են եւ ազգը կործանման առաջնորդող երեւոյթներ:

Ես համեստօրէն պիտի ուզէի յիշեցնել մեր իշխանաւորներուն, որ ինքնահաւան կեցուածքով եւ արհամարհական նայուածքով «վերէն չնային ներքէն եղողին»:

Չարհամարհեն ժողովուրդին դժգոհութիւններուն տուն տուող արդարացի պատճառները, որոնց հեղինակները իրենք են ինքնին:

Նկատի առնեն մտաւորականութեան կողմէ ազգին շինութեան ու պահպանման վրայով ներկայացուող շինիչ ցուցմունքներն ու գաղափարները, առանց թերագնահատելու եւ անտեսելու զանոնք:

Լրջօրէն մտածեն ազգը դէպի կործանում տանող բոլոր այս մահացու վտանգներուն վրայով:

Գիտնան որ իրենց կոչումը անուղղակի միջոցներով իրենց քսակները պարարտացնել՝ իրենց ընտանիքներուն ու պարագաներուն փարթամ կեանք ապահովել՝ ժողովուրդին ալ անգործնական խոստումներով օրօրելով զիրենք ճնշման տակ պահելը չէ միայն:

Գիտնան որ ազգ կառավարել իրենց բարձր դիրքերէն իրենց կամքը ժողովուրդին պարտադրել ըսել չէ:

Գիտնան որ իրենց անունները պիտի արձանագրուին ազգին ապագայ պատմութեան մէջ, որպէս այս օրերու կառավարողներ: Սակայն անոնք պիտի որակուին «լաւ» կամ «վատ» մակդիրներով...:

Երանի այն ազգային գործիչին, որ կ'արժեւորէ ինքզինք իր ազնիւ ու բեղուն գործունէութեամբ ու իր անունը պատուով կ'արձանագրուի պատմութեան մէջ «ճշմարիտ հայրենասէր»ի համ «համակ նուիրեալ»ի նման պատուաբեր մակդիրներով:

Այլապէս, կ'արժէ՝ արդեօք վատ որակումով յիշատակուած մնալ յաւերժական պատմութեան մէջ «իր անձնական շահը ամէն բանէ վեր գերադասող»ի նման ամօթալի յորջորջումով:

«Մասիս», 6 Հոկտեմբեր 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՀՈՒԱՐԿՆԵՐԸ ՕՏԱՐԱՄՈԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՏԱՐ ԲԱԹԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

Նամակ Խմբագրության

Յարգելի խմբագրություն «Մասիս» շաբաթաթերթի,

Առաքում լինի ևս նամակները, մին՝ Հ.Հ. Կրթության եւ գիտության նախարարին կողմէ գրում, եւ ուղղում ինձի եւ իմ կողմէ գրում պատասխան նամակը, կու գան ամբողջացնել «Օտարամոլության ախտը Հայրենիքէն ներս» խորագրեալ յօդուած: Մոյն յօդուածը լոյս տեսաւ «Մասիս» թերթի Հոկտ. 6, 2014 թիւին մէջ:

Անոնք կ'ուղարկեմ ձեզի, ցոյց տալու թէ ինչ է Հ.Հ. Կ. Գ. Նախարարության կեցումը ու հաշուարկները օտարամոլության օտար բառերու գործածության հանդէպ:

*Ձերն բարեկեցութեամբ
Յակոբ Տէրեան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ
ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

01/22.1/8005-14 11 07 2014թ.

ՔԱՂԱՔԱՑԻ ՅԱԿՈԲ ՏԵՐԵԱՆԻՆ

Յարգելի՛ պարոն Տէրեան,

Ի պատասխան Ձեր 20.06.2014 թուականի նամակի՝ յայտնում ենք, որ ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը կիսում է Ձեր՝ լեզուի հարցերով մտահոգ քաղաքացու անհանգստութիւնը եւ պատրաստ է համագործակցութեան:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ արդի հայերէնում փոխառութիւնների առկայութիւնը համարել աղէտաբեր եւ տազնապահար ահագանգ հնչեցնել, մեղմ ասած, տեղին չէ: Նախ՝ աշխարհում առայժմ չկայ մի այնպիսի պետական լեզու, որ «մաքրագտուած» լինի փոխառութիւններից: Փոխա-

ռուքիւնների գոյությունը բախտորոշ կամ ճակատագրական նշանակություն ունենալ չի կարող եւ չի ունեցել երբեւէ որեւէ լեզուի համար, այդ թւում՝ հայերէնի: Ռուսերէնում փոխառութիւնների քանակը անցնում է չորս հարիւր հազարից: Եթէ Ձեր պնդումները կամ ենթադրութիւնները ճշմարտութեան հետ կապ ունենային, ապա աշխարհում այլեւս ո՛չ ռուսական պետութիւն կը լինէր, ո՛չ ռուս ժողովուրդ: Նոյնը կարելի է ասել անգլերէնի եւ թուրքերէնի վերաբերեալ եւ այլն: ՀՀ-ում առկայ հայոց լեզուի պետական, պաշտօնական, ընդհանուր առմամբ գրական դրսեւորումներում փոխառութիւնների քանակը գրեթէ բնական համամասնութեան մէջ է մնացած բառապաշարի հետ:

Լեզուի հիմքը, հիմնակազմը քերականութիւնն է, բառապաշարը, այդ թւում՝ դրա փոխառեալ շերտը, լեզուի նիւթական կողմն է, որը ճակատագրական նշանակութիւն չի կարող ունենալ լեզուի համար:

Ինչ վերաբերում է Ձեր մատնանշած օտարալեզու հրապարակային գրուածքներին եւ տաքսի-ծառայութիւնների անուանումներին, ապա ՀՀ ԿԳՆ լեզուի տեսչութիւնը կատարել է մշտադիտարկումներ, վերլուծել հանրապետութիւնում առկայ լեզուավիճակը, դրանց հիմնական մասով իրականացրել վարոյթներ, ինչպէս նաեւ հանդէս եկել մի շարք օրէնսդրական առաջարկութիւններով:

Օտարամոլութեան դրսեւորումները բացառելու Ձեր յորդորների կապակցութեամբ յայտնում ենք, որ դրանք կարճ ժամանակահատուածում լուծուող խնդիրներ չեն, քանզի այստեղ առկայ է նաեւ հոգեբանական խնդիր, որի արմատները, ցաւօք, շատ խորն են թաղուած: Այս ամէնով հանդերձ՝ անընդհատ ու հասցեական պէտք է լինեն լեզուի մաքրութեանն ու անաղարտութեանն ուղղուած քայլերը, ինչը եւ իր գործառնութիւնների եւ հնարաւորութիւնների սահմաններում ձգտում է իրակացնել ՀՀ ԿԳՆ լեզուի պետական տեսչութիւնը:

Շնորհակալութիւն ենք յայտնում Ձեր մտահոգութիւնների եւ համագործակցութեան համար:

Յարգանքով
Ա. ԱՇՈՏԵԱՆ

Յարգելի

Հ.Հ.Կ.Գ. նախարար Պրն. Ա. Աշոտեան,

Շնորհակալութեամբ ստացայ «Օտարամոլութեան ախտը Հայրենիքէն ներս» խորագրեալ յօդուածիս -որմէ օրինակ մը ուղարկած էի ձեզի- պատասխան նամակը, ուր «կիսելէ ետք մեր լեզուի հարցերով մտահոգ քաղաքացու անհանգստութիւնը», կը պարզէք իրականութիւնը, ցոյց տալով որ «աշխար-

հում առայժմ չկայ մի այնպիսի լեզու որ «մաքրագտուած» լինի փոխառութիւններից»:

Սա իրականութիւն է, որ դարերու ընթացքին բոլոր լեզուներն ալ իրարմէ ազդուած՝ իրարմէ բառեր փոխառած են ու ժամանակի ընթացքին այդ բառերը մաս կազմած են իրենց մայրենի լեզուի բառապաշարին:

Սակայն հարց է, թէ այդ փոխ առնուած բառերուն իմաստը ունեցող բառեր չունէ՞ին արդեօք իրենց լեզուի մէջ: Եթէ չունէին եւ այդ պատճառով է որ որդեգրեցին այդ օտար բառերը, մի գուցէ արդարացի է: Իսկ եթէ ունին այդ բառերուն համապատասխան բառեր իրենց լեզուին մէջ ու քննով իրենց հարազատ բառերը, օտար բառեր որդեգրեցին, սա բացատրութեան կը կարօտի:

Ընդունինք որ Ամերիկահայերու մօտ պարզ երեւոյթ է այսօր լսել անգլերէն բառեր, հայերէն խօսակցութեան ընթացքին: Օրինակ. «Իմ «դիչըրըս» ըսաւ որ, դուն «մէթիդ» վրայ աւելի պէտք է աշխատիս»:

Ահաւասիկ. հակառակ անոր որ մեր լեզուին մէջ ունինք «ուսուցիչ» եւ «թուաբանութիւն» բառերը, սակայն այդ օտար բառերով խօսուած հայերէնին պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ միայն հայերէն լեզուի իմացութեան պակասը:

Որքան ատեն որ դպրոցէն ներս աշակերտներ անգլերէնով կ'ուսանին եւ անգլերէն կը խօսին ամբողջ օրը, իրենց մայրենին աստիճանաբար մոռնալով, կամքէ անկախ յառաջ կու գան այդպիսի թերութիւններ սփռուքահայերուն մօտ: Սակայն նոյնը կարելի՞ է ըսել հայրենաբնակ ժողովուրդին համար, ուր տեղական լեզուն հայերէն է եւ աշակերտներ մանկապարտէզէն սկսեալ հայերէնով է որ կը դաստիարակուին: Միթէ այդ օտար բառերո՞վ կ'ուսուցուի իրենց Արեւելահայերէնը:

Եթէ Սովետական շրջանին ռուսերէն լեզուի ուսուցումը պարտադիր եղած է դպրոցներէն ներս, ինչ որ պատճառ դարձած է այդ օտար բառերուն մուտքին՝ ապա անկախութեան 23 տարիները բաւարար ժամանակ էին կարենալ վերադառնալու մեր մայրենի բառերուն, քանի որ 23 տարիներու ընթացքին նոր սերունդ մըն է որ յառաջ եկաւ, սակայն այդ օտար բառերը անխախտ մնացին իրենց տեղը:

Ինչ բացատրութիւն պիտի տար այն հայրը, որ իր հարազատ զաւակը տունէն դուրս դնէր, եւ անոր փոխարէն օտար զաւակ մը որդեգրէր:

Որով ինչպէ՞ս բացատրել որ մեր սքանչելի «Մշակոյթ»ը փոխարինուի «Կուլտուրա»ով..., եւ ասոր նման հարիւրաւոր այլ բառեր:

Կայ նաեւ ուրիշ կարեւոր կէտ մը եւս: Ի վերջոյ հայերէն գրութիւնները հայերէն կարդացողներու համար են: Իսկ ռեւէ հայ անհատ, որ հայերէնէ զատ ուրիշ լեզու չի գիտեր, իր կարդացած հետեւեալ գրութիւններու նման

գրուածքներէն ի՞նչ պէտք է հասկնայ:

«Այս վիճակի պահպանմանը մեծապէս նպաստում են մեր «մտաւորականները» «հասարակագետները», որոնք նոյնպէս Սովետի «պրոդուկտ» լինելով «լողոզւելու» եւ «ռեգրեսիվ» գաղափարներ «գեներացնելու» մէջ՝ պահպանելու «մարգինալացում» այս վիճակը»:

Ինչպէ՞ս հասկնալ նման հայերէն մը...:

Հայրենաբնակ հայեր վստահ եմ չեն անդրադառնար այս տարրական սխալներուն, քանի որ կը հասկնան այդ բառերուն իմաստը եւ ընտելացած են անոնց հետ, մի գուցէ առանց գիտնալու, որ անոնք հայերէն բառեր չեն, որով կը հասկնան այն ինչ որ կը կարդան:

Իսկ ինչ պիտի ընէ սփիւռքահայը երբ չկարենայ հասկնալ իր կարդացած արեւելահայերէնը: Որով կա՛մ պիտի հեռու մնայ հայաստանեան որեւէ թերթ կամ լրատուութիւն կարդալէ եւ կա՛մ պիտի հարկադրուի սորվիլ բոլոր այդ օտար բառերը, կարենալ հասկնալու իր մայրենի լեզուն... հայերէնը...:

Այս հաշուով արեւելահայերէնը միայն հայրենաբնակ մեր ժողովուրդի՞ն համար է:

Իսկ օտարամոլութեան զարգացումը հայրենիքէն ներս ուղղակի զարմանք կը պատճառէ իւրաքանչիւր գիտակից հայու:

Արդեօք ուսկի՞ց յառաջ եկած է այս աստիճան օտարամոլ զգացում մեր ժողովուրդին մօտ: Արդեօք ի՞նչ նուաստացում կամ ամօթ կը զգան իրենց վաճառատուները կամ դաքսիները հայկական անուններով եւ հայերէն տառերով ներկայացնելէ: Արդեօք կը խորհին որ օտար անուններ գործածելով աւելի զարգացա՞ծ կ'երեւին, թէ... իրենք զիրենք աւելի զարգացած կը նկատեն:

Յարգելի Պրն. նախարար, ձեր նամակին միտք բանին ցոյց կու տայ որ դուք լրջօրէն մտահոգուած էք մեր լեզուի անաղարտութեան եւ մեր ժողովուրդին օտարամոլութեան հակումներուն ի տես, երբ կ'ըսէք որ «Հ.Հ. Կ.Գ.Ն. լեզուի տեսչութիւնը կատարել է մշտադիտարկումներ, վերլուծել հանրապետութիւնում առկա լեզուավիճակը»:

Կ'ըսէք նաեւ «Այս ամէնով հանդերձ՝ անընդհատ ու հասցեական պէտք է լինեն լեզուի մաքրութեանն ու անաղարտութեանն ուղղուած քայլերը»:

Գնահատելի եւ յուսադրիչ խօսքեր արդարեւ:

Պիտի սիրէինք անվերապահ հաւատք ընծայել ձեր խօսքերուն, տեսնելու որ անկախութեան 23 տարիներուն չիրագործուած այդ ուղղումները, ձեր միջոցաւ գործնական տեսք ստանան եւ դուրս գան «խօսքի ու խոստումի» սին հաւաստիքներէն:

Երբ կան բարախող սրտեր ազգին առողջացման համար, կարելի է յուսալ

որ երազները անպայման կ'իրականանան:

Խորին շնորհակալություն ձեր նամակին համար:

Կը ցանկամ ձեզի համար առողջություն, յաջողություն եւ արդիւնաւետ գործունէություն:

Յարգանքներով՝

ՅԱԿՈԲ ՏԷՐԵԱՆ

15 Օգոստոս 2014

«Մասիս», 1 Նոյեմբեր 2014

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ «ՀԱՅԵԼԻ»ԻՆ

**Սփիւռքահայ Յակոբ Տերեանը բարձրաձայնում է
հայրենիքում ներդրումների գլխավոր գրաւականը վստահութիւնն է**

Նիւեորքաբնակ ամուսիններ Յակոբ եւ Նեկտար Տերեանները հերթական արձակուրդն են անցկացնում Հայաստանում: Նրանց հետ մեր նախորդ հանդիպումը չորս տարի առաջ էր, ու այդ օրուանից առ այսօր պարոն Յակոբի մտահոգութիւնները՝ հայրենիքում հայոց լեզուի պահպանման հետ կապուած, ոչ միայն չեն փարատուել, այլ հակառակը՝ խորացել են: Ամէնուր օտարալեզու բառեր, ոչ հայերէն անուններ եւ արտայայտութիւններ, որոնցով հեղեղուած են փողոցները, հեռուստաէթերը, համացանցի հայկական տիրոյթը: Գոնէ հայրենիքում մաքրամաքուր հայերէնի հետ առնչուելու պարոն Յակոբի անյազ փափաքը նրան դրդել է Սփիւռքի եւ Հայաստանի մամուլում հանդէս գալ հրապարակախօսութիւններով: Նա նամակներով դիմել է Հայաստանի նախկին բոլոր կրթութեան եւ գիտութեան նախարարներին: Պատասխաններ ստացել է, որոնցից երեւում է, որ պետական մարմինը, ընդունելով հանդերձ նրա մտահոգութիւնը, փաստացի չի կարողանում իրավիճակը բարելաւել: «Եթէ ես հայրենիքում մաքրամաքուր հայերէնը գոնէ 50 տոկոսով տեսնէի, այսչափ չէի վրդովի, մի քիչ բաւականութիւն կը ստանայի, որ մի բան փոխուել է», ասում է նա:

Հ.- Զեզ մօտ տպաւորութիւն չի՞ ստեղծւում, որ Հայաստանի հասարակութիւնը մաքրամաքուր հայերէնի խնդիրը այդքան կտրուկ չի դնում:

Պ.- Գիտէ՞ք՝ ես յաճախ կը զարմանամ. մարդիկ գնում են Երեւան մոլ, պտտւում են, հաճոյքով այնտեղից առնւտուր են անում, բայց ոչ ոքի մտքով չի անցնում հարցնել՝ ինչո՞ւ մոլ, երբ կան *շուկայ*, *տօնավաճառ* հայերէն բառերը: Ես կ'ուզեմ հարցնել Հայաստանի բոլոր քաղաքացիներին, կրթութեան նախարարութեանը, սփիւռքի նախարարութեանը՝ երբ կը տեսնենք օտարագիր եւ օտարաբառ անուանումներ, չէ՞ք զգում, որ այդ բոլորի մէջ ինչ-որ սխալ բան կայ: Ինձ պատասխանել են, որ մտահոգութիւնը կիսում են, բայց ոչ մի քայլ չեն ձեռնարկում, կը նշանակի՝ արդարացնում են օտար բառերու գործածումը:

Հ.- Կառավարության որոշմամբ՝ լեզուի պետական տեսչությունը, որը պատասխանատու էր լեզուի անադարտության համար, լուծարում է: Ինչպե՞ս էք գնահատում պետության այս քայլը:

Պ.- Եթե լեզուի պետական տեսչությունը մինչ այսօր գոյություն ուներ, սակայն ոչ մի արդիւնք չէր տալիս, հիմա լուծարուելէն ետքը ի՞նչ տարբերություն պիտի ըլլայ՝ գոյութեան եւ ոչ գոյութեան: Ես չեմ գիտեր՝ պետությունը ինչ պիտի ընէ, որ լուծարել են, նո՞ր բան պիտի ստեղծեն, թե՛ աստոր կարիքն ալ չունեն: Եթե կը լուծարեն այդ անարդիւնաւետ կառոյցը եւ փոխարէնը մի նոր, աւելի գործնական բան մը պիտի ստեղծեն, անշուշտ լաւ է: Ամեն երկիր, ուր որ երթաս, իրենց լեզուով գրեր կը տեսնես, միայն Հայաստանն է, որ հայերէնն աւելի քիչ է, քան օտար անունները: Սա ի՞նչ կը նշանակէ: Լեզուն մեր ազգային հպարտութիւնն է՝ լեզուին մասին հոգածութիւն ընելը պարտադիր բան է՝ ասիկա հաստատ է, տարակոյս չկայ:

Հ.- Ի՞նչն է Ձեր համար հարազատ հայրենիքում:

Պ.- Հայրենիքը սրբութիւն է՝ իր բոլոր թերութիւններով հանդերձ: Հայրենիքի հանդէպ հնարաւոր չէ որեւէ բացասական միտք ունենալ, քանի որ ատիկա մեր հայրենիքն է, Հայաստանը կարելի չէ մոռնալ: Եթե թերութիւնները սրբագրուեն, Հայաստանն անխօս կը դառնայ աշխարհի լաւագոյն երկիրը. լաւագոյններուն լաւագոյնը:

Հ.- Ես տեղեակ եմ, որ Դուք Հայաստանի սահմանամերձ գիւղերում բարեգործութեան ծրագրեր էք իրականացնում...

Պ.- Այդ թեման անցնիմք, ես չեմ սիրում այդ մասին խօսել: Եթե դու մի բարի գործ ես անում, բայց յետոյ այդ մասին պատմում ես, դա դադարում է բարի գործ լինելուց, դառնում է գովազդ:

Հ.- Պարո՞ն Յակոբ, Հայաստանն այսօր կարիք ունի ներդրումների, այդ մասին բազմիցս խօսել են նախագահը, վարչապետը: Մեզ պետք է, որ արտասահմանում ապրող մարդիկ, ինչպիսին Դուք էք, ձեր ընտանիքը, Հայաստանում ոչ թէ բարեգործութիւն անեն, այլ սեփական գործը դնեն եւ այստեղ՝ հայրենիքում, ձեռներեցութեամբ զբաղուեն: Մեզ հետաքրքիր է իմանալ սփիւռքի գործարարների տրամադրութիւնը. օրինակ՝ ԱՄՆ-ում ապրող հայ գործարարները ցանկութիւն ունեն ներդրումներ կատարել հայրենիքում:

Պ.- Ներդրումների գլխաւոր գրաւականը վստահութիւնն է: Չեմ կարծեր, որ Սփիւռքում ապրող որեւէ հայ չի մտածում Հայաստանի մասին, բոլորն էլ

ուզում են կարելիություն սահմանում օգնել եւ աջակցել Հայաստանին:

Հ.- Հայաստանին օգնելու լավագույն տարբերակը Հայաստանում բիզնես դնելն է, որպէսզի մարդիկ աշխատատեղ ունենան եւ չհեռանան Հայաստանից: Ի՞նչն է խանգարում արտերկրում ապրող մեր հայրենակիցներին՝ չեն վստահո՞ւմ մեր կառավարությանը, պետութեանը:

Պ.- Երբ խօսք է գնում բիզնեսի մասին, գլխաւորը փոխադարձ վստահութիւնն է: Խանգարող հանգամանքները ներքին են. նախագահն ինքն էլ արտայայտուեց այդ մասին ասելով, թէ ինչն է պատճառը, որ հայերը օտար երկիրներում մէջ կը զարգանան, կը բարգաւաճեն, իսկ հայրենիքում չեն կարողանում նոյն բանն անել:

Հ.- Դուք ունե՞ք այդ հարցի պատասխանը:

Պ.- Անցեալներում եղել են դէպքեր, երբ Սփիւռքի տարբեր հայեր են եկել եւ Հայաստանում տարբեր գործեր են դրել, որպէսզի թե՛ տեղացիները գործատեղ ունենան, թե՛ հայրենիքը զարգանայ: Բայց կարճ ժամանակ անոնք ափսոսանքով ետ գնացին՝ ամէն բան կորցնելէ ետք: Ինչո՞ւ այդպէս եղաւ, երեւի Դուք ինձանից լաւ գիտէք: Շատ բնական է, որ մարդիկ մէկմէկու հետ կիսօսին այս կարգի բաներու մասին: Այդ լուրերը կփոխանցուին մէկից միւսը. դա է պատճառը, որ շատերը չեն ուզեր գալ այստեղ՝ գործ դնելու:

Հ.- Ձեր կարծիքով՝ առանց Հայաստանի Սփիւռքը ի՞նչ ապագայ կարող է ունենալ:

Պ.- Ես համոզուած եմ, որ հայութիւնը կրնայ գոյատեւել եւ ապագայ ունենալ միմիայն հայրենիքում: Հայրենիքէն դուրս՝ հայերի ապագան փայլուն չէ. պատկերացրէք գետ մը, որը կը լցուի ովկիանոսին մէջ եւ առանձին հոսանքով կը գնայ առաջ: Իմ ընտանիքում երեք գաւակներս ալ հայերէն են խօսում, ամուսնացած են հայերի հետ, թոռներս ալ հայերէն կը խօսին: Մենք կը նմանինք ովկիանոսին աղի ջրերուն մէջ մտած գետի կեղրոնական հոսանքին, սակայն տեսա՞՞ծ էք որեւէ գետ, որ կարողանայ ճեղքել ովկիանոսը եւ հասնել հակառակ ափը: Վաղ թէ ուշ գետը կը խառնուի ովկիանոսին. սա է Սփիւռքի ապագայի հանդէպ իմ պատկերացումը: Առանց Հայաստանի՝ այդ միախառնումն աւելի արագ կը լինի եւ երբեք փայլուն լինել չի կարող:

Հարցազրոյցը՝ Կարինէ Սարիբեկեանի

«Հայելի», 8 Յունիս 2017

ՆԱՄԱԿ ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հայաստանի Հանրապետության Կրթության, Գիտության, Մշակույթի եւ Սփորդի Նախարար Պրն. Արայիկ Յարութիւնեանին ուղարկեցի նամակ մը, որ Պրն. Նախարարը փոխանցած ըլլալով Հայաստանի Հանրապետության «Լեզուի Կոմիտէ»ի նախագահ Պրն. Դաւիթ Գյուրջինեանին, վերջինէն ստացայ պատասխան նամակ մը:

Ստորեւ՝ երկու նամակները:

* * *

Յարգելի Պրն. Արայիկ Յարութիւնեան
Նախարար Հ.Հ. Կրթության, գիտության, Մշակույթի եւ Սփորդի

Պրն. Նախարար,

Ստորագրեալս՝ Նիւ Եորքքանակ Յակոբ Տէրեան, մէկն եմ բոլոր այն սրտցաւ ազգայիններէն, որոնք կը տազնապին տեսնելով արեւմտահայերէնի ցաւալի աւագախորումը, արեւելահայերէնի՝ օտար բառերով ճոխացած եւ աղաւաղուած վիճակը եւ այդ երեւոյթներուն հանդէպ, մեր նախորդ տարիներու Կրթության եւ Գիտության նախարարներուն ցուցաբերած անփոյթ եւ այպանելի կեցուածքը:

Որով՝ երբ կը լսեմ նախարարներու բերնէն, թէ «Հ.Հ. «Լեզուաքաղաքականութեան» հիմնարար սկզբունքներից է լեզուն գերծ պահել ինչպէս օտարամոլութիւնից, այնպէս էլ մաքրամոլութիւնից», թէ «Հայոց լեզուի կենսունակութիւնը ապահովոււմ է ոչ միայն հայերէն բառապաշարով, այլեւ անհրաժեշտ փոխառութիւններով» (Ս. Սեյրանեան), նաեւ թէ «Աշխարհում առայժմ չկայ մի այնպիսի պետական լեզու, որ մաքրագտուած լինի փոխառութիւններից: Փոխառութիւնների գոյութիւնը բախտորոշ կամ ճակատագրական նշանակութիւն ունենալ չի կարող» եւլն (Ա. Աշոտեան), կը տարուիմ մտածելու թէ ինչ տարբերութիւն կարելի է տեսնել այսպիսի հիմնական հարցերու մէջ վտանգ մը չտեսնող, այլ աւելին՝ յանցանքը արդարացնել փորձող նախարարներու եւ «ինչ տարբերութիւն, կարելի է հայ մնալ եւ հայ

ապրիլ անգլերեն խօսելով եւ անգլերեն գրել կարդալով: Կարելորը հայ հոգին է եւ ոչ լեզուն» ըսող եւ կամովին իրենք զիրենք խափել աշխատող միամիտներու միջեւ:

Պրն. Նախարար, 2008-էն ասդին 5 յօդուածներ գրած եմ, յատկապէս լեզուական եւ օտարամոլութեան վրայով, քանի որ այս վերջինը եւս (օտարամոլութիւնը) շատ մեծ տարածում գտած է հայրենիքէն ներս:

Այդ յօդուածները ուղարկած եմ նախորդ «Կրթութեան եւ Գիտութեան» եւ «Սփիւռքի» նախարարութիւններուն, եւ ստացած եմ իրենցմէ պատասխան նամակներ, որոնք ընդունելով մէկտեղ անոնց «ուսանելի եւ շատ կարելոր նշանակութիւն ունենալը» եւ «կիսելով մէկտեղ մեր անհանգստութիւնը», սին հաւաստիքներէն բացի որեւէ իրագործում տեսանելի չեղաւ:

Այդ յօդուածներէն 2 հատը (որոնք կը խորհիմ որոշ չափով կը ներկայացնեն մեր միտք բանին) եւ անոնց կցուած՝ նախարարութիւններէն ստացուած նամակները, ուզեցի ներկայացնել ձեզի, նկատելով որ այդ հարցերը այսօր ձեր իրաւասութեանց ծիրէն ներս կը գտնուին:

Պրն. Նախարար, ուրախ եմ այդ հարցերը ներկայացնելով ձեզի, յուսալով որ ձեր միջոցաւ կը սկսին մաքրագտման աշխատանքները՝ կարենալ վերացնելու ազգին արժանապատուութիւնը վիրաւորող այդ օտարամոլութեան ախտը եւ արեւելահայերէն լեզուն աղարտող օտար բառերը:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝

Յակոբ Տէրեան

5 Մեպտ. 2019, Երեւան

* * *

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԷ
ՆԱԽԱԳԱՀ**

04/225/21029-19 2019թ.

հմ. 25.05.2019

Ք. Երեւան, Կիւլյան 16. Հեռ. (010) 26-68-60

ԱՄՆ ՔԱՂԱՔԱՏԻ ՀԱԿՈԲ ՏԵՐՅԱՆԻՆ

Ի պատասխան 05-09-2019 թ. Ձեր գրույթյան:

Հարգելի՛ պարոն Տէրյան

Լեզվի կոմիտեում քննարկվել է Ձեր նամակ-դիմումը: Ծնորհակալ ենք Ձեր մտահոգությունների եւ ազնիվ մղումների համար:

Լեզվի կոմիտեն մշտապես ուշադրություն է դարձնում ինչպես հայրենի քերականական խնդիրներին, այնպես էլ օտար բառերի հայերեն համարժեքների ստեղծմանն ու կիրառմանը: Դրանց արտահայտությունն են այն հորդորակները, որոնց կարող եք ծանոթանալ Կոմիտեի կայքում (langcom.am) եւ ֆեյսբուքյան էջում (Լեզվի կոմիտե/Language Committee): Ի դեպ, այդ հորդորակները եւ կոմիտեի պատրաստած այլ նյութեր հաճախ հրապարակվում են հայաստանյան եւ սփյուռքյան թերթերում, ամսագրերում եւ կայքերում:

Գնահատելի է, որ մշտապես հետեւում եք Հայաստանի եւ Սփիւռքի լեզվական իրավիճակին ու իրողություններին: Այսուհետեւ եւս ակնկալում ենք Ձեր շահագրգիռ արձագանքը հայրենի խնդիրներին:

9/25/2019

[ստորագրութիւն]

VERIFIED OCSP 25-Sep-19 10:34:38 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GYURJINYAN DAVIT 3608620192

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

Կատարող՝ լեզվական վերահսկողության բաժին ՀՆՁ. 266879 (2,3)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ**

59/62-1/21023-19

2019 թ. հմ. 25.09.2019 թ. Երևան, Կիևյան 16, հեռ. (010) 26-68-60

ԱՄՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱԿՈԲ ՏԵՐՅԱՆԻՆ

Ի պատրաստան 05.09.2019 թ. Ձեր դրությամբ:

Հարգելի՛ պարոն Տերյան

Լեզվի կոմիտեում քննարկվել է Ձեր նամակ-դիմումը: Շնորհակալ ենք Ձեր մտահոգությունների և ազնիվ մղումների համար:

Լեզվի կոմիտեն մշտապես ուշադրություն է դարձնում ինչպես հայերենի քերականական խնդիրներին, այնպես էլ օտար բառերի հայերեն համարժեքների ստեղծմանն ու կիրառմանը: Դրանց արտահայտությունն են այն հորդորակները, որոնց կարող եք ծանոթանալ Կոմիտեի կայքում (langcom.am) և ֆեյսբուքյան էջում (Լեզվի կոմիտե/Language Committee): Ի դեպ, այդ հորդորակները և կոմիտեի պատրաստած այլ նյութեր հաճախ հրապարակվում են հայաստանյան և սփյուռքյան թերթերում, ամսագրերում և կայքերում:

Գնահատելի է, որ մշտապես հետևում եք Հայաստանի և Սփյուռքի լեզվական իրավիճակին ու իրողություններին: Այսուհետև ևս ակնկալում ենք Ձեր շահագրգիռ արձագանքը հայերենի խնդիրներին:

9/25/2019

X

VERIFIED OCSP 25-Sep-19 10:34:38 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GYURJINYAN DAVIT 3608620192

ԴԱԿԻԹ ԳՅՈՒՐԴՅԱՆԻՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՒՄՆԵՐ

Խորհրդածություններ Քրիստոսի Հրաշափառ Յարութեան Վրայով

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒԵԼԷՆ ԱՌԱՋ ԵՒ ՎԵՐՋ

Պոլսոյ «Մարմարա» օրաթերթի խմբագիր Պրն. Ռոպեր Հատտէնեան օր մը կը նկարագրէր թէ ինչպէս ոտնագնդակի (ֆութպոլ) անգլիական երկու մեծ խումբեր պիտի մրցէին իրարու դէմ, որուն համար շաբաթներէ ի վեր հեռատեսիլէն եղած գովազդները մեծ հետաքրքրութիւն յառաջացուցած էին ժողովուրդին մօտ:

Մրցումի օրը, միլիոնաւոր դիտորդներու կարգին ինք եւս կը դիտէր խաղը լարուած ուշադրութեամբ, տեսնելու թէ ի՞նչ պիտի ըլլար արդիւնքը:

Երկու խումբերն ալ ի գործ կը դնէին իրենց խաղարկութեան ամենաճարտար թէքնիքները, կարենալ գնդակը գետնէլու հակառակորդին բերդէն ներս, սակայն չէին յաջողէր:

Կիսախաղը կը վերջանար 0-0 արդիւնքով:

Երկրորդ կիսախաղը աւելի բուռն թափով կը շարունակուէր, իրենց ջիղերուն վրայ լարուած պահելով բոլոր դիտողները, սակայն ո՛չ մէկ կողմ կը յաջողէր կոլ մը արձանագրել:

Խաղին աւարտին հինգ վայրկեան մնացած, Պրն. Հատտէնեան ծարաւնալով եւ քիչ մըն ալ յուսահատ խաղին արդիւնքէն, խոհանոց կ'երթար գաւաթ մը ջուր խմելու: Սակայն հագիւ գաւաթը ձեռքն առած, յանկարծ պայթող աղմուկը կը թնդացներ ամբողջ տունը... կոռոռո՛ւ...

Ափսոսանքով ետ կը դառնար, ինքզինք մեղադրելով, որ հինգ վայրկեան եւս չկրցաւ համբերել, կողը տեսնելու վայելքը կարենալ ըմբռնելու համար:

Թէւ գիտէր որ նոյն կողը կրկին ու կրկին պիտի ցուցադրեն թէ ինչպէս եղաւ, սակայն անօգուտ: Կողը ուղղակի տեսնելու եւ ըլլալէն ետք անոր կրկնութիւնը տեսնելու մէջ մեծ տարբերութիւն կար:

Կոլէն առաջ կար անորոշութիւն մը, որ զինք կը տանէր կասկածանքի, արդեօք կոլ մը պիտի ըլլա՞ր թէ ոչ: Ահա այս էր ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒԵԼԷՆ ԱՌԱՋ իր մէջ տիրող հոգեմիճակը՝ Անորոշութիւնը: Որով այդ կողը պիտի գար զինք փոխադրել անորոշութենէն դէպի որոշակիութիւն:

Մինչ կրկնութեան պարագան բոլորովին տարբեր էր, քանի որ կողը ստուգապէս եղած էր ու վերջացած: Անորոշութիւն ու կասկած չկար այլեւս: Որով տեսնելիքը միայն պարզ կրկնութիւն մը պիտի ըլլար: Ահա այս ալ

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒԵԼԷՆ ՎԵՐՋ տիրող հոգեվիճակն էր:

* * *

Այս նկարագրությունը միտքս տարաւ 2000 տարի ետ, ուր Մարմնացեայն Աստուածորդին կը քարոզէր եւ կ'ուսուցանէր ժողովուրդին, հիմը դնելով ճշմարտագոյն Նոր կրօնին՝ Քրիստոնէութեան:

Մարդիկ հմայուած էին Քրիստոսի խօսքերէն: Այդ իսկ պատճառաւ ուր որ երթար Ան, հազարներով Անոր ետեւէն կ'երթային, միայն զինք լսելու համար, քանի որ Իր ուսուցումները բոլորովին կը տարբերէին քահանայապետներու ուսուցումներէն: Քահանայապետներու սպասաւորներն անգամ վկայեցին այդ, ըսելով թէ «Այս մարդուն պէս խօսող երբեք չեն տեսած» (Յովհ. 7.46):

Կը լսէին Անոր խօսած առակները, որոնցմով կարելի կ'ըլլար աւելի լաւ ըմբռնել Անոր խօսքերուն իմաստը: Կը տեսնէին Անոր կատարած հրաշքները, որոնք խորքին մէջ անհաւատալի երեւոյթներ էին:

Ինչպէ՛ս կրնար ըլլալ, որ յանկարծ կոյրերուն աչքերը, խուլերուն ականջները եւ համրերուն լեզուները բացուէին: Ինչպէ՛ս կրնար ըլլալ, որ ի ծնէ անդամալոյծներ ոտքի ելլէին ու քալէին: Թէ ինչպէ՛ս դիւահարներ ու բորոտներ յանկարծ բժշկուէին: Մինչեւ իսկ մեռելներ յարութիւն ամենէն Անոր միջոցաւ:

Հնա՛ր էր որ ոեւէ անհատ, մարդկային կարողութիւններով կարենար կատարել այդ բոլորը: Անկասկած՝ ոչ: Իսկ այս բոլորէն զատ, տակաւին Աւետարաններուն մէջ կը տեսնենք բազմաթիւ վկայութիւններ, որոնք կու գան մեզի յայտնել, թէ Քրիստոս Աստուած է: Կ'ուզեմ այդ վկայութիւններէն ոմանք յիշել այստեղ, կարենալ լաւապէս համոզուելու, թէ տեսնել եւ լսել ետք այդ բոլորը, ալ պատճառ մը կը մնա՛յ Քրիստոսի Աստուածութեան վրայ կասկածելու:

Առաջին վկայութիւնը եկաւ հրեշտակէն, որ աւետեց Քրիստոսի Ծնունդը հովիւներուն, ըսելով. «Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է» (Դուկ. 2:11)

Քրիստոսի իւրաքանչիւր հրաշագործութիւն ինքնին վկայութիւն մըն էր Իր Աստուածութիւնը փաստող:

Քրիստոս յանախ Ինք խօսեցաւ Իր Աստուածութեան վրայով. «Ես եւ Հայրս մէկ ենք» (Յովհ. 10:30), «Ես եմ Յարութիւն եւ Կեանք» (Յովհ. 11:25) «Հայրս ամէն ինչ տուած է Ինծի» (Մատթ. 11:27): Քահանայապետին հարցումին թէ «Դո՛ւն ես Քրիստոսը, օրհնեալ Աստուծոյ Որդին»: Յիսուս պատասխանեց անոր թէ «Ես եմ» (Մարկ. 14:62):

Ի ծնե կոյրին վկայութիւնը քահանայապետին. «Աշխարհի սկիզբէն ի վեր լսուած բան չէ, որ մէկը ի ծնե կոյրի մը աչքերը բացած ըլլայ: Եթէ այդ մարդը Աստուծմէ եկած չըլլար, բան մըն ալ պիտի չկարենար ընել» (Յովի. 9:32-33): Ապա իր խոստովանութիւնը՝ «Կը հաւատամ Տէր, ըսաւ ան եւ երկրպագեց Անոր» (Յովի. 9:38):

Մարթայի վկայութիւնը. «Այո՛, Տէր, կը հաւատամ թէ Դուն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին, որ աշխարհի պիտի գայիր» (Յովի. 11:27):

Նաթանայէլի վկայութիւնը. «Բաբբի, Դուն Աստուծոյ Որդին ես, Դուն Իսրայէլի Թագաւորն ես» (Յովի. 1:49):

Իսաչին վրայ՝ աւագակին վկայութիւնը. «Տէր, յիշէ՛ զիս, երբ Քու թագաւորութեամբդ գաս» (Դուկ. 23:42):

Յովիաննէսին վկայութիւնը. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի Անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յովի. 3:16):

Իսկ այդ բոլորէն աւելի, Աստուծոյ վկայութիւնը Յիսուս Քրիստոսի մկրտութեան ատեն. «Սուրբ Հոգին տեսանելի կերպարանքով աղաւնիի պէս իջաւ Անոր վրայ: Չայն մը լսուեցաւ երկինքէն, որ կ'ըսէր՝ Դուն ես Իմ սիրելի Որդիս, Քեզի հաճեցայ» (Դուկ. 3:22)

Նոյն վկայութիւնը լսուեցաւ նաեւ Աստուածորդւոյն Այլակերպութեան ժամանակ, Թաբոր լեռան վրայ, երբ՝ «Ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր՝ Այս է Իմ սիրելի Որդիս, Որուն Ես հաճեցայ. Անոր մտիկ ըրէք» (Մատթ. 17:5)

Արդ, լսելէ ետք Քրիստոսի բոլոր քարոզները, տեսնելէ ետք Անոր կատարած բոլոր հրաշքները, իմանալէն ետք Քրիստոսի Աստուածութիւնը յայտնող բոլոր այս վկայութիւնները, տակաւին որեւէ պատճառ կը մնա՛ր կասկածելու, թէ Քրիստոս Աստուծոյ Որդի է:

Սակայն, այնպէս կ'երեւար որ շատերուն մտքին մէջ տակաւին որոշ կասկածներ կային, որոնք կը մատնէին զիրենք անորոշութեան:

Իրաւցնէ Ի՞նքն է Մեսիան Որուն կը սպասէին:

Իրաւցնէ Ի՞նքն է Քրիստոսը, Աստուծոյ Որդին, ինչ որ Ինք կ'ըսէ թէ է': Իսկ եթէ Ինքն է Քրիստոսը, հապա ինչո՞ւ քահանայապետները, փարիսեցիներն ու դպիրները չէին ընդունել զԱյն...:

Նոյնիսկ առաքեալները, որ հանապազ Իրեն հետ էին, միասին կ'ապրէին ու միասին կը շրջէին ամէն տեղ: Եւ եթէ երբեք ժողովուրդէն շատեր Քրիստոսի քարոզներուն, Անոր կատարած հրաշքներուն եւ Անոր Աստուածութիւնը յայտնող վկայութիւններուն ամբողջութիւնը չկրցան տեսնել ու լսել, ապա առաքեալները այդ բոլորը տեսան ու լսեցին: Սակայն եւ այնպէս, առաքեալ-

ներն ալ տկար գտնուեցան իրենց հաւատքին մէջ:

Երբ Քրիստոս իր աշակերտներուն հարցուց, թէ՝ «Մարդիկ ինչ կ'ըսեն Մարդու Որդիին մասին. ո՞վ եմ ես»: Անոնք պատասխանեցին. «Ոմանք Քեզ Յովհաննէս Մկրտիչը կը կարծեն, ոմանք՝ Եղիա մարգարէն, իսկ ուրիշներ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը» (Մատթ. 16:13-14):

Ահա այս վկայութենէն կը հասկնանք, որ ժողովուրդը տակաւին չէր կրցած ընկալել թէ Քրիստոս Աստուծոյ Որդին է, այլ մարգարէներէն մէկը:

Յիսուս շարունակեց հարց տալ եւ ըսաւ. «Իսկ դո՞ւք ով կը կարծէք զԻս»: Պետրոս, որ միշտ առջեւ նետուելու բնաւորութիւն ունէր, պատասխանեց. «Դուն Քրիստոսն ես, Կենդանի Աստուծոյ Որդին» (Մատթ. 16:15-16):

Իսկ երբ հասաւ վերջին օրը, երբ Յուդա պիտի մատնէր իր Վարդապետը անօրէններուն ձեռքը, Յիսուս ըսաւ, անոնց. «Այս գիշեր դուք բոլորդ ալ պիտի լքէք զԻս, որովհետեւ Սուրբ Գիրքը կ'ըսէ՝ Պիտի սպաննեմ Հովիւր, եւ հօտին ոչխարները պիտի ցրուին» (Մատթ. 26:31) Պետրոս դարձեալ առաջ նետուելով ըսաւ. «Նոյնիսկ եթէ բոլորը լքեն Քեզ, ես պիտի չլքեմ»: Յիսուս ըսաւ Անոր. «Կ'ըսեմ քեզի, որ այս գիշեր արքադադը չկանչած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զԻս»: Պետրոս ըսաւ. «Նոյնիսկ եթէ մեռնիլ պետք ըլլայ՝ Քեզի համար, Քեզ պիտի չուրանամ»: «Նոյնը կ'ըսէին բոլոր աշակերտներն ալ» (Մատթ. 26:33-35): Եւ երբ հասաւ վերջին ժամը, երբ Յուդայի առաջնորդութեամբ ամբոխը մօտեցաւ Քրիստոսը ձերբակալելու, Յիսուս ամբոխին դառնալով ըսաւ. «Աւագա՞ն եմ որ այդպէս սուրերով եւ բիրերով վրաս կը յարձակիք՝ զԻս ձերբակալելու համար: Ամէն օր ձեզի հետ տաճարին մէջ կը նստէի եւ կ'ուսուցանէի ու չձերբակալեցիք զԻս: Բայց այս բոլորը կը պատահին, որպէսզի Սուրբ Գիրքերուն մէջ մարգարէներուն ըսածները իրականանան»: Այն ատեն աշակերտները բոլորն ալ ձգեցին զԻնք ու փախան» (Մատթ. 26:55-56):

Իսկ այնքան ինքնավստահ՝ յառաջ նետուող Պետրոսը, գիտենք որ արքադադը դեռ չիօսած, երեք անգամ կ'ուրանար Քրիստոսը:

Թէեւ աշակերտներէն ոեւէ մէկը չէր ուզեր բաժնուիլ ու հեռանալ իր սիրելի Վարդապետէն, սակայն տեսնելով քահանայապետներուն ատելութեան ոգին հանդէպ Քրիստոսի՝ խելագարած ամբոխին նախատինքի արտայայտութիւնները եւ Քրիստոսի կրած չարչարանքները, վախի ու սարսափի ազդեցութեան տակ, անորոշութեան մատնուած եւ մարդկային տկարութեամբ, ակամայ հեռացան իրենց սիրելի Վարդապետէն: Իրենց կացութիւնը շատ անելի ծանրացաւ, երբ Յիսուս խաչուեցաւ եւ Խաչին վրայ Իր Հոգին աւանդելէն ետք թաղուեցաւ...:

Հիմա առաքեալները բոլորովին առանձին զգացին իրենք զիրենք: Կը

նմանեին հովիւէ գուրկ ոչխարներու, որոնք չէին գիտեր թէ ինչ պիտի ընէին եւ ուր պիտի երթային: Թէեւ դարձեալ իրենց սովորական հաւաքատեղիին մէջ կ'աղօթէին, սակայն թերահաւատութիւնն ու կասկածը զիրենք անորոշութեան կը մատնէին: Հակառակ անոր որ Յիսուս իրենց յատկօրէն ըսած էր, թէ՝ «Մարդու Որդին շատ պիտի չարչարուի եւ մերժուի երեցներէն, աւագ քահանաներէն եւ Օրէնքի ուսուցիչներէն, պիտի սպաննուի եւ սակայն երրորդ օրը յարութիւն պիտի առնէ» (Մարկ. 8:31): - Սակայն, իրաւցնէ արդեօք յարութիւն պիտի առնէ?...: Հապա եթէ չառնէ..., ինչ պիտի ըլլայ իրենց վիճակը առանց Քրիստոսի...: Ինչ պիտի կարենան ընել իրենք առանց Անոր...: Այն ատեն էր որ զգացին իրենք իրենց տկարութիւնը, քանի որ Քրիստոս իրենց հետ չէր...:

Ահա այս էր իրենց հոգեվիճակը՝ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒԵԼԷՆ ԱՌԱՋ, այսինքն՝ Քրիստոսի Յարութենէն առաջ: Սակայն Իրականութեան յայտնուիլը չուշացաւ: Քրիստոս երեք օր ետք յարութիւն առաւ «ու երեւցաւ Պետրոսին եւ ապա տասնմէկ առաքեալներուն: Յետոյ երեւցաւ միատեղ խմբուած հինգ հարիւրէ անդի հետեւորդներու: Այնուհետեւ երեւցաւ Յակոբոսին եւ ապա բոլոր առաքեալներուն: Ի վերջոյ, բոլորէն յետոյ երեւցաւ նաեւ ինծի, վիժածիս» (Ա Կորնթ. 15:58):

Ասոնք բոլորը իրենց կենդանի աչքերով տեսան Յարուցեալ Քրիստոսը: Թովմաս առաքեալ ուզեց փաստել Քրիստոսի Ինքնութիւնը, դիպչելով Անոր ձեռքերուն եւ կողին խոցուած տեղերը եւ ստուգելէ ետք որ Ան է Քրիստոսը, ծունկի գալով վկայեց՝ ըսելով. «Տէր իմ եւ Աստուած իմ» (Յովհ. 20:28):

Քրիստոս յարութիւն առած էր: Մահուամբ յաղթած էր մահուան, մեր բոլորին յատկօրէն սորվեցնելով եւ հասկցնելով որ ՄԱՀԷՆ ԵՏՔ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՅ:

Ահա հիմքը Քրիստոնէութեան. ՅԱՐՈՒԹԻՒՆԸ:

Առանց Յարութեան խորհուրդին չկայ Քրիստոնէութիւն:

Առաքեալներ ոգեւորուած էին դարձեալ եւ գօտեպնդուած՝ ի տես Յարուցեալ Քրիստոսին: Յարութենէն առաջ իրենց միտքը չարչրկող կասկածներն ու անորոշութիւնը փարատած էին այլեւս: Հիմա իրենց համար ամէն ինչ ստոյգ էր եւ որոշ, քանի որ *իրականութիւնը յայտնուած էր Քրիստոսի յարութեամբ, եւ իրենց հոգեվիճակը փոխուած էր ամբողջութեամբ*: Այս բոլորը մեծ ուրախութիւն եւ հրճուանք պարգեւեցին առաքեալներուն, քանի որ Քրիստոս իրենց հետ էր դարձեալ: Քրիստոսի ներկայութիւնը իրենց մէջ, իրենց համար գօրութիւն էր եւ ապահովութիւն, այնպէս՝ ինչպէս մանուկը ինքզինք ապահով կը զգայ իր հօր կամ մօր ներկայութեան:

Բայց Քրիստոս մարմնաւոր կերպով իրենց հետ պիտի չմնար տեւական,

այլ պիտի երթար Իր Հօրը քով: Առաքեալները առանձին պիտի մնային երկրի վրայ: Սակայն որպէսզի զիրենք աւելի ինքնավստահ դարձուցած ըլլար, որ չմատնուին Քրիստոսը կորսնցուցած ըլլալու մտավախութեան, իրենց կ'ըսէր. «Լաւ գիտցէք, թէ ով Ինծի կը հաւատայ՝ պիտի կատարէ ինչ որ Ես կ'ընեմ եւ անոնցմէ աւելի ալ պիտի կատարէ, որովհետեւ Ես Հօրս քով պիտի երթամ»: (Յովհ. 14:12): Եւ աւելի գօտեպնդելու համար զիրենք ըսաւ. «Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրս պիտի դրկէ Իմ անունովս, Անիկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ՝ ինչ որ Ես ձեզի ըսի» (Յովհ. 14:26): Միսիթարիչ կը նշանակէ՝ ոչ միայն միսիթարող, այլ նաեւ քաջալերող, խորհրդատու, օգնական, միջնորդ եւ բարեխօս: Սուրբ Հոգին Իր այս բոլոր դերերով ալ մշտականօրէն հանդէս կու գայ հաւատացեալներուն կեանքին մէջ:

Իսկ ամենակարեւոր եւ ամենաեական պատուիրանը, զոր Յիսուս կու տար առաքեալներուն, հետեւեալն էր. «Ինծի միացած մնացէք եւ Ես ձեզի միացած պիտի մնամ: Ինչպէս որ ճիւղը ինք առանձին պտուղ չի տար, եթէ որթատունկին միացած չըլլայ, նոյնպէս ալ դուք չէք կրնար պտուղ տալ, եթէ Ինծի միացած չըլլաք»: Նաեւ՝ «Ես եմ որթատունկը եւ դուք՝ ճիւղերը: Ով որ Ինծի միացած է եւ Ես՝ անոր, անիկա առատ պտուղ պիտի տայ, որովհետեւ առանց Ինծի դուք ոչինչ կրնաք ընել: Ով որ Ինծի միացած չի մնար՝ կտրուելով դուրս կը նետուի եւ կը չորնայ, նման այն ճիւղերուն, որ կը հաւաքեն եւ կրակը նետելով կ'այրեն» (Յովհ. 15:4-6):

Ահա ամենահիմնական պատուիրանը Քրիստոսի՝ «Ինծի միացած մնացէք», այսինքն՝ առանց Ինծի դուք ձեր կարողութիւնները ցուցադրելով եւ մարդկային իմաստութիւններով արտայայտելու փորձեր մի՛ ընէք, քանի որ ձեր այդ խօսքերը անպտուղ կը մնան, այսինքն՝ որոշ արդիւնք մը չեն տար:

Քրիստոսի հետ միացած մնալ կը նշանակէ յարատեւ զինուած ըլլալ Քրիստոսի զօրութեամբ եւ որեւէ գործ կամ խօսք գործել եւ կամ խօսիլ Իր զօրութեամբ միայն: Առաքեալները, երբ Պենտեկոստէի օրը Սուրբ Հոգի ստացան Աստուծմէ, իրենց վրայ արտակարգ կարողութիւն, ոյժ եւ քաջութիւն եկաւ, ու սկսան համարձակ կերպով եւ տարբեր լեզուներով քարոզել հեռաւոր երկիրներէն Տօնին ամթիւ Երուսաղէմ եկած բազմաազգար ժողովուրդին:

Քրիստոսի ձերբակալութեան ժամանակ փախչող առաքեալներն ու աշակերտները հիմա այնպէս զօրացած էին, որ այլեւս որեւէ սպառնալիք եւ որեւէ վտանգ չէր կրնար կեցնել զիրենք Քրիստոսի վրայով քարոզել: Մինչեւ մահ Իրեն մնալ խոստացող Պետրոսն անգամ, որ արքադաղը չխօսած երեք անգամ ուրացած էր Քրիստոսը, հիմա Սուրբ Հոգիով զօրացած, մինչեւ մահ Իրեն հետ մնալու խոստումին մէջ հաստատ մնացող, քաջ ու խիզախ առաքեալներուն գլխաւորը դարձած էր:

Ահա թե ինչպիսի գորութեամբ կը զինէ Սուրբ Հոգին նոյնիսկ ամենատկար անհատներն անգամ:

Առաւել, անոնք «Քրիստոսի հետ միացած մնացին» մինչեւ իրենց կեանքին վերջը եւ «Քրիստոս միացած մնաց իրենց»: Ահա այս միացումէն յառաջ եկող Քրիստոսի գործութիւնը ամենուրեք կը յայտնուէր առաքեալներու միջոցաւ:

Կը տեսնենք թե ինչպէս Պետրոս ոտքի կը հանէր ի ծնէ անդամալոյծը, Տանարին դրան մօտ՝ անոր ըսելով. «Արծաթ կամ ոսկի չունիմ, բայց ինչ որ ունիմ՝ կու տամ քեզի: Նագովրեցի Յիսուս Քրիստոսի անունով ե՛լ եւ քալե՛» (Գործք 3:5): Եւ տարիքով քառասունէ աւելի եղող անդամալոյծը ոտքի կ'ելլէր, կը քալէր, կը վազվզէր եւ զԱստուած կ'օրհնէր (Գործք 3:8):

Յոպպէի մէջ կը վերակենդանացներ Տաբիթա անունով Քրիստոսի հետեւորդ կին մը, որ մեռած էր: Հաւատացեալներու խնդրանքով Պետրոս եկաւ եւ մեռեալին քով ծունկի գալով աղօթեց եւ ապա մեռեալին դառնալով ըսաւ. «Տաբիթա՛, Տէր Յիսուս Քրիստոսի անունով կ'ըսեն ոտքի՛ ել:»: Տաբիթա աչքերը բացաւ եւ Պետրոսը տեսնելով շտկուեցաւ ու նստաւ (Գործք 9:40):

Ոչ միայն Պետրոս, այլ բոլոր առաքեալներն ալ, Սուրբ Հոգիով զօրացած եւ Քրիստոսի հետ միացած մնալով, հրաշքներ կը գործէին: «Որովհետեւ առաքեալներուն ձեռքով բազում հրաշքներ ու նշաններ կը կատարուէին» (Գործք 2:43), ինչ որ պատճառ կը դառնար, որ հաւատացեալներուն թիւը օրէ օր աւելնար, ու Քրիստոնէութիւնը տարածուէր ամբողջ երկրին վրայ:

* * *

Մենք այս գրութեան սկսանք ոտնագնդակի մը կողին դրուագով, որ մեզ մղեց կատարելու այս խորհրդածութիւնները:

Ինչպէս նկատեցինք, այն անորոշութիւնն ու կասկածը, որ կը տիրէ կողէն առաջ, նոյն անորոշութիւնն ու կասկածը կը տիրէր նաեւ Քրիստոսի Յարութենէն առաջ՝ այն տարբերութեամբ, որ կողը կրնար ըլլալ եւ կրնար չըլլալ, կրնար եւ մէկէ աւելի կող ըլլալ: Նախապէս սահմանուած չէր ըլլալիքը: Մինչ Քրիստոսի Յարութեան պարագային ամէն ինչ յստակ էր եւ նախասահմանուած, թէ Քրիստոս մեռնելէն երեք օր ետք յարութիւն պիտի առնէր:

Այս բոլորը որոշ էին եւ յստակ, սակայն աշակերտներուն համար անոնք եղան անհասկնալի եւ անըմբռնելի, մինչեւ իրականութեան յայտնուիլը, այսինքն՝ *Քրիստոսի Հրաշափառ Յարութիւնը*:

Յարութենէն ետք էր որ ամէն ինչ փոխուեցաւ: Աշակերտներ Քրիստոսի վերակենդանութեամբ կրկին գօտեպնդուեցան: Տկարութիւնն ու վախկո-

տուրթիւնը անհետ կորան իրենց մէջէն, երբ Սուրբ Հոգի ստացան ու զօրացան: Այնուհետեւ ամենակարելորդ, «Քրիստոսի հետ միացած մնացին» մինչեւ իրենց մահը: Այդ էր պատճառը որ իրենց խօսքերը ընդունելի եղան մարդոց մօտ, քանի որ Հոգին էր որ կը խօսէր իրենց մէջ եւ ոչ թէ իրենք իրենց մարդկային իմաստութեամբ...:

Որով մեր միտքն այստեղ ինքնաբերաբար կը կեդրոնանայ գլխաւոր այս երկու կէտերուն վրայ. «Սուրբ Հոգիով զօրանալու» եւ «Քրիստոսի հետ միացած մնալու» անհրաժեշտութեան վրայ, քանի որ միայն անոնք որոնք Սուրբ Հոգիով զօրացած եւ Քրիստոսի միացած մնալով կը գործեն, անոնց գործերն են որ պիտի պտղաբերին:

Այո, եթէ երբեք կ'ուզենք որ Քրիստոնէութիւնը մեր կեանքին մէջ արգասաւորուի եւ մենք դառնանք «իսկական քրիստոնեաներ», փոխանակ ըլլալու միայն «անուանական քրիստոնեաներ», պարտինք միացած մնալ Քրիստոսի, մեր կեանքի ընթացքին:

Իսկ այս երկուքը՝ *Սուրբ Հոգիով զօրանալն ու Քրիստոսի հետ միացած մնալու պատուէրը*, առաւելաբար անհրաժեշտութիւն կը նկատուին բոլոր եկեղեցականներուն եւ քարոզիչներուն համար, որոնք կոչուած են առաքեալներուն գործը շարունակելու եւ Յարուցեալ Քրիստոսը յարուցանելու մարդոց սրտերուն մէջ:

Այո, եթէ երբեք ունէ եկեղեցական կամ քարոզիչ չունենայ Սուրբ Հոգի իր սրտին մէջ եւ Քրիստոսի հետ միացած չմնայ, անոր խօսքերն ու քարոզները որեւէ արդիւնք չեն տար մարդոց մօտ, քանի որ Սուրբ Հոգին չէ որ կը խօսի իր բերնով, այլ ինքը կ'ըլլայ խօսողը իր մարդկային իմաստութեամբ, ինչ որ նման է այն ճիւղին, որ անջատուած ըլլալով որթէն, կտրուած է նաեւ անկէ ստանալիք իր սնունդէն:

Իսկ այն եկեղեցականները, որոնք գիտակցութիւնը ունին իրենց վեհ կոչումին եւ Աստուծոյ խօսքը կը քարոզեն Սուրբ Հոգիէն ներշնչուած, ահա այդպիսիներն են երանելիները Աստուծոյ մօտ, որոնք պիտի կարենան Սուրբ Յարութեան յոյսը շողացնել մարդոց մթազնած սրտերէն ներս:

Այո, թող այդ յոյսը շողայ մեր սրտերէն ներս, որպէսզի Քրիստոսի Հրաշափառ Յարութեան Տօնը դառնայ մեզի համար ինքնագիտակցութեան եւ ինքնաճանաչութեան առիթ, կարենալ տեսնելու մենք զմեզ մեր իսկութեանը մէջ:

Եւ երբ կարենանք անդրադառնալ որ ուղղելի կէտեր ունինք (անկասկած որ ունինք) մեր կեանքին մէջ, կարենանք ուղղել մենք զմեզ: Ու այդպէս նորոգուած սրտով, ուրախութեամբ դիմաւորենք Քրիստոսի Հրաշափառ Յարութիւնը՝ այն յոյսով, որ այդ նոյն Յարութիւնը կը խոստացուի նաեւ մեզի

եւ ի սրտէ շնորհաւորենք զիրար՝ ըսելով.

Քրիստոս յարեալ ի մեռելոց
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի:

15 Փետրուար 2007, Կլէմնոնթ, Ն/ս Եղորք

ԱՆՈՒՇ ՕՓԵՐԱՅԷՆ ՔԱՂՈՒԱԾ ՀԻՆԻՉ ԴԱՍ ՄԸ

«Անուշ» օփերան մեր բոլոր թատերերգություններու եւ օփերաներու մէջ ամենէն աւելի սիրուած եւ ժողովրդականութիւն ունեցող խաղարկութիւնն է, որ իր յուզիչ եւ տպաւորիչ ապրումներով գերազանցած է բոլորին:

Ի դերեւ չէ որ եթէ այլ օփերաներ տարին մէկ կամ երկու անգամ կը ներկայացուին Երեւանի «Սպենդեարեանի» անուան օփերային մէջ, «Անուշ» օփերան կը ներկայացուի մօտաւորապէս տարին 6-7 անգամներ, ուր ամէն անգամուն օփերայի սրահը լեցուն է ամբողջութեամբ:

Մեր կրկին Հայաստան այցելութեան առիթով, դարձեալ փափաքը ունեցանք դիտելու «Անուշ» օփերան: Հակառակ անոր որ երրորդ անգամն էր որ կը դիտէի զայն, դարձեալ բոլոր դիտողներուն նման յուզմունքս չէի կրնար զսպել, ի տես պատմութեան այն յուզիչ տեսարաններուն, ուր մարդկային սիրտը դժուար որ քարացած մնայ ու չազդուի եւ արցունքի կաթիլներ չզլտորին այտերն ի վար:

Անմահն Յովհաննէս Թումանեանի գրչէն ելած այս հիասքանչ պատմութիւնը, համեմուած՝ անմահանուն երաժշտագէտ Արմէն Տիգրանեանի երաժշտութեամբ, դարձած է իսկական գլուխ գործոց մը:

«Անուշ» օփերան իւրաքանչիւր դիտելուս թէեւ ունեցած եմ նոյն յուզմունքն ու ապրումները, սակայն այս անգամ առաւել ըլլալով կը նկատէի, թէ այս խաղարկութիւնը մեզի համար լոկ յուզմունքի պահեր եւ հոգեկան ապրումներ շնորհելու համար չէր որ կը ներկայացուէր, այլ ան ունէր իր մէջ կարելորդ դաս մը մեզի տալիք, որուն չէի անդրադարձած նախապէս:

Ահա այդ դասն է որ կ'ուզեմ փոխանցել ընթերցողներուն, զիրենք եւս մասնակից դարձնելու խորհուրդներուս:

* * *

Կ'արժէ սակայն համառօտ ակնարկ մը նետել պատմութեան վրայ, որպէսզի կարելի ըլլայ աւելի հասկնալի դարձնել տրուող այդ դասը:

Սարոն եւ Մոսին մտերիմ՝ հովիւ ընկերներ են:

Մոսինք քոյրը Անուշ եւ Սարոն սիրահարած են իրարու:

Համբարձման տօնի մը առիթով սարքուած խրախճանքի մը մէջ, ուր ներկայ են Սարոն եւ Մոսին, ներկաները կը խնդրեն իրենցմէ կոխ (կռիւ) բռնել: Անոնք չեն համաձայնիր, քանի որ

*Աղաթ կայ սակայն էն մուք ձորերում.
Ու միշտ հրնազանդ հրնոց աղաթին՝
Ամբոխի առջեւ իգիլոն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիլին:*

Մոսին եւ Սարոն երդուած են երբեք չդժել այդ աղաթը (սովորութիւն):

Հարսանիքի մը խրախճանքի ընթացքին սակայն, Քէօխվային (հանդիսավար) եւ բոլորին խնդրանքին վրայ, Սարոն եւ Մոսին կոխ կը բռնեն: Սարոն կոխի ընթացքին տեսնելով քօղի տակէն իրեն նայող Անուշին, մոռնալով իրենց «հնոց աղաթ»ը, գետին կը նետէ Մոսիին: Բոլոր ներկաները՝ մանաւանդ աղջիկներ, կը սկսին ծիծաղիլ Մոսիին վրայ, «Ամօթ քեզ Մոսի, թուք ու նախատինք» բառերով: Մոսին խորապէս վիրաւորուած է իր ընկերոջ իրեն հանդէպ գործած անիրաւութենէն: Կ'ուզէ հակադարձել ու յարձակիլ Սարոյին վրայ եւ ցոյց տալ իրեն իր գործած վատութիւնը: Ընկերները կը բռնեն զինք եւ թոյլ չեն տար որ կատակ կռիւր իրական կռուի վերածուի:

Հոս ի յայտ կու գայ Սարոյին նկարագիրը: Սարոն՝ փոխանակ զոջալու իր գործած անիրաւութեան վրայ, աւելի յոխորտանքով՝ տեսնելով որ Մոսին կ'ուզէ իր վրայ յարձակիլ վրէժ լուծելու համար, ինքն ալ փոխադարձ՝ կը մղուի յարձակիլ Մոսիին վրայ, ինչ որ ընկերները թոյլ չեն տար ընել:

Եւ ահա Սարոն եւ Մոսին կը դառնան իրարու թշնամիներ:

Անուշ կը մնայ երկու քարի մէջ: Մէկ կողմէն եղբօրը խիստ ազդարարութիւնը՝ հեռու մնալու Սարոյէն, իսկ միւս կողմէն իր սէրը Սարոյին հանդէպ, զինք կը մատնեն անել կացութեան:

Ի վերջոյ Մոսին կը սպաննէ Սարոն: Անուշ կը խելագարի եւ ինքզինք կը նետէ լեռնէն վար, ջուրերուն մէջ, ու կը մահանայ:

* * *

Այս յուզիչ խաղարկութիւնը՝ որ նախապէս երկու անգամ դիտած էի արդէն եւ բոլոր դիտողներուն նման իմ ալ աչքերէս արցունքի կաթիլներ կը խլէր, հարց մը յառաջացուց մտքիս մէջ, թէ ինչո՞ւ պէտք էր պատահէր այս մեծ դժբախտութիւնը, որ պատճառ պիտի դառնար երկու հոգիներու կեանքին կորստեան, երկու ընտանիքներ պիտի քայքայուէին, երկու մայրեր եւ

ընտանիքի անդամներ պիտի լային ու ողբային եւ ամբողջ գիւղը սուգի պիտի մատնուէր: Ի՞նչն էր պատճառը բոլոր այս ողբերգութիւններուն: Արդեօք կարելի չէ՞ր կանխել այդ ահաւոր չարիքը: Կարելի չէ՞ր առաջքն առնել այդ ողբալի դժբախտութիւններուն որոնք պատահեցան:

Կը խորհիմ այո. կարելի էր:

Եւ ի՞նչն էր այդ կարելիութեան բանալին:

Շատ պարզ ու յստակ բառ մը միայն. «ներողութիւն»:

Հրաշք բառ մը արդարեւ, որ պիտի կանխէր բոլոր չարիքները: Բառ մը, որ պիտի մեղմէր դէմինին սրտին մէջ կուտակուած ոխն ու վրէժխնդրութիւնը, որ յառաջ եկած էր իր իսկ գործած վատութենէն:

Այո. այդ կարելիութեան բանալին եղող ներողութիւն բառը թէւ շատ դիւրին՝ սակայն եւ այնպէս չափազանց դժուար արտասանելի բառ մըն էր Սարոյին համար: Սարոն, որ այս պարագային կը ներկայացնէ մեզ եւ մեր ազգային նկարագիրը, ցոյց կու տայ որ այդ «ներողութիւն» բառը մեր ազգային բառարանին մէջ դժուար գտանելի, չըսելու համար՝ անգտանելի, բառ մըն էր:

Մենք այսպիսի պարագաներուն ընդհանրապէս տրամադիր եղած ենք մինչեւ իսկ իրարու գլուխ կոտրելու, սակայն երբեք ընդունելու մեր մեղքը եւ ունենալու վեհանձն քաջութիւնը ներողութիւն կարենալ խնդրելու:

Ազգովին շատ տուժած ենք մեր այս նկարագրին պատճառաւ եւ տակաւին շատ ալ կը տուժենք, այնքան ատեն որ պիտի յամառինք տակաւին պահել մեր այդ անգիշող հոգին: Սա մեզի համար եղած է կարծէք նկարագրի յատկանիշ մը, որմէ թէ՛ չենք կրնար եւ թէ՛ տրամադրութիւն ալ չունինք բաժնուելու:

Այո. եթէ երբեք Սարոն գիտակցելով իր գործած անիրաւութեան՝ փոխանակ տակաւին յոխորտալու եւ յանցանքին վրայ նոր յանցանք մը եւս բարդելու, վեհանձնութիւնը ունենար տեղւոյն վրայ երթալու Մոսիին քով եւ ըսելու՝ ներողութիւն ընկեր, ես մեղանչեցի քեզի դէմ, ես յանցանք գործեցի, ներէ ինծի, արդեօք Մոսին պիտի չներէ՞ր իրեն: Վստահաբար պիտի ներէ՞ր փոյթ չէ թէ մի քիչ վիրաւորուած սրտով:

Եւ ահա տեսէք թէ ինչ պիտի ստացուէր այդ ներողութենէն:

Սարոն եւ Անուշը փոխանակ դառն մահ ճաշակելու, պիտի միանային իրար՝ իրենց կեանքին ամենաերջանիկ օրերը ապրելու:

Երկու ընտանիքներ պիտի չքայքայուէին:

Երկու մայրեր եւ ընտանիքի անդամներ պիտի չլային ու չողբային:

Ամբողջ գիւղը փոխանակ սգալու, հարսանիք ու խրախճանք պիտի ունենար:

Եւ այս բոլոր բարիքներուն արմատը միակ մէկ բառ էր. «ներողութիւն»:
Ահա հրաշք բառը, որ դժբախտաբար կը բացակայի մեր նկարագրէն:

* * *

Այսօր ազգովին կանգնած ենք ու կը հետեւինք մեր հայրենիքէն ներս
ընթացող իշխանութիւն-ընդդիմութիւն հակամարտութիւններուն: Հակա-
մարտութիւն մը, որ ի վերջոյ, աղիտալի է մեր ազգին ու հայրենիքին համար:
Եւ արդէն իսկ մեր այս խորհրդածութիւններուն տուն տուող գլխաւոր
պատճառն ալ այդ հակամարտութիւնները եղան:

Քանի որ.

Մենք նմանութիւններ տեսանք՝ «Անուշ»ի հերոսներուն եւ մեր երկրէն
ներս տիրող հակամարտութիւններուն մէջ:

Արդեօք դուք եւս այդպիսի նմանութիւններ չէ՞ք տեսներ մեր իշխանու-
թիւններուն որդեգրած Սարոյական նկարագրին՝ եւ ընդդիմութեան հետա-
պնդած Մոսիական դիրքորոշումներուն մէջ:

Եթէ իսկապէս կը նկատէք այդպիսի նմանութիւններ, այդ կը նշանակէ...
թէ տակաւին նոյն տեղն ենք...:

«Նոր Կեանք», 17 Մարտ 2011

ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԹԷ՛ ԽՈՐՀՈՒՐԴ

Պատանի տարիքիս ուշադրությունս գրաւած էր հարսանեկան քարթերու վրայ գրուած այն նախադասութիւնը, թէ «սիրով կը հրաւիրեն ձեզ Ս. Պսակի արարողութեան»: Իսկ այլ քարթերու վրայ գրուած կ'ըլլար. «սիրով կը հրաւիրեն ձեզ Ս. Պսակի խորհուրդին»:

Տակաւին այդ փոքր տարիքիս մէջ ինծի համար նիւթ դարձած էին այդ երկու տարբերակները, թէ պսակադրութիւնը արարողութի՛ւն է, թէ՛ խորհուրդ:

Թէեւ արարողութիւնն ու խորհուրդը իրարմէ անբաժան են եւ անբաժան ալ պէտք է ըլլան եւ միատեղ կատարուին, սակայն դժբախտութիւն է՝ կարգ մը ծիսական արարողութիւններու մէջ տեսնել անոնց իրարմէ բաժնուած ըլլալը. «Խորհուրդ»ին անյայտութիւնը այլ միայն «Արարողութեան» կատարումը առանց խորհուրդի:

Իսկ եթէ պահ մը փորձենք անջատել զանոնք իրարմէ, անոնցմէ իւրաքանչիւրը կը բնորոշուի հետեւեալ ձեւով:

Արարողութիւն կը նշանակէ բան մը արարել, բան մը կատարել կամ ներկայացնել շարժումներով, խօսքերով, երգերով, պարերով եւ կարդալով, այնպէս՝ ներկայացումները, որոնք յաջորդական «արար»ներով կը ներկայացուին:

Արարողութիւնը՝ (այս պարագային եկեղեցական արարողութիւնը) կատարուող ծեսին տեսանելի մասն է միայն, որ աչքով կը տեսնենք եւ ականջով կը լսենք: Իսկ խորհուրդը այդ արարողութեան մէջէն մեզի յայտնուող, բայց աներեւոյթ կերպով կատարուող իրականութիւն մըն է: Օրինակ, Մկրտութեան արարողութեան մէջէն մեզի կը յայտնուի, մկրտուող երախային Ադամական մեղքէն սրբուած ըլլալով, անոր Քրիստոնեայ դարձած ըլլալը:

Աւելի յստակ կարենալ բացատրելու համար, «Արարողութիւն»ն ու «Խորհուրդ»ը կարելի է նմանցնել մարդու մը, որ ունի «Մարմին» եւ «Հոգի»: Մարմինը այդ կառոյցին տեսանելի մասն է, իսկ հոգին՝ անտեսանելի մասը: Սակայն երկուքը միասին է որ կը ներկայացնեն կենդանի մարդը:

Դժբախտաբար, սակայն, յաճախ կ'անտեսենք մարմնաւոր աչքին համար անտեսանելի եղող այդ հոգին եւ մեր հետաքրքրութիւնը եւ կեդրոնանայ միմիայն տեսանելի եղող մարմնին վրայ: Ամէն ինչ կու տանք մարմնին

համար, ուտել-խմել, հագուիլ, խօսիլ-խնդալ, երգել-պարել, ցատկել-գուար-
ճանալ եւ ամէն ինչ: Կարծէք կեանքի միակ նպատակը միայն մարմնի
պահանջներուն գոհացում տալը եղած ըլլայ, պահիկ մ'անգամ չենք մտածեր
հոգիի պահանջներուն վրայ, քիչ մըն ալ անոր գոհացում տալու, հակառակ
անոր, որ շատ լաւ գիտենք թէ այդ հոգին է մարմինը կենդանի պահողը:
Առանց հոգիի մարմինը մեռած մըն է միայն:

Ուրեմն ո՞րն է աւելի կարելորդ. ապրող մարմի՞նը, թէ՛ ապրեցնող հոգին:

Այս օրինակը բերի այստեղ անոր ճշգրիտ նմանութիւնը տեսնելով արա-
րողութեան եւ խորհուրդի կապակցութեան մէջ:

Այո, արարողութիւնը կարելի է նկատել որպէս տեսանելի մարմինը ծէսին.
իսկ խորհուրդը՝ այդ արարողութեան անտեսանելի հոգին:

Ինչո՞ւ կը գրեմ այս բոլորը: Կը գրեմ անոր համար, որ մեր ժողովուրդին
մեծ մասը մինչեւ իսկ տեղեակ չէ կատարուող ծիսական արարողութիւններու
իմաստին, իմա՝ անոնց խորհուրդին:

Չիրենք հետաքրքրողը ընդհանրապէս ծիսակատարութիւններուն տեսա-
նելի մասերն են միայն. այն բաները, որոնք աւելի ցուցադրութեան կը ծառա-
յեն. թէ որքան աւելի ճոխ ու փարթամ ու փառաւոր պսակադրութիւն մը՝ եւ
անոր յաջորդող խրախճանք մը կարելի է տալ, որ հրաւիրեալները իրենց
հիացմունքը յայտնելով ըսեն. «Փառաւոր հարսանիք մը տեղի ունեցաւ»:

Այսպիսի գնահատական մը կը բաւարարէ զիրենք: Ատկէ աւելին շատ ալ
կարելոր չի նկատուիր իրենց համար:

Իսկ այսօր, հասած՝ կեանքիս երեկոյեան, երբ կը դիտեմ պատանի տարի-
քիս ինծի համար նիւթ դարձած այդ արարողութիւններն ու խորհուրդը, ցա-
ւով կը տեսնեմ որ ժողովուրդին լայն խաւին մօտ կը բացակայի «Խորհուրդ»
բառին հասկացողութիւնը: Ամէն ինչ ցուցադրութեան համար միայն, մինչեւ
իսկ պսակի արարողութիւնները: Միթէ այդ չէ՞ն վկայեր պսակի ներկայացող
հարսերուն հագած պարահանդէսի վայել հագուստները... իրենց նման
հարսնաքոյրերուն եւ ինչու չէ նաեւ կարգ մը հարսներու կանանց եւ աղջիկնե-
րուն հագուստները, որոնք ամենեւին վայել չեն եկեղեցւոյ սրբութեան...: Ի
դերեւ կը փնտռեմ խորհուրդը այդ բոլորին մէջ, որ դժբախտաբար կը
բացակայի...:

Չենք խօսիր տակաւին պսակադրութեան յաջորդող խրախճանքներու
մասին, ուր ունեւոր մարդիկ ինքզինքնին կը ցուցադրեն ծախսալից ու
փառաւոր խրախճանքներ հրամցնելով հրաւիրեալներուն: Իսկ նիւթապէս
աւելի համեստ եղողներն ալ կը փորձեն անոնցմէ ետ չմնալ...:

Ցուցադրութեան հանդէպ մարդոց ունեցած այս մոլութիւնը, զիրենք
բոլորովին խորհուրդի հասկացողութենէն հեռու պահելէն բացի, նաեւ փոր-

ճութան կ'ենթարկե կարգ մը ընտանիքներ, որոնք հետագային շատ սուղ կը վճարեն իրենց առած անխոհեմ քայլին մուրհակները...:

Նոյնն է պարագան նաեւ մեր միւս խորհուրդներուն: Օրինակ՝ Մկրտութեան արարողութեան ընթացքին, քանի՞ հոգիներ կը թափանցեն անոր խորհուրդին, թէ ինչ կը կատարուի այդ մկրտութեամբ: Արդեօք կնքահայրը կը գիտակցի՞ թէ ինք պատասխանատուութիւն կը ստանձնէ իր գրկած երեխային անման ընթացքին զինքը դաստիարակելու «հաւատք»ով, «յոյս»ով եւ «սէր»ով. քանի որ ինքն է երախային ներկայացուցիչը եւ անոր խնդրանքները քահանային ներկայացնողը:

Անգիտակից եւ ցուցադրուող երեւոյթներ կը տեսնուին նաեւ Հաղորդութեան խորհուրդին մէջ, ուր կը տեսնենք դարձեալ առանց գլխաշորի, հոլանի թւերով, բաց քղանցքով, ներկուած շուրթերով կիներ ու աղջիկներ, որոնք յառաջ կու գան հաղորդուելու համար: Արդեօք կը գիտակցի՞ն թէ ինչու կը հաղորդուին եւ ինչ է հաղորդութիւնը:

Այս նիւթերու վրայով կարելի է առանձնապէս երկար գրել, սակայն մենք այստեղ միայն փոքրիկ ակնարկ մը նետած եղանք անոնց վրայ, ցոյց տալու խորհուրդին նշանակութիւնը եւ անոր հասկացողութեան չգոյութիւնը ժողովուրդին լայն զանգուածին մօտ:

* * *

Դժբախտաբար սակայն, եթէ երբեք մեր ժողովուրդին մեծ մասը անծանօթ է մեր այդ խորհուրդներուն, մի գուցէ անոր պատճառներուն մէջ մեծ բաժին ունին մեր եկեղեցականները, որոնց պարտականութիւնն է սորվեցնել ժողովուրդին եկեղեցական ու կրօնական գիտելիքները եւ մեր ծէսերուն նշանակութիւնները:

Բարեբախտաբար ունինք քահանաներ որոնք կը գիտակցին իրենց այդ պարտականութեան եւ իւրաքանչիւր ծէսի արարողութեան եւ կամ իրենց քարոզներուն մէջ կը խօսին ու կը բացատրեն անոնց նշանակութիւնները:

Սակայն ցաւ ի սիրտ, ունինք նաեւ քահանաներ, որոնք նոյնքան անծանօթ են մեր այդ արարողութիւններուն խորհուրդներուն, որքան անգիտակից աշխարհականները:

Այդպիսի եկեղեցականներ, ժողովուրդին հաւատք չկարենալ ներշնչելէն բացի, եղած հաւատքն ալ կը չեզոքացնեն մարդոց մօտ, երբ անլուրջ մօտեցումով եւ կատակներով «համեմուած» արարողութիւններ կը կատարեն, արարողութիւնը զաւեշտախաղի վերածելով:

Որպէսզի մեր այս խօսքերը օղի մէջ արձակուած քննադատութիւններ

չհամարուին, կ'ուզեմ տալ այդպիսի ծիսակատարության մը օրինակը, հաստատելու համար ըսածներս:

Պսակի արարողության մէջ սկզբնաւորութեան քահանան կնքահայրին բարձրաձայն կ'ըսէր. «Կնքահայր, այս խաչով իրենց գլխուն զարկ, եթէ երբեք իրենց գլուխները հեռացնեն իրարմէ», ահագին խնդուք եւ աղմուկ յառաջացնելով ժողովուրդին մօտ:

Ապա երբ հարց կու տար փեսային թէ «այս օրիորդին ձեռքէն որ բռնած ես, մինչեւ ի մահ տէ՛ր ես իրեն», փեսան լրջօրէն «այո» կը պատասխանէ: Քահանան բարձրաձայն ժողովուրդին հարց կու տար. «Ժողովուրդ բան մը լսեցի՞ր»: Ժողովուրդէն ոմանք, որ հաւանաբար ծանօթ էին քահանային նկարագրին, ձայն կու տային թէ «բան մը չլսեցին»: Քահանան խօսքը փեսային ուղղելով. «բան մը չեն լսած, բարձր պոռայ որ լսեն»: Փեսան այս անգամ «այո՛» կը պոռար եւ եկեղեցին կը լեցուէր ժողովուրդին բարձրաձայն խնդուքով:

Երբ գինիի բաժակը օրհնելէ ետք կու տար նախ փեսային, ապա հարսին եւ բաժակը կիսով պարպուած կը վերադառնար իրեն. «առ, մնացածն ալ խմէ, այսօր քու խմելու օրդ է» ըսելով, բաժակը կրկին անգամ կ'երկարէր փեսային: Իսկ փեսան քաջալերուած քահանային այս խեղկատակութիւններէն, ետին դառնալով... բաժակ կը բարձրացնէր ժողովուրդին կենացը...:

Արդեօք այդ քահանան կը գիտակցի՞ իր կատարած պսակադրութեան սրբութեան, կը գիտակցի՞ իր տուած գինիին նշանակութեան, թէ՛ այդ գինին իր հասկացողութեամբ մի գուցէ եւ իր նախասիրութեամբ լոկ սովորական խմիչք մըն է, որ մարդիկ կը խմեն խրախճանքներու ընթացքին:

Հոս կը փորձուինք հարց տալ, թէ նախ որո՞նք հարկ է դաստիարակել, մեր սրբութիւններուն ու խորհուրդներուն անտեղեակ աշխարհականները, թէ՛... դաստիարակութեան կարօտ քահանաները...:

Յուսամ վիրաւորած չեմ ըլլար բոլոր քահանաները, մանաւանդ անոնք, որոնք բաժին չունին այս մեղսալի յանցանքներուն մէջ, եւ որոնք կը գիտակցին իրենց ինքնութեան ու կը կատարեն իրենց քահանայութիւնը հաւատքով ու նուիրումով: Խօսքս միայն այն քահանաներուն համար է, որոնք զուրկ են քահանայական կոչումի գիտակցութենէն: Այդ իսկ պատճառաւ՝ թէթեւամիտ մօտեցումով, քահանայութիւնը դարձուցած են պարզ «արհեստ» մը, որպէս ապրուստի միջոց:

Երբ քահանայ մը կրնայ եկեղեցւոյ մը մէջ որ Ս. Իսաչ կ'անուանուի, Սուրբ Արարողութիւն մը զաւեշտախաղի վերածել, վարկաբեկելով թէ եկեղեցին, թէ արարողութիւնը եւ թէ անոր Ս. Խորհուրդը, նոյնինքն քահանային իսկ բառերով «համեմելու» համար արարողութիւնը, կը տարուինք հարց տալու

դարձեալ, թէ ուր է այդ արարողութեան խորհուրդը, ուր է այդ խորհուրդին հասկացողութիւնը, ուր է կոչումի գիտակցութիւնը եւ մանաւանդ ուր է հաւատքը: Երբ այս տուեալները կը պակսին քահանայի մը մօտ, ա՛լ ինչ կարելի է սպասել նման քահանաներէն:

Երջանկայիշատակ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան շատ լաւ բնութագրած է եկեղեցականի մը ինչպիսին ըլլալը, երբ կը գրէ. «Ով աղօթել չի կարող ճշմարտութեամբ, նա չէ կարող կրօնական լինել»:

Մեր այս դիտողութիւնները թող նկատուին զգաստութեան կոչ մը այդպիսի քահանաներու, որ գիտակցին իրենց ինքնութեան ու չմեղանչեն Աստուծոյ եւ եկեղեցւոյ հանդէպ:

Իսկ եթէ երբեք կը խորհին թէ իրենք կարող չեն ժողովուրդին հաւատք ներշնչել, գէթ... պատճառ չդառնան եղած հաւատքն ալ փճացնելու...:

Անխորհուրդ արարողութիւնները նման են անհոգի մարմիններու: Անոնք կը կատարուին միայն որպէս օրէնք դարձած եւ սովորութիւն նկատուող արարողութիւններ:

Մեր այս գրութեամբ կ'ուզենք նաեւ մեր ժողովուրդին ուշադրութիւնը հրաւիրել կատարուող արարողութիւններուն խորհուրդին վրայ, առաւել քան այդ տեսանելի եղող երեւոյթներուն, որոնք իրենց շատ փառաւոր, շատ ճոխ ու ծախսալի խրախճանքներով եւ բոլորին հիացմունքին արժանացող հարսանիքներով, նոյնիսկ չեն կրցած ապահովել բոլոր ամուսնացող զոյգերուն ընտանեկան կեանքին յարատեւութիւնը: Մեզի ծանօթ են այդպիսի զոյգեր, որոնց ամուսնական կեանքը այդպիսի փառաւոր հարսանիքներէն ետք շատ երկար չէ տեւած:

Պսակի արարողութեան բուն եւ հիմնական նպատակը կը տեսնենք, կարդացուող աղօթքին այն համարին մէջ որ կ'ըսէ. «Այսուհետեւ չնկատուին երկու, այլ մէկ մարմին՝ հնազանդութեամբ միացած եւ զիրար սիրեն պարկեշտ կենցաղով, անբիծ հոգիով, առանց ամօթի եւ առանց լկտիութեան, ամէն բարի գործերու պատրաստ ըլլալով»:

Ահա այս է որ անջնջելի կերպով պէտք է դրոշմուի պսակուող զոյգին հոգիներուն մէջ, որպէսզի լաւ ըմբռնեն իրենց համար կատարուող Ս. Պսակին խորհուրդին իմաստը եւ գիտակցին թէ ինչպիսի լուրջ պատասխանատուութիւն մըն է որ կը ստանձնեն իրենց յառաջիկայ կեանքին համար:

Կը մաղթենք որ սխալ ընթացքի մէջ եղող քահանաներ գիտակցին իրենց ինքնութեան, թէ իրենք կոչուած են ոչ թէ աշխարհականներուն հետ աշխարհական կեանք ապրելու, այլ իրենց սրբազան կոչումն է «հոգիներու փրկութիւնը» սկսած... իրենց հոգիներէն...:

Իսկ մեր ժողովուրդին կ'ուզենք յուշել, որ ցուցաբերեն աւելի պարկեշտ,

աւելի վայելուչ ու գիտակից մօտեցում մը, մեր եկեղեցւոյ եւ եկեղեցական սրբութիւններուն նկատմամբ, որպէսի ցուցադրամոլութենէ տարուելու փոխարէն փնտռեն իրենց հոգեկան վայելքը՝ ներշնչուելու այդ արարողութիւններուն խորհուրդներովը:

«Նոր Կեանք», 22 Մարտ 2012

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅՈՎ

Մեր հայկական հեքիաթները ունին խորհրդաւոր սկզբնաւորութիւն մը: Անոնք կը սկսին «Կար ու չկար»ով: Սակայն ի՞նչ կար եւ ի՞նչ չկար: Ի՞նչ հասկնալ այս ասացուածքէն:

Այս խօսքերով կը սկսէի խորհրդածութիւններս ննջեցեալ մը հողին յանձնելէ ետք, անոր յաջորդող հոգեճաշին:

Կար ու չկար:

Եթէ նկատի առնենք որ ան հեքիաթային ասացուածք մըն է միայն, իմաստ մը պիտի չգտնենք անոր մէջ: Իսկ եթէ առնենք զայն որպէս բնութեան մէկ օրէնքը, ահաւասիկ հոն պիտի տեսնենք անոր իմաստը՝ իրականութիւնը, որ այսօր մեր աչքերուն կը պարզուի այս թաղումով:

Այո, Հրաչը «կար», տակաւին երէկ... Բայց «չկայ» այսօր:

Եթէ իւրաքանչիւրս ոչ շատ հեռու, այլ մօտ տասը տարի ետ երթանք մտքով, պիտի տեսնենք որ գէթ մեր ճանչցած անձերէն քանի հոգիներ «կային», որ սակայն «չկան» այսօր:

Իսկ մենք ամէնքս որ այսօր հոս ենք ու «կանք» տակաւին, մինչեւ յաջորդ տասնամեակ, արդեօք մեզմէ քանիներ պիտի անցնին այդ «չկայ»ներու դասին:

Մեր մեծանուն բանաստեղծ Աւետիք Իսահակեան ունի շատ փոքր երեք համարներէ բաղկացեալ բանաստեղծութիւն մը, որուն վրայ եղանակ ալ յօրինուած ըլլալուն, յաճախ երգած ենք զայն, իսկ եթէ չենք երգած՝ գէթ լսած ենք, այնպէս որ ծանօթ ենք այդ երգին: Սակայն մի գուցէ չենք թափանցած անոր բառերուն իմաստին:

Այդ երգը հետեւեալն է.

Գետակի վրայ

Թեքուել է ուռին

Ու նայում է լուռ

Վազող ջրերին:

Երազ աշխարհում

Ամէն բան յաւէտ

Գալիս են գնում

Ու ցնդում անհետ:

Եւ գլուխը կախ

Նա լաց է լինում

Ջրերը ուրախ

Գալիս են գնում:

Ահաւասիկ քերթուած մը, այսքան կարճ տողերով հիւսուած, որ սակայն աշխարհ մը կը ներկայացնէ իր մէջ:

Այս երգին առաջին համարը պատկերն է մարդկութեան, որոնք իրենց ծնունդէն մինչեւ մահ կը վազեն իրենց կեանքի վազքը, նման այն «վազող ջրերուն», որոնք ի վերջոյ կ'երթան հանգրուանիլ ովկիանոսի հսկայ աւազանին մէջ, ուր այլեւս վերջ կը գտնէ իրենց վազքը:

Իսկ երկրորդ համարը որ ամենակարեւորն է. մեզի կ'իմացնէ մեր այս կեանքին երազային կեանք մը ըլլալը. «երազ աշխարհում»:

Լուսահոգի աներհայրս, որ բարեպաշտ ու հաւատացեալ մարդ էր, ի հոգեւորս այսպէս կը մեկնաբանէր այս կեանքը ու կ'ըսէր.

«Այս կեանքը, իր 60-80 կամ 100 տարիներով, մեր գիշերները տեսած երազի մը նմանութիւնն ու տեւողութիւնը ունի միայն, բաղդատած՝ յաւիտենական կեանքին հետ: Երբ գիշերը կ'արթնանք մեր տեսած երազին լաւ կամ գէշ տպաւորութեան տակ, ու կը վերյիշենք մեր տեսած երազը, որ սակայն անցաւ ու գնաց, որ ալ երբեք չի վերադառնար, նոյնպէս՝ մահուրնէ ետքն ալ մեր հոգեկան աչքերով պիտի տեսնենք ու պիտի վերյիշենք մեր այս երկրաւոր կեանքը ու պիտի ըսենք. «Ո՛հ, ինչ երազ էր ան. մարմին ունէի, կ'ուտէի կը խմէի, կը նստէի կ'եղլէի, կ'աշխատէի, կը խօսէի, կ'երգէի, կը քնանայի կ'արթնայի, եւլն. ինչ որ անցաւ ու գնաց ու ալ երբեք պիտի չվերադառնայ»:

Այսպէս կը մեկնաբանէր ան այս կեանքը, զայն «երազ» նկատելով:

Եւ ահա այստեղ կը տեսնենք նաեւ, որ մեր բանաստեղծն ալ այս կեանքը երազ կ'անուանէ. «երազ աշխարհում ամէն բան յաւէտ»:

Իրապէ՛ս: Իրա՞ւ որ ամէն բան յաւէտ է այս «երազ աշխարհում»:

Սակայն բանաստեղծը հարցականի տակ չի թողուր իր խօսքը, այլ կ'ամբողջացնէ զայն ըսելով. թէ ամէն ինչ որ յաւէտ ըլլալ կը թուի մեզի այս աշխարհին մէջ, «զալիս են գնում եւ ցնդում անհետ»:

Արդեօք նմանութիւններ չկա՞ն բանաստեղծին այս «երազ աշխարհին» եւ վերը յիշուած երազ կեանքին միջեւ, ուր բանաստեղծը ինք եւս կը հաստատէ այս աշխարհին, - իմա այս կեանքին – երազ ըլլալը:

Բանաստեղծը իր այս խօսքով կ'ուզէ մեզի յուշել որ այդքան ալ մեծ

յոյսերով չկապուիմք այս կեանքին ու անոր մեզի տուած բարիքներուն: Գիտնանք որ երազ կեանք մըն է մեր ապրածը. գիտնանք որ օր մը մենք եւս երազ պիտի դառնանք մեր յաջորդներուն համար:

Ահա այս գիտակցութիւնը պիտի զգաստացնէ մեզ ու մենք պիտի անդրադառնանք մեր ապրած կեանքին, քննելով զմեզ թէ արդեօք ինչ տեսակ կեանք մը կ'ապրինք:

Այո, պիտի անդրադառնանք թէ ինչ կը հետապնդենք կեանքի մէջ:

Եթէ մեր կեանքին նպատակ դարձուցած ենք մի միայն դրամ շահիլ ու հարստանալ:

Եթէ մեր կեանքին նպատակ դարձուցած ենք միայն աշխարհի բոլոր վայելքներն ու հեշտանքները ըմբռնել:

Եթէ մեր կեանքին մէջ կը փնտռենք միայն փառք, պատիւ ու մեծարանք:

Եթէ հպարտ ենք ու գոռոզ եւ մենք զմեզ կը տեսնենք բարձունքի վրայ ու «վերելից նայում ներքեւ եղողին»:

Եւ տակաւին շատ այլ տեսակի անարժէք սնափառութիւններէ տարուած, որոնք հեռու կը պահեն մեզ մարդկայնութենէն ու պատճառ կը դառնան որ չկարենանք իմաստաւորել մեր կեանքը ու չկարենանք արժեւորել զայն մեր ընտանեկան, ընկերային, ազգային ու կրօնական կեանքէն ներս:

Այսպիսի անգիտակից ու աննպատակ ապրուած կեանքի մէջ սակայն, կան պահեր, զգաստացուցիչ դէպքեր, պատահարներ, որոնք կու գան մեզի բան մը յուշելու, բան մը հասկցնելու:

Այդ պատահարներէն մին, օրինակ՝ հիւանդութիւնն է:

Եթէ օր մը հիւանդանանք լուրջ հիւանդութեամբ մը, որ քայքայէ մեր առողջութիւնը, եւ մեզ հասցնէ մինչեւ մահուան դուռը, սակայն ողորմութեամբն Աստուծոյ եւ միջնորդութեամբը բժիշկներուն, կարենանք վերագտնել մեր առողջութիւնը – եթէ ոչ կատարելապէս – ու կարենանք վերապրիլ, ահա այդ դէպքը կու գայ մեզի բան մը հասկցնելու, այդ դէպքը կու գայ մեզի բան մը յուշելու, բան մը սորվեցնելու: Այնուհետեւ ալ մեր ընդունակութենէն կախում ունի հասկնալը, թէ ինչ պատգամ կը տրուի մեզի այդ հիւանդութենէն:

Ուրիշ պատահար մըն է նաեւ արկածը:

Մեզմէ ո՞վ իր կեանքին մէջ արկած մը կամ արկածներ չէ ունեցած, որոնք կրնային մահացու եղած ըլլալ մեզ համար եւ վերջ դնէին մեր կեանքին: Սակայն Աստուած պահած է մեզ եւ խնայած է մեր կեանքը:

Իսկ ի՞նչ եղած է մեր դիրքը այդ ազատումէն ետք: Կրցա՞ծ ենք դաս մը քաղել մեր այդ փորձութենէն: Կրցա՞ծ ենք հասկնալ այն ինչ՝ որ կը խօսուէր մեզի այդ փորձութեան ընդմէջէն, թէ՞ ոչ բաղդի վերագրած ենք զայն ըսելով. «Բաղդերնիս լաւ է եղեր որ չնեռանք, կամ չվտանգուեցանք այդ արկածէն»,

առանց նոյնիսկ նկատի առնելու բարեգութ Աստուծոյ ողորմածութիւնը, որ խնայեց մեր կեանքին:

Այո բարեկամներ, կեանքի մէջ կան տեսակաւոր դէպքեր, ինչպէս ճախոր-դութիւններ, անյաջողութիւններ, անկումներ, որոնք մէյմէկ ազդարարութիւն-ներ են մեզ համար, մեզ զգաստութեան հրաւիրող:

Իսկ այդ բոլոր դէպքերուն մեծագոյնը վստահաբար մահուան դէպքն է, որ շատ դասեր կը պարունակէ իր մէջ:

Մահուան պարագային երբ կ'երթանք ննջեցեալին տունը եւ կը ձեռնուինք ննջեցեալին հարագատներուն կամ բարեկամներուն հետ, կը փորձենք պար-գապէս իրենց ցաւը մեղմացնող մի քանի միփթարական խօսքեր ընել, սակայն կը դժուարանանք բառ եւ խօսք գտնել՝ բան մը կարենալ ըսելու: Սակայն, քանի որ բոլորովին լուռ եւ անխօս անցնիլ եւս պատշաճ չէ, կը դիմենք սովորական դարձած կարգ մը ասացուածքներու, որոնք ընդհանրապէս կը գործածուին մահուան պարագային:

Օրինակ, - «Աստուած հոգին լուսաւորէ», «կեանքը քեզի» ինչ որ սխալ է, այլ՝ «կեանք քեզի», «է՛հ պարապ աշխարհ», «է՛հ այս կեանքին մէջ ամէն ինչ խաբուսիկ է եղեր», կամ «վազէ վազէ վազէ, ահաւասիկ վերջաւորութիւնը, մահ ու գերեզման»:

Այս խօսքերը կ'արտասանենք յաճախ մահուան պարագաներուն մեքե-նաբար, մի գուցէ առանց թափանցելու անոնց խորքին ու իմաստին: Սակայն թափանցած ըլլանք կամ ոչ, այդ ասացուածքները իմաստալից են եւ մեծ դասեր կարելի է քաղել անոնցմէ:

Օրինակ.- երբ կ'ըսենք «Աստուած հոգին լուսաւորէ», գիտակցաբար թէ անգիտակցաբար վկայած կ'ըլլանք մեր «հաւատամքը», հոգիի անմահութեան վրայով, այսինքն, կը հաւատանք որ հոգին անմահ է ու պիտի ապրի իրեն վիճակուած յաւիտենական կեանքը, մարմնին մահանալէն ետք:

Այլապէս, եթէ երբեք ինչ որ ոմանք կը խորհին թէ այս կեանքը սկիզբ կ'առնէ ծնունդով ու վերջ կը գտնէ մահով, որմէ ետք ոչինչ կը մնայ անդին, ինչ իմաստ պիտի ունենայ մեր այդ մաղթանքը, որ Աստուած լուսաւորած ըլլայ անգոյ հոգի մը...:

Մենք սկիզբը ցոյց տուած եղանք որ այս կեանքը երազ մըն է: Որով երբ գիտենք որ այս կեանքը երազ մըն է, ուրեմն այդ կը նշանակէ որ այս կեանքէն անդին կայ իսկական կեանք մը, որ կը կոչուի յաւիտենականութիւն, ուր հոգիները պիտի ապրին: Ահա թէ ինչու կը մաղթենք որ Աստուած լուսաւորէ այդ հոգիները, որպէսզի անոնք ապրած չըլլան խաւարի մէջ, այլ ապրին լուսաւոր կեանք մը:

Արդեօք այս մաղթանքը մաղթողներուն բոլորն ալ կ'անդրադառնա՞ն այս

ճշմարտության:

Մահուան պարագային ինքնամիոփումը եւ ինքնաքննության մէկ պահն է մեզ համար:

Մահուան պարագային է որ մեր հոգիները պահ մը կ'ազնուանան, երբ կը տեսնենք մահուան ներկայութիւնը մեր աչքերուն առջեւ պառկած մեռելային ներկայութենէն: Այդ մահուան ներկայութիւնն է որ պահ մը մեզի խորհիլ կու տայ մեր կեանքի ընթացքին վրայ, ուր կը խորհրդածենք մենք մեզի. – Եթէ գիտենք որ այս կեանքը երազ մըն է, որուն պիտի յաջորդէ յաւիտենական կեանք մը.

Եթէ գիտենք որ այս աշխարհը պարապ աշխարհ մըն է.

Եթէ գիտենք որ այս կեանքին մէջ ամէն ինչ խաբուսիկ է.

Եւ եթէ գիտենք որ կեանքի մեր այս վազքին վերջաւորութիւնը անհաւասիկ այս է, մահ եւ գերեզման.

Այլապէս, ինչ յոյսերով կապուիմ այս երազ աշխարհին, անտեսելով ճշմարիտ ու յաւիտենական կեանքը:

Ինչո՞ւ հետապնդեմ միայն դրամն ու հարստութիւնը, մանաւանդ՝ եթէ երբեք այդ հետապնդումը պատճառ դառնայ որ կորսնցնեմ իմ մարդկայնութիւնս:

Ինչո՞ւ հետապնդեմ միայն հեշտանքն ու գուարնութիւնը, եթէ ան պիտի խաւարէ հոգիս:

Ինչո՞ւ համար փնտռեմ միշտ փառք ու պատիւ եւ հպարտանամ չոր հպարտութեամբ մը, գիտնալով որ ինձ նման շատեր՝ հպարտներ, գոռոզներ, փառասէրներ իրենց այդ փառքերը գրկած իջան այդ փոսին մէջ, հողին խառնուելով ոչնչանալու:

Ինչո՞ւ ստեմ ու կեղծեմ շուրջիններս խաբելով:

Ինչո՞ւ փորձեմ իւրացնել ուրիշներուն ստացուածքը:

Ինչո՞ւ անպարկեշտ ապրելակերպովս ինքզինքս արժեգրկեմ հանրութեան մէջ եւ այլն:

Այս բոլոր ինչուները մեզ համար երբեմն մտածումի նիւթ կը դառնան մահուան պարագային, քանի որ ինչպէս վերը յիշեցինք, մահը իր ներկայութեամբ մեզ կը մղէ այդ պահուն որ խորհրդածենք մեր կեանքին վրայ, մանաւանդ՝ եթէ երբեք այդ ինչուներէն մէկն ու մէկը մաս կը կազմէ մեր նկարագրին:

Ահա այդ պահուն մեր հոգիները անզգալաբար պահ մը կ'ազնուանան: Անդրադարձ մը կ'ունենանք կարծէք մեր կեանքին վրայ ու կը տեսնենք բոլոր այն սխալ բաները, որոնք ունինք եւ որոնք սրբազրութեան կը կարօտին:

Ու երբ կարենանք գիտակցիլ այս սխալներուն որ ունինք, ահա այդ

ԳԻՏԱԿՑԻԼՆ Է բուն բանալին կարենալ սրբագրելու մեր սխալները:

Տայ Աստուած, որ իմաստութիւնը ունենանք կեանքի դէպքերուն ու պատահարներուն մեզի տուած պատգամները կարենալ հասկնալու:

«Նոր Կեանք», 24 Յունուար 2013

ԱՂԱԲՆԻԻ ՊԷՍ ՄԻԱՄԻՏ, ՕՁԻ ՊԷՍ ԽՈՐԱԳԷՏ

Յարգելի խմբագրություն «Երջանիկ Յոյս» երկամսեայի,

Հանոյքով կը ստանամ «Երջանիկ Յոյսը»ը տարիէ մը ի վեր, թելադրութեամբ բարեկամիս Վեր. Պարգեւ Օրջանեանի:

Պարտք կը զգամ ըսել, որ թերթին յօդուածները ընդհանրապէս շինիչ են եւ օգտակար, որոնք կարդալը ոչ միայն հաճոյք է, այլ եւ ներշնչումի պահեր կու տան ինծի:

Հարց մը ունիմ սակայն մտքիս մէջ, որ կ'ուզեմ խորհրդածել ձեր հետ միասին:

Աւետարանին մէջ երբեմն կը հանդիպինք որոշ խօսքերու, որոնց վրայով գրուած կարգ մը գրութիւններու մէջ կը տեսնենք չափազանց բարեմիտ մօտեցումով եղած արտայայտութիւններ, մեր Քրիստոնէական ըմբռնումներու վրայով:

Անոնցմէ մին՝ օրինակ, թուրքը սիրելու հարցն է, քանի որ Յիսուս պատուիրեց մեզի ըսելով. «Սիրեցէք ձեր թշնամիները»:

Այսպիսի նիւթեր շօշափող կարգ մը յօդուածներու մէջ կը տեսնենք երբեմն միայն աղաւնիի միամտութիւն եւ ոչ իսկ պատառիկ մը օձի խորագիտութիւն:

Ես կը հաւատամ, որ սիրելու նախապայմանը «ներել»ը պէտք է ըլլայ, քանի որ եթէ պիտի չկարենանք ներել, պիտի չկարենանք եւ սիրել: Եւ իսկապէս ինչպէ՞ս սիրել ու ներել այն թշնամիին, որ մեզ արմատէն կացինահարելէ ետք, տակաւին մինչեւ այսօր կ'ուրանայ իր ոճրագործութիւնը եւ ներողութիւն մ'անգամ խնդրել չի զիջիր:

Սակայն Քրիստոս մեզի կը պատուիրէ «Սիրել մեր թշնամիները»:

Ճիշդ այս կէտն է, որ մտքիս մէջ կը յարուցանէ երկու հարցումներ, որոնց մասին իմ մտածումներս յայտնելէ ետք, կ'ուզէի լսել նաեւ ձեր մեկնաբանութիւնները:

Առաջինը – Գիտենք որ «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, (այսինքն իր ստեղծած մարդկութիւնը) որ մինչեւ անգամ իր միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ յաւիտենական կեանք ընդունի»:

(Յովհ. 3-16)

Սակայն Աստուած՝ հակառակ մարդկության հանդեպ իր ունեցած այսպիսի անհուն սիրոյն, միթէ պիտի ներէ՞ մեր մեղքերը, առանց որ ընդունինք մեր մեղաւորութիւնը եւ առանց որ ներողութիւն խնդրենք Իրմէ:

Բնական է ոչ. քանի որ առանց մեղայի, չկայ թողութիւն, չկայ ներում:

Միթէ հոս յայտնի չի՞ դառնար ներելու եւ սիրելու իրար հետ ունեցած սերտ կապակցութիւնը:

Միթէ կարելի՞ է սիրել առանց ներելու: Ինչպէ՞ս կարելի է սիրել մէկը ու մնալ իր հետ անհաշտ, դիտելով զինք որպէս թշնամի:

Զմոռնանք ըսելու որ մեղաւոր մարդը գիտակցելով իր փոքրութեան, խոնարհաբար ներողութիւն կը խնդրէ իր մեղքերուն համար Ամենակալ Աստուծմէ: Սակայն այս պարագային ներողութիւն խնդրելու պարտաւոր թուրքը, խոնարհելու պետքը չ'զգար երբեք իրմէ տկար եղող իր զոհին (իմա հայ ժողովուրդին) առջեւ, եւ իր հզօրութեանը ապաւինած՝ յոխորտալով ոչ միայն կ'ուրանայ իր մեղքը, այլ ներողութիւն մը խնդրելու իսկ չի զիջիր: Իսկ տակաւին՝ աւելին ըլլալով, կը փորձէ ոճրագործի շապիկը հագցնել իր զոհին վրայ, ամբաստանելով ու զրպարտելով զինք: Սակայն Յիսուս կը պատուիրէ մեզի «Միրել մեր թշնամիները»:

Ինչպէս կը մեկնաբանէք Քրիստոսի «Միրեցէք ձեր (այսպիսի) թշնամիները» պատուերը:

Երկրորդ – Սակայն այստեղ Քրիստոս մեզի կը ներկայանայ իր անձնական օրինակով ցոյց տալով մեզի իր գերազանց ազնիւ նկարագիրը, երբ կը ներէ մինչեւ իսկ զինք խաչողներուն եւ խաչել տուողներուն. «Հայր ներէ անոնց որոնք չեն գիտեր ինչ կ'ընեն»:

Ահաւասիկ ազնուութեան գերագոյն օրինակը, «ներել» մինչեւ իսկ զինք խաչողներուն, զինք խաչել տուողներուն: Ասկէ աւելի ներողամտութիւն, սեր եւ նուիրում, կարելի չէ գտնել ամբողջ աշխարհի պատմութեան մէջ:

Իսկ եթէ փորձենք Քրիստոսի Աստուածային անհուն սէրը, ներողամտութիւնը եւ նուիրումը բաղդատել մեր մարդկային մտածողութեան հետ, ինչ որ կ'արտայայտէինք մեր առաջին հարցումին մէջ, ըսելով՝ «միթէ կարելի՞ է սիրել առանց ներելու», կը տեսնենք որ անոնք բոլորովին տարբեր են իրարմէ:

Նմանօրինակ տարբերութիւն մը եւս կը տեսնուի Հօր եւ Որդւոյն ներելու եղանակներուն մէջ:

Գիտենք որ Հայրը պիտի չներէր ոեւէ անձի, որ իր մեղքերը ընդունած չըլլար, որ խոստովանելով ներողութիւն խնդրած չըլլար: Սակայն ահա Որդին կ'ըսէ «Հայր ներէ անոնց...» առանց որ՝ անոնք ընդունած ըլլան իրենց մեղքերը, որ՝ զոջալով ներողութիւն խնդրած ըլլան Իրմէ:

Ամէն պարագայի, Քրիստոս ցոյց կու տայ այստեղ իր գերագոյն եւ վսեմա-

գոյն սերը, ներող ոգին ու նուիրումը, զինք չարչարողներուն եւ չարչարել ու խաչը հանել տուողներուն հանդէպ, որպէսզի կարենայ իր սիրոյ ջերմութեամբ հալեցնել անոնց կարծրացած սրտերը...:

Սակայն, Քրիստոսի այդ անհուն սէրն ու ներող ոգին որեւէ ազդեցութիւն գործե՞ց զինք խաչողներուն ու խաչել տուողներուն վրայ:

Անոնք ընդունեցի՞ն իրենց սխալը ու խղճահարուեցա՞ն իրենց կատարած ոճիրին համար:

Անոնք հաւատացի՞ն Իրեն եւ ընդունեցին զԻնք որպէս Աստուածորդի, թէ ոչ... տակաւին մինչեւ այսօր կը հալածեն զԻնք...:

Որով կը տարուիք մտածել. եթէ Քրիստոսի իր մահուան գնով ներելն ու սիրելը չկրցաւ իր հակառակորդները զգաստացնել, մենք թուրքին ներելով ու սիրելով զինք, իր նկարագրէն ի՞նչ կրնանք փոխել:

Միեւնոյն ատեն Քրիստոսի թափած արիւնը ի դերել չելաւ: Ըստ հեթանոս ազգերու, որոնք ընդունեցին Քրիստոսի Աստուածութիւնը եւ հաւատալով Իրեն, դարձան Քրիստոնէաներ: Սակայն «իրենները» ոչ միայն չկրցան մեղմանալ. այլ ընդհակառակը աւելի կարծրացած եւ աւելի ատելութեամբ համակուած ըլլալ կը թուին:

Այս տուեալներու լոյսին տակ, գիտնալով հանդերձ որ ազնուութիւնը աշխարհի մեծագոյն առաքինութիւններէն մէկն է, ազնուութիւնը գնահատել չգիտցող մարդոց համար այդ ազնուութիւնը կիրարկելը՝ մանաւանդ որ ենթական եթէ փորձուած է անցեալին մէկէ աւելի անգամներ, կը կոչուի միամտութիւն:

Շատ պիտի փափաքէի լսել ձեր մեկնաբանութիւնները վերոյիշեալ խորհրդածութիւններու վրայով:

ՆՈՅՆԻ ՄԱՍԻՆ ԱՅԼԷ

ՆԵՐԵԼ-ԵՐԲ, ՈՐՈՒՐ

Մեր բեմերէն կամ Սուրբ Գրքի սերտողութեան խումբերուն մէջ այս օրերուն նիւթ մը ունկնդիրներու կամ ընթերցողներու ուշադրութեան կը յանձնուի:

Կարելոր նիւթ մը ըլլալուն համար, փափաքեցանք *Երջանիկ Յոյսի* ընթերցողներուն ալ ներկայացնել:

Նիւթը՝ *նեղել* է:

Մեզմէ կ'ակնկալուի որ ներենք:

Ներենք մեզ վիրաւորողներուն, ներենք մեր թշնամիներուն, որոնց գլխաւորը՝ թուրքին, ներենք չարին, ներենք ստախօսին, ներենք ոճրագործին, ի վերջոյ, քանի որ եթէ մենք չներենք, Աստուած ալ մեզի պիտի չներէ, կը կարդանք Խօսքին մէջ:

Եթէ այդչափ դիւրին ըլլար ներելը, Աստուած Ինքը պիտի ներէր աշխարհի եօթը միլիառ բնակչութեանը, որպէսզի անոնք դժոխք չերթային, այլ երկինքի բնակիչ դառնային:

Եկէք բացատրենք Աստուծոյ ներելու պայմանը:

Աստուած կը սիրէ այս երկրագունդը այցելող իւրաքանչիւր անհատի: Անոնք իր ձեռքերուն գործերն են: Ինք ստեղծած է գանոնք եւ աշխարհ զրկած: Կը սիրէ ոչ թէ մահկանացուներու «քեզ կը սիրեմ» սիրով, այլ խորունկ եւ սուրբ սիրով, որուն ապացոյցը տուաւ Տէր Յիսուսը երկիր զրկելով:

Եւ սակայն Աստուած կ'ատէ մեղքը: Ան առիթ կու տայ մեզմէ իւրաքանչիւրին որպէսզի խոնարհինք, ընդունինք մեր մեղաւոր ըլլալը, խոստովանինք մեր մեղքերը, ներողութիւն խնդրենք, որպէսզի Ան ալ ներէ մեզի:

Առանց այս քայլերը առնելու չակնկալենք որ Աստուած ներէ մեզի եւ յաւիտենական կեանքի արժանի ընէ:

Երեւակայենք Յիսուսը, խաչին վրայ գամուած, ձեռքերը եւ ոտքերը արիւնաթաթախ, գլխուն փուշէ պսակ, բոլոր զինքը դիտողներուն կողմէ լքուած եւ արհամարհուած, ծաղրանքի առարկայ, եւ մենք պետք է ակնկալենք որ Ան առանց պայմանի ներէ բոլոր զինք խաչողներուն, իր երեսին վրայ թքողներուն, իր կռնակը խարազանողներուն:

Այո՛, Ան խաչին վրայէն աղօթեց Իր Հօրը որ ներէր բոլորին, որովհետեւ անոնք չէին գիտեր թէ ինչ կ'ընէին: Կը խորհի՞ք թէ Աստուած ներեց բոլոր այդ ոճրագործներուն, առանց որ անոնք ընդունէին իրենց արարքին ահաւորութիւնը, «գիտնային» թէ ինչ կ'ընէին, ծունկի գային խաչին առջեւ եւ ներողութիւն խնդրէին, որպէսզի արդար, սիրող ու ներող Աստուծմէ թողութիւն ընդունէին:

Աստուած կը ներէ բոլոր անոնց՝ որոնք կ'ընդունին իրենց մեղաւոր ըլլալը, կը խոստովանին իրենց մեղքերը, ներողութիւն կը խնդրեն եւ ապա կ'արդարանան:

«Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է Անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու, եւ մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու» (Ա. Յովհ. 1.9):

Մեր մեղքերը կը ջնջուին միայն ապաշխարութեամբ: Աստուած մեր մեղքերը միայն այն ատեն կը ներէ:

Պետրոս իր առջելը հաւաքուած ժողովուրդին այդ քարոզեց եւ 3000

հոգիներ հնազանդեցան իր կոչին (Գործք 3:19):

Ինչպես ըսինք, Աստուած սիրող եւ ներող Աստուած է եւ սակայն եթէ Իր սերը առանց պայմանի է, իր ներողամտութիւնը՝ պայմանաւոր:

Հին Կտակարանէն մեզի ծանօթ է Իսրայելի պատմութիւնը, երբ բազմաթիւ առիթներով Աստուծոյ դէմ ըմբոստացան, օտար աստուածներ պաշտեցին, եւ հակառակ անոր որ Իսրայել Աստուծոյ ընտրած ժողովուրդն էր, Աստուծոյ պատիժին արժանացան, մինչեւ որ անդրադարձան իրենց սխալին, խոնարհեցան, ներողութիւն խնդրեցին եւ Աստուած շարունակեց սիրել եւ հոգալ Իր ժողովուրդը: Իսրայել մեծ գին վճարեց իր ըմբոստութեան եւ անհնազանդութեան համար:

Առանց խոնարհութեան եւ խոստովանութեան Աստուծմէ ներում չենք ընդունիր: Այդ պէտք է ըլլայ երբ տակաւին կ'ապրինք եւ ոչ թէ մեռնելէ ետք:

Մահէն ետք ո՛չ գոջումը, ոչ խոստովանութիւնը եւ ոչ ալ ներում խնդրելը օգուտ ունին: Մահէն ետք արդար դատաւորին առջեւ պիտի կանգնինք եւ մեր ապրած կեանքի հաշիւը տանք:

Ներողութիւն խնդրելուն կը յաջորդէ հատուցում:

Երբ մէկը վիրաւորած ենք, ցաւցուցած, իր պատիւին հետ խաղցած, իր դրամը գողցած, եւ օր մըն ալ անդրադառնալով մօտեցած ենք ենթակային, ներողութիւն խնդրած, ան ալ ազնուաբար ներած է մեզի, մեզմէ կ'ակնկալուի որ հատուցանենք մեր տուած վնասը եւ ոչ թէ գաւաթ մը ջուր խմելով ենթակայէն հեռանանք:

Տեսնենք թէ ի՞նչ ըրաւ Զաքէոս:

Ան մաքսաւոր մըն էր եւ իր ժողովուրդը կեղեքած՝ իր հաշուոյն հաւաքած տուրքերով:

Եւ ահա օր մը կը լսէ թէ Յիսուս իր շրջանը կ'այցելէր: Կարճահասակ ըլլալուն համար ծառ մը կը մագլցի եւ կ'ուզէ Յիսուսը տեսնել:

Յիսուսի աչքէն չի վրիպիր ծառին վրայ կծկուած կարճ մարդը եւ իր անունը տալով վար կը կանչէ զինք, իր հետ ճաշի կը նստի եւ երբ Զաքէոս կը խոստովանի Իրեն իր յանցանքը, կը ներէ անոր:

Զաքէոս ներուելէ ետք կը խոստանայ քառապատիկ հատուցանել անոնց որոնք կողոպտած էր:

Զաքէոս հատուցանեց:

Ան որ կը ներուի, պարտի հատուցանել: Դարմանել վիրաւորած սիրտը, վերահաստատել գողցուած պատիւը: Վերստին շինել քանդուած պարիսպները:

Անշուշտ ներելու ուրիշ կերպ մըն ալ գոյութիւն ունի:

Հոգ չէ եթէ դիմացինդ չանդրադառնայ իր սխալին, խիղճը հանգիստ քնա-

նայ, իր վիրաւորած անձին չմօտենայ, անոր վերքը դարմանել չփորձէ, մենք ներելու ենք, որպէսզի մեր մէջը դառնութիւն չանի, որպէսզի վրէժ լուծելու մասին չմտածենք, որպէսզի ատելութեան արմատէն ազատինք, մէկ խօսքով, որպէսզի հանգիստ գգանք, որպէսզի խաղաղութիւն տիրէ մեր սրտին մէջ, եւլն.:

Թէեւ գեղեցիկ մօտեցում մըն է այս մէկը եւ սակայն անբաւարար՝ սխալը շտկելու, մեղաւորը փրկութեան առաջնորդելու, զինք դատապարտութենէ ազատելու:

Մեր անձերուն խաղաղութիւնը փնտռել եւ անհոգ ըլլալ դիմացինին ճամբան շտկելու՝ անձնասիրութիւն է, այսինքն անհնազանդութիւն է Աստուածային կոչին, որ է՝ ջանք թափել մէկ հոգի աւելի Աստուծոյ փրկութեան առաջնորդել, այսինքն դժոխքէն ազատել:

Ներե՛լ, անպայման:

Եւ սակայն ներել զոչացողին եւ ներողութիւն խնդրողին:

Ներելէ ետք մոռնալ անցեալը եւ սիրել ներուած անձը:

Այնպէս հաշուէլ թէ ոչ որ մեզ ցաւցուցած է, մոռնալ ինչ որ պատահած է, խաղաղութիւնը վերահաստատել եւ երբեք հակադարձելու մասին չմտածել: Յանցաւորը Աստուծոյ դատաստանին յանձնել եւ աղօթել որ ան անդրադառնայ իր սխալին եւ քանդուած կամուրջը նորոգէ, սիրտերը նորոգէ եւ Աստուծոյ դատապարտութենէն ազատի:

Յաւիտենական կորուստէ ազատի:

Զի նշանակեր որ մեզ վիրաւորող անձին հետ մեր կապը պիտի վերահաստատենք, իրեն հետ առաջուան պէս սիրալիր ըլլանք, ժամանակ անցընենք, որպէս թէ բան մը պատահած չըլլար, այլ կը նշանակէ թէ մենք Աստուծոյ կը վստահինք մեր կեանքին բոլոր հարցերը եւ գիտենք թէ Ան լաւագոյնը կ'ընէ մեզի համար: Ան Իր խաղաղութիւնը կու տայ մեզի, ամենէն ահաւոր փոթորիկներուն մէջէն անցնելէ ետք, խաղաղութիւն մը՝ որ կը գերազանցէ հաշտութեան եւ ներումի տուած խաղաղութիւնը:

ՄԻՔԱՅԷԼ ԵՈՒՍՈՒՓԵԱՆ

Գոհացուցիչ գտնելով մէկտեղ սոյն մեկնաբանութիւնը, պիտի ուզէինք վերադառնել անոր մէջէն հետեւեալ 2 պարբերութիւնները, որպէս եզրակացութիւն եւ ներելու միակ պայման:

Ա. «Բնչպէս Աստուած սիրող եւ ներող Աստուած է եւ սակայն եթէ իր սէրը առանց պայմանի է, Իր ներողամտութիւնը պայմանաւոր»:

Որով,

Բ. «Ներե՛ղ անպայման», այո կարելի է, սակայն «ներել գղջացողին եւ ներողութիւն խնդրողին»:

Համաձայն էք:

ԱՂՈԹՔ ՓՈՐՁԱՆՔԷ ՄԸ ԱՋԱՏՈՒԵԼԷ ԵՏՔ

Շնորհակալություն Քեզ ողորմած Աստուած, որ անիմանալի ձեռքովդ բռնեցիր զիս եւ ազատեցիր ստոյգ փորձանքէն, խնայելով ինձ աւելի մեծ վնասուածքներէ, որոնք կրնային ցաւալի դարձնել կեանքիս մնացեալ օրերը:

Գթառատ Աստուած, Քու գթութեանդ ու ողորմութեանդ արժանացած եմ իմ կեանքիս մէջ շատ անգամներ ազատուելով մեծ ու փոքր վտանգներէ ու փորձանքներէ, որոնց մեծագոյնը պիտի ըլլար անկասկած՝ անխուսափելի խեղդամահութեան վտանգս..., որմէ ազատումս կը պարտիմ միայն ու միայն քու հայրական փրկարար ձեռքերուդ:

Շնորհակալ եմ... Երախտապարտ, ով ամենաբարի Հայր, որ ողորմելով հէք տկարիս, օգնութեան հասար եւ ազատեցիր երիտասարդ կեանքս ստոյգ խեղդամահութենէ:

Կեանքս քեզի կը պարտիմ: Քու հայրական խնամքէդ մի գրկեր մեզ ու Քու աջդ թող հանապազ հովանի ըլլայ մեր վրան:

Զօրացուր մեր գաղջ ու թոյլ հաւատքը, որ կարենանք լաւապէս արժեւորել մեր ապրած Քրիստոսավայել կեանքը:

Քու իմաստութեամբդ լեցուր մեզ, որ կարենանք լաւ հասկնալ, որ այս կեանքին մէն մի վայրկեանը որ կ'ապրինք՝ կ'ապրինք Քու հայրական հոգատարութեանդ շնորհիւ եւ ոչ մեր կարողութիւններով:

Լուսաւորէ մեր մտքերը, որ փորձանքէ մը ազատուելու պարագային, այդ ազատումը «մեր բախտի լաւութեան» վերագրելու անմտութիւնը չունենանք, այլ գիտնանք որ Ամենակալիդ ձեռքը թէ որ չհասներ մեզ ազատելու, ի գուր պիտի մնային «մեր բախտի լաւութիւնները»:

Ողորմած Տէր, երախտապարտ եմ ու շնորհակալ, որ ազատելով չարաբաստիկ այդ մահուան ճիրաններէն, շնորհքիդ արժանացած եղայ նաեւ հասնելով կեանքի հասունութեան:

Եւ ահա այսօր կանգնած կեանքիս երեկոյին շրջապատուած գաւակներով, թռռներով ու ծոռերով, կ'օրհնաբանեմ Քու սուրբ անունդ:

Եւ յետ այսու, ինչ որ վերապահած ես ինձ համար, Քու կամքդ օրհնեալ ըլլայ յաւիտեան: Ամէն:

ԸՆԴԴԷՄ ԹՐՔԱԿԱՆ
ՈՒՐԱՑՈՒՄՆԵՐՈՒ

ԲԱՅ ՆԱՄԱԿ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԵՃԷՓ ԹԱՅԻՓ ԷՐՏՈՂԱՆԻՆ

Յարգելի Պրն. Վարչապետ,

Չարմանքով կարդացինք ձեր խիստ ոճով խօսած՝ թուրք պետական տեսակետի արմատացած ուրացողական արտայայտությունը, հոյլ մը թուրք մտաւորականներու հայերէ ներողություն խնդրելու առաջարկին դէմ:

Որպէս վարչապետ եւ քաղաքական գործիչ, ակնկալելի էր որ տուած ըլլայիք աւելի ճկուն պատասխան մը, ինչպէս նախագահ Ապտուլլահ Կիւլ տուած էր: Սակայն դուք ձեր խիստ քննադատութեամբ ուղղակի բացայայտած եղաք բուն ինքնությունը:

Աթաթիւրքին հիմնած թրքական համարապետութենէն ի վեր, ձեր սահմանադրութեան 301-րդ յօդուածին հիման վրայ, որ պատիժ կը սահմանէ բոլոր անոնց, որոնք թրքությունը կամ թրքական պետությունը կը նախատեն,- ինչ որ կը նշանակէ ճշմարտություններ խօսելու համարձակությունը կ'ունենան (քանի որ ճշմարտություն եւ թուրք պետական մտածողություն ներհակ կ'ընթանան իրար հետ եւ այդ իսկ պատճառաւ անարգանք կը նկատուին թրքութեան եւ թուրք պետականութեան հանդէպ), - կարողացաք փակ պահել բոլոր մարդկայնօրէն բաբախող սրտերու դռները եւ ճշմարտություններու վրայով արտայայտուիլ ուզող բերանները: Հակառակ այս արգելքին, սակայն, բոլոր անոնք որոնք տակաւին համարձակություն ունեցան ճշմարտություններու վրայով խօսելու, զիրենք դատելով ու դատապարտելով բանտարկութեամբ պատժեցիք ու այսպէսով ազդարարած եղաք նաեւ ուրիշներուն՝ որ իրենք եւս չհամարձակին որեւէ ճշմարտութեան մասին խօսելու:

Իսկ անոնք որոնք դատավարութեամբ չկրցաք դատապարտել եւ սուտերով ու լուռ կենալու ազդարարություններով չկրցաք լռեցնել, այդպիսիներուն հարցը լուծեց Էրկենէքոն կոչուած տխրահոշակ գաղտնի կազմակերպությունը, թաքուն պայմաններու տակ «մաքրագործելով» զիրենք, որպէս լռեցնելու վերջին միջոց...:

Եւ ուշագրաւ է որ այդ մաքրագործումներ ընդհանրապէս կը կատարուէին շատ վարպետօրէն հաշուարկուած 17-էն վար տարիք ունեցողներու ձեռքով, որպէսզի օրէնքի հիման վրայ ծանր չլլայ իրենց դատապարտությունը:

Իսկ ինչ կ'ըլլար դիրքը պետական աւագանիին այդ սպանութիւններու հանդէպ, եթէ ոչ... կատարուածին հանդէպ սրտի անհուն գոհունակութիւն մը ունենալով հանդերձ, երեսանց ցաւակցութիւն յայտնել մեռնողին ընտանիքին, խոստանալով որ անպայման յանցաւորները պիտի գտնուին ու պիտի կրեն իրենց արժանի պատիժը...: Խոստում մը, որ տարիներու երկարութեամբ երկարելով, ի վերջոյ մոռացութեան պիտի մատնուէր...: Հրանդ Տինքին եղերական մահը ամենաթարմն է մտքերու մէջ, որուն դատաւարութիւնը կը շարունակուի 3 տարիէ ի վեր եւ չես գիտեր տակաւին որքան ժամանակ եւս շարունակուելու համար...:

Արդ, Պրն. վարչապետ, մինչեւ այսօր միայն հայերը, օտար պատմաբանները եւ 20-է աւելի այլ երկիրներու խորհրդարաններն էին ճշմարտութիւնը ընդունողներն ու խօսողները, որոնց դէմ դուք ընդդիմանալով, միշտ կ'ուրանայիք հակառակը փաստել աշխատելով: Սակայն այսօր երեւոյթը տարբեր պատկեր կը պարզէ մեր աչքերուն: Ահաւասիկ խղճամիտ, պարկեշտ ու ազնիւ հոգի թուրքերն են որ կը խոստովանին ձեր ուրացումները ու դատապարտելով ձեր ազգայնապաշտ ոգին, ներողութիւն կը խնդրեն հայերէ: Իսկ դուք տակաւին ոչ միայն կը շարունակէք նոյն ոգիով մնալ, այլ մինչեւ իսկ կը նախատէք այդ ազնիւ հոգի թուրքերը՝ ու կ'ըսէք. «Կ'երեւի թէ անոնք ցեղասպանութիւն մը գործած են որ ներողութիւն կը խնդրեն, սակայն Թուրքիա այդպիսի խնդիր մը չունի»:

Ձեր այս խօսքերով կ'անդրադառնա՞ք արդեօք թէ ինչ հասկացողութիւն ցոյց կու տաք, երբ ցեղասպան ոճրագործները կ'արդարացնէք՝ «Թուրքիա այդպէս խնդիր մը չունի» ըսելով եւ ազնիւ հոգի թուրքերը «ցեղասպանութիւն գործադրող» ոճրագործներու նմանցնելով կ'անպատուէք: Ուղղակի կ'ուզէք յեղաշրջել ամէն ինչ, սեւը ճերմակ եւ ճերմակը սեւ ցոյց տալ փորձելով: Ձեր ամբողջ պետական մեքանիզմը գործի լծած եւ ձեր բոլոր կարողութիւնները ի գործ դրած, կ'աշխատիք յաջողցնել միայն մէկ բան. «ճշմարտութիւնը թաղել, բան մը որ անկարելի է»:

Նախագահ Կիւլ, որպէս հասուն քաղաքագէտ մը, գոնէ կրցաւ աւելի ճկուն արտայայտութիւն մը ունենալ, բոլոր հայերէ ներողութիւն խնդրող մտաւորականներուն եւ ժողովուրդին հանդէպ, ըսելով.- «Թուրքիա այն երկիրն է, ուր ամէն մարդ ազատօրէն կրնայ կարծիք յայտնել»:

Նախագահ Կիւլին այս արտայայտութեան դիմաց, Ճէ-Հէ-Փէցի երեսփոխանուհի Ճահան Արըթման, պախարակելի ելոյթով մը քննութիւն բացաւ նախագահ Կիւլին էթնիկ արմատներուն շուրջ եւ անոր մօրը հայ ըլլալու վարկածը հրապարակ նետեց: Արըթման այս վարկածով նախ կը քննադատէր նախագահ Կիւլը, իր թրքական «թէգ»ին հակառակ նկատուող արտայայտու-

թեան համար, ապա եւ նախատինք մը կը շարտէր հայութեան երեսին, որուն համար յաջորդ օրերու թրքական թերթերուն մէջ պիտի պախարակուէր շատերուն կողմէ: Սակայն, այդ պախարակումներէն փոխանակ զգաստանալու, Արըթման աւելի յառաջ երթալով, կ'ըսէր. «Հանրապետութեան նախագահէն կը սպասէ որ ան ամբողջ աշխարհին յայտարարէր, թէ թուրք պետութիւնն ու ժողովուրդը ցեղասպանութեան յանցանք գործած չեն: Ես հիմա զինք խստիւ կը քննադատեմ այս բանը չլլալուն համար»: Նաեւ. «գլխաւորութեամբ հանրապետութեան նախագահին, պետական բոլոր մարդիկը պէտք է կանգնին Թուրքիոյ պաշտօնական «թէզ»ին ետին: Այս ալ ան է, թէ թուրք ժողովուրդը գիտական, պատմական ու իրաւական ճշմարտութիւններու լոյսին տակ որեւէ ցեղասպանութիւն չէ գործած: Ամենապարզ ժողովուրդէն մինչեւ պետութեան գլուխը ասիկա է որ պէտք է ըսենք մենք: Հակառակ ձեւով խօսողները պէտք է ազդարարուին նախագահին կողմէ»:

Արըթմանի այս խօսքերուն ի պատասխան, լսենք Թիւրքէր Ալքանի «Ռատիքալ»ի մէջ երեւցած «Ինչ եղան այն միլիոնաւոր մարդիկը որ Անատոլի մէջ կ'ապրէին թուրքերուն գալէն առաջ» խորագրեալ յօդուածէն մէջբերուած խօսքեր. «Միջին Ասիայէն Անատոլի եկած մեր պապերուն թիւը կը գնահատուի որպէս կէս միլիոն: Այդ շրջանի հաղորդակցութեանց լոյսին տակ անկարելի է որ աւելի բարձր թիւով թուրքեր եկած ու տեղաւորուած ըլլային Անատոլի մէջ: Լաւ: Բայց այդ հողատարածքին վրայ ապրող միլիոնաւոր մարդիկը ի՞նչ եղան, շոգիանալով անհետացան»:

«Ես այս հարցումը կ'ուզեմ ուղղել Ճահան Արըթմանին որ ցեղապաշտական նկրտումներ ունենալ կը թուի»:

«Այո. ո՞ր գացին այս մարդիկը»:

«Երկու հաւանականութիւն կայ»:

«Կամ այն է որ սուրբ անցուցինք ու սպաննեցինք այն միլիոնաւոր մարդիկը, զոր գտած էինք Անատոլի մէջ».

«Եւ կամ այն՝ որ Անատոլի մէջ ապրող հայերը, յոյները, արաբները խառնուեցան Ասիայէն եկած թուրքերուն եւ մշակութային ու կազմախօսական նոր մասնայատկութիւններ ցուցաբերող նոր ժողովուրդ մը ստեղծեցին»:

Կարելի՞ է երկմտիլ այս ճշմարիտ խօսքերուն վրայ:

Այո: Առաջին «հաւանականութիւնը» կասկած չի վերցնէր, որ երբ թուրքեր եկան Անատոլի, վայրագօրէն «սուրբ անցուցին ու սպաննեցին» տեղացի ժողովուրդէն շատեր, ահ ու սարսափ սփռելով ամէն կողմէ:

Իսկ երկրորդ «հաւանականութիւնը» ինքնին կու գայ փաստել առաջին հաւանականութիւնը, որ «հայերը, յոյները եւ արաբները խառնուելով թուրքերուն հետ, մշակութային ու կազմախօսական նոր մասնայատկութիւններ

ցուցադրող նոր ժողովուրդ մը ստեղծեցին»:

Սակայն զարմանալին այն է որ այդ կազմախօսական նոր ժողովուրդին անունը եղաւ «թուրք ժողովուրդ...»:

Հոս հարց մը կը ծագի մեր մտքերուն մէջ թէ ինչպէ՞ս կէս միլիոն թուրքեր Անատոլիոյ գալով եւ միլիոնաւոր տեղացիներուն հետ խառնուելով, յառաջ կու գայ ոչ թէ «կազմախօսական նոր ժողովուրդ մը», այլ «կազմախօսական թուրք ժողովուրդը մը...»:

Ինչո՞ւ արդեօք յառաջ չեկաւ կազմախօսական հայ ժողովուրդ մը, որ մեծամասնութիւն էր այդ շրջանին մէջ: Կամ ինչո՞ւ յառաջ չեկաւ յոյն ժողովուրդ մը, կամ արաբ ժողովուրդ մը, այլ յառաջ եկաւ «թուրք ժողովուրդ մը...»:

Սա ինքնին փաստ չէ՝ այդ առաջին «հաւանականութեան», թէ «սուրէ անցուցինք ու սպաննեցինք միլիոնաւոր այդ մարդիկը...»:

Այո. ճշմարտութիւնը այն է թէ կարելի պիտի ըլլա՞ր առանց սուրի ու սարսափի եւ առանց թրքական այդ վայրագ ոճին, «կազմախօսական նոր թուրք ժողովուրդ մը» յառաջ բերել...:

Նոյն վայրագ ոճը չէ՞ր միթէ Աթաթիւրքին եւս կատարածը, որ խոստովանեցաւ Պաշտպանութեան նախարար Վէճտի Կէօնիւլ, ըսելով.- «Եթէ Եգէականի մէջ հելլէները ու Անատոլիոյ միւս մասերուն մէջ ալ հայերը շարունակէին ապրիլ, կարելի՞ էր որ այսօր ունենայինք Թուրքիոյ այսօրուան ազգային պետութիւնը»:

Այո. անոնք բոլորը պէտք էր քշուէին, սպաննուէին ու ոչնչանային..., որպէսզի կարելի ըլլար ունենալ «Թուրքիոյ այսօրուան ազգային պետութիւնը...»:

«Չաման»ի մէջ եւս Ալի Պուլազ իր «Ներդրութիւն խնդրել» խորագրով յօդուածին մէջ կը հարցնէ, թէ «Ինչո՞ւ Անատոլիոյ մէջ ապրող 1.200.000 հայերէն միայն 70.000 հայ մնացած է». ու կ'աւելցնէ. «Խիղճս չ'ընդունիր որ 1915-ին Օսմանցի հայերուն ենթարկուած ողբերգութեան նկատմամբ անտարբեր մնանք եւ զայն ՈՒՐԱՆԱՆԹ»:

Իսկ ամենացայտուն փաստը, այս հարցերուն մէջ, ամէնէն հեղինակաւոր նկատուող անձին, Թալէաթ փաշային կողմէ կատարուած արձանագրութիւններն են:

«Ռատիքալ»ի մէջ Օլար Չալըշար դիտել կու տայ, որ «Թալէաթ փաշայի հաշիւներուն համաձայն, մէկ միլիոն հայեր անհետացած են Օսմանեան հողամասէն»:

Թալէաթ փաշային տետրակները վերջերս գրքի ձեւով հրատարակուած են Էվլէրէթ հրատարակչութեան կողմէ:

Օլար Չալըշար դիտել կու տայ, որ այդ գրքին 90-րդ էջին վրայ ներկա-

յացուող ցանկը, ըստ որու Թալեաթ փաշայի կողմէ տրուած տեղեկութեանց վրայ ցոյց կու տայ, որ «Էրզրումի, Պիթլիսի, Վանի, Տիարալէքիի, Տրապիզոնի կամ Էլազըղի նման նահանգներու մէջ, ուր տեղահանութիւնը գործադրուած էր ամէնէն տարածուն կերպով, բնաւ հայ չէր մնացած տեղահանութենէն ետք»: Ըստ այդ արձանագրութեանց, Օսմանեան շրջանի հայութեան թիւն էր 1.256.403 հոգի: Տրուած ըլլալով որ կարգ մը անձեր չէին արձանագրուած, Թալեաթ փաշա այս թիւը կ'ընդունի որպէս 1.500.000 միլիոն: Դարձեալ Թալեաթ փաշայի համաձայն. 1915-1916-ի տուեալներով, 284.157 հայ կամ քրիստոնէայ մնացած է երկրին մէջ: Այս ալ ըստ Թալեաթ փաշայի, պէտք է ընդունիլ 305-400 հազար: (Այս վերջին թիւը Ալի Պուլաշ կը ներկայացնէ 70.000): Այսինքն Թալեաթ փաշայի իսկ կողմէ պատրաստուած ցանկին համաձայն, տեղահանութենէն վերջ Անատոլիէն մէկ միլիոն հայ պակսած եւ անհետացած է:

Օլար Չալըշլար կ'եզրակացնէ, թէ Թալեաթ փաշայի իսկ խոստովանութեամբ մէկ միլիոն հայեր անհետացած են Օսմանեան հողերուն վրայէն, եւ հարց կու տայ. «Այս հայերուն ի՞նչ եղաւ: Ասկէ վերջ այս կէտին վրայ է միայն որ կրնանք վիճիլ իրար հետ»:

Յարգելի Պրն. վարչապետ, դժբախտաբար թրքական կառավարութիւնը տակաւին չկրցաւ ձեռքագատուիլ թուրք ազգայնապաշտութեան ոգիէն, ինչ որ կը պահանջուի իրմէ Եւրոպական Միութեան կողմէ, որպէսզի Թուրքիան կարենայ մուտք գործել քաղաքակիրթ ժողովուրդներու շարքէն ներս:

«Ռատիքալ»ի մէջ կը կարդանք դարձեալ Սէյֆի Էօնկիտէրի «Իթթիհատական ազգայնապաշտութիւնը այսօր ալ կը տիրապետէ թապու նկատուած բոլոր խնդիրներու դէմ» խորագրով յօդուածը, որուն մէջ հեղինակը կը մեղադրէ իթթիհատականները ու կը պնդէ թէ «իթթիհատականները պատմութենէն ջնջուած ըլլալով հանդերձ, դեռ կը շարունակեն իրենց մտայնութիւնը պարտադրել Թուրքիոյ իշխանութիւններուն»: Եւ այդ մտայնութեան այսօրուան մէկ ներկայացուցիչը կը նկատէ Ա-Գէ-Փէ կուսակցութիւնն ու ձեզ, Պրն. Էրտողան:

Սէյֆի Էօնկիտէր կը մերկացնէ շատերուն անյայտ մնացած ճշմարտութիւններ իթթիհատականներու մասին ու կը յիշեցնէ թէ «Թալեաթ, Էնվեր ու Ճէմալ փաշաներուն հետ միասին, Տոքթ. Նազըմ, Տոքթ. Պէհաւտտին Շաքիր, Ճէմալ Ազմի եւ այլն, Նոյեմբեր 1 1918-ի գիշերը, գերմանական նաւով մը խոյս տուին երկրէն»:

Հարց կու տայ. «Անոնք ինչո՞ւ փախան»: Պատասխանը ինք կու տայ, ըսելով. «Որովհետեւ անոնք բոլորն ալ պատասխանատու էին հայերու դէմ գործադրուած սպանդին: Անոնք հարիւր հազարաւորներու սպանդին

պատասխանատու էին ու գիտէին որ յանցաւոր պիտի հռչակուին. այդ պատճառաւ է որ խոյս տուին երկրէն»: Ու կը շարունակէ. «Համաշխարհային Առաջին պատերազմին պարտուած ուրիշ երկիրներ ալ կային, բայց անոնցմէ ոչ մէկուն ղեկավարը խոյս տուած էր երկրէն: Իթթիհատականները պատերազմի յանցանք գործած էին ու կը գիտակցէին անոր»:

«Մունտրոսի դաշնագրէն վերջ հիմնուած Թէվֆիք փաշայի կառավարութեան առաջին գործը եղաւ 8 Նոյեմբեր 1918-ին Գերմանիայէն պահանջել փախչող իթթիհատականները որ ետ Թուրքիա դրկեն զիրենք, բայց գերմանացիները մերժեցին զայն ընել, ըսելով որ՝ այս անձերը Գերմանիոյ բարեկամներն են, եւ չվերադարձուցին: Անկէ ետք, ատեանին կողմէ ի բացակայութեան մահուան դատապարտուեցան»:

Այս տեղեկութիւնները տալէ ետք, կ'աւելցնէ. «Այս բաները ձեզի դպրոցներուն մէջ չսորվեցուցին, բայց աստոր համար կը կարծէ՞ք որ ասոնք պատմութենէն սրբուեցան...»:

Թուրքերուն Անատոլու մտնելէն ասդին, անոնց հետապնդած միակ նպատակը եղաւ **«թրքացնել բոլոր ոչ թուրքերը»**: Այդ բանը կարենալ յաջողցնելու թրքական եղանակը ուրիշ բան չէր կրնար ըլլալ, եթէ ոչ միայն ճնշումն ու բռնութիւնը: Որով, ժողովուրդէն բոլոր անոնք որոնք տկար դուրս պիտի գային իրենց հաւատքին ու համոզումներուն մէջ, բռնութիւններուն ու ճնշումներուն չդիմանալով տեղի պիտի տային իրենց հաւատքին ու հաւատալիքներուն մէջ՝ ու այդպէս սերունդներու ալ յաջորդութեամբ, ի վերջոյ պիտի կորսուէին:

Իսկ բոլոր անոնք որոնք կարելի պիտի չըլլար փոխել իրենց հաւատքէն եւ իրենց ազգային արմատներէն, այդպիսիները պէտք էր սպաննուէին (ինչպէս վերել կը վկայէր Թիւրքէր Ալքան), եւ կամ պէտք էր քշուէին երկրէն դուրս, ճանապարհի տանջանքներով եւ սպանութիւններով ոչնչացուելու..., որպէսզի կարելի ըլլար «ունենալ Թուրքիոյ այսօրուան ազգային պետութիւնը...»:

Հոս յատկանշական կը գտնենք նաեւ լսել Աթաթիւրքին եւ Իսմէթ Ինէօնիի միջեւ կայացած խօսակցութիւն մը, որը կը կարդանք «Սապահ»-ի էջերէն:

Իսմէթ Ինէօնիին իրիկուն մը կ'այցելէ Աթաթիւրքի ու կ'ըսէ. «Խորհրդարանին մէջ պիտի խօսուի փոքրամասնութիւններու վրայով, եկայ ձեր կարծիքը առնելու»:

Աթաթիւրք կը պատասխանէ. «Այսօր ուշ է, վաղը եկուր»:

Երբ Ինէօնի կը մեկնի, Աթաթիւրք կը հրամայէ որ պարտէզին մէջէն փրցնեն ու նետեն կակաչէն զատ բոլոր ծաղիկները:

Յաջորդ առաւօտ երբ Ինէօնիին դարձեալ կու գայ, զարմանքով կը տեսնէ որ կակաչներէն զատ բոլոր ծաղիկները փրցուած եւ նետուած են:

«Ի՞նչ պատահեցաւ», կը հարցնէ Աթային:

«Փոքրամասնութիւնները բոլոր փրցուցի ու նետեցի», կը պատասխանէ Աթաթիւրք:

Իսմէթ Ինէօնիւն լաւ կը հասկնայ Աթային իրեն տուած դասը:

«Ես ի գուր տեղ չէ որ ըսի «երանի թուրք եմ» ըսողին», կ'աւելցնէ Աթաթիւրք: «Բոլոր անոնք որոնք իրենք զիրենք կը զգան թիւրք, այս երկրին գաւազներն են եւ այդպէս պիտի ըլլայ որքան ատեն որ ես պիտի ապրիմ: Չըլլայ որ փոքրամասնութիւններու վրայով որոշում մը ընդունիր»:

Ահա այսպէս էր Աթաթիւրքին եւս ազգայնապաշտ ոգին, բոլոր ոչ թուրքերու նկատմամբ, ինչ որ ոչինչով կը տարբերէր իթթիհատականներու ազգայնապաշտ ոգիէն:

Յաւալին այն է սակայն, որ այդ նոյն ազգայնապաշտ ոգին տակաւին այսօր ալ կ'իշխէ ներկայ թուրք կառավարութեան խորհրդարանէն ներս, շատ մը պետական անձերու հոգիներուն:

Թէեւ խորհրդարանին մէջ եւս բացառաբար կան անձեր, որոնք հայերէ ներողութիւն խնդրելու կողմնակից են, որոնցմէ մին՝ Տէ-Թէ-Փէցի երեսփոխան Օսման Էօզէլիք, խորհրդարանին մէջ յանկարծ նիւթը փոխելով կը սկսի խօսիլ 1915-ի հայկական կոտորածներու մասին, ու կ'ըսէ. «Ինչ մեղք որ անմեղ հայեր սպաննուեցան», աւելցնելով. «Հայկական կոտորածը ըսուածը իրականացած է Օսմանեան շրջանին Սուլթանին նախաձեռնութեամբ կազմուած ու քիւրտերէ բաղկացեալ Համիտէի խումբերուն կողմէ: Ասոնք շատ անգամ հայերը մէկ կարգի կը շարէին ու անոնց կուրծքերուն վրայ կը կրակէին: Մարտիին բոլոր հայերը սպաննուեցան» եւ այլն:

Այս խօսքերը փոթորիկ կը յառաջացնէին, խորհրդարանի ժողովին մէջ հակամարտութիւններ ստեղծելով: Երբ որ խորհրդարանի նախագահ Նէվ-գատ Փաքտիլ կը միջամտէ ու չ'արտօներ որ աւելի յառաջ երթայ, Էօզէլիք կը պոռայ, «ճշմարտութիւններու մասին բնաւ չխօսի՞նք»:

Կարելի է հարց տալ այստեղ, թէ թուրք ժողովուրդը իր ամբողջ պատմութեան ընթացքին ե՞րբ ունեցած է ճշմարտութիւններ կարենալ խօսելու ազատութիւն...:

Սակայն այսօր, ահա խումբ մը մտաւորականներ որոնք այլեւս չկարենալով դիմանալ իրենց խղճին վրայ ճնշող հայութեան հանդէպ կատարուող այս մեծ անիրաւութեան եւ թրքական պետութեան կողմէ կիրարկուող մեղանշական ուրացումին եւ իրենց լեզուներուն վրայ դրուած փականքին, ի վերջոյ կը պոռթկան, եւ ահա ներողութիւն կը խնդրեն հայերէն, իրենց հանդէպ կատարուած բոլոր անարդարութիւններուն համար: Ի վերջոյ մարդկային առաքինութիւն նկատուող յանգանքի գիտակցութիւնը, ամօթի

զգացումը, զղջումը եւ խոնարհութեամբ ներողութիւն խնդրելու մարդկային վեհանձնութիւնը զարթոնք կ'ապրին Թուրքիոյ մէջ, ինչ որ տարիներ շարունակ արգելափակուած էին...:

Հոս խօսքը կ'ուզեմ տալ այդ ներողութիւն խնդրողներուն, որ իրենք խօսին, թէ ինչո՞ւ կ'ուզեն ներողութիւն խնդել հայերէն:

«Թարաֆ» թերթի 24 Դեկտեմբերի թիւին մէջ Ֆիքրէթ Տողան «Ներողութիւն կը խնդրեմ» խորագրով գրած յօդուածին մէջ կ'ըսէ. «Ինչու ներողութիւն կը խնդրեմ, որովհետեւ ներսէս այդպէս կու գայ»: «Ներողութիւն կը խնդրեմ որպէսզի ուրացողներու միջեւ ես իմ խելքս եւ հոգիս չկորսնցնեմ»: «Ներողութիւն կը խնդրեմ որովհետեւ պետութիւնը ներողութիւն չի խնդրեր: Ներողութիւն կը խնդրեմ որովհետեւ տեսայ Հրանդ Տինքը գետին փռուած վիճակով. ծակած իր կօշիկներով»: «Ինչու ներողութիւն կը խնդեմ»: Ոչ թէ որպէսզի աւելի լաւ մարդ մը ըլլամ, ոչ թէ անոր համար որ ես դժոխքին մէջ կարենամ պուտ մը շունչ առնել ու տալ: Ներողութիւն կը խնդրեմ որովհետեւ իմ հայ եղբայրներուս ցաւերը մեզի չպատմուեցան երբեք դպրոցական նստարաններուն վրայ: Ներողութիւն կը խնդրեմ որովհետեւ փոխանակ աստիկա մեզի սորվեցնելու, մեր ուղեղները լուացին ըսելով այնպիսի անիմաստութիւններ, ինչպիսի էին՝ «Կեանքս թուրք գոյութեան նուէր թող ըլլայ»: «Ներողութիւն կը խնդրեմ անոր համար որ փոխանակ սխալը ընդունելու, խորամանկ գողին նման տանտիրոջմէ աւելի իրաւունք ունենալ պնդեցինք»:

«Ներողութիւն կը խնդրեմ որովհետեւ այլեւս չեմ կրնար դիմանալ բոլոր այն թունաւոր բաղեղներուն, որոնք զիս կը շրջապատեն ամէն կողմէ»:

«Տակաւին ինչու ներողութիւն կը խնդրեմ: Որովհետեւ այս երկրին մէջ ամէն յանցանք անմիջապէս կը մոռցուի: Ես կ'ուզեմ որ այլեւս ոչինչ մոռցուի: Մեզմէ վերջ գալիք սերունդները թող սորվին, գիտնան, իրենց յիշողութեան ամէնէն ընտիր մէջտեղը տեղաւորեն, ասոր համար է որ ներողութիւն կը խնդրեմ: Ներողութիւն կը խնդրեմ որպէսզի սպանդներով ամբաստանուած մարդիկ երեսփոխանի կերպարանքով մեր դիմացը չելլեն»:

«Բատիքալ»ի մէջ ալ Այշէ Գատրօղլու իր «Անոնք որոնք անցեալը չեն յիշեր, կը դատապարտուին անցեալը կրկնելու» խորագրով յօդուածին մէջ ի մէջ այլոց կ'ըսէ. «... բայց այսօր տակաւին Թուրքիոյ նախակրթարաններուն մէջ ամէն ջանք կը վատնուի որպէսզի տղաքը միայն հպարտութիւն զգան իրենց պատմութենէն: Մեր տղաքը բնաւ զաղափար չունին իրենց պատմութեան անցեալին մէջ առկայ ամօթալի էջերուն մասին, կամ այն դէպքերուն մասին, որոնք պէտք չէ կրկնուին»:

Դարձեալ ներողութիւն խնդրելու հարցով Ահմէտ Ինսալի, Պասքըն Օրանի, Ճէնկիզ Աքթարի ու Ալի Պայրամօղլուի կողմէ պատրաստուած պատճենին

մէջ, անոնք ներողութիւն կը խնդրեն հայերէ, 1915-ին պատահածներուն ու այսքան երկար տարիներ անոնց նկատմամբ ցուցաբերուած անտարբերութեան կամ սխալ քարոզչութեան հետեւանքով եւ ի միջի այլոց կ'ըսեն. «Ահաւասիկ ներողութիւն կը խնդրեմ անոր համար որ այս բոլորին մասին բնաւ չխօսուեցաւ: Ներողութիւն կը խնդրեմ անոր համար որ այս նիւթը քողարկուեցաւ»:

Հայերէ ներողութիւն խնդրողները շեշտած են որ հայերու դէմ գործածուած անիրաւութեան մասին բնաւ չխօսուեցաւ: Ժողովուրդը երբեք չիմացաւ ճշմարտութիւնը: Անոնք կ'ըսեն. «Ինչ որ հայերուն գլխուն եկած է, Թուրքիոյ մէջ շատ ծանօթ հարց մը չէ, մոռացումի տրուած հարց մըն է: Թուրքերը այս խնդիրը առաւելաբար լսած են իրենց մեծ հայրերէն: Բայց նիւթը երբեք առարկայական պատմութեան նիւթ չէ դարձած»: Նախաձեռնողներէն Ատալէդ Աղաօղլու այսպէս կը գրէ. «Այստեղ մենք կ'արտայայտենք ամօթահար մնացած ըլլալու մեր զգացումը: Վարչապետ Էրտողան այսպիսի նախադասութիւններ արտասանելու տեղ, թող խօսի թէ ինչու սպաննուեցաւ Հրանդ Տիքը»:

Նոյնպէս Ազատ Պորայի ալ կարծիքը հետեւեալն է. «Յանգանքը անպայման գործելով չէ որ կ'իրականանայ: Մենք այսօր յանգանքին համար չէ այլ ներողութիւն կը խնդրենք այդ յանգանքին հանդէպ աչք գոցած ըլլալու, անտեսելու, ուրախանալու եւ մոռացած ըլլալու պատճառաւ»:

* * *

Ահաւասիկ փաստեր, վկայութիւններ, խոստովանութիւններ, բացայայտումներ, արձանագրութիւններ եւ զոջումնագրեր, ներկայացուած նոյնինքն թուրք պետական եւ մտաւորական անձնաւորութիւններու կողմէ: Ի մասնաւորի Թալէաթ փաշայի ներկայացուցած արձանագրութիւնները, ուր ներկայացուած թիւերուն ճշգրտութեան հետ համաձայն չլլալով հանդերձ – որոնք դիտումնաւոր կերպով նուագեցուած են – մէկ միլիոն հայերու «անհետացումը» երկրէն ինքնին անհերքելի փաստ մըն է:

Բոլոր այս փաստերու, խոստովանութիւններու եւ վկայութիւններու յոյսին տակ երբ տակաւին կը փորձէք ուրանալ բոլոր այս ճշմարտութիւնները, այդ ցոյց կու տայ ձեր ունեցած վախն ու սարսափը հայկական հարցի վրայով: Ի դերեւ չէ որ սկիզբէն ի վեր կղպանքի տակ պահեցիք զայն, արգիլելով ոեւէ մէկուն խօսիլ այդ նիւթի շուրջ: Իսկ հիմա, երբ կը տեսնէք որ ձայն բարձրացնողներուն թիւը հետզհետէ կ'աւելնայ, կը բարկանաք:

«Ինչո՞ւ հիմա այդքան կը զայրանաք, երբ կարգ մը անձեր ներողութիւն

խնդրելու արշաւով ձեզ կը հրաւիրեն այդ ճշմարտութիւններու հետ երես առ երես գալու», հարց կու տայ Մէլֆի Էօնկիւտեր ու կը շարունակէ. «Կրնանք ենթադրել որ ձեր այսքան բարկանալուն պատճառը այս նիւթերուն մասին ունեցած ձեր անգիտութիւնն է: Կը վախնաք որ այս համակարգը ոտքի վրայ պահող կարգ մը թապուները կը սրբուի՞ն եթէ աւելի մեծ թիւով մարդիկ իմանան այս ճշմարտութիւնները»:

Պրն. Վարչապետ,

Գիտենք որ շատ նեղ կացութեան մատնուած էք այս խնդիրներով, այն աստիճան՝ որ ձեր խօսքերով իսկ դուք զձեզ կը հակասէք, երբ կ'ըսէք թէ ցեղասպանութեան եղած ըլլալը կամ ոչ փաստել ու որոշում տալ պատմաբաններու գործն է եւ ոչ քաղաքական մարդոց կամ փարլամենթներու, եւ դուք ձեր կողմէ կ'որոշէք՝ ըսելով, թէ «Թուրքիա այդպիսի խնդիր մը չունի», կը տարուի՞նք մտածել թէ արդեօք դուք պատմաբան մըն էք որ կարող է որոշում տալ թէ «Թուրքիա այդպէս խնդիր մը չունի...»:

Մանաւանդ երբ կը փորձէք դուք ձեզ արդար ցոյց տալ աշխարհին, յայտարարելով թէ թրքական արխիւները բաց են բոլոր այն պատմաբաններուն առջեւ, որոնք կ'ուզեն քննել զանոնք: Թող զան ու քննեն մանրամասն կերպով եւ համոզուին որ մենք անցեալի մէջ որեւէ ցեղասպանութիւն չենք գործած, որեւէ յանցապարտութիւն չունինք, եւլն: Սակայն թոյլ տուէք հարց տալ ձեզի Պրն. Վարչապետ, թէ դուք արդեօք անտեղեալ էք ձեր արխիւներուն *գտնուելն եւ մաքրագործուելն*:

Թէեւ երբեք հաւանական չէ որ անտեղեակ եղած ըլլաք, այդ իսկ պատճառաւ ձեր խօսքերուն անկեղծութիւնը կասկածի տակ կ'առնուին:

Ահա թէ ինչ կը կարդանք «Ռատիքալ»ի մէջ լոյս տեսած Թուրքուլ Քիւրքճիի ստորագրած «Լեզուն կը սկսի խառնշտկել ցաւած ակռան» խորագրով յօդուածէն:

«Շիտակը այն է, որ յայտնի չէ թէ մեծամասնութեան կողմէ դրուած արգելքներու եւ թապուներու մէջ բանտարկուած մօտիկ անցեալի պատմութեան մասին մարդիկ այսօր ինչպէ՞ս պիտի յաջողին ճիշդ տեղեկութիւններ ստանալ: Մնաց որ արդէն եթէ ճիշդ տեղեկութիւնները գոյութիւն ունենային, մեր կառավարութիւնը ինչո՞ւ պիտի պնդէր շարունակ որ թող արխիւները բացուին եւ գիտութեան մարդիկը դէմ դիմաց վիճաբանին»:

Այո, «եթէ երբեք ճիշդ տեղեկութիւնները գոյութիւն ունենային», դուք պիտի կարենայի՞ք յայտարարել աշխարհին, որ ձեր արխիւները բաց են: Որքան ալ ջանաք համոզել աշխարհը ձեր արխիւներուն վրայով, սակայն այդ արխիւներուն «ճիշդ տեղեկութիւններ» չունենալը ինչպէս ձեզի՝ նոյնպէս ալ աշխարհին համար գաղտնիք մը չէ:

Յարգելի Պրն. Վարչապետ, ձեր վարչապետության շրջանին ձեր ունեցած գործունեությանը ամենագնահատելին այն եղաւ, որ կրցաք բացայայտել էրկենեքոնի գաղտնի ծալքերը եւ մութի մէջ աշխատող անձերուն ինքնութիւնը բացայայտեցիք, ինչ որ ձեզ նախորդող կառավարութիւններ ոչ միայն չբացայայտեցին, այլ մինչեւ իսկ ձեռքի տակէն նպաստաւորեցին զիրենք, անոր համար որ բոլոր անբաղձալի նկատուող անձերը (այսինքն ճշմարտութիւններ խօսելու համարձակութիւն ունեցող անձերը) երբ օրինաւոր ճամբաներով չէին կրնար դատապարտել ու լռեցնել՝ էրկենեքոնի ձեռքով կը մաքրագործուէին... յաւիտեան լռութեան մատնուելով...

Եւ այդ «մաքրագործում»ները օրուայ իշխանութիւններուն հաւանութեան կ'արժանանային, քանի որ անոնց «լռել»ը ցանկալի էր նաեւ իշխանութիւններուն համար: Ապա յանցաւորները փնտռելու, գտնելու եւ դատելու աշխատանքներ ու դատավարութիւններ կը կատարուէին տարիներու երկարութեամբ, մինչեւ հարցին մոռցուիլը... եւ վերջ... ձեր կողմէ եղած այս էրկենեքոնի բացայայտումը դրական մէկ երեսն է ձեր գործունեութեան, որ գնահատելի է:

Սակայն Պրն. Վարչապետ, երբ կը փորձէք ձեր այս գործով աշխարհին ներկայանալ որպէս ուղղամիտ եւ արդարամիտ անձ, ինչու հայկական հարցին առնչութեամբ, բոլոր այս փաստերու եւ վկայութիւններու լոյսին տակ, տակաւին կը վարանիք խոստովանիլ ճշմարտութիւնը:

Արդեօք այդ ճշմարտութիւնները ընդունելէ ետք, անոր հետեւանքները դիմագրաւելու վա՞խն է որ կը սարսափեցնէ ձեզ:

Բոլոր այն փաստերը, խոստովանութիւններն ու վկայութիւնները գորոնք կը վկայեն նոյն ինքն խղճամիտ եւ ազնիւ հոգի թուրքեր եւ այդ կատարուած անիրաւութիւններուն համար ներողութիւն կը խնդրեն հայերէ եւ պատրաստուած պատճենին տակն ալ կը ստորագրեն 30 հազար քաղաքացի այլ թուրքեր, արդեօք բաւարար չափով համոզիչ չէ՞ն ցոյց տալու ճշմարտութիւնները, գորոնք տակաւին կ'ուրանաք ու կ'աշխատիք մոռացութեան տալ ուժի գորութեամբ: Ձեր այս դիրքը ցոյց կու տայ որ դուք լիիրաւ իրթիհատական գաղափարներով սնուած վարչապետ մըն էք:

Մեր այս ըսածը փաստելու համար խօսքը կու տանք դարձեալ Սէյֆի Էօնկիտէրին որ կ'ըսէ.- «Ներողութիւն խնդրողները գոնէ իրենց խղճի ձայնին ականջ կու տան, իսկ Էրտողան որո՞ն աւանջ կու տայ: Անշուշտ պատմութեան խորերէն հասնող իրթիհատականներու ձայնին»: Ու կ'աւելցնէ. «Հայերէ ներողութիւն խնդրելու արշաւը ցոյց տուաւ որ իրթիհատականութիւնը կը շարունակէ ապրիլ եւ կը տիրապետէ գաղափարախօսական դաշտէն ներս: Թուրք ազգայնապաշտութիւնը ամբողջովին իրթիհատական է»:

Այո, Պրն. Վարչապետ, այն ազգայնապաշտ ոգին, որմով կ'առաջնորդուիք դուք եւ ձեր կառավարութիւնը, այդ ոգիով ամենեւին կարելի չէ որ արդար դատողութիւն կարենաք ցուցաբերել: Սակայն հարց է թէ արդեօք կողմակից է՞ք արդար դատողութիւն ցուցաբերելու...:

Բայց որքան ատեն կը շարունակէք մնալ տակաւին ձեր այդ ուրացողական դիրքորոշման մէջ, մենք հաստատ կը հաւատանք, որ ճշմարտութիւնը ամենեւին չի թաղուիր... արդարութիւնը չի կորսուիր:

Միլիոնաւոր մեր նահատակներուն սուրբ արիւնը տակաւին «հողին տակէն կը գոռայ», խռովելով մեր բոլորին հոգիները: Իսկ այսօր ահա կը տեսնենք, մեր խռովքին խռովակից ու մեր ցաւին ցաւակից պարկեշտ, ազնիւ ու խղճամիտ թուրքեր, որոնք ոչ միայն չեն ուրանար թուրքին «ամօթալի» անցեալը, այլ եւ կը դատապարտեն ձեզ ձեր մոլեռանդ եւ ազգայնապաշտ կեցուածքին համար:

Այո, ճշմարտութիւնը չի թաղուիր:

Ծանօթ.- Թրքական թերթերուն բոլոր յօդուածներն ու գրութիւնները առնուած են Պոլսոյ «Մարմարա» օրաթերթէն:

«Նոր Օր», 28 Մարտ եւ 4 Ապրիլ 2009

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ ԹՐՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կը մօտենայ Հայոց Յեղասպանության 100-ամեակը եւ աշխարհի այլ եւ այլ երկիրներէն թուրք կառավարութեան ուղղուած կոչերը կը շատնան «Հայոց Յեղասպանութիւնը ընդունելու», «Իր պատմութեան հետ երես առ երես գալու», «վերջ տալու ուրացումի քաղաքականութեան» եւ այլն. մանաւանդ՝ երբ նկատի կ'առնենք որ այս կոչերը ոչ միայն դուրսէն են, այլ եւ ներսէն, նոյնինքն թուրք մտաւորականներէն, որոնք կը քննադատեն իրենց իշխանութիւնները, ճշմարտութեան հետ երես առ երես կարենալ գալու քաջութիւնը չունենալուն համար:

Մինչեւ իսկ Պոլսոյ մէջ ցոյցեր կը կատարուին հայ եւ թուրք յառաջապահ մտաւորականներու եւ ժողովուրդին կողմէ, որոնք պաշտպան կը կանգնին հայերուն, դատապարտելով գործադրուած եւ գործադրուող անիրաւութիւնները:

Այդ բոլորին վրայ կու գայ աւելնալ ֆրանսական կառավարութեան խորհրդարանին «Յեղասպանութեան ժխտումը դատապարտող» որոշման արժարժումը, որ թէւ ֆրանսական սահմանադրութիւնը չվաւերացուց զայն, սակայն հետզհետէ իրագործուող իրականութիւն մը կը նկատուի թուրքին համար:

Այս ամէնը թուրք իշխանութիւններուն քունը փախցնելու աստիճան մտատանջութեան մատնած են՝ եւ զիրենք դրած են երկընտրանքի մը առջեւ:

Ընդունի՞լ ցեղասպանութիւնը, թէ՞ մնալ իրենց յամառութեան մէջ, շարունակելով իրենց ուրացումի քաղաքականութիւնը:

Տակաւին թարմ է մեր յիշողութեան մէջ երկու տարի առաջ բազմահազար պարկեշտ թուրքերուն հայերէն ներողութիւն խնդրելու ժեսթը: Մենք համոզուած ենք, որ անոնք ոչ թէ բազմահազար, այլ միլիոններով կը հաշուեն, որոնք սակայն վախի ազդեցութեան տակ չեն համարձակիր բացայայտել իրենց ինքնութիւնը:

Թուրքիոյ մէջ եղած բոլոր այս բարձրացող ձայներէն ու հայանպաստ ցոյցերէն կարելի է հասկնալ, որ Թուրքիոյ ժողովուրդին ստուար մէկ մասը՝ մանաւանդ բոլոր անոնք որոնց արմատներուն մէջ հայու կամ քրիստոնեայի արիւն կայ, տեղեակ են ճշմարտութեան, որոնք անհատաբար թէ խմբովին,

կը համարձակին մերթ ընդ մերթ ձայն բարձրացնել ճշմարտութիւններ բացայայտելով:

Սակայն դժբախտաբար ժողովուրդին եւ յառաջապահ մտաւորականներու կողմէ բարձրացող բոլոր այս ձայները, թուրք իշխանութիւններուն համար ամենեւին լսելի եւ ընդունելի չլլալով մէկտեղ, լաւ միջոցներ կը նկատուին, զանոնք ծառայեցնելու թրքական փորբականտին, ցոյց տալու աշխարհին թէ իրենք ազատամիտ են եւ հանդուրժող ու յարգող խօսքի ազատութիւնը:

Իսկ միւս կողմէ կը հրահրեն թունդ ազգայնամոլ խումբեր, որոնք հրապարակ կ'իջնեն հակահայ լողունգներով եւ ուղղակի թշնամական տրամադրութիւններով: Անպատկառ եւ նուաստացուցիչ վերտառութիւններով պատառներ պարգաձ՝ «բոլորդ ալ պոռնիկի գաւակներ էք»ի նման գրութիւններով ցոյցեր կը կատարեն:

Եւ այդպիսի ցոյցի մը մէջ ուշագրաւ է տեսնել մասնաւորապէս ներկայութիւնը Թուրքիոյ ներքին գործոց նախարարին...:

Թուրքիոյ մէջ կատարուող որեւէ հայանպաստ երեւոյթ կամ գործողութիւն պարզապէս ցուցադրութեան բնոյթ ունի:

Օրինակ. կը կարդանք «Մարմարա»ի էջերէն թէ «Օրթագիւղի թաղական խորհուրդը շահեցաւ 324 մէթր քառակուսի երկու հողամասերու եւս սեփականատիրութիւնը: Նախապէս շահուած հողամասին հետ կը միացուի, պիտի ստացուի 568 մէթր քառակուսի նոր հողատարածք»:

Օրթագիւղի թաղական խորհուրդը չափազանց ուրախ է դատը շահած ըլլալու իր յաջողութեամբ եւ այդ յաջողութիւնը կը նկատէ «յաղթանակ» մը, որ կրցաւ վերատիրանալ անիրաւօրէն իրմէ խլուած 568 քառակուսի մէթր իր հողատարածքին...:

Մենք շատ լաւ կը հասկնանք Օրթագիւղի թաղական խորհուրդին ուրախութեան պատճառը. մեկնաբանութեան չի կարօտիր: Սակայն այդ ուրախութեամբ միայն չի վերջանար, այլ՝ թաղական խորհուրդը իր ուրախութեան հետ մէկտեղ, պէտք է յայտնէ նախ իր երախտագիտութիւնը, հանդէպ «թուրք բարեխնամ կառավարութեան ազնիւ վերաբերումին, որ իր արդարադատութեամբ իրենց վերադարձուց անցեալին իրենցմէ անիրաւօրէն բռնագրաւած 568 քառակուսի մէթր հողատարածք...»:

Այս ցուցադրութիւնը ականայ հարցեր կը յառաջացնէ մեր մտքերուն մէջ եւ մեզ կը մղէ ականարկ մը նետելու այս «թուրք բարեխնամ կառավարութեան» սեւ անցեալին վրայ, ու կը տարուինք հարց տալ այդ «թուրք բարեխնամ կառավարութեան» թէ, քանի հազար ոչ թէ քառ. մէթր, այլ քառակուսի քիլոմէթր բռնախլեցիր մեզմէ, որոնք ոչ միայն չոր հողատարածքներ, այլ բոլոր

իրենց կառոյցներով եւ հարստութիւններով մէկտեղ եւ այսօր ռեւէ ջանք չէք խնայեր, ամբողջ ձեր պետական մեքենան գործի լծած, գոցելու բերանները բոլոր անոնց, որոնք կը համարձակին արծարծել այդ նիւթը: Իսկ փոխարէնը 568 քառ. մէթր հողատարածք մը վերադարձնելով իր սեփական տիրոջ, այն ալ դատով ու դատաստանով, ձեր մօտ ամենեւին չտեսնուած «արդարամտութիւն» եւ բոլորովին գոյութիւն չունեցող «մեծ հոգիութիւն» կ'ուզէք ցոյց տալ հայ ժողովուրդին եւ համայն աշխարհին, ինքզինքնիդ արդարեւ անաչառ ցոյց տալ փորձելով:

Քանդելէ ետք հազարաւոր մեր եկեղեցիները եւ անոնց սրբաշատ խաչքարերը գիւղական տուններու շինութեան եւ ճանապարհաշինութեան գործածելէ եւ այդ բոլոր եկեղեցիներուն հետքերն անգամ անհետացնելէ ետք, եկեղեցի մը վերանորոգելով (Ախթամարի Ս. Իսաչ եկեղեցին),- որուն գմբէթի խաչը տեղադրելու համար հարկ զգացուեցաւ երեք տարի սպասել՝ կարենալ ստանալու ձեր «բարեհաճ արտօնութիւնը», - եւ անոր մուտքին երկու կողմերը Աթաթուրքի նկարով եւ թրքական դրօշակով զարդարելէ ետք, եկեղեցին ոչ թէ եկեղեցի այլ որպէս թանգարան ներկայացնելով եւ միմիայն թուրիստական շարժումը զօրացնելու եւ եկամուտի աղբիւր ապահովելու նպատակը հետապնդելով եւ տարին մէկ անգամ այդ եկեղեցւոյ մէջ պատարագ մատուցանելու արտօնութիւն «շնորհելով», մեծ շնորհք մը պարգեւող բարերարի մը յաւակնութեամբ, կ'ակնկալէք որ հայութիւնն ու հայ եկեղեցին ամբողջ երախտագիտութիւն յայտնեն ձեզի... «բարեխնամ կառավարութեանդ»:

Մեր մէկուկէ միլիոն ժողովուրդը արքայի ճամբաներուն վրայ ջարդել-սպաննելէ ետք, տակաւին Անատոլոյի մէջ մնացող անոր կրկինէն աւելի հայութիւնն ալ ահ ու սարսափի տակ կը պահէք, ատելութիւն սերմանելով հայերուն հանդէպ, որպէսզի անոնք իրենց վախէն չկարենան համարձակիլ նոյնիսկ իրենց հայութիւնը արտայայտելու, որպէսզի անոնք չհամարձակին նոյնիսկ իրենց զաւակներուն հայու անուն դնելու, որպէսզի անոնք դատապարտուած ըլլան իրենց հայութիւնը մոռնալու եւ թրքանալու: Իսկ Պոլսոյ մէջ Հայաստանէն Թուրքիա գացող հայ ընտանիքներուն զաւակներուն հայ դպրոցներէն ներս ընդունուելու արտօնութիւն «շնորհելով», աշխարհի աչքին կ'ուզէք ցոյց տալ ձեր «մեծ հոգածութիւնը» հանդէպ հայ մանուկներու, որպէսզի անոնք զրկուած չմնան ուսում ստանալէ, թէկուզ հայ դպրոցներէն ներս, սակայն... մասամբ մըն ալ թրքական ուսում...:

Այս տողերը գրած պահուստ յանկարծ յիշեցի, մօտ 60 տարի առաջ Հալէպի մէջ, Մերթ Գիրուզ Իսանգաղեանի մէկ դասախօսութիւնը, ուր յարգելի դասախօսը կը պատմէր իր ունեցած տեսակցութիւնը թուրք եւ եւրոպացի դիւանագէտներուն հետ, որոնք կը խօսէին իրենց «մարդասիրական» գործերուն

վրայով, թե ինչպես հայ որբերը հաւաքելով եւ որբանոցներուն մէջ պահելով, խնամելով ու դաստիարակելով ազատեցին զիրենք ստոյգ մահէ եւ այլն:

Մեր Ֆիլոուզ լսելէ ետք այդ խօսքերը կ'ըսէ. Մեր կրօնքի առաջնորդը Քրիստոս, միշտ առակներով կը խօսէր իր ըսածները լաւագոյնս կարենալ հասկցնելու համար: Թոյլ տուէք որ ես ալ ձեզի պատմեմ առակի ձեւով պատմութիւն մը:

Ժամանակին 3 ընկերներ որսի կ'երթան, օդի շիշերը շալկած, որպէսզի իրենց որսացածները տեղոյն վրայ եփեն եւ օդին խմելով գուարճանան: Սակայն չար բախտէն, այդ օր հագիւ թէ 3 պզտիկ թռչուններ միայն կրնան որսալ, որոնք պիտի չքաւէին յագեցնելու իրենց ստամոքսները: Յանկարծ կը տեսնեն քիչ անդին հաւ մը, որ իր ճուտիկներով միասին կ'արածէր: Կ'որոշեն հաւը մորթել եւ ուտել, որպէսզի չ'ընդհատուի իրենց քէֆը: Այդպէս ալ կ'ընեն: Իսկ խեղճ ճուտիկները ի գուր կը դեգերին իրենց շուրջ ճվճվալով եւ իրենց մայրը փնտռելով: Ճուտիկներուն այդ ճվճոցը նեղութիւն եւ դժգոհութիւն կը պատճառէ իրենց, քանի որ գիտեն թէ ինչ ըրին. գիտեն որ իրենք են պատճառը այդ ճուտիկներուն խեղճութեան. իրենք են որ որբ ձգեցին այդ ճագուկները: Ահա այն ատեն է որ իրենց գուրը կը շարժի եւ կ'ուզեն օգնել այդ ճուտիկներուն, եւ իրենց մօրը միսէն պատառիկներ կը նետեն անոնց որ ուտեն ու դադրին ճվճալէ:

Ահա այսպիսին է ձեր գրթասրտութիւնը. մայրը մորթել՝ եւ որբերը խնամել... եւ այն ալ ինչ նպատակով, եթէ ոչ... բարգաւաճման հաշուոյն ձեր երկրին ու ժողովուրդին...:

Այս պատմութիւնը տակաւին այսօր եւս անթերիօրէն կը կիրարկուի թուրք կառավարութեան կողմէ, ինչպէս ցոյց տուինք վերեւ յիշուած օրինակներով:

Կը կարդանք նաեւ «փոքրամասնական վարժարաններու խնդիրներ» ու հարցով կազմակերպուած մամլոյ հաւաքոյթի մը վրայով, ուր 4 դասախօսներ՝ երկու թուրք, 1 հայ եւ 1 յոյն կը խօսին ուսումնական նոր կանոնագրութեան մասին, ուր կը յայտնեն իրենց գանգատներն ու դժգոհութիւնները:

Կիւրէլ Թիւզիւնի տուած տեղեկութիւններէն կ'իմանանք որ 1913-1914-ին, ամբողջ Թուրքիոյ տարածքին ունեցած ենք 1084 հայկական վարժարաններ: Իսկ այսօր... միայն 16 հատ... այն ալ Պոլսոյ մէջ միայն:

Նուրճան Գայա իր խօսքերուն մէջ կը թուէ բոլոր տեսակի սահմանափակումները, որոնք են՝ «մարդու իրաւունքներու սահմանափակում», «մանկանց իրաւունքներու սահմանափակում», «փոքրամասնական լեզուներու ու մշակոյթներու սահմանափակում»: Ան կ'ըսէ նաեւ, որ «պետութիւնը պէտք է նկատի առնէ այս (փոքրամասնութիւններու) վարժարաններուն առաքելու-

թիւնը, պէտք է նպաստէ, որպէսզի այս վարժարանները աշակերտներուն սորվեցնեն իրենց մայրենի լեզուն»: («Կատարեալ տխմար մտածող մը» պիտի ըսէր վարչապետ Էրտողան):

Հայկական դպրոցներու հարցերով խօսք կ'առնէ նաեւ Եշիզիւղի հայոց վարժարանի հիմնադիր Կարօ Փայլան, ու կը յայտնէ, թէ «փոքրամասնական վարժարաններու մէջ, փոքրամասնական համայնքէն ընտրուած տնօրէններու կողքին, թուրք փոխ տնօրէնները կը գործեն քննիչի պէս, ինչ որ ցոյց կու տայ, թէ տնօրէնի գործելակերպին նկատմամբ վստահութիւն չկայ»:

«Կրթական տնօրէնութեան հետ թղթակցութիւններու մէջ, տնօրէնին ստորագրութիւնը առանձին վաւերական չէ: Պէտք է անպայման փոխ տնօրէնին ստորագրութիւնն ալ ըլլայ տնօրէնի ստորագրութեան կողքին: Մինչդեռ տնօրէնի բացակայութեան, փոխ տնօրէնի մէկ ստորագրութիւնը բաւարար է»:

Այստեղ ալ կացութիւնը պէտք է դիտել յեղաշրջուած կերպով. այսինքն պէտք է հասկնալ, որ թուրք փոխ տնօրէնն է բուն՝ գործօն տնօրէնը, իսկ իսկական տնօրէնը երկրորդական... փոխ տնօրէն:

Ահաւասիկ եւ պատկերը «թուրք բարեխնամ» կառավարութեան «բարեացակամ» սահմանափակումներուն ու սեղմումներուն, հայկական եւ փոքրամասնական դպրոցներուն հանդէպ:

Այս բոլոր պատկերները որ կը ներկայացնենք, կ'ուզենք ցոյց տուած ըլլայ, որ սկիզբէն ի վեր թուրք յաջորդական կառավարութիւններուն հետապնդած նպատակը եղած է միմիայն թրքացնել Թուրքիոյ մէջ ապրող բոլոր հայերն ու քրիստոնեաները, նաեւ բոլոր ոչ թուրք ժողովուրդները, նոյնիսկ եթէ երբեք անոնք իսլամ կրօնքին պատկանած ըլլան:

Միշտ հաւատարիմ՝ Աթաթիւրքեան այն սկզբունքին, որու հիման վրայ պէտք է ըլլայ ամբողջ Թուրքիոյ տարածքին միայն.

մէկ ազգ – թուրք

մէկ լեզու – թրքերէն

մէկ կրօն – իսլամութիւն:

Ահա այս սկզբունքով է որ քալեցին թուրք կառավարութիւնները բոլոր, ու կը քալեն եւ այսօր եւ պիտի քալեն ապագային:

Որով բոլոր այդ «նուէրները» որ կը վերադարձուին իրենց սեփականատէրերուն, որոնք արդէն իսկ անիրաւօրէն խլուած էին իրենցմէ, 568 քառ. մէթր հողատարածք, վերանորոգուած թանգարան-եկեղեցի, հայաստանցի հայ մանուկներուն դպրոց յաճախելու արտօնութիւն (չմոռնանք յիշել որ այդ մանուկները ոչ վկայական եւ ոչ վիճակացոյց ստանալու իրաւունք պիտի ունենան), եւ նման փոքր «նուէրներ», ուրիշ բաներ չեն եթէ ոչ մօրը միսէն մեզի

նետուած պատառիկներ միայն. մանաւանդ երբ նկատի ունենանք որ այդ կալուածները հոն են, Թուրքիոյ մէջ, իրենց ձեռքին տակ...:

Այո. թուրք կառավարութիւնը ինչ տեսակի ալ փոշի փչէ մարդոց աչքերուն, իր սկզբնական նպատակէն պիտի չշեղի երբեք: Եւ այդ սկզբնական նպատակը ուրիշ բան չէ եթէ ոչ հեռացնել, կամ թրքացնել: Երկու պարագային ալ ինքն է շահաւոր:

Թուրք կառավարութիւնը շատ լաւ գիտէ փոքրամասնութիւնները ճնշելու, սեղմելու եւ թուլացնելու եղանակները: Կը գրաւէ իրենց կալուածները, զրկելով զիրենք եկամտի աղբիւրներէ: Կը փակէ վանքեր ու եկեղեցիներ, արգելք ըլլալով նոր եկեղեցականներու պատրաստութեան: Փոխ տնօրէններով հայկական ու քրիստոնէական դպրոցները իր հակակշռին տակ կը պահէ: Իսկ ամենէն ստորին միջոցը որ կը կիրարկէ ատելութիւն սերմանելն է հայերուն հանդէպ: Ուղղակի թշնամանք եթէ կ'ուզէք, որպէսզի անոնք նուաստացած զգան իրենք զիրենք հանրութեան մէջ եւ չհամարձակին իրենց ազգութեան վրայով ոչ մտածելու եւ ոչ ալ խօսելու եւ այդ նուաստացումներուն մէջ ընկնուած՝ վերջնականապէս հրաժարին իրենց ազգութիւնը կարենալ շարունակելու հաւանականութենէն եւ վերջ տան իրենց ազգային գոյապայքարին:

Ահաւասիկ սկիզբէն ի վեր եղած՝ թուրքին յետին միտքը հայերուն հանդէպ:

Եթէ տակաւին Պոլսոյ մէջ մանրուք ցուցադրութիւններ կը կատարուին, որոնց վրայով վերել անդրադարձանք, պարզապէս անոր համար է, որ Պոլիսը քրիստոնէայ աշխարհի աչքին տեսանելի Թուրքիան կը ներկայացնէ: Իսկ կացութիւնը բոլորովին տարբեր է Անատոլիոյ մէջ, որ մի քիչ աչքէ հեռու կը նկատուի:

Կ'ուզենք օրինակներով խօսիլ:

«Ենի Շաֆաք» թերթին մէջ լոյս տեսած հետեւեալ պատմութիւնը փաստացի վկայութիւններէն մին կը նկատուի մեր ըսածներուն:

Ուսուցիչ մը կը նկատէ որ դպրոցի զանազան դասարաններու աշակերտներուն նիւթի մը շուրջ դասախօսութիւններ կու տան: Երբ կարգը կու գայ իր դասարանին, ինքն ալ կ'երթայ լսելու թէ ինչի մասին է այդ դասախօսութիւնը ու կը սարսափի...:

Ահա թէ ինչպէս կը նկարագրէ ուսուցիչը այդ դասախօսութիւնը.

«Պատմութեան ուսուցիչը, որ դասախօսութիւն կ'ընէր, մէկ սրունքը միւսին վրայ նետած, մէկ ձեռքը աթոռին ետեւի կողմը դրած, ցոյց կու տար Խօճալուի սպանդին վերաբերեալ նկարներ, որոնք որեւէ գրաքննութենէ չէին անցած: Հազիւ 2 վայրկեան կրնայ հանդուրժել այդ նկարներուն. երեխաներ որոնց աչքերը փորուած էին, յդի կիներ որոնց սրունքները կտրուած էին եւ

այլն:

Անմիջապես կ'երթայ տնօրենին մօտ հարց տալու թե լուր ունե՞ր այդ դասախօսություններին: Այո, լուր ունեւ: «Տղաքը պետք է սորվին մեր մօտիկ անցեալի պատմութիւնը», ըսած էր ան ուսուցչին: Ուսուցիչը առարկած էր դիտել տալով, որ այս պատկերները վնաս կը պատճառեն 16-17 տարեկան աշակերտներուն հոգեբանութեան: Բայց տնօրէնը պատասխանած էր. «Ես որեւէ անպատեհութիւն չեմ տեսներ: Այս տղոց ցոյց չտանք այս պատկերներ, որպէսզի վաղը անոնք հաւաքուին եւ «բոլորս ալ հայ ենք» պոռան: Այո՞»:

Ուսուցիչը առարկած էր դարձեալ ըսելով, «Հօճամ, ուրեմն ես ալ Տէրսիմի սպանդին պատկերները բերեմ ու ցուցադրեմ, ուրիշ ուսուցիչ մըն ալ Մարաշի սպանդին նկարները թող բերէ, մեր մեր մօտիկ անցեալի այս պատմութիւններուն մասին ալ թող իմանան»:

Տնօրէնը կը յանդիմանէ ուսուցչին. «Դուն այս գործը յամառութեան նիւթ դարձնել կ'ուզես» ըսելով:

Ուսուցիչը տեսնելով որ անիմաստ էր այսպիսի մէկու մը հետ խօսիլը, կ'երթայ դէպի այն սենեակը ուր կը գտնուէին դպրոցի հոգեբանութեան առաջնորդութեան կեդրոնի ուսուցիչները: Անոնց եւս կը գանգատի բայց հոնկէ ալ նոյն պատասխանը կը ստանայ. «ասանկ խնդրի մը մէջ չեն ուզեր որ մարդիկ մեր դիմացը կենան», կ'ըսեն իրեն: Եւ երբ ուսուցիչը մտահոգութիւն կը յայտնէ աշակերտներուն հոգեկան առողջութեան մասին, այդ հեղինակաւոր ուսուցիչները սպառնալիք մը կ'ուղղեն իրեն...:

Ուսուցիչը անտեսելով իրեն ուղղուած սպառնալիքը, այս նամակը կ'ուղարկէ «Ենի Շաֆաք» թերթի քրոնիկագիր Հիլալ Գափլանին, որ իր կարգին նամակը հրապարակելէ ետք, զայն կը վերջացնէ հետեւեալ տողերով, «Այս գրութեան հրատարակութենէն ետք, եթէ այդ ուսուցչին գլխուն չար բան մը պատահի, այն ատեն անվարան կերպով պիտի հրապարակեմ դպրոցին եւ այդ ուսուցիչներուն անունները»:

Կրնաք պատկերացնել որ Անատոլուի դպրոցներուն մէջ երբ այս ձեւով եւ այս ոգիով կը դաստիարակեն 16-17 տարեկան աշակերտները, այդ տղաքը իրենց կեանքին մէջ ինչպիսի ատելավառ ու ռիսերիմ դիրք պիտի ունենան տեղւոյն հայերուն հանդէպ:

Կրնաք պատկերացնել նաեւ հոն ապրող հայերու հոգեվիճակը, այսպէս դաստիարակուող աշակերտներու միջավայրին մէջ:

Ահաւասիկ ուրիշ ուսուցիչ մը եւս, որ «Իմ մայրս հայ է» խորագրով նամակ մը ուղարկած է Հիլալ Գափլանին, որ լոյս կը տեսնէ դարձեալ «Ենի Շաֆաք» թերթին մէջ:

Ուսուցիչը կը պատմէ թէ ինչպէս 11-րդ դասարանի իր աշակերտներէն

մէկը առտուները յաճախ կ'ուշանայ: Երբ պատճառը կը հարցնէ, աշակերտը կը պատրուակէ ըսելով թէ անձնական հարց է ու կը խուսափի պատասխանէ: Սակայն ուսուցչին պնդումներուն վրայ աշակերտը կը խոստովանի, որ իր հայրն ու մայրը բաժնուած ըլլալուն, ինք յաճախ կը ստիպուի գիշերել իր մեծ հօրը տունը: Սակայն ինչու չի գիշերեր իր հօրը կամ մօրը տունը, այլ կը գիշերէ իր մեծ հօրը տունը հարցումին, աշակերտը կը պատասխանէ, որ իր մայրը Փրանսա գնաց եւ հոն կ'ապրի: Եւ երբ ուսուցիչը կը հետաքրքրուի թէ ինչու իր մայրը Փրանսա կ'ապրի, աշակերտը կաս կարմիր կը կտրի եւ չ'ուզեր պատասխանել. սակայն ուսուցչին պնդումին վրայ վախով ու դողով կը պատասխանէ. «որովհետեւ իմ մայրս հայ է»:

Աշակերտը կ'աղաչէ ուսուցչին որ իր դասընկերներուն բան մը չըսէ:

Ահաւասիկ նմոյշ մը Անատոլուի մէջ ապրող ոչ թէ հայու մը, այլ կիսահայու մը հոգեվիճակէն, որ կը ցոլացնէ Անատոլուի մէջ ապրող բոլոր հայերուն հոգեվիճակը, որոնք չեն համարձակիր նոյնիսկ իրենց հայութիւնը դաւանիլ, որոնք չեն կրնար իրենց այդ հարազատ հողերուն վրայ ազատ շնչել, որոնք զրկուած են հայ դպրոցէ, հայ եկեղեցիէ, հայերէն կարենալ աղօթելէ, հայօրէն կարենալ ապրելէ, միշտ ճնշումի տակ եւ ատելութեան նշաւակ դարձած:

Արդեօք կա՞ն տակաւին մարդիկ, որոնք կը հաւատան որ թուրք իշխանութիւններ օր մը կրնան ունենալ մարդկայնական զգացումը (humanistic), կամ մարդկայնութիւն (humanity) եւ մտնեն քաղաքակիրթ ազգերու շարքին մէջ, երբ տեսանելին այն է, որ երէկ եւ այսօր եւ շատ հաւանաբար նաեւ ապագային, թուրք կառավարութիւններ մնալով միշտ հաւատարիմ իրենց թրքաբարոյ սկզբունքին՝ անշեղօրէն պիտի շարունակեն իրենց թրքական գործելակերպն ու թրքական դաստիարակութիւնը:

«Նոր Կեանք», 26 Ապրիլ, 3 Մայիս եւ 10 Մայիս 2012

ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱՊԱՇՏ ՓՐՕՖԷՍՕՐՆԵՐՆ ՈՒ ԱՆՈՆՅ ՊՈՉԱՒՈՐ ՍՈՒՏԵՐԸ... ԵՒ ԱՅԴ ՍՈՒՏԵՐԸ ՄԵՐԿԱՅՆՈՂ ՊԱՐԿԵՇՆ... ԹՈՒՐՔ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

Եթե աշխարհի վրայ նոր մրցանակ մը հաստատուի ստախոսության եւ գեղծումի համար, որ ընտրուի, բոլոր պետական ղեկավարներու, գրողներու եւ ուսուցիչներու մէջ, մեծագոյն սուտասանն ու գեղծարարը, եւ դեմ՝ հարց դրուի թէ ով կրնայ առաջնութիւնը շահիլ Պատմութիւնը նենգափոխելու, իրականութիւնը խեղաթիւրելու ու կեղծելու մարզէն ներս – թուրք ազգայնապաշտ գործիչներն ու երեւակայածին հեքիաթներ հնարողներ ամենեւին իրենց առաջնային տեղն պիտի չգիջին ուրիշներուն: Յերիւրելն ու չարափոխելը պիտի նկատեն իրենց անխզելի սեփականութիւնը: Առաջնութեան շքանշանը պահելով իրենց կուրծքին...:

Կարծէք իրենց կեանքի նպատակ դարձուցած ըլլան կեղծելն ու ստելը, ի մասնաւորի՝ Հայոց ցեղասպանութեան ուրացումի խնդրի մէջ, ուր ոգի ի բոլին կ'աշխատին իրար գերազանցել իրենց յատուկ եղող այդ «արուեստ»ի կալուածէն ներս:

Հարց է սակայն, թէ անոնք արդեօք իսկապէս կը հաւատա՞ն իրենց խօսած սուտերուն:

Կամ արդեօք կը գիտակցի՞ն որ իրենք դիտումնաւոր կերպով կը ստեն որ խեղաթիւրեն ճշմարտութիւնը:

Եւ դեմ՝ կը կարծե՞ն անոնք որ երբ, իրենց «տիտղոս»ին յենելով ու ամենայն յանդգնութեամբ ու համոզումով կը ստեն, մարդիկ պիտի հաւատան իրենց խօսքերուն՝ նկատի առած իրենց «փրօֆէսօր»ի տիտղոսը, քանի որ իրենք (որպէս թէ) մեծահամբաւ են եւ ոչ թէ... հասարակ մահկանացու:

Հաւանական է, որ թրքական կառավարութիւնը անտեսելով, որ ցեղասպանութեան պնդումները հետզհետէ աւելի թափ կը ստանան աշխարհի տարածքին, նոր հրահանգ մը տուած ըլլան Թուրքիոյ բոլոր դպրոցներու եւ համալսարաններու փրօֆէսօրներուն եւ ուսուցիչներուն, որ ա՛լ աւելի հարուածային աշխատանք տանին կրթական հաստատութիւններէ ներս, ժխտելու համար ցեղասպանութեան մասին եղած պնդումները եւ պաշտպա-

ներու պետական անիրաւ, բացայայտ կեղծիք եղող տեսակետը:

Մեր այս վարկածը կրնանք հիմնաւորել տեսնելով Թուրքիոյ ամբողջ տարածքին գործող համալսարանները, որոնք մէկը միւսին ետեւէն «գիտա-
ժողովներ» եւ դասախօսութիւններ կը կազմակերպեն պատմութիւնը խեղա-
թիւրելու, կեղծը իրականի պէս ներկայացնելու եւ ի մասնաւորի՝ դպրոցներու
եւ համալսարաններու ուսանողներուն մտքերը թունաւորելու, որ անոնց
սրտերուն մէջ սերմանեն ատելութիւն հանդէպ հայոց:

Ահաւասիկ, այդ ժողովներու եւ դասախօսութիւններու նմոյշներէն մէկ
քանին: Չանոնք կը ներկայացնենք այստեղ որ ընթերցողը կարենայ գա-
ղափար մը կազմել թուրք ազգայնապաշտ փրօֆէսորներու վարքին ու
որակին վրայ: Մանաւանդ՝ նկարագրին:

Չանդըրը-ի Գարաթէքին համալսարանին մէջ գիտաժողով մը տեղի
կ'ունենայ «Ապագայի Ակադեմականներու հաւաքականութիւն» կոչուած
խմբակի մը կողմէ, ուր համալսարանի դասախօսներէն մին՝ *Տոշէնթ Կալիպ
Չաղ*, կը խօսի նիւթ ունենալով «Հայերուն Անատոլիոյ գալու մասին»:

Ա՛ն քեզի պատմութիւն: Թուրք Փրօֆէսորը ինքզինք եւ իրենները կը
նկատէ Անատոլիոյ դարաւոր եւ բնիկ բնակիչ իսկ իր ու նմաններուն այդ
հողերու վրայ ունեցած կարճատեւ կեցութեան (ըստ իրենց՝ հազարաւոր
տարիներու) պատմութեան երեւակայական թռիչք տալով, տարածքին բուն
տանուտէրը եղող հայը կը նկատէ եկուոր ժողովուրդ...:

Հոս, նախքան որ մենք փորձենք յիշեցնել այդ փրօֆէսորին որ ինք
բացարձակ սխալանքի մէջ է, որ ինք ու նմանները դեռ պէտք է շատ սերտեն
Պատմութիւնը որ ծանօթանան իրականութեան, գիտակցի որ իր խօսքերը
ամենեւին գուրկ են հիմք ունենալէ... եւ այլն, թուրք պատմաբան եւ գրող Այշէ
Հիւր, արդէն իսկ մեզ կանխելով... «Առասպել» կը նկատէ այդպիսի պատմա-
բաններու օղային վարկածներն ու անհիմն պնդումները, աւելի ճիշդ՝ ցնդա-
բանութիւնները:

Իսկ շատ աւելի խօսուոյն է Թիւրքէր Ալքան-ի յօդուածը՝ «Ռատիքալ»ի մէջ,
որ «Ի՞նչ եղան այն միլիոնաւոր մարդիկը որոնք Անատոլիոյ մէջ կ'ապրէին,
թուրքերուն հոն գալէն առաջ» խորագիրը կը կրէ:

Թիւրքէր նախ կը հաստատէ, որ «Թիւրքերն էին ետքէն Անատոլիոյ եկող-
ները, երբ հայերը արդէն իսկ, երկար դարերէ ի վեր, կ'ապրէին այնտեղ: Ապա
ան կը գրէ այսպէս.- «Միջին Ասիայէն Անատոլիոյ եկած մեր պապերուն թիւը
կը գնահատուի շուրջ կէս միլիոն: Այդ շրջանի հաղորդակցութեանց կարելիու-
թիւններու լոյսին տակ, անկարելի էր որ ասկէ աւելի բարձր թիւով թուրքեր
եկած ու տեղաւորուած ըլլային Անատոլիոյ մէջ: Լա՛ւ: Այս մէկը թողունք
մէկդի: Եւ հարց տանք, թէ մինչ այդ նոյն հողատարածքին վրայ ապրող

միլիոնաւոր մարդիկը ինչ եղան, շոգիանալով անհետացա՞ն»:

Եւ կ'աւելցնէ, «Այո, ո՛ր գացին այդ մարդիկը»:

ՈՒ Կ'ԵԶՐԱԿԱՅՆԷ.- «ԵՐԿՈՒ ՀԱԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՅ... ԿԱՄ ԱՅՆ Է, ՈՐ ՍՈՒՐԷ ԱՆՑՈՒՑԻՔ ՈՒ ՍՊԱՆՆԵՑԻՔ ԱՅՆ ՄԻԼԻՈՆԱԲՈՐ ՄԱՐԴԻԿԸ ԶՈՐ ԳՏԱԾ ԷԻՆՔ ԱՆԱՏՈՒՈՒԻ ՄԷՋ...

... ԵՒ ԿԱՄ ԱՅՆ՝ ՈՐ ԱՆԱՏՈՒՈՒԻ ՄԷՋ ԱՊՐՈՂ ԲՈՒՈՐ ՀԱՅԵՐԸ, ՅՈՅՆԵՐԸ ԵՒ ԱՐԱԲՆԵՐԸ ՄԻԱԽԱՌՆՈՒԵՑԱՆ ԱՍԻԱՅԷՆ ԵԿԱԾ ԹՈՒՐԶԵՐՈՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ԿԱԶՄԱԽՕՍԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՍ-ՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՑՈՒՑԱԴՐՈՂ ՆՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԸ ՍՏԵՂԾԵՑԻՆ: ՍԱ ՊԱՀՈՒՆ, ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ ԱՊՐՈՂ ԲՈՒՈՐ ՄԱՐԴՈՑ ՆԱԽՆԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ, ՀԱՅԵՐ ԱԼ ԿԱՆ, ՅՈՅՆԵՐ ԱԼ»:

Ահաւասիկ ճշմարտութիւնը, որ պարկեշտ եւ ուղղամիտ թուրքի խոստովանութիւն է, որ կը խօսի առանց կեղծելու եւ առանց ստելու:

Այո, կա՛յ երկու հաւանականութիւն, որուն առաջինը աւելի շատ իրականութեան կը համապատասխանէ, քան երկրորդը. քանի որ երկրորդին պարագային, եթէ երբեք այդ միլիոնաւոր Հայերը, Յոյները, Արաբները խառնուելով Միջին Ասիայէն եկած կէս միլիոն թուրքերուն հետ, նոր ժողովուրդ մը ստեղծեցին, նկատի պէտք է առնել, որ այդ խառնուող ժողովուրդներուն սակաւ մասը այդ կէս միլիոն թուրքերն էին: Ինչպէս կարելի է որ այդ բոլորին խառնուրդէն յառաջ եկած ըլլայ թուրք ժողովուրդ մը, մեծամասնութիւն կազմող Հայ կամ Յոյն ժողովուրդի յառաջացումին տեղ...: Քիչը շատ կը դառնա՛յ...:

Սա ինքնին անհերքելի փաստն է առաջին հաւանականութեան, որ Միջին Ասիայէն եկող այդ թուրքերը, իրենց բնագոյին յատուկ վայրագութիւններով, ջարդելով, կոտորելով ու քանդելով, ահ ու սարսափ տարածելով ամէնուրեք, հոն ապրող միլիոնաւոր խաղաղ բնակիչները ոչնչացուցին: Մնացածին վրայ ալ բռնութիւն եւ ճնշում բանեցնելով՝թրքացուցին եւ այդպիսով տիրացան այդ հողերուն:

Ահաւասիկ ա՛յս է բուն ճշմարտութիւնը:

Իսկ այսօր, երբ թուրք պատմաբաններ սուտով ու կեղծիքով շաղուած նոր պատմութիւն կը հիւսեն, ուր կը թուեն Անատոլիոյ մէջ ապրած ժողովուրդներուն անունները, ՀՈՆ ՉԵՆՔ ՏԵՄՆԵՐ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆ ԱՆԳԱՄ ՀԱՅ ԱՆՈՒՆԻՆ...: ՈՐՊԷՍ ԹԷ, ՀԱՅԸ ԱՄԵՆԵԻԻՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱԾ ՉԸԼԼԱՐ ԻՐ... ԴԱՐԱԲՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՂՈՂ ԱՐԵԲՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԸՍԵՆՔ, ԱՆԱՏՈՒԱՅԻ ՄԷՋ...: Ըստ թրքական նոր եւ շինծու պատմութեան:

Իսկ ամենածիծաղելիւն այն է, որ մեր երանելի Փրօֆէսորը ինքզինք Անատոլիայի հազարաւոր տարիներու բնակիչ եւ անոր տէրն ու տիրականը

նկատելի ետք, ՀԱՅԵՐԸ ԿԸ ՍԵՊԷ ԵԿՈՒՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ:

* * *

Աֆիոնի Գոճաթէփէ համալսարանին մէջ եւս տեղի կ'ունենայ գիտա-
ժողով մը «Հայոց ցեղասպանութեան մասին», ուր դասախօսներէն մին՝ Տօթթ.
Կիւրսոյ Շահին մեզի կը հրամցնէ նորութիւն մը մեր պատմութեան վերա-
բերող, մեր ուշադրութիւնը հրաւիրելով Մխիթար Մեքաստացիի վրայ, «որ...
չդիմանալով հայ լուսաւորչականներու ճնշումին, ստիպուեցաւ երթալ
Վենետիկ, ուր իրեն տրամադրուեցաւ Սուրբ Ղազար անուն կղզի մը»: «... Ան
իր 10-15 ուսանողներու հետ հիմնեց իր «Աղանդ»ը»:

Ապա Տօթթ. Կիւրսոյ կ'սկնարկէ Մխիթարի «Ազգայնապաշտ գաղափա-
րախօսութեան շեշտելով, որ անոր մահէն ետք ալ, նոյն ուսմունքը յառաջ
տարուած է անոր ուսանողներուն կողմէ»: «... Մխիթարեանները իրենց
նպաստը բերած են այն կործանարար ու քանդիչ աշխատանքին, զորս հայերը
ցոյց տալ սկսած են Օսմանցիներուն դէմ եւ կազմակերպիչը դարձած քա-
ղաքական գործունէութեան»:

Հարց է, թէ իրաւական ինչ հիմք ունի այս պատմութիւնը:

Գիտենք սակայն, որ Պոլսահայ մտաւորականութեան մէջ նկատելի թիւ
մը կը կազմէին Մխիթարեան վարժարանէն շրջանաւարտ հայագէտ գործիչ-
ները, որոնք եռանդագին աշխատանք տարած են գրական գետնի վրայ,
հայերէն թերթեր ու գրքեր հրատարակելով եւ մշակութային տարրեր տեսակի
ձեռնարկներ կազմակերպելով:

Արդեօք զանոնք որպէս Մխիթարեանական ազգայնապաշտներ կասկա-
ծելի ցոյց տալու փոքր մըն է կատարածը...:

* * *

Յաջորդ դասախօսը՝ Փրօֆէսոր Սատրըք Սարըսաման կը խօսի տեղա-
հանութեան մասին: Ան կը հաստատէ որ «Տեղահանութեան օրէնքը հանուե-
ցաւ նախարարաց խորհուրդի որոշումով»: Ապա տեղահանութիւնը կը
ներկայացնէ սապէս: Ընթերցողը թո՛ղ ճաշակէ...

«ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԿԱԹՈՒԼԻԿ ԵՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ
ՀԱՅԵՐԸ ՈՐՈՆՔ ԵՒՍ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԷԻՆ, ԱԻԵԼԻ
ՎԵՐՁԸ ԵՏ ԿԱՆՉՈՒԵՑԱՆ ՈՒ ՉԵՐԾ ԿԱՅՈՒՑՈՒԵՑԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒ-
ԹԵՆԷ: ՄԻԱՅՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ ԳԱՅԻՆ ԱՔՍՈՐԻ: ՉՔԱ-
ԻՈՐ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՍ-

ՏԱՏՈՒԵՑԱՒ: ԱՆՈՆՑ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԲՈՐ ՊԻՏՃԷՆԵՐ ՅԱՏ-
ԿԱՑՈՒԵՑԱՆ. ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՔ ԱՌՆՈՒԵՑԱՆ ՈՐՊԷՍՉԻ ԱՆՈՆՑ
ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐՈՒԻ ԱՊԱՀՈՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ:
ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԲԵՔ ՉՄՏԱՒ ԱՅՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻՆ ՄԷՋ. ԹԷ...
«ԻՆՉ Կ՝ՈՒՉԵՆ ԸԼԼԱՆ. ԵԹԷ ՊԻՏԻ ՄԵՌՆԻՆ՝ ԹՈՂ ՄԵՌՆԻՆ»:

«ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԹՈՒՐՔԵՐՆ ԵՆ, ՈՐ ՅԵՂԱՍՊԱՆՈՒ-
ԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱՆ» ԵՒ ԱՅԼՆ:

Ահաւասիկ կատարեալ ջայլամ Փրօֆէսօր մը, որ իր գլուխը թաղած
աւագին մէջ, երբ չի տեսներ իր շուրջը գտնուող ռեւէ մէկը, ուրեմն կը կարծէ
որ ոչ ոք կը տեսնէ զինք...: Ան կը կարծէ, նաեւ որ ինքն է միակ գիտակը
աշխարհի մէջ. իրմէ ուրիշ ոչ ոք գիտէ իրականութիւնը. որով իր ըսածները
որպէս բացարձակ ճշմարտութիւն պէտք է ընդունուին:

Այս աստիճանի «վրան բաց» սուտ մը, միայն ազգայնապաշտ թուրք
փրօֆէսօր մը կրնայ խօսիլ...:

Այո. թէւ իրական ջայլամամիտ մըն է ան, սակայն... ի վերջոյ փրօֆէսօր
մըն է...: Չմոռնանք՝ թուրք փրօֆէսօր մը...:

* * *

Նմանօրինակ արտայայտութիւն մը կ'ունենայ նաեւ Չանգըրըի Գարա-
թէքին համալսարանի դասախօս, Տօշէնք Կալիպ Չադ, որ կը կրկնէ Պետու-
թեան այն պաշտօնական տեսակէտը, թէ «Հայերու տեղահանութեան ընթաց-
քին, բոլոր միջոցները առնուած էին տեղահանուածներուն ապահովութեան
ու բարօրութեան համար: Տեղահանութեան օրէնքը արդէն ինքնին կը փաս-
տէ, թէ հայկական հարցին համար կարելի չէ գործածել ցեղասպանութիւն
բառը, որովհետեւ տեղահանութեան օրէնքը ապահովութեան տակ կ'առնէր
տեղահանուած հայերուն նիւթական կարիքներն ու կեանքի անվտանգու-
թիւնը»: Ան կը պնդէր նաեւ, որ «տեղահանութեան ենթարկուած չեն կիները,
մանուկներն եւ զինուորները...»:

Այսպիսի Փրօֆէսօրներ իրենց համար ստելն ու կեղծելը սկզբունք
դարձուցած են: Այդ բոլորը չենք կրնար մէկ առ մէկ ներկայացնել այստեղ:
Սակայն իրենց խելացնոր արտայայտութիւններուն պատասխանները կը
գտնենք, նոյնինքն՝ թուրք արդարամիտ ու պարկէշտ պատմաբաններու ու
գրողներու մօտ, որոնցմէ մէկ քանին կը յիշենք այստեղ, որ ցոյց տանք, թէ
ինչպէս անոնք կը ձաղկեն այդպիսի անլուրջ փրօֆէսօրներուն սուտերն ու
կեղծիքները:

«Րատիքալ»ի մէջ Էրթողրուլ Բիւրքնիւ իր ստորագրած «Լեզուն կը սկսի

խառնշտկել ցաւած ակռան» յօդուածին մէջ, ի միջի այլոց կը գրէ.- «... Անոնք [հայերը] փրցուեցան այն հողերէն ուր անոնք կ'ապրէին թուրքերուն Անատոլու գալէն առաջ: Փոքրի՜կ աղետ էր, երբ անոնք որկուեցան դէպի Սուրիոյ անապատները եւ սպաննուեցան զանգուածաբար, կամ զոհ գացին հիւանդութեան:

Տասնեակ հազարաւոր կիներ, երախաներ կամ պարզ արհեստաւորներ, որոնք Հնչակ կամ Դաշնակ Կոմիտէի անդամներ չէին, ենթարկուեցան այսպիսի վերաբերումի մը, կորսնցուցին իրենց հարստութիւնն ու կալուածները, նաեւ իրենց մշակոյթներն ու բարքերը. արմատէն սրբուեցաւ անոնց մշակոյթը: Այս բոլոր ճշմարտութիւնները պէտք է իւրացնենք»:

* * *

Դարձեալ «Ռատիքալ»ի մէջ կը կարդանք, Ա.Գ.Փ.Է կուսակցութեան հիմնադիրներէն Իսմէթ Ուլճա-ի սրտաբաց խօսքերը:

Ուլճա իր պետական երեսփոխանի հանգամանքով, ներողութիւն կը խնդրէ հայերէն ըսելով, որ «Անոնց ցաւը մեր ցաւն է»:

Ան կը խոստովանի ահաւորութիւնը տեղահանութեան ենթարկուած ժողովուրդին տառապանքներուն եւ սպանութիւններուն, ու կը հաստատէ, որ «1915-ին ՊԱՏԱՀԵՑԱԴ ԲԱՆ ՍԸ, ՈՐ ԱՅՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱԶԱՐ ՏԱՐՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՉԷՐ ՊԱՏԱՀԱԾ»:

Ան ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ ՆԱԵՒ ԸՍԵԼՈՎ.- ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ ԱԼ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ Է, ԲԱՅՑ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՓՈԽԱԴՐՈՒԷԻՆ ԱՌԱՆՑ ՈՐ ՆՈՅՆԻՍԿ ԱՆՈՆՑ ՔԻԹԸ ԱՐԻՒՆԻ: ԻՍԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԱՅԴՊԷՍ ԵՂԱՐ: ՈՉ»:

Սակայն Ուլճա իր այս անկեղծ ու ճշմարիտ խօսակցութեան հետ մէկտեղ, կը խուսափի «ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» բառը գործածելէ ու կը փորձէ «մի քիչ» մեղմացնել զայն եւ «ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ» փոխարէն զայն կը կոչէ «ՏԵՂԱՔՍՈՐ»:

Ուլճա իր այս նորաստեղծ բառով կը խորհի փրկուած ըլլալ «ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»ի ճնշիչ, ահաւոր մեղադրանքէն, առանց անդրադառնալու սակայն, որ նոյնիսկ այդքանով ինք արդէն իսկ ընդունած կ'ըլլայ ցեղասպանութիւնը, քանի որ «ՏԵՂԱՔՍՈՐ»ը, ըստ Մ.Ա.Կ.ի ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԻՆ, ԿԸ ՆՇԱՆԱԿԷ՝ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ:

Ռաֆայէ Լէմբին, որ «ցեղասպանութիւն» բառը ստեղծեց, նկատի ունէր

հայկական Ցեղասպանությունը եւ հրեական Ողջակիզումը:

Այն ինչ, որ Թուրքիա «Տեղահանություն», կ'անուանէ, Լեմբինի համաձայն այդ մէկը արդէն Ցեղասպանությունն է, «Քանի որ ցեղասպանութեան վարկածի երկրորդ յօդուածին համաձայն, խմբակի մը մասնակի կամ ամբողջական տեղափոխությունը, եթէ վտանգի կը մատնէ այդ խմբակին ֆիզիքական գոյությունը, ատիկա արդէն ցեղասպանություն կը նշանակէ»: Այսինքն, Մ.Ա.Կ.ի ցեղասպանութեան վերաբերեալ պատժական օրինագիրը խմբագրուած է 1915-ի պատահածներուն վրայ:

Թուրք իշխանաւորներուն մեծագոյն մտահոգություններէն մին դարձած է այսօր Հայոց ցեղասպանութեան հարցը: Որքան ալ աշխատանք տանին զայն մոռացութեան մատնելու, ընդհակառակը՝ կը ստացուի իրենց ուզածին ճիշդ հակառակը: Կարծէք այս բոլորը գիրենք աւելի ջղազրգիւ դարձուցած ըլլան, դրդելով գիրենք իրենց ուրացումի ռազմավարութեան մէջ զօրացնեն քարոզչությունը դպրոցէն ներս: Հայոց հանդէպ ատելություն սերմանելու նենգ դիտաւորութեամբ:

Յատկանշական է Home Armenia-ի մէջ լոյս տեսած հետեւեալ յօդուածը: Չայն կը ներկայացնենք ամփոփ կերպով:

Յունուս Չէյրէքի հեղինակած Bu dosyayi Kaldiriyorum: Ermeni meselesi. «Փակելով թեման. Հայկական հարցը» գիրքը հայերին որակում է որպէս «Անագնիւ ու նենգ»:

Նոյն ատեն վարկաբեկում է նաեւ այնպիսի գրողների, ինչպիսիք են Նոպելեան մրցանակակիր Օրհան Փամուկը եւ Էլիֆ Շաֆակը:

«Թարաֆ» օրաթերթի հաղորդմամբ, ընդդիմադիր հանրապետական ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչ Քաթիր Գոքմէն Օգլուի այն հարցին, թէ «Արդեօ՞ք նախարարությունը հաւանություն է տուեր գիրքը բաժանելուն եւ արդեօ՞ք կարելի է համարել որ գրքին բովանդակությունը խտրական վերաբերմունքի արտայայտություն է, կրթական նախարար Օմէր Դինչերը պատասխանում է, որ «Գրքում օրինակները ներկայացուած են «Ազգային դիտանկիւնից եւ հումուրային քննադատութեամբ»:

Ինչպէս կը տեսնուի, գիրքը գրողը գրած է զայն որպէս դասագիրք՝ յետին մտքով, դպրոցական աշակերտներուն ներկայացնելու հայերը որպէս «անագնիւ ու նենգ ժողովուրդ»: Իսկ Քաթիր Օգլուի հարցումին տրուած պատասխանէն կը հասկցուի, որ Պրն. Նախարարը անպատեհություն մը չէ տեսած գրքին բովանդակութեան մէջ, քանի որ «Գրքում օրինակները ներկայացուած են «Ազգային դիտանկիւնից...»:

Ուրիշ օրինակ մըն ալ՝ որ ցոյց կու տայ թէ ինչպէս դպրոցներէն ներս աշակերտներուն կը ներարկուի ցեղապաշտութեան եւ խտրականութեան գգացումը:

«Թարաֆ» թերթին մէջ կը կարդանք, թէ Սէրտար Գայա, գանգաւոյ ներկայացուցած է Կրթական նախարարութեան դէմ թէ ինչու, «Աշակերտներուն մակարդակը ճշդող-քննութեանց ընթացքին, անոնց ուղղուած է հարցում, ուր Հայերն ու Յոյները «Դաւանան» հռչակուած են. եւ աշակերտներէն պահանջուած է որ կարծիք յայտնեն»:

Հարցումը հետեւեալն է:

- Մուտրոսի հրադադարի համաձայնութենէն ետք, երբ մեր երկիրը բռնագրաւուեցաւ, Իսթանպուլի կառավարութիւնը մնաց լուռ եւ անտարբեր: Կարգ մը Յոյներ ու Հայեր ալ որոնք հարիւրաւոր տարիներէ ի վեր խաղաղ կեանք մը կ'ապրէին թուրքերուն հետ կողք-կողքի, գործակցեցան բռնագրաւիչներուն հետ: Այս վիճակին դիմաց, թուրք ժողովուրդը ի՞նչպիսի հակագրեցութիւն մը ցոյց տուաւ»:

Սէրտար Գայա այս հարցումը վիճելի կը գտնէ, քանի որ հոն հայերն ու յոյները «Դաւանանութեամբ» ամբաստանուած են:

Հոս յստակ կը տեսնուի Կրթական նախարարութեան հետապնդած յետին միտքը:

Հարցումը ինքնին թաքնախորհուրդ է աշակերտին համար: Սակայն ասոր տուած պատասխանէն եւ յայտնած կարծիքէն յայտնի կ'ըլլայ որ ան Հայերն ու Յոյները դաւանան կը նկատէ՞, թէ՞ ոչ:

Սէրտար Գայա կ'եզրակացնէ.- «Այսպիսի հարցում մը ուղղելը ինքնին յանցագործութիւն է»:

Այո՛ յանցագործութիւն, որուն ետին կայ նենգ ատելութեան մը յետին մտայնութիւնը:

Սա ինքնին՝ աշակերտը փորձաքարի զարնելու ձեւ մըն է, զայն ճնշումի տակ դնելով՝ իր ըսել չուզածը պարտադրանքի տակ իրեն ըսել տուող եղանակ մը:

Իսկ եթէ աշակերտը համարձակի խօսիլ իր համոզումին համաձայն, արդէն իսկ յայտնի պիտի դառնայ թէ՛ իր, թէ՛ իր ընտանիքին տրամադրութիւնն ու կեցուածքը Հայերուն եւ Յոյներուն հանդէպ: Եթէ բարենպաստ է այդ կեցուածքը հայերուն հանդէպ, աշակերտը խոշոր սեւ կէտ մը պիտի ստանայ իր անունին առջեւ...:

Ուրեմն, թուրք հասարակության մեջ կան երկու դասակարգի պատմաբաններ, փրօֆեսորներ ու գրողներ, որոնց առաջինները եթե երբեք ուղղամիտ եւ արդարամիտ անձեր են, պարկեշտօրէն ճշմարտութիւնը խոստովանող, անսպով իրենց խղճի ձայնին, երկրորդները ուղղակի, գիտակցաբար եւ դիտումնաւոր կերպով կը ստեն ու կը կեղծեն: Անոր համար որ այդ ճշմարտութիւնները ընդունելու հեռանկարները ուղղակի կը սարսափեցնեն զիրենք եւ այդ սարսափը զիրենք կը մատնէ այնպիսի վիճակի մը, որ իրենք իսկ ահին իրենց գործած ոճիրին ահաւորութենէն ու փորձեն միշտ մեղմացնել զայն, փոքրացնելով թիւր զոհուածներուն, առանց նկատի առնելու պատմական փաստացի իրականութիւնները:

Հայոց ցեղասպանութեան գլխաւոր հեղինակ՝ Թալաաթ փաշան իր յուշերուն մէջ կը հաստատէր, որ գաղթականութենէն ետք երկրէն պակսած էին մէկ միլիոն հայեր: Բնական է, որ ան պիտի գեղչէր, կամ կէսի իջեցնէր բուն թիւը եւ միայն մէկ միլիոնը պիտի յիշէր:

Իսկ այստեղ պատմաբան Այշէ Հիտ «Թարաֆ» թերթին մէջ իր ստորագրած՝ «1915-ի Ապրիլին ինչեր պատահած էին Վանի մէջ», խորագրեալ յօդուածին վերջաւորութեան, կը ներկայացնէ թիւեր, որոնք ցոյց կու տան թուրք ցեղասպաններուն անպարարութիւնները:

Ան կ'ըսէ. «Հայկական աղբիւրները 1915-ի կոտորածներուն թիւը գնահատած են 1,5-2 միլիոն: Իսկ 1918-թ.ին հիմնուած Օսմանեան ներքին նախարարութեան յանձնախումբը յայտնած է, որ Ա. աշխարհամարտի օրերուն մեռած հայութեան թիւը 800 հազար է:

Սպայակոյտի նախագահութեան փաստաթուղթերէն մէկուն համաձայն, 500 հազար մահմետականներ մեռած են, ատոր փոխարէն արքորի ճամբուն վրայ կամ պարտադիր աշխատանքի ճամբարներուն մէջ մեռած կամ սպաննուած են 800 հազար հայեր ու 200 հազար յոյներ:

1983-թ.ին պատմաբան Քեամբան Կիւրին կը գեղչէ այս թիւը ու կը պնդէ ըսելով. «Ինչպէս որ ալ հաշուեն, մեռած կամ սպաննուած հայերուն թիւը 300 հազարէն աւելի չէ»: «Իսկ հիմա,- կ'աւելցնէ Այշէ Հիւր,- Քեամբան Կիւրինն ալ սկսած ենք մոմով փնտռել, որովհետեւ Թուրքիոյ Պատմութեան Կանառի նախկին նախագահ Եուսուֆ Հալաճօղլու պնդած է, որ սպաննուած հայերուն թիւը 9 կամ 10 հազար է միայն...: Անոր կարծիքով՝ հայերն են որ ցեղասպանութիւն գործեցին թուրքերուն դէմ:

Յարգելի ընթերցող՝ միթէ՞ արժանի չէք տեսներ Պատմութեան կանառի նման նախագահի մը՝ Եուսուֆ Հալաճօղլուի պարզեւատրուիլը խոշոր շքանշանով մը, իր վկայած բացառիկ ձիրք-կարողութեան համար, որ կրցաւ... մէկուկէս միլիոնը իջեցնել մինչեւ 9-10 հազարի...:

Հալանդողուն մեծագոյն սուտասաններու, կեղծողներու եւ ուրացողներու փաղանգին պատկանող անձ մըն է, որ իր չափազանցեալ սուտերով ու կեղծիքներով աւելի նշանաւոր դարձած է այդ ասպարէզին մէջ: 2009-ին էր որ Պրն. Հալանդողուն, «Չաման» թերթին տուած յայտարարութեան մէջ կը յոխորտար ըսելով, որ «ցեղասպանութեան հարցին մէջ Անգարայի սիրտը հանգիստ է, որովհետեւ աւելի քան մէկ միլիոն փաստաթուղթ կայ»: Եւ կոչ կ'ըներ որ պատմաբաններու յանձնախումբ մը կազմուի ու քննէ եւ փաստէ ցեղասպանութեան ըլլալ ու չըլլալը, եւ դեռ կը յաւակնէր ըսելով, որ եթէ պատմաբաններու յանձնախումբը չկարենայ յստակ կերպով փաստել որ ցեղասպանութիւն կատարուած է, այն ատեն հայկական պնդումները ամբողջովին աղբանոց պիտի նետուին»:

Սակայն, այս գոռոզ յաւակնութեան հետ մէկտեղ... «Ան պետութիւնը կը հրաւիրէր զգոյշ ըլլալու, որպէսզի յանձնախումբի անդամակցութեան չհրաւիրուին այնպիսի պատմաբաններ, որոնք նախապաշարուած մարդիկ ըլլալն... այսինքն՝ հրաւիրուին միայն այն պատմաբանները, որոնք թրքական պետական տեսակէտը պաշտպանողներ եղած ըլլան, որպէսզի յանկարծ... հայկական պնդումներուն փոխարէն, թրքական ստայօղ պնդումները աղբանոց չնետուին...»:

Ահա, այսպիսին են, թրքական սուտերով շաղուած յոխորտանքները... իրենց վախերով...:

* * *

Այստեղ կ'ուզեմ յարգելի ընթերցողներուս ներկայացնել կարգ մը պարկեշտ թուրք պատմաբաններու եւ գրողներու յօդուածներէն կատարուած մէջբերումներ եւ ցոյց տալ անոնց կատարած բացայայտումներն ու խոստովանութիւնները հայկական հարցի նկատմամբ:

Տէ. Թէ. Փէ. կուսակցութեան Տիարպաքըրի երեսփոխան Մելահէտտին Տէմիրթաշ, խորհրդարանին մէջ Արտաքին Գործոց նախարարին հայկական հարցին վրայով խօսած «անվնաս» եւ «խուսափողական» խօսքերուն ի պատասխան, կ'ըսէ. - «...Բայց մենք կը հաւատանք, որ այլեւս պէտք է խօսինք հայ ժողովուրդին այնքան տառապանք պատճառած այս հարցին մասին, որ Թուրքիոյ Հանրապետութեան գլխաւոր խնդիրներէն մին դարձած է մինչեւ այսօր: Ասկէ հարիւր տարի առաջ, Իթթիհատական Կուսակցութիւնը ամբողջ Անատոլիոյ մահմետականացնելու եւ թրքացնելու քաղաքականութեամբ մը, այդ հողերուն վրայէն մերթ արտաքսումով կամ արքորով, մերթ տեղահանութեան ու սպանդներու միջոցով, ուզեց անհետացնել ոչ-խալամները, մասնաւոր-

րաբար հայ ժողովուրդը»:

«... ԱՆԿԷ ՅԵՏՈՅ ԱԼ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԷՆ ՓՐԿՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՁԵՒԱՒՈՐՈՒԵՑԱՒ ՈՒՐԱՅՈՒՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ. ՄԵՂԱՆԻՆ ՎՐԱՅ ԿԵՂԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ ԳՐԻ ԱՌՆՈՒԵՑԱՒ: ԿԱՐԳ ՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐՈՍԱԿԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՄԱՆՐ-ՄՈՒՆՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԱՓԱԶԱՆՑՈՒԱԾ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵՑԱՆ: ԱՆՈՐ ՓՈԽԱՐԷՆ ԱՆԳՈՅ ՆԿԱՏՈՒԵՑԱՆ ՀԱՅԵՐՈՒ ՎՐԱՅ ԳՈՐԾԱԴՐՈՒԱԾ ԱՀԱՒՈՐ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՆԴՆԵՐԸ: ԱՅՍՕՐ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԵՐՈՒՆ ՄԷՋ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ ԲԱԶՄԱԹԻՒ ԱՐՏԱՅԱՅՑՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԵՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՈՐԾՈՒԱԾ ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ»:

Հոս, Երեսփոխան Մելահետտին Տեմիրթաշ ցոյց կու տայ եւ կը վկայէ, թէ ինչպէս Իթթիհատականները պատրուակելով հայ հրոսակախուժներու մանր մուկ գործողութիւնները, արդարացնել կը փորձեն իրենց ոճրային արարքները: Սակայն հմուտ պատմաբան Թանէր Աքչամի նորերս լոյս տեսած «Երիտասարդ Թուրքերու Ոճիրը մարդկութեան դէմ - հայկական ցեղասպանութիւնն ու Օսմանեան շրջանի էթնիկ մաքրագործումները» գիրքը, կու գայ ջրել այդ սուտ պատրուակները, ուր հեղինակը հաստատօրէն կ'ըսէ թէ «Իթթիհատականները պատերազմէն առաջ արդէն որոշած էին ցեղասպանութիւնը իրագործել»:

Նմանօրինակ հաստատում մը եւս կ'ընէ պատմաբան Այշէ Հիտ, իր «1915-ի Ապրիլին ինչէ՛ր պատահած էին Վանի մէջ» խորագրեալ յօդուածով, ուր ըսուած է. «Տրուած ըլլալով որ պետական տեսակէտը միշտ յայտնած է թէ տեղահանութիւնը կատարուած է 1915 թուականի Մարտ ամիսին Չէթուհի, իսկ Ապրիլին ալ Վանի մէջ, հայերու ապստամբած ըլլալէն ետք», Այշէ Հիտ կը հերքէ այդ սուտերը: Ան նախ կը պատմէ թէ ինչեր պատահած էին Վանի մէջ, ուր «Վան սկսաւ խեղդուիլ արեան մէջ»: Ապա կը գրէր հետեւեալը. «ՈՐՔԱՆ ԱԼ ՀԱՅԵՐԸ ՉԱՆԱԶԱՆ ԳՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՒ ՊԱՏԱՀԱՐԵՐՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԱՊՍՏԱՄԲԱԾ ԸԼԼԱՅԻՆ, ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԴԷՆ ԱՆԿԷ ԱՌԱՋ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ՈՒ ՅԱՅՏԱԳՐԻՆ ՄԷՋ ԱՌՆՈՒԱԾ ԷՐ»:

* * *

Դարձեալ՝ Տէ Թէ Փէ-ցի Երեսփոխան Օսման Էօզչէլլի երբ ելոյթ կ'ունենար Խորհրդարանին մէջ, նիւթէն դուրս ելլելով կը սկսի խօսիլ 1915-թ.ի մասին:

Ան կը յիշէ հայկական կոտորածներն ու կ'ըսէ. «Ի՛նչ մեղք, որ անմեղ հայեր սպաննուեցան», ու կ'աւելցնէ. «Հայկական կոտորած ըսուածը իրականացած է Օսմանեան շրջանի Սուլթանին նախաձեռնութեամբ կազմուած ու քիւրտերէ բաղկացեալ Համիտիէ խումբերու կողմէ:

Այս խումբերը կազմուեցան ճիշդ այնպէս, ինչպէս այսօր կազմուած են Փ.Բ.Բ.ի դէմ անդապահներու խմբակները [գորոհու]: Այս Համիտիէ խումբերը մեծ թիւով հայեր սպաննեցին: Ասոնք շատ անգամ մէկ կարգի վրայ կը շարէին կալանաւորներ ու անոնց կուրծքերուն վրայ կը կրակէին: Մարտիի բոլոր հայերը սպաննուեցան»:

Խորհրդարանի նախագահը՝ Նելվար Փաքդիլ կ'ընդմիջէ ու չի թողուր որ աւելի առաջ երթայ. եւ կ'ըսէ, որ «Հայերուն կուրծքերուն կրակ չէ բացուած»: Նաեւ կ'ըսէ «Այս ժողովուրդը մէկ է՝ քիւրտով, չէրքէզով կամ թուրքով»: Այս խօսքերուն վրայ Փաքդիլ կը ծափահարուի ՄԷ.ՀԷ.ՓԷ.ցիներու կողմէ:

Մինչ այդ՝ ՏԷ.ԹԷ.ՓԷ.էն ուրիշ երեսփոխան մը, Սըրրը Սաքըք կը քննադատէ նիստին նախագահ Փաքդիլիին ու կը պոռայ.- «Պրն. նախագահ, դուք Մարաշի երեսփոխան էք եւ շատ լաւ գիտէք, թէ ինչպիսի սպանդ մը իրականացաւ Մարաշի մէջ»:

Ա.Գ.Փ.ի-ցի Պայրամ Էօզչէլիք ջղայնացած կը քալէ դէպի Տ.Թ.Փ.ցիներու վրայ ու կը պոռայ. «Մարդու պէս խօսեցէք, մեր ջիղերը մի խանգարէք»:

Տ.Թ.Փ.էն ալ Հապիպ Գափլան կը քալէ Ա.Գ.Փ.ականներուն վրայ պոռալով.- «Ճշմարտութիւններու մասին բնաւ չխօսի՞նք... մէկ հատ իսկ Ասորի չմնաց...»:

Սթնոլորտը կը տաքնայ, ու կռիւ կը սկսի: Նախագահը 10 վայրկեան կ'ընդմիջէ ժողովը:

Ահաւասիկ թուրք խորհրդարանը... ուր ճշմարտութիւններու մասին խօսիլ արգիլուած է...:

2009-թ.ին «Բատիքալ»ի մէջ, Սէֆի Էօնկիւտար ցնցիչ յօդուած մը ստորագրած էր, մեղադրելով Իթթիհատական կառավարութիւնը, որուն գործելակերպին նմանութիւնը կը տեսնէր ներկայ Ա.Գ.Փ. կուսակցութեան գործելակերպին մէջ, իր Վարչապետ Էրտողանով:

Ան կը յիշեցնէր, թէ ինչպէս Թալաաթ եւ Ճեմալ Փաշաները, Տօքթ. Նազըմ, Տօքթ. Պէահէտտին Շաքիր, Ճեմալ Ազմի եւ այլն, 1 Նոյեմբեր 1918-ի գիշերը, Գերմանական նաւով խոյս տուած էին երկրէն: Ինչո՞ւ: Որովհետեւ անոնց բոլորն ալ պատասխանատու էին հայերու դէմ գործադրուած սպանդին: Անոնք հարիւր հազարաւորներու սպանդին պատասխանատու էին ու գիտէին, որ յանցաւոր պիտի հռչակուէին: Այդ պատճառաւ փախան երկրէն:

Համաշխարհային Ա. պատերազմին պարտուած ուրիշ երկիրներ ալ

կային, բայց անոնցմե ոչ մեկուն ղեկավարը խոյս տուած էր երկրէն: Իթթիհատականները փախան անոր համար, որ «Պատերազմի ոճրագործ» էին ու կը գիտակցէին ասոր: Ի գուր չէ որ Մունտրոսի դաշինքէն յետոյ, Թէվֆիք Փաշայի կառավարութեան առաջին գործը եղաւ, 8 Նոյեմբեր 1918.թ.ին Գերմանիայէն ետ պահանջել զիրենք: Սակայն գերմանացիները մերժեցին ոճրապարտները յանձնել Թուրքերուն, քանի որ բարեկամ կը նկատէին զանոնք իրենց համար:

Անկէ ետք, անոնք, Օսմանեան պետութեան կողմէ կազմուած պատերազմական ատեանին կողմէ, ի բացակայութեան մահուան դատապարտուեցան:

Այս տեղեկութիւնները տալէ ետք, յօդուածագիրը սապէս կը գրէ.

«Այս բաները ձեզի դպրոցներու մէջ չտրվեցուցին. բայց ասոր համար կը կարծէ՞ք, որ ասոնք պատմութենէն սրբուեցան:

«Ինչո՞ւ հիմա այդքան կը զայրանաք, երբ ծանօթ կարգ մը անձեր, ներողութիւն խնդրելու արշաւով, ձեզ կը հրաւիրեն այդ ճշմարտութիւններու հետ երես առ երես գալու: Կրնա՞նք ենթադրել որ ձեր այսքան բարկանալուն պատճառը, այս նիւթերուն մասին ձեր անգիտութիւնն է: Կը վախճաք որ այս համակարգը ոտքի վրայ պահող կարգ մը Թապուները կը սրբուի՞ն, եթէ աւելի մեծ թիւով մարդիկ իմանան այս ճշմարտութիւնները»:

Յօդուածագիրը ներկայացնելէ ետք պատմական այս տուեալները, Իթթիհատականներու յանցագործութիւններուն, անոնց փախուստին, անոնց մահուան դատապարտութեան մասին, կը քննադատէ իշխանութիւնները, որ «Այս բաները դպրոցներու մէջ չտրվեցուցին»: Իսկ այսօր... Իսկ այսօր կը զայրանան բոլոր հայերէն ներողութիւն խնդրողներէն, որոնք կը հրաւիրեն զիրենք երես առ երես գալու ճշմարտութիւններու հետ:

Ապա հարց կու տայ.- «Ներողութիւն խնդրողներ գոնէ իրենց խղճի ձայնին ականջ տուած են, իսկ Էրտողան որո՞ւն ականջ կու տայ, եթէ ոչ՝ պատմութեան խորէն եկող Իթթիհատականներու ձայնին...»: Ու կ'եզրակացնէ.- «Այս ազգայնապաշտութիւնը կը տիրապետէ բոլոր կուսակցութիւններուն եւ ասոր համար է, որ միշտ նմանօրինակ հակազդեցութիւններ ցոյց կը տրուին, երբ կը խօսուի հայկական տեղահանութեան կամ քրտական հարցի մասին»:

* * *

Օրհան Քէմալ Ճէնկիզի վերլուծումը 1915-ի պատահարներուն:

«Ամբողջ Աշխարհ արդէն ընդունած է, որ 1915-ը ցեղասպանութիւն էր: Թուրքիա տակաւին որոշ քաղաքականութիւն մը չունի այս մասին»:

Օրհան Քէմալ «Ռատիքալ»ի մէջ ստորագրած է «Հայկական ցեղասպա-

նութիւնը եւ հողը» խորագրեալ յօդուած մը, ուր ան հայկական հարցին կը մօտենայ իրատես ու ողջախոհ տեսանկիւնէ:

Ան կ'ըսէ, «Անցեալ օր Լիբանանէն վերադարձող մէկ ընկերս պատմեց, որ Պէյրութի հայկական թաղամասը այցելելէ ետք, յանգած էր այն եզրակացութեան, որ 1000 տարի ալ եթէ անցնի, հայկական հարցը պիտի չվերջանայ: Իրականութեան մէջ այս ընկերս ըսել կ'ուզէր, որ Թուրքիա յամառօրէն կը շարունակէ կիրարկել քաղաքականութիւն մը, որ յաջողելու որեւէ «բախտ» չունի: Այն հայերը որոնց ինք հոն տեսած էր, 1915-ը կ'ընդունին որպէս դեռ երէկ պատահած դէպք մը: Այս հոգեվիճակը, տրամադրութիւնը մէկ սերունդէն դէպի միւս սերունդը կը փոխանցուի շարունակաբար»:

«Իսկ Թուրքիա միմիայն ու անվերջ ուրանալով կը կարծէ, որ այս խնդիրը օր մը պիտի փակուի, եւ թէ միջազգային հանրային կարծիքն ու հայերը այս նիւթը պիտի մոռնան եւ օր մը թուրքերս հանգիստ շունչ մը պիտի քաշենք: Թուրքիոյ քաղաքականութիւնը այս խնդրի շուրջ միմիայն ուրանալ եւ հայկական ցեղասպանութեան մասին խօսողներուն սպառնալիքներ ուղղել է»:

Եւ դեռ կ'աւելցնէ.- «Մինչեւ այսօր աւելի քան 20 երկիրներ հայկական ցեղասպանութիւնը ճանչցան. եւ այս թիւը ամէն տարի կը բարձրանայ: Իսկ այն երկիրները որոնք այս պահուն տակաւին չեն ճանչցած՝ զայն կ'ուրանան ոչ թէ անոր համար որ եղելութեան չեն հաւատար, այլ՝ կը խորհին որ ասիկա իրենց շահերուն դէմ է»:

Պարագ Օպաման նախագահական ընտրութեան արշաւի ընթացքին յստակ կերպով յայտարարած էր ըսելով. «Հայկական ցեղասպանութեան մասին պնդումը անձնական տեսակէտ մը չէ: Ցեղասպանութիւնը պատմական փաստերով ապացուցուած եւ համաշխարհային հանրային լայն կարծիքին կողմէ փաստարկուած ճշմարտութիւն մըն է»: Տակաւին թարմ է մեր յիշողութեան մէջ իր խոստումը թէ՛ «Ես, որպէս ծերակուտական մը, ջերմօրէն կը զօրակցիմ հայկական ցեղասպանութեան բանաձեւին»:

Միացեալ Նահանգներու նախորդ նախագահներն ալ, իրենց ընտրապայքարներու ընթացքին, խոստացան ճանչնալ հայկական ցեղասպանութիւնը, եւ սակայն ամէն անգամին ալ դրժեցին իրենց խոստումները: Այդ նոյն ընթացքի մէջ է այսօր Օպաման: Պէտք է գիտնանք սակայն, որ քաղաքական մարդոց բարոյական սկզբունքը հիմնուած է նախ՝ անձնական ու հատուածական շահերուն վրայ եւ ոչ արժանապատուութեան ու արդարութեան:

Իսկ Օրիան Քէմալ կ'ուզէ ըսել, որ երբ պետութեան մը իշխանաւորներուն եւ երկրի շահը պահանջէ ճանչնալ հայոց ցեղասպանութիւնը, այդ մէկը կ'ընեն առանց նկատի առնելու թրքական սպառնալիքները:

«Իսկ այդ իրականությանն դիմաց Թուրքիա- կ'եզրակացնէ յօդուածագիրը- զանազան վախերու ազդեցութեան տակ, կը վարանի տրամաբանական լուծումներ տալ այս հարցին, դէմ յանդիման գալ անոր հետ եւ նայիլ իրականութեան ճակատաբաց»:

* * *

2009-թ.ին էր որ Ահմէտ Ալթան ստորագրած էր «Խելագարներու երկիր» խորագրեալ յօդուած մը «Թարաֆ» թերթի մէջ, ուր կը պախարակէր կառավարութիւնը իր պաշտօնական տեսակէտէն չկարենալ բաժնուելուն եւ ճշմարտութեան հետ երես առ երես չկարենալ գալուն համար. ու կը գրէր հետեւեալ ցնցիչ խօսքերը: «Դուն աւելի կամ մէկ միլիոն հայը սպաննէ, Անատոլիւն սրբէ հայերուն բոլոր հետքերը, ձեռք դիր անոնց կալուածներուն եւ ինչքերուն վրայ, յետոյ ալ տողոց ցոյց տուր վիտէօ ժապաւեններ ըսելով. «Նայեցէք հայերը ինչ ըրին մեզի»:

Ահմէտ Ալթան դիտել կու տայ, որ «Թուրքիայէն դուրս ապրող գրեթէ ամէն մարդ գիտէ, թէ ինչեր պատահեցան հայերուն դէմ: Ամէն մարդ գիտէ, որ Իթթիհատականները հետեւողական ցեղասպանութիւն մը գործեցին: Ամէն մարդ գիտէ, թէ հայերը որքան տառապեցան: Միայն թուրքերն են որ չեն գիտեր այս ճշմարտութիւնը»:

Բայց ինչո՞ւ թուրքերը չեն գիտեր այս ճշմարտութիւնները:

Ահաւասիկ հոս կը մէջբերենք Պիլկէ հրատարակչական հիմնարկի հիմնադիր-գրող ու մարդու իրաւունքներու պաշտպան Ռակըպ Չարաքօլուի խօսքերը՝ «Հայկական ցեղասպանութեան համար ներում խնդրելու տեղը Թուրքիոյ խորհրդարանն է» խորագրեալ յօդուածէն, ուր ան կ'ըսէ.- Այս հասարակութեան շատ սուտեր խօսուեցան: Այս հասարակութիւնը բազմիցս յանցագործութեան մղուեցաւ [այդ սուտերուն պատճառով]: Յանցաւորները «Հերոս», իսկ զոհերը «Յանցաւոր» կոչեցինք: «Զօրաւոր եւ արդար» հասարակութիւն ունենալու ուղին մաքրութենէ կ'անցնի»:

Ուրիշ տեղ նոյն Չարաքօլուն կ'ըսէ.- Թուրք ժողովուրդին պէտք է լսել սորվեցնենք: Եթէ Թուրք ժողովուրդին կարենանք սորվեցնել, թէ ինչ որ ունին այսօր Թուրքիոյ մէջ, թրքական թատրոնի շէնքը, լրագրութիւնը եւ այլն... այս ամէնը ստեղծուած են հայերու կողմէ... թուրքերը եթէ այս բոլորը սորվին, բնականաբար անոնց մօտ հարց կ'առաջանայ, թէ ինչ պատահեցաւ այս հայերուն: Ուր են անոնք: Անատոլիոյ բնակիչները չեն գիտեր, թէ որոնք ապրած են այդ հողերուն վրայ: Թուրքերը [ներկայ] իրապէս չեն գիտեր, թէ ինչ տեղի ունեցած է հայերուն հետ: Եւ եթէ սորվին այդ բաները՝ կը սկսին պրպտել:

Կրնա՞ք պատկերացնել մարդիկ, որոնք իրենց բնակավայրին պատմությունը չգիտնան: Թուրք բնակչությունը իր երկիրը չի ճանչնար, քանի որ Թուրքիայի պատմությունը դասագիրքերում եւ տեղական հրատարակություններում մեջ կը սկսի 1923 թուականէն, երբ արդէն հայերը չկային...»:

* * *

Դարձեալ «Ռատիքալ»ի մէջ Այշէ Զատրօղլու իր «Անոնք որոնք անցեալը չեն յիշեր՝ կը դատապարտուին անցեալը կրկնելու» խորագրեալ յօդուածին մէջ կ'ըսէ. «... Բայց այսօր տակաւին Թուրքիոյ նախակրթարաններու մէջ, ամէն ջանք կը կատարուի որպէսզի տղաքը միայն հպարտութիւն զգան իրենց պատմութենէն: Մեր տղաքը բնաւ գաղափար չունին իրենց պատմական անցեալին մէջ առկա ամօթալի էջերուն մասին»: Ան կ'աւելցնէ. «... Անցեալի ամօթալի էջերուն մասին խօսողներն ալ «դաւաճան» կը հռչակուին: Երբեմն նոյնիսկ կը հանդիպինք մարդոց, որոնք, իրենց ճառախօսութիւններուն մէջ, «լաւ որ ըրեր ենք» ըսելու պէս բաներ կ'ըսեն...: Հպարտութիւնը կը սոնքայ, ամօթն ու գոշումը կը քօղարկուին: Հրապարակները կը լեցուին հպարտութիւն խոհրդանշող դրօշակներով ու յուշարձաններով: Բայց ոչ մէկ յուշարձան կը բացուի որպէսզի յիշեցնէ, թէ ինչպիսի գոլումներ գործադրուեցան անցեալին մեզի հետ ապրած սա մարդոց դէմ», ու կ'եզրակացնէ՝ «Որովհետեւ Թուրքիոյ մէջ տիրապետող հասկացողութիւնը «Մոռնալն ու մոռցնելն է...»:

* * *

Մեր այստեղ ներկայացուցած պատկերները որոնք առնուած են թուրք պատմաբաններէ, գրողներէ ու փրօֆէսօրներէ, տակաւին շատ համեստ բաժին մը ներկայացնեն, բոլոր այդ աղաղակող ճշմարտութեան բացայայտումներուն քով, որոնք յոյս աշխարհ բերուած են Թանէր Աքչամի, Էլիֆ Շաֆաքի, Վահագն Տատրեանի, Աւետիս Փափագեանի, Նոպէլեան մրցանակակիր Օրհան Փամուքի նման աշխարհաճանաչ այլ պատմաբաններու փաստացի վաւերագրութիւններուն մէջ:

Իսկ հակառակ այս բոլոր ներկայացուող վաւերական ճշմարտութիւններուն, երբ կը հանդիպինք տակաւին շատ համալսարաններու մէջ տեղի ունեցող հակահայ գիտաժողովներուն, որոնց կարգին՝ Աթաթիւրք համալսարանին մէջ տեղի ունեցած «Առաջին միջազգային թուրք-հայ յարաբերութիւններու եւ մեծ ուժերու համագումար»ի մը գիտաժողովներու, ուր հրաւիրուած են ընդհանրապէս բոլոր թուրք ազգայնապաշտ եւ օտար՝

թրքամետ դասախօսներ, ու կը լսենք, ի մէջ այլոց խօսքերը Սաքարիա համալսարանի դասախօսներէն փրօֆէսոր Հալուք Մելվի, որ կը պնդէ ըսելով, թէ «Հայերը փոխանակ դատարան դիմելու, զանազան երկիրներու խորհրդարաններուն կը դիմեն, որովհետեւ փաստ չունին գործուած ըլլալուն մասին» խօսքերը, եւ կը տարուինք մտածել որ այս մարդիկը գիտակցաբար կը կուրանան չտեսնելու համար արեւի լոյսին պէս շողշողուն այսքան իրականութիւնները եւ գիտակցաբար կը խլանան չսելու համար բոլոր այս աղաղակող ճշմարտութիւններուն մերկացումները:

Իսկ եթէ պահ մը քննենք խորքը թէ ինչու գիտակցաբար կը կուրանան, կը խլանան եւ չեն ուզեր տեսնել ու լսել, չեն ուզեր ընդունիլ իրականութիւնը ու կը մերժեն դատապարտել անցեալի ցեղասպանական գործողութիւնները՝ պիտի նկատենք, որ թուրք իշխանութիւնները ոչ միայն չեն ուզեր դատապարտել Իթթիհատականներու ոճիրները, այլ՝ մինչեւ իսկ շնորհակալ են անոնց... ու կը գնահատեն Թալաաթ-Ճեմալ-Էնվէրներուն հրէշային արարքները, որ կրցան հայերը ջարդել այլ եւ այլ միջոցներով, կրցան անոնց տեղահանել ու գաղթի ճամբուն վրայ տարագիրներուն կողոպուտներու ենթարկել: Կրցան անոնց անօթի ու ծարաւ ձգելով, հիւծել եւ պատճառ դառնալ որ դժբախտները, զանազան հիւանդութիւններէ վարակուած՝ ինքնաբերաբար մահանան: Իսկ մնացածներն ալ զանգուածային սպանութիւններով լրիւ ոչնչացնել..., ու այդպէսով հասնիլ իրենց նպատակին՝ մաքրագործել ամբողջ Անատոլիան: Այսինքն՝ Արեւմտեան Հայաստանը իր բնիկ ժողովուրդէն, հայերէ, ու տիրանալ այդ տարածքներուն վրայ սպրած հայութեան բոլոր հարստութիւններուն:

Ահա, թէ ինչու չեն ուզեր լսել, չեն ուզեր տեսնել, չեն ուզեր ընդունիլ ու չեն ուզեր դատապարտել:

Ինչպէ՞ս դատապարտեն Իթթիհատականներուն, որոնք թէկուզ հրէշային ոճիրներով, թէկուզ մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւններով, թէկուզ պատերազմական օրէնքներու դէմ գործուած յանցագործութիւններով, թէկուզ միջազգային օրէնքներուն հակառակ՝ յանցագործութիւններով եւ ամենայն անօրինութիւններով նախ կրցան սպաննել ու հեռացնել երկրին բնիկ սեփականատէրը եղող հայերը ու տէր դարձան ամբողջ Անատոլիոյ նման հսկայական ու անհատնում հարստութեան, ու այդ բոլորը ժառանգ թողուցին յաջորդող իշխանութիւններուն:

Այսօր, ինչպէ՞ս հրաժարին այդ անհատնում անգնահատելի ժառանգէն, ընդունելով եւ դատապարտելով իրենց նախորդներուն հրէշային ոճիրները: Արդեօ՞ք չեն գիտեր իրենց ունեցած-գործած յանցանքը, ընդունիլ գործուած ոճիրներու դատապարտութեան հետեւանքները:

Սակայն էական հարցը այն է՝ ՄԵՂՔԸ ԸՆԴՈՒՆԵԼԷ ՅԵՏՈՅ ԻՆՉՊԷՄ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ՊԻՏԻ ԿՐՆԱՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ... ԻՐԵՆՑ ԱՐԻԻՆՈՏ ՁԵՌՔՈՎ...:

ԻՆՉՊԷՄ ՊԻՏԻ ԱՐԴԱՐԱՆԱՆ ՕՐԷՆՔԻ ԱՌՋԵՒ, ԵՐԲ ԱՐԴԱՐԱՆԱԼՈՒ ՈՐԵՒԷ ՅԵՆԱՐԱՆ ՉԿԱՅ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ...:

Ի գուր չէ, որ «Չաման» թերթի քրոնիկագիր Շահին Ալփայ իր վերջին յօդուածին մէջ կը գրէր.- «Անգարա յամառօրէն կը խուսափի երես առ երես գալէ այն աղետին հետ որ ենթարկուեցան Օսմանցի հայերը»:

Ահա, թէ ինչու, ա՛յս աստիճան կը տագնապին հայոց ցեղասպանութեան հարցէն: Եւ երբ, օրէնքի ճամբով կարենալ արդարանալու բոլոր դռները գոց կը գտնեն իրենց առջեւ, իրենց կը մնայ միայն մէկ ճամբայ..., այն՝ որ իրենց միակ ճամբան է 97 տարիէ ի վեր...:

Եւ այդ ճամբան ուրիշ բան չէ, եթէ ոչ լման պետական աւագանիով, ամբողջ զօրագունդով՝ պատմաբաններով, փրօֆէսօրներով, գրողներով, ուսուցիչներով եւ... ամէնքով լուծուիլ միմիայն ստելու, զեղծելու եւ ուրանալու աւանդական սկզբունքին, խորամանկութեան որ... Արդարութեան վճիռէն ճողոպրին:

«Նայիրի», 1 Յունուար 2014

ԻՆՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՋԷ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՈՒ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԵԼ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՆ

Անցնող մօտ 9 տարիներէ ի վեր, Հայոց Յեղասպանութիւնը ժխտող թուրք դիւանագիտութեան «Գիւտը» պատմական հարցերը պատմաբաններուն ձգելու առաջարկն է, որ յաճախ կը լսուի պետական բարձրաստիճան այն պաշտօնեաներու բերնէն, որոնք երդուած են հաւատարիմ մնալ իրենց յօրինած սուտերուն ու կ'աշխատին ամբողջ աշխարհին ալ պարտադրել որ ընդունին այդ սուտերը, որպէս բացարձակ ճշմարտութիւն:

Մարտ 18ին նման կոչ մը ըրած է դարձեալ Թուրքիոյ նախագահ Թայիպ Էրտողան, ուր յիշելէ ետք թէ «պատերազմի տարիներուն Անատոլիոյ հայերը հազարաւոր մահմետականներու վնաս հասցուցած են», «որոնց փաստաթուղթերը ունին» եւ «որոնց համար հայերէն հաշիւ պահանջելու շատ բան ունին», սակայն իրենք «այդ բոլորը որպէս քաղաքականութեան գործիք չեն գործածեր», այլ պարկեշտօրէն կ'ըսեն՝ «մեր արխիւները բաց են», «բոլոր փաստաթուղթերը հոս են», «դուք ալ բացէ՛ք ձեր արխիւները», «պատմագետներ, իրաւագետներ պաշտօնի կոչենք, թող անոնք քննեն եւ որոշեն իրականութիւնը»:

Այս բոլորէն ետք առանց հայելիի մէջ նայելով ինքզինք տեսնելու, հեգնական արտայայտութեամբ մը կ'ըսէ. «Բոլոր երկիրներու մէջ մէկ առ մէկ պտտելով, բոլորին մէջ ալ դրամ խաղցնելով, բարոյականէ դուրս արարքներ գործադրելով Թուրքիոյ դէմ որոշումներ առնել տալով, ոչ մէկ տեղ չէք կրնար հասնիլ»:

Եթէ ուշադրութեամբ կարդանք այս «չակերտաւոր» պարբերութիւնը, պիտի տեսնենք որ ըսուածը որքան բառացիօրէն շիտակ ու անառարկելի կերպով կը համապատասխանէ իրենց, այսինքն թրքական գործելակերպին, ուր բոլոր այն երկիրներու մէջ ուր որոշումներ կ'առնուին Հայոց Յեղասպանութիւնը հաստատող, «մէկ առ մէկ պտտելով, բոլորին մէջ ալ դրամ խաղցնելով, բարոյականէ դուրս արարքներ գործադրելով, Եգիպտոս եւ այլուր հայկական արխիւներն ու փաստաթուղթերը փնտցնել տալով, պատմական երկիրներու հետ մերթ դիւանագիտական յարաբերութիւնները խզելու յանկերգով եւ մերթ նիւթական մեծ առեւտուրներու համաձայնութիւնները

ջնջելու սպառնալիքներով եւ մէկ խօսքով իրենց պետական համակ ՌԻԺԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ի գործ դնելով, կ'աշխատին վիժեցնել ցեղասպանութեան ի նպաստ իւրաքանչիւր որոշում ու ջանք կը թափեն իրենց «բարոյականէ դուրս» եւ անմարդկային գործելաոճով «տեղ հասնի»:

Խորքին մէջ սակայն այդ բոլոր խորհրդարանները մէկ առ մէկ կարենալ համոզելու եւ իրենց տեսակետին յարմարցնելու աշխատանքները, թէ բարոյական եւ թէ նիւթական տեսակետէ, իրենց վրայ շատ ծանր կշռելէն բացի, յաջողութեան որոշ յոյս մըն ալ չեն ներշնչեր:

Ահա թէ ինչու կ'աշխատին պատմաբաններու քննարկման տանիլ հարցը, ուր շատ անելի դիւրին պիտի ըլլայ «դրամ խաղցնելով» գրաւել անհատ պատմաբանները, քան ամբողջ երկիրներու խորհրդարանները, ուր երբեմն պիտի հանդիպին նաեւ բարոյական սկզբունքի տէր ու պարկեշտ երեսփոխաններուն, որոնք իրենց արժանապատուութիւնը դրամով չեն վաճառեր...:

Ահա պատճառը, որ համակ թուրք կառավարութիւնը ոգի ի բրին լծուած է ցեղասպանութեան հարցը փոխադրելու պատմաբաններու քննարկման: Եթէ կարելի ըլլայ այս դաւադրութեան մէջ ներքաշել հայերը, այդ օր վստահաբար թաշկինակ ձեռք առած պիտի պարեն իրենց նպատակին հասած ըլլալու հրճուանքով:

Սակայն տեսնենք թէ ինչ արդիւնք կ'ակնկալեն պատմաբաններու քննարկումէն:

Գիտենք որ իրենք արդէն իսկ որոշած եւ վճռած են արդիւնքը:

Քանի անգամներ լսուած են Էրտողանի, Տաւուսօղլուի, Ճէմիլ Չիչէքի, Եուսուֆ Հալլաճօղլուի եւ նմաններու բերնէն, իրենց վճռական արտայայտութիւնները թէ «իրենք ամենեւին ցեղասպանութիւն չեն գործած», թէ «իրենց անցեալի պատմութիւնը եղած է միշտ մաքուր», թէ «իրենք պատճառ մը չունին երբեք իրենց անցեալէն ամչնալու», թէ «իրենց ճակատը միշտ բաց եղած է», թէ «այս «սէօզուէ» ցեղասպանութիւն ըսուած հայկական պնդումները բոլորովին սուտ են» եւ այլն:

Երբ այս է թուրք պետական այրերուն վճռական որոշումը, ա'լ ինչ կը մնայ պատմաբաններուն քննարկելու..., երբ իրենք արդէն իսկ քննարկած ու որոշած են ամէն բան, դիւրացնելով նաեւ պատմաբաններուն գործը..., որոնց կը մնայ առանց յոգնութեան վաւերացնել միայն իրենց (թրքական տեսակետի) որոշումը... ու վերջ...:

Էրտողանի երկրորդ առարկութիւնն ալ այն է, թէ խորհրդարաններ ու անհատ քաղաքական գործիչներ պետք չէ որոշեն թէ ցեղասպանութիւն եղած է, այլ պատմաբանները միայն պետք է զբաղին այդ հարցով:

Սակայն այսպիսի առարկութիւն ընող Էրտողան ինչպէ՞ս կը համարձակի,

թե ինք՝ եւ թե իր խորհրդարանը, վճիռ արձակել եւ ըսել թե «ցեղասպանութիւն չէ եղած, սուտ է»։ Միթե ինքն ալ քաղաքական գործիչ մը չէ՞։ Միթե իր խորհրդարանն ալ խորհրդարան մը չէ՞։ Միթե իրենք բացառիկ առանձնաշնորհում ունեցող խորհրդարան եւ քաղաքական գործիչ են, կարենալ որոշումներ արձակելու...։

Ու այսպէս խօսքով ու գործով ինքզինք հակասող Էրտողան իր ամբողջ ճարպիկութիւններով կ'իյնայ իր իսկ փորած փոսին մէջ։

Տակաւին 2009ին էր, ուր թուրք պատմութեան կանառի նախորդ նախագահ Եուսուֆ Հալլաճօղլուն, խօսելով «Անգարայի ի ձեռին ունեցած մէկ միլիոն փաստաթուղթերուն» վրայով, կ'առաջարկէր պատմաբաններուն յանձնել ցեղասպանութեան հարցին քննարկումը, որպէսզի... «ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՊԱԲԷՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԾԱՅՐԷՆ ՍԿՍԻ...», ուր երբ պատմաբաններու յանձնախումբը չկարենայ յստակ կերպով փաստել թե ցեղասպանութիւն կատարուած է, այն ատեն հայկական պնդումները ամբողջովին աղբանոց պիտի նետուին...։

Սակայն այսպէս խօսած պահուն իսկ ներքին վախ մը կ'անհանգստացնէր զինք, քանի որ նոյն ատեն ան կը զգուշացնէր պետութիւնը, որպէսզի «յանձնախումբի անդամակցութեան չհրաւիրուին այնպիսի պատմաբաններ, որոնք նախապաշարուած մարդիկ եղած ըլլան»։ Այսինքն անզգուշութեամբ թրքական տեսակետին հակառակ եղող պատմաբաններ չհրաւիրուին յանկարծ..., եւ կամ կարծրատիպ անհատներ՝ որոնք կարելի չըլլայ գրաւել «դրամ խաղցնելով...», քանի որ այդ պարագային կրնայ ստացուիլ ճիշդ հակառակը եւ «թրքական պնդումները ամբողջութեամբ աղբանոց կը նետուին...»։

Այդ վախը չէ՞ր միթե, որ նախագահ Էրտողանին ըսել պիտի տար, որ «մենք արդէն որոշած ենք մեր պատմաբանները...»։

Թուրքիա իր բոլոր մեքենայութիւնները ի գործ դրած է ցեղասպանութեան հարցը պատմաբաններու քննարկման կարենալ բերելու համար։ Անոր մէջ է որ կը տեսնէ զինք օր ու զիշեր տանջող հայկական մղձաւանջին լուծումը։

Սակայն հայութիւնը այն աստիճան միամիտ է միթե, որ արեւի լոյսին պէս տեսանելի ու անհերքելի ցեղասպանութեան իրականութիւնը կասկածի տակ առնէ եւ պատմաբաններուն հետ քննարկման անցնի, որպէսզի «ցեղասպանութեան ժապաւէնը դարձեալ ծայրէն սկսի...»։

Ահաւասիկ, թուրք մտաւորական, փաստաբան եւ գրող Ֆէթիիէ Չէթին յստակ կերպով կ'ըսէ, թե «Հայկական Ցեղասպանութիւնը փաստի չի կարօտիր»։

Այսօր Ա.Մ.Ն. ու 43 նահանգներ եւ աշխարհի 24 երկիրներ, առաւել՝ օտար

եւ հայ գրողներ ու պատմաբաններ, վաւերացուցած են ցեղասպանութեան իրականութիւնը:

Ինչ ըսել մանաւանդ տասնեակներով թուրք պատմաբաններուն, գրողներուն, մտաւորականներուն, լրագրողներուն, քաղաքական գործիչներուն, որոնք արխիւներէն հանուած փաստաթուղթերով եւ ցեղասպանութեան կազմակերպիչներուն, մանաւանդ Թալաաթին գրած գաղտնի նամակներուն բացայայտումներով եւ ցեղասպանութիւնը ապրած հազարաւոր տարիքաւորներու վկայութիւններով ու փաստերով, ոչ միայն կը հաստատեն ու կ'ընդունին ցեղասպանութեան իրականութիւնը, այլ կը քննադատեն ու կը մեղադրեն իրենց թուրք կառավարութիւնը, որ քաջութիւնն ու պարկեշտութիւնը չունի առերեսուելու իր պատմութեան հետ, ընդունելու իր գործած ոճիրները, այլ կը շարունակէ իր ուրացումի ամօթալի քաղաքականութիւնը:

Տակաւին կը տեսնենք թրքական կազմակերպութիւններ ու կուսակցութիւններ, որոնք կոչ կ'ուղղեն իրենց կառավարութեան որ ընդունին ցեղասպանութիւնը եւ ներողութիւն խնդրեն հայերէն:

Դեռ թարմ է բոլորին մտքին մէջ թէ ինչպէս երկու տարի առաջ, հազարաւոր թուրքեր ներողութիւն կը խնդրեն հայերէն իրենց դէմ գործադրուած ահաւոր բարբարոսութիւններուն ու բոլորին ծանօթ ցեղասպանութեան համար:

Թրքական կառավարութիւնը միշտ քննադատած է հայ թէ օտար պատմաբանները, լրագրողները, գրողները, քաղաքական գործիչները, երկիրներու խորհրդարանները, որոնք կը դատապարտեն Թուրքիան ցեղասպանութիւնը ուրանալուն համար, թշնամութիւն տեսնելով անոնց քննադատութիւններուն մէջ: Սակայն լռութիւն կը պահէ իր ազգակիցները եղող բոլոր այդ թուրք պատմաբաններուն ու գրողներուն նկատմամբ:

Հոս կարելի է միջանկեալ ըսել որ եթէ կասկածելի կէտ մը եղած ըլլար ցեղասպանութեան պնդումներուն մէջ, անպայմանօրէն պիտի գտնուէին որոշ հայեր, որոնք կասկած պիտի յայտնէին ցեղասպանութեան վրայով: Սակայն կարելի՞ է գտնել հայ մը որ կասկած յայտնած ըլլայ ցեղասպանութեան հանդէպ: Ո՛չ: Քանի որ իւրաքանչիւր հայ իր մորթին վրան է որ կը զգայ անոր ցաւն ու հետեւանքները, տակաւին 100 տարի ետք իսկ:

Իսկ երբ կը տեսնենք հազարաւոր թուրքեր, պատմաբաններէն, գրողներէն, լրագրողներէն մինչեւ ժողովուրդին խաւերը, որոնք փաստաթուղթերով ու վկայութիւններով կը ներկայացնեն ցեղասպանութեան իրականութիւնը, ասկէ անդին տակաւին ինչպէ՛ս կարելի է ուրանալ, երբ արդէն իսկ թուրքերն են վկայողները...:

Սակայն ինչո՞ւ Էրտողան եւ իր արքանեակները լուռ են բոլոր այս

«արդարամիտ» բայց իրենց համար «դաւանան» նկատուող այդ թուրքերուն հանդէպ:

Լուռ են անոր համար, որ նախ հակափաստարկներ չունին անոնց անհերքելի փաստերուն դիմաց, երկրորդ՝ անոնց հետ լեզուակցութի մէջ մտնել չեն ուզեր, քանի որ այդ պիտի նշանակէր աւելի արծարծել հարցը եւ առիթ տալ որ աւելի խորանան ցեղասպանութեան քննարկումները, որոնք աւելի պիտի բացայայտեն իրենց յանցագործութիւնները...: Որով լաւագոյն կերպը պիտի ըլլար լռութիւն պահել, այդ «դաւանան» թուրքերուն հանդէպ ու շարունակել ցեղասպանութեան հարցը պատմաբաններուն քննարկման տանելու իրենց պնդումը՝ ապաւինելով միայն ու միայն իրենց «ՈՒԺԻ ԲԱՂԱԶԱԿԱՆՈՒԹԵԱՆ...»:

«Հայրենիք», 15 Մայիս 2015

Յեղիսակին հետ շփման հասցե՝
derianhagop@gmail.com